Է. Լ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ (VI - VII դարեր)

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Է. Լ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

108165

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

(VI - VII դարեր)

ԱՆԿՅՈՒՆԱՔԱՐ
ԵՐԵՎԱՆ 2000

ԴՏՀ 323 (479.25) + 23/28
ԳՄԴ 66.3 (2Հ) + 86.37
Դ 171

ՆՎԻՐՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՈՆ ՀՈՉԱԿԵԼՈՒ 1700-ԱՄՅԱԿԻՆ

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ
Պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր
ակադեմիկոս Ս. Տ. Երեմյան

Գրախոսողներ. բանասիրական գիտ. դոկտոր Գ. Վ. Աբգարյան
պատմական գիտ. դոկտոր Ռ. Ի. Մաթևոսյան

Դ 171 Դանիելյան Է. Լ.
Հայաստանի քաղաքական պատմությունը և Հայ Առաքելական եկեղեցին (VI-VII դարեր): - Եր., Անկյունաքար, 2000:

Աշխատությունում լուսաբանվում են պատմագիտության համար այնպիսի կարևոր խնդիրներ, ինչպիսիք են Հայաստանի հարաբերությունները Բյուզանդիայի, Պարսկաստանի և Արաբական խալիֆայության հետ՝ պարսկա-բյուզանդական և, դրան հաջորդած, արաբա-բյուզանդական հակամարտության պայմաններում, Հայ Առաքելական եկեղեցու հոգևոր և ազգապահպան նշանակությունը, Հայաստանի միասնական տարածքի և անկախ պետության վերականգնմանը ուղղված հայոց պետական և քաղաքական գործիչների՝ զորավարներ Սմբատ Բագրատունու, Վարազտիրոց Բագրատունու, Դավիթ Սահառունու և Թեոդորոս Ռշտունու, համազասպ և Գրիգոր Մամիկոնյանների ու հայոց կաթողիկոսներ Մովսես Բ Եղիվարդեցու, Աբրահամ Ա Աղբաթանեցու, Կոմիտաս Ա Աղցեցու, Եզր Ա Փառաժնակերտացու, Ներսես Իշխանցու համահայկական գործունեությունը, հայ ժողովրդի մղած պայքարը օտար նվաճողների դեմ՝ հայոց աշխարհի ազատության համար:

ISBN 99930 - 809 - 2 - 5

Դ $\frac{0403000000}{0032\ (02)}$

ԳՄԴ 63.3 (2Հ) + 86.37

© Դանիելյան Է. Լ., 2000

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայ ժողովուրդը վաղ միջնադարում հերոսական պայքարի էր ելել հանուն Հայրենիքի ազատության և անկախության: Հայոց միասնական պետության պահպանման գործին իրենց կյանքը զոհաբերեցին Մեծ Հայքի թագավորներ Տիրանը, Արշակ Բ-ը և Պապը: Հայաստանի առաջին բաժանումը նվաճող տերությունների՝ Արևելյան Հռոմեական կայսրության (Բյուզանդիա) և Սասանյան պետության միջև տեղի ունեցավ 385 թ.: Հայ Արշակունիների թագավորական իշխանությունը կայսրությանը անցած Հայաստանի արևմտյան մասում վերացավ 387 թ., իսկ Սասանյանների քաղաքական ազդեցության ոլորտում հայտնված արևելյան մասում՝ 428 թ.: Հայոց պետականությունը պահպանվեց ի դեմս նախարարական ավանդական համակարգի:

Բյուզանդիային անցած Մեծ Հայքի արևմտյան շրջաններում աստիճանաբար մտցվում էին կայսերական կարգեր, որոնք արդեն հաստատվել էին նախկինում Հռոմին անցած Փոքր Հայքում: Արևմտյան Հայաստանում կայսերական համապետական վերափոխությունները ուղղված էին հայ հասարակության՝ դարերի խորքից եկող քաղաքական և սոցիալական կառուցվածքը համախմբող հիմնական նեցուկի՝ նախարարական համակարգի քայքայմանը: Առավել ծանր վիճակ ստեղծվեց Հուստինիանոս Ա կայսեր (527-565) ձեռնարկած ռազմավարչական վերափոխումներից հետո, որոնք կտրուկ վատթարացրին ժողովրդի վիճակը: Հայերը ապստամբեցին 539 թ., սակայն էական հաջողության չհասնելով, դիմեցին պարսից արքա Խոսրով Ա Անուշիրվանին (531-579), որը, օգտվելով իրավիճակից 540 թ. պատերազմ սկսեց Բյուզանդիայի դեմ, սակայն դրա հետևանքով Հայաստանին զգալի ավերածություններ պատճառվեցին: Իսկ Արևելյան Հայաստանում ժողովրդի որոշ խավեր իրենց հույսը կապում էին քրիստոնյա Բյուզանդիայի հետ: Սակայն միջպետական հարաբերություններում որոշիչը շահն էր, և հայ ժողովուրդը պետք է ապավիներ իր սեփական ուժերին:

Ի տարբերություն Արևմտյան Հայաստանի, որտեղ նվաճողներին հաջողվեց VI դարում կիրառված կայսերական համապետական միջոցառումներով խարխլել հայ նախարարական տների հիմքերը, Արևելյան Հայաստանում հայ նախարարական համակարգը շարունակում էր իր ձեռքում պահել իշխանությունը նույնիսկ Սասանյանների կողմից մարզպանական վարչակարգի պարտադրման պայմաններում: Ինչպես գրել է Եղիշեն, «ի նախարարսն Հայոց անկանէր թագաւորութիւնն. զի թէպէտ և գանձն յարքունիս Պարսկաց երթայր, սակայն այրուձին Հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի»:

Վարդան Մամիկոնյանի գլխավորած համաժողովրդական ապստամբությունը՝ «Հայոց պատերազմը», կասեցրեց նվաճողների ծրագրերը՝ զրկել Հայաստանը պետականության հիմնական նեցուկ հանդիսացող նախարարական համակարգից, սասանել Հայոց հավատը, դավանափոխել ժողովըր-

դին և երկիրը դարձնել մի հասարակ մարզպանություն: 451 թ. Վարդան Մամիկոնյանի գլխավորած Ավարայրի հերոսամարտը հաղթանակ էր այն առումով, որ Հայաստանը դիմակայեց իրեն քանակապես գերազանցող Սասանյան տերության ռազմական ուժին, որով հող նախապատրաստվեց Վահան Մամիկոնյանի գլխավորած ապստամբության հաղթական ելքի համար: 484 թ. կնքված հայ-պարսկական պայմանագիրը Հայոց պատմության մեջ խոշոր նշանակություն ունեցավ: Նվարսակում կնքված այդ պայմանագրով երկրի մեծ մասում վերականգնվեց ինքնիշխանությունը, ամրապնդվեց նախարարական պետականությունը, անսասան մնաց Հայ Առաքելական եկեղեցին:

Մյուս կողմից՝ 451 թ. Քաղկեդոնի դավանանքային բանաձևը ժամանակի ընթացքում Բյուզանդական կայսրությունը ծառայեցնելու էր իր նվաճողական քաղաքականությանը, ինչը ստիպեց Հայ եկեղեցու հայրերին VI դարում հոգևոր պաշտպանության միջոցներ ձեռնարկել: 506 և 554 թթ. Դվինի եկեղեցական ժողովները ամրագրեցին Հայոց դավանանքային ինքնորոշումը և ազգային միաբանությունը նոր պայմաններում:

Հազարամյակների պատմական ուղի անցած Հայոց թագավորությունում քրիստոնեությունը պետական կրոն հռչակմամբ (301 թ.) հայ ժողովրդի դավանանքային ինքնուրույն ուղին պահպանվեց շնորհիվ հավատքային անաղարտության, ազատագրական պայքարի և Հայ Առաքելական եկեղեցու որդեգրած քրիստոսաբանական վարդապետության ավանդապահության ու ազգապահպան գործունեության:

Նվաճող տերություններին հանգիստ չէին տալիս հայ ժողովրդի ազատատենչ նկրտումները, որոնք նրանք նույնիսկ օգտագործեցին իրենց սեփական ծրագրերը իրականացնելու համար: Այսպես Վարդան Մամիկոնյանի առաջնորդած ապստամբության ընթացքում (572 թ.), ելնելով իր սեփական շահերից, Բյուզանդական կայսրությունը խառնվեց ռազմական գործողություններին, որոնք վերածվեցին պարսկա-բյուզանդական մոտ քսան տարի տևած պատերազմի:

Հայկական հողերի նվաճումը Պարսկաստանի և Բյուզանդիայի կողմից տեղի էր ունենում Առաջավոր Ասիայում նրանց միջև քաղաքական ազդեցության ոլորտների բաժանման պայմաններում: Այդ տերությունների գահակալներից ոչ մեկը չէր հանդուրժում Հայոց պետության, ի դեմս թագավորության, վերականգնումը, եթե Հայաստանը նույնիսկ լիներ կախյալ դաշնակցի կարգավիճակով:

Հայոց զորավար Մուշեղ Մամիկոնյանը հիմքեր ուներ չհավատալու օգնություն ստանալու ակնկալիքով արված Վահրամ Չուբինի խոստմանը՝ Հայոց թագավորությունը վերականգնելու մասին, քանի որ, եթե վերջինս նույնիսկ հաղթեր, ապա հակամարտող տերությունների դիրքորոշումը Հայաստանի հանդեպ շարունակելու էր ենթարկված մնալ նրանց նվաճողական քաղաքականությանը: Հայոց անկախ պետականության վերահաստատման

ուղին միջնադարում անցնում էր օտար տիրապետության դեմ պետական մտածողությամբ օժտված հայ զորավարների, իշխանների և հոգևորականության կողմից գլխավորած հայ ժողովրդի մղած պայքարի բոցերի միջով:

Հայաստանի 591 թ. պարսկա-բյուզանդական բաժանումից հետո Բյուզանդական կայսրությունը տիրացավ երկրի մեծ մասին, որով ամենևին չնվազեց ճնշումը քաղաքական, տնտեսական և դավանանքային ասպարեզներում: Ավելին, Հայոց ռազմական հզորության հիմքերի խարխլումը ծրագրային բնույթ ստացավ, և ծանր վիճակի մեջ հայտնված հայ զորավարներն իրենց զորքերով ապստամբում էին ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ նվաճող տերությունների հեռավոր սահմաններին, ուր նրանք հայտնվում էին, իհարկե, ոչ իրենց կամքով:

VII դարի առաջին տասնամյակներում միջազգային իրավիճակի փոփոխումով Հայաստանի ներքին քաղաքական զարգացումը ընթացավ պետականության և տարածքային ամբողջականության վերականգնման ուղիով:

Հայաստանում վիճակը բարդանում էր նաև կայսրության դավանանքային ճնշման և պառակտիչ քաղաքականության իրագործմամբ, որի հետևանքով Հայաստանի բյուզանդական մասում գտնվող Ավանում հիմնվեց Դվինի կաթողիկոսությանը հակաթոռ քաղկեդոնական աթոռանիստը, որը գոյատևեց ընդամենը երկու տասնամյակ: Մյուս կողմից, հաշվի առնելով Հայ Առաքելական եկեղեցու դավանաբանական անհանդուրժողականությունը բյուզանդական պաշտոնական եկեղեցու հանդեպ, պարսից արքա Խոսրով Բ Փարվեզը (Ապրուէզ, Ապրվեզ) (590-628), Սասանյանների կրոնական և գաղափարախոսական ճգնաժամի պայմաններում, ի մի բերելով Պարսկաստանի տիրապետության տակ հայտնված քրիստոնյաների հակաքաղկեդոնական՝ հակաբյուզանդական տրամադրությունները, հրամայեց, որ նրանք «հաւատ զՀայոցն կալցին»:

Սա մի ժամանակաշրջան էր, երբ իր ավարտին էր մոտենում բյուզանդա-պարսկական հակամարտությունը և սկիզբ առնում բյուզանդա-արաբականը: Հայաստանը, իր կամքին հակառակ ներքաշված լինելով այդ պայքարի ոլորտը, կարողացավ դիմակայել թշնամիներին: Իսկ Սասանյան Պարսկաստանն ընկավ խալիֆայության հարվածների տակ: Արևմուտքում նվաճողը մնաց նույնը՝ Բյուզանդական կայսրությունը, որի նվաճողական քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ այդ ընթացքում չդադարեց: Կայսրության բոլոր ջանքերը կարծես թե պետք է կենտրոնանային իր նվաճումները ընդարձակող խալիֆայության դեմ: Մինչդեռ Բյուզանդիան, անտեսելով և ոտնահարելով հայ ժողովրդի շահերը, շարունակում էր իր արդեն ավանդական դարձած քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ: Խընդրո առարկա ժամանակաշրջանի առումով կայսրության նման վարքագիծը ավելի որոշակի պատկերացում է տալիս այն բացասական դերի մասին, որ Բյուզանդիան դարեր շարունակ խաղացել է Հայաստանի պատմական ճակատագրում: Սակայն, բյուզանդական կայսրերը խաթարելով Հայաստանի

ռազմաքաղաքական հիմքերը, մերկացնում էին իրենց տերության արևելյան սահմանները վաչկատու, վայրի ցեղերի առջև, որոնք հետագայում հողմացրիվ արեցին հենց իրեն՝ Բյուզանդիային:

Իսլամ դավանող Արաբական խալիֆայության հարվածների տակ ոչ միայն վերացավ Սասանյանների պետությունը, այլ նաև Իրանը ընդունեց նվաճողների կրոնը, իսկ Բյուզանդիան ծանր պարտություններ կրելով, ստիպված էր զիջել իր դիրքերն Արևելքում: Մինչդեռ Հայաստանը խալիֆայության հարձակումներից պաշտպանվելու սկզբնական շրջանում կարողացավ վերականգնել իր տարածքային ամբողջականությունը և մինչև VII դարի վերջերը շնորհիվ ճկուն քաղաքականության, դիվանագիտության և ազատագրական պայքարի պահպանեց իր անկախ ազգապետությունը՝ հետագայում վերականգնելով նաև թագավորությունը Բագրատունիների օրոք, այնուհետև Կիլիկիայում: Հայոց ազգային և հոգևոր ինքնության պահպանման վկաներն են մշակութային և գիտական բազում հուշարձանները, որոնցից շատերը մտել են համաշխարհային մշակույթի գանձարանը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԲՅՈՒԶԱՆԴԱ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Հայաստանը Սասանյան Պարսկաստանի քաղաքական ճգնաժամի ժամանակ

VI դարի 90-ական թթ. սկզբներին բյուզանդա-պարսկական քսանամյա պատերազմից հետո Հայաստանի տարածքը ենթարկվեց նոր բաժանման Բյուզանդական կայսրության գերակայությամբ, որին նախորդեց և նպաստեց Սասանյանների պետությանը համակած քաղաքական ճգնաժամը:

Պալատական դավադրության հետևանքով Որմիզդ Դ-ի (579-590) սպանությանը հետևեց Պարսկաստանի արևելյան շրջանների զորավար Վահրամ Չուբինի գլխավորած ապստամբությունը, որը սպառնում էր Սասանյանների հարստության գոյությանը: Թագաժառանգ Խոսրով Բ Փարվեզը իր մորեղբայրների՝ Վնդոյի և Վստամի խորհրդով օգնության խնդրանքով դիմում է բյուզանդական կայսրին. «Յայնժամ յղէ Խոսրով արքայ առ թագաւորն Մաւրիկ արս ճոխս պատարագաւք, եւ գրէ այսպէս. «Տուր ինձ զգահ եւ զտեղի թագաւորութեան հարց եւ նախնեաց իմոց, եւ արձակեա՛ ինձ զաւր յաւգնութիւն, որով կարացից հարկանել զթշնամին իմ, եւ կանգնեա՛ զթագաւորութիւն իմ, եւ եղէց քոյ որդի: Եւ տաց քեզ զկողմանս Ասորւոց-զԱրուաստանն ամենայն մինչեւ ի Մծբին քաղաք, եւ յերկրէն Հայոց՝ զաշխարհն Տանուտերական իշխանութեանն մինչեւ ցԱյրարատ եւ ցԴուին քաղաք, եւ մինչեւ ցեզր ծովուն Բզնունեաց եւ ցԱռեստաւան. եւ զմեծ մասն Վրաց աշխարհին՝ մինչեւ ցՏփխիս քաղաք. եւ կալցուք ուխտ խաղաղութեան ի մէջ մեր մինչեւ ցմահ երկոցունցս, եւ անշուշտ լիցի այս երդումն ի միջի մերում եւ ի մէջ որդւոց մերոց, որ թագաւորելոց իցեն յետ մեր»[1]: Մավրիկիոս կայսրը նոր տարածքների տիրանալու նպատակով չհապաղեց օգտվել Սասանյանների թուլացումից: Նրա օգնությունը Խոսրովին բխում էր Բյուզանդական կայսրության քաղաքական շահերից:

Կայսրությունից առանձնակի ճիգեր չպահանջվեցին այդ նպատակը իրականացնելու համար, քանի որ Մավրիկիոսի ուղարկած ռազմական ուժերի զգալի մասը կազմում էին հայկական զորքերը: Կայսրը «յինքենէ յղէր զՓիղիպիկոս զփեսայ իւր եւ տայր տանել պատասխանի ընդունելութեանն. առնոյր ի նմանէ երդումն, եւ տայր նմա զաւր կայսերական յաւգնականութիւն՝ զՅովհաննն Պատրիկ ի Հայոց կողմանէ, եւ զՆերսէս ստրատելատ յԱսորւոց եւ զզաւրս նոցա. անցեալք ի հանդիսի, երեք հազար հեծեալ ըստ հարիւրաւորաց, ըստ հազարաւորաց, ըստ գնդից, ըստ դրաւշից իւրեանց: Եւ զզաւրս աշխարհին Հայոց ընդունէին գումարել, որք ի ժամուն առ ձեռն

գտեալ. եւ անցեալք ի հանդիսի իբրեւ հազարք հնգետասանք, իւրաքանչիւր գունդք նախարարաց՝ ըստ հարիւրաւորաց, ըստ հազարաւորաց, ըստ գնդից, ըստ դրաւշոց իւրեանց»: Սեբեոսը մեծ ոգեշնչվածությամբ, գովեստով և հպարտությամբ է արտահայտվում Հայոց զորաբանակի մասին. «Ամենեքեան սոքա սպառազէնք, ընտիրք պատերազմողք, վառեալք քաջութեամբ՝ իբրեւ զիուր, որ ո՛չ զանգիտեն եւ ոչ զթիկունս դարձուցանէին: Դէմք առիւծու դէմք նոցա, թեթեւութիւն ոտից իբրեւ զթեթեւութիւն այծեմանց երագութեամբ ի վերայ դաշտաց»[2]:

Վահրամ Չուբինի ապստամբության նախօրեին կայսրության զորքը ներխուժել էր Հայաստանի պարսկական ազդեցության ոլորտում գտնվող մասը: Բյուզանդական զորքը Հովհան Պատրիկի գլխավորությամբ պաշարել էր Դվինը[3]: Երբ Վահրամին արքա հռչակելու լուրը հասավ պաշարողներին, նրանք «թողին զնա (Դվինը-է.Դ.) եւ գնացին. ճանապարհ կալեալ յԱտրպատական լաստեցին զերկիրն ամենայն, հարեալ զամենայն գայր եւ զկին բերանով սրոյ իւրեանց, առեալ զամենայն առ եւ զգերի եւ զաւար՝ դարձան յերկիրն իւրեանց»[4]:

Մավրիկիոսին հայտնի չէր, թե Վահրամ Չուբինի հաղթանակի դեպքում ինչպես կծավալվեին Բյուզանդիայի հարաբերությունները Պարսկաստանի հետ: Ինչպես շուտով պարզվեց, Վահրամը խնդրել էր Հայոց զորավար Մուշեղ Մամիկոնյանին իրեն օգնել զորքով, փոխարենը խոստանալով վերականգնել Հայոց թագավորությունը իր ամբողջական ընդգրկմամբ, ինչը ամենևին չէր համապատասխանում Բյուզանդիայի քաղաքական ծրագրերին: Սեբեոսը պահպանել է Մուշեղ Մամիկոնյանին և այլ հայ նախարարներին ուղղված Վահրամ Չուբինի հրովարտակը «Ես այսպէս կարծէի, եթէ ես յորժամ ընդ թշնամիս ձեր մարտնչիմ, եւ դուք ի կողմանէ այտի եկեալ՝ ինձ աւգնական լինիցիք. զի ես եւ դուք միաբանութեամբ բարձցուք ի միջոյ զտիեզերական պատուհասն, զտունն Սասանայ: Իսկ դուք աւադիկ ժողովեալ գայք ի վերայ իմ պատերազմաւ լաւգնականութիւն դմա: Այլ ես ո՛չ երկեայց ի ժողովելոց երիցանցդ Հռովմայեցւոցդ, որ եկեալ են ի վերայ իմ: Բայց դուք, Հա՛յք, որ տարաժամ ցուցանէք զտիրասիրութիւն. ո՞չ ապաքէն տունդ Սասանական եբարձ զերկիրդ ձեր եւ զտէրութիւն: Եւ կամ ընդէ՞ր բնաւ ապստամբեցին հարքն ձեր եւ գնացին ի ծառայութենէ նոցա, մինչեւ ցայսաւր պատերազմեալ ի վերայ աշխարհին ձերոյ: Եւ արդ՝ դիմեալ գայք ի վերայ իմ կորուսանել զայնչափ վաստակս ձեր. զի թէ Խոսրով յաղթեալ էր՝ երկոքին դոքա միաբանեալ բարձցեն զձեզ ի միջոյ: Բայց զի հաճոյ թուեցի ձեզ ի բաց կալ ի դոցանէ եւ միաբանել ընդ իս, եւ ձեռն տալ ինձ յաւգնականութիւն: Եւ թէ ես յաղթեցից՝ երդուեալ ի մեծ աստուածն Արամազդ, եւ յԱրեգակն տէր եւ ի Լուսին, ի Հուր եւ ի Ջուր, ի Միհր եւ յամենայն աստուածս, եթէ ձեզ տուեալ լիցի իմ զհայոց թագաւորութիւնն. զո՞ր եւ դուք կամիք՝ արասջիք ձեզ թագաւոր: Եւ թողում ձեզ զամենայն երկիրն հայոց մինչեւ

ցԿապկոհ եւ ցդուռն Աղուանից. եւ յԱսորւոց կողմանէ՝ զԱրուաստան, զՄըրծուին եւ զՆոր Շիրական մինչեւ ցսահմանս Տաճկաց, զի առ նախնեաւքն իսկ ձեզ լեալ է. եւ ընդ արեւմուտս մինչեւ ցԿեսարիա Կապադովկացւոց: Եւ ես մի՛ իշխեցից քան զՋարասպ անցանել յայնկոյս. եւ գանձն Արեաց թագաւորութեանս բաւական համարեալ լիցի ինձ եւ ձեզ, եւ այնչափ ձեզ շատ լիցի՝ մինչեւ ձեր թագաւորութիւնդ հաստատեսցի»[5]:

Մուշեղ Մամիկոնյանը և նրա զինակիցները ընթերցելով հրովարտակը «ոչ արարին բանիցն պատասխանի. եւ ոչ իսկ ասացին բազմաց, զի երկընչէին յանմիաբանութենէ իւրեանց»[6]: Մուշեղի և նրա շուրջ համախմբված նախարարների զգուշավորությունը թելադրված էր մի քանի հանգամանքներով. ա) հայերը, ելնելով անցյալի դառը փորձից, հիմք չունեին հավատալու պարսից գահի հավակնորդի երդմանը, բ) հայ նախարարներին հայտնի չէր Խոսրովի և Վահրամի միջև ծավալված պայքարի ելքը, ուստի վերջինիս պարտությունից հետո Հայաստանը կընկներ հաղթանակած Խոսրովի և նրան օգնած Մավրիկիոսի կրկնակի հարվածի տակ, գ) եթե Մուշեղ Մամիկոնյանը հայկական զորքերի (Արևելյան Հայաստանից) հետ Վահրամի կողմից հանդես գար, ապա անխուսափելիորեն կբախվեր ինչպես Խոսրովին օգնության եկած բյուզանդական ռազմական ուժերի, այնպես էլ դրանց կազմում ընդգրկված արևմտահայկական գնդերի հետ: Խուսափելով երկրում քաղաքական պառակտման և բարդությունների առաջացումից Մուշեղ Մամիկոնյանը և նրա զինակիցները շատերին նույնիսկ չասացին Վահրամի հրովարտակի մասին:

Հայ նախարարների լռությունը կատաղեցնում է Վահրամ Չուբինին, և նա կրկին դիմում է նրանց երկրորդ թղթով. «Գրեցի առ ձեզ ի բաց կալ ի նոցանէ, ինձ եւ ձեզ բաւական համարելով զամենայն աշխարհս եւ զամենայն գանձս թագաւորութեանս այսորիկ. ուրեմն ոչ կամեցարուք լսել, զի ոչ արարէք բանիցն պատասխանի»: Այնուհետև հետևում են սպառնալիքները, որոնցից բացահայտվում է նրա իսկական՝ արևելյան բռնապետի դեմքը, որին չվստահելու և չապավինելու բոլոր հիմքերն ունեին հայերը: «Թղթի» շարունակությունում կարդում ենք. «Ես զձեզ ապաշաւեմ, ասէ. քանզի վաղիւ առաւաւտուն ցուցանեմ ձեզ փիղս վառս, եւ ի վերայ, զարս սպառազինեալս քաջաց, որ տեղասցեն ի վերայ ձեր նետս երկաթեղէնս ձեռբաձգութեամբ, եւ շաւառունս մուխս պողվատիկս սլաքաւք՝ ի հաստաձիգ աղեղանց. արս երիտասարդս հզաւրս սպառազէնս վատնելոց, եւ երիվարս տաճիկս եւ երագունս, տապարս եւ սուսերս մուխս եւ պողվատիկս եւ կռուփս՝ որչափ Խոսրովայ եւ ձեզ պիտոյից է»[7]:

Մուշեղ Մամիկոնյանը պատասխան է ուղարկում հետևյալ բովանդակությամբ. «Առ Աստուծոյ է թագաւորութիւնն, եւ ում կամեցաւ՝ ետ. բայց դու պարտիս յանձն քո ապաշաւել եւ ոչ ի մեզ: Եւ ծանեայ զքեզ այր պոռոքաբան. եւ ոչ խրախուսես յԱստուած, այլ ի քաջութիւն եւ ի փղաց զաւրութիւն:

Այլ ես ասեմ քեզ. եթե Աստուած կամեսցի՝ վաղիւ պատելոց է զքեւ պատերազմ քաջաց, եւ ճայթեսցեն ի վերայ քո եւ ի վերայ բազմութեան փղացդ իբրեւ զամպս երկնից գազանագոյնս քան զամենեսեան: Եւ ի վերուստ ահագին ճայթէ եւ փայլատակէ եւ յարձակին քեզ սպառազէնք ճերմակ երիվարաւք եւ բռնալիր նիզակաւք, եւ անցանեն ի մէջ բազմութեանն՝ իբրեւ զփայլատակունք հրոյ շանթելոյ, զի ցաւղանայցեն ի յերկնից ի յերկիր, եւ այրեսցեն զխռիւս դաշտաց, զանտառս զդալարս եւ զգաւսացեալս: Քանզի թէ Աստուած կամեսցի՝ տանելոց է սաստկութիւն հողմոյ զզաւրութիւնդ քո իբրեւ զփոշի, եւ գանձ արքունի յարքունիս գնայ»[8]: Մուշեղ Մամիկոնյանը խոսք անգամ չի ասում Վահրամ Չուբինի առաջին հրովարտակի մասին: Առաջին հայացքից նույնիսկ կարող է այնպիսի տպավորություն ստեղծվել, թե այն իրեն չէր հասել: Սակայն Սեբեոսի տեղեկությունների հավաստիությանը կասկածելու առիթ չկա: Ուստի պետք է կարծել, որ առաջին հրովարտակը ստացվել էր և, անկպկած, Մուշեղ Մամիկոնյանի սրտից էր բխում Հայոց թագավորության վերականգման գաղափարը: Բայց Վահրամի առաջարկած ուղիով չէր, որ Մուշեղը պիտի ձգտեր այդ գաղափարի իրականացմանը զորավիգ լինել: Հայաստանի անկախությունը ոչ թե օտարներն էին բերելու, այն էլ իրենց շահադիտական նպատակներից ելնելով, այլ ինքը՝ հայ ժողովուրդը, իր սեփական ուժով, մտավոր կարողությամբ և հազարամյակների խորքից եկող Աստվածապաշտ իմաստությամբ:

Մուշեղ Մամիկոնյանը, մեծ տեղ տալով Աստծո կամքով թագավորության հաստատմանը, դրանով իսկ արտահայտել է այդ խնդրի օրինականության վերաբերյալ իր դիրքորոշումը: Սասանյանների առնչությամբ այդ մտքի արտահայտումը տվյալ պարագայում բխում էր Հայաստանի համար ուժերի ոչ բարենպաստ հարաբերակցությունից[9]: Հայոց զորավարը Վահրամ Չուբինին օգնություն ցույց տալու հարցը չի կապել Հայոց թագավորության վերականգնման գաղափարի հետ: Եթե նա այդպես վարվեր, ապա մերժելով առաջինը, իր ստորագրությունը կդներ երկրորդի բացառման տակ: Ուստի, Մուշեղ Մամիկոնյանը ավելի հարմար է գտել Վահրամի պահանջը մերժելիս ընդհանրապես չանդրադառնալ նրա կողմից բարձրացված առաջարկին:

Բյուզանդա-պարսկական հարաբերությունների տեսանկյունից անդրադառնալով կայսրությունից սպասվող օգնությանը՝ Խոսրովին անհրաժեշտ էր հաշվի առնել հետևյալ հանգամանքները: Առանց կայսրության օգնության և աջակցության Խոսրովը շատ ավելի թույլ էր քան Վահրամը, որը գլխավորում էր Պարսկաստանի հակասասանյան տրամադրված հիմնական ուժերը: Մավրիկիոսը օգնելու էր Խոսրովին ոչ թե Պարսկաստանի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու և նույնիսկ ոչ այնքան իրեն խոստացված տարածքները ստանալու համար[10]: Խոսրովին օգնություն ցույց տալու հարցի քննությունը ի հայտ էր բերել քաղաքական բարո-

յականությունից զուրկ և թշնամական այն մթնոլորտը, որ գոյություն ուներ բյուզանդա-պարսկական հարաբերություններում, արտացոլվելով նաև դիվանագիտության բնագավառում, ինչպես հետևում է Սեբեոսի հաղորդումից. «Արդ՝ ժողովեալ թագաւորին զամենայն *սնկղիտոսն*, հարցանէր զնոսա խորհուրդ, եւ ասէր. «Սպանին պարսիկք զՈրմիզդ զթագաւորն իւրեանց եւ նստուցին զորդի նորա թագաւոր: Եւ զաւրք թագաւորութեանն նստուցին զայլ ոմն թագաւոր յԱրեւելս. եւ եկեալ նա զաւրու մեծաւ յինքն յափշտակեաց զթագաւորութիւնն. եւ մանուկ որդի նորա փախստական գնացեալ եկն առ մեզ, եւ խնդրէ ի մէնջ զաւրս յաւգնականութիւն, եւ խոստանայ առնել այսպէս: Արդ՝ զի՞նչ արասցուք, ընդունի՞մք. արժա՞ն է ընդունել, թէ ոչ»: Իսկ նոքա ասեն. «Ոչ է արժան ընդունել, զի ազգ մի անաւրէն են եւ ամենեւին սուտ. ի նեղութեան իւրեանց խոստանան առնել, եւ յորժամը յանդորր ելանեն՝ ստեն. բազում չարիս կրեալ է մեր ի նոցանէ. թո՛ղ սպառեսցեն զմիմեանս, եւ մեք հանգիցուք»[11]:

Խոսրովը, փաստորեն, ոչ միայն չէր տիրում այն տարածքներին, որոնք խոստացել էր զիջել Մավրիկիոսին ի հատուցումն սպասվող օգնության, այլև իր սեփական երկրում զրկված էր իրական իշխանությունից: Պարսկաստանում իրեն հավատարիմ մնացած ուժերը կարող էին օգտակար լինել միայն Բյուզանդիայից օգնություն ստանալու դեպքում: Անկախ բյուզանդա-պարսկական հարաբերություններում մինչ այդ եղած թշնամական մթնոլորտից, կայսրության քաղաքական նպատակները իրենց վճռական դերը խաղացին Խոսրով Փարվեզի հետ դաշինք կնքելու գործում: Կայսրը, մերժելով սինկղիտի (*սնկղիտոս*) խորհուրդը, որոշեց օգնել Խոսրովին[12]: Պարսից գահի համար մղված պայքարում վերջինս ներկայացնում էր առավել թույլ կողմը և, ըստ Մավրիկիոսի, հետագայում հնարավոր էր, որ կայսրության համար նվազ վտանգավոր կլիներ: Այն փաստը,որ Խոսրովը առանց օգնության չէր կարող դիմակայել Վահրամին, խոսում է առաջինի ավելի թույլ լինելու և վերջինիս, թեկուզև կարճ ժամանակով, երկրում իշխանության իրական տեր լինելու մասին[13]: Մավրիկիոսը, օգնելով Խոսրովին, ավելի էր թուլացնում Պարսկաստանին, քանի որ Խոսրովի և Վահրամի պայքարը ընդհանուր առմամբ ջլատում էր պարսից ուժերը:

Բյուզանդական կայսրության արտաքին քաղաքականության անքակտելի մասն էր կազմում այն իրավիճակների օգտագործումը, երբ կայսրության թշնամիներին ոչնչացնում էին հենց նրանց թշնամիները: Այդ հանգամանքն է մատնանշում Սեբեոսը, վկայակոչելով սինկղիտոսում արտասանած («թո՛ղ սպառեսցեն զմիմեանս, եւ մեք հանգիցուք»), ինչպես նաև հետագայում Հայոց զորականության կապակցությամբ Մավրիկիոսի՝ Խոսրովին գրած նամակի խոսքերը («զի եթէ մեռանին՝ թշնամիք մեռանին. եւ եթէ սպանանեն՝ զթշնամիս սպանանեն. եւ մեք կեցցուք խաղաղութեամբ»)[14]: Խոսրովի և Վահրամի միջև ծավալվող և միջազգային բնույթ ստացող

պայքարում, բացի պարսկականից ջլատվելու էին նաև հայոց ուժերը, ինչը նույնպես ձեռնտու էր կայսրությանը: Այսպիսով, Խոսրովին ցույց տված Մավրիկիոսի օգնությունը բխում էր ոչ թե վերջինիս հանդեպ եղած բարյացակամ վերաբերմունքից, այլ թելադրված էր կայսրության նվաճողական քաղաքականության տրամաբանությամբ:

Ի տարբերություն Սեբեոսի, Թեոփիլակտոս Սիմոկատան Մավրիկիոսի և սենատի՝ Խոսրովին օգնելու որոշումը պատճառաբանել է կայսրության բարոյական պարտքով, որն իբրև թե պայքարում էր չարիքի դեմ հանուն արդար գործի[15]: Ելնելով վերնախավի շահերից[16], Սիմոկատան ներկայացրել է կայսրության արտաքին նվաճողական քաղաքականությունը որպես արդարության դրսևորում, իսկ Սեբեոսը հայ ժողովրդի համար մեծագույն չարիք էր համարում պարսկական, բյուզանդական և մի քանի տասնամյակ անց՝ արաբական խալիֆայության զավթողական քաղաքականությունը:

Բյուզանդա-պարսկական հարաբերություններին բնորոշ էր Մավրիկիոսի և Խոսրովի վարած երկդիմի քաղաքականությունը[17]: Մավրիկիոսը ընդունել էր նաև Վահրամ Չուբինի կողմից ուղարկված դեսպաններին՝ Խոսրովին չօգնելու խնդրանքով: Փոխարենը, Վահրամը խոսք տվեց կայսրությանը հանձնել Մծբինը և մինչև Տիգրիս գետն ընկած հողերը: Մավրիկիոսը կայսրության շահերից բխող լուծում փնտրելիս միաժամանակ հապաղեց պատասխան տալ: Ըստ երևույթին, պատկերացում կազմելով Վահրամի իրական ուժի[18] մասին և, հասկանալով, որ հետագայում նա կայսրության վտանգավոր ախոյանը կդառնա, Մավրիկիոսը ի վերջո որոշեց օգնել Խոսրովին:

Բյուզանդա-սասանյան դաշինքի հակասական բնույթի մասին են վկայում Խոսրովի որոշ գործողությունները, որոնք չէին համապատասխանում նրա խոստումներին: Խոսրովը, խոստանալով ի հատուցումն սպասվող օգնության զիջել տարածքներ, միևնույն ժամանակ արգելքներ էր դնում այդ ճանապարհին[19], իսկ հետագայում, ամրապնդվելով գահին, հարմար առիթ էր փնտրում վերադարձնելու կորցրածը: Այսպիսով, թե՛ Մավրիկիոսը և թե՛ Խոսրովը վարում էին քաղաքական հակախաղ: Բյուզանդական կայսրն ընդունում էր թե՛ Խոսրովի և թե՛ Վահրամի դեսպաններին, սակայն, ելնելով կայսրության քաղաքական շահերի հեռանկարներից, օգնեց առաջինին: Իր հերթին Խոսրովը ձգտում էր իր ձեռքում պահել Հայաստանի հարավարևմուտքում գտնվող ռազմավարական կարևորություն ունեցող մի շրջան, որի կենտրոնը Մարտիրուպոլիսն էր: Սակայն այդ նրան չհաջողվեց: Վահրամը նույնպես փնտրում էր Մավրիկիոսի աջակցությունը, սակայն մերժում ստանալով, կայսրին խնդրեց գոնե չօգնել Խոսրովին: Վահրամը ստիպված էր Մավրիկիոսին խոստանալ մի տարածք, որը Խոսրովի խոստացածի միայն փոքր մասն էր կազմում:

Պարսկական պետությանը համակած ճգնաժամի հանդեպ Մավրիկիոսի

դիրքորոշումը սկսեց պտուղներ տալ[20]: Վահրամի կողմնակիցներից շատերը, ականատես լինելով Մավրիկիոսի օգնությանը Խոսրովին և Վահրամ Չուբինի ապստամբության ուժի թուլացմանը, նետվեցին Խոսրովի կողմը:

Բյուզանդիայի հետ ռազմական դաշինքը Խոսրովը ցանկանում էր ամրապնդել քրիստոնեության հադեպ ցուցաբերած իր դրական վերաբերմունքով: Դեռևս այն ժամանակ, երբ նա ստիպված էր թողնել և հեռանալ իր թագավորությունից, ինչպես հաղորդում է Թեոփիլակտոս Սիմոկատան, ճանապարհին հայացքը հառում է դեպի երկինք և, ընկալելով աշխարհի Արարչի ճշմարտացիությունը, հրաժարվում է կեղծ աստվածներից ու այլևս հույս չդնելով Միթրայի վրա, մեղմացնում է իրեն սպառնացող վտանգը և հավատափոխությամբ բարելավում սեփական ճակատագիրը: Դրանից հետո Խոսրովը բյուզանդացիներից օգնություն խնդրեց՝ ապավինելով Մավրիկիոսի «գթասրտությանը»: Մեկ այլ տեղ, պատմելով մի քաղկեդոնական հոգևորականի հետ Խոսրովի հանդիպման մասին, պատմիչը նշել է թե ինչպես շահնշահը երկրպագեց Աստվածամոր սրբապատկերը, որի կենդանի կերպարը նրան օգնել էր կայսեր աջակցությամբ հաղթել իր թշնամիներին[21]: Ինչպես գրել է Սեբեոսը. «Էին սորա կանայք բազում ըստ աւրինի մոգութեան իւրեանց, բայց առ սա եւ կանայս քրիստոնեայս, եւ սորա կին քրիստոնեայ յոյժ գեղեցիկ ի Խուժաստան աշխարհէ, անունն Շիրին: Սա է բամբիշն, տիկնաց տիկին: Շինեաց վանս եւ եկեղեցի մերձակայ արքունական կայենիցըն, եւ բնակեցոյց ի նմա քահանայս եւ պաշտաւնեայս. կարգեաց ռոճիկս եւ հանդերձագինս յարքունուստ, զարդարեաց ոսկւով եւ արծաթով: Եւ բարձր ի գլուխ համարձակութեամբ քարոզէր զԱւետարանն արքայութեան ի դրանն արքունի. եւ ոչ ոք իշխէր ի մեծամեծաց քաւդէիցն բանալ զբերան իւր եւ ասել բան մի մեծ կամ փոքր ընդ քրիստոնէի»[22]:

Սիմոկատան իհարկե չափազանցության մեջ է ընկնում Խոսրովի հավատափոխության մասին խոսելիս: Քանզի Սեբեոսի գրել է. «Բայց ապա յորժամ լցան աւուրք եւ եհաս ի կատարեալ ժամանակի՝ զբազումս ի մոգուց որ դարձան ի քրիստոնէութիւն՝ սպանմամբ կատարեալ մարտիրոսութեամբ ի տեղիս տեղիս: Եւ հրաման ետ, ասէ. «Մի՛ ոք յանաւրինաց իշխեսցէ դառնալ ի քրիստոնէութիւն, եւ մի՛ ոք ի քրիստոնէից դարձցի յանաւրինութիւն[23], այլ իւրաքանչիւր ոք յիւր հայրենի յաւրէնս պինդ կացցէ: Եւ որ ոչն կամիցի ունել զհայրենի դէն, այլ ապստամբեալ ի բաց կացցէ յիւր հայրենի աւրինացն՝ մեռցի»[24]: Այնուամենայնիվ քրիստոնեական գործոնը կարևոր տեղ էր զբաղեցնում Խոսրովի թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականության մեջ: Այդ երևում է նրա վերաբերմունքից, ինչպես ընդհանրապես քրիստոնյա դավանանքի, այնպես էլ, մասնավորապես, Հայ եկեղեցու հանդեպ: Անհրաժեշտ է նշել, որ Խոսրովի քաղաքականությունը այդ բնագավառում իր գահակալության տարբեր տարիներին միանշանակ չի դրսևորվել: Խոսրովը, պարսից գահին վերահաստատվելու և ամրապնդվելու ժամանակ՝ հաճոյա-

նալով Մավրիկիոսին, սիրաշահում էր քաղկեդոնականությանը հետևող և Սասանյանների քաղաքական ոլորտում գտնվող քրիստոնյաներին, իսկ VII դարի առաջին տասնամյակներին նրա դավանաբանական հետաքրքրությունների ոլորտը սահմանափակվեց միաբնակներով, մասնավորապես, Հայ եկեղեցու հետևորդներով, որպես գաղափարական բնագավառում Բյուզանդիայի դեմ վերսկսված պայքարի արտացոլում:

Խոսրով Փարվեզին հաջողվեց համախմբել ուժերը՝ Վահրամ Չուբինի ապստամբությունը ճնշելու գործում: Վճռական ճակատամարտը նրանց միջև տեղի ունեցավ Ատրպատականում 591 թ. սեպտեմբերին[25]: Ապստամբների զորքը ջախջախվեց, իսկ Վահրամը ապաստանեց Բահլ Շահաստանում, «ուր եւ ի բանէն Խոսրովայ սպանաւ»[26]:

Վահրամի պարտությամբ վերացավ Խոսրովի քաղաքական ասպարեզից հեռացվելու վտանգը: Ժամանակը եկավ վարձահատույց լինելու այն օգնության համար, որը Խոսրովը ստացել էր Մավրիկիոսից:

Սեբեոսի և Սիմոկատայի հաղորդումները հնարավորություն են ընձեռում ավելի համոզվելու այդ ժամանակաշրջանի բյուզանդա-սասանյան դաշնակցային հարաբերությունների նվաճողական և երկդիմի էության մեջ: Մավրիկիոսը ոչ միայն նոր տարածքների տեր էր դառնում, այլև, օգտվելով ստեղծված իրավիճակից, ձգտում էր Պարսկաստանում բյուզանդական զորք թողնել, որից (բացի թիկնապահների ջոկատից) Խոսրովը ձգտում էր ազատվել[27]: Հաղթանակից անմիջապես հետո Խոսրովը չպարգևատրեց բյուզանդացիներին, իսկ այն, ինչ նրանց հասավ, ջախջախված Վահրամի ճամբարից էր, որը ժամանակին թալանել էր թագավորական գանձարանը: Մավրիկիոսին ընծաներ էր ուղարկել ոչ թե Խոսրովը, այլ նա դրանք ստացել էր բյուզանդացիներից՝ իրենց ռազմաավարից[28]: Խոսրովը նույնիսկ փորձ արեց խանգարել ընծաների ուղարկմանը: 400 հոգուց բաղկացած ջոկատը Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ ընծաների հետ միասին Խոսրովի (որը մինչ այդ հավատացել էր Մուշեղին զրպարտողներին և մտադրվել էր նենգորեն ձերբակալել նրան)[29] դեմ ուղղված բողոքագիր էր տանում կայսրին: Խոսրովի ուղարկած ջոկատը ի վիճակի չեղավ կասեցնել Մուշեղի գլխավորած ջոկատի ընթացքը և նրան ձերբակալել: Ընծաները բողոքագրի հետ միասին հասցվեցին Մավրիկիոսի պալատը: Կայսրը «առաքէ հրովարտակ մեծաւ շնորհակալութեամբ ի ձեռն իւրոյ հրեշտակի, եւ գրէ առ նոսա ի բաց կալ ի խորհրդոյն յայնմանէ, զոր ամբաստանեալ գթագաւորէն: «Եթէ ոչ զգուշանայցէք անձին դորա՝ ի ձեռաց ձերոց խնդրեցից զդա»: Գրէ եւ առ արքայն՝ գոհութեամբ արձակել զամենեսեան»[30]:

Մուշեղ Մամիկոնյանը հայոց զորավար էր, ուստի Խոսրովի վիրավորական և նենգ վերաբերմունքը նրա հանդեպ Մավրիկիոսի կողմից չընկալվեց որպես կայսրության քաղաքական շահերի ոտնահարում: Այս առումով պատահական չէր Մավրիկիոսի որոշումը՝ կասեցնել Խոսրովի դեմ հարուցված

ամբաստանությունը, ինչպես նաև շնորհակալություն հայտնել Խոսրովին[31], ինչը, անկասկած, դիվանագիտական քայլ էր:

Խոսրովը այդ բոլոր բարդություններից և, փաստորեն, Մավրիկիոսի պնդումից հետո ստիպված եղավ վարձատրել Պարսկաստանում գտնվող բյուզանդական օժանդակ զորքերին: «Յայնժամ արքայն Խոսրով, - գրել է Սեբեոսը, - ետ ամենեցուն ըստ իւրաքանչիւր չափուց պարգեւս, եւ արձակեաց յիւրմէ»[32]:

Այսպիսով, Բյուզանդիայի և Պարսկաստանի տիրակալների երկուստեք շահերը նրանց դրդում էին ժամանակավոր համագործակցության: Այդ ընթացքում ոտնահարվում էին հայ ժողովրդի կենսական շահերը: Մուշեղ Մամիկոնյանի հանդեպ դրսևորված ոտնձգությունները բխում էին այն թշնամական մթնոլորտից, որ ստեղծվում էր օտար տերությունների տարածքները տարված հայ զինվորականության շուրջը: Խոսրովի խոսքերից («Կոչեսցի այսր Մուշեղ, եւ կապեսցի ոտիւք եւ ձեռաւք, մինչեւ ես վասն նորա ծանուցից կայսեր»)[33] և Մավրիկիոսի վերաբերմունքից («ի բաց կալ ի խորհրդոյն յայնմանէ») Մուշեղի գործի վերաբերյալ կարելի է ենթադրել, որ կայսրը դեմ չէր Խոսրովի գործողություններին: Մավրիկիոսն իրոք շահագրգռված էր Մուշեղ Մամիկոնյանի[34] և նրա զինակիցների՝ Հայաստանի քաղաքական ասպարեզից հեռացմանը: Այդ են վկայում ինչպես Խոսրովին չպախարակելը Մուշեղի հանդեպ բռնած դիրքի կապակցությամբ, այնպես էլ հայոց զորավարին Կոստանդնուպոլիս կանչելը[35] և իր գլխավորած ուժերի հետ Թրակիա ուղարկելը՝ կայսրության շահերի համար կռվելու:

Կարելի է եզրակացնել, որ Բյուզանդիայի և Պարսկաստանի ինչպես հակամարտությունը, այնպես էլ ժամանակավոր դաշնակցությունը աղետաբեր էին նրանց ռազմաքաղաքական ոլորտում հայտնված երկրների և մասնավորապես Հայաստանի համար: Դառնալով պատերազմական գործողությունների թատերաբեմ՝ Հայաստանը ավերծությունների էր ենթարկվում և մարդկային զոհեր տալիս[36], իսկ զինադադարների ժամանակ տեղի էին ունենում տարածքային բաժանումներ, սաստկանում էր վարչաքաղաքական, հարկային և հոգևոր ճնշումը: Պարսկաստանի և Բյուզանդիայի համար նույնիսկ ամենադժվարին ժամանակներում հայկական գործերը մնում էին նրանց արտաքին քաղաքականության կենտրոնում: Այսպիսի իրավիճակում, երբ Պարսկաստանը կլանված էր ներքին պայքարով, որից օգտվեց Բյուզանդիան, Հայաստանը ոչ միայն հնարավորություն չստացավ ազատվել օտար տերությունների քաղաքական վերահսկողությունից, այլև երկրի մեծ մասը պարսկական ճգնաժամի հետևանքով, փաստորեն, անցել էր կայսրության հսկողության տակ: 591 թ. Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև կայացավ Հայաստանի երկրորդ բաժանումը վաղ միջնադարում:

Կայսրության նվաճողական քաղաքականության ջատագով Թեոփիլակտոս Սիմոկատայի գնահատմամբ զինադադարը Բյուզանդիայի և Պարսկաս-

տանի միջև հավասարապես արդարացիորեն պահպանվում էր ու այդպես փառահեղորեն ավարտվեց կայսրության համար պարսկական պատերազմը[37]: Ջավթիչների խոստովանությամբ իրենց ձգտումների հիմնական նպատակն էր Հայաստանին տիրելը, որը, ըստ նրանց մեծապետական շահերից բխող տրամաբանության, ինքն էր մեղավոր նրանց կողմից նվաճված լինելու մեջ: Չէ որ դեռևս Վահրամի ապստամբության սկզբնական ժամանակաշրջանում Մավրիկիոսին ներկայացած Խոսրովի դեսպանները ասում էին, թե կհրաժարվեն Հայաստանից, որի պատճառով պատերազմը, ի դըժբախտություն մարդկանց, այդպիսի թափ ստացավ[38]: Հայաստանի հանդեպ գաղափարախոսական նման տրամադրությունները և վերաբերմունքը արգասիք էին այդ տերությունների՝ պետական քաղաքականության աստիճանի բարձրացված ցինիզմի: Բյուզանդա-պարսկական զինադադարը իր սուր ծայրով ուղղվեց Հայաստանի ռազմաքաղաքական ուժերի ջլատմանը և ծանր փորձությունների պատճառ հանդիսացավ հայ ժողովրդի համար: Բյուզանդա-պարսկական հարաբերությունների նոր փուլը սկսվեց կայսրության կողմից Հայաստանի մեծ մասի զավթումով:

2. Հայաստանի վարչաքաղաքական վիճակը VI դ.

Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև գտնվող երկրները խոշոր վարչա-քաղաքական փոփոխություններ կրեցին 591 թ. պարսկա-բյուզանդական բաժանումից հետո: Դա հատկապես վերաբերեց Հայաստանին, որի հզոր ռազմական ուժերը, հարուստ տնտեսությունը և բնական պաշարները հանգիստ չէին տալիս նվաճող տերությունների ընչաքաղց տիրակալներին: Հաստատվելով պարսից գահին՝ Խոսրով Փարվեզը ի վերջո կատարեց Մավրիկիոսին տված իր խոստումը. «Ետ նոցա զԱրուաստան զամենայն մինչեւ ցՄծբին, եւ զերկիրն Հայոց. որ ընդ իւրով իշխանութեամբն էր, զտունն Տանուտերական մինչեւ ցգետն Հուրազդան, եւ զգաւառն Կոտէից մինչեւ ցաւանն Գառնի եւ ցեզր ծովուն Բզնունեաց, եւ ցԱռեստաւան եւ զԳոգովիտ գաւառ մինչեւ ցՀացիւն եւ ցՄակու: Եւ կողմն Վասպուրական գնդին էր ի ծառայութիւն Պարսից արքային: Եւ ի նախարարացն Հայոց բազումք ի Յունաց կողմանէ եւ սակաւք՝ ի Պարսից: Ետ եւ զմեծ մասն Վրաց աշխարհին մինչեւ զՏփխիս քաղաք»[1]:

Հույն հեղինակ Թեոփիլակտոսի հաղորդման համաձայն Խոսրովը Մավրիկիոսին խոստացել էր վերադարձնել Մարտիրուպոլիսը, անհատույց գիջել Դարան և հրաժարվել Հայաստանից[2]: Հայտնի է, որ Մարտիրուպոլիսը (Նփրկերտ) գտնվում էր Հայաստանում: Թեոփիլակտոսի հաղորդման մեջ այդ քաղաքի առանձին հիշատակությունը իր պատճառներն ունի: Այն մեծ կարևորություն էր ներկայացնում իր ռազմավարական նշանակությամբ:

Մինչ այս դեպքերը Մարտիրուպոլիսը 200 տարի գտնվել էր Արևելահռոմեական կայսրության տիրապետության տակ անցած Հայաստանի արևմտյան մասում, իսկ 589 թ. մայիսին գրավվել էր պարսիկների կողմից[3]: Ուստի Թեոփիլակտոսի մոտ խոսքը գնում է Մարտիրուպոլսի, որպես մինչ 591 թ. բաժանումը ընկած ժամանակաշրջանում Արևմտյան Հայաստանից բռնազավթած քաղաքի՝ բյուզանդացիներին վերադարձնելու մասին: Այս նույն տրամաբանությամբ կարելի է ասել, որ պատմիչի մոտ Հայաստանից հրաժարվելու մասին խոսքը վերաբերում է մինչ 591 թ. Արևելյան Հայաստանի՝ պարսից քաղաքական ոլորտում գտնվող տարածքի համապատասխան հատվածին: Իսկ Հյուսիսային Միջագետքում սահմանը անցնում էր կայսրությանը զիջված Դարայի մոտակայքով: Այս բաժանման մասին հայ քաղկեդոնական սկզբնաղբյուրում գրված է. «Սա (Խոսրովը- Է.Դ.) ամբողջ Հայաստանը մինչև Դվին տվեց Մավրիկիոս կայսրին, որի համար նրա կողմից արքա դարձավ»[4]:

Կարելի է տեսնել, որ այս վարչաքաղաքական փոփոխությունների մասին ամենից մանրամասն տեղեկությունները պարունակվում են Սեբեոսի երկում: Թեոփիլակտոսի երկում և հայ քաղկեդոնական սկզբնաղբյուրում պահպանված հաղորդումները համառոտ են և ընդհանրացնող, իսկ մյուս հայկական աղբյուրները կամ կրկնում են Սեբեոսին, կամ էլ մի փոքր լրացնում:

«Մինչեւ ցԱյրարատ եւ ցԴուին», «մինչեւ ցգետն Հուրազդան», «զգաւառն Կոտէից մինչեւ ցաւանն Գառնի» հասկացությունները վերաբերում են Բյուզադիային անցած «Տանուտերական իշխանության աշխարհի» արևելյան նոր սահմանագծին: Դվինը մնաց Արևելյան Հայաստանի կազմում: «Տանուտերական տունը» չի հակադրվում Կոտայքին, ինչպես առաջին հայացքից կարող է թվալ: Այլապես կհետևի, թե Սեբեոսը մի դեպքում «Տանուտերական տան» տարածքում նշել է մինչև Դվին ընկած հողերը (դրանց մեջ Հրազդան գետից արևելք, բնականաբար, մտնում էր նաև Կոտայքը), իսկ մյուս դեպքում՝ մինչև Հրազդան, որից հետո սկսվում էր Կոտայքը: Սահմանագծի այս հատվածի մասին հետևյալ կարծիքներն են հայտնվել. «Կայսրությանն անցավ պարսկական Հայաստանի ամբողջ արևմտյան կեսը, ընդ որում, Գառնին Կոտայքում կազմում էր սահմանագծի վերին կետը»[5], «Սահմանագիծը դառնում էր Կոտեից գավառը՝ Հրազդան գետի և նրա ձախ՝ օժանդակ գծով, Ազատ գետը»[6], «Գեղամա լեռներ - Ազատ գետ - Արաքս գետ... »[7], «591 թ. բաժանումը, ինչպես Սեբեոսն ու Հովհաննես կաթողիկոսն են նկարագրում, Բյուզանդիային տեր դարձրեց Հայաստանի ամբողջ արևմտյան ու կենտրոնական նահանգներին՝ մինչև Հրազդան գետը և Պարսկաստանի հպատակության տակ թողեց միայն հյուսիսարևելյան նահանգները՝ Սյունիքը, Արցախը, Ուտիքը, Շարուրը՝ Դվինի հետ, հարավ-արևելքում Վասպուրական գավառը»[8]: «Դվին-Ազատ գետ-Գառնի-Հրազդան

գծից արևմուտք ընկած հողերը» անցան կայսրությանը[9], «Նոր սահմանագծի հյուսիսում սահման պետք է ընդունել ոչ թե Հրազդանը, այլ Ազատ գետը և սրա վերին հոսանքի աջ ափին գտնվող Գառնի ավանը: Կոտայք գավառը դարձել է բյուզանդական, իսկ Ոստան Հայոց գավառը մնացել պարսկական»[10]:

Անհրաժեշտ է նշել, որ Հրազդանից ձախ տեղադրված էին Այրարատ նահանգի ոչ միայն Կոտայք, այլև վերջինից հյուսիս՝ Մազազ գավառները[11]: Ուստի, կարծել, թե Կոտայքը Հրազդան գետով էր սահման կազմում կամ սահմանագիծը ուղղակի Հրազդան-Գառնի-Ազատ գծով նշել՝ կարող է թյուրիմացություն առաջացնել: Այդ դեպքում հաշվի չի առնվի Հրազդան և Ազատ գետերի միջև ընկած տարածքը, և դրանից կհետևի, թե այդ գետերը միևնույն բնական գծի վրա էին գտնվում, այնինչ դրանց միջև տեղադրված է Կոտայքը: Նկատի առնելով նաև Հովհաննես Դրասխանակերտցու («Իսկ մեծ հայրապետն Աբրահամ ըստ նախասաց բանին ի Դվին քաղաքի բնակէր ի Պարսից բաժնի անդ. վասն զի գետն Ազատ զսահման բաժնիցն երկոցունց ընդ մէջ հատանէր»)[12] և Արսեն Սափարեցու («Ազատ գետն, որ է սահման պարսից»)[13] հաղորդումները, կարելի է եզրակացնել, որ բյուզանդա-պարսկական սահմանագծի այս հատվածն անցնում էր Հրազդանի վերին հոսանքով, այնուհետև Մազազի և Կոտայքի գավառասահմանով հեռանում էր Հրազդանից ու հասնում Գեղմաղանի լեռնալանջերը, այնտեղից Կոտայքի[14] արևելյան գավառասահմանով ձգվում էր մինչև Ազատ գետի ավազանի վերին մասում գտնվող Գառնի ավանը: Այսպիսով, սահմանագծի մի հատվածը անցնում էր Ազատ գետով, իսկ Մազազը մնաց Արևելյան Հայաստանի կազմում:

Բյուզանդա-պարսկական սահմանագիծն իր հյուսիսային հատվածում Սևանի ավազանի հյուսիս-արևելյան մասից Աղստև և Ջորագետ գետերի ավազաններով հասնում էր մինչև Կուր գետի հովիտը, այնուհետև այնտեղից հեռանալով, ձգվում մինչև Աղանդոն (Թերեք) գետի հովտի վերին շրջանը, որտեղ բնակվում էին ծանարները[15]:

Հայաստանի հաշվին Մավրիկիոսին Խոսրովի կողմից չզիջված հողերի թվում Հովհաննես Դրասխանակերտցին և Վարդան Վարդապետը (Արևելցի) հիշատակել են. «եւ յերկուցն եւս գաւառաց, որ է Մասեացոտն եւ կողմն Արագածու»[16]: Կարծիք է հայտնվել, թե Դրասխանակերտցու բնագրում եղել է «Արածու կողմն»[17]: Սակայն Վարդան Արևելցու հաղորդման լույսի տակ ապացուցվում է Դրասխանակերտցու տեղեկության հավաստիությունը, որով և բացառվում է նման սրբագրության անհրաժեշտությունը: Ուրեմն, Արագածոտն գավառի հիմնական մասն անցել էր կայսրությանը, իսկ Մասյացոտն գավառին հարող Արագածոտնի հարավային՝ Արաքսի գետահովտի ձախափնյակը ընդգրկող մասը, որպես սահմանային գոտի, մնացել էր Արևելյան Հայաստանի կազմում: Հովհաննես Դրասխանակերտցու և Վարդան

Վարդապետի հաղորդումներից հետևում է, որ սահմանագիծը Ազատի և Արաքսի գետախառնուրդից վերջինիս հովտով թեքվում էր հյուսիս-արևմուտք, ընդգրկելով Արագածոտն գավառի հարավային եզերքը, այնուհետև, անցնելով հարավ և հարավ-արևելք հասնում էր Մասյացոտն-գավառի Հացյուն և Մակու բնակավայրերը: Այստեղից այն ընթանում էր դեպի Կոգովիտ գավառի հարավային սահմանը և, թեքվելով հարավ-արևմուտք, հասնում «ցեզր ծովուն Բզնունեաց եւ ցԱռեստաւան»: Վանա լճից հարավ-արևմուտք սահմանագիծը անցնում էր Ընձաքիսար լեռան մոտակայքով, Մոկքի արևմտյան եզրագծով և Ջերմ գետի ստորին հոսանքի շրջանով:

Արևելյան Հայաստանի քաղաքական վիճակի հակիրճ բնութագիրը տվել է Սեբեոսը. «Եւ կողմն Վասպուրական գնդին էր ի ծառայութիւն պարսից արքային»: Այս առումով անհրաժեշտ է քննել «կողմն Վասպուրական գնդին» հասկացության տարածքային ընդգրկման հարցը:

Հայագիտության մեջ պարզված է, որ «կողմանք Սեպհական գնդին» համապատասխանում էր Վասպուրականը: Հարցի քննությունը սկիզբ էր առել Ղ. Ալիշանի այն դիտողությունից, թե Մարդպետական տոհմը» կոչվել է նաև «Սեպհական»[18]: Այդ նույնությունը առկա է «Գիրք թղթոց»-ում[19]: Հակառակ դրա Հ. Հյուբշմանը գտնում էր, որ «կողմանք Սեպհական գնդին» նշանակում էր Տուրուբերան նահանգը, նշելով նաև, թե այդ աշխարհագրական հասկացությունները իրար ճշտորեն չեն համապատասխանել[20]: Գ. Փառնակը քննադատել է Հ. Հյուբշմանի տեսակետը և կարծիք հայտնել, որ «ցարդ անլոյծ մնացած «Սեպհական գնդին կողմանքի» նշանակութիւնն է Վասպուրական»[21]: Ըստ Ն. Ադոնցի աղբյուրներում «Սեպհական» և «Վասպուրական» անունների զուգահեռ օգտագործումը պետք է բացատրվի նրանով, որ աշխարհագրականորեն դրանք տարբեր մեծություններ են՝ մեկը հարաբերում է մյուսին, ինչպես մասն ամբողջին[22]: Կարելի է ասել, որ Մովսես Խորենացու (V դ.) և նրա գործը շարունակող Անանիա Շիրակացու (610-680) «Աշխարհացոյց»-ում Վասպուրական աշխարհը[23] համապատասխանել է դրանց տարածական ընդարձակման առավելագույն փուլին: Ուստի, Վասպուրականի՝ որպես աշխարհի գաղափարը ոչ թե մեռավ, ինչպես ենթադրվել է[24], այլ ավելի ծավալվեց[25]:

Կարծիք է հայտնվել, որ «Վասպուրական գունդ» կամ «Վասպուրական երկիր» անունը կրող մարզպանական Հայաստանի՝ Իրանի տիրապետության տակ մնացած հատվածը շատ ավելի ընդարձակ էր, քան Մեծ Հայքի Վասպուրական աշխարհը[26]: Աղբյուրների հաղորդումներից չի հետևում, թե *Սեպհական* կամ *Վասպուրական գունդը* ավելի ընդարձակ էր, քան Վասպուրական աշխարհը, կամ էլ, թե Հայկական մարզպանությունը Վասպուրական գնդի անունն էր կրում: Անվան ծագումնաբանության տեսանկյունից իրավացի են այն հետազոտողները, որոնք վերջինս համարժեք են համարել «կողմն Սեպհական գնդին»[27]: Միևնույն ժամանակ պետք է նկատի ունենալ,

որ Սեբեոսի մոտ «կողմն Վասպուրական գնդին» հասկացությունը չի օգտագործված որպես Հայկական մարզպանության ամբողջ տարածքն ընդգրկող աշխարհագրական անվանում: 591 թ. բաժանումով Արևելյան Հայաստանի տարածքում (որի մեջ համապատասխանորեն սեղմվեց նաև Հայկական մարզպանության տարածքը) Վասպուրական գունդը (որն այս ժամանակաշրջանից, ըստ «Աշխարհացոյց»-ի, արդեն համազոր էր դառնում Վասպուրական աշխարհին) առավել խոշոր վարչաքաղաքական միավորն էր, ուստի բյուզադա-պարսկական նոր սահմանագծից արևելք ընկած տարածքը պատմիչը ընդհանուր ձևով նշել է «կողմն Վասպուրական գնդին»[28]: Վասպուրական աշխարհի գավառացանկն արդեն իսկ վկայում է, որ Վասպուրական գունդը չէր կարող գերազանցել դրա տարածքին[29]: Վասպուրական աշխարհի շուրջը գտնվում են Այրարատ, Սյունիք, Արցախ, Փայտակարան, Նոր-Շիրական (Պարսկահայք), Կորճայք, Մոկք աշխարհները (նահանգները)[30]:

Վասպուրականը կազմող գավառների ուսումնասիրությանը նվիրված իր հոդվածում Բ. Հարությունյանը կարծիք է հայտնել, թե հնում «Վասպուրականի տարածքում Մարդպետականից բացի գոյություն է ունեցել մեկ այլ վարչական շրջան», որն ընդգրկում էր «մինչեւ Նախճավան գավառը և Կոտոր կամ Կարմիր գետն ընկած շրջանները», «այլ խոսքով, Արևմտյան Վասպուրականը համաձայն Պտղոմեոսի հանդիսացել է առանձին վարչական շրջան և կոչվել Տոսպ կամ Տոսպք իր գլխավոր գավառի անունով»[31]: Միևնույն ժամանակ հետազոտողը իրավացիորեն նշել է. «Տոսպը տարածվում էր Վան քաղաքի շրջանում»: Դրա հետ մեկտեղ գրելով, թե այն իր մեջ ներառում էր «Գուկանքի ամրոցի արևելակողմից մինչև Մարմետ գետն ընկած տարածքը», նա Տոսպի տարածքը, փաստորեն, ավելի ընդարձակ է ներկայացրել, իսկ Բոգունիքի մասին նշել. «զբաղեցնում էր Մարմետ գետի ստորին հոսանքի շրջանը»[32]:

Վասպուրական աշխարհի գավառների տեղադրությամբ մանրամասնորեն զբաղվել են Ն. Ադոնցը և Ս. Երեմյանը, որոնց հետազոտությունները հիմնարար նշանակություն ունեն խնդրո առարկա հարցի ուսումնասիրության համար: Տոսպ գավառը զբաղեցնում էր Վան (հնում՝ Տուշպա) քաղաքի շրջակայքը[33]: Տոսպը Վանի քաղաքային տարածքի՝ գավառի, անունն էր[34]: Ն. Ադոնցը, հիմք ընդունելով Ղևոնդի և Թովմա Արծրունու հաղորդումները, Գուկան գավառը համադրել է Ռշտունիքի Գուկան գյուղի հետ, իսկ Արտաշիսյան գավառը տեղադրել է Վանա լճից ոչ հեռու[35]: Ս. Երեմյանը նշել է, որ Գուկանք գավառը գտնվում էր Հայոց ձորի (Խոշաբի հովտում) այժմյան Գյուգանց գյուղի շրջակայքում, իսկ Արտաշիսյանը՝ այժմյան Արտամետի շրջանում[36]: Ըստ գիտնականի վերականգնած «Աշխարհացոյց»-ի քարտեզի, Տոսպի և Գուկանքի միջև գտնվում էր Արտաշիսյանը, իսկ Տոսպի սահմանագիծը արևելքում մինչև Մարմետ գետը չէր հասնում: Տոսպ գավառի

հյուսիսային սահմանը կազմում էր ոչ թե Մարմետ գետը, այլ Բոգունիք գավառը[37], որը գտնվում էր Մարմետ գետի ստորին հոսանքի ձորահովտում[38]:

Տոսպ անունը հայտնի է դեռևս սեպագիր աղբյուրներից (IX դ. Ն.Ք.), որպես Վան քաղաքի անվանում[39]: Այդ անունով Ստրաբոնը հիշատակել է Վանա լիճը[40]: Պտղոմեոսը Տոսպի[41] մասին գրելիս նկատի է ունեցել հենց Վան քաղաքը և դրա շրջակայքը, ուստի, ոչ մի հիմք չկա այն համապատասխան համարելու «Արևմտյան Վասպուրականին», որը, վերոհիշյալ տարածքային առումով, մոտ քսան անգամ մեծ էր իրական Տոսպի տարածքից:

Վասպուրականի գավառացանկում հանդիպում է Բառիղովիտ (Աղովիտ, Աղավիս) գավառանունը, որի կապակցությամբ Բ. Հարությունյանը նշել է. «Բառիլովիտ-Բառիղովիտ հնարավոր է տեղադրել միայն Մարմետ գետի վերին հոսանքի շրջանում, որն ուրարտական շրջանում հավանաբար կոչվել է Բարելե կամ Բարիլե: Չի բացառվում, որ այդ անունը կրել է Մարմետ գետը իր վերին հոսանքի շրջանում»: Ժխտելով Ս. Երեմյանի տեսակետը,[42] հետազոտողը գրել է. «Վասպուրական աշխարհում Աղիովիտ գավառ գոյություն չի ունեցել»: Հետազոտողը կարող էր համաձայնվել կամ չհամաձայնվել Ս. Երեմյանի առաջարկած վարկածի հետ՝ Տուրուբերան և Վասպուրական նահանգներում նույնանուն՝ Աղիովիտ գավառների միաժամանակյա գոյության մասին: Սակայն այն, որ Ս. Երեմյանը չի հիշատակել «Աշխարհացոյց»-ում և Թովմա Արծրունու երկում տեղ գտած Բառիլովիտ անվանաձևը, դեռևս չի նշանակում,որ Աղովիտ ընթերցվածը պետք է դուրս նետել: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այդպիսի ընթերցում առկա է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի № 2370 ձեռագրում, որը «Աշխարհացոյց»-ի լավագույն ձեռագրերից է, ինչպես երևում է թեկուզ Առաջին, Երկրորդ և Երրորդ Հայքերի նկարագրությունից: Կարծելով, թե ինչ-որ մի ձեռագրում Բառիղովիտ գավառանունը ընկալվել է որպես «Բ. Աղովիտ»[43], ինչպե՞ս կարելի է ընդունել այդ անցումը, եթե, օրինակ, նշված ձեռագրում գրանցվել է միայն «Աղովիտ»-ը:

Եթե նկատի ունենանք, որ սեպագիր աղբյուրներում Բարելե կամ Բարիլե երկրի կամ գավառի հիշատակություն չկա, իսկ Մարմետ գետի հինավուրց անունը եղել է Ալլուրիա[44], ապա պարզ կդառնա, որ Բ. Հարությունյանի առաջարկած տեղադրությունը կարոտ է հիմնավորման: Այնուամենայնիվ, Բառիղովիտ[45] գավառանվան և դրա տեղադրության հարցը կարոտ է հետագա ուսումնասիրության:

Վասպուրականի Կուղանովիտ, Գառնի, Առբերանի, Անձևացիք գավառների տեղադրության կապակցությամբ հետազոտողների մոտ տարաձայնություններ չկան: Ս. Երեմյանը Կուղանովիտը տեղադրում է ներկայիս «Կելան-դարասի» կոչվող ձորահովտում: Գիտնականը Խոշաբի աջակողմյան վերին վտակը նշել է Կուղան անվամբ, որից պարզ երևում է, որ խոսքը Կալլանիա գետի մասին է, ուստի, հարկ չկա փնտրելու այդ անվան նախնա-

կան ընթերցումը «Կոլլան» ձևով[46], նկատի ունենալով Պտղոմեոսի հիշատակած Kολχίς վայրը[47], որի վրա ժամանակին ուշադրություն է դարձրել Ս. Երեմյանը՝ ենթադրելով, որ այդ գավառի հնագույն անվանաձևն է Կուղխանովիտը[48]: Գառնի և Առբերանի գավառները տեղադրվում են Վանա լճից հյուսիս-արևելք, իսկ Անձևացիքը՝ Ջերմ (Արևելյան Տիգրիս) գետի ակունքների շրջանում[49]:

Տրպատունիք, Բուժունիք և Առնոյ-ոտն գավառների տեղադրության հարցում գիտնականների կարծիքներում տարբերություններ են նկատվում: Ըստ Ն. Ադոնցի, Բուժունիքը և Առնոյ-ոտնը գտնվում էին Անձևացիքից հարավ, իսկ Տրպատունիքը՝ հյուսիս, Երվանդունիքի հարևանությամբ[50]: Ս. Երեմյանը Բուժունիքը (Սուրբ Տիկին կամ Սև Տիկին գետակի ձորահովտում, Շատախից հյուսիս) նշում է Առնոյ-ոտն գավառից հարավ-արևմուտք և տեղադրում Անձևացիքից հյուսիս-արևմուտք և արևմուտք, իսկ Տրպատունիքը՝ հարավ-արևմուտք՝ Ջերմ (Արևելյան Տիգրիս) գետի մի վտակի հովտում[51]:

Բ. Հարությունյանը Բուժունիքի և Առնոյ-ոտնի կապակցությամբ ընդունել է Ս. Երեմյանի տեսակետը, իսկ Տրպատունիքի առումով՝ Ն. Ադոնցի: Վերջինս Բուն Մարդաստան գավառի մասին Թովմա Արծրունու երկից է տեղյակ[52], սակայն դրա տեղադրությունը չի նշել: Բ. Հարությունյանը Ս. Երեմյանի առաջարկված Բուն Մարդաստանի տեղադրության տարածքում նշել է Տրպատունիքը, գրելով, որ «Աշխարհացոյց»-ը չի մոռացել Բուն Մարդաստան գավառը, այլ տվել է նրա մեկ այլ անվանումը՝ Տրպատունիք[53]: Հետազոտության այսպիսի եղանակով հնարավոր չէ ժխտել Ս. Երեմյանի առաջարկած տեղադրությունը Տրպատունիքի վերաբերյալ: Մարդաստանի տեղադրության հարցում Ն. Ադոնցը գտնում էր, որ այն տարածվում էր Արճակ կամ Արճիշակ լճից մինչև Արտազ[54]: Ս. Երեմյանը Մարդաստանը (Մարդուցայք) տեղադրում է Մակու քաղաքից արևմուտք, Վասպուրականի (Կոտուրի) լեռների արևելյան փեշերին[55]: Արճիշակովիտ գավառը գտնվում էր նույնանուն լճի ավազանում: Ակե գավառը Ն. Ադոնցը տեղադրել է Մեծ Աղբակից հարավ[56]: Ըստ Ս. Երեմյանի, Ակե գավառի անունը աղերսվում է Ականիս անվան հետ[57]: Թովմա Արծրունու երկում հանդիպող «Ակէտամբեր» ընթերցվածը կարելի է գրչական միացման արդյունք համարել[58]: Մեծ Աղբակի (Մեծ Ջաբ գետի վերին հոսանքի կամ Աղբակ գետի ավազանում) և Անձախիձորի (Ընձայիք, Կոտոր գետի վերին հոսանքի շրջանում) տեղադրությունների հարցում Ն. Ադոնցի և Ս. Երեմյանի կարծիքները համընկնում են[59]:

Վասպուրականի Թոռնավան գավառի և Նկան ամրոցի տեղադրության հարցը զգալի դժվարություններ է առաջացրել հետազոտողների մոտ[60]: Ըստ Ն. Ադոնցի, Թոռնավանը (նա նշել է Թոնրավան ձևով) Նկան ամրոցով, որը համապատասխանում է այժմյան Նագան բնակավայրին, գտնվում էր

Կոտոր ամրոցից արևմուտք[61]: Ս. Երեմյանի կարծիքով, Թոռնավան գավառը համանուն կենտրոնով հարկավոր է փնտրել Մարմետ գետի վերին հոսանքի շրջանում[62]: Այսպիսով, Ն. Ադոնցի և Ս. Երեմյանի աշխատություններում խոսքը համապատասխանաբար գնում է Մարմետ և Կոտոր գետերի վերին հոսանքների շրջանները ընդգրկող տարածքների մասին: Բ. Հարությունյանը, ժխտելով նրանց կարծիքները, Թոռնավան գավառը տեղադրում է Ճուաշի ավազանի արևմտյան մասում և Աղանդռոտի ավազանում: Այդ եզրահանգմանը նա եկել է ելնելով «ի Ճուաշ եւ ի Թոռնաւան», «զՃուաշ գաւառն եւ զԹոռնաւան», «ի Ճուաշ եւ ի Թոռնաւան գավառ», «զԹոռնաւան եւ Ճուաշ գաւառք» Թովմա Արծրունու հիշատակություններից[63]: Այսքանից կարելի է եզրակացնել, որ Թոռնավան և Ճուաշ գավառները գտնվում էին իրար հարևանությամբ: Թովմա Արծրունին գրել է. «Իսկ Պարսկահայոց գռեահն խուժան ածեալ... գան հասանեն ի Մարդաստան գաւառ յաւանն Վիտահոտ հանեն ընդ սուր, վարեն ի գերութիւն եւ առնուն աւար, եւ ի յանցին դառնան ի Ճուաշ եւ ի Թոռնաւան գաւառ, անցեալ ընդ Կրճունեաց գաւառն: Եւ վարեն ի գերութիւն աւարառութեամբ զԼեկ եւ զԱղզի եւ Կրերեացն եւ ի Ճախուկ գաւառէ»[64]: Բ. Հարությունյանը այս հաղորդումից եզրակացրել է. «Թշնամիները, ասպատակելով Մարդաստանը և գերեվարելով Լեկը, Աղզին, Կրերիքը և Ճահուկը, վերադարձին Կրճունիքի վրայով անցնում են Ճուաշ և Թոռնավան: Անձախիձորից քիչ հյուսիս գտնվում է Կուրջանգյադուկ լեռնանցքը, որը հինավուրց Կրճունիքի լեռնանցքն է, որի վրայով էլ թշնամին մտել է Ճուաշ և Թոռնավան»[65]: Այնինչ, Թովմա Արծրունու հաղորդումից հետևում է, որ Մարդաստանից վերադառնալիս (905 թ.) ոսոխը անցել է Ճուաշ, Թոռնավան, Կրճունյաց գավառներով, որից հետո գերեվարման և ավարառման ենթարկել Լեկը, Աղզին և Կրերիքը՝ Անձևացիք գավառում, ինչպես նաև Ճահուկ գավառը Կորճայք նահանգում: Այնտեղից ոսոխը ներխուժեց Պարսկահայք՝ նախ Թրաբի գավառը, այնուհետև՝ Արասխ գավառի Շնոհ քաղաքը[66], որը Հայաստանի հարավային սահմանի մոտ էր գտնվում, Ուրմիա լճից (Կապուտան ծով) հարավ-արևմուտք:

Աղանդ-ռոտի ավազանը Թոռնավանի կազմում նշելը և միևնույն ժամանակ այդ նույն ավազանում Աղանդ-ռոտ գավառի տեղադրումը արգասիք է այն հանգամանքի, որ Բառիղովիտի հարցը չպարզած՝ Բ. Հարությունյանը այն տեղադրել է Ս. Երեմյանի նշած Թոռնավանի տեղում, իսկ Թոռնավանը՝ նշել է իր կողմից նշված տարածքում[67]: Ս. Երեմյանը Ճուաշ-ռոտ[68] գավառը տեղադրել է նույնանուն գետի ընդարձակ հովտում, իսկ Աղանդ-ռոտը՝ համանուն գետահովտում մինչև Նվարսակ[69], Կրճունիքը՝ Կոտոր (Կոտուր) գետի (Կարմիր գետի վերին հոսանքի) ակունքների շրջանում, Մարանդը (Բաքրան)՝ Կարմիր գետի[70] աջ վտակ Մարանդի ավազանում, Գաբիթյանը՝ Ուրմիա լճից հյուսիս-արևելք[71]:

Վասպուրականի Պարսպատունիք գավառը Ս. Երեմյանը տեղադրում է

Հայկական լեռների (այժմյան Ղարադաղի) շրջանում[72]: Կարծիք է հայտնվել, որ Պարսպատունիքը գտնվում էր Հերից արևմուտք, Կոտորի ավազանում տեղադրված գոգահովտում և «ավելի շատ վերաբերելու էր Անձախիձորին»[73]: Այնինչ, Ս. Պետրոսյանը հանգամանորեն վերլուծել է Պարսպատունիքի թե՛ ստուգաբանության և թե՛ տեղադրության հետ կապված հարցերը և ճիշտը համարել է Ս. Երեմյանի կարծիքը: Ս. Պետրոսյանը, ելնելով կուսակալների մասին Մովսես Խորենացու հաղորդումից[74] գտնում է, որ կուսակալ-սահմանակալները կոչվում էին նաև իրանական համապատասխան տերմինով՝ «պարսպետ»: Հետազոտողը դրանից եզրակացրել է, որ այդ տերմինը պահպանվել է Պարսպատունիք տեղանվան մեջ, որը կարող էր ծագել որպես տոհմանուն (Պարսպատունի)՝ «պարսպետ» տիտղոսից[75]:

Վարաժնունիք գավառը Ս. Երեմյանը ենթադրաբար տեղադրել է Սարխալան գետակի ձորում, որտեղից ճանապարհը տանում է դեպի Խանասորի լեռնանցքը և Վասպուրականի ներքին գավառները[76]: Գիտնականը Գավրիկեան և Տայգրեան գավառներից առաջինը տեղադրում է Տարոն գետի (այժմյան Ջոլա-չայ) ակունքների շրջանում, որտեղ գտնվում է Կասրիկ գյուղը[77], երկրորդը, որի անունը հիշեցնում է Դեյգր վայրը (հմմտ. Դարեհ Ա-ի Բիհիսթունի արձանագրության Tigra վայրը), Խանասորի լեռնանցքի և Աղբակ գետի միջև[78]: Ն. Ադոնցը, հենվելով Թովմա Արծրունու հաղորդման[79] վրա, գրել է, որ Վասպուրականի մի մասը հնում կրել է մարդպետի անունը[80]: Թովմայի այդ հաղորդումը համեմատելով Մովսես Խորենացու տեղեկության հետ՝ «Հայր իշխանի» տիրույթների («յԱտրպատականէ մինչեւ ցՃուաշ եւ ցՆախճաւան»)[81] մասին, Բ. Հարությունյանը նշել է, որ նախապատվությունը պետք է տալ Պատմահոր վկայությանը[82]: Ըստ նրա, Մարդպետականի տարածքին համապատասխանում է Մովսես Խորենացու հաղորդումը, իսկ Տոսպին՝ Թովմա Արծրունու տեղեկությունը: Այնինչ, Խորենացու և Արծրունու հաղորդումները տարբեր ժամանակաշրջանների են վերաբերում: Պատմահայրը նշել էր այն տարածքը, որը գտնվում էր «Մարաց ամուր աշխարհի» հարևանությամբ և հանդիսանալով Հայաստան եկած մարդերի՝ իրանական մի ցեղի զբաղեցրած շրջաններից մեկը, ընկած էր Ատրպատականի հետ սահմանի և Արաքսի գետահովտի միջև: Այդ տարածքը դարձել էր «մարդպետության գործակալության» իշխանապետի սեփականությունը: Այնուհետև Մարդպետականը (սկզբնապես, թերևս, զբաղեցրել է Մարանդի և Գաբիթյանի տարածքները) ընդարձակվել էր իր մեջ ներառելով Թովմա Արծրունու հիշատակած գավառները: Այսինքն՝ բռնագրավումների հետևանքով «Հայր մարդպետի» տիրույթները ընդարձակվել էին դեպի արևմուտք, հասնելով մինչև Տոսպ-Ռշտունիք, սակայն Տոսպը երբեք չի հասել մինչև Կարմիր գետ:

Մարդպետականի ընդարձակումը պետք է տեղի ունենար Տիրան թագավորի (338-344) ժամանակ, երբ «Հայր մարդպետը» փորձեց ոչնչացնել

Արծրունյաց տոհմը: Փրկված Շավասպը հետագայում ժառանգեց հոր կալվածքները[83]: Ինչպես նշել է Ն. Ադոնցը, V դարում մարդպետների տոհմը այլևս գոյություն չուներ, իսկ հաղթանական Արծրունիները նրանց տիրույթների հետ մեկտեղ ժառանգեցին «մարդպետ» տիտղոսը[84]: Խորենացու հաղորդումից երևում է, որ Նախիջևանը (Նախճավան) Մարդպետականի կազմում չէր:

Ելնելով Խորենացու և Ստ. Օրբելյանի հաղորդումներից[85], Բ. Հարությունյանը կարծիք է հայտնել, որ Գողթնը և Նախճավանը պետք է գտնվեին Սյունիք աշխարհի մեջ[86]: Նշելով, որ Ն. Ադոնցը կասկածել է հիշյալ գավառները Վասպուրականին վերագրելու հարցում, հետազոտողը գրել է. «Մեզ անհայտ պատճառներով արքունիքը վերոհիշյալ գավառները անջատել է Սյունիքից և մտցրել Մարդպետականի մեջ, որը վերջին հաշվով արքունի կալվածք էր: Տրամաբանական է կարծել, որ նման վարչական փոփոխությունը նպատակ ուներ սահմանազատել արքունի կալվածքները Սյունյաց իշխանների ժառանգական տիրույթներից: Եվ, քանի որ Մարդպետական ներքինիի իշխանության տարածքը արքունի կալվածքների մի որոշակի ձև էր, աշխարհագրական տեսակետից արքունիքը նպատակահարմար է գտել նրանց կցել Գողթն և Նախճավան գավառները»[87]:

Հայոց արքունիքը Մեծ Հայքի թագավորության գոյության ժամանակաշրջանում պայքար է մղել կենտրոնախույս ուժերի դեմ և ամեն կերպ ջանացել իր հսկողության տակ պահել հայրենի հողերը: Ուստի, ոչ մի փաստական հիմք չկա պնդելու, թե Հայոց արքունիքը երբևիցե նպատակ է ունեցել արքունի կալվածքները Սյունիքից սահմանազատելու: Եվ ընդհանրապես աղբյուրները չեն վկայում, թե արքունիքը իրեն ենթակա որևիցե իշխանությունից գավառները անջատվել է դրանից սահմանազատվելու նպատակով: Իրոք, երբեմն տիրույթային վերաբաշխումներ եղել են, սակայն ոչ թե «աշխարհագրական տեսակետից», այլ ուրիշ դրդապատճառներով:

Պետք է կարծել, որ Հայոց արքունիքը, երկրի պաշտպանության մասին հոգալով, հարավ-արևելքից դեպի կենտրոն եկող գլխավոր ճանապարհի վրա գտնվող Նախճավան և Գողթն գավառները ամրացրել ու ռազմավարական նպատակով դրանց որոշ ինքնուրույնություն էր շնորհել: Ըստ երևույթին, այդ ուղիով էր ընթացել Նախճավանի և Գողթնի առանձնացումը Սյունիքից և դրանց վերափոխումը արքունի կալվածքների: Այնպես որ, Հայոց արքունիքը Նախճավանով և Գողթնով ոչ թե սահմանազատվել էր Սյունիքից, այլ դրանց տարածքում ստեղծել էր երկրորդ պաշտպանական ամրացված գոտին[88] հարավ-արևելքից թշնամիների ներխուժման սպառնալիքին դիմակայելու նպատակով: Հայ Արշակունիների թագավորության անկումից (428 թ.) հետո այդ գավառները մնացել էին Արևելյան Հայաստանի մեջ և ժամանակի ընթացքում նշվել որպես Վասպուրական աշխարհի գավառներ, ինչպես երևում է «Աշխարհացոյց»-ից:

Արևելյան Հայաստանը պարսից արքունիքի պառակտիչ քաղաքականության հետևանքով, ժամանակի ընթացքում, մի քանի վարչա-տարածքային մասերի էր բաժանվել: Հայաստանի այն մասում, որը գտնվում էր պարսկա-հռոմեական 385 թ. բաժանման[89] գծից արևելք, պարսկական արքունիքը 428 թ. հետո ձգտեց ամրապնդել իր վարչա-քաղաքական ազդեցությունը:

Հայ ժողովրդի 572 թ. ապստամբությունից մեկ տարի առաջ Սյունիքը դուրս եկավ Դվինում նստող պարսից մարզպան Սուրենի (ապստամբության ընթացքում նա սպանվեց) ենթակայությունից, և Վահան Սյունեցին խնդրեց Խոսրով արքայից, «զի տարցեն զդիւան աշխարհին Սիւնեաց[90] ի Դըւնայ ի Փայտակարան քաղաք, եւ կարգեսցէ զքաղաք ի շահիմար Ատրպատականի»[91]:

Կեղծելով աղբյուրի հաղորդումները, Ֆ. Մամեդովան գրել է. «Երբ հայ կաթողիկոսական աթոռը 571 թ. բաժանվեց, Սյունիքի հոգևորականությունը հրաժարվեց հայերից և սկսեց ձեռնադրվել Աղվանքից: Սյունիքը Հայաստանից դավանանքով անջատված էր մինչև 660 թ.»[92]: Սակայն Հայոց կաթողիկոսական աթոռը չբաժանվեց 571 թ., իսկ Հայաստանի 591 թ. բյուզանդա-իրանական բաժանումից հետո[93] ոչ թե աթոռն էր բաժանվել, այլ կայսրությունը ապօրինաբար ստեղծել էր քաղկեդոնական հակաթոռությունը Ավանում: Դրանից հետո ըստ Մովսես Կաղանկատվացու, «տեարքն Սիւնեաց, եւ ոչ հաւանեցան ընդ մի ոք յերկուցն... մինչեւ միասցի աթոռ սրբոյն Գրիգորի»[94]: Եթե Սյունիքի հագևորականության մեկուսացումը իրոք տեղի էր ունեցել, ապա ժամանակով (VI վերջ-VII դ. սկիզբ) այն ավելի կարճատև է եղել, քան Սյունիքի դուրս գալը[95] Դվինում նստող պարսից մարզպանի ենթակայությունից: Եթե Կաղանկատվացու այս հաղորդման ժամանակագրական որոշ անհամապատասխանությունները իրենց արմատներով ծագում են հայ-քաղկեդոնական ավանդությունից, և «հնարված են բացարձակապես կոնցեպտուալ նկատառումներով՝ ոչ ճիշտ իմաստավորված տարբեր փաստերի հիման վրա», ապա կարելի է համաձայնվել հետազոտողների հետևյալ եզրակացության հետ. «Չնայած VI դ. երկրորդ կեսում Սյունիքը հայկական մարզպանությունից առանձին շահր դարձավ, նրա եկեղեցական թեմը մնաց Հայոց կաթողիկոսության իրավասության ներքո: Հասկանալի է, որ խոսք անգամ չի կարող լինել 571 թ. մինչև 660 թ. ընկած ժամանակաշրջանի մասին: Հենց այդ թվերը Ֆ. Մամեդովան վերցրել է Ն. Ադոնցի մենագրության 423 էջից, սակայն այնտեղ խոսվում է այն ժամանակաշրջանի մասին, երբ Սյունիքը «Հայաստանից անջատված էր քաղաքականապես, այլ ոչ թե նվիրապետությամբ»[96]: Այսպիսի մեկնաբանությունը հնարավորություն է ընձեռում ենթադրել, որ Կաղանկատվացու՝ միաբնակ ոգով գրված շարադրանքում առկա է տարբեր ժամանակներին վերաբերող և նրա օգտագործած աղբյուրներում հայ-քաղկեդոնական ավանդության ազդեցությամբ առաջացած հաղորդումների միահյուսում:

Վահան Սյունեցու քայլը,[97] չնայած, ուղղված էր պարսից մարզպանի դեմ, այնուամենայնիվ, անդրադարձավ նաև համահայաստանյան գործերի վրա: Սյունիքը դուրս մնաց 572 թ. ապստամբությունից, ինչպես նաև, թերևս ժամանակավորապես, Հայաստանի կենտրոնական շրջանների կապը քաղաքականապես և տնտեսապես կտրվում էր հայկական արևելյան երկրամասերից[98]: Այնպես որ, Սյունիքը առանձնացել էր պարսից մարզպանի իշխանության ենթակայությունից, այլ ոչ թե ընդհանրապես դուրս էր եկել Հայաստանի կազմից: Առավել ևս սխալ է պնդել, թե այդ տևել էր մինչև 660 թ., քանի որ VII դ. 40-50-ական թթ. Սյունիքը ի թիվս Հայոց մյուս ուժերի հանդես եկավ Թեոդորոս Ռշտունու դրոշի տակ՝ հայկական հողերի վերամիավորման և Հայոց պետության վերականգման համար մղած պայքարում:

591 թ. հետո Հայաստանում որպես մարզպանության կենտրոն շարունակեց մնալ Դվինը: Սեբեոսի հաղորդումներից հետևում է, որ Դվինում նստող սահմանակալները և մարզպանները VI դ. վերջում և VII դ. առաջին երկու տասնամյակներում պարսիկներ էին. «Եւ այս են սահմանակալք տէրութեանն Պարսից յամս հաշտութեան այնորիկ ի Հայաստան երկրի եւ ի Դուին քաղաք: Վնդատական, Նիխորական... Ապա Մերկուտ, ապա Յազդէն. ապա Բուտմահ, ապա Յեմանն... »[99]: Սմբատ Բագրատունու Հայաստանում գտնվելու (607 թ.) և նրա նախաձեռնությամբ Դվինի Ս. Գրիգոր եկեղեցու վերակառուցման կապակցությամբ Սեբեոսը հիշատակել է ևս մի մարզպանի, որը, փորձելով խափանել շինարարական աշխատանքները, բերդակալի հետ ամբաստանության գիր էր գրել պարսից արքային[100]: Հաջորդ շարադրանքից հայտնի է դառնում. «Եւ յոստանն Դբունայ եկն մարզպանութեանն Շահրայենպետ... Եւ յոստանն Դբունայ եկն փոխանակ Շահրայեանպետի՝ Պարսեանպետ, Պարշընազդատ ապա Նամդար Վշնասպ. ապա Շահրապդական, ...ապա Ըռոճ Վեհան»[101]: Այստեղ թվարկված անձինք թե՛ զորավարներ էին, և թե՛ մարզպաններ: Ուստի հարկ չկա կարծելու, թե Հայաստանի մարզպանը 591-617թթ. եղել է Սմբատ Բագրատունին[102], որն, իրականում Պարսկաստանի Վրկան երկրամասի մարզպանն էր՝ կարգված Խոսրով Փարվեզի կողմից:

Այսպիսով, այս ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանը վարչաքաղաքական տեսակետից բաղկացած էր հետևյալ մասերից. Հայկական մարզպանություն (ընդգրկում էր Պարսկաստանի գերիշխանության տակ մնացած Այրարատի արևելյան հատվածը, Վասպուրական գունդը, որն, ըստ «Աշխարհացոյց»-ի՝ Անանիա Շիրակացու խմբագրության, արդեն հավասարազոր էր դառնում Վասպուրական աշխարհին, Մոկքը, Կորճայքը, Պարսկահայքը) և տարբեր կարգավիճակներով Հայոց՝ Սյունիք, Արցախ, Ուտիք և Փայտակարան աշխարհները[103]:

Բյուզանդական կայսրությանը 591 թ. պարսկա-բյուզանդական պայմանագրով անցած հայկական հողերը Սեբեոսը անվանել է «Տանուտերական

իշխանության աշխարհ» կամ «Տանուտերական տուն»:

Տանուտերական երկիրը, ըստ Ն.Ադոնցի, ժամանակին համապատասխանել է «մարզպանական Հայաստանի» տարածքին[104]:

481-484 թթ. ապստամբության[105] հաջող ելքից հետո Վահան Մամիկոնյանը դարձավ երկրի կառավարիչը՝ ճանաչված նախարարների և ժողովրդի կողմից: Հայ ժողովրդի հաղթանակը իր արդյունքն ունեցավ նաև միջազգային ասպարեզում, ինչպես հետևում է Ղազար Փարպեցու հետևյալ տողերից. «Վաղվաղակի հրամայէր թագաւորն Վաղարշ, միաբանութեամբ ամենայն աւագանւոյ դրանն եւ Արեաց՝ հրովարտակ առնել ի Հայս, եւ զտէրն Մամիկոնենից եւ զզօրավարն Հայոց Վահան՝ մարզպան ի վերայ աշխարհին Հայոց կարգել: Եւ բերեալ զհրովարտակ մարզպանութեանն՝ տային զզօրավարն Հայոց ցտէրն Մամիկոնենից Վահան, եւ աջով հզօրին Աստուծոյ մարզպան զնա ի վերայ աշխարհին Հայոց կարգեալ հաստատէին»[106]: Այդ ժամանակից սկսած, ի տարբերություն «բյուզանդական Հայաստանի», «մարզպանական Հայաստանը» դարձավ «Տանուտերական իշխանության աշխարհ», այսինքն, ի տարբերություն Արևմտյան Հայաստանի, Արևելյան Հայաստանը[107] ինքնուրույն կառավարվող էր: «Տանուտերական իշխանության աշխարհ» կամ «Տանուտերական տուն» հասկացությունները, գոյություն են ունեցել նախքան 591 թ., սակայն, VII դարում հիշատակվել են Բյուզանդիայի նոր նվաճումների հետևանքով «Տանուտերական երկրի» կրճատված տարածքի առումով: Եթե մինչև 591 թ. պարսկա-բյուզանդական բաժանումը այն համապատասխանել է «մարզպանական Հայաստանի» տարածքին, ապա դրանից հետո վերջինիս կրճատված տարածքի աղբյուրը անվանում է «կողմն Վասպուրական գնդին» (վերոհիշյալ ընկալմամբ), ըստ դրա մեծագույն մասը կազմող *Վասպուրական գնդի*, որն այդ ժամանակ արդեն հավասարազոր էր դառնում *Վասպուրական աշխարհին*: Մավրիկիոսը վերախմբավորեց իր նախորդների կողմից նվաճված արևմտահայկական հողերը, իսկ նոր զավթած հողերը բաժանեց երեք խոշոր նահանգների. «Մեծ Հայք», «Խորագոյն Հայք» և «Ներքսագոյն Հայք»[108], որոնք համապատասխանում էին «Տանուտերական իշխանության աշխարհի» տարածքային նոր վիճակին 591 թ. բաժանումից հետո:

Հայաստանի քաղաքական վիճակը կրկին փոփոխվեց: Սակայն, եթե Արևելյան Հայաստանում այդ արտահայտվեց մարզպանական ենթակայության տարածքի կրճատմամբ, ապա Արևմտյան Հայաստանում Մավրիկիոսն իրականացրեց վարչաքաղաքական վերափոխումներ, կայսրության կենտրոնացված կառավարումն ուժեղացնելու համար: Նպատակ էր դրվում կարգավորել հարկերի գանձումը հօգուտ կայսերական գանձարանի, ինչպես նաև ապահովել Հայոց զորական ուժերի զանգվածային հավաքագրումը Բյուզանդիայի հեռավոր արևմտյան սահմաններին կռվելու համար:

Քանի որ Հուստինիանոս Ա-ի (527-565 թթ.) տարածքային վերափոխու-

թյուններից ընդամենը մի քանի տասնամյակ էր անցել, ուստի ավելի ուշ (հատկապես հայկական աղբյուրներում) դիտարկվում է Հուստինիանոս Ա-ի և Մավրիկիոսի կողմից Արևմտյան Հայաստանում տարածքային վերափոխություններին վերաբերող հաղորդումների միահյուսում: Ուստի VI դ. վերջի տարածքային վերափոխությունների հարցը պարզելու և տարբեր ժամանակաշրջաններին վերաբերող հաղորդումները տարազատելու համար անհրաժեշտ է անդրադառնալ արևմտահայկական հողերի վարչատարածքային վիճակին՝ սկսած IV դարի վերջին տասնամյակներից:

Հայաստանից նվաճված երկրամասերում Թեոդոս Ա Մեծի (379-395), Հուստինիանոս Ա-ի և Մավրիկիոսի օրոք իրականացվեցին ռազմական և վարչատարածքային միջոցառումներ, որոնք կոչված էին այդ տարածքները ընդգրկել կայսերական կառավարման համակարգի մեջ: Թեոդոս Ա-ը Փոքր Հայքը բաժանեց Առաջին (կենտրոնը Սեբաստիա) և Երկրորդ (կենտրոնը Մելիտենե) Հայքերի: Ն. Ադոնցը ենթադրել է, որ այդ տեղի էր ունեցել 378-386 թթ.: 386 թ. Թեոդոս Ա-ի հրապարակած դեկրետում, ինչպես նշել է գիտնականը, առաջին անգամ հիշատակվում է Երկրորդ Հայքը[109]: Կարելի է ենթադրել, որ Փոքր Հայքի բաժանումը Թեոդոս Ա-ն իրականացրեց 386 թ. Մեծ Հայքի թագավորության 385 թ. պարսկա-հռոմեական բաժանումից հետո[110]: Կայսրության վարչական և ռազմական բաժանումները բերված են Notitia dignitatum փաստաթղթում, որին մանրամասն անդրադարձել է Ն. Ադոնցը Բյուզանդիայի արևելյան երկրամասերի և հատկապես *Պոնտական դիոցեզի* կազմում հանդես եկած Առաջին և Երկրորդ Հայքերի և Պողեմոնական Պոնտոսի կապակցությամբ:

Մեծ Հայքի թագավորության 385 թ. բաժանումից և հատկապես հայ Արշակունիների հարստության անկումից (428 թ.) հետո «Մեծ Հայք» կամ «Ներքսագոյն Հայք» (Magnam Armeniam, quae Interior dicebatur կամ τήν μέν ἐνδοτάτην) շարունակվեց անվանվել կայսրությանը անցած Արշակունիների նախկին տիրույթների հյուսիս-արևմտյան մասը[111]: «Մեծ Հայքը», հայկական ինքնավար իշխանությունները՝ «ազգատոհմերը»[112] (Անձիտ, Անգեղ-տուն, Հաշտեանք, Ծոփք, Ծոփանենե, Բալահովիտ, որոնք հայտնի էին նաև որպես «սատրապների» կողմից կառավարվող ինքնավար իշխանություններ), Առաջին և Երկրորդ Հայքերը ու Պողեմոնական Պոնտոսը Հուստինիանոսը հանձնեց Զետա (Սիտտաս) զորավարի (մոտ 529-531 թթ.) հրամանատարությանը, որի մասին կայսեր հրամանագիրը հետևյալ կերպ է սկսվում. «Imp. Justinianus A. Zetae viro illustri magistro militum per Armeniam et Pontum Polemoniacum et gentes»[113]:

Ըստ Պրոկոպիոսի, Հուստինիանոսը վերացրեց կոմեսի պաշտոնը «Մեծ Հայք» կամ «Ներքսագոյն Հայք» երկրամասում և այնտեղ զորավար նշանակեց[114]: Այնուհետև, վերացնելով հայկական ինքնավար իշխանություններում սատրապների կառավարումը[115], կայսրը դուքսեր նշանակեց Մարտի-

րուպոլսում (Ծոփանենա), Կիթառիճում (Հաշտեանք) և Խորձեան գավառի Արտալես ամրոցում[116]:

Պրոկոպիոսը պատմում է Առաջին և Երկրորդ Հայքերի մի շարք քաղաքներում շինարարական աշխատանքների ծավալման և հատկապես ամրոցաշինության մասին[117]: Պատմիչը կրկին անդրադառնալով «Մեծ Հայք» կամ «Ներքսագոյն Հայք» երկրամասում Հուստինիանոսի ձեռնարկած միջոցառումներին, նշել է, որ կայսրը բոլոր զինված ուժերի և Հայքերի զորավարի կենտրոնատեղը դարձրեց Թեոդոսուպոլսը[118]: Այնուհետև Պրոկոպիոսը հաղորդում է Ճանիքի, Պոնտոսի և Լազիկեյի քաղաքների ամրացման և Ճանիքում ևս *դուքս* նշանակելու մասին[119]:

Ի տարբերություն Պրոկոպիոսի երկի և Հուստինիանոսի 31-րդ նովելայի, որոնցում հայկական ինքնավար իշխանությունների թիվը հինգն է նշված[120], նույն կայսեր *Օրենսգրքի* վերոհիշյալ հրամանագրում դրանք վեցն են: Խոսքը վերաբերում է Անգեղ-տուն գավառին, որը, ըստ Կ. Գյուտերբոգի, ձուլված էր Մեծ Ծոփքին: Սակայն գիտնականը Ծոփքի արևմտյան մասը թյուրիմացաբար համարել է *Մեծ Ծոփք*, իսկ արևելյանը՝ *Փոքր Ծոփք*[121]: Ն. Ադոնցը պարզել է, որ ընդհակառակը, հյուսիս-արևմտյանը՝ *Փոքր*, իսկ հարավ-արևելյանը *Մեծ Ծոփքն* էր, որի մի մասը կոչվել է Անգեղ-տուն[122]: Սակայն Կ. Թումանովի կարծիքով Անձիտը Անգեղ-տան հետ էր հանդես գալիս, իսկ Փոքր Ծոփքը Արածանիից հարավ էր[123]: Մինչդեռ Ն. Ադոնցը ապացուցել է, որ Շահունի (կամ Փոքր Ծոփքը) Արածանիից հյուսիս էր գտնվում[124]: Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ում հիշատակված Անգեղ-տունը[125] բացակայում է նրա գործը շարունակող Անանիա Շիրակացու «Աշխարհացոյց»-ում: Այնտեղ առկա է Նփրկերտ գավառը Աղձնիքի կազմում: Հ. Հյուբշմանը նշել է, որ Անգեղ-տան հետ ձուլված Մեծ Ծոփքը Նփրկերտ անվամբ և Աղձնիքը 591 թ. միացան Վերին Միջագետք նահանգին[126]: Հ. Մանանդյանի կարծիքով Անգեղ-տունը, որը Մովսես Խորենացու մոտ հիշատակված է իբրև «Տորք Անգեղայ» տոհմի անունը, չէր կարող նշված լինել «Աշխարհացոյց»-ում, որովհետև VI դարում այդ գավառը ձուլված էր ուրիշ գավառի հետ[127]: Ս. Երեմյանը նույնպես Անգեղ-տունը նշել է Աղձնիքի կազմում[128]:

Պրոկոպիոսը հիշատակել է «այլ Հայք» (վերը խոսքը հինգ սատրապություններին էր վերաբերում) և «մյուս Հայք», որի մասին գրել է. «Ἐκ δὲ Κιθαρίζων ἔς τε Θεοδοσιούπολιν καὶ Ἀρμενίαν τὴν ἑτέραν ἰόντι Χορζάνη μὲν ἡ χώρα καλεῖται»: Այսինքն, Կիթառիճից դեպի Թեոդոսուպոլիս և «մյուս Հայք» գնացողի (ճանապարհին հանդիպող) «երկիրը» (կամ գավառը) կոչվում է Խորձեան: Պրոկոպիոսի երկի անգլերեն հրատարակությունում այդպես էլ թարգմանված է «the other Armenia»[129]: Իսկ Հ. Բարթիկյանը թարգմանել է. «Կիթրիգոնի, Թեոդոսուպոլսի և Երկրորդ Հայքի մեջտեղում գտնվում է Խորզանե երկիրը»[130]: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ἕτερος

(α, ον)-ի թարգմանվում է «մյուս», իսկ ἄλλος (η, ν)-ը «այլ»[131]: Ճիշտ է ἕτερος նշանակում է նաև «երկրորդ»[132], սակայն Պրոկոպիոսի հիշատակած «մյուս Հայք»-ը չի կարելի շփոթել «Երկրորդ Հայքի» հետ: «Երկրորդ Հայքը» հունա-հռոմեական (բյուզանդական) աղբյուրներում հիշատակվում է հետևյալ կերպ. Δευτέρα Ἀρμενία, Ἀρμενίας $\overline{\text{Β}}$[133] (Secunda Armenia):

Պրոկոպիոսը նախորդ շարադրանքում արդեն խոսել էր «Մեծ Հայքի» (Μεγάλη Ἀρμενία) և հայկական ինքնավար իշխանությունների (սատրապությունների) տարածքը ընդգրկող «այլ Հայք»-ի (ἄλλη Ἀρμενία) մասին: Իսկ Կիթառիճից հետո Թեոդոսուպոլսի հետ հիշատակելով «մյուս Հայքը» (ἑτέρα Ἀρμενία)՝ պատմիչը, ըստ երևութին, նկատի է ունեցել կամ «Մեծ Հայքը», կամ էլ հաջորդ հատվածում նշվող ἄλλη Ἀρμενία-ն: Վերջինիս կազմում Սեբաստիա, Նիկոպոլիս[134] Սատաղ և այլ քաղաքների հիշատակությունից երևում է, որ խոսքը Թեոդոս Մեծի ժամանակից սերող Առաջին Հայքի մասին է[135], նախքան Հուստինիանոսի վարչատարածքային վերափոխությունները:

536 թ. մարտի 18-ին հրապարակած 31-րդ նովելայով Հուստինիանոս Ա-ն արմատապես վերափոխեց Արևմտյան Հայաստանում գոյություն ունեցող վիճակը: Կազմվեցին նոր Առաջին Հայքը (կենտրոնը Հուստինիանուպոլիս), Երկրորդ Հայքը (Սեբաստիա), Երրորդ Հայքը (Մելիտենե), Չորրորդ Հայքը (Մարտիրուպոլիս)[136]: Սահմանվեց հետևյալ կարգավիճակը. չորս Հայքերից «երկուսը *սպեկտաբիլային* են և կառավարվում են՝ մեկը *անթյուպատոսի*, մյուսը *կոմեսի* կողմից, ընդ որում Առաջին Հայքի կառավարիչը *անթյուպատոս* է, իսկ Երրորդ (Հայքինը)՝ *կոմես*: Երկրորդ և Չորրորդ (Հայքերի) կառավարիչները *օրդինար* են... Մենք սահմանում ենք, որ Առաջին Հայքի կառավարչին՝ այսինքն *անթյուպատոսին*, ուղղվեն բողոքարկումները (Երկրորդ) Հայքից, ուրեմն Սեբաստիայով, իսկ Երրորդ Հայքի *կոմեսին*, որը Մելիտենեում է՝ Չորրորդ Հայքից, նշված գումարի չափով[137]»:

Համակայսերական շահերից բխող Հուստինիանոսի վերափոխությունների ծրագրի իրականացումը կոչված էր Արևմտյան Հայաստանում կարգավորել պետական գանձումները[138], ամրապնդել կայսրության ռազմավարչական կառուցվածքները, խարխլել հին Հայոց պետականության նեցուկը հանդիսացող նախարարական համակարգի հիմքերը՝ ժառանգական հինավուրց իրավունքը ձևափոխելու միջոցով: Հետագայում, Մավրիկիոսի կիրառած միջոցառումները Հայաստանից զավթած ավելի ընդարձակ տարածքում, նույնպես ծառայեցվեցին կայսրության նվաճողական շահերին. հարկերի գանձում, հայկական ռազմական ուժերի տեղահանում և օգտագործում Բյուզանդիայի հեռավոր՝ արևմտյան սահմանների վրա, իսկ դավանանքի բնագավառում՝ պառակտիչ քաղաքականության կիրառում:

Հայկական աղբյուրներում տեղեկություններ են պահպանվել Հայոց աշխարհի արևմտյան երկրամասերում տարբեր ժամանակներում կազմակերպ-

ված նահանգների վերաբերյալ: Մովսես Խորենացու երկի ներկայիս խմբագրությամբ մեզ հասած շարադրանքում չորս Հայքերը միասին միայն մեկ անգամ են հիշատակվում, իսկ մյուս դեպքերում առկա է միայն Չորրորդ Հայքը: Պատմահայրը գրել է. «Աստ յարեւմուտս շարժեալ (Արամը - Է. Դ.) ի վերայ առաջնոյն չորիւքն բիւրովք հետեւակազօրու եւ երկու հազար հեծելովք՝ հասանէ ի կողմանս Կապադովկիացւոց, ի տեղի մի, որ այժմ ասի Կեսարիա... Վասն որոյ յերկարեալ ժամանակս լինել յարեւմուտս՝ պատահէ նմա Պայապիս Քաաղեան Տիտանեան պատերազմաւ, որ բռնացեալ ունէր զմիջոց երկուց ծովուց մեծամեծաց, զՊոնտուն եւ զՈվկիանու: Որում ի դիմի հարեալ վանէ, փախստական արկանելով ի կղզի ինչ ասիական ծովուն: Եւ իւր թողեալ զոմն Մշակ անուն յազգէ իւրմէ եւ բիւր մի ի զօրացն ի վերայ աշխարհին՝ եւ ինքն դառնայ ի Հայս: Բայց հրաման տայ բնակչաց աշխարհին՝ ուսանել զխօսս եւ զլեզուս հայկական. վասն որոյ մինչեւ ցայսօր ժամանակի անուանեն Յոյնք զկղիմայն զայն Պռոտին Արմենիան, որ թարգմանի Առաջին Հայք: Եւ զդաստակերտն զոր շինեաց յանուն իւր Մշակ կողմնապետն Արամայ... անուանէին հինք աշխարհին՝ Մաժաք, որպէս ոչ կարելով ուղղախօսել. մինչեւ յետոյ յոմանց ընդարձակագոյն շինեալ՝ անուանացաւ Կեսարիա: Ըստ նմին օրինակի ի տեղացն այնոցիկ մինչեւ ցբուն իւր սահմանսն, զբազում անբնակ երկիր ելից բնակչօք, որք Երկրորդ եւ Երրորդ անուանեցան Հայք, այլ եւ Չորրորդ: Այս է առաջին եւ ճշմարիտ պատճառն վասն անուանելոյ զարեւմտեան մեր կողմն Առաջին եւ Երկրորդ, այլ եւ Երրորդ եւ Չորրորդ Հայք»[139]: Ստ. Մալխասյանցը, Խորենացուն համարելով V դարի հեղինակ, եզրակացրել է, որ «Երրորդ» և «Չորրորդ Հայք» բառերը ընդմիջարկություններ են Պատմահոր երկում[140]:

Արամը, ըստ Մովսես Խորենացու, «մինչեւ ցբուն իւր սահմանսն զբազում անբնակ երկիր ելից բնակչօք...»: Կապադովկիայից արևելք գտնվում էր Փոքր Հայքը, որը տարածվում էր մինչև Եփրատ գետը, այսինքն՝ Մեծ Հայքի արևմտյան սահմանը: Ուրեմն, ասելով «մինչեւ ցբուն իւր սահմանսն»[141] Պատմահայրը նկատի է ունեցել մինչև Փոքր Հայքի արևմտյան սահմանը: Արամի և Մշակի գործունեությունը կապելով Կապադովկիայի հետ, Խորենացին այդ տարածքը նշել է հայոց լեզվի և պետականության սահմաններում: Այս իրողությունը, ըստ Փավստոս Բուզանդի, Պապ թագավորին հետագայում հնարավորություն էր տվել, դիմելով հռոմեական կայսրին, պահանջել. «...Կեսարիաւ հետ՝ եւ տասն քաղաք մեր լեալ է, արդ 'ի բաց տուր»[142]:

Չորս Հայքերի մասին տեղեկությունը կապված Արամի հետ կարիք ունի քննության: Ասվում է, թե Արամի օրոք մինչև նրա բուն սահմաններն ընկած տարածքն անվանեցին Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ Հայք: Իսկ այնուհետև հաջորդ նախադասությունից տեղեկանում ենք, թե այդ էր առաջին և ճշմարիտ պատճառը, որ անվանեցին «զարեւմտյան մեր կողմն Առաջին

եւ Երկրորդ, այլ եւ Երրորդ եւ Չորրորդ Հայք»: Նախ խոսքը գնում է Փոքր Հայքից արևմուտք ընկած երկրամասը (Կապադովկիա) Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ Հայք անվանելու մասին, այնուհետև ասվում է թե այդպես անվանեցին «զարեւմտեան մեր կողմն», այսինքն՝ Հայաստանի արևմտյան մասը: Ըստ այդպիսի շարադրանքի, նախ ասվում է, թե Չորրորդ Հայքը, ի թիվս Ա, Բ և Գ Հայքերի տարածվում էր մինչև Արամի բուն երկրի սահմանները, իսկ այնուհետև այդ տեղեկությունը հակասության մեջ է մըտնում հաջորդ հաղորդումների հետ՝ Մեծ Հայքի թագավորության արևմուտքում գտնվող Ծոփքի կապակցությամբ: Վերջինիս մասին կարդում ենք. «Հաստատէ (Վաղարշակը - Է. Դ.) զմեծ նախարարութիւնն Ծոփաց ի Չորրորդն կոչեցեալ Հայս»; կամ «Արքեղայոս, որ էր կարգեալ ի վերակացութիւն Չորրորդն կոչեցեալ Հայոց, կշտամբեալ ի նմանէ (խոսքը Ռոստակէսի-Արիստակէսի մասին է - Է. Դ.), սպասեաց դիպող աւուր, եւ պատահեալ ի ճանապարհի ի Ծոփաց գավառին՝ սպան զնա սրով. եւ ինքն գնաց փախստական ի Տաւրոս Կիւլիկեցւոց: Իսկ զմարմին երանելւոյն բարձեալ աշակերտաց նորին՝ բերին յԵկեղեաց գաւառն, հանգուցանել ի Թիլն, յիւրում աւանին»[143]: Այն, որ Խորենացու երկում Արիստակեսի սպանության և Ծոփքի առնչություններով «Չորրորդ Հայքին» վերաբերող բառերը ընդմիջարկություն են, երևում է նաև Փավստոս Բուզանդի («սրբոյն Արիստակայ որդւոյ նորա՝ յետ խոստովանութեանն մահուն իւրոյ, եւ տարան զնա ՚ի Ծոփաց գաւառէ, եւ եդին զնա յԵկեղեաց գաւառի ի Թիլն աւանի, ի կալուածս Գրիգորի հօրն իւրոյ»)[144] և հետագայում Հովհաննես Դրասխանակերտցու մոտ («Արքեղաւոս ոմն կուսակալ Ծոփաց աշխարհին՝ կշտամբեալ ի նմանէ սակս չար գործոց իւրոց, ըստ դիպմանց իմն ճանապարհի ուրեմն աշխարհի Ծոփաց՝ ժպրհեալ ոխերիմ մտօք սպանանէ զսուրբն սրով, եւ փախստեայ ինքն գնացեալ յարեւմուտս Տօրոսի: Զոր ապա բարձեալ զնշխարեալ մարմինն նորուն աշակերտացն՝ տարեալ հանգուցին յԵկեղեաց գաւառն ՚ի Թիլն աւանի») այդ դրվագի կապակցությամբ «Չորրորդ Հայք» անվան բացակայությունից[146]: Եթե Խորենացուն իրոք հայտնի լիներ Չորրորդ Հայքը (ինչը բացառվում է, քանի որ Պատմահայրը ապրել է V դարում, իսկ Չորրորդ Հայքը VI դարում էր կազմակերպվել), ապա մի դեպքում նա այն չէր տեղադրի Եփրատից և նույնիսկ Փոքր Հայքից արևմուտք, իսկ մյուս դեպքում՝ արևելք (ինչպես իրականում եղել է): Մովսես Խորենացու երկի ևս մի դրվագում կրկին տեղ է գտել «Չորրորդ Հայքի» հիշատակությունը, ինչը, նույնպես պետք է ընդմիջարկության (այս դեպքում տեքստային ավելի լայն ընդգրկմամբ) հետևանք լիներ:

Այսպես, կարդում ենք. « ...ոմանք յազգէն Վանանդացւոց ապստամբեցին ի Խոսրովայ. եւ ոչ յոք ապաւինեցան, այլ ամրացան ի մայրիս լերանց իւրեանց եւ յանձուկս Տայոց քարանց. յեղուզակաբար արշաւանօք յիշխանութիւն երկոցունց թագաւորացն Հայոց խռովէին յաշխարհս եւ անհանգիստ

պահէին: Յորոց վերայ չոգաւ սպարապետն Խոսրովայ Սահակ ասպետ, եւ զբազումս ի նոցանէ սատակեաց, եւ զբազումս փախստական արար ի կողմանս Չորրորդ Հայոց: Ջի ոչ յերկիրն Խաղտեաց անկան, ի Յոյնս ապաւինելով, եւ ոչ առ թագաւորն Արշակ անցին. այլ զաւազակս ոմանս, որ ի կողմանս Չորրորդ Հայոց էին, ի սահմանս Ասորւոց, դիմեցին ապաստան առնել: Քանզի Վանանդացիք զաւազակութեան գործ մեծ ցանկութեամբ գործէին, եւ որպէս ուղիղ իրք ախորժելի թուէին նոցա: Ջորոց ձիգ զհետ մտեալ Սահակայ՝ վարէ յերկար մինչեւ ի սահմանս Մանանաղւոյ»[147]:

Այստեղ՝ բնագրում առկա է հետագայում տեղ գտած բավականին անհաջող խմբագրական միջամտություն: Նախ ասվում է, թե Վանանդի լեռներում և Տայոց ապառաժներում ամրացած ապստամբներից շատերին Սահակ ասպետը կոտորեց, իսկ մյուսներին էլ (ավազակությամբ զբաղվողներին) փախցրեց Չորրորդ Հայքի կողմերը, որոնք եկան այնտեղ՝ «ասորւոց» սահմանները ապաստանելու: Թվում է, թե տարածքի և գործողությունների առումով այս հաղորդումը ավարտուն տեսք ունի, քանի որ հետապնդման ընթացքում փախստականների մի մասը կոտորվել էր, իսկ մյուսը հասել էր մինչև «ասորւոց» սահմանները: Սակայն, այնուհետև, նորից ասվում է Սահակի կողմից նրանց հետապնդման մասին, բայց այս անգամ արդեն մինչև Մանանաղիի սահմանները: Իսկ Մանանաղին Բարձր Հայքի գավառն էր և Ծոփաց կողմից (հետագա Չորրորդ Հայքից) հյուսիս էր գտնվում՝ սահման կազմելով վերջինիս Խորձեան գավառի հետ: Եթե Սահակը նրանց մինչև Մանանաղի էր հետապնդել, ինչ՞ու էին նրանք այնուհետև այդպես գլխակորույս փախել և, անցնելով Հայաստանի արևմտյան մասը, հասել մինչև «ասորւոց» սահմանները: Իսկ, եթե Սահակը մինչև վերջ էր նրանց քշել[148], ապա ինչու՞ նա պետք է վերադառնար և կրկին նրանց հետապնդեր, այս անգամ մինչև Բարձր Հայքի Մանանաղի գավառը:

Տայք նահանգը և Այրարատ նահանգի Վանանդ գավառը Մեծ Հայքի թագավորության անքակտելի մասերն էին, այսինքն, խնդրո առարկա ժամանակաշրջանում, նույնիսկ 385 թ. բաժանումից հետո, գտնվում էին Խոսրովի թագավորության սահմանների մեջ: Եթե Արշակ Գ-ին բաժին մնացած Հայոց թագավորության արևմտյան մասի կապակցությամբ կարող էր հասկանալի լինել նրա տիրույթների սահմանները արշավելու վերաբերյալ հաղորդումը (չնայած, եթե այդ կատարվում էր ոչ թե ապստամբների, այլ ավազակների կողմից՝ աղբյուրի ներկայիս խմբագրությամբ շարադրանքի համաձայն, ապա այդ տեղեկությունը ժամանակավրեպ է), նույնը չի կարելի ասել Խոսրովի թագավորության սահմանները ներխուժելու հաղորդման վերաբերյալ: Ասողիկի (X դ. եկրորդ կես - XI դ. առաջին կես) հաղորդումը Կարսի թագավոր Աբասի (984-1029 թթ.) գործունեության մի դրվագի կապակցությամբ կարող է նպաստել հարցի պարզաբանմանը: Պատմիչը գրել է. «Եւ սկիզբն արարեալ ամենայն բարեգործութեանց՝ նախ եւ առաջին

եբարձ նա յաշխարհէն իւրմէ զաւազակութիւն, զմարդադաւութիւն, զոր ազգըն Վանանդայ իբրեւ զհայրենիք ունէին, ըստ ասելոյ պատմագրին: Եւ յաւուրս հօր սորա ոչ միայն ի ճանապարհս եւ ի բացեայ տեղիսն կողոպտէին՝ այլ ի նոյն ինքն ի քաղաքին՝ յերեկոյացեալ ժամուն եւ զգիշերն ամենայն ճիչք եւ ձայնք կողոպտանաց լինէին: Այլ սա ինքնին վրէժխնդիր եղեալ եւ զգտեալ գողսն անաչառ մահու դատապարտեալ՝ ոչ խնայելով ի մեծս կամ ի փոքունս, յիշխանս կամ ի շինականս. եւ այնպէս խաղաղացոյց զաշխարհն իւր՝ մինչեւ զի ի գիշերի իբրեւ ի տունջեան, եւ յանապատի իբրեւ յապարանս շրջէին ամենեքեան, շինութեան եւ աշխատութեան գործոց պարապէին, արդարադատ իրաւամբք ուղղեալք»[149]:

Ասողիկը, պատմելով Վանանդ գավառում տեղ գտած ավազակության մասին, որպես այդպիսի տեղեկության աղբյուր վկայակոչել է «պատմագրին», որը, ինչպես ենթադրվել է, Մովսես Խորենացին էր: Մեզ հասած խմբագրությամբ Խորենացու շարադրանքում նախ ասվում է ապստամբների, այնուհետև ավազակներին նրանց միանալու մասին: Ըստ Պատմահոր, Սահակ ասպետը նրանց մի մասին կոտորել էր, իսկ մյուսները փախել էին մինչև «ասորւոց» սահմանները, այնուհետև մինչև Մանանադի գավառը: Այսինքն, ըստ Խորենացու, ապստամբները ավազակների հետ միասին իսպառ վտարվել էին առնվազն Վանանդից: Իսկ Ասողիկի տեղեկությունը Խորենացու հաղորդման հետ կապի մեջ դիտելով՝ այն տպավորությունն է ստեղծվում, որ այդպիսի վիճակ Վանանդում տիրել էր վեց հարյուր տարի, այսինքն 385 թ. մինչև 984/5 թ.: Այսպիսի կապով ժխտվում է Խորենացու հաղորդումը ապստամբների և Սահակի կողմից Վանանդից և Տայքից դեպի Մանանադի՝ այսինքն Արևմտյան Հայաստանի տարածքը նրանց վտարելու մասին: Ուրեմն, Խորենացու բնագրում խոսքը եղել է միայն Խոսրով թագավորից ապստամբածների՝ Վանանդում և հարևան Տայքում ամրանալու և այնուհետև Սահակ ասպետի կողմից մինչև Մանանադի նրանց հետապնդելու մասին: Այսքանով տրամաբանորեն ամփոփվում է Պատմահոր հաղորդումը «վանանդացիներից» ոմանց ապստամբության մասին: Պատահական չպետք է լինի այն, որ Ասողիկի շարադրանքում խոսք անգամ չկա ապստամբների մասին, այլ խոսվում է միայն ավազակության վերաբերյալ: Կարելի է ասել, որ Խորենացին գրել է միայն ապստամբների մասին, իսկ մնացյալը հետագայի ընդմիջարկություն է, ընդ որում Ասողիկի ձեռքում է եղել Պատմահոր արդեն ընդմիջարկված տեքստը: Կարելի է կարծել, որ Ասողիկը Խորենացու երկից պետք է տեղեկություններ քաղեր «Վանանդի ապստամբների» մասին, եթե նկատի ունենանք, որ թե՛ Արշակունիների և թե՛ Բագրատունիների ժամանակ Վանանդը[150] եղել է թագավորական իշխանությանը լուրջ անհանգստություններ պատճառած գավառներից մեկը: Եվ քանի որ Ասողիկի շարադրանքից երևում է, որ Աբասը պատժել էր նաև իշխաններին և շինականներին, ուրեմն պատմիչի մոտ խոսքը միայն ավազակներին

ճնշելու մասին չէ: Նկատի ունենալով, որ վաղմիջնադարյան հայկական աղբյուրներում Վանանդի վերաբերյալ նմանօրինակ հաղորդում չկա, իսկ Դրասխանակերտցու մոտ խոսքը նախարարների քաղաքական ընդվզման մասին է, կարելի է ենթադրել, որ Խորենացու բնագրում ավազակների վերաբերյալ ընդմիջարկությունը կատարվել է X դ. կեսերին, և Պատմահոր շարադրանքը Ասողիկին հասել է այդ խմբագրությամբ: Նույնիսկ կարելի է ենթադրել, որ Ասողիկը Խորենացու չընդմիջարկված բնագրին է ծանոթ եղել և հիշատակել է նրան՝ նկատի ունենալով Վանանդի ապստամբներին, իսկ Պատմահոր բնագրի հետագա արտագրողները Ասողիկի տեղեկության հիման վրա խմբագրել են Խորենացու տեքստը:

Ուրեմն Խորենացին գրել է Վանանդի ապստամբների մասին: Այդ տեղեկությանը X դ. կեսերին, կամ էլ Ասողիկի ժամանակաշրջանից հետո ավելացվել է ավազակների վերաբերյալ հաղորդումը: Եթե այդ արվել է X դ. հետո, ապա Ասողիկի շարադրանքի և հատկապես դրանում «պատմագրի»՝ Պատմահոր (միայն ապստամբների մասին տեղեկության կապակցությամբ) հիշատակության ազդեցությամբ հետագայում կատարվել է մի ամբողջ հատվածի ընդմիջարկություն Մովսես Խորենացու տեքստում: Այնպես որ, Վանանդում ապստամբներ (ըստ Խորենացու՝ 385-386 թթ.), խռովարարներ (ըստ Դրասխանակերտցու X դ. երկրորդ տասնամյակի սկզբներին՝ Սմբատ Բագրատունու ժամանակ) և ընդհանրապես բնակչության տարբեր խավերից դժգոհներ (ըստ Ասողիկի՝ իշխաններ և շինականներ) եղել են թե՛ IV և թե՛ X դարերում, սակայն ավազակությունների մասին տեղեկությունը պետք է վերաբերի X դ. երկրորդ կեսին, հատկապես Աբասի հոր՝ Մուշեղի ժամանակաշրջանին: Այսպիսով, Մովսես Խորենացին, հանդիսանալով V դարի հեղինակ, գրել է միայն Խոսրովի դեմ ապստամբածների, նրանց մի մասի կոտորվելու և մյուսների՝ Վանանդից և Տայքից Մանանաղի փախուստի մասին: Խորենացուն չէր կարող հայտնի լինել Չորրորդ Հայքը, որը Հուստինիանոս Ա կայսեր կողմից հայկական հողերի տարածքային վերափոխությունների արդյունք էր: Իսկ նրա պատմածը այս դրվագում նույնիսկ IV դարի 85-86 թթ. է վերաբերում, երբ Թեոդոս Ա կայսրը նոր էր ստեղծում Առաջին Հայքը և Երկրորդ Հայքը՝ Փոքր Հայքը բաժանելով երկու մասի: Ուստի, ոչ միայն «Չորրորդ Հայք» բառերը կարելի է ընդմիջարկություն համարել, այլև Չորրորդ Հայքում ապաստանած ավազակների մասին ամբողջ պարբերությունը: Մովսես Խորենացու երկի ներկայիս մեզ հասած շարադրանքի խնդրո առարկա հատվածի բնագրային մասը հետևյալ միտքն է արտահայտում. Հայաստանի 385 թ. բաժանումից հետո Վանանդի բնակչության մի մասը ապստամբեց Խոսրովից և ամրացավ այդ գավառի անտառներում և Տայքի լեռներում, անհանգստություն պատճառելով Հայոց կենտրոնական իշխանությանը: Նրանց դեմ է գնում Սահակ ասպետը՝ Հայոց սպարապետը: Ապստամբներից շատերին Սահակը կոտորեց, մյուսներին փախցրեց մինչև Մանանաղիի սահմանները: Իսկ, քանի որ նրանք չէին կարող ապաստանել

Արշակի մոտ[151], ուստի Մանանաղիից պետք է անցնեին Ծոփաց կողմերը և այնտեղից հեռանային «ասորւոց» սահմանները:

Մովսես Խորենացու երկի մեզ հասած շարադրանքից հետևում է, որ Կապադովկիան Մաժաք-Կեսարիա քաղաքով հանդերձ եղել է Առաջին Հայքի կազմում: Կարծիք է հայտնվել, որ Պատմահոր հիշատակած «Պռոտին Արմենիան», որը նա թարգմանում է իբրև «Առաջին Հայք», ոչ մի առնչություն չունի IV դարի վերջից հայտնի «Առաջին Հայք» կոչվող հռոմեական *պրովինցիայի* հետ, չնայած որ հարևան էր նրան, այլ նշանակում էր «նախնական Հայաստան»[152]:

Խորենացու շարադրանքի այս հատվածում արտացոլվել և միահյուսվել են տարբեր ժամանակներին վերաբերող տեղեկություններ. 1. Պատմահայրը գիտեր Առաջին Հայքի և Երկրորդ Հայքի կազմավորման մասին, քանի որ այդ տեղի էր ունեցել իր գրելու ժամանակից մի քանի տասնամյակ առաջ: 2. Խորենացին պետք է նաև տեղյակ լիներ, որ Փոքր Հայքը I դարից մինչև III դարի վերջը Հռոմեական կայսրության համակարգում հանդես էր եկել Կապադովկիա նահանգի կազմում[153]: Նույնիսկ վերջինից Փոքր Հայքի, որպես ինքնուրույն նահանգի, առանձնացումից և հետագայում, Առաջին և Երկրորդ Հայքի բաժանվելուց հետո էլ, դրանց Սեբաստիա և Մելիտենե կենտրոններով մետրապոլտությունները ճանաչում էին իրենց նախկին մետրապոլիայի՝ Կեսարիայի աթոռի ավագության իրավունքը և միայն Քաղկեդոնի 451 թ. ժողովից հետո անմիջապես կախման մեջ դրվեցին Կոնստանդնուպոլսի հայրապետից[154]: 3. Խորենացուն հասել էին նաև հնագույն տեղեկություններ՝ կապված Արամի և Պայապիս Քաաղեայի կռվի[155] և Առգեոս լեռը շրջապատող տարածքի Հայոց թագավորության մեջ մտնելու հետ[156]:

«Աշխարհացոյց»-ում Առաջին Հայքը (Առաջին) Կապադովկիայից արևելք է նշված: «Առաջին Հայք, յելից կալով Առաջին Կապադովկիոյ առ երի Երկրորդ Հայոց, եւ սահմանի յելից Եփրատայ. եւ լեառն ունի զԱռգեոս, եւ գետ զԱլիս եւ այլ մասունս»[157]: Կապադովկիայի և Փոքր Հայքի հետ կապված վերոհիշյալ պատմական իրողությունը պետք է ինչ-որ կերպ արտացոլված լինի «Աշխարհացոյց»-ում, և Առգեոս լեռան հիշատակությունը Առաջին Հայքի կազմում[158] թերևս դրա արգասիքը լինի:

Առաջին Հայքը, ըստ «Աշխարհացոյց»-ի, որը V դ. գրել է Մովսես Խորենացին և VII դ. խմբագրել ու շարունակել Անանիա Շիրակացին, սահմանակից էր Առաջին Կապադովկիային[159] և ընկած էր Ալիս գետի ավազանում (հյուսիս-արևելյան մասում), իսկ Երկրորդ Հայքը գտնվում էր դրանից հարավ: Այդ համապատասխանում էր 386 թվականից մինչև Հուստինիանոս Ա-ի վերափոխությունները գոյություն ունեցած վիճակին: Ուրեմն, իրոք պետք է հիմք ընդունել «Աշխարհացոյց»-ի վերոհիշյալ ձեռագրերում առկա «երի Երկրորդ Հայոց» ընթերցվածը, քանի որ մինչև 536 թ. Երրորդ Հայքը դեռևս չէր կազմավորվել նախկին Երկրորդ Հայքի (կենտրոնը Մելիտենե)

հիման վրա: Ս. Երեմյանը իրավացիորեն նշել է, որ «Աշխարհացոյց»-ում Փոքր Հայքը բերվում է ըստ նախքան 536 թ. գոյություն ունեցած վիճակի[160], այսինքն այն բաժանումով, որն իրականացրել էր Թեոդոս Ա կայսրը:

Երկրորդ Հայքի մասին «Աշխարհացոյց»-ում կարդում ենք. «Երկրորդ Հայք, յելից կալով [Կի]լիկիոյ առ Տաւրոս լեռամբ, ունի լերինս երիս, եւ գետս չորս եւ դրունս երկու ելանելոյ Ասորւոց»[161]:

Վենետիկի Մխիթարյանների Մատենադարանի № 1245 ձեռագրում (էջ 37) առկա է. «Երկրորդ Հայք, որ արդ կոչին Առաջին Հայք՝ յելից կալով Կիլիկ[ի]ո[յ]», որից հետո՝ «առ Տաւրոս» բառերի վերևում ավելացված է «որ է Սասուն» արտահայտությունը: Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերում, որքանով հնարավոր եղավ պարզել, չկա «որ արդ կոչին Առաջին Հայք» արտահայտությունը, իսկ № 2370 ձեռագրի 254բ էջի ձախ սյունակի վերջում գրված «լիկիոյ» (Կիլիկիոյ-Է.Դ.) բառից հետո ջնջում է կատարված և ավելի մուգ թանաքով գրված է. «որ է Սա», բայց աջ սյունակը սկսվում է առանց ջնջումի, արդեն նույն ձեռագրի թանաքով և նույն գրչի կողմից գրված «սուն» բառամասով, որին հաջորդում են «առ Տօրօս» բառերը և շարունակությունը: Ուրեմն Մաշտոցի անվան Մատենադարանի № 2370 ձեռագրում ևս առկա է ընդմիջարկված «որ է Սասուն» արտահայտությունը, միայն թե այստեղ ընդմիջարկությունը կատարվել է ձեռագրի արտագրության ժամանակ, իսկ Մխիթարյանների Մատենադարանի № 1245 ձեռագրում այն ավելացվել է: Ընդմիջարկողները Կիլիկյան Տավրոսի մասին եղած տեղեկությանը կցել են իրենց բացատրությունը Հայկական (Արևելյան) Տավրոսում գտնվող Սասունի մասին:

ՄՄ № 2370 ձեռագրում Երրորդ Հայքի մասին 254բ էջում կարդում ենք. «Երրորդ Հայք, որ կայ յելից կալով Կապադովկիոյ. եւ երկայն տարածի, մինչեւ ցԵփրատ, եւ ունի այլ գետս Բ. եւ լերինս բազումս»: ՄՄ № 582, 696, 1267,1486, 1748, 1898, 2019, 2291, 3691, 3941, 4284, 7993 ձեռագրերում «Երրորդ»-ի փոխարեն այս տեղում գրված է «Երկրորդ» (№ 582 ձեռ. «կ» տառից հետո ջնջում կա, այնուհետև շարունակությունն է), իսկ ՄՄ № 1717 և 5613 ձեռագրերում՝ «Հայք են»: «Աշխարհացոյց»-ի այս հատվածում[162] ճիշտը «Երրորդ Հայք» ընթերցումն է: Կապադովկիայի մասին տեղեկությունը վերաբերում է այն ժամանակաշրջանին, երբ Հուստինիանոսը վերամիավորեց Առաջին և Երկրորդ Կապադովկիաները, իսկ Երրորդ Հայքը դարձրեց Երրորդ Հայք:

«Աշխարհացոյց»-ում տարբեր ժամանակաշրջաններին վերաբերող նյութեր են ընդգրկված[163]: Այստեղ խոսվում է Առաջին, Երկրորդ և Երրորդ Հայքերի մասին, և միևնույն ժամանակ Մեծ Հայքի սահմանի արևմտյան կողմում նշված է Փոքր Հայքը. «Մեծ Հայք են, յելից կալով [Պոնտոս] Կապադովկիոյ եւ Փոքր Հայոց, առ Եփրատ գետով մերձ ի Տաւրոս լեառն, որ բաժանէ զնա ի Միջագետաց»[164]:

Եթե հնարավոր լիներ ընդունել վերոհիշյալ սրբագրությունները («[Աշխարհի Առաջին Հայք՝ որ արդ կոչին] Երկրորդ Հայք» և «Աշխարհ Երկրորդ Հայք, [որ արդ կոչին Երրորդ Հայք]»), ապա խնդիրը միանշանակ և լուծումը պարզ կլիներ, քանի որ այդ տեղեկությունները կվերաբերեին միայն Հուստինիանոս Ա-ի ժամանակաշրջանին: Սակայն հարցը բարդանում է ոչ միայն նրանով, որ առկա ձեռագրերը այդպիսի ընթերցումներ չունեն և նման վերականգնումների հնարավորություն չեն ընձեռում, այլև այդպիսի մոտեցման դեպքում պետք է խոսվեր նաև Հուստինիանոսի Առաջին Հայքի մասին, որը իրոք բացակայում է «Աշխարհացոյց»-ում: Իսկ եթե ենթադրենք, թե ճիշտ է ընդարձակ խմբագրության ընթերցումը («Աշխարհ Երկրորդ Հայք, որ արդ կոչին Առաջին Հայք»), ուրեմն պետք է ընդունենք, թե այստեղ անմիջապես խոսվում է Մավրիկիոսի կողմից կազմավորված Առաջին Հայքի մասին, առանց Հուստինիանոսի Երրորդ Հայքի հիշատակության, քանի որ Թեոդոս Մեծի Երկրորդ Հայքը Հուստինիանոսը վերանվանեց Երրորդ Հայք, որը Մավրիկիոսը դարձրեց Առաջին Հայք:

Ա. Սուքրիի կողմից կատարված փակագծային վերականգնումները ընդունելու դեպքում կստացվի, որ միևնույն ժամանակ գոյություն ունեին Թեոդոս Ա-ի և Մավրիկիոսի Առաջին Հայքերը և Հուստինիանոսի Երրորդ Հայքը: Իսկ եթե ընդունենք, որ անհրաժեշտ է «Առաջին» բառի տեղում գրել «Երրորդ», ապա կհետևի, որ Հուստինիանոսի Երրորդ Հայքը երկու անգամ է նկարագրվել: Այսպիսով, մեզ հասած ձեռագրերից կարելի է առայժմ միայն եզրակացնել, որ «Աշխարհացոյց»-ում Առաջին և Երկրորդ Հայքերի մասին եղած տեղեկությունները վերաբերում են Թեոդոս Ա Մեծի և Հուստինիանոս Ա-ի վերափոխությունների միջև ընկած ժամանակաշրջանին, իսկ Երրորդ Հայքի մասին եղած տեղեկությունները՝ 536 թվականից մինչև Մավրիկիոսի վերափոխություններն ընդգրկող շրջանին[165]:

Հովհաննես Դրասխանակերտցին երկու անգամ անդրադարձել է չորս Հայքերին, պատմելով Արամի, իսկ այնուհետև՝ Մավրիկիոսի գործունեության մասին: Արամը «զԿապուտկեցիս եւս բազում արիական քաջամարտութեամբ ընդ իւրեաւ նուաճեալ սեպհականէր. եւ զկղիմայն զայն եւ զպռովտոնն ըստ իւրում իսկ անուանն Արմենի անուանէր, որ մինչեւ ցայսօր այս անուն Յունականաց անտի աշխարհին այնմիկ անուանի»[166]: Դրասխանակերտցին կամ, ավելի հավանական է, նրա ձեռագրի հետագա արտագրողները Մովսես Խորենացու բնագրի «Պռոտին» բառը դարձրել են «պռովտոնն»: Դրասխանակերտցու մոտ նույնպես Առաջին Հայքի կազմավորումը կապվում է Արամի գործունեության հետ, իսկ հյուսիսային սահմանը տրված է Թեոդոս Ա-ի վարչական բաժանման համապատասխան: «Իսկ յԱրմենէն յայնմանէ կոչեցելոյ մինչեւ զկողմանս Պոնտացւոց Առաջին Հայք զաշխարհն անուանեաց»[167]:

Հայտնի է, որ Առաջին Հայքը 386 թ. մինչև 536 թ. հյուսիսից սահմանա-

կից էր Պողեմոնական Պոնտոսին: Դրասխանակերտցին Թեոդոս Ա-ի և Հուստինիանոս Ա-ի Երկրորդ Հայքերին վերաբերող տեղեկությունները իրար է շաղկապել. «եւ ի Պոնտոսէ մինչեւ ցոլորտս քաղաքին Մելտինոյ Երկրորդ Հայք»[168]: Թեոդոս Ա-ի Երկրորդ Հայքը չի հարել Պոնտոսին, իսկ Հուստինիանոսի Երկրորդ Հայքը՝ Մելիտենեին (Մելիտինե): Վերջինս Թեոդոս Ա-ի Երկրորդ Հայքի կենտրոնն էր, իսկ Սեբաստիան՝ Հուստինիանոսի Երկրորդ Հայքի, որը հյուսիսից հարում էր պոնտական հողերին: Թեոդոս Ա-ի Առաջին Հայքի մի մասը մտել էր Հուստինիանոսի նորակազմ Առաջին Հայքի մեջ, որի կենտրոնը Հուստինիանուպոլիսն էր: Ուրեմն, Դրասխանակերտցու մոտ միևնույն՝ «Երկրորդ Հայք» անունը կրող և տարբեր ժամանակներում գոյություն ունեցած նահանգների մասին տեղեկություններ են այստեղ շաղկապվել: Եթե նկատի ունենանք նաև, որ աղբյուրում Մելիտենեն հիշատակված է Երրորդ Հայքում («եւ ի Մելտինոյ մինչեւ զսահմանս Ծոփաց՝ Երրորդ Հայք»), ապա այս հատվածում, բացի վերոհիշյալից, համատեղվել է նաև տեղեկություն Հուստինիանոսի Երրորդ Հայքի մասին: Այստեղ արտացոլվել է նաև այն իրողությունը, որ Թեոդոսի «Երկրորդ Հայքը» Հուստինիանոս Ա-ը վերանվանեց «Երրորդ Հայք»:

Չորրորդ Հայքի վերաբերյալ Դրասխանակերտցին այս հատվածում գրել է.«Եւ ի Ծոփաց մինչեւ ցքաղաքն Մարտիրոսաց եւ աշխարհին Աղձնեաց արեւմտեայ Չորրորդ Հայք»[169]:

Եթե այնպես հասկանանք, որ այս նահանգի սահմանը հասնում էր մինչև Մարտիրոսաց (Մարտիրուպոլիս) քաղաքը (առանց այն ընդգրկելու) և Աղձնիքի արևմտյան սահմանը, ապա կհետևի, որ նկատի էր առնված Մարտիրուպոլսի (Նփրկերտ), սահմանը, կամ այլ կերպ ասած՝ Նփրկերտ գավառի (ըստ «Աշխարհացոյց»-ի, Աղձնիքի արևմտյան մասում էր գտնվում) սահմանը: Այս, թերևս, այն Չորրորդ Հայքն էր, որը, ինչպես կտեսնենք, հիշատակված է «Աշխարհացոյց»-ում: Իսկ եթե Մարտիրուպոլիսը և արևմըտյան Աղձնիքը (Նփրկերտ գավառը) Դրասխանակերտցու կողմից, այնուամենայնիվ, նկատի էին առնված այստեղ հիշատակված Չորրորդ Հայքի կազմում, ապա կհետևի, որ խոսքը Հուստինիանոս Ա-ի Չորրորդ Հայքի մասին է, որին պատմիչը մասամբ[170] անդրադարձել է իր երկի մյուս հատվածում՝ գրելով Մավրիկիոսի գործունեության մասին. «Չորրորդն կոչեցեալ Հայք, յորում մայրաքաղաք է Մարտիրոսացպօլիս, այսինքն՝ Նփրկերտ, Յուստիանուհիստ, զնա զրէ ի դիւան արքունի»[171]:

Անանիա Շիրակացին «Աշխարհացոյց»-ում Չորրորդ Հայքի մասին հետևյալն է գրել. «Չորրորդ Հայք, որ է Ծոփաց կողմն, յերի կայ Բարձր Հայոց... Ունի գաւառս Ը. Խորձեան... զՀաշտեան... Պաղնատուն, Բալահովիտ... Ծոփք, Անձիտ, Դէգիք... Գաւրեք»[172]: Ի տարբերություն Շիրակացու, Դրասխանակերտցին Չորրորդ Հայքի մասին տարբեր ժամանակաշրջաններին վերաբերող տեղեկություններ է հաղորդել. 1. Չորրորդ Հայքին վերա-

բերող Դրասխանակերտցու առաջին հաղորդումը, թերևս, համապատասխանում է «Աշխարհացոյց»-ի Չորրորդ Հայքի ընդհանուր տարածքին, 2. Չորրորդ Հայքի երկրորդ տեղեկության մեջ Դրասխանակերտցին հիշատակել է միայն Նփրկերտ-Հուստինիանուպոլիս-Մարտիրուպոլիս քաղաքը, որը «Աշխարհացոյց»-ում Չորրորդ Հայքի կազմում չի նշված, իսկ Նփրկերտի գավառը բերված է Աղձնիքի կազմում:

Ն. Ադոնցը գրել է. «Հուստինիանոսի Չորրորդ Հայքը փոփոխությունների ենթարկվեց 591 թ. հողային նոր ձեռքբերումների հետևանքով: Աղձնիքը կայսրությանն անցնելուց հետո Ծոփանենեի և Ամիդի շրջանի հետ միասին կազմեց նոր նահանգ՝ *Վերին Միջագետք* կամ *Չորրորդ Հայք* անունով, իսկ նախկին Չորրորդ Հայքը Խորձեանի և Մուզուրի՝ Ներքնագույն Հայքի կազմի մեջ (մինչ այդ - Է. Դ.) մտնող գավառների հետ կազմեց *եպարքիա*, որը կոչվում էր Հուստինիանա (Iustinianea) կամ *այլ Չորրորդ Հայք*: Առաջինի մայրաքաղաքը Ամիդն էր, երկրորդինը՝ Դադիմը: Այդ բաժանումը արտացոլվել է Գեորգ Կիպրացու աշխատությունում: «Աշխարհացոյց»-ում Չորրորդ Հայքը տարբերվում է Գեորգ Կիպրացու նույնանուն գավառից նրանով, որ դրա մեջ չի ընդգրկված Մընձուրը (Մուզուր), իսկ Չորրորդ Հայքը կամ Վերին Միջագետքը «Աշխարհացոյց»-ում կրում է այն կազմող գլխավոր շրջանի՝ Աղձնիքի անունը, ընդ որում, նրա մեջ մտնում է ոչ թե ամբողջ Ծոփանենեն, այլ միայն դրա մի մասը, որը տեղադրված է Տիգրիսի ձախ ափին և կոչվում է Նփրկերտ, իսկ Տիգրիսի աջ ափը մինչև Բնաբեղ դուրս է թողնված»[173]: Ն Ադոնցը նշել է, որ Դրասխանակերտցին գիտի այդ փոփոխությունների մասին, «ըստ որում Iustinianea-ն փոխանցում է Յուստ[ին]իանունիստ բառով»[174]: Հ. Գելցերը և այլ հետազոտողներ նույնպես այդ կարծիքին են, քանի որ Դրասխանակերցու հաղորդումից եզրակացնում են, թե վերջինս Չորրորդ Հայքն էր որպես Յուստինիանա նշել[175]: Սակայն Դրասխանակերտցին բերել է նույն քաղաքի երեք անվանումները՝ Մարտիրուպոլիս-Նփրկերտ-Հուստինիանունիստ: Մաղաղասի մի հաղորդումից հետևում է, որ Հուստինիանոս Ա-ը Մարտիրուպոլիսը վերանվանեց Հուստինիանուպոլիս[176], որը չպետք է շփոթել ո՛չ 536 թ. վերակազմած Առաջին Հայքի մայրաքաղաք Հուստինիանուպոլսի և ոչ էլ Հինգվեցյան (Թրուլյան) եկեղեցական ժողովին (692) մասնակցած եպիսկոպոսների ստորագրությունների ցուցակում նշված Հուստինիանա նահանգի հետ[177]:

Descriptio-ում բերված են «Վերին Միջագետք կամ Չորրորդ Հայք» և «այլ Չորրորդ Հայք» եպարքիաների ցուցակները: Այդ տեղեկությունները, ըստ Հ. Գելցերի, պատկանում էին Գեորգ Կիպրացու գրչին[178]:

«Աշխարհացոյց»-ի Չորրորդ Հայքը, ինչպես նշել է Ն. Ադոնցը, համապատասխանում էր «այլ Չորրորդ Հայք»-ին (ըստ Descriptio-ի) Դադիմ կենտրոնով և տարբերությունը կայանում էր նրանում, որ վերջինիս կազմում հիշատակված Մուզուր (Մնձուր) գավառը ըստ «Աշխարհացոյց»-ի գտնվում էր

Բարձր Հայքի կազմում: Հինգվեցյան ժողովի ձեռագրական նյութերի համեմատական վերլուծությունը Հ. Գելցերին բերել է այն եզրակացության, որ «Երկրորդ Յուստինիանայի» և «Դասիմոնի»[179] հիշատակությունը Եղիա եպիսկոպոսի ստորագրությունում[180] հետևանք է բնագրում «Չորրորդ Յուստինիանա» և «Դադիմ» անվանումների աղավաղման: Այստեղից Հ. Գելցերը ենթադրել է, որ «այլ Չորրորդ Հայքը» հիշատակվել է «Չորրորդ Յուստինիանա» ձևով[181]:

«Այլ Չորրորդ Հայք» անվան կապակցությամբ անհրաժեշտ է հիշել, որ «այլ Հայք» անվանումը նոր չէր բյուզանդական պատմաաշխարհագրական տերմինաբանությունում: Վերը նշվեց, որ մինչ Հուստինիանոս Ա-ի վերափոխությունները Պրոկոպիոսը այդպես էր անվանում հայկական ինքնավար իշխանությունների տարածքը: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, այն փաստի վրա, որ Descriptio–ում Դադիմ կենտրոնով «Չորրորդ Հայքի» կապակցությամբ հատուկ օգտագործված է «այլ» բառը, ինչը խոսում է այն մասին, որ միաժամանակ գոյություն է ունեցել ևս մեկ «Չորրորդ Հայք», որպիսին «Վերին Միջագետք կամ Չորրորդ Հայք» նահանգն էր:

Գեորգ Կիպրացու տեքստի «Վերին Միջագետք» կամ «Չորրորդ Հայք» եպարքիայի[182] նկարագրության շարունակությունից է. Հոնիգմանը իր խմբագրած տեքստում դուրս է թողել[183] մի հատված, որից բխում էր, որ այդ եպարքիայի սահմանը VI դարի վերջում հասնում էր մինչև Տավրոս և Բաղեշի լեռնանցքը, և, որ այդ տարածքից հյուսիս գտնվում էր *Մեծ Հայքը*[184]: Այդ հատվածի անհրաժեշտությունը նաև ընդգծվում է նրանով, որ դրա լույսի տակ, թերևս, բացատրվում է Դրասխանակերտցու հետևյալ հաղորդումը. «Ի Մեծն Հայոց մասն ինչ մնացեալ էր ի ձեռս Հռոմոց կողմանց անտի ի Բասենոյ մինչեւ ի սահմանս Ասորեստանի Մեծ Հայք զնա (Մավրիկիոսը - Է. Դ.) կոչէ»[185]: Այստեղ հիշատակված Ասորեստանի սահմանը պետք է համապատասխանի «Վերին Միջագետք» կամ «Չորրորդ Հայք» նահանգի հյուսիսային սահմանին: Հետաքրքիր է նշել, որ Բաղեշի լեռնանցքը Թովմա Արծրունու երկի հետ հանդես եկող Անանունի գրվածքում անվանված է «դրունս Ասորեստանի»: Դրա մոտակայքում հիշատակվում է Կոտոմ գյուղը (Տուրուբերանի ծայր հարավում գտնվող Երևարք գավառում), որը պատկանում էր Աղձնիքի իշխանական տանը[186]:

Է. Հոնիգմանը նշել է, որ Բարսեղ Հայի (Իալիմբանացի) որոշ դիտողությունները «Միջագետք» եպարքիայի կապակցությամբ վերաբերում են Մարտիրուպոլսին, Տիգրիսի ակունքներին, Կիրկեսիային, Դարային, Սամոկարտային, Միջագետքի սահմաններին[187]: Հետևելով Հ. Գելցերին[188], Է. Հոնիգմանը մի շարք անճշտություններ է թույլ տվել: Աղձնիքում հիշատակվող Βαλοῦος-ը, համարելով Βαΐουλοῦος- ի զուգահեռը, նրանք այն նույնացրել են Բալուի հետ: Իր կողմից հրապարակած քարտեզում Հոնիգմանը Βαλοῦος-ը նշել է Բալահովտում[189]: Սակայն Βαλοῦος (Բաղեշ) ամրոցը

գտնվում էր Βαλαλείσων (Բաղաղեշ) լեռնանցքի մոտ, որը հիշատակվում է Աղձնիքում, իսկ Descriptio-ի «այլ Չորրորդ Հայքի» կազմում նշվող Βαϊουλοῦος-ը, ինչպես իրավացիորեն նշել է Ն. Ադոնցը, նույն Բալուն է Βαλαβητινῆς (Բալահուվիտ)[190] գյուղառում, որը գտնվում է Արածանի գետի հովտում: Նմանապես հնարավոր է տեղադրել Descriptio - ում՝ Արզանենեի (Աղձնիք) կազմում հիշատակվող մնացյալ բոլոր ամրոցները.

Κλίματος	Ἀρζανηνῆς
Κάστρον	Ἀφουμῶν
Κάστρον	Ἀριβάχων
Κάστρον	Φλωριανῶν
Κάστρον	Δαφνοῦδιν
Κάστρον	Βαλοῦος
Κάστρον	Σαμοχάρτων [191]

Ափումի տեղադրությունը հայտնի է այժմյան Փումի տեղում[192]: Առավել առարկություններ է առաջացրել Ἀριβάχων-ի տեղադրությունը[193]: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել Ἀριμάχων ընթերցվածի վրա[194]: Այս անունը պետք է հնագույն ծագում ունենա: Կարելի է ենթադրել, որ դրա հիմքում ընկած է վերոհիշյալ Ἄριμοι ցեղանունը: Աղձնիքի տարածքում, Քաղիրթ գետի ձախ ափին, հին հայկական Քղիմար քաղաքից հարավ և այժմյան Ալմադին քաղաքից հարավ-արևելք գտնվում է «Էրմի» բնակավայրը, որը, ըստ երեվույթին, համապատասխանում է Ἀριμάχων (Արիմ-ախ-ոն)-ին:

Կարծիք է հայտնվել, որ Φλωριανῶν-ի փոխարեն պետք է լինի Χλομαρῶν[195]: «Աշխարհացոյց»-ում Քղիմարը հիշատակված է նաև Կուտեմրան ձևով[196]: Ինչպես պարզել է Ն. Ադոնցը, Խլոմար (Քղիմար) ամրոցը Փումից (Ափումից) արևելք էր գտնվում[197]:

Է. Հոնիգմանը Δαφνοῦδιν-ի տեղադրությունը չնայած համարել է անհայտ, սակայն տողատակում հիշատակել է Դիֆնե տեղանունը: Դիֆնեն գտնվում էր Տիգրիսի աջ ափին և, ըստ երևույթին, այդ հանգամանքն է խանգարել Է.Հոնիգմանին դրա տեղում տեղադրել Δαφνοῦδιν-ը: Այսպիսի տեղադրությունը ճիշտ կլիներ, քանի որ Դիֆնեն գտնվում էր պատմական Աղձնիք աշխարհի հարավային սահմանի մոտակայքում՝ Հյուսիսային Միջագետքի այն մասում, որը հնում հայտնի էր որպես Միջագետք Հայոց և մինչև մ.թ. I դ. վերջին տասնամյակները մտնում էր Մեծ Հայքի թագավորության կազմի մեջ, իսկ VI դ. վերջում ընդգրկվեց «Վերին Միջագետք կամ Չորրորդ Հայք» եպարքիայի կազմի մեջ: Հաշվի առնելով նաև Σαμοχάρτων-ի տեղադրությունը Մարտիրոպոլսի և Քղիմարի միջև[198], կարելի է ասել, որ Descriptio-ում արտացոլվել է Աղձնիքի (Արզանենեի) VI դարի պատմաաշխարհագրական վիճակը: Այսպիսով, Վերին Միջագետք կամ Չորրորդ Հայք

եպարքիան, որի կենտրոնը Ամիդն էր, տարածվում էր մինչև Բաղեշի լեռնանցքը և Վանա լճի հարավ-արևմտյան առափնյա շրջանում գտնվող Ընձաքիսար լեռը, Մոկքի արևմտյան եզրագիծը և Ջերմ գետի ստորին հոսանքի շրջանը[199]:

«Աշխարհացոյց»-ում Չորրորդ Հայքը *Ծոփաց կողմն* կոչելը և դրա կազմում Նփրկերտի բացակայությունը արտացոլում է այն իրողությունը, որ խոսքը վերաբերել է, ի թիվս վերոհիշյալ գավառների (Խորձեան, Հաշտեանք, Պաղնատուն, Բալահովիտ, Անձիտ, Գաւրէք, Դէգիք), նաև (նախկին Շահունի՝ Շահեի) Ծոփքի տարածքն ընդգրկող նահանգին՝ «այլ Չորրորդ Հայքին» և ոչ թե նախկին Մեծ Ծոփքի տարածքում գտնվող Չորրորդ Հայքին (կամ հետագայի Վերին Միջագետք նահանգի հյուսիս-արևմտյան մասին)[200]:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, որ Չորրորդ Հայքը «Ծոփաց կողմն» է անվանվում «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրությունում, իսկ համառոտ խմբագրությունում այդպիսի անվանումը բացակայում է: Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկի ձեռագրերում Արամի գործունեությանը վերաբերող հատվածում Երրորդ և Չորրորդ Հայքի մասին տեղեկությունները ընդմիջարկվել են կամ «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրությունից (ընդարձակում Երրորդ Հայքը չի հիշատակված) կամ որևէ այլ աղբյուրից, իսկ Ծոփքի կապակցությամբ Չորրորդ Հայքի մասին տեղեկությունը, թերևս, ընդմիջարկվել է «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրությունից կամ Սեբեոսի Պատմությունից (կամ էլ նրա աղբյուրից), ուր պահպանվել է «Չորրորդ կոչեցեալ Հայոց» արտահայտությունը[201], որը բնագրային է: Պետք է նկատի ունենալ, որ Խորենացու երկի բնագրում եղած ավելի հին՝ Ծոփք պատմաաշխարհագրական հասկացությանը կցվել են «Չորրորդ կոչեցեալ Հայոց» ավելի ուշ շրջանին համապատասխանող բառերը: Եթե Խորենացու երկի ձեռագրերում այդ բառերը ընդմիջարկվել են «Աշխարհացոյց»-ի VII դ. խմբագրության ազդեցությամբ, ապա խոսքը Մավրիկիոսի «այլ Չորրորդ Հայքի»[202] մասին է, իսկ եթե այլ աղբյուրի ազդեցությամբ, ապա կարող են նկատի ունենալ նաև Հուստինիանոսի Չորրորդ Հայքը[203]: Ամեն դեպքում բնագրի Ծոփքը (որպես գավառ) և ընդմիջարկված «Չորրորդ Հայք»-ը իրար հարաբերում են ինչպես մասը ամբողջին:

Արամին վերաբերող հատվածում «Երրորդ» և «Չորրորդ» Հայք բառերը Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի ձեռագրերում, թերևս, ընդմիջարկվել են մինչև X դարը, քանի որ այդ ընդմիջարկությունները ազդել են Դրասխանակերտցու երկի՝ Արամին վերաբերող հատվածի վրա: «Աշխարհացոյց»-ում Անանիա Շիրակացու գրանցած «Չորրորդ Հայք, որ է Ծոփաց կողմն» և Սեբեոսի Պատմությունում եղած «Չորրորդ կոչեցեալ Հայոց» հիշատակություններից կարելի է ենթադրել, որ Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի ձեռագրերում «Չորրորդն կոչեցեալ Հայոց» բառերը ընդմիջարկվել են VII դարից ոչ շուտ: Այդ ընդմիջարկությունը նույնպես կարող էր մինչև X դարը

տեղի ունեցած լինել (նույնը կարելի է ասել Ծոփաց նախարարության կապակցությամբ ընդմիջարկված «Չորրորդն կոչեցեալ Հայս» բառերի մասին), սակայն Խորենացու երկի միայն որոշ ձեռագրերում: Կարելի է ենթադրել, որ Դրասխանակերտցու կողմից օգտագործվել են Խորենացու երկի այն ձեռագրերը, որոնցում Արիստակեսին վերաբերող հատվածում «Չորրորդն կոչեցեալ Հայոց» բառերը դեռևս ընդմիջարկված չեն եղել: Իսկ եթե Ծոփքի կապակցությամբ ընդմիջարկությունը կատարվել է X դարից հետո, ուրեմն Դրասխանակերտցու ժամանակ Խորենացու երկում ընդմիջարկվել էին միայն «Երրորդ» և «Չորրորդ» Հայք բառերը Արամին վերաբերող հատվածում:

«Աշխարհացոյց»-ի զանազան ժամանակներում արտագրված և խմբագրված ձեռագրերի առանձնահատկություններով են պայմանավորված Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի ձեռագրերում առկա նշված ընդմիջարկությունները, որոնք նույնպես կարող էին տարբեր ժամանակների արգասիք լինել: Ուրեմն, Արամին վերաբերող հատվածում «Երրորդ» և «Չորրորդ» Հայք ընդմիջարկված բառերը իրենց մեջ բովանդակում են Հուստինիանոս Ա-ի ժամանակ ստեղծված նահանգների անունները, իսկ այդ նահանգներից վերջինը տրոհվեց Մավրիկիոսի ժամանակ և «այլ Չորրորդ Հայք» կազմով (բացառությամբ Մնձուրի), սակայն «Չորրորդ Հայք» անունով, VII դարում գրանցվեց V դարից եկող «Աշխարհացոյց»-ում ու ազդեց Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի հետագա ձեռագրերի վրա: Ինչ վերաբերում է Դրասխանակերտցուն, ապա նա օգտվել է նաև այլ աղբյուրներից, և նրա երկում Չորրորդ Հայքի կապակցությամբ, ինչ-որ չափով, արտացոլվել են տեղեկություններ Հուստինիանոս Ա-ի Չորրորդ Հայքի, Մավրիկիոսի «այլ Չորրորդ Հայքի» և, թերևս, «Վերին Միջագետք կամ Չորրորդ Հայք» նահանգի հյուսիս-արևմտյան հատվածի մասին: Այսպիսով, V դարում ապրած Մովսես Խորենացու երկերի բնագրերում խոսք չէր կարող լինել «Երրորդ» և «Չորրորդ» Հայքերի մասին: Այս տեսանկյունից սրբագրելով Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի նշված հատվածները՝ կվերանա ընդմիջարկություններից առաջացած վերոհիշյալ հակասությունները, որոնք թափանցել են նաև Դրասխանակերտցու երկի մեջ:

Հովհաննես Դրասխանակերտցին, կրկին անդրադառնալով Հայք անունը կրող վերոհիշյալ նահանգներին, գրել է. «Նախ զԱրմենին զայն, որ Առաջին Հայքն անուանիւր՝ Երկրորդ Հայք զնա Մօրիկ կոչեաց, յորում մայրաքաղաք է Սեւաստիայ»[204]: Այս հաղորդման կապակցությամբ Հ. Գելցերը նշել է, որ Դիոկղետիանոսի (284-305) ժամանակվա Առաջին Հայքը, Սեբաստիա կենտրոնով, Հուստինիանոսի և Մավրիկիոսի ժամանակ դարձավ Երկրորդ Հայք[205]: Այնինչ, «Առաջին Հայքը», որպես Փոքր Հայքի հռոմեական բաժանման արդյունք, առաջացել էր Թեոդոս Մեծի ժամանակ: Հ. Հյուբշմանը և Պ. Գուբերը գտնում էին, որ Դրասխանակերտցին սխալվում էր Մավրիկիոսին վերագրելով Երկրորդ Հայքի կազմավորումը Առաջին Հայքի այն մա-

սից, որտեղ գտնվում էր Սեբաստիան, այդ իրականացրել էր Հուստինիանոսը[206]: Կարելի է ենթադրել, որ Դրասխանակերտցու այդ հաղորդման մեջ պետք է որոշ չափով արտացոլված լիներ նաև Մավրիկիոսի ժամանակ գոյություն ունեցած վիճակը: Այդ առնչությամբ անհրաժեշտ է անդրադառնալ պատմիչի հետևյալ հաղորդմանը. «Իսկ զՊոնտոս, յորում մայրաքաղաք է Տրապիզոն՝ կոչէ զնա Մասն Մեծ Հայոց»: Այստեղից հետևում է, որ Մավրիկիոսը վերափոխել էր Հուստինիանոսի «Առաջին Հայքը» և դրա հյուսիսարևմտյան մասից կազմել Մասն Մեծ Հայոց նահանգը, իսկ մնացյալից՝ մեկ ուրիշ նահանգ. «Դարձեալ զաշխարհն Կարնայ, յորում մայրաքաղաք է Թէոդոսուպօլիս՝ անուանէ զնա Մեծ մասն Մեծ Հայոց»[207]: Այսպիսով, Մավրիկիոսը վերափոխեց Հուստինիանոսի «Առաջին Հայքը», դրանից կազմելով երկու նահանգ, իսկ «Երկրորդ Հայքը» թողեց անփոփոխ: Հավանաբար այս տեսանկյունից պետք է դիտել այն փաստը, որ Դրասխանակերտցին, միահյուսելով տարբեր տեղեկություններ և անձնավորություններ, հայտնել է, թե Մավրիկիոսը «Առաջին Հայքը» կոչել էր «Երկրորդ Հայք», մինչդեռ դա Հուստինիանոսի ձեռնարկումն էր (Մավրիկիոսն այն թողեց անփոփոխ):

Կապադովկիայի հետ Փոքր Հայքի հնում եղած վերոհիշյալ կապի մասին տեղեկությունները թերևս արտացոլվել են Դրասխանակերտցու երկի մեզ հասած խմբագրությամբ շարադրանքում. «Իսկ զԿապադովկիայ, յորում մայրաքաղաքն է Կեսարիա՝ եւ Երկրորդ Հայք նախ անուանիւր, կոչէ զնա Երրորդ Հայք եւ առնէ զնա Եպարքի»[208]: Հ. Հյուբշմանը նշել է, որ Կապադովկիան երբևիցե «Երկրորդ» կամ «Երրորդ» Հայք չի կոչվել[209]:

Վաղես կայսրը (364-378) բաժանեց Կապադովկիան երկու նահանգների՝ Առաջին և Երկրորդ Կապադովկիա, որոնք այնուհետև Հուստինիանոս Ա-ը միավորեց և ենթարկեց մի ենթահյուպատոսի: Թեոդոս Ա-ի Երկրորդ Հայքը[210] Հուստինիանոս Ա-ը ուղղակի վերանվանեց Երրորդ Հայք: Փաստորեն, Դրասխանակերտցու մոտ խոսքը վերաբերել է Կապադովկիա նահանգին (որի մայրաքաղաքը Կեսարիան էր), Երկրորդ Հայքին ու վերջինիս վերափոխությանը՝ Երրորդ Հայքին: Ուրեմն, Դրասխանակերտցու երկի բնագրում հավանական է, որ արտահայտված է եղել հետևյալ միտքը. «Իսկ զԿապադովկիայ, յորում մայրաքաղաքն է Կեսարիա... եւ [զայն, որ] Երկրորդ Հայք նախ անուանիւր, կոչէ զնա Երրորդ Հայք... »: Ի դեպ, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի Դրասխանակերտցու երկի № 1896 ձեռագրում (1689 թ.) բացակայում է «և» շաղկապը: Այս հանգամանքը կարող է հուշել, որ շփոթությունն առաջացել է նախադասության առաջին մասի ձեռագրական աղճատումից, որի հետևանքով այն կցվել է իրենից անջատ՝ Երկրորդ Հայքին վերաբերող հաղորդմանը:

Դրասխանակերտցու երկում հիշատակված Երկրորդ Հայքի նկարագրությունից[211] երևում է, որ իրոք մեկ այլ հատվածում Երկրորդ Հայքի շաղկապումը Կապադովկիային[212] ձեռագրական թյուրիմացություն է: Հնարա-

վոր է, որ մինչ աղճատվելը Դրասխանակերտցու բնագիրը Կապադովկիայի և Երրորդ Հայքի առնչությամբ իր մեջ բովանդակել է նաև «Աշխարհացոյց»-ի վերոհիշյալ այն տեղեկությունը, ըստ որի Երրորդ Հայքը «յելից կալով Կապադովկիոյ»:

Խնդրո առարկա նախադասության երկրորդ մասում հաղորդվող տեղեկության համաձայն Մավրիկիոսը Երկրորդ Հայքը վերափոխեց Երրորդ Հայքի: Հայտնի է, որ այս վերափոխությունը կատարել էր Հուստինիանոս Ա-ը, այլ ոչ թե Մավրիկիոսը: Հաջորդ տեղեկությունը՝ «իսկ զՄելիտինէ, որ ունի զհամանուն իւր գաւառս՝ է եւ Երրորդ Հայք, կոչէ զնա Առաջին Հայք», իրոք վերաբերում է Մավրիկիոսի գործունեությանը: Վեցերորդ Տիեզերական ժողովի (680-681 թթ.) մասնակից եպիսկոպոսների ստորագրություններից նույնպես հետևում է, որ Մելիտենեն, որպես կենտրոն, և Առկան՝ Առաջին Հայքի կազմում էին[213]:

Այդ քաղաքներին անհրաժեշտ է ավելացնել նաև Կուկուսոսը, Արաբիսոսը, Արիարաթիան և Կոմանան (Կապադովկիական), որոնք Բարսեղ Հայը (Իալիմբանացի) հիշատակել է Առաջին Հայքի կազմում, որի կենտրոնը Մելիտենեն էր[214]:

Ըստ երևույթին, հարցը միայն նահանգների համարակալման փոփոխման մեջ չէր: Հիշենք, որ Հուստինիանոսի ժամանակ *Հայք* անունը կրող նահանգները, ըստ կարգի, իրար հանդեպ տարբեր կարգավիճակ ունեին:

Ն. Ադոնցը գրել է. «VII դարի հեղինակ Գեորգ Կիպրացու տեղեկությունները համընկնում են V դարի եկեղեցական ժողովների արձանագրությունների նյութերի հետ, ինչպես կարելի է համոզվել հետևյալ աղյուսակից.

ad Leonem 453 թ.[215] Hierocl. մոտ 530թ. G. Cypril VII դ.

		Առաջին Հայքի եպարքիա	
1	Sebastia	Σεβάστια	Σεβάστεια
2	Nicopolis	Νικόπολις	Νικόπολις
5	Colona[216]	Κολόνια	Κολώνια
6	S-Ataleni	Σατάλα	Σατάλα
3	Sebastopolis	Σεβαστοπολις	Σεβαστοπολις
4	Bariss-ar-a	-	Βηρισσή[217]
		Երկրորդ Հայքի եպարքիա	
1	Melitena	Μελιτινή	Μελιτινή
2	Arca	Ἄρκα	Ἄρκα
3	Arabissus	Ἀράβισος	Ἀράβισσος
4	<Cucusus>	Κουκουσός	Κουκουσός
5	<Comana>	Κομάνα	Κεομάνα
6	Ariaratha	Ἀραραθία	Ἀραράθη »:

Ն. Ադոնցը համապատասխան խմբերում հավասարացրել է բերված


ցուցակները, սակայն եթե առաջին խմբում («Առաջին Հայքի եպարքիա») առաջին երկու սյունակները նշված աղբյուրներում իրոք վերաբերում են Առաջին Հայքին, ապա երրորդ սյունակը՝ Երկրորդ Հայքին[218]: Հայտնի է, որ Սեբաստիան, Նիկոպոլիսը, Կողոնիան, Սատաղը, Սեբաստոպոլիսը և Բերիսան մտնում էին Թեոդոս Ա-ի ստեղծած Առաջին Հայքի մեջ: Այդ դեպքում ինչպե՞ս բացատրել դրանց թվարկումը Բարսեղ Հայի կողմից Երկրորդ Հայքի կազմում:

Հուստինիանոս Ա-ի ժամանակաշրջանի Երկրորդ Հայքի կազմում մնացին Սեբաստիան, Սեբաստոպոլիսը և Բերիսան, որոնց գումարվեցին Ջելան և Կոմանան պոնտական քաղաքներից, իսկ Սատաղը, Նիկոպոլիսը և Կողոնիան Հուստինիանոս Ա-ը «Ներքնագույն Հայքի» («Բարձր Հայք»), Տրապիզոնի և Կերասունտի (երկուսն էլ նախկին Պողեմոնական Պոնտոսից) հետ միասին ընդգրկեց Առաջին Հայքի մեջ[219]: Մավրիկիոսի կողմից «Մասն Մեծ Հայոց» և «Մեծ մասն Մեծ Հայոց» նահանգների ստեղծումից մոտ հարյուր տարի անց Վեցերորդ Տիեզերական և Թրուլյան եկեղեցական ժողովների մասնակիցների ստորագրություններում Երկրորդ Հայքի մայրաքաղաք է հիշատակված Սեբաստիան՝ Կողոնիայից, Նիկոպոլիսից և Սատաղից առանձին, որոնք նշված են «Մեծ Հայք» նահանգի կազմում[220]:

Հովհաննես Դրասխանակերտցու տեղեկությունները «Մասն Մեծ Հայոց» և «Մեծ մասն Մեծ Հայոց»[221] նահանգների մասին ճիշտ են, քանի որ Կողոնիան, Նիկոպոլիսը, Սատաղը, Դարանաղին և Կամախը հիշատակվում են «Մեծ Հայք» նահանգի եպիսկոպոսների ստորագրություններում[222]: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այդ երկու նահանգների տարածքները հարյուր տարի անց, ըստ երևույթին, ինչ-որ չափով կրճատվելով, հանդես եկան որպես մեկ ամբողջական միավոր՝ «Մեծ Հայք»-ի նահանգ: Իսկ Մավրիկիոսի օրոք այդ երկու նահանգների կողքին շարունակում էր իր գոյությունը պահպանել դեռևս Հուստինիանոս Ա-ի կողմից կազմված Երկրորդ Հայքը իր նախկին ընդգրկմամբ: Կարելի է ենթադրել, որ Գեորգ Կիպրացու երկի ցուցակի վերնագրի նախնական խմբագրությունում, իրոք, եղել է «Առաջին Հայք», որն այնուհետև Բարսեղ Հայը փոխարինել է «Երկրորդ Հայք» (Հուստինիանոսի և Մավրիկիոսի ժամանակաշրջանների իրավիճակին համապատասխան) անվանումով, սակայն ցուցակից դուրս չէին հանվել Նիկոպոլիսը, Կողոնիան և Սատաղը: Այնպես որ, Ն. Ադոնցը, փաստորեն, իր աշխատության մեջ վերոհիշյալ առաջին խմբի երրորդ սյունակը բերել է վերնագրում հաշվի առնելով այդ հանգամանքը:

Երկրորդ խմբի («Երկրորդ Հայքի եպարքիա») առաջին երկու սյունակները աղբյուրներում վերաբերում են Երկրորդ Հայքին, իսկ երրորդը՝ Առաջին Հայքին, ինչպես հետևում է Բարսեղ Հայի Notitia–ից[223]: Այս կապակցությամբ անհրաժեշտ է հաշվի առնել, որ Դրասխանակերտցին հիշատակել է Առաջին Հայքը (կենտրոնը Մելիտենե) և դրանով իսկ, ըստ երևույթին, այդ

ՀԱՅԱՍՏԱՆԸ VI-VII դդ.


ԵՎՔՍԻՆՈՍ ՊՈՆՏՈՍ ԾՈՎ
ԿՈՎԿԱՍ
ՎՐԿԱՆԻՑ ԾՈՎ
ԱՂՎԱՆՔ
ՄԱՍՆ ՄԵԾ ՀԱՅՈՑ
ՏԱՅՔ
ԳՈՒԳԱՐՔ
ՀԱՅՔ
ՄԵԾ ՀԱՅՈՑ
ՏԱՅ

վերնագրի սրբագրման և համեմատական աղյուսակում տվյալ վերնագրի օգտագործման կարիք չկար:

«Հայք» անունը կրող նահանգների հետ կապված շփոթությունները հետևանք էին այն բանի, որ դրանց կազմավորումը և վերափոխությունները տեղի էին ունենում հիմնականում միևնույն աշխարհագրական տարածքներում: Կարելի է ասել, որ Դրասխանակերտցին Արամից հետո Մավրիկիոսի հետ էր կապել Արևմտյան Հայաստանում կատարված տարածքային վերափոխությունները[224], նկատի ունենալով, թե՛ Մավրիկիոսի հայկական ծագումը[225] և թե՛ այն հանգամանքը, որ նրա անձի շուրջ միջնադարյան Հայաստանում նույնիսկ առասպելներ էին հյուսվել:

Բյուզանդա-պարսկական սահմանագծի դեպի արևելք տեղաշարժվելու հետևանքով (591 թ.) Կարինը և Հուստինիանուպոլիսը մնացին խորը թիկունքում և Մավրիկիոսը կայսերական զորքերի ռազմական կենտրոնը Հայաստանում դարձրեց Շիրակաշատը, որը վերանվանեց Մավրիկուպոլիս: Բյուզանդիային նոր անցած հայկական հողերի տարածքում, Հովհաննես Դրասխանակերտցու հաղորդումների համաձայն, Մավրիկիոսը ստեղծեց «Մեծ Հայք» («Եւ որ ի Մեծն Հայոց մասն ինչ մնացեալ էր ի ձեռս Հոռոմոց կողմանց անտի ի Բասենոյ մինչև ի սահմանս Ասորեստանի Մեծ Հայք զնա կոչէ»)[226], «Խորագոյն Հայք» («իսկ զկողմանս Տայոց սահմանօք իւրովք հանդերձ՝ Խորագոյն Հայք»), «Ներսագոյն Հայք» («եւ զկողմն Դվին քաղաքի՝ Ներսագոյն Հայք»)[227] նահանգները: Այսպիսով, կայսրությանը անցած հայկական հողերն ընդգրկվեցին Բյուզանդիայի վարչաքաղաքական կառավարման համակարգի մեջ:

3. «Մավրիկիոսի դոկտրինան» և Հայոց զորքերի ապստամբությունները

Նոր տարածքների բռնազավթմանը հետևեց կայսերական ճնշման սաստկացումը Հայաստանում: Հայաստանը ռազմական ուժից զրկելու քաղաքականությունը VI դ. վերջում ծրագրային բնույթ ստացավ, ինչպես հետևում է Մավրիկիոսի՝ Խոսրով Փարվեզին ուղղված նամակից. «Ազգ մի խոտոր եւ անհնազանդ են... կան ի միջի մերում եւ պղտորեն: Բայց ե՛կ... ես զիմս ժողովեմ եւ ի Թրակէ գումարեմ. եւ դու զքոյդ ժողովէ եւ հրամայէ յԱրեւելս տանել: Ջի եթէ մեռանին՝ թշնամիք մեռանին. եւ եթէ սպանանեն՝ զթշնամիս սպանանեն. եւ մեք կեցցուք խաղաղութեամբ: Ջի եթէ դոքա յերկրի իւրեանց լինիցին՝ մեզ հանգչել ոչ լինի»[1]:

Իր հայեցակարգով այսպիսի քաղաքականությունը կապված էր Խոսրով Փարվեզի վերոհիշյալ կարծիքի հետ, իբրև թե Հայաստանի պատճառով «պատերազմը ի դժբախտություն մարդկանց հասավ այդպիսի չափերի»:

Իհարկե, միայն զավթողական մոլուցքով տառապող միապետները կարող էին նման փորձեր անել գաղափարապես հիմնավորելու թե՛ իրենց նվաճումները և թե՛ ի հաշիվ նվաճված ժողովրդի և երկրի, իրար հետ խաղաղության եզրեր գտնելու: Այլ կերպ ինչպե՞ս կարելի է մեկնաբանել այն զավեշտալի դրույթը, թե նվաճվողն էր մեղավոր, որ իրեն նվաճում էին: Չնայած պարսկա-բյուզանդական ժամանակավոր դաշնակցության հակասական բնույթին, կողմերը միաբան էին Հայոց ռազմական հզորությունը խարխլելու գործում: Սեբեոսը այդ մասին գրել է. «Միաբանեցան երկոքին: Եւ սկսաւ կայսրն հրաման տալ, զի ժողովեսցեն զամենեսեան եւ ի Թրակէ գումարեսցեն. եւ սաստիկ տագնապէր՝ հրամանն կատարէր»[2]: Այնպիսի երդվյալ թշնամիներ, ինչպիսիք էին Բյուզանդիան և Պարսկաստանը, ժամանակավորապես հաշտվելով՝ Վահրամ Չուբինի ապստամբությունը տապալելու նպատակով, իրենց ջանքերն ուղղեցին Հայաստանի ռազմական ուժի լիցքաթափմանը:

«Մավրիկիոսի դոկտրինան», ինչպես կարելի է անվանել այդ հրեշավոր ծրագիրը, բյուզանդական նվաճողական քաղաքականության հարազատ զավակն էր: Այն իր մեջ ամփոփեց հռոմեական նվաճողական քաղաքականության նախորդ դարաշրջանների փորձը և ապագա գործողությունների ծրագիրն էր ուղենշում: Մավրիկիոսի վերոհիշյալ նամակից երևում է, որ Հայաստանը շարունակում էր պահպանել իր ռազմական հզորությունը, որը նվաճողներին հանգիստ չէր տալիս: Ահա թե ինչու, նվաճող տերությունների քաղաքական ճնշման սաստկացումը առաջին հերթին անդրադարձավ Հայոց ռազմական ուժերի վրա: Կայսեր հրամանով Հայաստանում սկսեցին շտապ զորքեր հավաքագրել և ուղարկել Թրակիա, որն իհարկե ծայրահեղ դժգոհություն առաջացրեց Հայոց աշխարհում:

Որքանով էլ դաշնակցային երևային Մավրիկիոսի և Խոսրովի միջև ծավալվող հարաբերությունները, այնուամենայնիվ, նրանցից յուրաքանչյուրը հետապնդում էր իր նպատակները, որոնք բխում էին իրենց տերությունների նվաճողական քաղաքականությունից: Բնորոշ է, որ այդ բարդ իրավիճակում Խոսրով Փարվեզը ծառայության էր վերցնում այն հայ իշխաններին, որոնք դժգոհ էին Մավրիկիոսի քաղաքականությունից, նրանց մեծ պարգևներ տալով: «Եւ սկսան փախչել ի կողմանէն յայնմանէ եւ գալ ի ծառայութիւն Պարսից, մանաւանդ որոց երկիրն ընդ նորա իշխանութեամբ էր: Իսկ նա զամենեսեան ընդունէր մեծարանաւք եւ մեծամեծ պարգեւս քան զկայսր պարգեւէր նոցա. մանաւանդ իբր տեսանէր զփախուստ նոցա ի կայսերէն՝ եւս առաւել մեծապէս սիրով կամէր զամենեսեան կորզել առ ինքն»[3]: Հայ նախարարները ստիպված էին անցնել ծառայության Խոսրովի մոտ: Սակայն նույնիսկ Արևելյան Հայաստան անցնելը չէր նշանակում, որ հայ զորականները կմնային հայրենիքում: Խոսրովը իր հերթին նրանցից շատերին ուղարկում էր Պարսկաստանի հեռավոր սահմանները կռվելու արևելյան քոչվորների դեմ, որոնք հաճախ ներխուժում էին իր երկիրը:

Հայոց զորականները, չհաշտվելով նման կացության հետ, հաճախ ապստամբում էին թե՛ բյուզանդական և թե՛ պարսկական իշխանությունների դեմ՝ ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ նվաճող տերությունների հեռավոր մարզերում:

Հայ զորավարները ազատագրական ծրագիր մշակեցին, ասելով՝ «պատերազմեսցուք ընդ երկոսին թագաւորսդ, եւ բռնութեամբ զերկիրդ մեր ի մեզ դարձուսցուք»: Այդ խիզախ քաղաքական ծրագրի իրականացմանը ձեռնամուխ եղան Ատատ Խորխոռունին, Սամվել Վահևունին, Մամակ Մամիկոնյանը, Ստեփանոս Սյունին, Կոտիտ Ամատունին և Թեոդորոս Տրպատունին: Նրանք գլխավորելով Հայոց երկուհազարանոց բանակը Ատրպատականի սահմաններում «հանին զգանձն, եւ համարակարին զարեւն պարգեւ շնորհեցին... Եւ զայս եդեալ ի մտի՝ եթէ գանձուդ այդուիկ զՀոնս մե՛ր արասցուք. եւ առեալ ի նոցանէ աւգնականութիւն՝ պատերազմեսցուք ընդ երկոսին թագաւորսդ, եւ բռնութեամբ զերկիրդ մեր ի մեզ դարձուսցուք»: Սակայն այդ պահին չհաջողվեց միահամուռ գործել: «Եւ հասեալ ի Նախճաւան քաղաք՝ քակտեցան խորհուրդք միաբանութեան. ո՛չ հաւատալով միմեանց ի բաց բաժանեցին զգանձն, եւ բանակեցան եւ նստան ի շամբին, որ կոչի Ճահուկ»[4]:

Պատմիչի հաջորդ շարադրանքից հետևում է, որ Բյուզանդիայի և Պարսկաստանի շահերը կրկին ժամանակավորապես համընկան, քանի որ կայսրությունը շահագրգռված էր ճնշել նախարարների ապստամբությունը, իսկ Խոսրովը չհապաղեց օգտվել Մավրիկիոսի օգնությունից և ապստամբությունը ճնշել բյուզանդացիների ուժերի օգնությամբ: Բյուզանդական կայսրությունը, փաստորեն, սկսեց պատժիչ ուժի դեր խաղալ Հայաստանի հանդեպ: Հայ ապստամբների դեմ նվաճող տերությունների ծավալած գործողությունների մասին Սեբեոսը գրել է. «Նա աւանիկ համարակարն երթեալ ի դուռն՝ պատմեաց թագաւորին զամենայն եղեալսն եւ բանք կայսերն արդարացան: Յայնժամ հրամայէ գրել Խոսրով արքայ հրովարտակ առ կայսր եւ խնդրէ զաւր յաւգնականութիւն, եւ արձակու անդրէն զՎասպուրական համարակարն ի Հայս: Յայնժամ հրամայէ Հերակղի գաւրավարի, որ նստէր ի Հայաստան երկրի, առնուլ զգաւրս իւր եւ գնալ ի վերայ նոցա ի պատերազմ: Եւ արդ՝ երթեալ միացան երկուց թագաւորացն զաւր ի Նախճաւանն քաղաքի»[5]: Բանակցություններից հետո, բացի Ատատ Խորխոռունուց և Սամվել Վահևունուց, մյուս նախարարները «նուաճեցին զգաւրս իւրեանց ի ծառայութիւն արքային Պարսից»[6]: Միայն Թեոդորոս Տրպատունին անցավ կայսեր ծառայությանը:

Որոշելով շարունակել պայքարը, Ատատը և Սամվելը «զաւրաւքն իւրեանց փախստական գնացին ընդ քաղաքագեւղն կոչեցեալ Սաւդայ, հասանէին յաշխարհն Աղուանից, ի Հոնս դէմս արարեալ, եւ անցեալ ընդ գետովն որ կոչի Կուր՝ բանակէին առ գետեզերբն»: Համոզվելով, որ իրենք հայտնվել

են անելանելի վիճակում, Ատատը և Սամվելը «երդումն խնդրեալ ի թագաւորէն Յունաց, եւ գնացին ի ծառայութիւն նորա»:

Պարսից և բյուզանդական արքունիքները հասան իրենց նպատակին: «Ժողովեալ համարակարին զամենայն իշխանս եւ զգաւրս Հայոց, որ ի Պարսից կողմանէ՝ ողոքաւ եւ եւս քաղցր բանիւք յորդորեալ զամենեսեան միաբանեաց, արար գունդս զունդս: Եթող անդրէն յաշխարհին սակաւուք եւ գնաց «Մինչեւ ես ծանուցից, ասէ, վասն ձեր, եւ հասցէ անտի հրաման դադարել անդ»: Ջի զմտաւ իսկ ածեալ էր նորա եւ զայլոց գալն առ նոսա եւ զբազմանալն: Իսկ զԱտատն Խորխոռունի փութանակի հանդերձ զաւրուն իւրոյ կոչէ թագաւորն ի պաղատն, եւ մեծարէ շքով եւ պատուով. եւ տայ ինչս բազումս եւ գումարէ ի Թրակացիս»[7]: «Մավրիկիոսի դոկտրինան» գործում էր:

Կայսրության քաղաքականությունը Հայաստանի հանդեպ անփոփոխ էր, ուստի, բնականորեն, որոշ ժամանակ անց երկրի բյուզանդական մասում ապստամբություն բռնկվեց: Սեբեոսը գրել է. «Ապստամբէին դարձեալ ի կողմանցն Յունաց սեպուհքն Վահեւունիք - Սամուէլն զոր ասացի եւ Սարգիս եւ Վարազ Ներսէհ եւ Ներսէս եւ Վստամ եւ Թէոդորոս Տրպատունի: Եւ խորհէին սպանանել զկորատորն՝ մինչդեռ նա նստէր ի ջերմկի՝ բժշկել ի հիւանդութենէ, մերձ ի քաղաքն Կարնոյ: Իսկ նա ուստեմն իրազեկ եղեալ՝ փախստական ի քաղաքն անկանէր. եւ նոցա արշաւեալ ի ջերմուկն՝ ոչ դիպան նմա: Ապա աւարեալ զոր ինչ ի դիմի հարկանէր՝ առին աւար բազում, եւ գնացին յերկիրն ամուր Կորդուաց. եւ կամեցեալ զամուրսն գայն ունել»:

Բյուզանդական զորքի հետապնդումից խուսափելով՝ ապստամբները անցնում են Ջերմ գետը Դանիելի կամուրջով և ամրանում կիրճում: Պատժիչ զորքին նույնպես հաջողվում է անցնել գետը, և կիրճում սաստիկ ճակատամարտ է տեղի ունենում: «Արդ՝ զՆերսէս եւ զՎստամ եւ զՍամուէլ սպանին ի պատերազմին, որք ոչ սակաւ արարին շուրջ զնովաւ զկոտորածն. բայց զՍարգիս եւ զՎարազն Ներսէհ ձերբակալ արարին հանդերձ այլովք ոմամբք. եւ տարեալ ի Կարնոյ քաղաք, եւ ապա գլխատեցին»: Մահապատժի պահին, հայ ոգու վեհության վառ վկայությունն էր գերեվարված նախարարների իրար հանդեպ դրսևորած ջերմ հոգատարությունը, ինչպես հետևում է Սեբեոսի շարադրանքից. «Որ ի ժամ գլխատելոյն ասէր Վարազ Ներսէհ ցՍարգիս. «Վիճակ արկցուք, թե զո՛ առաջի սպանցեն»: Իսկ Սարգիս ասէր. «Ես այր ձեր եմ եւ մեղաւոր, աղաչեմ զձեզ. զպարգեւսդ այդ ինձ շնորհեցէք. թո՛ղ զի փոքր մի հանգեայց, եւ ոչ իսկ տեսից զմահս ձեր»: Ապա զնա յառաջ գլխատեցին»: Թեոդորոս Տրպատունին չփրկվեց՝ փախչելով «ի դուռն արքային Պարսից», որը չհապաղեց նրան ձերբակալելու հրաման արձակել: «Եւ նորա կապել հրամայեաց եւ տալ ի ձեռս թշնամեացն, զի մեռցի. եւ սաստիկ աղետիւք վտանգեցոյց»[8]:

Հայոց զորքերը և ընդհանրապես ամբողջ երկիրը հայտնվեցին ծանր

վիճակում: Հայաստանում սպառնալից չափերի հասան բռնի զորահավաքները, որոնք սաստկացան արևմուտքից կայսրության վրա թրակացիների հարձակումների ուժեղացմամբ: Ժամանակավոր դաշինքը և խաղաղ հարաբերությունները Պարսկաստանի հետ ձեռնտու էին կայսրությանը, քանի որ այդ ընթացքում Մավրիկիոսը կարող էր իր ուշադրությունը կենտրոնացնել արևմուտքում տեղի ունեցող իրադարձությունների վրա: Այս կապակցությամբ Սեբեոսը գրել է. «Յայնժամ թագաւորն Յունաց հրաման տայր՝ ժողովել զաւրաց իւրոց զամենայն որ յարեւելից կողմանէ. վասն զի խաղաղութիւն էր, եւ բանք ինչ ոչ գոյին նորա ընդ Ասորիսն ի Պարսից տէրութենէն: Հրաման ետ անցուցանել զամենեսեան ընդ ծով, եւ գումարել ի կողմանս Թրակացւոց ընդդէմ թշնամւոյն: Հրաման ետ դարձեալ ժողովել զամենայն այր եւ ձի ի Հայաստանեայց եւ զիշխանս նախարարացն, որք հմուտ էին եւ կարող զդէմ ունել՝ կռուել ռազմ ի նիզակամուխ ճակատի: Եւ հրաման ետ դարձեալ վերստին զաւր հանել յաշխարհէն Հայոց բազում յոյժ, զամենեսեան կամով եւ ընտրով հասակի. կազմել գունդս զարդու եւ զինու վառեալ եւ անցուցանել զամենեսեան յաշխարհն Թրակացւոց ընդդէմ թշնամւոյն. եւ Մուշեղ Մամիկոնեան զաւրագլուխ նոցա: Արդ՝ երթեալ նոցա ի վերայ ազգացն, որ ունին զկողմանս արեւմտից ի յեզր մեծի գետոյն Դանուբայ: Եւ եղեւ պատերազմ սաստիկ ի վերայ երեսաց երկրին այնորիկ. խորտակեցաւ զաւրութիւն թշնամւոյն այնորիկ առաջի երեսաց զաւրացն Յունաց, եւ փախստական արարեալ յայնկոյս գետոյն Դանուբայ: Եւ ինքեանք մեծաւ յաղթութեամբ հրեշտակ աւետաւոր կայսերն եւ ամենայն պաղատոյն փութանակի առաքէին: Եւ գնացեալ ինքեանք ի ներքին կողմն աշխարհին ասպատակաւ, եւ անցին ի նեղ ինչ տեղիս, աւերէին զերկիրն ամենայն, եւ հասեալ ի դիմին՝ եղեւ պատերազմ մեծ. հարին զՅոյնն եւ խորտակեցին կործանմամբ մեծաւ, եւ փախստական վարեցին առաջի իւրեանց: Եւ կալեալ զնեղ վայրն առաջի նոցա թշնամւոյն՝ վանեցին զնոսա սրով սուսերի, եւ ճողոպրեալ հազիւ հազ զերծանէին յամուրս աշխարհին Թրակացւոց: Եւ ձերբակալ արարին զՄուշեղն Մամիկոնեան, կապեցին զբարձրաբերձ տնկոյ անտառին եւ սպանին: Եւ բազմութիւն նախարարացն եւ զաւրացն Հայաստանեայց յաւուր յայնմիկ կոծանեալ» զոհվեցին[9]:

Կայսրությունը շարունակում էր զորահավաք կատարել Հայաստանում: Հայոց երկուհազարանոց զորագնդի հրամանատարներն էին Սահակ Մամիկոնյանը և Սմբատ Բագրատունին՝ Մանվելի որդին: Հատկանշական է, որ նրանց ուղարկեցին արևմուտք իրարից անջատ՝ յուրաքանչյուրը հազար հեծյալներով՝ Սահակը Սեբաստիայի ուղղությամբ, իսկ Սմբատը՝ Խաղտիքի: Կարելի է կարծել, որ բյուզանդական իշխանությունները Հայոց զորքը միտումնավոր էին բաժանել, որպեսզի այն միացյալ կերպով չընդվզեր կայսրության դեմ: Սահակը Կոնստանդնուպոլսում իր զորքով ներկայացավ կայսրին, իսկ Սմբատը կանգ առավ Խաղտիքում, «քանզի երկեաւ զաւրն ի

ճանապարհի, ոչ կամեցեալ երթալ ի տեղին յայն զհետ թագաւորին խնդրոյ»: Մավրիկիոսը ամեն ջանք գործադրեց իր ծրագիրը իրականացնելու համար: «Ազդ լինի թագաւորին եղեալ իրքն. ապա ի ձեռն հրովարտակաց եւ հաւատարիմ հրեշտակաց երդմամբ խոստանայ՝ մեծաւ պատուով փութանակի արձակել յերկիրն իւր: Եւ գաւրուն խոստանայր պատիւս մեծամեծս եւ ինչս, եւ այնպէս ողոքեալ ածէ ի հաշտութիւն: Եւ գնացեալ միաբանութեամբ յանդիման լինէին թագաւորին: Եւ թագաւորն սպառազինէ զգաւրըն եւ զարդարէ եւ գումարէ ի սահմանս Թրակացւոց, եւ զՍմբատ մեծաւ պատուով յուղարկէ անդրէն հասանել յերկիրն իւրեանց բազում ստացուածովք»[10]:

Սմբատ Բագրատունու վերադարձից հետո օտար գերիշխանությունից ազատագրվելու նոր ծրագիր է հասունանում: Սմբատը և մյուս հայ նախարարները, տեսնելով հայրենի երկրի անելանելի վիճակը, որոշեցին միավորվել և, հրաժարվելով Մավրիկիոսին ծառայելուց, «նստուցանել իւրեանց թագաւոր, զի մի՛ եւ նոցա հասցէ մեռանել ի կողմանս Թրակացւոց, այլ կեալ եւ մեռանել ի վերայ աշխարհին իւրեանց»: Կայսերը «ոմանք ի նոցանէ շոգմոգութեամբ հասուցին զբանս խորհրդեանն»: Պատիժը չհապաղեց «Յայնմ ժամանակի հասանէին դեսպանք արքունականք հրովարտակաւք, եւ կալեալ զՍմբատ հանդերձ այլովք ոմամբք եւթն արամբք եւ տարան յանդիման թագաւորին: Եւ քննեալ զնոսա ի մէջ բազմամբոխ հրապարակին՝ հատաւ վճիռ ի վերայ նոցա՝ մերկացուցանել եւ ընկենուլ ի կիւնիկն»[11]: Անձնական խիզախության և հզոր ուժի շնորհիվ Սմբատը կենդանի մնաց, և կայսրը նրան որպես զորքերի *տրիբուն* ուղարկեց Աֆրիկա[12]:

601 թ. բռնկվեց Հայոց զորքերի ևս մեկ ապստամբություն, որը կրկին գլխավորեց Ատատ Խորխոռունին: Մավրիկիոսը մինչ այդ Ատատ Խորխոռունուն կանչել էր Թրակիայից և «մեծարեալ շքեղացոյց զնա եւ որ ընդ նմայն ըստ արժանի վայելչական ընդունելութեանն: Ետ նմա անաւթս ոսկիս եւ արծաթիս եւ գանձս բազում յոյժ: Եւ հրաման ետ երթալ ի Թրակայ առ գաւրս իւր. եւ հրաժարեալ ի թագաւորէն եւ գնաց: Եւ մինչդեռ գնայր ի ճանապարհի՝ արկ նա ի միտս իւր ապստամբել եւ գնալ առ թագաւորն Պարսից»: Փախուստը հաջողվում է իրականացնել, և նա, հասնելով Հայաստան, գնում ու ամրանում է Նախիջևանում (Նախճավան): «Եւ ընկալեալ զնա Պարսիցն ի բերդն ամրանայր: Յայնժամ ժողովէր զամենայն զաւրս իւր ստրատելատն, եւ երթեալ պաշարէր զբերդն շուրջանակի զամէնն»[13]:

Մավրիկիոսի գահակալության վերջին տարիներին պարսկա-բյուզանդական հարաբերությունները կրկին սրվել էին, ինչի մասին է վկայում այն փաստը, որ Խոսրով Փարվեզը բյուզանդացիների դեմ ապստամբած Ատատ Խորխոռունուն օգնության ուղարկեց պարսկական զորք: «Իբրեւ եկն մերձեցաւ զաւրն՝ թողին նոքա զքաղաքն եւ գնացին. եւ նորա (Ատատ Խորխոռունին - Է. Դ.) փութացեալ գնաց առ թագաւորն Պարսից: Իսկ նա սիրով ըն-

կալաւ զնա, մեծացոյց պատուովք, եւ ետ նմա զգանձս, եւ հրամայեաց ռոճիկ յարքունուստ»[14]: Մավրիկիոսի սպանությունից հետո Ատատ Խորխոռունին կրկին որոշեց ապստամբել՝ այս անգամ պարսկական տիրապետության դեմ, և անցնել Բյուզանդիայի կողմը: Հայոց զորավարի նման վարքագիծը վկայում է այն մասին, թե ինչպես անտանելի էր հայ ժողովրդի համար օտար գերիշխանությունը՝ լիներ այն բյուզանդական, թե՛ պարսկական: Խոսրով Փարվեզը, իմանալով Ատատի մտադրության մասին, հրամայում է «կապել զնա ոտիւք եւ ձեռաւք, եւ բրաւք ապանանել»[15]:

Հայերը ապստամբական շարժում էին ծավալել նաև Պարսկաստանում գտնվելու ժամանակ: Հայ զորավարների մի մասը հայտնվել էր Պարսկաստանում վերոհիշյալ ապստամբության անհաջող ելքից հետո, երբ նրանք ստիպված եղան անցնել ծառայության Խոսրով Փարվեզի մոտ, որը հայ նախարարներին պահեց պալատում, իսկ նրանց զորքերը ուղարկեց Պարսկաստանի խորքերը: Այնուհետև Խոսրովը հայկական մի ջոկատ ուղարկեց Վրնդոյի և Վստամի դեմ ծավալված ռազմական գործողություններին մասնակցելու՝ իրեն կողմնակից պարսկական և բյուզանդական զորքերի հետ միասին:

Այդ ընթացքում իրենց մահկանացուն կնքեցին հայ նախարարներից Գագիկ Մամիկոնյանը, Խոսրով Վահևունին, ինչպես նաև Մամակ Մամիկոնյանը՝ Պարսկաստանից Դվին վերադառնալուց հետո: Բացի այդ, Խոսրովի հրամանով մահապատժի ենթարկվեց Ստեփանոս Սյունին: Համբերության բաժակը լցրեց Կոտիտ Ամատունու ողբերգական մահը: Նրան պարսից արքան «արձակեալ ի Մրծուին դեսպան՝ հրաման ետ հեծելոցն դարանամուտ լինել ի դաշտի, եւ աւազակաբար յարձակեալ ի վերայ՝ սպանին զնա ի ճանապարհին»: Այս նենգ սպանությունը առիթ հանդիսացավ Պարսկաստանում գտնվող հայոց զորքի նոր ապստամբության: Ապստամբներից ոմանք միացան Վստամին[16]:

Այս պարագայում, Սմբատ Բագրատունուն[17] VI դարի վերջում Խոսրով Փարվեզը նշանակել էր Վրկանից աշխարհի մարզպան և նրան ի թիվս այլ պարգևների հանձնել իր հոր՝ Որմիզդ Դ-ի կամարը և սուրը[18]: Սկզբնական շրջանում Սմբատ Բագրատունին զբաղված էր Ամաղում, Ռոյեանում, Ջրեճանում և Տապարիստանում Խոսրով Փարվեզի դեմ բռնկված ապստամբությունների ճնշումով[19]: Այնուհետև նա կարգավորեց իրեն վստահված մարզպանության գործերը: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում այդ վայրերում նվաճողների բռնությունների հետևանքով հայտնված հայերի միջավայրում Սմբատ Բագրատունու ծավալած լուսավորչական գործունեությունը[20]:

Սմբատ Բագրատունին, գլխավորելով հայկական և պարսկական զորամիավորումներից բաղկացած զորքը, մասնակցեց Պարսկաստանի արևելյան սահմաններին ծավալված ռազմական գործողություններին: Ըստ Սեբեոսի,

Սմբատը և պարսից զորավար Շահր Վահրիճը պարտություն կրեցին Կոմշ (ըստ անտիկ հեղինակների Կոմիսենե)[21] երկրամասի Խեկևանդ գյուղի մոտ: «Եւ եղեւ պատերազմ ի վերայ երկրին այնորիկ: Հարին զգաւրն Պարսից, եւ փախստական արարեալ հալածական տանէին. զբազումս սպանեալ եւ զբազումս ձերբակալ արարեալ դարձան անդրէն եւ բանակեցան մաւտ ի տեղի պատերազմին եւ արքն այն հայաստանեայք ընդ նոսա: Մեռան բազումք եւ ի զաւրացն եւ հայաստանեայցն, որ ընդ մարզպանին Սմբատայ»: Վստամը մինչ այդ իրեն ենթակա քոչվորների ցեղի թագավոր Պարիովկի կողմից կազմակերպած դավադրության զոհն էր դարձել: Վստամին միացած հայերը, ստանալով նրա մահվան լուրը, գեղումների զորքի կազմում մասնակցեցին Խեկևանդի ճակատամարտին: Ողբերգականն այն էր, որ հակամարտող ուժերի կազմում հայերը ստիպված էին կռվել միմյանց դեմ: Նվաճող տերությունների կողմից Հայաստանի տարածքի մասնատումը և բռնազավթումը բացասականորեն էր անդրադառնում նաև այդ տերությունների հեռավոր սահմաններ ուղարկված հայ զինվորների ճակատագրի վրա: Դրա վկայությունն է Սեբեոսի վերոհիշյալ այն տեղեկությունը, թե Խեկևանդի ճակատամարտում հայերից էլ շատ զոհվածներ կային:

Մեկ տարի անց Սմբատը կարողացավ խոշոր հաղթանակ տանել Տապարիստանում, որի համար Խոսրովը նրան առաքում է «հրովարտակ մեծ՛ապէս գոհութեամբ, պատուով մեծացուցանէ ի վեր քան զամենայն մարզպանս իւրոյ տէրութեան առնելով, եւ զամենայն անաւթս մատռուակացն առաքէ նմա ոսկի, եւ հանդերձս թագաւորականս, արտախուրակս ոսկեզաւծս եւ զանգապանակ ակամբք եւ մարգատովք կարգեալ. եւ զորդի նորա, որոյ անունն էր Վարազտիրոց, զոր էր սնուցեալ նորա իբրեւ զմի յորդուց իւրոց եւ էր մեծարու ամենայն դրանն արքունի՝ կարգէր ի մատռուակութեան, պաշտել զգինի անձին արքայի»[22]:

Սմբատ Բագրատունին հայոց այն զորավարներից էր, որոնք պատմական տարբեր դարաշրջաններում Հայաստանում օտար գերիշխանության հաստատմամբ, հայոց զորքերի հետ ստիպված էին ծառայել նվաճող տերություններին, մասնակցելով նրանց քաղաքական շահերի համար մղվող ռազմական գործողություններին[23]: Այս ժամանակաշրջանում տեղի ունեցած ապստամբությունների յուրահատկությունը այն էր, որ դրանց հիմնականում մասնակցում էին հայոց զորքերը, սակայն, անկասկած, այդ ապստամբությունները հայ ժողովրդի լայն զանգվածների իղձերն ու տրամադրություններն էին արտահայտում:

4. Կայսրության պառակտիչ գործողությունները դավանանքի ոլորտում

Հայաստանի հանդեպ Բյուզանդիայի վարած եկեղեցական քաղաքականությունը «Մավրիկիոսի դոկտրինայի» անքակտելի մասն էր կազմում: Գաղափարական բնագավառում կայսրությունը ձգտում էր իր պաշտոնական դավանանքին մերձեցնել Հայաստանի պետական, ռազմական և հոգևոր գործիչներին, իսկ որոշակի պայմաններում նաև իրականացնել Հայ եկեղեցու պառակտումը: Բյուզանդական կայսրությունը այդ ուղղությամբ իր գործողությունները ակտիվացրեց 591 թ. բաժանումից հետո: Սակայն Մավրիկիոսի առաջին քայլերը այդ ուղղությամբ անհաջող էին: Մի հայ-քաղկեդոնական սկզբնաղբյուրում պատմվում է զորավար Մուշեղ Մամիկոնյանին դավանափոխ անելու Մավրիկիոսի անհաջող փորձի մասին: Մուշեղը «ժամանելով Կոնստանդնուպոլիս, պատվական խաչի մեծ տոնի օրը, իր ուղեկիցների հետ հրաժարվեց հաղորդությունից: Կայսրը հարցրեց և իմացավ պատճառը: Մուշեղն ասում է, որ չի հաղորդվում «Քաղկեդոնի ժողովի պատճառով, և որովհետև դուք ի վերա մեր Տեր Հիսուս Քրիստոսի խոստովանում եք երկու բնություն»[1]: Նման անհնազանդությունը անհետևանք չմնաց: Ինչպես վերը նշվեց, կայսրը Մուշեղին ուղարկեց արևմտյան ռազմաճակատ, որտեղ և նա կնքեց իր մահկանացուն:

Մավրիկիոսը փորձելու էր Կոստանդնուպոլսում հրավիրված եկեղեցական ժողովում Քրիստոսի «երկու բնության» հարցը պարտադրել հայ եկեղեցականներին[2]: «Կայսրը նամակներով հրաման ուղարկեց, որպեսզի Հայոց բոլոր եպիսկոպոսները և Մովսես կաթողիկոսը իր դպիրների հետ միասին ներկայանան Կոնստանդնուպոլիս: Իսկ Մովսես կաթողիկոսը ուշադրություն չդարձրեց հրամանին ասելով. «Ես չեմ անցնի Ազատ գետը. չեմ ուտի փռան հացը և չեմ խմի ջրախառն տաք գինի»: Վասպուրական աշխարհի եպիսկոպոսները և նրանք, ովքեր գտնվում էին պարսից տիրապետության տակ, նմանապես չցանկացան գնալ: Իսկ Տարոնի եպիսկոպոսները և ովքեր որ գտնվում էին հռոմեացիների տիրապետության տակ գնացին Կոնստանդնուպոլիս: Երկար զննելուց հետո, նրանք հոռոմներից համոզվեցին և ստորագրեցին ու երդման համամիտ դարձան նրանց: Երբ նրանք վերադարձան Հայաստան, Մովսեսը նրանց չընդունեց, նույնպես և Պարսկահայաստանի մյուս եպիսկոպոսները: Նրանք իրենց կաթողիկոս ձեռնադրեցին Հովհաննեսին՝ Կոգովիտի Բագարան գյուղից»[3]:

Այսպիսով, Մավրիկիոսը Հայաստանի բյուզանդական մասում՝ պարսկա-բյուզանդական սահմանի մոտ ընդդեմ Դվինի միաբնակ կաթողիկոսության հիմնեց հակաթոռություն՝ Ավանում, հայ քաղկեդոնական Հովհաննես Բագարանցու գլխավորությամբ: Սեբեոսը այս կապակցությամբ գրել է. «Հրաման ելանէ դարձեալ ի կայսերէն վերստին այլ՝ քարոզել զժողովն Քաղկեդոնի յամենայն եկեղեցիս Հայաստան երկրի, եւ միաւորել հաղորդու-

թեամբ ընդ զաւր իւր: Իսկ մանկունք ուխտի եկեղեցեացն Հայոց փախստական գնացեալ յաւտար երկիր վարէին: Եւ բազմաց առ ոչինչ համարեալ զհրամանն՝ զտեղի կալան եւ անշարժ մնացին: Եւ բազումք հաւանեալ փառասիրութեամբ հաղորդեալ միաւորեցան աւրինաւք: Բաժանեցաւ ապա եւ աթոռ կաթողիկոսութեանն յերկուս. անուն միոյ Մովսէս, եւ միւսոյն՝ Յովհան: Մովսէս ի Պարսից կողմանէ, եւ Յովհանն՝ Յունաց: Եւ Յովհան ընդ նոսա հաղորդեալ միաւորեցաւ, բայց Մովսէս ամենեւին ոչ լիներ ի նոսա հուպ»[4]:

Մավրիկիոսի ձգտումը, ինչ գնով էլ լինի հայերին ստիպել ընդունել քաղկեդոնականությունը, ինչպես երևում է Սեբեոսի շարադրանքից[5], բացասական էր անդրադառնում հայ ժողովրդի վիճակի վրա, Հայաստանի թե՛ արևմտյան և թե՛ արևելյան մասերում: Վ. Իսկանյանը նշել է. «Հակաթոռությունը պառակտում էր Հայ եկեղեցին, երկպառակտություններ սերմանում հոգևորականության շրջանում և ջլատում նաև հայերի ազատագրական պայքարը քաղկեդոնական եկեղեցու և բյուզանդական տիրապետության դեմ»[6]: Կարելի է ավելացնել, որ կայսրության կողմից պարտադրվող դավանանքային շեղումները լի էին հայոց հոգևոր և քաղաքական ուժերը ջլատելու վտանգով, սպառնալով նաև թուլացնել պարսից տիրապետության դեմ մղվող պայքարը:

«Մավրիկիոսի դոկտրինան» իր բոլոր դրսևորումներով հայ ժողովրդին մեծ վնասներ պատճառեց, որի բացասական հետևանքները զգացվում էին երկար ժամանակ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1. Հայաստանը Սասանյան Պարսկաստանի քաղաքական ճգնաժամի ժամանակ

1.Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 76:

2. Նույն տեղում, էջ 76-77:

3.Հովհան Պատրիկին (Միստակոն - «մորուքավոր») Մավրիկիոսը իր գահակալության առաջին տարվա վերջում ետ էր կանչել Հայոց զորքերի հրամանատարությունից և նշանակել արևելքում բոլոր հռոմեական (բյուզանդական) զորքերի հրամանատար, իսկ երկրորդ տարում ազատել էր այդ պաշտոնից և նրա տեղը նշանակել Փիլիպիկոսին: 589 թվականին նա կրկին ստանձնել էր Հայաստանի բյուզանդական մասի զորքերի հրամանատարությունը (Theophylacti Simocattae Historiae, ed. C. de Boor. Edit. correct. P. Wirth, Stuttgart, 1972, I. 9. 4, տես նաև Goubert P. Byzance avant l'Islam, Paris, h. I, 1951, էջ 146,159): Մ. Հիգինսը Դվինի պաշարումը նշել է կայացած 589 թ. (Higgins M. J. The Persian War of the Emperor Maurice (582-602), Part I, Washington,1939, էջ 39): Պետք է ենթադրել, որ այն տևեց մի քանի ամիս, քանի որ Վահրամ Չուբինի ապստամբության (590 թ.) լուրը ստանալով, բյուզանդացիները պաշարումը դադարեցրին:

4. Սեբեոս, էջ 74: Հովհան Պատրիկը մինչ Վահրամի դեմ Խոսրովի և Մավրիկիոսի դաշնակցելը ավարառության էր ենթարկել Ատրպատականը:

5. Նույն տեղում, էջ 77-78:

6. Նույն տեղում: Վ. Վարդանյանի կարծիքով Դինավերիի (IX դ.) հաղորդումից հետևում է, որ հայերը նախ միացան Չուբինին, իսկ այնուհետև թողեցին նրան, տեսնելով Բյուզանդիայի աջակցությունը Խոսրովին (Վարդանյան Վ. Մ., Հայ-իրանական հարաբերությունները VI դ. վերջում և Վասպուրականը, - ԲԵՀ, 1976, № 2, էջ 98): Սակայն Դինավերին, գրելով Վահրամի դիմումի մասին՝ ուղղված թագավորության ազնվական մարդկանց (որպեսզի նրանք համաձայնվեն, որ նա զբաղվի պետության կառավարման հարցերով մինչև Որմիզդի որդին՝ Շահրիարը չափահաս դառնա), նշել է. «Այդ բանի հետ մի խումբը համաձայնվեց, իսկ մյուսը մերժեց: Վերջինում էր հայ Աբու Մուսիլը, որը մարզպանության մեծերից էր... Հայ Մուսիլը իր համախոհների հետ դուրս եկավ Մադաինից» (Абу Ханифа ад-Динавери. Книга длинных известий, - ПС, вып. 22/85/, 1970, էջ 123): Ա.Կոլեսնիկովը այն կարծիքին է, որ Վահրամը ապարդյուն էր ջանքեր գործադրում դաշնակցելու Մուշեղի հետ, որը հրաժարվել էր նրան միանալ (Колесников А. И. Иран в начале VIIв., - ПС, вып. 22(85), 1970, էջ 63): Ռ. Գրուսեն ենթադրել էր, որ «հայերը կարող էին օգտվել Վահրամի ապստամբությունից և վերականգնել իրենց անկախությունը, սակայն խոշոր հայ ավատատերերը, չնայած Վահրամի գայթակղիչ առաջարկին... որպես քրիստոնյաներ համերաշխություն ցուցաբերեցին Մավրիկիոսի որոշման հանդեպ՝ օգնել Խոսրովին» (Grousset R. Histoire de l'Armenie. Paris, 1947, էջ 250):

7. Սեբեոս, էջ 78: Այդ թուղթը Վահրամը ուղարկել էր վճռական ճակատամարտին նախորդած օրը, և Մուշեղը նրան անմիջապես պատասխանել էր: Դեպքերի այդպիսի արագ ընթացքը նույնպես հուշում է, թե ինչու Մուշեղը չօգնեց Վահրամ Չուբինին: Քաղաքական խոհեմության տեր Հայոց զորավարը չէր կարող այդպիսի բախտորոշ պահին՝ որոշակի երաշխիքների բացակայության պայ-

մաններում, բախտախնդիր քայլի դիմել և երկիրը գցել դժնդակ փորձությունների հորձանուտը:

8. Նույն տեղում, էջ 78-79:

9. Ինչպես նշել է Կ. Յուզբաշյանը, հայերը հրաժարվեցին խռովարարին աջակցել, ելնելով տվյալ պահին ուժերի հարաբերակցությունից, իսկ Սեբեոսի (նա շարադրել է իր «Պատմութիւն»-ը VII դ. 60-ական թթ.) պահպանած այդ գաղափարը նրան անհավանական չի թվում: Հետազոտողը եզրակացրել է. «Այս ամենը մտածել է տալիս, որ նաև VII դարում սուվերենության մասին հայերի պատկերացումները շարունակում էին մարմնավորվել սեփական թագավորության մասին գաղափարի մեջ» (Юзбашян К. Н. Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв., М., 1988, էջ 62-63):

10. Հ. Հերցբերգը բարեկամության դրսևորմամբ և տարածքային զիջումներով է բացատրել Մավրիկիոսի կողմից Խոսրովին ցուցաբերած օգնությունը (Герцберг Г. Ф. История Византии. Перев., примечания и приложения Безобразова П. В., М., 1897, էջ 34, հմմտ. Christensen A. L'Iran sous le Sasanides. Copenhague, 1936, էջ 445):

11. Սեբեոս, էջ 76: Կ.Օսիպովան ուշադրություն է դարձրել եգիպտական ժամանակագիր Հովհան Նիկիուսացու այն հաղորդման վրա, որից հետևում է, որ Կոստանդնուպոլսի պատրիարք Հովհաննես Դ Պաիեցողը (582-595), հիշեցնելով Խոսրովի՝ իր հոր հանդեպ ցուցաբերած վարմունքը, կասկածներ էր հայտնում կայսեր հանդեպ Խոսրովի կողմից հավատարմություն ցուցաբերելու վերաբերյալ (տես Феофилакт Симокатта. История. Вступ. статья Н. В. Пигулевской. Перев. С. П. Кондратьева, прим. К. А. Осиповой, М., 1957, էջ 207, ծան. 25):

12. Սեբեոս, էջ 76: Մ.Հիգինսի կարծիքով, Մավրիկիոսը Խոսրովին օգնելու վերջնական վճիռ ընդունեց 590 թ. նոյեմբերից կամ դեկտեմբերից ոչ շուտ (Higgins M. նշվ. աշխ., էջ 45):

13. Հատկանշական է, որ Վահրամը նույնիսկ հասցրեց դրամներ կտրել սեփական պատկերով (տես Goubert P. նշվ. աշխ., V): Վահրամը ծագումով Արշակունյաց տոհմից սերող մի ճյուղից էր (Theophyl. Sim., III.18.10), այնպես որ կարող էր իրանական գահին հավակնել հին պարթևական հարստության հետ ունեցած ազգակցական կապի առումով:

14. Սեբեոս, էջ 76, 86:

15. Theophyl. Sim., IV.14.1-2:

16. Ն. Պիգուլևսկայան նշել է Սիմոկատայի «նեղդասակարգային մոտեցման» մասին իր կողմից շարադրվող իրադարձությունների հանդեպ (Феофилакт Симокатта, էջ 9):

17. VI դ. վերջի - VII դ. առաջին տասնամյակների բյուզանդա-պարսկական, հայ-բյուզանդական և հայ-պարսկական հարաբերությունների ուսումնասիրությունը ի հայտ է բերում Բյուզանդիայի և Պարսկաստանի թե՛ միմյանց և թե՛ Հայաստանի հանդեպ վարած դիվանագիտական հարաբերությունների նենգ կողմերը: «Բյուզանդական դիվանագիտության պատմությունը, - գրել է Ն. Պիգուլևսկայան, - դեռևս գրված չէ: Մինչդեռ Բյուզանդիան կարող էր հպարտանալ իր դիվանագիտությամբ, որը չի դավաճանել նրան ամենից բարդ ժամանակներում: ...Շողոքորթ հավաստիացումները, փոխադարձ խաբեությունները, կեղծ խոստումները քողարկում էին տերությունների իսկական մտադրությունները, որոնց տնտեսական շահերը սեփական սահմաններից շատ հեռու էին գնում» (Пигулевская Н. В.. Византия и Восток, - ПС, вып. 23(86), 1971, էջ 5):

18. Վահրամի զորքին միացել էին Պարսկաստանի բնակչության լայն խավերը: Սասանյանների հանդեպ եղած ընդհանուր ատելությունը Սիմոկատան բա-

ցատրել է Որմիզդի դաժանություններով (Theophyl. Sim. IV.2-3):

19. Թեոփիլակտոսը գրել է, որ Մարտիրուպոլսում պաշարված պարսիկները, ենթարկվելով Խոսրովի գաղտնի հրամանին, քաղաքը չէին հանձնում հռոմեացիներին (իմա՝ բյուզանդացիներին), ընդհակառակը՝ պարսիկները ուժգին դիմադրում էին նրանց: Իսկ երբ հայտնի դարձավ Խոսրովի նենգությունը, Մելիտենեի բյուզանդական կառավարիչ Դոմեցիանոսը իր գործողություններով ի չիք դարձրեց նրա խաբեությունը: Ինչպես նշել է պատմիչը, Դոմեցիանոսը Խոսրովին բացեիբաց հայտարարել էր իր բարերարների՝ բյուզանդացիների հանդեպ աստվածային իրավունքները խախտելու մասին (Theophyl. Sim., IV.15.14): Սիմոկատայի և Եվագրիոսի հաղորդումների համեմատությունը Մ. Հիգինսին հանգեցրել է այն եզրակացությանը, որ Մարտիրուպոլսի պաշարումը տևել էր մինչև 591 թ. փետրվար կամ մարտ (Higgins M. նշվ. աշխ., էջ 46-47):

20. Ինչպես նշել է Սիմոկատան, կայսրը բացի ռազմադաշինքից և զենք տրամադրելուց Խոսրովին հսկայական աջակցություն ցուցաբերեց փողով (Theophyl. Sim., V.2,6):

21. Հատկանշական է Խոսրովի ուշադրությունը քրիստոնյա տառապյալ Սերգիոսի հանդեպ: Խոսրովը խոստացել էր իր ռազմաավարից նվիրաբերել Աստծո տառապանքների նշանը՝ խաչը, պատրաստված ոսկուց և զարդարված թանկարժեք քարերով: Ինչպես նշել է Սիմոկատան, այդպիսի բարեպաշտ մղումը թելադրված էր տվյալ պահի անհրաժեշտությամբ: Որոշ ժամանակ անց Խոսրովը կատարեց իր խոստումը (Theophyl. Sim., 1, 7; 14, 2-11):

22. Սեբեոս, էջ 85:

23. Ս. Ջամինյանը «յանաւրինաց» բառը հարցականով ուղղել է «յարեաց», իսկ «յանաւրինութիւն»-ը սրբագրել է «յարիութիւն», ինչը Գ. Աբգարյանը չի ընդունել (նույն տեղում, էջ 252, ծան. 227-228):

24. Նույն տեղում, էջ 85: Ըստ Ն. Պիգուլևսկայայի, վերջին Սասանյանների օրոք բնորոշ էին միաձուլության (սինկրետիզմի) երևույթները, ինչպես ուշ հռոմեական կայսրությունում էր: Խոսրով Բ-ը մնալով զրադաշտական, ընծաներ էր ուղարկում քրիստոնյա սրբերին, ինչը, սակայն, նրան չխոչընդոտեց տաճար մտնել ծիու վրա նստած (Пигулевская Н. Византия и Восток, էջ 15):

25. Higgins M. նշվ. աշխ., էջ 54: Ըստ Թեոփիլակտոս Սիմոկատայի, Խոսրովը դաշնակից զորքերի հետ միասին իր հետևից տանում էր ավելի քան 60 հազար զինվոր, իսկ Վահրամը՝ 40 հազար: Հայաստանից գնացած բյուզանդական օժանդակ ուժերը գլխավորում էր Հովնան Միստակոնը (Theophyl. Sim., V. 8. 9.): Թովմա Արծրունին դաշնակից զորքերի կազմում, բացի հույներից և հայերից, հիշատակել է նաև վրացիների և աղվանների (Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն Տանն Արծրունեաց, ի լոյս էած Ք. Պատկանեան, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 86): «Հակառակորդները հանդիպեցին Դանակ («Շահնամեում»՝ Դուկ) հովտում, Գանձակից ոչ հեռու» (Колесников А., նշվ. աշխ., էջ 63): Ճակատամարտի նախորդ օրը բյուզանդացիները մոտեցան մի գետի, որը Սիմոկատան անվանել է «Բլարաթոս» (Theophyl. Sim., V. 10): Կ. Օսիպովայի կարծիքով խոսքը Տիգրիսի վտակի մասին է (Феофилакт Симокката, էջ 207, прим.16): Սակայն Սեբեոսը այդ անունով գավառ է հիշատակել. «Արդ՝ առեալ ապստամբին միհրացելոյն զզաւրս իւր, զփիղս եւ զամենայն զգանձս թագաւորական, չու արարեալ գնայ հասանէ յԱտրպատական. եւ բանակեցան սակաւ մի հեռագոյն ի միմեանց ի Վարարատ գաւառին» (Սեբեոս, էջ 77): Այստեղ ասվում է մի գավառի մասին, որտեղով հոսում է նույնանուն գետը, ուրեմն խոսք չի կարող լինել Տիգրիս գետի վտակի մասին: Ք.Պատկանյանը իրավացիորեն նշել է, որ Վարարատը հոսում էր Գանձակից ոչ հեռու (Себеос. История императора Ираклa. Пер. с арм. и предисл. К. П. Патканяна, СПб, 1862, էջ 195, ծան. 116): Սակայն Գանձակի հետ

Թավրիզի նույնացումը, ինչպես արել է գիտնականը, չի ապացուցվել պատմաաշխարհագրական տվյալներով: Ատրպատականի Գանձակը գտնվում էր այժմյան Լեյլան գյուղի տեղում, նույնանուն գետի ափին (տես Markwart J., Südarmenien und die Tigrisquellen, Wien, 1930, էջ 402):

26. Սեբեոս, էջ 80:

27. Թեոփիլակտոս Սիմոկատայի հաղորդման համաձայն, Խոսրովը բյուզանդացիներին ակնարկում էր վերադառնալ իրենց երկիրը: Հույն զորավարները հրաժեշտի խոսքերով դիմեցին Խոսրովին, նշելով, որ նա չմոռանա իրենց կողմից եկած փրկությունը: Շահինշահը, առանց շնորհակալության խոսքերի, իր զորքերը հավաքեց և Ատրպատականից մեկնեց Բաբելոն: Նա, վախենալով իր հպատակների կողմից ձեռնարկվող հնարավոր դավադրությունից, կայսրից խնդրել էր իրեն տալ հազար մարդ՝ որպես անձնական թիկնապահներ: Մավրիկիոսը կատարեց Խոսրովի խնդրանքը (Theophyl. Sim., V, 11, 7-8):

28. Սեբեոսը գրել է. «Եւ եղեւ ըստ աւուրց ինչ յետ անցանելոյ պատերազմին այնորիկ մեծի, մինչդեռ արքայն Խոսրով նստէր ի մէջ խորանին իւրում, եւ զաւրն Պարսից շուրջ զնովաւ բանակեալ, եւ զաւրն Յունաց հեռագոյն ի նոցանէ աւթիւ միով, ուրոյն բանակեալ հոծ բազմամբոխ լիութեամբ աւարաւ իւրեանց»: Երբ Խոսրովը գովեստի և շնորհակալության խոսքեր արտասանեց Մավրիկիոսի հասցեին, պարսից պալատականները նրան ասացին. «Արքայ, յաւիտեան կեաց. մեք ոչ գիտեմք, արժա՞ն իցէ շնորհ ունել եւ թե ոչ: Ջի ամենայն թագաւորութիւն գանձիւք հաստատեալ կայ. եւ դոքա զամենայն գանձս թագաւորութեան աւար վարեցին»: Խոսրովը կատաղությամբ պատասխանեց. «Ջգանձս թագաւորութեան իմոյ ընդ կողս դոցա այսրէն արտաքս քարշեցից հանդերձ նոցունց աղխեալ գանձիւք, քանզի իմ է այն ամենայն» (Սեբեոս, էջ 80-81):

29. Խոսրովին տեղեկացրել էին, որ Մուշեղ Մամիկոնյանը, իբրև թե, բռնել էր Վահրամին, ձի և զենք տվել ու արձակել (Սեբեոս, էջ 81): Եթե Մուշեղը ցանկանար Վահրամին օգնել, ապա նա այդ կաներ դեռևս այն ժամանակ, երբ Խոսրովի վիճակը խիստ անկայուն էր:

30. Այն մասին որ, սկզբում ոչ թե Խոսրովն էր վարձահատույց եղել, այլ բյուզանդացիներն էին իրենց ավարից բաժին հանել Մավրիկիոսին, գրել է Սեբեոսը. «Յայնմ ժամանակի գործեցին ընծայս, մեծ աւարմասն թագաւորին իւրեանց, պսակս եւ խոյր մի ի զմրուխտս եւ ի մարգարիտս յաւրինեալս, ոսկի եւ արծաթ բազում յոյժ, եւ ականս պատուականս չքնաղագիւտ, եւ հանդերձս պճնեալս ի զգեստուց՝ որ է զարդ իւրեանց յաւրինեալ թագաւորացն Պարսից, երիվարս արքունականս հանդերձ նոցուն իսկ արքունական կազմուածովքն»: Թե որքանով երկդիմի էին բյուզանդա-սասանյան դաշնակցային հարաբերությունները վկայում են հետևյալ տողերը. «Ազդ լինի Խոսրովայ, եթէ ետուն տանել ի գանձուց քոց՝ գանձ աւարամասն թագաւորին իւրեանց, եւ գրեցին զքեն ամբաստանութիւն: Եւ ընդոստուցեալ դառնութեամբ Խոսրով՝ արձակէ զկնի նոցա զաւր, զի հասցեն ի ճանապարհի եւ կորուսցեն զՄուշեղն յանկարծաւրէն գաղտաբար» (Սեբեոս, էջ 83-84):

Հովհան Պատրիկը և մյուս բյուզանդական իշխանները, չնայած, վրդովվել էին պարսիկների վարմունքից Մուշեղի հանդեպ, այնուամենայնիվ՝ ելնելով կայսրության քաղաքական շահերից փորձել էին գործը հարթել տեղում, համաձայնվելով ուղարկել միայն բողոքագիրը: Սեբեոսը գրել է. «Խռովեցան իշխանքն եւ ամենայն զաւրն. բայց եւ նոցա յիշելով զերդումն եւ զխռովութիւնն կայսերն, ոչ ինչ ի վեր հանին գբանսն: Ասացին գրել առ թագաւորն ծանուցանել նմա զամենայն չարիսն» (էջ 83):

31. Մավրիկիոսը տեղեկացնելով Խոսրովին «արձակել զամենեսեան», այսինքն՝ ետ ուղարկել բյուզանդական զորքերը, ելնում էր բյուզանդա-պարսկական

հարաբերությունների բարդացումից: Կայսրը ձգտում էր խաղաղ ճանապարհով պահպանել ձեռք բերված քաղաքական և տարածքային առավելությունները:

32. Սեբեոս, էջ 84:

33. Նույն տեղում, էջ 81:

34. Մի հայ քաղկեդոնական սկզբնաղբյուրում փոքր-ինչ այլ կերպ են շարադրված Մուշեղ Մամիկոնյանի հետ կապված դեպքերը: Մասնավորապես գրված է, որ Մուշեղը, ինչպես և պարսից զորքը Խոսրովի կողմից բազմաթիվ մեծարժեք նվերներ ստացան: Նույն տեղում ասվում է, որ Մուշեղը վերանվանվել էր Տարոնացի, իսկ այդ պարգևատրմանը նախորդել էր Պարսկաստանում նրա տարած հաղթանակը, որի շնորհիվ Խոսրովը հաստատվել էր գահին (տես Բարթիկյան Հ., «Narratio de rebus Armeniae», հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ-քաղկեդոնական սկզբնաղբյուր, - «Բանբեր Մատենադարանի» (այսուհետև ԲՄ), № 6, 1962, էջ 466): Այստեղ, ըստ երևույթին, արտացոլվել է նույն ավանդությունը, ինչ և Հովհան Մամիկոնյանի երկում, համաձայն որի Մուշեղը Պարսկաստանից վերադարձավ իր հայրենի Տարոն գավառը (Յովհան Մամիկոնեան. Պատմութիւն Տարօնոյ: Աշխ. և առաջաբանով Ա. Աբրահամյանի, Երևան, 1941, էջ 160-162): Մուշեղին և Հայոց զորքին պարգևատրելու մասին վերոհիշյալ հաղորդման մեջ արտացոլվել է, բավականին ձգձգումներից հետո, Խոսրովի կողմից իրեն օգնության եկած զորքերին վարձատրելու փաստը:

35. Մուշեղը, ժամանելով Բյուզանդիայի մայրաքաղաք «պատվական խաչի մեծ տոնի օրը, իր ուղեկիցների հետ հրաժարվեց հաղորդությունից» (ԲՄ, № 6,1962, էջ 466): Սա ևս պետք է հետագայում անդրադառնար Մուշեղ Մամիկոնյանի ողբերգական ճակատագրի վրա:

36. Ն. Պիգուլևսկայան գրել է. «Հայաստանը մասերի էին պատառոտում մերթ բյուզանդական, մերթ պարսկական զորքերը, կոխոտելով նրա արգավանդ դաշտերը և խաղողի այգիները, թալանելով նրա հարուստ քաղաքները» (Пигулевская Н. Византия и Восток, с.4):

37. Theophyl. Sim., V.15. 2.

38. Նույն տեղում, IV. 24:

2. Հայաստանի վարչաքաղաքական վիճակը

1. Սեբեոս, էջ 84: Համմտ. Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց, ի լոյս էած Ք. Պատկանեան, Ս. Պետերբուրգ,1887, էջ 85-86:

2. Theophyl. Sim., IV. 13.24:

3. Higgins J. նշվ. աշխ., էջ 33-34:

4. ԲՄ, № 6,1962, էջ 466:

5. Адонц Н. Армения в эпоху Юстиниана, СПб, 1908, էջ 232.

6. Լեո, Երկերի ժողովածու, հ. Բ, Երևան, 1967, էջ 219:

7. Հակոբյան Թ. Խ., Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1968, էջ 115:

8. Ուլուբաբյան Բ .Ա., Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության (V-VII դդ.), Երևան, 1981, էջ 256:

9. Հարությունյան Բ. Հ., Մեծ Հայքի Վասպուրական աշխարհը ըստ «Աշխարհացոյցի». - ԲԵՀ, 1983, № 3, էջ 132:

10. Իսկանյան Վ. Կ., Մարզպանական Հայաստանը VI դարում, տես Հայ ժողովրդի պատմություն, հ. Բ, Երևան, 1984, էջ 265, տես նաև Հայ-բյուզանդական

հարաբերությունները IV-VII դդ., Երևան, 1991, էջ 325-338:

11. Երեմյան Ս. Տ., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 60, 64:

12. Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 73:

13. Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, Երևան, 1934, էջ 43, հմմտ. ԲՄ, № 6, 1962, էջ 467:

14. Ռ. Գրուսեի կարծիքով, Սեբեոսի և Թովմա Արծրունու հիշատակությունները Կոտայքի մասին, ի թիվս կայսրությանը անցած հայկական հողերի, բարդություն է հարուցում, քանի որ Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև սահման դարձած Հրազդան գետը հանդիսանում էր Կոտայքի արևմտյան սահմանը (Grousset R., նշվ. աշխ., էջ 251): Հետազոտողը չի ճշտել, թե Հրազդան գետի որ մասն էր սահման դարձել:

15. Տես «Հայաստանը և հարևան երկրները 591-653 թթ.» քարտեզը (հեղ. Ս. Երեմյան, Հայ ժողովրդի պատմություն, հ. Բ):

16. Յովհաննես Դրասխանակերտցի, էջ 67: Հաւաքումն Պատմութեան Վարդանայ Վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 59: «Կողմն» բառի իմաստներն են. «կողմ, գաւառ, երկիր, կող, կողքին, եզերքը» (Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. Բ, Երևան, 1973, էջ 621): Տվյալ դեպքում «կողմն Արագածու» կարող էր նշանակել «Արագածոտն գավառի եզերքը» (Դանիելյան Է., Արևելյան Հայաստանի վարչատարածքային բաժանումը (591-629). - ԼՀԳ, 1986, № 8, էջ 56-57, ծան. 12):

17. ԲԵՀ, 1983, № 3, էջ 132: Ռ. Գրուսեն Մասյացոտն և Արագածոտն գավառներից հիշատակել է միայն վերջինս՝ որպես բյուզանդացիների հսկողության տակ հայտնված գավառ (Grousset R. նշվ. աշխ., էջ 251): Սակայն պատմիչների հաղորդումներից հետևում է, որ Արագածոտնի մեծ մասն էր անցել կայսրության հսկողության տակ, իսկ եզրայինը մնացել էր պարսից ազդեցության ոլորտում: Արևելյան Հայաստանի կազմում Մասյացոտն գավառի մնալու մասին կարող է վկայել այն փաստը, որ հետագայում Քրիստափոր կաթողիկոսը (628 - 630) կարգից զրկվելուց հետո Մասեաց-ոտնում՝ Ոհղեաց գյուղի մոտ մենաստան կառուցեց և այնտեղ էր բնակվում (Յովհաննես Դրասխանակերտցի, էջ 44, Վարդան Վարդապետ, էջ 62, Օրմանյան Մ., Ազգապատում, հ. Ա, Կոնստանդնուպոլիս, 1912, էջ 682):

18. Ալիշան Ղ., Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 420:

19. «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 41, 70, 73, 76, 81, 146, 151, 196, 558:

20. Հիւբշման Հ., Հին Հայոց տեղւոյ անունները: Հայոց աշխարհին պատմական տեղագրութեան մասին ուսումնասիրութիւններով: Թարգմ. Հ. Պիլէզիկճեան, Վիեննա, 1907, էջ 81:

21. Փառնակ Գ., Հայ նախարարները. - «Անահիտ», «Հանդես Ամսեայ», 1907, № 1-2, էջ 21, ծան. 1, տես նաև Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ.Դ. Երևան, 1979, էջ 202:

22. Адонц Н., նշվ. աշխ., էջ 319.

23. Երեմյան Ս., նշվ.աշխ., էջ 108-109:

24. ԲԵՀ, 1983, № 3, էջ 137: Հարությունյան Բ. Հ., Մեծ Հայքի Մոկք աշխարհը ըստ «Աշխարհացոյց»-ի, ՊԲՀ, 1990, № 1, էջ 51:

25. Մովսես Խորենացին գրել է Հաշտեանք, Աղիովիտ և Առբերանի գավառների, որպես Արշակունյաց տան սեպուհների տիրույթների մասին, այնուհետև՝ հաջորդ դրվագում հիշատակել է «նախարարս Վասպուրականի» (Մովսես Խորենացի, էջ 194): Ելնելով խնդրո առարկա տերմինների շուրջ Ա. Փերիխանյանի կող-

մից կատարված հետազոտությունից (տես Периханян А. Г., Armeno-Iranica I. - «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1965, № 11, էջ 90-91, նաև՝ Сасанидский судебник, Ереван, 1973, էջ 533), Բ. Հարությունյանը կարծիք է հայտնել, որ Խորենացու այդ տեղեկությունը Վասպուրականի առաջին հիշատակությունն է, որը «պետք է նշանակեր արքունի սեպուհների մասնավոր կալվածք, տոհմական տիրույթներից նրանց տրված բաժինը» և «նախարարս Վասպուրականի» հիշատակությունը «արդեն խոսում է Վասպուրական աշխարհի ձևավորման մասին» (ԲԵՀ, 1983, № 3, էջ 137): Վ. Վարդանյանի կարծիքով Խորենացու մոտ Մարդպետականի փոխարեն հիշատակված է Վասպուրականը, որի կազմում էին Աղիովիտը, Առբերանին և Հաշտեանքը (Վարդանյան Վ. Մ., Վասպուրական վարչաաշխարհագրական միավորի առաջացման պատմությունից. - ՊԲՀ № 2, 1986, էջ 110, 116): Հաշտեանքը, իրոք, նույնպես եղել է սեպուհների տիրույթը, սակայն գտնվել է Հայաստանի արևմտյան մասում: Հետազոտելով *Վասպուրականի նախարարներ* հասկացությունը, Ա. Մուշեղյանը եզրակացրել է, որ այն նշանակում է «թագավորող տան արքայազուններից առաջ եկած, ապա նաև արքայական ծագում ունեցող նախարարների դաս»: Նա հատկապես նշել է, որ «միայն Մովսես Խորենացուն ներգրավելով է հնարավոր դառնում խնդիրը զուտ տերմինաբանական ոլորտից փոխադրել պատմական հարաբերությունների ասպարեզ և նշմարել այդ արտոնյալ դասի դիրքը, նրա սոցիալ-քաղաքական և ռազմական դերը Հայաստանում և Իրանում՝ ավատական հաստատությունների համակարգում» (Մուշեղյան Ա. Վ., V դարի հայ մատենագրության ժամանակագրական խնդիրներ. - Ատենախոսություն, Երևան, 1996, էջ 69-84):

Կարելի է ասել, որ Արշակունյաց տան սեպուհների Վանա լճից հյուսիս-արեվելք գբաղեցրած տարածքների՝ Աղիովիտ և Առբերանի գավառներ առումով (Մովսես Խորենացի, էջ 137) ձևավորվեցին «Սեպհական գունդ» և «Վասպուրական գունդ» հասկացությունները, որոնք կազմում էին «Վասպուրական աշխարհ» պատմաաշխարհագրական հասկացության հիմքը:

26. ԲԵՀ, 1983, № 3, էջ 137: Բ. Հարությունյանը գրել է, որ «Վասպուրական աշխարհի գաղափարը մեռնում էր, իր տեղը զիջելով Վասպուրական=Հայկական մարզպանության գաղափարին, որի հետևանքով արաբական աղբյուրներում արդեն Մոկքը համարվում է «Վասպուրականի մաս» (ՊԲՀ, 1990, № 1, էջ 51): «Մարզպանական» շրջանում Վասպուրականը տարածքային առումով երբեք համարժեք չի եղել մարզպանական Հայաստանին: Իսկ «մարզպանական» և արաբական շրջանների միջև բավականին ժամանակ էր ընկած, ուստի նման ընդհանրացումը անհիմն է:

27. Ավդալբեգյան Թ., Անհայտ աղանդավորներ Հայոց մեջ, Վիեննա, 1926, էջ 70; տես նաև «Հայագիտական հետազոտություններ», Երևան, 1969, էջ 141-145:

28. Այստեղ «կողմ» բառը վերոհիշյալ իմաստներից իր առաջին իմաստով է օգտագործված, ասել է թե այն կողմը, որտեղ գտնվում էր Վասպուրական գունդը: Սեբեոսի կողմից Դվինի հիշատակումը «կողմն Սեպհական գնդին» հասկացությունից առանձին (Սեբեոս, էջ 166) ինքնին վկայում է, որ պատմիչը Այրարատի արևելյան հատվածը տարազատել է Վասպուրական գնդից: Նույնը կարելի է ասել Մոկքի (Սեբեոս, էջ138) և Պարսկահայքի (Նոր-Շիրական) մասին: Մ. Հովհաննեսյանը այս առումով սխալ է քննադատել Թ. Ավդալբեգյանին, նշելով, որ «Սեպհական գունդին կողմը պէտք է հասկնալ Դւինի եւ շրջակայքի համար» (Հովհաննեսյան Մ., Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 900):

29. Ս. Երեմյանը գրել է, որ Արշակունյաց տան սեպուհների բնակավայրը կոչվում էր «Սեպու(ր)հական», կամ «Վասպուրական», «Երկիրն սեպհական գնդին», իսկ 591թ. հետո Վասպուրական անունը տարածվեց այն տարածքի վրա, որը

«Աշխարհացոյց»-ում հայտնի է այդ անունով: Ս. Երեմյանը, ի տարբերություն Ն. Ադոնցի («Հռոմեացիներին տանուտերական հողի մի մասի անցումից հետո, Վասպուրական էր նշանակում պարսիկներին մնացած մասը ի տարբերություն հռոմեականի», տես Адонц Н., նշվ. աշխ., էջ 232), իրավացիորեն կարծում է, որ Վասպուրական անունը կրող տարածքը իր սահմաններով չգերազանցեց «Աշխարհացոյց»-ի Վասպուրական աշխարհին (Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 33):

30. Երեմյան Ս., նշվ. աշխ, էջ 105-111:

31. ԲԵՀ, 1983, № 3, էջ 112, 119:

32. Նույն տեղում:

33. Адонц Н., նշվ. աշխ., էջ 315:

34. Երեմյան Ս., նշվ.աշխ., էջ 82:

35. Адонц Н., նշվ. աշխ., էջ 318

36. Երեմյան Ս., նշվ.աշխ., էջ 41, 48:

37. Տոսպ գավառը չէր կարող տարածվել մինչև Մարմետ գետը, որի ստորին հոսանքի շրջանում գտնվում էր Բոգունիքը: Մարմետի միջին հոսանքի ձորահովտում Պալունիք գավառն էր՝ Մեծնունիք գավառի հարևանությամբ (Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 70, 76):

38. Նույն տեղում, էջ 45:

39. Հայ ժողովրդի պատմություն, հ.Ա, Երևան, 1971, էջ 32, 288:

40. Strabo, XI. 14.8:

41. Claudii Ptolemaei Geographia, vol.Primi, Pars Secunda, Parisiis, 1901, V. 12. 3:

42. Երեմյան Ս., նշվ.աշխ., էջ 33:

43. ԲԵՀ, 1983, № 3, էջ 113-114:

44. Ըստ Բ. Հարությունյանի, Ալլյուրիան Մարմետ գետի հինավուրց անունն էր, միաժամանակ, իր վերին հոսանքի շրջանում կրելով Բարելե ենթադրելի անունը (նույն տեղում):

45. Թովմա Արծրունի, էջ 251:

46. ԲԵՀ, 1983, № 3, էջ 114:

47. Ptol. V. 12.8:

48. Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 61:

49. Адонц Н., նշվ. աշխ., էջ 316, Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 36-37, 46:

50. Адонц Н., նշվ. աշխ., էջ 316:

51. Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 37, 45, 86:

52. Адонц Н., նշվ. աշխ., էջ 318:

53. ԲԵՀ, 1983, № 3, էջ 114:

54. Սեբեոսի հիշատակած Մարդուցայքի հետ Մարդաստանը առաջինը նույնացրել է Ն.Ադոնցը (Адонц Н., նշվ. աշխ., էջ 316, 319, 417):

55. Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 65:

56. Адонц Н., նշվ. աշխ., էջ 316, 317:

57. Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 37:

58. Այս միացումը, չնայած կասկածի տեղիք է տվել, այնուամենայնիվ, ճշմարիտ է համարվել (ԲԵՀ, 1983, № 3, էջ 115) Ս. Երեմյանի տեսակետը:

59. Адонц Н.,նշվ. աշխ., էջ 316, 317, Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 33, 36:

60. Ինճիճեան Ղ., Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822, էջ 209, Հյուբշման Հ., նշվ. աշխ., էջ 220:

61. Հենվելով մի տպագրական վրիպակի վրա, Բ. Հարությունյանը քննադատել է Ն. Ադոնցի կարծիքը : Ն. Ադոնցի գրքի 317 էջում տպագրված է. «к востоку от Котора - Тонраван, с замком Нкан, ныне Наган»: Նույն էջի առաջին ծանոթա-

գրությունում կարդում ենք. «Նկանի տեղադրությունը հիմք է ծառայում, որպեսզի Թոռնավանը տեղափոխենք Արաքսի համակարգից, ուր տեղադրում է Հյուբշմանը, Վանա լճի ավազանը»: Այս տողերից Բ. Հարությունյանը եզրակացրել է, թե Ն. Ադոնցը «հայտնում է իրարամերժ կարծիք», քանի որ «ծանոթագրության մեջ արդեն փորձ է արվում Նկանը տեղադրել Կոտուրից արևմուտք ընկած հատվածում» (ԲԵՀ, 1983, № 3, էջ 115): Մինչ Ն. Ադոնցին քննադատելը Բ.Հարությունյանը պարտավոր էր հաշվի առնել ականավոր հայագետի գրքի վերջում ուղղումների ցուցակում կատարված նշումը, ըստ որի 317-րդ էջի երկրորդ տողի վրիպակը անհրաժեշտ է ուղղել. «к западу от Котора» (տես Адонц Н., նշվ. աշխ., էջ 526), ինչպես և արել է Ն. Գարսոյանը, թարգմանելով «west of Kotor» (Adontz N., Armenia in the Period of Justinian. Translated with partial revisions, a bibliographical note and appendices by N. Garsoian, Lisbon, 1970, էջ 248):

62. Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 53:

63. Թովմա Արծրունի, էջ 195, 251, 260, 270: Հ. Հյուբշմանի կարծիքով Վասպուրականի Թոռնավան գավառանունը կապված է Թոռն-Թոռնիկ անվան հետ (Հյուբշման Հ., նշվ.աշխ., էջ 349): Հավանական է, որ Թոռնիկ անունը Մամիկոնյաններին անցել էր VIII դ. երկրորդ քառորդից, երբ այդ նախարարական տան ներկայացուցիչները քաղաքական հանգամանքների բերումով հայտնվել էին Վասպուրականում: Իսկ Թոռնավան գավառանունը պետք է հնագույն ծագում ունենա (Դանիելյան Է., Թոռնիկյանների քաղաքական դերը հայ- բյուզանդական հարաբերություններում. - ԼՀԳ, № 10, 1977, էջ 64-72):

64. Թովմա Արծրունի, էջ 259, 260:

65. Բ. Հարությունյանն այն կարծիքին է, որ Ճուաշ-ռոտ գետի ավազանի արեվելյան և արևմտյան մասերը տնտեսական և ֆիզիկա-աշխարհագրական ամբողջություն չեն կազմում (ԲԵՀ, 1983, № 3, էջ117): Ճուաշ գետը, բացի իր վերին մասից (այստեղ նրա ուղղությունը հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք է), հոսում է արևմուտքից արևելք, ուստի, խոսքը կարող է լինել հյուսիսային և հարավային հատվածների մասին: Ճուաշ գետի կիրճով անջրպետվող երկու լեռնաբազուկները փաստորեն գտնվում են այդ գետի աջ և ձախ ափերին: Այդ ավազանով անցնող ճանապարհները կապում են հյուսիսային՝ ձախափնյա և հարավային՝ աջափնյա մասերը: Ճուաշ-ռոտ գավառի տարածքը ամբողջությամբ վերցված լեռնային դժվարամատչելի շրջան է, ինչը բնորոշ է Հայաստանի լեռնային գավառներին:

66. Թովմա Արծրունի, էջ 260:

67. Բ. Հարությունյանը գտնում է, որ «Աշխարհացոյց»-ի մի շարք ձեռագրերում հանդիպող «Դուռնաւան» տառընթերցումը պատահական չէ՝ սկզբում եղել է «Թոռնաւան» բարբառային ձևը, իսկ հետագայում սրբագրվել է «Դուռնաւան», նշանակելով լեռնանցքի հարևանությամբ գտնվող ավան: «Քաղաքական անբարենպաստ պայմանների հետևանքով,- գրել է հետազոտողը,- ավանը կարող էր վերածվել գյուղի, որի հետևանքով բնակավայրը կստանար «Թոռն գիւղ» կամ «Գիւղ Թոռն» անունը: Հեր գավառի անմիջական սահմանի վրա Ճուաշ-ռոտ գետի ավազանի արևմտյան մասում մինչև այսօր լեռնանցքից ոչ շատ հեռու գոյություն ունի «Գյուլդուր» գյուղը, որը թերևս հին Թոռնավանն է» (ԲԵՀ, 1983, № 3, էջ 117): Նման սրբագրությամբ հնարավոր չէ ապացուցել Թոռնավանի տեղադրությունը: Մանավանդ, որ Գյուլդուրը գտնվում է պատմական Աղանդ-ռոտ գավառի տարածքում:

68. Գոյություն ունի նաև Ճուարշ-ռոտ ընթերցվածը (տես Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 64):

69. Երեմյան Ս., նշվ.աշխ., էջ 32, 64:

70. Բ. Հարությունյանը (ԲԵՀ, 1983, № 3, էջ 121) նշելով, որ ըստ Թովմա

Արծրունու Արտամետը հնում կրել է նաև Արտաշիսյան ավան անունը (Թովմա Արծրունի, էջ 84), և չհամաձայնվելով Ս.Երեմյանի առաջարկած սրբագրությանը՝ «զԱրտաշիսյան, [որ է] Արտաւանեան գաւառ» և նրա կողմից վերջինիս՝ այժմյան Արտամետի շրջակայքում տեղադրմանը (Երեմյան Ս., նշվ.աշխ., էջ 41,109), Արտավանեան գավառը տեղադրել է Կարմիր գետից արևելք ընկած շրջանում:

71. Նույն տեղում, էջ 46, 61, 65:

72. Նույն տեղում, էջ 77: Ն. Ադոնցը բերել է Պարսպատունիք անվան «Պատսպարունի» ձևը: Գիտնականը Պատսպարունին ի թիվս Բաք[ր]ան, Գազրիկեան, Վաժնունի (Վարաժնունի), Տայգրեան և այլ «քիչ հայտնի իշխանությունների» տեղադրել է ատրպատականյան սահմանի մոտ (Адонц Н, նշվ. աշխ., էջ 312): Բասորոպեդան (Strabo, XI. 14.5) Վասպուրականի հետ նույնացնող հետազոտողների տեսակետը քննադատելով, Բ. Հարությունյանը ժխտել է նաև Բասորոպեդան Պարսպատունիքի հետ համադրելու Ս.Երեմյանի (տես Հայ ժողովրդի պատմություն, հ. Ա, էջ 531) կարծիքը: Ըստ Բ. Հարությունյանի Բասորոպեդան համապատասխանում էր Պարսահայք (Պարսկահայք) աշխարհին, Բասորոպեդան «թարգմանելով որպես կիրճի ամրության լեռնադաշտ» (ԲԵՀ, 1983, № 3, էջ 122): «Բասորոպեդա» և «Պարսահայք» («Պարսկահայք») անունների երկրորդ մասերը տարբեր են՝ մեկը նշանակում է «լեռնադաշտ», իսկ մյուսը՝ հայք:

73. Նույն տեղում: Անձախիձորում (Կոտոր գետի հովտում՝ Կրճունիքից արեվելք) աղբյուրները «Պաս» անունով (որից հետազոտողը բխեցնում է Պարսպատունիք գավառանունը) ամրություն չեն հիշատակում: Բացի դրանից, ինչպե՞ս է հետազոտողը նույն Անձախիձոր գավառի տարածքում տեղադրում մեկ այլ՝ Պարսպատունիք գավառը:

74. Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913 (Երևան, 1991), էջ 114, 116:

75. Պետրոսյան Ս. Գ., Փայտակարանը և Պարսպատունիքը I դ. երրորդ քառորդում, ՊԲՀ, 1975, № 2, էջ 181-182:

76. Երեմյան Ս., նշվ.աշխ., էջ 82: Բ. Հարությունյանը չի ընդունում Ս. Երեմյանի առաջարկած տեղադրությունը և Վարաժնունիքը նշում է Ջուղա (Ջուլֆա)-Մարանդ ճանապարհից արևելք: Նա գրել է. «Արաքս գետից. հարավ գտնվում է Լավարջան գետակի ավազանը համանուն բնակավայրով: Ռուսական քարտեզներում այն հիշատակվում է Լուվարջան գրությամբ: Կարծում ենք, որ Լավարջան անունը ծագում է արաբականացված Ալ-Վարջանից, իսկ վերջինս էլ հանդիսանում է Վարաժնունիքի տեղագրական հեռավոր արձագանքը» (ԲԵՀ, 1983, № 3, էջ 125): Արաբական աղբյուրներում Հայաստանի տարածքում «Ալ-Վարջան» տեղանուն չի հանդիպում: Առավել ևս դժվար է պատկերացնել, որ գոյություն չունեցող անվանաձևը կարող էր հիմք հանդիսանալ Լավարջանի համար: Եվ ընդհանրապես ինչ կապ գոյություն ունի Լավարջանի և Վարաժնունիքի միջև: Այս հարցի կապակցությամբ Բ. Հարությունյանը նշել է, թե Վ. Վարդանյանը Թովմա Արծրունու տեքստում կատարել է նման մի սրբագրություն («ընդ վարազի» - «ընդ Վարաժնունիս» Վարաժնունիքով, տես Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Ներածությունը, թարգմանությունը և ծանոթագրությունները Վ. Վարդանյանի, Երևան, 1978, էջ 265): Եթե ընդհանուր բնույթի դատողություններով ղեկավարվենք, ապա Վ. Վարդանյանի առաջարկած սրբագրությունը, թերևս, ավելի տրամաբանական է, քան Լավարջան և Վարաժնունիք անունների միջև կապ փնտրելը:

77. Բ. Հարությունյանը Կարմիր գետից և Ուրմիա լճից արևելք Վարաժնունիքի հետ տեղադրում է նաև Գազրիկյանը և Տագրյանը, առաջինի արձագանքը համարելով Ջարագան գյուղանունը, իսկ երկրորդինը՝ Չեգրևան (ԲԵՀ, 1983, № 3, էջ 124), որոնք ոչ միայն արտաքին, այլև ներքին՝ իմաստային կապ չունեն Գազ-

րիկան (Գազրիկեան) և Տագրյան (Տայգրեան) գավառանունների հետ:

78. Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 84:

79. Ճուաշ, Թոռնավան, Արտագ, Մարդաստան, Գառնի, Առբերանի, Աղանդռոտ, Բառիլովիտ, Պալունիք, Մեծնունիք, Տոսպաշտունիք, Բոգունիք, Գուկանք, Արտաշեսյան գավառները նախկինում սեփականացրել էր Հայր Մարդպետը: Հետագայում՝ 904/5 թ. Աշոտ Արծրունու մահվանից հետո, այդ գավառները ժառանգեց նրա եղբայր Գագիկը (Թովմա Արծրունի, էջ 251):

80. Ադոնց Հ., նշվ. աշխ., էջ 318-319:

81. Մովսես Խորենացի, էջ 112:

82. ԲԵՀ, 1983, № 3, էջ 118:

83. Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1933, էջ 57-58, 60-61:

84. Ադոնց Հ., նշվ. աշխ., էջ 319, 320:

85. Մովսես Խորենացի, էջ 112, Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, Մոսկվա, 1861, էջ 13:

86. ԲԵՀ, 1983, № 3, էջ 126:

87. Նույն տեղում:

88. Այդ ուղղության վրա առաջին գոտին անցնում էր Մարդպետականի հարավով և Պարսպատունիքով:

89. Պատմագիտական գրականության մեջ տարբեր կարծիքներ են հայտնվել Հայաստանի բաժանման մասին՝ 384 թ. (Հ. Աստուրյան, Մ. Օրմանյան, Ժ. Դուազ), 385 թ. (Ն. Ակինյան, է. Դանիելյան), 387 թ. (Կ. Գյուտերբոգ, Ն. Ադոնց, Ն. Բեյնես, Կ. Թումանով, Հ. Մանանդյան և ուրիշներ), 389 թ. (Թ. Նյոլդեքե, Յ. Մարքվարտ): Կ. Գյուտերբոգի հիմնական կռվաններն են հունա-հռոմեական աղբյուրների տեղեկությունները պարսկա-հռոմեական դեսպանությունների վերաբերյալ, որոնք նրա կարծիքով կայացել են 384, 386 և 387 թթ.: Ըստ հետագոտողի, Ստիլիքոնի մասնակցությամբ հռոմեական դեսպանությունը 387 թ. դաշինք կնքեց պարսիկների հետ և «հաշտութեան ծախքերն ըրած պիտի ըլլայ համենայն դեպս Հայաստան»: Թեև Կ. Գյուտերբոգը գրել է, որ «բաժանման դաշնագրութեան կնքումը նորագոյն հեղինակութիւններուն համաձայն՝ դրինք Թեոդոս Առաջնույն կառավարութեան ժամանակ, ճշտագոյնս՝ 387-ին», այնուամենայնիվ նշել է, որ «այս եզրակացությունը սակայն կը կարոտի տակաւին անդրագոյն ապացույցի եւ արդարացման» (Գիւտերբոգ Կ., Հռովմէական Հայաստան եւ հռովմէական սատրապութիւնները Դ - Ջ դարերուն, գերմաներէնէ թարգմանեց Հ. Մկրտիչ Վ. Նորշուան, Վիեննա, 1914, էջ 16-30): Ստիլիքոնի մասնակցությամբ դեսպանությունը, որը գլխավորել է Սպորակիոսը, կայացել էր 383 թ. (Paulys Realencyclopädie die Classischen Altertum Wissenschaft, München, 1929 (1972) III. A2, էջ 1875, 2523, 2524):

Ստիլիքոնի մասին եղած նյութը, որը Կ.Գյուտերբոգը ծառայեցրել է որպես հիմնական կռվան իր կարծիքի համար, հիմք չի կարող ծառայել բաժանման տարեթիվը 387 թ. համարելու: Կ.Գյուտերբոգը, որոշ չափով ծանոթ լինելով հայկական աղբյուրների հաղորդած տեղեկություններին, այնուհանդերձ, Մովսես Խորենացուն համարել է VII դարում կամ դրանից ուշ ապրած հեղինակ, նշելով, որ նրա գործը «արժանահաւատութենեն շատ բան տուժած է» (Գյուտերբոգ Կ., նշվ. աշխ., էջ 23): Այնինչ Փավստոս Բուզանդի, Մովսես Խորենացու և Ղազար Փարպեցու աշխատությունները հենց այն սկզբնաղբյուրներն են, որոնք բաժանման տարեթիվը ճշտելու տեսանկյունից խիստ կարևոր տեղեկություններ են պարունակում: Նրանք գիտեին, որ Արշակ Գ-ի հեռանալը երկրի արևմտյան մասը և Խոսրովի գահակալությունը արևելյան մասում պայմանավորված էին Հայաստանի բաժանումով: Խոսրովի և Սահակ Պարթևի մասին Խորենացու հաղորդման համաձայն՝ «Կեցեալ եպիսկոպոսապետութեամբ ամս յիսուն եւ մի, սկսեալ

յերրորդ ամէ վերջնոյ Խոսրովայ արքայի Հայոց մինչեւ ցսկիզբն ամին երկրորդի Յազկերտի եղելոյ Պարսից թագաւորի, յելս ամսոյն նաւասարդի, յաւուր իւրոյ ծննդեան» (Մովսես Խորենացի, էջ 355): Հ. Մանանդյանը, հիմնվելով Է. Դյուլորիեի տոմարագիտական հաշվումների վրա, նշել է. «Սահակ Մեծը կաթողիկոս էր կարգվել Խոսրով Դ-ի (ըստ Հ. Աստուրյանի, Մ. Օրմանյանի և Ն. Ակինյանի, Խոսրով Գ-ի - Է. Դ.) թագավորության երրորդ տարում, այսինքն՝ 388 թ. և իր պաշտոնը վարել էր 51 տարի, ուրեմն՝ 388 թ. մինչև 439 թ.»: Հ. Մանանդյանը իրավացիորեն Խոսրովի գահակալության առաջին տարին համարել է 385 թ. (հմմտ. Ակինեան Ն., Ս. Մաշտոց վարդապետ. Մատենագիտական հետազոտութիւններ, հ. Բ., Վիեննա, 1949, էջ 19-20, 26, ծան.13), սակայն պաշտպանել է Կ. Գյուտերբոգի տեսակետը և 387 թ. համարել Հայաստանի բաժանման տարեթիվ (Մանանդյան Հ., Երկեր, հ. Բ., Երևան, 1978, էջ 239-243): Բայց, եթե Խոսրով Դ-ը գահ էր բարձրացել 385 թ., հենց այդ ժամանակ Արշակ Գ-ը հեռացել էր Հայաստանի արևմտյան մասը, հետևաբար, հայկական աղբյուրների հաղորդումները Հայաստանի բաժանման մասին վերաբերում են այդ նույն թվականին (Դանիելյան Է. Լ., Հայաստանի բաժանման տարեթիվը 387 թե՞ 385 թ. ՊԲՀ, 1980, № 1, էջ 203-214):

90. Սյունիք նահանգը կազմող գավառները «Աշխարհացոյց»-ում թվարկած են հետևյալ հաջորդականությամբ. «Երնջակ, Ճահուկ, Վայոցձոր (Եղեգնաձոր), Գեղաքունի, Սաւդք, որ է Ջաւ[դ]է[ք], Աղահէճք, Ծղուկ, Հաբանդ, Բաղք, Ջորք, Արևիք, Կովսական (տես Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 109, 117):

91. Սեբեոս, էջ 67-68: Համաձայն Սեբեոսի՝ հայ ժողովրդի ապստամբությունը Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ ծագեց Խոսրով Ա Անուշիրվանի (531-579) գահակալության 41-րդ տարում («Եւ եղեւ ի ԽԱ ամի թագաւորութեան Խոսրովայ որդւոյ Կաւատայ՝ ապստամբեաց Վարդան եւ ի բաց եկաց ի ծառայութենէ թագաւորութեանն Պարսից հանդերձ միաբանութեամբ ամենայն Հայաստանեաւք: Սպանել զՍուրէնն մարզպան յանկարծաւրէն ի Դուին քաղաքի՝ առին զաւար բազում եւ գնացին ի ծառայութիւն Յունաց»): Ասողիկը նշել է, որ այդ տեղի ունեցավ Հուստինոս (Բ) կայսեր (565-578) գահակալության 7-րդ տարում (Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 84-85), այսինքն՝ 572 թ.:

Սեբեոսը հայ ժողովրդի 451 թ. ապստամբության մասին գրելիս նշել է. «Արդ՝ զժամանակս թագաւորութեանն չարագործին Յազկերտի. եւ եթէ որպէս նա կամէր գաստուածայինն եղծանել կարգս, եւ կամ որպէս քաջ նախարարացն Հայոց եւ նախանձաւորն Աստուծոյ նահապետն Մամիկոնէից տանն, Կարմիրն կոչեցեալ Վարդան» (Սեբեոս, էջ 64, 65): Իսկ Հր. Բարթիկյանը գրել, որ «571 թ. ապստամբության ճնշումից հետո բազմաթիվ հայ գործիչներ Կարմիր Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ անցան Բյուզանդիա» (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 6, Բյուզանդական աղբյուրներ, Բ, Կոստանդին Ծիրանածին, թարգմանությունը բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի, Երևան, 1970, էջ V): Այնինչ, Սեբեոսը «Կարմիր» է կոչել 451 թ. ապստամբության ղեկավար Վարդան Մամիկոնյանին, այլ ոչ թե 572 թ. ապստամբության ղեկավար Վարդան Մամիկոնյանին: Բացի այդ, Հ.Բարթիկյանը, ըստ երևույթին, հետևելով Ն. Ադոնցին (Адонц Н., նշվ. աշխ., էջ 343) այս վերջին ապստամբությունը նշել է կայացած 571թ.: Ն. Գարսոյանը իր կողմից կատարած Ն. Ադոնցի տեքստի թարգմանությունում ուղղել է՝ 572թ. (Adontz N., նշվ. աշխ., էջ 267), իսկ ապստամբության ղեկավար Վարդան Մամիկոնյանին նշել է որպես Վարդան Բ՝ V դարում ապրած Վարդան Մամիկոնյանից տարբերելու համար (տես. The Armenian People from Ancient to Modern Times. Vol I, New York, 1997, էջ 108):

92. Мамедова Ф., Политическая история и историческая география Кавказ-

ской Албании, Баку., 1986, էջ 107-108:

93. Սեբեոս, էջ 91:

94. Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը Վ.Առաքելյանի, Երևան, 1983, էջ 273-274: Նույն տեղում պատմիչը հիշատակել է Սյունիքի Պետրոս և Վրթանես եպիսկոպոսներին, ինչպես նաև Աղվանքի հայրապետ Ջաքարիային, որոնք, սակայն, այս իրադարձություններին ժամանակակից չէին:

95. Հմմտ. Օրմանյան Մ., նշվ. աշխ., էջ 558, 559, 622: Ուլուբաբյան Բ., Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, էջ 175:

96. Акопян А. А., Мурадян П. М., Юзбашян К. Н., К изучению истории Кавказской Албании.- ՊԲՀ, 1987, № 3, էջ 184.

97. Սեբեոսի կողմից նշված «մի եւս կոչեսցի անուն Հայոց ի վերայ նոցա» (էջ 68) արտահայտությունը պետք է հասկանալ այնպես, թե Վահան Սյունեցին, ընդվզելով իր դաժանություններով հայտնի պարսից մարզպան Սուրենի դեմ, իր երկրամասը դուրս է բերում «Հայոց անունով» կոչվող մարզպանությունից, այսինքն՝ մարզպանական Հայաստանից (հմմտ. Акопян А. А., Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987, էջ 252, ծան. 36): Սյունիքը, փաստորեն, ինքնիշխան էր դարձել և իր հարաբերությունները Պարսկաստանի հետ կառուցում էր Քուստ-ի-Կապկոի սպայապետության մեջ մտնող Ատրպատականի շահիրարի (աշխարհագրի) միջոցով, առանց Դվինում նստող մարզպանի միջամտության:

98. Հմմտ. Ուլուբաբյան Բ., Դրվագներ Հայոց արևելից կողմանց պատմության, էջ 200-201, Հարությունյան Բ. Հ., Փայտակարանը և նրա տեղադրությունը,- ԼՀԳ, 1981, № 12, էջ 69: Ա. Տեր-Ղևոնդյանը այն կարծիքին էր, որ «571 թ. ապստամբությունից հետո Սյունիքը ճանաչվեց որպես ինքնուրույն միավոր Հյուսիսային քուստակի կազմում: Սակայն, վարչականորեն այն հավասարազոր չէր ճանաչվում պարսկական Հայաստանին, այլ, ըստ էության, պատկանում էր Հայոց շահիրարին, իսկ 591 թ. պայմանագրից հետո Սյունիքի նախարարները հասան մեկուսի վիճակի» (Тер-Гевондян А.Н., Армения и Арабский халифат, Ереван, 1977, էջ 19):

99. Սեբեոս, էջ 105: Այստեղից պարզ է դառնում, թե ինչու այդ ժամանակաշրջանում Սյունիքի իշխանությունը շարունակեց մնալ Հայաստանի մարզպանական մասից դուրս մինչև, փաստորեն, պարսից գերիշխանության վերացումը Արևելյան Հայաստանում:

100. Նույն տեղում, էջ 100: Ստ.Մալխասյանցը նշել է, որ Դվինում նստող այդ մարզպանը պարսիկ էր, հավանաբար Յեմանը (История епископа Себеоса. Перев. Ст. Малхасянца, Ереван, 1939, էջ 161-162 ծան.109): Այստեղ առկա են տպագրական վրիպակներ. գրված է «Воканский»; «марзпан Арменак, перс», պետք է համապատասխանաբար լինի՝ «Ձրկանский» կամ «Гирканский»; «марзпан Армении... », քանի որ այնուհետև խոսքը «Յեման մարզպանի» մասին:

101. Սեբեոս, էջ 113:

102. Ի տարբերություն այն կարծիքի, թե Սմբատ Բագրատունին Հայաստանի մարզպանն է եղել (Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, Երևան, 1948, էջ 540, Goubert P., նշվ. աշխ., էջ 203, Тер-Гевондян А. նշվ. աշխ., էջ 19, Stratos A. Byzantium in the Seventh Century, Amsterdam, 1968, հ. I, էջ 62, հ. II, էջ 137, ծան. 572), Ռ. Գրուսեն (Grousset R., նշվ. աշխ., էջ 261-265) և Կ. Յուզբաշյանը (Юзбашян К., Армянские государства... էջ 17), հիմնվելով Սեբեոսի հաղորդումների վրա, գրել են, որ Սմբատը, լինելով Վրկանի մարզպանը, Հայաստանում եղած ժամանակ կարևոր դեր է խաղացել:

103. Հայոց Ուտիք, Արցախ և Փայտակարան նահանգների գավառացանկը մանրամասն բերված է «Աշխարհացոյց»-ում: ***Ուտիք***. Առան-ռոտ, Տռի, Ռոտ-Պարսեան, Աղուէ, Տուս-Քուստակ, Գարդման, Շակաշէն, Ուտի Առանձնակ: ***Արցախ***. Մեւս Հաբանդ, Սիսական-ի-Կոտակ, Վայկունիք, Բերդաձոր, Մեծ Առանք, Մեծ Կուանք (Կուենք), Հարճլանք, Մուխանք, Պիանք, Պարսականք, Քուստ-ի-Փառնէս, Կողթ: ***Փայտակարան***. Հրաքոտ-Պերոժ, Վարդանակերտ, Եւթնփորակեան-բագինք, Բաղան-ռոտ, Առոս-Պիճան, Հանի, Աթշի-Բագուան, Սպանդարան-Պերոժ, Որմիզդ-Պերոժ, Ալեւան (Վենետիկի Մխիթարյանների Մատենադարանի ձեռ. № 1245, այսուհետև ՎՄ, Երեմյան Ս., նշվ.աշխ., էջ 109, Ուլուբաբյան Բ. Ա., Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, էջ 256, տես նաև Խաչենի իշխանությունը X-XI դդ., Երևան, 1975, էջ 30-39):

Իր կեղծ-գիտական աշխատությունում Ֆ.Մամեդովան գրել է. «Քաղաքական առումով Արցախը I-IV դարերում ենթակա էր աղվանական Արշակունիներին... Ա. Պ. Նովոսելցևը պնդում է, թե վաղ միջնադարում Աղվանքը հիմնականում ընդգրկում էր ժամանակակից Ադրբեջանական ԽՍՀ-ի, ինչպես նաև Հայաստանի, Դաղստանյան ԱԽՍՀ-ի և Արևելյան Վրաստանի տարածքը: Աղվանքի անտիկ ժամանակաշրջանի պատմական աշխարհագրությանը վերաբերող հարցերում մենք տարաձայնություններ ունենք հեղինակի հետ» (Мамедова Ф., նշվ. աշխ., էջ 69, 104): Այս վայ-հետազոտողի «տարաձայնությունը» (իհարկե առանց որևիցե գիտական հիմքի) վերաբերում է աղբյուրների մանրակրկիտ վերլուծության վրա հիմնված Ա. Նովոսելցևի հետևյալ մտքին. «Հայ-աղվանական սահմանը անցնում էր Կուր գետով, իսկ Շակաշենը, Արցախը, Ուտիքը, Գարդմանը և այլ շրջաններ մտնում էին Հայոց թագավորության կազմի մեջ» (Новосельцев А. П. К вопросу о политической границе Армении и Кавказской Албании в античный период,- в сб.: Кавказ и Византия, Ереван, 1979, т.1, էջ 18):

Տարբեր կարծիքներ են հայտնվել V դարի ընթացքում Հայոց Ուտիք և Արցախ նահանգների բուն Աղվանքին միացման մասին. 387 թ. (Еремян С. Т. Политическая история Албании III-VII вв.,- в кн.: Очерки истории СССР. М., 1958, с, 314), 428 թ. հետո (Ուլուբաբյան Բ. Ա. Աղվանից թագավորական տան հարցի շուրջ.- ԼՀԳ, 1971, № 7, էջ 53,60, տես նաև Հյուսիսարևելյան Հայաստանի նախամարզպանական շրջանի վարչաքաղաքական վիճակի հարցի շուրջ.- ԲԵՀ, 1975, № 2, էջ 149-164, Հարությունյան Բ. Մեծ Հայքի թագավորության հյուսիսարևելյան մարզերի վարչա-քաղաքական կացությունը 387-451 թթ. - ԲԵՀ, 1976 № 2 էջ 77-95, Акопян А., նշվ. աշխ., էջ 109-124), 461 թ. (Тревер К. В. Очерки по истории и культуре Кавказской Албании, М, - Л; 1959, էջ 225, հմմտ. Սվազյան Հ. Ս., Աղվանից մարզպանության կազմավորման հարցի շուրջ, - ՊԲՀ, 1979, № 4, էջ 212-213):

Նկատի ունենալով, որ «Աղվանք» անվանման եկեղեցա-իրավական կիրառումը ավելի լայն էր, քան էթնիկականը և դավանանքային մոտեցումը գերակայող էր միջնադարում (Акопян А., նշվ. աշխ., էջ 176), կարելի է ասել, որ Աղվանից մարզպանության շրջանում Ուտիքի զգալի մասը և հատկապես Արցախը նրա մեջ չէին ընդգրկված, պահպանվելով որպես ինքնուրույն հայկական նախարարություններ:

104. Адонц Н., նշվ. աշխ., էջ 231-232:

105. Օրմանյան Մ., նշվ. աշխ., էջ 454: Ըստ մեկ այլ կարծիքի ապստամբությունը սկսվել էր 482 թ. (տես Հայ ժողովրդի պատմություն, հ. Բ, էջ 198, Յուզբաշյան Կ. Ն., Ե՞րբ է սկսվել Վահան Մամիկոնյանի գլխավորած ապստամբությունը, ՊԲՀ, 1984, № 1, էջ 95-101):

106. Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց Թուղթ առ Վահան Մամիկո-

նեան, Երևան, 1982, էջ 432:

107. Ըստ քաղաքական իրավիճակների (սկսած Հայաստանի առաջին բաժանումից) *Արևմտյան Հայաստան* և *Արևելյան Հայաստան* հասկացությունների տարածքային ընդգրկումները ժամանակի ընթացքում փոփոխվել են՝ համապատասխան Հայաստանը երկու մասի բաժանող սահմանագծի տեղաշարժերի, ինչպես դեպի արևմուտք, այնպես էլ՝ արևելք:

108. Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 68: «Ներքսագոյն կամ ներքնագոյն - առաւել 'ի ներքս կամ 'ի մէջն եւ 'ի խորս կարի ներքին. խորին խորագոյն» (Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. Բ, Վենետիկ, 1836, էջ 422-423):

109. Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 88-89: Ա. Մուշեղյանի կարծիքով Առաջին և Երկրորդ Հայքերի բաժանումը ավելի վաղ ժամանակների իրողություն է (տես Մուշեղյան Ա., V դարի հայ մատենագրության ժամանակագրական խնդիրներ, Ատենախոսություն, Երևան, 1996, էջ 51-53):

110. Դանիելյան Է., Հայկական աղբյուրները Արևմտյան Հայաստանի վաղ-բյուզանդական ռազմավարչական բաժանումների մասին, - ՊԲՀ, 1985, № 1, էջ 99, ծան.1:

111. Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 46, 91-104: Հովհաննես Դրասխանակերտցին հիշատակել է «Մեծ Հայքը» և «Ներքսագոյն Հայքը», ինչպես ստորև կտեսնենք, տարածքային այլ ընդգրկմամբ, որպես Մավրիկիոսի վերափոխությունների արդյունք: Հայ պատմիչը թարգմանաբար, հայկական տարածքի առումով, օգտագործել է *interior* լատիներեն տերմինը, որը սկզբնապես կայսերական փաստաթղթերում կիրառվել է որոշակի տարածքային («Մեծ Հայք») ընդգրկմամբ: Դրասխանակերտցին պահպանել է այդ բառի (ἐνδοτάτος - inmost, տես Greek-English Lexicon, compiled by H. Liddel and R. Scott, Oxford, 1996, էջ 561) հայերեն թարգմանված («Ներքսագոյն») ձևը (Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 68):

112. Gens և ἔθνος բառերը, նշանակելով «ցեղ, ազգ, ազգատոհմ» (Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. Ա, Վենետիկ, 1836, էջ 6), հարավ-արևմտյան Հայաստանի ինքնավար իշխանությունների կապակցությամբ պետք է թարգմանել «ազգեր», ավելի ճիշտ «ազգատոհմեր»՝ հայկական ինքնավար նախարարական տիրույթների իմաստով: Կ. Գյուտերբոգի գրքի թարգմանությունում նշված է «ազգք», (Գյուտերբոգ Կ., նշվ. աշխ., էջ 12): Իսկ Ն. Ադոնցը թարգմանել է «народцы» (Адонц Н., նշվ. աշխ., էջ 29), որը Ն. Գարսոյանը անգլերեն թարգմանել է «the nations» (Adontz N. նշվ. աշխ., էջ 26); Հ. Բարթիկյանը թարգմանել է «ազգություններ» բառով (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 5, Բյուզանդական աղբյուրներ, Ա, Պրոկոպիոս Կեսարացի: Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Մ. Բարթիկյանի, տես Բյուզանդական աղբյուրներ, Ա, Երևան, 1967, էջ 299):

113. Corpus Juris Civilis. Edit. fratres Kriegelii. 16. Auflage, drei Bände. - Band II. Bearbeitet von Dr. E. Hermann, Leipzig, 1843, I. 29. 5, էջ 111; հմմտ. Ioannis Malalae Chronographia. Ex recensione Ludovici Dindorfii. Corpus Scriptorum Historiae Byzantinae. Editio emendator et copiosior, consilio B. G. Niebuhrii, Bonnae, 1831, էջ 429: Ն. Ադոնցը Հուստինիանոսի հրամանագրի այս առաջին տողերը բերել է առանց թարգմանության (Адонц Н., նշվ. աշխ., էջ 132): Հ. Բարթիկյանը թարգմանել է. «Հուստինիանոս կայսրը Ջետային Հայաստանի, Պողեմոնյան Պոնտոսի և ազգությունների փառավորյալ զորավարին» (Պրոկոպիոս Կեսարացի, էջ 299), սակայն բնագրի «A.»-ն հաշվի չի առել: Ն. Գարսոյանը վերջինս կապել է Ջետայի անվան հետ և թարգմանել. «The Emperor Justinian to A. Zeta, *vir illustri* and master of the army for Armenia, Pontus Polemoniacus and the Nations» (Adontz N., նշվ. աշխ., էջ 107): Այնինչ առաջին բառերը անհրաժեշտ էր թարգմանել. «The Emperor Jus-

tinian A. to Zeta... », իսկ ամբողջ նախադասության թարգմանությունն է. «Կայսր Հուստինիանոս Օգոստոսը Ջետային՝ Հայաստանի և Պողեմոնական Պոնտոսի ու ազգատոհմերի փառավորյալ զորավարին»:

Այս հրամանագրում Հուստինիանոսը երեք անգամ հիշատակել է Պողեմոնական Պոնտոսը: Լատիներեն բնագրից Ն. Ադոնցի կատարած ռուսերեն թարգմանությունում Պողեմոնական Պոնտոսի («...et primam et secundam Armeniam et Pontum Polemoniacum tuae curae cum suis ducibus commisimus») մի հիշատակությունը բացակայում է («...первую и вторую Армению вверяем твоему попечению вместе с их дуками», տես Адонц Н., նշվ. աշխ., էջ 133), հավանաբար տպագրական հանգամանքներով: Զարմանալի զուգադիպությամբ այդ նույն վրիպակը առկա է նաև լատիներենից հայերեն կատարած Հ. Բարթիկյանի թարգմանությունում. «Առաջին և Երկրորդ Հայքերը հանձնում ենք քո հոգատարությանը՝ նրանց դուքսերի հետ միասին» (Բյուզանդական աղբյուրներ, Ա, էջ 299): Ն. Գարսոյանը ճիշտ է կատարել լատիներեն բնագրից անգլերեն թարգմանությունը. «We entrust to thy care... First and Second Armenias and Pontus Polemoniacus, together with their Dukas» (Adontz N., նշվ. աշխ., էջ 107) և դրանով ուղղել է Ն. Ադոնցի աշխատությունում տեղ գտած վրիպակը:

114. Procopius. Buildings (De aedificiis), with an English transl. by H. B. Dewing, London, 1954, III. i.16-17 (այսուհետև՝ Proc. Aed.): Մեծ Հայքի թագավորության այն մասում, որն 385 թ. բաժանումով անցել էր կայսրությանը, Արշակ Գ-ի մահից հետո (387 թ. կեսերը) այլևս թագավոր չնշանակեցին, և այդտեղ կառավարումը իրականացվում էր կոմսերի (կոմեսների) միջոցով (Մովսես Խորենացի, էջ 316): Իշխանության այդ ձևը Հուստինիանոսը վերացրեց VI դ. 20-ական թթ. վերջում, այնուհետև 31-րդ *նովելայով* (536 թ. մարտի 18) նա այն մտցրեց մեկ այլ՝ Երրորդ Հայք (կենտրոնը Մելիտենե) նահանգում: Այդ նույն նովելայից տեղեկանում ենք, որ Հուստինիանոսը վերափոխության ենթարկված «Ներքսագոյն» կամ Առաջին Հայքում (կենտրոնը Հուստինիանուպոլիս) կառավարիչ նշանակեց Ակակիոսին՝ նահանգին շնորհելով անթյուպատոսության կարգավիճակ (Адонц Н., նշվ. աշխ., էջ 167-168): Եթե նկատի ունենանք, որ մինչ այդ՝ Համազասպին սպանելուց հետո (մոտ 532 թ.), Ակակիոսը տիրացել էր Համազասպի պաշտոնին (ἄρχοντ) նախկին «Ներքսագոյն Հայքում» (Procopius. «The Persian War», with an English trans. by H. B. Dewing, Vols. 1, 7, London, 1954, II. ii. 4 (Proc. Bel. Pers.), ապա պարզ կդառնա, որ նա չի վարել կոմեսի (κόμετα) պաշտոն, ինչպես ենթադրվել է (տես Հայ ժողովրդի պատմություն, հ. Բ., էջ 218):

115. Ջենոն կայսեր դեմ ապստամբած Իլլոսին և Լեոնտիոսին (485 թ.) հարել էին սատրապներից ոմանք: Երբ կայսրը ճնշեց ապստամբությունը, նախկին կարգավիճակում թողեց միայն մեկ սատրապի, որի գավառը, պատմիչի խոսքերով ասած, ոչ մի կարևորություն չէր ներկայացնում, իսկ մնացածներին զրկեց ժառանգական իրավունքից: Սատրապությունների ղեկավարման իրավունքը շնորհվելու էր կայսեր ընտրությամբ (Proc. Aed., III. i. 25-26): Այստեղից Հ. Բարթիկյանը եզրակացրել է, որ վեց սատրապություններից միայն մեկը՝ Բալահովտինը շատ թույլ էր ռազմական տեսակետից և, հավանաբար, այդ էր պատճառը, որ այն չմիացավ ապստամբներին (Հայ ժողովրդի պատմություն, հ.Բ, էջ 221): Չնայած սատրապությունների կարգավիճակի փոփոխմանը, սատրապների հրամանատարության տակ շարունակում էին մնալ տեղական հայկական զորքերը (Proc. Aed., III. i. 27):

116. Նույն տեղում, III. i. 28, ii. 1-2, iii. 7-8, 13-14:

117. Նույն տեղում, III. iv. 1-20:

118. Նույն տեղում III. v. 1-12: Պրոկոպիոսի երկի ներկայիս անգլերեն հրատարակությունում բնագրի «τὸν ἐν Ἀρμενίας στρατηγὸν» արտահայտությունը

Հ. Դյուինգը թարգմանել է «the general of two Armenias» (էջ 204-205) և, չնայած շեղվել է բնագրից, սակայն նկատել է, որ խոսքը նախքան Հուստինիանոսի կատարած վերափոխությունների ժամանակաշրջանին է վերաբերում: Ավելացնելով «երկու» բառը, թարգմանիչը նկատի է ունեցել կամ «Մեծ Հայքը» (կամ «Ներքսագոյն Հայք») և «այլ Հայքը»՝ ἄλλῃ Ἀρμενίᾳ (ինքնավար իշխանություններ կամ սատրապությունները), կամ էլ Առաջին և Երկրորդ Հայքերը, կամ էլ «Մեծ Հայքը» և Առաջին Հայքը: Ամեն դեպքում «two» բառի ավելացումը ավելորդ էր, քանի որ Հուստինիանոսի վերոհիշյալ հրամանագրի լույսի տակ Պրոկոպիոսի երկի նշված հատվածը ընկալվում է այնպես, թե խոսքը կայսրության գերիշխանության տակ գտնվող հայկական հողերից («Մեծ Հայք» կամ «Ներքսագոյն Հայք», «այլ Հայք», Առաջին և Երկրորդ Հայքեր) և, ըստ Հուստինիանոսի, դրանց միացված Պողեմոնական Պոնտոսից ռազմական համակարգ ստեղծելու մասին է: Իսկ Հուստինիանոսի 8-րդ նովելային (535 թ., ապրիլի 15) կցված նահանգների ցուցակում Առաջին և Երկրորդ Հայքերին հավասար նշված է «Մեծ Հայքի» (ἄρχων Ἀρμενίας Μεγάλης) կամ «Ներքսագոյն Հայքի» կառավարիչը (Адонц Н., նշվ. աշխ., էջ 161, 173): Պրոկոպիոսի՝ Տրապեզունտին (Տրապիզոն) վերաբերող շարադրանքից (III. vii. 1-3) նույնպես չի երևում, թե այդ ժամանակ Հուստինիանոսը արդեն վերակազմել էր Առաջին Հայքը և «Ներքսագոյն Հայքը» և կազմակերպել նոր Առաջին Հայքը ու Հուստինիանուպոլիսը կենտրոն դարձրել, չնայած վերջինս կառուցվում էր Վժանից որոշ հեռավորության վրա՝ Չրմես (Ծումինա) կոչված վայրում: Ն.Ադոնցը այս կապակցությամբ գրել է. «Պրոկոպիոսը Aed.-ում հիշատակում է Հուստինիանուպոլիսը, երբ, ըստ երևույթին, դեռևս չգիտեր Հուստինիանոսի 536 թ. ռեֆորմի մասին» (էջ 174, ծան.1): Իսկ Հ. Բարթիկյանը, չնայած ճիշտ է թարգմանել Պրոկոպիոսի այդ տեղեկությունը («նա այնտեղ հաստատեց բոլոր զինված ուժերը և Հայքերի զորավարին...»), սակայն ծանոթագրությունում նշել է, թե պատմիչը «նկատի ունի Ա, Բ, Գ, Դ, Հայքերը» (Բյուզանդական աղբյուրներ Ա, էջ 196-197, 343, ծան. 45)

119. Proc. Aed. III. vi-vii: Չնայած Պրոկոպիոսը Հուստինիանոսի ժամանակակիցն էր, նրա երկերում չեն արտացոլվել այդ կայսեր 536 թվականին իրագործած վերափոխությունները:

120. Τζοφανηνή, Ἀνζητηνή, Τζοφανή, Ἀσθιανηνή, Βαλαβιτηνή (տես Адонц Н., նշվ. աշխ., էջ 168) Ըստ Ն. Ադոնցի, Պրոկոպիոսը հինգ սատրապությունները շփոթել է «հինգ անդրտիգրիսյան երկների» հետ (նույն տեղում, էջ 44): Սակայն պատմիչը նույնիսկ ոչ թե սատրապություններն է թվով հինգ նշել, այլ սատրապներին՝ σατράπαι ἐφειστήκεισαν Ἀρμένιαι πέντε (Proc. Aed. III., i. 17): Ն. Ադոնցի կարծիքին կարելի էր համաձայնվել, եթե միայն Պրոկոպիոսը այդպես նշեր, սակայն թվով հինգ սատրապություններ հիշատակել է նաև Հուստինիանոսը իր 31-րդ նովելայում, ընդ որում չի կարելի ասել, թե նա շփոթել է, քանի որ իր «Օրենսգրքում» վեց սատրապություններ է նշել:

121. Գյուտերբոգ Կ., նշվ. աշխ., էջ 44-45, 47:

122. Адонц Н., նշվ. աշխ., էջ 39, 41

123. Toumanoff C., Studies in Christian Caucasian History, Georgetown, 1963, էջ 131, 166-167, 172:

124. Адонц Н., նշվ. աշխ., էջ 38, 42

125. Մովսես Խորենացի, էջ 71,114:

126. Հյուբշման Հ., նշվ. աշխ., էջ 157:

127. Մանանդյան Հ., Խորենացու առեղծվածի լուծումը, Երևան, 1934, էջ 50: Այստեղից երևում է, որ Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ը (V դ.) և «Աշխարհացոյցը» (VII դ. Շիրակացու մշակմամբ) ավելի հին իրողություններ էին, իսկ

Հ. Մանանդյանը փորձել է ապացուցել, որ Խորենացին ուշ շրջանի հեղինակ էր:

128. Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 35:

129. Proc. Aed., III. iii. 9, էջ 193:

130. Բյուզանդական աղբյուրներ, Ա., էջ 193-194:

131. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա, էջ 82, հ. Բ, էջ 282:

132. A Greek-English Lexicon compiled by H. G. Liddell and R. Scott. With a revised supplement. Clarendon Press - Oxford, 1996, էջ 702: Պրոկոպիոսի հաղորդումը Կիթառիճի դուքսի մասին τὸν ἑτέρον δοῦκα (Proc. Aed., III., iii. e.) այդպես էլ անգլերենում թարգմանված է «the second of the Dukas» (նույն տեղում, էջ 193), այսինքն, երկուսից մեկի՝ «մյուս»-ի իմաստով: Հ. Բարթիկյանը այդ արտահայտությունը իրավացիորեն թարգմանել է. «մյուս դուքսին» (Բյուզանդական աղբյուրներ Ա, էջ 193):

133. Constantini Porphyrogeniti imperatoris De cerimoniis aulae Byzantinae, Corpus scriptorum historiae Byzantinae. Edit. B. G. Niebuhrii, h. I, Bonnae, 1829, էջ 192, տես նաև De Thematibus et de Administrando Imperio, Bonnae, 1840, էջ 31:

134. Սեբաստիա և Նիկոպոլիս քաղաքների տեղադրության մասին Պրոկոպիոսը գրել է. «Σεβαστείας καὶ Νίκοπολεως τῶν ἐν Ἀρμενίαις πόλεων» (Proc.Aed. III. iv. 11), որը Հ. Դյուինգը և Հ. Բարթիկյանը նույնանման են թարգմանել. «Sebastia and Nikopolis cities of Armenia», «Հայաստանի Սեբաստիա և Նիկոպոլիս քաղաքների... » (Բյուզանդական աղբյուրներ, Ա, էջ 195):

135. Անգլերեն թարգմանությունում այս վերջին ἄλλη Ἀρμενία - ն ծանոթագրությունում նույնացված է Փոքր Հայքի հետ (Proc. Aed., էջ 194): Պրոկոպիոսը Փոքր Հայքը հիշատակել է հաջորդ պարբերությունում (Նույն տեղում, III. iv. 15):

136. Յուրաքանչյուր նահանգի տարածքային կազմի մասին տես Адонц Н., նշվ. աշխ., էջ 165-173:

137. Ն. Ադոնցի ռուսերեն թարգմանությունը (նույն տեղում, էջ 168-169), որը համեմատել ենք հունարեն բնագրի հետ {«δύο μὲν εἶναι σπεκταβιλίας, τήν τε τοῦ ἀνθυπάτου τήν τε τοῦ κόμητος, καί ἀνθύπατου μὲν εἶναι τὸν τῆς πρώτες ἡγούμενον Ἀρμενίας, κόμητα δὲ τὸν τῆς τρίτης (Հ. Բարթիկյանը թարգմանել է «Երկրորդ», այնինչ պետք է լինի «Երրորդ»), τὸν δὲ τῆς δευτέρας καὶ τετάρτης ὀρδιναρίους καθεστάναι ...ὥστε τῷ μὲν ἄρχοντι τῆς πρώτης Ἀρμενίας, τουτέστι τῷ ἀνθυπάτῳ, τὰς ἐκ τῆς Ἀρμενίας ἐκκλήτους φέρεσθαι, τουτέστι τὰς κατὰ Σεβάστειαν»}: Հ. Բարթիկյանի (« ...մենք սահմանում ենք, որ Սեբաստիա, Առաջին Հայքի արխոնտին, այն է՝ անթյուպատոսին ուղղվեն բողոքարկումները Երկրորդ Հայքից», տես Բյուզանդական աղբյուրներ, Ա, էջ 305) և Ն. Գարսոյանի (« ...we decree that appeals from Armenia II shall go to the governor of Armenia I, that is to Sebastia» տես Adonts N., նշվ. աշխ., էջ 134) թարգմանություններում տեղ է գտել մի անճշտություն, որով աղավաղվել է բնագրի իմաստը: 31-րդ նովելայով Հուստինիանոսը Երկրորդ Հայքի կենտրոն էր թողել նախկին Առաջին Հայքի կենտրոնը՝ Սեբաստիան, իսկ Հ. Բարթիկյանի և Ն. Գարսոյանի թարգմանություններից հետևում է, որ Սեբաստիան Հուստինիանոսի նոր կազմավորած Առաջին Հայքումն էր:

138. Տեղական բնակչությունը հրաժարվում էր հարկեր վճարելուց (Адонц Н., նշվ. աշխ., էջ 198):

139. Մովսես Խորենացի, էջ 46,47:

140. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1940, էջ 268, ծան. 57:

Հմմտ. Աբրահամյան, Խորենացուն վերաբերվող «Աշխարհացոյց»-ի հեղինակի հարցի շուրջը. Երևան, 1940, էջ 58, 84:

141. Ըստ Ա. Մուշեղյանի, խոսքը Մեծ Հայքի սահմաններից դուրս լինելու մասին է (տես Ա. Մուշեղյան, նշվ. աշխ., էջ 50): Արամի «բուն երկիր» հասկացությունը վերաբերում է Մեծ Հայքի և Փոքր Հայքի ամբողջական տարածքին:

142. Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Երևան, 1987, էջ 352:

143. Մովսես Խորենացի, էջ 115, 243, 244:

144. Փավստոս Բուզանդ, էջ 14:

146. Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 41:

147. Մովսես Խորենացի, էջ 313:

148. Դա անհնար էր, քանի որ այդ դեպքում Սահակը պետք է մտներ Արշակ թագավորի սահմանները, որտեղից ինքը մինչ այդ փախել էր:

149. Ասողիկ, էջ 196, 197:

150. Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 95, 144:

151. Եթե նրանք հանդուրժելի լինեին Արշակ թագավորի համար, ուրեմն հենց ի սկզբանե կանցնեին նրա սահմանները: Ուրեմն, նույնիսկ հասնելով Մանանաղի, նրանք այնտեղ չէին կարող մնալ:

152. Հայ ժողովրդի պատմություն, հ. Ա, էջ 234:

153. Կղավդիոս Պտղոմեոսը (83-161թթ.) հիշատակել է Փոքր Հայքը Կապադովկիայի կազմում (Ptol., V.6.18): Ա. Մուշեղյանի կարծիքով՝ «ըստ Խորենացու Հայոց նախնի Արամի հիմնած Առաջին Հայքը Կապադովկիան է՝ Մաժաք (Կեսարիա) դաստակերտով, որ համապատասխանում է Ստրաբոնի և Պտղոմեոսի Կիլիկիա ստրատեգիային - Argaios (Առգէոս) լեռան շրջակա երկիրը, որի գլխավոր քաղաքն է Mazaca-ն՝ լեռան հյուսիսային ստորոտում: Հետազոտողը գտնում է, որ «Դաշանց թղթի» և Փավստոս Բուզանդի տեղեկությունները ու Մաժաք քաղաքի՝ հայերեն մշակ բառից ծագման մասին Ագաթանգեղոսի և Խորենացու ստուգաբանությունները, ինչպես նաև Մաղաղասի (VI դ.) հաղորդումը՝ «հռոմեական Առաջին և Երկրորդ Հայքի» (Migne, Patrol. Graec., t. 97, col. 469) մասին, հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ Առաջին և Երկրորդ Հայքերի բաժանումները 386 թվականից ավելի վաղ ժամանակաշրջանի իրողություն է և «վերաբերում է III դարի վերջի իրադարձություններին», կապված «Հռոմեական Հայաստանի» բաժանման հետ, իսկ «371/2 թ. ձմռանը Վաղես կայսրը Երկրորդ (Փոքր) Հայքը տրոհելով երկու մասի՝ Առաջին Հայքը խորամանկորեն փոխադրեց դեպի արևելք՝ Սեբաստիայի տարածքը և դրանով իսկ Կապադովկիայի վրայից մեկընդմիշտ վերացրեց *Պռոտին Արմենիան* անունը» (Ա. Մուշեղյան, նշվ. աշխ., էջ 52): Ա. Մուշեղյանի մոտեցումը խնդրին ընդլայնում և խորացնում է դրա լուծման հնարավորությունները: Միևնույն ժամանակ, դժվար է ժխտել այն փաստը, որ Փոքր Հայքի՝ Առաջին և Երկրորդ Հայքերի բաժանումը Թեոդոս Մեծի օրոք կայացած իրողություն էր:

154. Adoнц Н., նշվ. աշխ., էջ 68, 72, 360:

155. Յ. Մարկվարտի կարծիքով՝ Մովսես Խորենացու մոտ Արամի և Պայապիս Քաաղեայի (ըստ Մարկվարտի՝ Պապայիս Քաղյան) կռվի նկարագրության մեջ պահպանվել է Հոմերոսի Իլիականում հիշատակված Ջևսի և Տյուփոնի կռվի տարբերակը (Homer, The Illiad. With an English transl. by A. Murray. Cambridge, Mass.-London, 1960, II, 780-783, vol. I, էջ 108): Այստեղ հիշատակվող «արիմներին» Ἀρίμοι Մարկվարտը հնարավոր է համարել նույնացնել արմենների հետ (տես Markwart J., Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation, Berlin, 1919, էջ 66-68, հմմտ. Մանանդյան Հ., Երկեր, հ. Ա, Երևան, 1977, էջ 25-26):

156. Կարելի է ենթադրել, որ Աղձքի Արշակունյաց դամբարանի ներսի խորշե-

րի առջևի սալերից մեկի վրա քանդակված վարազի կամ խոզի դեմ կռվող նիզակավոր մարդու պատկերում (տես Առաքելյան Բ., Հայկական պատկերաքանդակները IV-VII դարերում, Երևան, 1949, էջ 78-80), որը բովանդակում է Հայկ Նահապետի կերպարի հետագա զարգացումը, ներկայացված է Բելը խոզի տեսքով: Խոզը իր հերթին կարող էր մարմնավորել Տյուփոնին: Եթե առասպելաբանաստեղծական նման ընկալում գոյություն է ունեցել, ապա Հայկի և Բելի պայքարի նմանակը կարելի է համարել Զևսի և Տյուփոնի կռիվը:

157. «Աշխարհացոյց»-ի այն ձեռագրերում, որոնցում Կապադովկիան նշված է առանց «Առաջին» բառի, Առգեոսի փոխարեն առկա է «գենոս» կամ «զգենոս» (Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 582,1717, 5613), ինչը վկայում է այդ ձեռագրերի գրչական կապի մասին: Ճիշտը «Առաջին Կապադովկիոյ» և «զԱռգեոս» ընթերցումներն են: Որոշ ձեռագրերում այստեղ հիշատակում են «երի Երկրորդ Հայոց» (ՄՄ, № 582, 696, 1717, 2370, 4284, 5613), իսկ մյուսներում՝ «երի Երրորդ Հայոց» (ՄՄ, № 1267, 1459, 1486, 1898, 2019, 2291, 2748, 3691, 3941, 5120, 7993): Նախընտրելի է «երի Երկրորդ Հայոց» ընթերցվածը, քանի որ Առաջին Հայքի նկարագրությանը նախորդող շարադրանքում խոսքը «Երկրորդ Հայքի» (ՄՄ, № 2370, 4284, Վենետիկի Մխիթարյանների Մատենադարան, ձեռ. № 1245) մասին է, որը մի շարք ձեռագրերում ուղղակի նշված է «Հայք» (ՄՄ, № 582, 696, 1267, 1459, 1486, 1717, 1898, 2019, 2291, 2748, 3941, 5120, 5613, 7993): Տես Դանիելյան Է., Հայկական աղբյուրները Արևմտյան Հայաստանի վաղբյուզանդական ռազմա-վարչական բաժանումների մասին, էջ 99-113, հմմտ. Հարությունյան Բ., «Աշխարհացոյց»-ը և Չորս Հայքերի խնդիրը, Երևան, 1997, էջ 5-6, 17:

158. Առգեոսի և Մաժաքի հարևանությունը հիմք ընդունելով, Ս. Երեմյանը առաջարկել է վերականգնել. «[Աշխարհ Առաջին Հայք՝ որ արդ կոչին] Երկրորդ Հայք, որ կայ յելից Կապադովկիոյ, եւ երկայն տարածի մինչեւ ցեփրատ, եւ լեառն ունի զԱռգեոս: Եւ ունի Ալիս գետ եւ այլ գետս երկուս... եւ լերինս բազումս եւ մեծամեծս» (Երեմյան Ս., «Աշխարհացոյցի» սկզբնական բնագրի վերականգման փորձ. - ՊԲՀ, 1973, № 1, էջ 251):

159. Կապադովկիան 371 թ. բաժանվեց երկու նահանգի, իսկ 535/6 թ. Հուստինիանոս Ա-ը միավորեց Առաջին և Երկրորդ Կապադովկիաները (Адонц Н., նշվ. աշխ., էջ 88, 163):

160. Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 88-89:

161. Աշխարհացոյց է դարու, էջ 15, տես Армянская география VII века. Текст и перевод с присовкуплением карт и объяснительных примечаний издал К. П. Патканов, СПб, 1877: «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրությունում «առ Sorou լերամբ»-ից հետո կարդում ենք. « ...յերի Ամանոս լերին, որ բաժանէ ընդ նա եւ ընդ Կոմագէնի Ասորւոց մինչեւ ցեփրատ: Ունի եւ այլ լերինս Ջիգոն եւ զԲասիլիկոն եւ զԿռորմանդոն. եւ զետ զնոյն զՊիռամոս եւ զՊառատիս. եւ զԿաւկաւա եւ զԿառոմոսոս. եւ դրունս Բ ելանելոյ Ասորւոց (ՎՄ, № 1245 ձեռագիր, էջ 37-38): ՄՄ № 2370 ձեռագրում, ի տարբերություն ՄՄ վերոհիշյալ այլ ձեռագրերի, այդ տեղում հիշատակվում են Ամանոսի լեռները եւ Կոմագենեն: № 696, 1459, 1486, 2019, 2291, 2748, 3941, 5120 ձեռագրերում այս տեղում գետեր չեն նշված: № 582, 1717, 4284, 5613 ձեռագրերում գրված է «գետս Գ», իսկ ՄՄ № 1898, 2370, 7993-ում՝ «գետս Դ», որոնց անունները բերված են ՎՄ № 1245 ձեռագրում: Ս. Երեմյանը «որ արդ կոչին Առաջին Հայք» արտահայտությունը սրբագրել է «որ արդ կոչին Երրորդ Հայք»՝ այն կապելով Հուստինիանոս Ա-ի կազմավորած նահանգի հետ (ՊԲՀ, 1973, № 1, էջ 249-250): ՄՄ նշված ձեռագրերում «լիկիոյ» է, իսկ Ք.Պատկանյանի հրապարակած «Աշխարհացոյց»-ի տեքստում և ՎՄ

№ 1245 ձեռագրում առկա է «Կիլիկիոյ»:

162. ՎՄ № 1245 ձեռագրում այս հատվածը չկա: Ա. Սուքրին իր կողմից հրապարակած «Աշխարհացոյց»-ի տեքստի այդ բացակայող հատվածը քառակուսի փակագծերում լրացրել է Առաջին և Երրորդ Հայքերի մասին այն տեղեկություններով (Աշխարհացոյց Մովսէսի Խորենացւոյ, էջ 25, տես Géographie de Moïse de Corène d'après Ptolémée. Texte arm. trad. en français par le Ar. Soukry, Venise, 1881), որոնք առկա են այլ օրինակներում (հմմտ. Աշխարհացոյց է դարու, էջ 15): Իսկ Սեն-Մարտենի կողմից հրապարակած «Աշխարհացոյց»-ի տեքստում սկզբում հիշատակվում է Երրորդ Հայքը, այնուհետև, Առաջին Հայքի նկարագրության կապակցությամբ կրկին Երրորդ Հայքն է նշված, մինչդեռ Երկրորդ Հայքը բերված է այս հատվածի վերջին պարբերությունում (Saint-Martin M. J., Mémoire historique et géographiques sur l'Armenie, t. II, Paris, 1819, էջ 354):

163. «Աշխարհացոյց»-ի աղբյուրներն են Կղավդիոս Պտղոմեոսի և Պապոս Աղեքսանդրացու (մոտ.320-380 թթ.) երկերը և ավելի հին քարտեզագրական և պատմաաշխարհագրական նյութերը (Strabo, XI. 12. 3; Ptol., V. 6. 12 7 և այլն):

164. Փոքր Հայքը հիշատակվում է նաև Չորրորդ Հայքի Գավրեք գավառի տեղադրության կապակցությամբ. «Գաւրէք գաւառ, ընդ որս եկեալ Արածանի խառնի յԵփրատ ի քաղաքն Լուսաթառիճ, եւ երթալով զմտիւք՝ ելանէ ի սահմանս Փոքր Հայոց, յելից Մելիտինէ» (տես Երեմյան Ս. նշվ. աշխ. էջ 105, 107):

165. ՎՄ № 1245 ձեռագրի «որ արդ կոչին Առաջին Հայք» արտահայտությունը, եթե գրչական ընդմիջարկում չհամարվի, ապա անհրաժեշտ կլինի այսպես բացատրել, որ հակասություն չստեղծվի մյուս Հայքերի մասին եղած հաղորդումների հետ:

166. Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 18:

167. Նույն տեղում:

168. Նույն տեղում: Այս կապակցությամբ պատմիչը Թեոդոս Ա-ի և Հուստինիանոս Ա-ի անունները չի հիշատակել: Այս կայսրերին նա այլ առիթով է հիշատակել (նույն տեղում, էջ 49-50, 52, 55, 62):

169. Այնուհետև Դրասխանակերտցին ամփոփել է. «Այս մինչեւ ցսահմանս բնիկ տէրութեան իւրոյ (Արամի- Է.Դ.): Իսկ զսեպհական եւ զբնիկ աշխարհ իւր համատարած զսա Մեծ Հայք անուանէ» (նույն տեղում, էջ 18): Ինչպես երևում է, Դրասխանակերտցու ձեռքին եղել է Խորենացու երկի Երրորդ և Չորրորդ Հայքերին վերաբերող ընդմիջարկություններ պարունակող ձեռագրական օրինակը, որտեղ առաջացած տեքստային հակասությունը փոխանցվել է Դրասխանակերտցու երկին:

170. Հուստինիանոս Ա-ի Չորրորդ Հայքը (կենտրոնը Մարտիրուպոլիս) բացի Նփրկերտ գավառից ընդգրկում էր նաև վերոհիշյալ ինքնավար հայկական իշխանությունների մնացած տարածքը:

171. Հովհաննես Դրասխանակերտցի էջ 68: Եթե ընդունենք, որ վերը Դրասխանակերտցին Չորրորդ Հայքը նշել էր այն ընդգրկմամբ (համապատասխան Մավրիկիոսի «այլ Չորրորդ Հայքի»), ինչպես բերվում է «Աշխարհացոյց»-ում, ապա վերջին հատվածում նշված Չորրորդ Հայքը կհամապատասխանի Մավրիկիոսի կազմավորած «Վերին Միջագետք կամ Չորրորդ Հայք» նահանգի (կենտրոնը Ամիդ) հյուսիս-արևմտյան մասին: Եթե այդպես է, ուրեմն՝ Մարտիրուպոլիսը որպես այդ մասի կենտրոն հիշատակելուց երևում է, որ Դրասխանակերտցին, թերևս, կրկին միահյուսել է Հուստինիանոս Ա-ի և Մավրիկիոսի կազմավորած նահանգների մասին եղած տեղեկությունները: Բ. Հարությունյանը, քննադատորեն մոտենալով (Հարությունյան Բ. Հ., «Աշխարհացոյց»-ը և չորս Հայքերի խնդիրը, էջ 26) իմ կարծիքին Դրասխանակերտցու հաղորդումների կապակցությամբ, ուշադրություն չի դարձրել այն հանգամանքի վրա, որ խոսքը ինչպես

Հուստինիանոս Ա-ի կազմավորած Չորրորդ Հայքի, այնպես էլ Մավրիկիոսի՝ «այլ Չորրորդ Հայք» և «Վերին Միջագետք կամ Չորրորդ Հայք» նահանգների մասին է:

172. Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 106:

173. Адонц Н., նշվ. աշխ., էջ 234-235:

174. Նույն տեղում, էջ 234, ծան. 1: Համմտ. Ինճիճեան. Ստորագրութիւն հին Հայաստանեայց. Վենետիկ, 1822, էջ 37: Հովհաննես Դրասխանակերտցու այդ հաղորդումը առավել ճիշտ է թարգմանել Մ. Սեն-Մարտենը (Jean VI Catholicos. Histoire d'Armenie. Paris, 1841, էջ 58):

175. Georgii Cyprii Descriptio Orbis Romani. Edit. praefatus est commentario instruxit H. Gelzer, Lipsiae: In aedibus B. G. Teubneri. 1890, էջ LVII- LVIII, համմտ. Goubert P., նշվ. աշխ., էջ 296:

176. Malalae Chronographia, էջ 427:

177. Mansi J. D. Sacrorum conciliorum nova et amplissima collectio, vol. 11, Graz-Austria, 1960, XI. 992:

178. Georg.Cypr., էջ XV. Է.Հոնիգմանը, հետազոտելով Descriptio-ն և Notitia-ն երեք տարբեր ձեռագրեր է զանազանել. 1) «խմբագրի»՝ հայ Բարսեղ Իալիմբանացու (որը Ծոփքից էր), որը լավ գիտեր Հայաստանը և ապրել էր IX դ., 2) հեղինակի՝ Գեորգ Կիպրացու, որը գրել է մոտ. 600 թ., 3) V դարի կեսերի մի աղբյուրի (Le Synekdèmos d'Hiéroclès et l'opuscule Géographique de Georges de Chypre. Texte. Introduction. Commentaire et cartes par E. Honigmann, Bruxelles, 1939, էջ 49): Նա համաձայն էր Ա. Ջոնսի դիտողությունների հետ, որոնք ապացուցում են նրա տեսակետը՝ 527/8 թ. կազմված Synekdemos-ի որպես Descriptio-ի հիմնական աղբյուրի մասին: Սակայն Է. Հոնիգմանը համաձայն չէր Ա. Ջոնսի հետ, որը 527-533 թթ. համարում էր Գեորգ Կիպրացու Descriptio-ի կազմման ժամկետը, ելնելով այն հանգամանքից, որ Հուստինիանոսը արևմուտքում նվաճումները սկսել էր 533 թ. (տես История Византии, հ. I, М., 1968, էջ 301), ինչպես նաև՝ Descriptio-ում չէին արտացոլվել Հուստինիանոսի վարչատարածքային վերակազմությունները: Ի տարբերություն Հ.Գելցերի, որը Բարսեղ Իալիմբանացու Notitia-ն թվագրում էր Միքայել II (820-829) կամ Թեոփիլոսի (829-842) թագավորության տարիներով (Georg.Cypr., էջ XV), Է. Հոնիգմանը նշել է 886 թ. (Honigmann E. Die Notitia des Basileios von Ialimbana.-Byzantion, t. IX, 1934, էջ 222): Իր աշխատության երկրորդ հրատարակությունում Ա. Ջոնսը դրական է գնահատել Է. Հոնիգմանի հետազոտությունները Հիերոկլեսի, Գեորգ Կիպրացու և Բարսեղ Իալիմբանացու վերաբերյալ (Jones A., The Cities of the Eastern Roman Provinces. Second edit., Oxford, 1971, էջ 521):

179. Համմտ. Դազման (տես Honigmann E., Die Ostgrenze des Byzantinischen Reiches von 363 bis 1071, Bruxelles, 1935, էջ 60):

180. Mansi, XI. 992:

181. Գելցեր Հ., նշվ.աշխ., էջ 23, համմտ. Адонц Н., նշվ. աշխ., էջ 234, Honigmann E. Die Notitia... էջ 215, 216:

182. Ἐπαρχία Μεσοποταμίας ἄνω ἤτοι Δ Ἀρμενίας Ἀμιδα μητρόπολις (George de Chypre, ed. E. Honigmann, էջ 64):

183.Նույն տեղում, էջ 65:

184. Ὧ δε πληροῦται ἡ Μεσοποταμία καὶ ἔστιν ὁ Ταῦρος καὶ ἡ κλεισοῦρα Βαλαλείσων, καὶ ἄρχεται κατὰ τὸ ἀρκτῶν μέρος ἡ Μεγάλη Ἀρμενία (Georg. Cypr., ed. H. Gelzer, էջ 48):

185. Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 68:

186. Թովմա Արծրունի, էջ 297: Է. Հոնիգմանը ենթադրում էր, որ Արզանենան, ըստ Գեորգ Կիպրացու, իրենից ներկայացնում էր մի նեղ սահմանային շրջան,

այլ ոչ թե ամբողջ Աղձնիք (Արզանենա) նահանգը, որը հասնում էր մինչև Բաղեշ (Honigmann E., Die Notitia... էջ 214): Դրանով իսկ Βαλαλείσων-ի մասին հատվածը, որը հետևում է Արզանենեին վերաբերող ցուցակին, գիտնականը համարում էր IX դարի ընդմիջարկություն (George de Chypre, ed. E. Honigmann, էջ 65): Սակայն, նույնիսկ նման մեկնաբանության դեպքում, կարելի է ենթադրել, որ այդ հատվածը բերված է այդ եպարքիայի հյուսիսային սահմանը ավելի մանրամասն ներկայացնելու նպատակով: Առավել ևս, երբ այնտեղ խոսքը գնում է Տավրոսի լեռնաշղթայի այդ մասի հայ բնակչության՝ Χοθαΐται - խութեցիների և Σανασουνίται - սասունցիների, ինչպես նաև Մարաթուք (Μαραθκέν) լեռնագագաթի մասին (Georg. Cypr., ed H. Gelzer, էջ 48):

187. Honigmann E., Die Notitia... էջ 219.

188. Georg. Cypr., ed H. Gelzer, էջ 175-176.

189. Honigmann E., Die Ostgrenze... էջ 31-32, karte I.

190. Ադոնց Հ., նշվ. աշխ., էջ 47:

191. Georg.Cypr., ed H. Gelzer, էջ 47-48.

192. Ադոնց Հ., նշվ. աշխ., էջ 9:

193. Tomaschek W., Sasun und das Quellengebiet des Tigris. Sitzungsber. Akad. Wien. Bd. CXXXIII(IV). 1895, էջ 15. Markwart J. Südarmenien... էջ 423, Honigmann E., նշվ. աշխ., էջ 30-31:

194. Georg. Cypr., էջ 47: Հմմտ. սեպագիր աղբյուրներում հիշատակող Արմե երկրի անվան հետ: Արմե երկիրը տեղադրված էր Քաղիրթ գետի ավազանում (տես Երեմյան Ս. Տ., Հայերի ցեղային միությունը Արմե-Շուպրիա երկրում, - ՊԲՀ, № 3. 1958, էջ 59-72):

195. Georg. Cypr., էջ 167:

196. Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 89, 114:

197. Ադոնց Հ., նշվ. աշխ., էջ 10.

198. Honigmann E., Die Ostgrenze... էջ 31, 32.

199. VI դարի վերջում Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած մի ապստամբության մասին Սեբեոսը գրել է. «Ապստամբէին դարձեալ ի կողմանցն Յունաց սեպուհքն Վահևունիք - Սամուէլն զոր ասացի եւ Սարգիս եւ Վարազ Ներսէհ եւ Ներսէս եւ Վստամ եւ Թէոդորոս Տրպատունի... Եւ գնացին յերկիրն ամուր Կորդուաց. եւ կամեցեալ զամուրսն զայն ունել: Ապա գիտ նոցա լինէին զաւրն Յունաց, Հերակղ զաւրավար եւ Համազասպ Մամիկոնեան. եւ նոցա հասեալ մերձ յամուրն՝ անցին զգետովն՝ որ կոչի Ջերմայ ընդ կամուրջն, որ անուանեալ կոչի Դանիէլի կամուրջ, եւ ի բաց ընկեցին զկամուրջն եւ ամրացեալք յանձուկն պահէին զտեղի կամրջին» (Սեբեոս, էջ 89): Այստեղից հետևում է, որ բյուզանդապարսկական սահմանը Հայաստանի հարավային մասում անցնում էր Տիգրիս գետի ձախ վտակ Ջերմ գետի ստորին հոսանքի աջ ափով:

200. «Աշխարհացոյց»-ի Նիկերտ գավառի կազմում, ինչպես նշել է Հ. Հյուբշմանը, հանդես էր գալիս Անգեղ-տունը, որի անունը չի նշված նաև Descriptio-ում (հմմտ. Jones A., նշվ. աշխ., էջ 225): Նկատի ունենանք, որ Աղձնիքը ավելի հին պատմաաշխարհագրական հասկացություն էր, իսկ Վերին Միջագետք նահանգը ընդգրկում էր ավելի մեծ տարածք: Բացի այն, որ Միջագետք Հայոցը եղել է Մեծ Հայքի կազմում, հետագայում Միջագետք անունը կրող հռոմեական նահանգը, որն ընդգրկում էր նաև Հայաստանի հարավ-արևմտյան որոշ գավառներ, ավելի ընդարձակ տարածք էր զբաղեցնում: Միջագետք Հայոցի հարավում գտնվող Օսրոյենեի անջատումից հետո Միջագետք նահանգի կենտրոնը դարձավ Մծբինը, իսկ վերջինիս 363 թ. պարսիկներին անցնելուց հետո՝ Ամիդը: Այդ նահանգի մեջ մտնող Ամիդի, Ծոփքի, Անձիտի, Մարտիրոպոլիսի, Անգեղ-տան և

Ծոփանենայի եպիսկոպոսները մասնակցել էին Քաղկեդոնի 451 թ. ժողովին (Mansi, VII, 403, Адонц Н., նշվ. աշխ., էջ 39, 363):

201. Նաև՝ «զՉորրորդ Հայս» (Սեբեոս, էջ 165,171):

202. Գեորգ Կիպրացու տեքստի «այլ Չորրորդ Հայք»-ին (Ἐπαρχία Δ Ἀρμενίας ἄλλης, Δαδίμων νῦν μητρόπολις) վերաբերող ցուցակից (Georg. Cypr., ed H. Gelzer, էջ 48, 49) Է. Հոնիգմանը միայն թողել է Դադիմ, Կիթառիճ, Ծոփք, Անձիտ, Բալահովիտ, Հաշտեանք անվանումները (George de Chypre, ed. Honigmann E., էջ 65), նշելով, որ դրանք Չորրորդ Հայքի մեջ մտցրել էր Հուստինիանոս Ա-ը, իսկ «այլ Չորրորդ Հայք»-ը, որի կազմի մեջ մտնում էին մնացյալ վայրերը, ըստ գիտնականի կարծիքի, ստեղծել էր VII դ. վերջում Հուստինիանոս Բ-ը (685-695, 705-711): Այսպիսի խմբագրությունը Է.Հոնիգմանը կատարել է, ենթադրելով, թե այդ դուրս թողնված տողերը պատկանել են Հայ Բարսեղին: Եվ ընդանրապես երկու «Չորրորդ Հայք»-երի հիշատակությունը նրա կարծիքով դժվարությունների է հանգեցնում (Honigmann E., Die Notitia... էջ 216-217): Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ «Աշխարհացոյց»-ի մեջ համապատասխան գրանցումները կատարվել են Հուստինիանոս Բ-ի գահակալությունից ավելի վաղ, այնպես որ «Յուստինիանա» անվանումից անկախ, VI դարի վերջից Հայաստանում արդեն գոյություն ուներ «այլ Չորրորդ Հայք» նահանգը: «Աշխարհացոյց»-ը իր մեջ պարունակում է «այլ Չորրորդ Հայքի» տարածքին վերաբերող տեղեկություններ, չնայած դրանք տրված են Չորրորդ Հայք ընդհանուր անվան տակ, առանց «այլ» բառի:

203. Հ. Բարթիկյանը իր մի հոդվածում գրել է, որ Չորրորդ Հայքը գոյություն ուներ դեռևս մինչ Հուստինիանոս Ա-ի ռեֆորմները. «Ծոփք և Անգեղտուն՝ Չորրորդ Հայքի գավառներ, որը նաև 428 թ. հայ Արշակունիների անկումից հետո անկախ էր Բյուզանդիայի կազմում և ուներ իր սեփական ազգային զինված ուժերը: Ինչպես գրում է Պրոկոպիոս Կեսարացին, Չորրորդ Հայքի նախարարների-սատրապների զորքերը կազմված էին ոչ թե հռոմեացիներից, այլ հայերից: Չորրորդ Հայքում այդպիսի վիճակ գոյություն ունեցավ մինչև Հուստինիանոս Ա-ի ռեֆորմները, երբ սատրապների հայկական զորքերը ցրվեցին և փոխարինվեցին բյուզանդականով... (Бартикян Р. М., Разрешение проблемы мардаитов, - ԼՀԳ, 1983, № 1, էջ 76-77): «Հայ ժողովրդի պատմության» Բ հատորի իր կողմից գրված XI գլխում Հ. Բարթիկյանը վերադարձել է Ն. Ադոնցի տեսակետին Հուստինիանոս Ա-ի կողմից Չորրորդ Հայքի կազմավորման մասին:

204. Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 68:

205. Գելցեր Հ., Սկզբնավորութիւնք բիւզանդական բանակաթեմերու դրութեան, թարգմ. Գ. Գարանֆիլեան,Վիեննա, 1903: Նա Երկրորդ Հայքն էլ է համարել Դիոկղետիանոսի ժամանակվա արգասիք (էջ 27): Այնինչ, ինչպես վերը տեսանք, Երկրորդ Հայքը ստեղծվել էր 386 թ.: Ա. Մուշեղյանը կարծիք է հայտնել, որ հնում գոյություն ունեցած «Առաջին Հայքը» («Պռոտին Արմենիան»), որը Կապադովկիան էր, III դ. վերջում գրավեց Գալերիոս Մաքսիմինոսը և անվանեց «Առաջին և Երկրորդ Հայք» և այստեղ խոսքը ոչ թե Փոքր Հայքի, այլ Հռոմեական Հայաստանի մասին է» (Ա. Մուշեղյան, նշվ. աշխ., էջ 53-54): Սակայն հետազոտողը մի քանի տող հետո «Երկրորդ Հայքը» նույնացրել է Փոքր Հայքի հետ, գրելով. «371/2 թ. ձմռանը Վաղես կայսրը Երկրորդ (Փոքր) Հայքը տրոհելով երկու մասի՝ Առաջին Հայքը խորամանկորեն փոխադրեց դեպի արևելք՝ Սեբաստիայի տարածքը...» (նույն տեղում): Ընդունելով, որ, ըստ Մովսես Խորենացու, Արամի ժամանակներում Հայոց պետության սահմանները հասնում էին մինչև Մաժաք, և քանի որ հռոմեական բաժանումները շատ ավելի ուշ ժամանակաշրջանի իրողություն էին, ուստի դրանք չպետք է շփոթել հնագույն տեղեկությունների հետ:

206. Յուբշման Հ., նշվ.աշխ., էջ 38, Goubert P., նշվ. աշխ., էջ 296.

207. Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 68: Այս մասը դեռևս մինչ Հուստինիանոսի վերափոխությունները կոչվում էր «Մեծ կամ Ներքնագույն (Ներքսագոյն) Հայք»: Այն համապատասխանում էր «Աշխարհացոյց»-ի Բարձր Հայքին: Հուստինիանոսը «Ներքնագույն Հայք» անվանեց նաև նորակազմ «Առաջին Հայք» նահանգը (կենտրոնը՝ Հուստինիանուպոլիս):

208. Նույն տեղում: Համմտ. Վարդան Վարդապետ, էջ 59:

209. Հյուբշման Հ., նշվ.աշխ., էջ 38: Առանց Հ.Հյուբշմանի աշխատությանը հղելու նմանօրինակ միտք է արտահայտել նաև Պ. Գուբերը (Goubert P., նշվ. աշխ., էջ 296): Դրասխանակերտցու երկի ռուսերեն թարգմանությունում խնդրո առարկա նախադասությունը ոճական խմբագրման է ենթարկվել. «А. Каппадокию, коей столица Кесария и которая звалась Второй, он называет Третьей Арменией и превращает ее в епархию» (Иоаннес Драсханакертци. История Армении. Перев. с древнеарм., вступ. статья и коммент. М. О. Дарбинян-Меликян, Ереван, 1986, էջ 80):

210. Պողեմոս Սիլվիոսի (V դ. առաջին կես) Laterculus–ում Պոնտական դիոցեզում ի թիվս 8 նահանգների նշված են Փոքր Հայքը և Մեծ Հայքը: Ըստ Կ. Գյուտերբոգի. «Հեղինակը տակավին իրեն ոչ ընտանի Առաջին եւ Երկրորդ Հայք բաժանումը սխալ ներկայացուցած է»: Նա կարծում էր, որ Վերոնյան օրինագրի (ենթադրվում է կազմված 297թ). գավառների ցուցակում եղած՝ «Փոքր Հայք արդ եւ Մեծն յաւելեալ» հիշատակությունը, չպատկանելով նախնական բնագրին, «կը պարտին հետագայ խմբագրի կամ գրչի մը: Ասիկայ նոյն յաւելուածով կամ Մեծ Հայոց իրօք կատարուած գրաւումը նշանակել ուզած է՝ ...կամ այս անորոշ բացատրութեամբ՝ նոյն միջոցին Փոքր Հայոց Առաջին եւ Երկրորդ Հայք գաւառներուն բաժանուիլը կակնարկէ»: Ամեն դեպքում, Կ. Գյուտերբոգը Առաջին և Երկրորդ Հայք գավառների առաջացումը դիտել է որպես Թեոդոս Ա-ի գործունեության արդյունք (Գյուտերբոգ Կ., նշվ. աշխ., էջ 34, 36-38): Ն. Ադոնցը գտնում էր, որ Մեծ Հայքին վերաբերող կասկածելի հավելագրումը, չնայած զուրկ է պատմական հիմքից, սակայն Վերոնյան ցուցակում, այն կարող էր 298 թ. քաղաքական իրադարձության մասին ակնարկող նշանակություն ունենալ, երբ հայ Արշակունիների գահը Մեծ Հայքում վերականգնվեց հռոմեացիների աջակցությամբ: Վերոնյան ցուցակի այդ նշումը, ըստ Ն. Ադոնցի, ընդօրինակվել էր Սիլվիոսի կողմից, քանի որ այն համապատասխանում էր այն նոր վիճակին, որը ստեղծվել էր IV դարի ավարտին, երբ Հայաստանը երկու մասի էր բաժանվել, որոնցից մեկը անցել էր հռոմեացիներին (Адонц Н., նշվ. աշխ., էջ 85-88):

211. Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 18:

212. Նույն տեղում, էջ 68:

213. Mansi, XI. 644, 649, 672, 676, 689: Կիթառիճի եպիսկոպոսի ստորագրությունում նշված է Առաջին Հայքը (692 թ. Հինգվեցյան ժողով, տես Mansi, XI.1005): Ըստ Ղ. Ինճիճյանի, ձեռագրական վրիպակը սխալի է հանգեցրել, քանի որ իրականում խոսքը եղել է Չորրորդ Հայքի մասին (Ինճիճյան Ղ., Ստորագրութիւն հին Հայաստանեայց, էջ 175, համմտ. Գելցեր Հ., նշվ.աշխ., էջ 26-27): Ռ. Գրուսեն գրել է, որ «Առաջին Հայք» անվանումը տրվել էր Մալաթիայի (Մելիտենե) տարածքին, որը մինչ այդ մտնում էր Երրորդ Հայքի կազմի մեջ, իսկ վերջինս վերացվեց և փոխարինվեց «Մեծ Հայք»-ով, որն իր մեջ էր ընդգրկում վերին Եփրատի ավազանը (Grousset R., նշվ. աշխ., էջ 255): Ռ. Գրուսեն, քանի որ չի գրել Մավրիկիոսի կողմից «Մասն Մեծ Հայոց» և «Մեծ մասն Մեծ Հայոց» նահանգների՝ Հուստինիանոսի Առաջին Հայքից ստեղծման մասին, ուստի այդ երկու նահանգները ներկայացրել է որպես մեկ՝ «Մեծ Հայք» անունը կրող նահանգ, որը փոխարինել էր «Երրորդ Հայք»-ին: Աղբյուրի հաղորդումների նման մեկնաբանությունը դժվարությունների առջև է կանգնեցրել հետազոտողին Արևմտյան Հայաս-

տանի VI դ. վերջի վարչաքաղաքական վիճակը ուսումնասիրելիս:

214. Georg. Cypr. ed H. Gelzer, էջ 2, 14: Ա. Տեր-Ղևոնդյանը գրել է Մավրիկիոսի վերափոխությունների մասին (Тер-Гевондян А., նշվ. աշխ., էջ 18, 20, 30, 153) և շարունակել է «Երրորդ Հայք» անվանել այն տարածքը, որը Մավրիկիոսը նշել էր որպես «Առաջին Հայք»: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Կոստանդին Ծիրանածինի «Բյուզանդական արքունիքի արարողությունների մասին» երկում Մելիտենեն, ըստ Կիպրոսի արքեպիսկոպոս Եպիփանի (310-403)՝ պատրիարքների և մետրոպոլիտների աթոռների թվարկած ցուցակի (հետագայում խմբագրված) հիշատակված է որպես Առաջին Հայքի կենտրոն (ιγ΄. ἐπαρχίας Ἀρμενίας α΄ ὁ Μελιτίνης, տես Const. Porph., De cerim., II. 54., էջ 791-792):

215. Ն. Ադոնցին հայտնի էր, որ Լևոն Ա-ի թագավորության տարիներն էին 457-474 թթ. (նշվ. աշխ., էջ.145), այնուամենայնիվ նշված փաստաթուղթը նա թվագրում է 453-ով (նույն տեղում, էջ 90) և նույնիսկ 452 թվականով (նույն տեղում, էջ 201): Ն. Գարսոյանը նշել է, որ եպարքիաների պատասխան ուղերձները ընդունված է թվագրել 457 կամ 458 թվականով (Sellers R. V. The Council of Chalkedon, London, 1961, էջ 274, ծան. 5), քանի որ Լևոնը գահ բարձրացավ 457 թ. (Adontz N., նշվ. աշխ., էջ 431, ծան. 1):

216. Ն. Ադոնցը եպիսկոպոսությունների թվարկությունը կատարել է այս կարգով (պատասխան ուղերձում հաջորդականությունը համապատասխանում է համարներին), որպեսզի պահպանի համապատասխանությունը մյուս ցուցակների հետ:

217. Ն. Գարսոյանը նշել է, որ այս հատվածը վերցված է Բարսեղ Հայի Notitia–ից, որտեղ այս եպիսկոպոսությունները թվարկված են Երկրորդ Հայքի կազմում (Adontz N., նշվ. աշխ., էջ 405, ծան. 43a): Գեորգ Կիպրացու և Բարսեղ Հայի տեքստերի տարբեր ժամանակներում ստեղծված լինելու հարցում Ն. Գարսոյանը հետևել է Վ. Լորանի (Laurant V., La Notitia de Besile l'Armenien. Echos d'Orient, XXXIV, Paris, 1935, էջ 439-472) և Է. Հոնիգմանի (Honigmann E., նշվ. աշխ., էջ 217-222) տեսակետներին:

218. Բարսեղ Հայի Notitia–ում եպարքիաների թվարկման ցուցակում Երկրորդ Հայքը Սեբաստիա մայրաքաղաքով հիշատակված է 11-րդը, իսկ Առաջին Հայքը Մելիտենե մայրաքաղաքով՝ 13-րդը: Իսկ երբ այդ եպարքիաների ցուցակները իրենց եպիսկոպոսություններով առանձին են բերվում, Երկրորդ Հայքը Սեբաստիա մայրաքաղաքով հիշատակված է 10-րդը, իսկ Հայքը (այս անգամ առանց կարգահամարի, սակայն պարզ է, որ խոսքը Առաջին Հայքի մասին է) Մելիտենով՝ 12-րդը: Կարգահամարի նվազումը մեկով չպետք է շփոթության մեջ գցի: Առաջինի դեպքում.

ζ̄ ἐπαρχία Βιθυνίας	ὁ Νικομηδείας.
η̄. ἐπαρχία τῆς αὐτῆς	ὁ Νικαίας
θ̄. ἐπαρχία τῆς αὐτῆς	ὁ Χαλκηδόνος...

ինը (θ̄) համարի տակ հիշատակված Χαλκηδόνος կենտրոնով եպարքիան, բաց է թողնված յուրաքանչյուր եպարքիայի եպիսկոպոսությունների մանրամասն թվարկման ցուցակում: Համապատասխանաբար՝ վերջինում հաջորդ եպարքիաներից յուրաքանչյուրի համարը մեկով պակասել է: Դրանից հետևում է, որ ընդհանուր ցուցակի.

ιᾱ ἐπαρχία Ἀρμενίας β̄	ὁ Σεβαστείας
. . .	
ιγ̄. ἐπαρχία Ἀρμενίας ᾱ	ὁ Μελιτινῆς

(Georg. Cypr., ed H. Gelzer, էջ 2, համմտ. Const. Porph., II. 54)

համապատասխանում է՝

Ī. Ἐπαρχία Ἀρμενίας B̄ ὁ Σεβαστείας

. . .

ĪB̄. Ἐπαρχία Ἀρμενίας ὁ Μελιτινῆς

(Georg. Cypr., ed H. Gelzer, էջ 13, 14):

Իսկ Nova Taktika-ում եպարքիաների ցուցակի խնդրո առարկա համարները համապատասխանում են Notitia-ի համարներին, սակայն Ἀρμενία-ները թվարկվում են առանց կարգահամարների.

Ī Ā. Τῇ Σεβαστεία τῆς Ἀρμενίας

. . .

Ī B̄. Τῇ Μελιτινῇ τῆς Ἀρμενίας (Georg. Cypr., ed H. Gelzer, էջ 66, 67)

219. Адонц Н., նշվ. աշխ., էջ 166, 172.

220. Mansi, XI. 653, 689, 987, 989,: Հերակլեոպոլիսը նույնպես հիշատակված է Երկրորդ Հայքի կազմում (նույն տեղում, XI. 648, 693):

221. Պ. Գուբերը Հովհաննես Դրասխանակերտցու հաղորդումը դիտում է ոչ թե Մավրիկիոսի, այլ Հուստինիանոս Ա-ի վերափոխությունների տեսանկյունից: Տրապիզոնը, ըստ նրա, ոչ թե նոր կազմակերպված նահանգի մայրաքաղաքն էր, այլ մի քաղաք, որը Կերասունտի հետ միասին Պոնտոսի կազմից անցավ Հուստինիանոս Ա-ի ստեղծած Առաջին Հայքի մեջ: Հետազոտողը գրել է. «Լեոնտոպոլիս, Հուստինիանուպոլիս-Թեոդոսուպոլիս» (Goubert P., նշվ. աշխ., էջ 296), ինչից հետևում է, որ եթե նա ծանոթ լիներ Ն. Ադոնցի «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» աշխատությանը, ապա կիմանար, որ «Հուստինիանուպոլիսը Ջիմին (Ցումին)-ն էր, Լեոնտոպոլիսը՝ Վժանը, իսկ Թեոդոսուպոլիսը՝ Կարինը» (Адонц Н., նշվ. աշխ., էջ 145): «Մասն Մեծ Հայոց»-ը Կ. Յուզբաշյանը անվանում է «Մեծ Հայք», և այդ պատճառով նրա աշխատության մեջ երկու տարբեր նահանգներ անվանվել են «Մեծ Հայք» (Юзбашян К., Армянские государства... էջ 28):

222. Mansi, XI. 645, 993, 997: Հուստինիանուպոլսի եպիսկոպոսի ստորագրությունում հիշատակված է Եկեղյացը (Ակիլիսենե) (նույն տեղում, XI. 645), որը նույնպես պետք է մտներ «Մեծ մասն Մեծ Հայոց» նահանգի կազմի մեջ VI դարի վերջում: Վ. Իսկանյանը, հետևելով Պ. Գուբերին, Դրասխանակերտցու հաղորդումները «Մասն Մեծ Հայոց» և «Մեծ մասն Մեծ Հայոց» նահանգների մասին սխալ է համարել (Իսկանյան Վ., Հայ-բյուզանդական հարաբերությունները IV-VII դդ., էջ 357-359): Նշենք, որ ոչ մի լուրջ փաստարկ չի բերված Դրասխանակերտցու այս հաղորդումները ժխտելու համար:

223. Ինչպես նշել է Ն. Գարսոյանը, Բարսեղ Հայի Notitia–ում երրորդ սյունակի եպիսկոպոսությունները թվարկված են «Հայք» անվան տակ, «թեպետ դրանցից ակնհայտ երևում է, որ դրանք Երկրորդ Հայքի եպիսկոպոսություններն են հանդիսանում» (Adontz N. նշվ. աշխ., էջ 405): Սակայն Բարսեղ Հայի խմբագրած տեքստում խոսքը գնում է, իրոք, Առաջին Հայքի մասին՝ Մելիտենե կենտրոնով (Georg. Cypr. ed H. Gelzer, էջ 2):

224. Меликсет-Бек Л., Из истории армяно-византийских отношений («Маврикиевы легенды» в памятниках культуры древней Армении), ВВ, h. XX, 1961, էջ 64-74:

225. Վաղ միջնադարում Հայաստանում կայսրությունը կարողացավ առավելագույն տարածքների տիրանալ Մավրիկիոսի օրորք:

226. Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 68: «Ասորեստանի» սահմանի հիշատակությունը այստեղ, թերևս պետք է դիտվի Թովմա Արծրունու երկի հետ հանդես եկող Անանունի գրվածքի լույսի տակ: Վ. Իսկանյանը Մավրիկիոսի ստեղծած «Մեծ Հայք» նահանգը շփոթել է Հուստինիանոս Ա-ի կազմած նույնանուն վարչական միավորի հետ և այնուհետև «տարօրինակ ու անհասկանալի» համարել Դրասխանակերտցու վկայությունը (Իսկանյան Վ., Հայ-բյուզանդական հարաբերությունները IV-VII դդ., էջ 359-360): Այնինչ դրանք միևնույն անունը կրող տարբեր ռազմա-վարչական միավորներ էին:

227. «Ներքսագոյն Հայքի» կապակցությամբ Դվինի հիշատակությունը մեկնվել է՝ թե Դվինը մտնում էր այդ նահանգի մեջ (Юзбашян К., Армянские государства... էջ 28): Սակայն, ըստ պատմիչի, «Ներքսագոյն Հայքը» բյուզանդական նահանգ էր, իսկ Դվինը բյուզանդա-պարսկական սահմանից արևելք էր գտնվում: Ուրեմն, Դրասխանակերտցու հաղորդումը Դվինի մասին պետք է այնպես հասկանալ, որ «Ներքսագոյն Հայքից» արևելք գտնվում էր Դվին քաղաքը իր շրջանով՝ Արևելյան Հայաստանում:

3. «Մավրիկիոսի դոկտրինան» և Հայոց զորքերի ապստամբությունները

1. Սեբեոս, էջ 86: Ն. Ադոնցը այս կապակցությամբ դիպուկ նկատել է. «Թագակիր քրիստոնյայի այս ցինիկ առաջարկը փայլուն կերպով պատկերում է բյուզանդական պալատի այն իրոք նենգ և հրեշավոր քաղաքականությունը, որից տուժեց ոչ միայն Հայաստանը, այլև որի համար թանկ վճարեց ինքը՝ կայսրությունը» (Адонц Н., նշվ. աշխ., էջ 207): Ռ. Գրուսեն նշել է, որ Մավրիկիոսը անշեղորեն վարում էր Հայաստանը հայերից լիցքաթափելու և նրանց Եվրոպա տեղափոխելու քաղաքականություն (Grousset R., նշվ. աշխ., էջ 258):

2. Նույն տեղում, էջ 86-87: Այս ժամանակաշրջանի հայ-բյուզանդական հարաբերությունները Ա. Ստրատոսը դիտում է կայսրության նվաճողական քաղաքականությանը դրական գնահատական տալու միտումով և, կարելի է ասել, Թեոփիլակտոս Սիմոկատայի երկի գաղափարական ուղղվածության ոգով: Ա. Ստրատոսի շարադրանքում ակնհայտ է կանխակալությունը Հայաստանի այդ ժամանակաշրջանի պատմության հանդեպ. նա միակողմանի է գնահատում կայսրության քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ՝ վերջինիս ներկայացնելով նվաճման օբյեկտ, որը միայն որպես այդպիսին էր հետաքրքրություն ներկայացնում հակամարտող տերությունների՝ Բյուզանդիայի և Պարսկաստանի համար: Նույնատիպ գնահատականով Ստրատոսը հանդես է եկել նաև Հայ եկեղեցու հանդեպ (Stratos A., նշվ. աշխ., էջ 21-23):

3. Խոսրովը, իհարկե, ուրախ էր այսպիսի շրջադարձի համար և շտապեց սիրաշահել հայ նախարարներին տարբեր նվերներով և պատիվներով. «Արդ՝ իբրեւ տեսանէր թագաւորն Պարսից զմարդկան փախուստ ի կայսերէն՝ արձակոյր ի Հայս զՎասպուրականն համարակարն հանդերձ գանձու բազմաւ եւ մեծամեծ պատուովք. զի այնպէս նուաճեալ ածցէ զնոսա ի ծառայութիւն իւր. եւ գնայր համարակարն ի Հայս, եւ ընդ նմա գանձ ուղտուք բազմաւք» (Սեբեոս, էջ 87):

4. Նույն տեղում:

5. Նույն տեղում, էջ 87:

6. Նույն տեղում, էջ 88: Ինչպես նշել է Ռ. Գրուսեն, երկու թագավորների

դաշնակցությունը այս անգամ ուղղված էր ապստամբների դեմ (Grousset R., նշվ. աշխ., էջ 258):

7. Սեբեոս, էջ 88:

8. Նույն տեղում, էջ 89, 90:

9. Նույն տեղում, էջ 90-91: Վ. Իսկանյանը, ելնելով Սեբեոսի, Արսեն Սափարացու (տես Մելիքսեթ-Բեկ Լ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 43), Կոնստանդնուպոլսի պատրիարք Փոթի (Фотия святейшего архиепископа Константинопольского О гробе Господа нашего Иисуса Христа (написанное между 867 и 878 гг.) и другие малые его творения на греческом и армянском языках, переведенные Г. С. Дестунисом и Н. Марром. - ПС, т. XI, 1893, էջ 182) և այլ աղբյուրների հաղորդումներից, նշել է, որ այդ իրադարձությունը պետք է տեղի ունեցած լիներ Վահրամ Չուբինի ապստամբության ճնշվելուց, Խոսրով Փարվեզի գահ բարձրանալուց և Մուշեղ Մամիկոնյանի Կոնստանդնուպոլսի եկեղեցական ժողովին մասնակցելուց հետո: Հետազոտողը համաձայն է Ք. Պատկանյանի այն կարծիքի հետ, ըստ որի Մուշեղ Մամիկոնյանը, հավանաբար, սպանվել էր 600 թ. Յատրուսի ճակատամարտում (Себеос, 1862, էջ 199, ծան. 134, տես Իսկանյան Վ., Մի էջ հայ-բյուզանդական հարաբերությունների պատմությունից, - ՊԲՀ, № 4, 1960, էջ 149, ծան. 7):

10. Սեբեոս, էջ 92:

11. Նույն տեղում: Վ. Վարդանյանը Սմբատ Բագրատունու այս ապստամբությունը համարել է կայացած 589 թ. (Հայ գրականությունը VII դարում, Երևան, 1970, էջ 10-11): Այնինչ, Սեբեոսը այն հիշատակել է Հայաստանի 591 թ. պարսկա-բյուզանդական բաժանումից հետո տեղի ունեցած իրադարձությունների շարքում:

12. Ինչպես նշել է Ստ.Մալխասյանցը, Սմբատը, փաստորեն, պատվավոր աքսոր էր ուղարկվել Աֆրիկա (Себеос, էջ 160, ծան.. 101): Մի քանի տասնամյակ անց բյուզանդական իշխանությունները այնտեղ աքսորեցին Վարազտիրոցին, իսկ Թեոդորոս Ռշտունին ձերբակալվեց և ուղարկվեց Կոստանդնուպոլիս: Այսպիսով, Հայաստանի հանդեպ կայսրության վարած նվաճողական քաղաքականության ակտիվացման հետևանքով Հայոց պետական գործիչները բռնի ուժով հեռացվում էին հայրենիքից:

Թեոփիլակտոս Սիմոկատան, ինչպես ենթադրվում է, հայերի այս ապստամբության մասին հաղորդել է մինչ Վահրամ Չուբինի գլխավորած ապստամբության մասին խոսելը (Theophyl. Sim. III. 8, 4-8): Գերադասելով Սիմոկատայի հաղորդումը, Հիգինսը այդ ապստամբությունը նշել է կայացած 589 թ., կարծելով, թե Սեբեոսի ժամանակագրությունը ճիշտ չէ (Higgins M., նշվ. աշխ., էջ 38-39): Սակայն ոչ մի հիմք չկա նման կասկածի համար: Իրավացի է Ե. Շտայնը՝ ճիշտ համարելով Սեբեոսին: Նրա հիմնական փաստարկը այն է, որ մինչև 590 թ. Հայաստանը (մեծ մասը - Է. Դ.) պարսիկների գերիշխանության տակ էր գտնվում (Stein E., Studien zur Geschichte des byzantinischen Reiches vornehmlich unter den Keisern Justinianus II und Tiberius Constantinus, Stuttgart, 1919, էջ 129): Կարևոր է հաշվի առնել Սմբատ Բագրատունու ապստամբության դրդապատճառը, որը կարող էր ծագել միայն 591 թ. բաժանումից հետո, երբ Հայաստանի մեծ մասը անցավ Բյուզանդիայի գերիշխանության տակ: Չէ որ միայն դրանից հետո Մավրիկիոսը սկսեց իրականացնել Հայաստանի բյուզանդական մասից հայ զորական ուժի դեպի կայսրության հեռավոր սահմանները տեղափոխման իր ծրագիրը, որը և դրդեց Սմբատին ապստամբել: Կարելի է ենթադրել, որ Թեոփիլակտոս Սիմոկատայի մոտ՝ միահյուսվել են տեղեկություններ հայերի երկու ապստամբությունների մասին, որոնք տեղի էին ունեցել Հայաստանի բյուզանդական տիրապետության տակ անցած մասում: Սակայն մեկը ծագել էր մինչ 591 թ., իսկ

մյուսը՝ դրանից հետո, ուստի առաջինը ծագել էր Բյուզանդական կայսրությանը անցած Արևմտյան Հայաստանի նախկին մասում, իսկ երկրորդը՝ 591 թ. հետո ընդարձակված տարածքում:

13. Սեբեոս, էջ 104-105:

14. Նույն տեղում, էջ 105:

15. Նույն տեղում:

16. «Իսկ զաւրն նոցա որ նստէին ի Սպահան աշխարհին, իբրեւ լուան գեղեալսն՝ ասպատակեալ աւերեցին զերկիրն. առին եւ զգանձն արքունի որ ի տանն համարակարին, որ ի հարկաց ժողովեալ աշխարհին այնորիկ. եւ ճանապարհ կալեալ գնացին յամուրն ի յերկրին Գեղմայ: Եւ զհետ սոցա հասանէին զաւրն պերոզական. զոմանս ի նոցանէ սրով սատակէին, եւ ...ոմանք մազապուր պրծեալ անկանէին յամուր երկիրն Գեղմայ: Եւ իբրեւ անդ ոչ դիպէին Վստամայ՝ ճանապարհ կալեալ գնացին յերկիրն Պարթեւաց, եւ երթեալ կային առաջի նորա» (Սեբեոս, էջ 96): Ինչպես նշել է Ա. Կոլեսնիկովը, Վահրամ Չուբինի և Վստամի ապստամբությունները շատ ընդհանուր գծեր ունեին, իսկ Վստամի սահմանափակ հնարավորությունները գիտնականը բացատրել է Պարսկաստանում ի օգուտ Խոսրով Փարվեզի փոփոխված իրավիճակով և ապստամբների ազգային կազմի խայտաբղետությամբ (տես Колесников А., Иран в начале VII в., էջ 69-70):

17. Ա. Ստրատոսի կարծիքով՝ Սմբատ Բագրատունին փախել էր Պարսկաստան, որպեսզի խուսափեր բյուզանդական զորքերի Դանուբի ափերին ռազմական գործողություններին մասնակցելուց (Stratos A., նշվ. աշխ., էջ 22): Ս. Երեմյանը ենթադրել է, որ Սմբատ Բագրատունին Աֆրիկայից փախել էր Իտալիա և ապա հյուրընկալվել սլավոնական ցեղերի մոտ: Կոստանդին Ծիրանածինի հիշատակած «Սամբատաս» անունով բնակավայրը Ս. Երեմյանը կապել է Սմբատի գործունեության հետ և ենթադրել, որ խոսքը Դնեպրի աջ ափին գտնվող մի թաղամասի մասին է, որը հնագույնն է Կիևում: Վ. Իսկանյանի կարծիքով Սմբատ Բագրատունին Աֆրիկայից փախչում, անցնում է Սասանյան Իրան, ապա՝ Հայաստան (տես Հայ ժողովրդի պատմություն, հ. Բ, էջ 272, ծան 101):

18. Սեբեոս, էջ 96: Патканян К., Опыт истории династии Сасанидов по сведениям, сообщаемым армянскими писателями, СПб, 1863, էջ 60-61, Grousset R., նշվ. աշխ., էջ 261, Колесников А. И., նշվ. աշխ., էջ 70:

19. Այս շրջանները գտնվում էին Կասպից ծովից հարավ և հարավ-արևելք (տես Бартольд В. В. Историко-географический обзор Ирана. Соч. հ. VII, М., 1971, էջ 124, 216-217):

20. Սեբեոսը գրել է. «Կային յաշխարհին յայնմիկ ազգն գերեալք ի Հայաստան երկրէ, եւ նստուցեալ առ ստորոտով անապատին մեծի, որ ի Թուրքաստանի եւ ի Դելհաստան կողմանէ. զլեզու իւրեանց մոռացեալ եւ դպրութիւն նուազեալք եւ կարգ քահանայութեանն պակասեալք: Կային անդ եւ ազգ Կողրեացն, որք գերեցան մերովքն արամբք: Կային անդ եւ յիշխանութենէն Յունաց եւ յԱսորւոց կողմանէ ոչ սակաւք: Էին ազգ Կողրեացն անհաւատք. բայց ի վերայ քրիստոնէիցն ծագէր լոյս մեծ. հաստատէին ի հաւատս եւ ուսանէին դպրութիւն եւ զլեզու. եւ հաստատէին ի կարգ քահանայութեան յաշխարհի անդ երէց ոմն ի նոցանէ, որ անուանեալ կոչէր Աբէլ» (Սեբեոս, էջ 97): Ն. Մառը կարծում էր, թե խոսքը հայ քաղկեդոնականների մասին էր (Марр Н. Я., Аркаун, монгольское название христиан в связи с вопросом об армянах-халкедонитах. - ВВ, հ. XII, 1906, էջ 48-50):

21. Ն. Ադոնցը Մովսես Խորենացու (էջ 146,204) հիշատակած «Կոշմ» անունը, համեմատելով Սեբեոսի հաղորդման հետ, իրավամբ, համադրել է անտիկ հեղինակների՝ Կոմիսենե պատմաաշխարհագրական անվան հետ (Адонц Н., նշվ. աշխ., էջ 440):

22. Սեբեոս, էջ 98-99:

23. Նույնիսկ միևնույն նախարարական տան անդամները ստիպված էին կռվել թշնամի երկու պետությունների ռազմական ուժերի կազմում: Օրինակ՝ Վարազ Շապուհ Արծրունին Սմբատ Բագրատունու հրամանատարության տակ քոչվորների դեմ կռվում էր Իրանի արևելքում, իսկ Արծրունյաց նահապետ Սահակի որդին՝ Վասակը, բյուզանդացիների բանակում կռվում էր պարսիկների դեմ:

4. Կայսրության պառակտիչ գործողությունները դավանանքի ոլորտում

1. ԲՄ, № 6, 1962, էջ 466:

2. Կոստանդնուպոլսի այս եկեղեցական ժողովի մասին տես Garitte G. La Narratio de rebus Armeniae, Edition critique et commentaire. - Corpus Scriptorum Chistianorum, Orientalium. Vol. 132, Subsidia tome 4, Louvain, 1952, էջ 26-47: Աբրահամյան Ա., Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 395, Фотия святейшего... - ПС, հ. XI, 1893, էջ 182, Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 76, Վարդան Վարդապետ, էջ 115, Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց: Աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 49, Չամչյան Մ. Պատմութիւն Հայոց, հ. Բ, Վենէտիկ, 1785, էջ 531, Օրմանյան Մ., նշվ. աշխ., էջ 579, 580):

3. ԲՄ, № 6, 1962, էջ 467:

4. Սեբեոս, էջ 91: Մ. Օրմանյանը հունական բաժնի մեջ Մավրիկիոսի որոշմամբ հայ կաթողիկոսի հաստատումը դնում է 590 թ. (Օրմանյան Մ., նշվ. աշխ., էջ 577, հմմտ. Grousset R., նշվ. աշխ., էջ 265, Իսկանյան Վ., Մի էջ հայ-բյուզանդական հարաբերությունների պատմությունից, էջ 149, տես նաև Հայ-բյուզանդական հարաբերությունները IV-VII դդ., էջ 350): Նշենք, որ Սեբեոսը իր շարադրանքում նախ խոսել է Հայաստանի բաժանման (591 թ.) և այնուհետև դրան հաջորդած մյուս իրադարձությունների՝ որոնց թվում և հայ քաղկեդոնական հակաթոռ հիմնադրելու մասին:

5. Հայ ժողովրդի ներկայացուցիչներից շատերը, չենթարկվելով կայսրության վարած պառակտիչ քաղաքականությանը հոգևոր բնագավառում, ստիպված էին հեռանալ հայրենի երկրից («Իսկ մանկունք ուխտի եկեղեցեացն Հայոց փախստական գնացեալ յատար երկիր վարէին»): Կիպրոսում հայտնված հայ միաբնակներից, ինչպես գրել է Ա. Ստրատոսը, Մավրիկիոսը գաղութ հիմնեց: Գիտնականը նաև գրել է, որ Վիրքի մի մասի ենթարկումը Բյուզանդիային հանգեցրեց այն բանին, որ Վրաց եկեղեցու հանդեպ եղած հայ եկեղեցու ազդեցությունը փոփոխվեց, այսինքն՝ Կյուրիոն հայրապետը հրաժարվեց միաբնակությունից և ընդունեց Քաղկեդոնի ժողովի որոշումները, իսկ Դվինի ժողովի ժամանակ (Ստրատոսը սխալ նշել է 596 թ.) հայ եկեղեցին վրաց հոգևորականներին բանադրեց (Stratos A., նշվ. աշխ., էջ 23): Քաղկեդոնականությանը հարածները բանադրվեցին ոչ թե 596 թ., այլ 606 թ.:

6. Հայ ժողովրդի պատմություն, հ. Բ, էջ 270:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱԿԱՄԱՐՏՈՂ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Պարսկա-բյուզանդական ռազմական գործողությունների վերսկսումը

Հայաստանը VII դարի առաջին տասնամյակներում կրկին հայտնվեց պարսկա-բյուզանդական պատերազմական գործողությունների ոլորտում: Պարսկա-բյուզանդական հակամարտությունը թևակոխել էր իր վերջին փուլը, որի ընթացքում Սասանյան Պարսկաստանի գլխապտույտ հաջողություններին վերջ տվեցին Բյուզանդական կայսրության սրընթաց հակահարվածները: Այդ պատերազմները իրենց հերթին հող նախապատրաստեցին Առաջավոր Ասիայում Արաբական խալիֆայության առաջխաղացման համար:

Իրանում չորս դար գահակալած Սասանյան ռազմաավատական բռնապետությունը, որի կեցության հիմնական նախապայմաններից էին նվաճված երկրների թալանը և հարկահանությունը, զավթողական պատերազմներ մղելով, կարողացավ որոշ ժամանակով երկարաձգել իր մայրամուտը[1]: Բյուզանդական կայսրությանը համակած տնտեսական ճգնաժամը և ստըրկատիրական հասարակարգի քայքայումը, որոնք պատճառ էին դարձել դասակարգային պայքարի սրման դրա խոշոր կենտրոններում[2], նպաստեցին Սասանյանների հաջողություններին պատերազմի վերսկսման սկզբնական ժամանակաշրջանում:

Սասանյանների հարստությունը նվաճողական պատերազմների[3] միջոցով երկարաձգեց իր մայրամուտը և այնուհետև մեծ ճիգեր գործադրեց մնալու քաղաքական ասպարեզում: Սակայն կարճատև հաջողությունները հոգևարքի նախանշաններ էին:

Մավրիկիոս կայսեր սպանությունից (602 թ.) հետո, օգտվելով գահ բարձրացած Փոկասի (602-610) դեմ բռնկված ապստամբություններից, Խոսրով Բ Փարվեզը պատերազմ է սկսում Բյուզանդիայի դեմ, պատրվակ բռնելով, թե ինքը վրեժխնդիր է լինում Մավրիկիոսի համար[4], որին նա իր բարերարն էր հռչակել[5]: Այս պայքարում մեծ տեղ էր տրվում Հայաստանի նվաճման խնդրին, ինչը խիստ կարևորություն էր ներկայացնում թե՛ ռազմավարական և թե՛ տնտեսական տեսակետից[6]:

Պատերազմական գործողությունները նախ ծավալվում են Հյուսիսային Միջագետքում: Բյուզանդական զորավար Ներսեսը, ապստամբելով Փոկասի դեմ և իր զորքով փակվելով Ուռհայում (Եդեսիա), կոչ էր արել Խոսրով Փարվեզին պատերազմ սկսել կայսրության դեմ: Խոսրովը, փաստորեն, արդեն սկսել էր պատերազմական գործողությունները և, օգտվելով Ներսեսի

ապստամբությունից, շտապեց իրականացնել իր ռազմական ծրագրերը: 604 թ. պարսկական բանակը Խոսրով Փարվեզի գլխավորությամբ պաշարեց պարսկա-բյուզանդական սահմանի վրա գտնվող Դարա ամրոց-քաղաքը: Փոկասը իր զորավարներից Գերմանին ուղարկում է հնազանդեցնելու Ներսեսին[7]: Խոսրովը, թողնելով իր զորքերի մի մասը Դարայի մոտ, մյուս մասով շտապում է Եդեսիայի ուղղությամբ: Ճանապարհին Կոստանդինե քաղաքի մոտ ճակատամարտ տեղի ունեցավ պարսից և հունական (բյուզանդական) զորքերի միջև, որտեղ վերջիններս պարտվեցին[8]: Մահացու վերք ստացած Գերմանը իր թիկնապահների կողմից հասցվում է Կոնստանդինե, որտեղ և վախճանվում է[9]: Սակայն, Կոնստանդինեի մոտ պարտվեց Փոկասի ուղարկած զորքի միայն մի մասը, իսկ մյուսը պաշարեց Եդեսիան, որի պատերի տակ տեղի ունեցավ հաջորդ ճակատամարտը: Խոսրովը վրա հասնելով ջարդեց քաղաքը պաշարող բյուզանդական պատժիչ զորքը, որից միայն քչերին հաջողվեց փախուստի դիմել: Նրա հրամանով բացում են քաղաքի դռները: Ներսեսը մի տղայի թագավորական հանդերձանք հագցրեց, գլխին պսակ դրեց և դուրս բերեց Խոսրովի մոտ, ասելով, թե դա Մավրիկիոս կայսեր որդին՝ Թեոդոսն էր: Շահնշահը մեծ խնդությամբ ընդունում է այդ տղային, այնուհետև իր հետ վերցնելով, վերադառնում է՝ թագավորական պատիվներ տալով նրան[10]: Խոսրովը շարունակում է Դարայի պաշարումը[11]:

Բյուզանդիայի դեմ պարսկական զորքերի հաջողությունները պայմանավորված էին կայսրության համար ստեղծված ծանր վիճակով: Մավրիկիոսի սպանությունից հետո կայսրության ներսում քաղաքացիական կռիվներ էին ընթանում, ինչպես նաև, օգտվելով պարսկա-բյուզանդական պատերազմից, Բյուզանդիայի վրա սկսել էին հարձակվել սլավոնները ու ավարները[12]:

Կայսերական ռազմական ուժերն արևելյան ուղղությամբ կենտրոնացնելու նպատակով Փոկասը ավարների հետ խաղաղության դաշինք կնքեց, ավելացնելով նրանց վճարվող տարեկան հարկը: Այդպիսով, նա հնարավորություն ստացավ Եվրոպայից Ասիա տեղափոխել զգալի թվով ռազմական ուժեր: 605 թ. այդ զորքերի մի մասը ուղղվեց պարսիկների, իսկ մյուսը՝ Լեոնտիոս զորավարի գլխավորությամբ դեպի Եդեսիա՝ Ներսեսի դեմ, որը հայտնվելով ծանր վիճակում փախավ Հիերապոլիս[13] (Մամբիկ, այժմ՝ Մեմբիճ) քաղաքը, որը Եդեսիայից հեռու չէր: Եդեսիան հանձնվեց պայմանով, որ բնակիչներին ոչ մի վնաս չի հասցվի[14]: Բյուզանդական պատժիչ զորքը, Եդեսիայի գրավումից հետո, մոտեցավ Հիերապոլիս քաղաքին: Ներսեսի վիճակը լրիվ անհույս դարձավ: Ապավինելով Լեոնտիոսին փոխարինած Դոմենտիոլ զորավարի խոսքին, Ներսեսը հանձնվեց, սակայն կայսեր հրամանով շուտով մահապատժի ենթարկվեց[15]:

Դարայում պաշարվածներին օգնության շտապող բյուզանդական զոր-

քի և պարսիկների միջև ճակատամարտը տեղի ունեցավ Արսամոնի (Արզամոն) մոտ, որտեղ կայսերական զորքը պարտվեց[16]: Դարայի պաշարումը տևեց մեկ ու կես տարի (604-606 թթ. միջև), որից հետո պարսիկները, փորելով քաղաքի պարսպի հիմքերը, գրավեցին այն, իսկ բնակիչներին սրի քաշեցին: Թալանելով քաղաքը և առնելով ավարը, պարսկական զորքը վերադարձավ Տիգբոն[17]: Խոսրովը ռազմաճակատում մնացած զորքերի հրամանատարությունը թողեց Ջոնգոյին: Մյուս պարսկական զորավարները՝ Քարդարիգան և Ռուզմիոզանը գրավեցին բյուզանդական որոշ քաղաքներ[18]:

Մինչ դեպքերը ծավալվում էին հյուսիսային Միջագետքում, Խոսրով Փարվեզը Հայաստան էր ուղարկել մի այլ զորախումբ՝ Ջուվան Վեհի գլխավորությամբ, որը, գալով Այրարատ, ճմեռեց Դվինում[19]: Կայսերական զորքը կանգ առավ Արա լեռան ստորոտում գտնվող Եղվարդ գյուղաքաղաքում, որը գտնվում էր Հայաստանի բյուզանդական մասում: Գլխովին ջարդելով (604/5 թ.) պարսից զորքը (Ջուվան Վեհը սպանվեց), բյուզանդացիները վերադարձան Հոռոմոց Մարգ կոչվող իրենց բանակատեղին՝ Շիրակի դաշտում: Նրանք պարսից ճամբարից իրենց հետ տարան ամբողջ ավարը:

Հաջորդ տարի, երբ պարսկական հիմնական ուժերը դեռևս կռվում էին Դարայի պատերի տակ, պարսկական այլ զորք է գումարվում և ուղարկվում Հայաստան՝ Դատոյեանի գլխավորությամբ: Այս անգամ հունաց զորքը տեղավորվել էր Շիրակի դաշտավայրում գտնվող Շիրակավան գյուղի մոտ: Պարսկական զորքը վրա հասավ, և ճակատամարտը տեղի ունեցավ Գետիկ գյուղի մոտ[20]: Երբ պարսիկները պատրաստվում էին մարտի, շրջանի բնակչությունը հավաքվեց Երգինա (Արգինա) ամրոցում և ճակատամարտի ժամանակ թիկունքից հարվածեց նրանց ճամբարին՝ բավականին ծանր կորուստներ պատճառելով: Այնուամենայնիվ, պարսիկները հաղթեցին: Հույները փախուստի դիմեցին, կրելով մեծ կորուստներ: Պարսիկ զինվորները դաժան հաշվեհարդար տեսան տեղի բնակչության հետ և հեռացան Ատրպատական[21]:

Այս ժամանակաշրջանում Հայաստանը դարձավ պատերազմական գործողությունների թատերաբեմ և ենթարկվեց ավերիչ ասպատակությունների: Հերթական ներխուժման ժամանակ պարսկական զորքը գլխավորեց Սենիտամ Խոսրովը: Հունական զորքն ամրանում է Ծաղկոտն գավառի Անգղ գյուղի մոտ, Արածանի գետի վերին հոսանքի շրջանում: Այն գլխավորում էր բյուզանդական ծառայության մեջ գտնվող Թեոդոս Խորխոռունին, որը խոշոր հայ նախարարական տան ներկայացուցիչ էր: Հունաց զորքը պարտվեց, որի մեծ մասը կոտորվեց, իսկ Թեոդոսը կենդանի մնացածների հետ ամրացավ Անգղ գյուղի բերդում: Առավոտյան պարսիկները պատգամավոր են ուղարկում՝ նրանց առաջարկելով իրենց ունեցվածքով հեռանալ այնտեղից: Երրորդ օրը պաշարվածները բացում են բերդի դռները, այնուհետև իրենք հեռանում են համաձայն պայմանի: Սակայն Սենիտամ Խոսրովը թույլ չի

տալիս Թեոդոսին հեռանալ, պատճառաբանելով, որ դա հնարավոր է միայն պարսից արքայի հրամանով: Հայոց զորավարին ուղարկում են շահնշահի մոտ, որը նրան վերցնում է ծառայության: Կարճ ժամանակ անց Խոսրով Փարվեզը անհնազանդություն ցուցաբերած Թեոդոս Խորխոռունուն մեղադրում է դավաճանության մեջ և սպանել տալիս նրան[22]:

Սենիտամ Խոսրովը բերդակալ նստեցնելով Անգղում, շարունակում է ասպատակությունները Հայաստանում: Հաջորդ ճակատամարտը տեղի ունեցավ Բասենի կողմերում, ուր բյուզանդացիները պարտություն կրեցին և նահանջեցին իրենց երկիրը[23]:

Այս երեք արշավանքների ընթացքում պարսկա-բյուզանդական սահմանագիծը Հայաստանում տեղաշարժվեց դեպի արևմուտք՝ թողնելով խորը թիկունքում 591 թ. սահմանագիծը: Պարսիկներին անցան «զԱնգղ եւ զԳայլատուս[24], զԵրգինայ, ի Դարայիին[25] զքաղաքն Ծխնկերտի»[26] բերդաքաղաքները:

Պարսից արքան, Միջագետքում և Հայաստանում, ինչպես նաև հարևան շրջաններում, պարսկա-բյուզանդական ռազմական գործողությունների ժամանակ Սմբատ Բագրատունուն Հայոց այրուձիով հեռու էր պահում հայրենի երկրից՝ Իրանի հեռավոր ծայրամասերում քոչվորների[27] և նրանց միացած ապստամբների դեմ կռվելու համար: Իսկ հյուսիսային Միջագետքում և Հայաստանում կայսերական զորքերի դեմ մղված պատերազմական գործողությունների ընթացքում Խոսրով Փարվեզի զորքերը գլխավորում էին պարսից զորավարները: Նման դիրքորոշումը Հայոց ռազմական ուժերի և զորավարների հանդեպ բխում էր հակամարտող տերությունների նվաճողական քաղաքականության բուն էությունից, որի հիմնադրույթներից էր Հայոց ռազմական ուժերը ցաքուցրիվ անելը: Օրհասական պահերին այս հիմնադրույթը մասամբ վերանայվում էր, ինչպես այդ եղավ Վահրամ Չուբինի ապստամբությունը ճնշելու, կամ էլ հետագայում Արաբական խալիֆայության առաջին հարվածների ժամանակաշրջանում:

Հայ Արշակունիների թագավորության անկումից հետո հայ ժողովուրդը անձնուրաց պայքարի, ոգու կորովի և հավատի ուժի շնորհիվ կարողացավ պահպանել իր մարտական հզորությունը՝ անկախ պետության վերականգման հիմնական գրավականը:

Արևմտյան ճակատում ստեղծված զինադադարի ժամանակ Խոսրովը որոշեց Սմբատ Բագրատունուն ուղարկել Հայաստան[28]: Այդ իրադրության մեջ պարսից արքայի նման որոշումը պատահական չէր: Այն թելադրված էր կայսրության դեմ մղված պայքարով՝ նաև դավանանքային ասպարեզում:

2. Հայ Առաքելական եկեղեցին VII դ. սկզբներին

VII դ. սկզբներին քրիստոնեական հավատքի և հատկապես հակաքաղկեդոնական ուղղվածություն ունեցող Հայ Առաքելական եկեղեցու[1] դավանանքի հանդեպ եղած վերաբերմունքը կարևոր գործոն դարձավ Սասանյան Պարսկաստանի արտաքին և ներքին քաղաքականականության մեջ[2]: Բյուզանդիայի կողմից Արևմտյան Հայաստանում քաղկեդոնության պարտադրումը[3] հակառակ արձագանք գտավ պարսից արքունիքում: Խոսրով Փարվեզը սկսեց առանձնակի հետաքրքրություն ցուցաբերել Հայ եկեղեցու նկատմամբ, ինչը այդ ժամանակաշրջանում բխում էր պարսից արքունիքի քաղաքական ծրագրերից: Դավանանքի բնագավառում ճկուն քաղաքականությամբ Խոսրովը ձգտում էր ամրապնդել ռազմական ժամանակավոր հաջողությունները:

Այս ուղղությամբ կատարվող քայլերից էր Հայ Առաքելական եկեղեցու և բյուզանդական պաշտոնական եկեղեցու միջև եղած հակասությունների օգտագործումը: Հայ եկեղեցու նկատմամբ Սասանյանների վարած քաղաքական շրջադարձը արգասիք էր ոչ միայն Բյուզանդիայի կողմից Հայաստանի արևմտյան մասում Հովհաննես Բագարանցու գլխավորությամբ քաղկեդոնական հակաթոռի ստեղծման, այլև Վրաց եկեղեցու վերջնականապես քաղկեդոնականությանը հարելու[4]:

Խոսրով Փարվեզի համաձայնությամբ Սմբատ Բագրատունու Հայաստան գալը բխում էր պարսից արքունիքի առջև ծառացած քաղաքական և դավանանքային խնդիրների լուծման անհրաժեշտությունից: Իսկ Սմբատը Խոսրովի ծրագրերից անկախ բուռն գործունեություն ծավալեց Դվինում՝ ջանալով որքանով հնարավոր է կարգի բերել հայրենի երկրի գործերը:

Սմբատ Բագրատունին Հայաստանում եղել է 606 թ. վերջերից մինչև 608 թ. գարունը[5]: «Եւ վասն զի վախճանեալ էր Մովսէս կաթուղիկոսն երանելի, եւ ոչ գոյր վարդապետ ի տեղւոջն յայմնիկ՝ եւ եւս փութացաւ խնդրել յարքայէն հրաման. եւ հասեալ հրաման յերկիր իւր՝ առնէ խնդիր վասն աթոռոյն մեծի, զի կարգեսցեն ի վերայ նորա տեսուչ խնամող եկեղեցւոյն եւ առաջնորդ փրկութեան իւրոյ: Եւ նստուցին զԱբրահամ զՌշտունեաց եպիսկոպոսն յաթոռ հայրապետութեան»[6]: Ուրեմն՝ Սմբատ Բագրատունին, տեղեկանալով Մովսես Բ Եղվարդցու (574-604) մահվան մասին, Խոսրով Փարվեզի հետ համաձայնեցրել էր նոր կաթողիկոսի ընտրության հարցը:

Մինչ Սմբատ Բագրատունու ժամանումը Դվինում 606 թ. եկեղեցական ժողով էր գումարվել, սակայն կաթողիկոսի ընտրություն չէր կայացել, այլ մի քանի կանոններ էին մշակվել՝ հատկապես ուղղված քաղկեդոնականության հարած հոգևորականների դեմ[7]:

Հայաստանում Սմբատ Բագրատունու գտնվելու և ծավալած գործունեության մասին տեղեկություններ է հաղորդել նաև Ստեփանոս Օրբելյանը.

«Յամս Խոսրովու՝ արքայից արքայի եւ Յուստինիանոսի՝ ինքնակալ կայսեր[8], յիշխանութեանն Հայոց Սմբատայ[9] Բագրատունւոյ, որ կոչեցաւ Վրկան աշխարհի մարզպան, ի տեղապահութեան աթոռոյն Հայոց Վրթանիսի Քերթողի[10], եւ տէրութեան Սիւնեաց Սահակայ իշխանի, հրամանաւ Սմբատայ եւ կամօք այլոց իշխանաց Հայոց ժողովեցան եպիսկոպոսք Հայոց ի Դուին. ածան եւ նոքա որ ի բաժնին Յունաց կային հակառակութեամբ, որոց գլուխ Մանասէ՝ եպիսկոպոս Բասենոյ, եւ Քրիստափոր՝ եպիսկոպոս Սիւնեաց[11], եւ եդին ուխտս միաբանութեան. յորոց խնդրեաց ձեռնարկ Սմբատ՝ Վրկանի մարզպան, եւ առեալ կնքեաց մատանեաւ եւ եդ ի սուրբ եկեղեցւոջն: Եւ ապա ընտրեալ վերին ազգմամբ եւ աւետարանական վիճակաւ զԱբրահամ զՌշտունեաց եպիսկոպոս, կացուցանեն կաթողիկոս Հայոց»[12]:

Դվինի 606 և 607 թթ. ժողովների նպատակն էր հաստատուն պահել Հայ եկեղեցու անկախությունը բյուզանդական եկեղեցու պառակտիչ ազդեցությունից: Դվինի 607 թ. կաթողիկոսի ընտրություններին մասնակցում էին Արևմտյան Հայաստանի հոգևորականները՝ Բասենի եպիսկոպոս Մանասեի գլխավորությամբ և «նոքա որ ի բաժնին Յունաց կային հակառակութեամբ»: Այս պարագայում Մայր Աթոռի շուրջ Հայաստանի (բյուզանդական մասից և Սյունիքից ժամանած) հոգևորականության համախմբումը («եդին ուխտս միաբանութեան») խիստ կարևոր հոգևոր և քաղաքական նշանակություն ուներ: Հայ հոգևորականությունը նոր եռանդով շարունակեց պայքարը քաղկեդոնականության դեմ, ինչը համընկավ ռազմական գործողություններում Բյուզանդիայի՝ Պարսկաստանից կրած անհաջողությունների հետ: Դավանանքային հարցն ավելի էր սրվում վրաց Կյուրիոն կաթողիկոսի (599-616) գործունեության պայմաններում, որը հանգեցրեց Վրաց եկեղեցու անջատմանը Հայ եկեղեցուց (608 թ.): Սմբատ Բագրատունու և հայ հոգևորականության ջանքերը Կյուրիոնին ետ պահելու քաղկեդոնականությունից[13], համընկնում էին պարսից արքունիքի շահերին, քանի որ Վիրքը (Վրաստանը) դավանանքով մերձենում էր Բյուզանդիային: Այդ ցայտուն երևում է Աբրահամ Ա Աղբաթանեցի կաթողիկոսի Կյուրիոնին գրած նամակներից[14]: Պարսկա-բյուզանդական պատերազմի ընթացքում Բյուզանդական կայսրության ասիական մասի քաղկեդոնական բնակչությունը հայտնվել էր Պարսկաստանի գերիշխանության տակ, ուստի Կյուրիոնը իր պատասխան նամակում Աբրահամ Աղբաթանեցուն գրում էր. «Եւ արքայից արքայ նոյնպէս տէր է Հռոմոց, որպէս եւ տիրեաց աշխարհի. եւ չէ այնպէս, որպես դուք գրեցէքս, թե ուրիշ թագաւորութիւն են»[15]: Ինչպես նշել է Լեոն, այդ քաղաքական իրավիճակում Կյուրիոնը հանդես է գալիս որպես ճարպիկ քաղաքագետ[16]:

Ստեղծված իրավիճակում պատահական չէր, որ Խոսրով Փարվեզը թույլատրել էր Սմբատ Բագրատունուն վերականգնել Ս. Գրիգորի եկեղեցին Դվինում: Սեբեոսը գրել է. «Ապա սկսան արկանել հիմն եկեղեցւոյն. ժողովեաց ճարտարապետս քարի, եւ կացոյց ի վերայ նոցա հաւատարիմ գործա-

կալս, եւ հրաման ետ փութանակի հասուցանել ի կատարումն: Եւ գրեալ գիր ամբաստանութեան բերդակալին եւ մարզպանին առ արքայ, եթե «Կարի մերձ է առ բերդն, եւ վնասակար է ի թշնամւոյ»: Հրաման հասեալ յարքայէ, եթէ «Բերդն քակեսցի, եւ եկեղեցին անդրէն ի նմին տեղւոջն շինեսցի»[17]: Արևելքում և արևմուտքում ռազմական գործողությունների վերսկսման հետևանքով Խոսրովը Սմբատ Բագրատունուն շուտով ետ է կանչում Պարսկաստան:

3. Ռազմա-քաղաքական վիճակը Առաջավոր Ասիայում

Խոսրով Փարվեզը, որը միաոժամանակ հանգիստ էր տվել իր զորքերին[1], մինչ արևմուտքում պատերազմական գործողությունների վերսկսումը ստիպված եղավ կարճ ժամանակով իր ուշադրությունը բևեռել Պարսկաստանի արևելյան երկրամասերն ասպատակող վաչկատուն ցեղերի վրա: Դրանց դեմ կռիվը գլխավորելու գործը պարսից արքան հանձնարարեց Հայաստանից շտապ ետ կանչված Սմբատ (Խոսրով Շում) Բագրատունուն, որին նա կրկին բազում պատիվների արժանացրեց: Այդ պայմանավորված էր քոչվորների դեմ մղվելիք պայքարի կարևորությամբ: Հայոց այրուձին հայրենիքից դուրս կրկին կռվելու էր օտարի շահի համար: Սմբատ Բագրատունու հետ իրենց գնդերով գնացին նաև բազմաթիվ հայ նախարարներ, որոնց թվում էին Վարազշապուհ Արծրունին, Սարգիս Տայեցին, Արտավազդ, Վստամ և Հմայակ Ապահունիները, Մանվել Ապահունեաց տերը, Վռամ Գողթնեաց տերը, Սարգիս Դիմաքսյանը, Սարգիս Տրպատունին[2]:

Սմբատ Բագրատունին պարտության և փախուստի մատնեց քոչվորների զորքը և բանակեց Ապր Շահրի Տոս գավառում[3]: Սակայն սրանով չեն ավարտվում Հայոց այրուձիի մաքառումները, առջևում նոր փորձություններ էին սպասվում: Պարտված քոչվորները օգնություն են խնդրում Խաքանից, որը 30 հազարանոց զորք է ուղարկում: Սրանք պարտության են մատնում պարսից զորքին: Պարսից զորքի պարտության պատճառն այն էր, որ նրանց հրամանատար Դատոյեանը անտեսեց Սմբատի խորհուրդը՝ խույս տալ ճակատամարտից: Քոչվորներն ասպատակելով հասան մինչև Հրև և Ասպահան գավառները և այնուհետև վերադարձան իրենց բանակատեղին: Այս պարտության պատճառները պարզելու համար Խոսրով Փարվեզը այնտեղ է ուղարկում Շահրապն Բանդակ պաշտոնյային, որը արդարացնում է Սմբատ Բագրատունուն, իսկ Դատոյեանին կապանքներով տանում արքայի պալատը, որտեղ նրան Խոսրովի հրամանով մահապատժի են ենթարկում:

Պարսկաստանի կենսական շահերը պահանջում էին ինչ գնով էլ լիներ կասցնել քոչվորների ներխուժումները արևելքից: Ուստի նոր զորք է

գումարվում և Սմբատ Բագրատունու գլխավորությամբ նորից ուղարկվում նրանց դեմ[4]: Սմբատը պարտության է մատնում քոչվորներին և նրանց զորքը ետ մղում մինչև Բահլ Շահաստան քաղաքը[5]: Այսպիսով, Խոսրով Փարվեզը միառժամանակ կարող էր իր պետության թիկունքն արևելքից ապահովել և պարսկական ռազմական ուժերը կենտրոնացնել արևմտյան ուղղությամբ: Խոսրովը պատվիրեց Խոռեամին՝ ոչնչացնել դիմադրողներին[6]:

607/8 - 610 թթ. ընթացքում պարսկական զորքերը Միջագետքում և Ասորիքում գրավում են Եդեսիա, Ամիդ, Թելա, Ռաշայն, Մարդե և Անտիոք քաղաքները[7]:

Թեոփանեսի և Կեդրենոսի մոտ Եդեսիայի գրավման մասին հաղորդումը բերվում է Հերակլ կայսեր գահակալության սկզբնական ժամանակաշրջանի իրադարձություններին վերաբերող շարադրանքի կապակցությամբ[8]: Գ. Լասկինը սխալ է համարել Ջատկական ժամանակագրության մեջ Եդեսիայի գրավման թվագրումը 609 թվականով և այն համարել է կայացած 611 թ.[9]:

Սեբեոսի հաղորդումները[10] հաստատում են, որ այդ տեղի էր ունեցել դեռևս Փոկասի գահակալության ժամանակ: Ա. Ստրատոսը, նշելով, որ ըստ ժամանակագիրների, այդ տեղի էր ունեցել կամ 608/9 թ. (Թովմա Ավագ), կամ 609 թ. (Միքայել Ասորի, Բար Հեբրայոս), և կամ էլ 610 թ. (Թեոփանես), հիմք է ընդունել Ջատկական ժամանակագրության տվյալները և Եդեսիայի գրավումը նշել կայացած 609 թ., իսկ Եմեսայի (Հիմս) գրավումը՝ 611 թ.[11]: Յու. Կուլակովսկին այն կարծիքին էր, որ Թեոփանեսի մոտ խոսքը Եմեսայի մասին էր[12]: Հ. Բարթիկյանը նշել է, որ Եմեսան և Ապամեան իրար մոտ էին գտնվում, իսկ Եդեսան, որը պարսիկները գրավել էին 609 թ., Ապամեայից հեռու էր[13]: Սակայն Թեոփանեսի մոտ, հավանաբար, խոսքը գնում է Ջևգմայի մոտ գտնվող Ապամեայի մասին, որը Եդեսիային մոտ էր[14]:

Ինչպես հետևում է Սեբեոսի հաղորդումից, Անտիոքը պարսիկները գրավել էին Փոկասի օրոք: Իսկ ըստ Գ. Լասկինի, Ն. Պիգուլևսկայայի և Ա. Ստրատոսի, այդ տեղի էր ունեցել 611 թ.[15]: Ըստ Թեոփանեսի, Անտիոքի գրավումը տեղի էր ունեցել մայիս ամսին, ընդ որում պատմիչը այդ մասին գրել է Հերակլ կայսեր՝ հոկտեմբերին տեղի ունեցած գահակալության հետ կապված իրադարձությունների նկարագրությունից հետո[16]: Եթե Թեոփանեսի հաղորդումները դիտենք Սեբեոսի շարադրանքի ժամանակագրական հաջորդականության համապատասխան, ապա կհետևի, որ 610 թ.՝ դեռևս Փոկասի օրոք պարսիկները գրավեցին Անտիոքը, իսկ նույն թվականի հոկտեմբերին կայսր դարձավ Հերակլը: Յու. Կուլակովսկին, համադրելով Ջատկական ժամանակագրության տվյալները և Հովհան Նիկիուսացու, Թեոդորոս Սիկեյացու, Միքայել Ասորու, Ագապիոս Մաբուգցու, Անտիոքոս Ստրատեգոսի և այլոց տեղեկությունները Թեոփանեսի այն վկայության հետ, թե Փոկասի յոթերորդ տարում Անտիոքի հրեաները ապստամբեցին քրիստոնյա-

ների դեմ և սպանեցին Անաստասիոս պատրիարքին, իսկ այնուհետև կայսրը ապստամբության ճնշումը հանձնարարեց Բոնոսին[17], եկել է այն եզրակացության, որ Թեոփանեսի հաղորդումը Փոկասի գահակալության վերջին տարվա մասին «իրեն մեջ պարունակում է տարբեր ժամանակների իրադարձությունների կոմբինացիա, որոնք սխալմամբ՝ ծագումնաբանորեն կապի մեջ են դրվել: Բոնոսի պատժիչ գործողությունները Ասորիքում վերաբերում են 608 թ., իսկ Անաստասիոս պատրիարքի սպանությունը՝ 610 թ. սեպտեմբերին»[18]: 610 թ. բյուզանդացիների կողմից պատժիչ գործողություններ չկիրառելը գիտնականը բացատրել է Փոկասի գահի երերուն վիճակով[19]: Մինչդեռ, Սեբեոսի, ինչպես նաև Միքայել Ասորու հաղորդումներից հետևում է, որ բյուզանդացիները իրականում չէին կարող 610 թ. ձեռնարկել պատժիչ գործողություններ, քանի որ Բոնոսի զորքն Եգիպտոսում էր, իսկ պարսիկները ձեռնարկել էին Անտիոքի գրավման գործը[20]: Աղբյուրների հաղորդումների վերլուծությունը Ա. Ստրատոսին բերել է այն եզրակացության, որ առաջին ապստամբությունը Անտիոքում և դրա ճնշումը Բոնոսի կողմից տեղի էր ունեցել 608-609 թթ., իսկ հրեաների ապստամբությունը և Անաստասիոս պատրիարքի սպանությունը՝ 610 թ.[21]:

Պարսկաբյուզանդական ռազմական գործողությունների այս ժամանակաշրջանում պարսկական մի զորք՝ Աշտատ Յեզտայարի գլխավորությամբ ներխուժեց Հայաստան. «Իսկ Աշտատ Յեզտայար եկն ի սահմանս Հայոց յամի ութ եւ տասներորդի թագաւորութեանն (Խոսրովի - Է. Դ.): Եւ զաւրն Յունաց գումարեալ ժողովեցան ի գաւառն Բասենոյ, եւ եւս առագին դիմեալ յարձակեցան ի վերայ նորա. եւ եղեւ պատերազմ մեծ ի Դու եւ յՈրդրու: Հարին գաւրն Յունաց եւ խորտակեցին կործանմամբ մեծաւ: Բազումք մեռան ի պատերազմին, եւ ոչ զոյր թիւ սպանելոցն ի դաշտին: Հալածեաց զնոսա մինչեւ ի քաղաքն Սատաղացոց, եւ ինքն գումարեալ բանակեցաւ շուրջ զԿարնոյ քաղաքաւ, եւ կալաւ ընդ նմա գործ պատերազմի. ընդդիմացան ի ներքուստ ինչ. եւ ոչ սակաւ լինէր կոտորածն վնասուց յարտաքնոցն: Ապա յառաջ մատուցեալ Թէոդոս կայսրն ասելով, եթէ «Ես եմ, ասէ, թագաւորն ձեր»: Յայնժամ հաւանեալ բանային. ելին գլխաւորքն քաղաքին եւ ընծայեցան նմա, եւ դարձեալ անդրէն հաւանեցուցին զքաղաքն, թէ նոյն ինքն է Թէոդոս, որդին Մաւրկայ: Յայնժամ բացեալ զդուռն՝ հնազանդեցան ի ծառայութիւն: Եւ... գնաց եւ կալաւ զքաղաքն Հաշտենից՝ զՀիթառիճ (Կիթառիճ) եւ զՍատաղ եւ զԱռաստիայ եւ զՆիկոպաւլիս եւ գնաց»[22]: Այնուհետև Կարնո գավառից հույներին հալածեց պարսից մեկ այլ զորավար՝ Շահեն պատգոսպանը: Իսկ «յամին քսաներորդի առաջներորդի Խոսրովայ» պարսիկները դաժան վարվեցին Կարին քաղաքի բնակիչների հետ: Խոսրովի հրամանով նրանց վերաբնակեցնում են Պարսկաստանի սահմանները («յԱհմատան շահաստանի»): Նրանց մեջ էր նաև հայ քաղկեդոնիկ կաթողիկոս Հովհանը «հանդերձ ամենայն սպասիւք եկեղեցւոյն»: Նա ճանապարհին վախճանվում

է, և նրա մարմինը բերում հանձնում են հողին Ավան գյուղում «յեկեղեցին, զոր ինքն շինեաց»[23]:

Պարսկական զորքը, ասպատակելով Հայաստանի բյուզանդական մասը, ներխուժեց նաև կայսրության փոքրասիական տիրույթները: Առաջին հերթին այն գրավեց Կապադովկիայի Կեսարիան: Քաղաքի քրիստոնյա բնակչությունը հեռացավ քաղաքից, իսկ հրեաները «հնազանդեցան ի ծառայութիւն»: Այստեղ զավթիչները ոճրագործություն կատարեցին՝ դաժանորեն սպանելով Արծրունյաց նահապետ Սահակի որդուն՝ Վասակին[24]:

Այսպիսի խառը ժամանակաշրջանում Բյուզանդիայում գահընկեց արվեց և սպանվեց Փոկասը: Կայսերական գահին անցավ Հերակլին (610-641)[25], որն, իր երկիրը գտնելով ծանր վիճակում, փորձեց անմիջապես խաղաղություն խնդրել Խոսրովից[26]: Սակայն Խոսրովը նույնիսկ չցանկացավ լսել այդ մասին, այլ, վերցնելով իրեն ուղարկված գանձերը, առանց պատասխան ուղարկելու հրամայեց սպանել Հերակլի պատգամավորներին[27]: Հերակլը անձամբ զորքի գլուխն անցած եկավ և մասնակցեց Կապադովկիայի Կեսարիա քաղաքի պաշարմանը, ինչն այնուհետև հանձնարարելով իր զորավարներից մեկին, ինքը վերադարձավ մայրաքաղաք: Կեսարիայում գտնվող պարսից զորքը հայտնվեց ծանր վիճակում: Միառժամանակ անց պարսիկները հրդեհեցին քաղաքը և, ջախջախելով իրենց հետապնդող հույներին, ներխուժեցին Հայաստան, որտեղ և անցկացրին ձմեռը[28]:

Խոսրով Փարվեզը Շահեն պատգոսպանին շտապ կանչում է արքունիք և հրամայում արշավել արևմուտք: Շահենը կրկին հասնում է Կարին, այնուհետև հարձակվում է Մելիտենեի վրա, որը, գրավելով, ենթարկում է պարսից ծառայության, իսկ ինքը գնում, միանում է Պիսիդիայում գտնվող Խոռեամի զորքին[29]:

Հերակլ կայսրը Փիլիպիկոսի գլխավորությամբ զորք է ուղարկում արևելք: Վերջինս արշավում է Կապադովկիայի Կեսարիայի վրա, որը պարսիկները կրկին գրավել էին 612 թ.[30]: Փիլիպիկիոսի արշավանքը հնարավորություն տվեց բյուզանդացիներին որոշ ժամանակով նորից տիրանալ Կեսարիային: Փիլիպիկոսը այստեղից անցավ Հայաստան և, գալով Այրարատ, բանակեց Վաղարշապատ քաղաքի մոտ[31]: Խոսրովը իր հերթին սուրհանդակների միջոցով շտապեցրեց պարսկական զորքին՝ հասնել բյուզանդացիների զորքին և ոչնչացնել այն: Պարսիկները գալիս են Այրարատ և ճամբար դնում Արաքսի ափին՝ պատրաստվելով հաջորդ առավոտյան կռվի բռնվել բյուզանդացիների հետ: Սակայն Փիլիպիկոսը նույն գիշեր անցնում է Արագածի հյուսիս-արևելյան լանջերին գտնվող Նիգ գավառը, իսկ այնտեղից՝ Շիրակով և Վանանդով, Կարին քաղաքի մոտով նահանջում կայսրության սահմանները: Ի վիճակի չլինելով հետապնդելու նահանջող բյուզանդական զորքին, պարսից զորքը հանգիստ է առնում և այնուհետև շարժվում Միջագետք[32]:

Հերակլ կայսրը այդ ժամանակ թագավորեցնում է «զորդի իւր զԿոստանդին, ետ զնա ի ձեռն սընկղիտոսին, եւ յանձնեալ ամենայն մեծամեծացն պալատոյն՝ հաստատեաց զնա յաթոռ թագաւորութեան իւրոյ: Եւ իւր առեալ յանձն զանուն զաւրավարութեան, հանդերձ եղբարբն իւրով Թէոդոսիւ գումարեալ ժողովեաց զբազմութիւն զաւրացն, եւ անցեալ գնաց յԱսորեստան ի կողմանս Անտիոքացւոց: Եւ եղեւ պատերազմ մեծ ի կողմանս Ասիացւոց եւ բռնացեալ հոսեցաւ արիւն զաւրականացն առ Անտիոք քաղաքաւ: Սաստիկ լինէր խումբ եւ խառնուրդ, եւ անբաւ կոտորածն ի մէջ տարուբերին. եւ յաւգնեալ վանեցան ի մարտին երկոքին կողմանքն: Բայց սակայն զաւրացեալ Պարսիկն՝ փախուցեալ զՅոյնն հալածեաց, եւ ստացաւ հանդերձ քաջութեամբ գյաղթութիւն»[33]: Ավագն Անտիոքի մոտ տեղի ունեցած ճակատամարտից հետո հաջորդ կռիվը տեղի է ունենում Կիլիկիա տանող լեռնանցքի մոտ: Այստեղ հույները ժամանակավոր հաջողության են հասնում, սակայն այնուհետև կրկին փախուստի են դիմում: Համալրում ստանալով, պարսիկները գրավում են Տարսոն քաղաքը և իրենց ենթարկում ամբողջ Կիլիկիան[34]:

Կիլիկիայից վերադառնալով, պարսկական զորքը հաջորդ տարի՝ 614 թ., արշավում է Երուսաղեմի վրա: Ճանապարհը անցնում էր պաղեստինցիների Կեսարիա և այլ առափնյա քաղաքներով: Գտնվելով Կեսարիայում, Խոռեամը բանակցություններ վարեց երուսաղեմցիների որոշ ներկայացուցիչների հետ «զի կամաւք հնազանդեսցին ի ծառայութիւն, եւ ի խաղաղութեան եւ ի շինութեան պահեսցին: Արդ՝ նախ միաբանեալ հնազանդեցան ի ծառայութիւն, եւ մատուցին գաւրավարին եւ իշխանացն պատարագս մեծամեծս, եւ խնդրեալ ոստիկանս արս հաւատարիմս՝ նստուցին առ իւրեանց առ ի պահպանութիւն քաղաքին»: Սակայն որոշ ժամանակ անց «միաբանեալ ամենայն ռամիկ կաճառացն մանկունք քաղաքին սպանին զոստիկանս թագաւորին Պարսից եւ ինքեանք ապստամբեալք ի բաց կացին ի ծառայութենէ նորա»: Այնուհետև Երուսաղեմի ներսում կռիվ սկսվեց հրեաների և քրիստոնյաների միջև. «եւ զաւրացեալ բազմութեան քրիստոնէիցն՝ հարին սատակեցին զբազումս ի հրէիցն: Եւ մնացեալքն ի հրէիցն անկեալ ի պարսպացն՝ գնացին ի զաւրն Պարսից»[35]: Պարսիկները օգտվելով ստեղծված իրավիճակից, անմիջապես բանակեցին Երուսաղեմի շուրջ: Տասնինը օր տևած պաշարումից հետո պարսիկները «փորեալ ի ներքոյ զհիմունս քաղաքին՝ աւերեցին զպարիսպն»[36]:

Երուսաղեմի գրավումից հետո պարսիկները քաղաքի բնակչության զգալի մասը սրի քաշեցին, իսկ ողջ մնացածներից շատերին գերեվարեցին, որոնց մեջ էին նաև Երուսաղեմի պատրիարք Զաքարիան[37] և Խաչապանը: Երկար տանջանքներից հետո նրանք հայտնում են Խաչի տեղը: Պարսիկները գտնում են Խաչափայտը, որի վրա խաչել էին Քրիստոսին: Խաչափայտը, ավարառված ոսկու և արծաթի հետ միասին, ուղարկեցին Խոսրով Փարվե-

գին[38]:

Խաչափայտի գերեվարումը Խոսրովի կողմից և այնուհետև մի քանի տարի անց, Հերակլի ջանքերով դրա վերադարձը հանդիսանում էին պարսկա-բյուզանդական հակամարտության շարունակությունը կրոնա-քաղաքական բնագավառում: «Խաչափայտին տիրելը, - գրել է Ա. Կոլեսնիկովը, - ենթարկված էր Խոսրով Բ-ի գլխավոր քաղաքական խնդրին՝ ամբողջ քրիստոնյա աշխարհի վրա գերիշխանության հաստատելուն: Նա պատրաստվում էր այդ բանին հասնել ոչ միայն զենքով, այլ նաև նվաճված ժողովուրդներին բարոյապես ոչնչացնելու միջոցով»[39]:

Խոսրով Փարվեզի եկեղեցական քաղաքականության շրջադարձը, թերևս բացատրվի նրանով, որ այս ժամանակաշրջանում մարտադաշտերում պարտություններ կրած Բյուզանդիային պարսից արքան ձգտում էր բարոյական հարված հասցնել՝ Արևելքի քրիստոնյա եկեղեցիները Հայոց եկեղեցու գլխավորությամբ Պարսկաստանի քաղաքական ոլորտը ընդգրկելու միջոցով:

Ստեղծված իրավիճակում տեղի ունեցավ Խոսրով Փարվեզի քաղաքականության ձևափոխությունը բյուզանդական երկաբնակ եկեղեցուն առավել ակտիվորեն դիմակայող Հայ Առաքելական եկեղեցու հանդեպ, ինչը արտահայտվեց Տիզբոնի ժողովի որոշումներում:

4. Հայ Առաքելական եկեղեցու նկատմամբ Սասանյանների վարած քաղաքականությունը

Արևմտյան ճակատում տարած հաղթանակներից հետո Սասանյանները մի քանի տարվա ընթացքում զգալի տարածքների տիրացան Առաջավոր Ասիայում և Եգիպտոսում[1]: Ստեղծված իրավիճակում նրանք պետք է գործ ունենային հսկայական տարածքի վրա բնակվող և տարբեր դավանանքների հետևող ժողովուրդների հետ: Խոսրով Փարվեզի դիրքորոշումը քրիստոնյա եկեղեցիների քաղաքական կողմնորոշման հարցում[2] պայմանավորեց որոշակի փոփոխություններ նրա ներքին և արտաքին քաղաքականության մեջ: Սասանյան արքունիքը փորձում էր ամրապնդել իր նվաճումները՝ օգտվելով թե՛ հրեաների և քրիստոնյաների փոխադարձ թշնամությունից և թե՛ քրիստոնյա կրոնի տարբեր ուղղություններին պատկանող եկեղեցիների միջև եղած տարաձայնություններից և հակասություններից[3]: Որոշակի քայլեր Խոսրովը ձեռնարկեց նաև Հայ Առաքելական եկեղեցու նկատմամբ, քանի որ այն առավել գործնական էր պաշտպանում ազգային դավանանքային ինքնությունը բյուզանդական պաշտոնական եկեղեցու ոտնձգություններից: Խոսրով Փարվեզի դավանանքային քաղաքականության կիզակետը հանդիսացավ նվաճված երկրների քրիստոնեական եկեղեցիների ներկայացուցիչ-

ների ժողովի հրավիրումը Տիզբոնում: Այս կապակցությամբ Սեբեոսը գրել է. «Խոսրով Որմզդի՝ յետ գերութեանն Երուսաղէմի, հրաման ետ ամենայն եպիսկոպոսաց կողմանցն Արեւելից եւ Ասորեստանի ժողովել ի դուռն արքունի»[4]:

Տիզբոնի ժողովի հրավիրման ժամանակի վերաբերյալ հայտնվել են տարբեր կարծիքներ: Ըստ Ն. Ադոնցի, այն տեղի էր ունեցել 612 թ.[5], իսկ ըստ Ե. Տեր-Մինասյանի՝ 613 թ.[6]: Մ. Օրմանյանը այն տեսակետին էր, որ երկու ժողովներ են եղել. մեկը, համաձայն նեստորական աղբյուրների, 612/13 թ.՝ նեստորական կաթողիկոսի ընտրության արգելքը վերացնելու նպատակով[7], իսկ մյուսը՝ 615/16 թ., որն ուղղված էր նեստորականների՝ որպես քաղկեդոնական հույների կողմնակիցների դեմ[8]:

Ինչպես հետևում է Սեբեոսի շարադրանքից, Տիզբոնի ժողովը հրավիրվել էր պարսիկների կողմից Երուսաղեմի գրավումից (614 թ.) հետո և Եգիպտոս ներխուժումից (615/16 թթ.)[9] քիչ անց: Այսպիսով, Տիզբոնի ժողովը հրավիրվել էր 614 թ. ոչ շուտ և 617 թ. ոչ ուշ: Ուրեմն, կարելի է ընդունել Մ. Օրմանյանի առաջարկած ժամանակաշրջանը. «Պետք է որ ժողովը գումարուած ըլլայ 616-ին, կամ առնուազն 615-ին»[10]:

Ինչպես հաղորդել է Սեբեոսը, ժողովին ներկա էին գերեվարված Զաքարիա պատրիարքը[11], հայ հագևորականության ներկայացուցիչներ՝ Կոմիտաս Մամիկոնյանը և Մատթեոս Ամատունին և «բազում իմաստասէրք, զորս գերեալ էր Աղեքսանդրացւոց քաղաքէն»: Զարմանալի չպետք է թվա, որ Տիզբոնի ժողովին բացի հոգևորականներից («Եւ ժողովեցան ամենայն եպիսկոպոսունք եւ երիցունք... Իսկ որք զՔաղքեդոնին զՎիրոյ զԱղուանից կաթուղիկոսն, եւ այլ բազում եպիսկոպոսունք ի Յունաց կողմանէ...»)[12] մասնակցում էին նաև աշխարհիկ անձինք (« ...եւ ամենայն հավատացեալք կողմանցն այնոցիկ... եւ իշխանք, որք եկեալ էին ի ծառայութիւն Պարսից թագաւորին... եւ կացոյց ի վերայ նոցա ոստիկանս զՍմբատ Բագրատունի, զանուանեալն Խոսրովայ Շընումն, եւ զբժշկապետն արքունի»)[13], ինչը հետևանք էր ժողովի քաղաքական ուղղվածության[14]: Այդ մասին է վկայում նաև ժողովի ամբողջ ընթացքը:

Խոսրով Փարվեզը ժողովականներին հրամայել էր «արդարութեամբ ի վերայ հասանել, եւ զճշմարիտն ծանուցանել արքայի»: Արքունի դահլիճում տեղի ունեցած առաջին հավաքի ժամանակ խիստ տարաձայնություններ ծագեցին, «քանզի էին ոմանք ուղղափառութեան հաւատով, եւ գրով եւ կնքով հին թագաւորացն: Եւ այլ նեստորականք[15], եւ այլ բազում խառնիճաղանճ աղանդոցն: Նաեւ հրէապետն, իսկ յառաջ մատուցեալ ասէր.«Մի կոչեսցի Աստուած այրն այն»: Եւ ծանուցին զբանս թագաւորին»: Հրեապետին «եւ այլ բազմութիւն աղանդոց» Խոսրովը «հրամայեաց հանել յատենէն. բայց միայն զՆիկիականն եւ զԿոստանդնուպոլսին եւ զԵփեսոսին եւ զՔաղկեդոնին հրամայեաց քննել»[16]:

Հայ եկեղեցու դավանաբանության հարցը ներկայացրին Կոմիտաս Մամիկոնյանը և Մատթեոս Ամատունին՝ «երկու եպիսկոպոսք յաշխարհէն Հայոց, արք հաւատարիմք, զորս վասն բռնութեան աշխարհին էին արձակեալ, զի ծանուսցեն թագաւորին... Ունէին պատրաստական անդ ընդ ինքեանս զգիր սրբոյն Գրիգորի»:

Խոսրով Փարվեզը, անդրադառնալով քրիստոնեական եկեղեցիների դավանանքային վեճերին. «Լսեմ եթէ երկու կողմանք են քրիստոնէիցն, եւ մին զմիւսն նզովէ. վասն զի չհամարին իրաւացի: Արդ՝ միաբանութեամբ ժողովեսցին ի դուռն արքունի, զի զուղիղն հաստատեսցեն եւ զթիւրն ի բաց մերժեսցեն»: Իր քաղաքական գծի համաձայն, նա հարցին նախ մոտենում է ձևականորեն՝ քանակական կողմից: Երբ նրա հարցին, թե որ թագավորների օրոք են տեղի ունեցել եկեղեցական ժողովները, պատասխանում են՝ «Նիկիոյ ժողովն առ Կոստանդիանոսիւ եղեւ, իսկ Կոստանդնուպաւլսին առ Թէոդոսիւ Մեծիւ, եւ Եփեսոսին առ Փոքր Թէոդոսիւ, եւ Քաղկեդոնին առ Մարկիանոսիւ», ապա նա եզրակացնում է. «Երից թագաւորաց հրամանքն ճշմարիտ թուի լինել՝ քան միոյն»[17]:

Խոսրովը, օգտագործելով իր իշխանությունը, ձգտում էր քաղկեդոնական դավանանքի մերժմանը պաշտոնական բնույթ տալ: Պատահական չէր, որ Տիզբոնի ժողովը տեղի ունեցավ քրիստոնեական սրբության՝ Խաչափայտի գերեվարումից հետո: Լայնածավալ նվաճումների ժամանակաշրջանում Խոսրովին թվում էր, թե ինքը մեծ առավելության է հասել Բյուզանդիայի հանդեպ[18]: Խոսրովը ժողով հրավիրելով, ձգտում էր ցույց տալ, որ քրիստոնեական եկեղեցիների դավանաբանական հարցերի լուծման ծանրության կենտրոնը տեղաշարժվել է Պարսկաստան: Խոսրովի հաղթանակի ձգտումը նաև գաղափարական ասպարեզում այնքան մեծ էր, որ նա նույնիսկ սկսեց արտահայտվել աստվածաբանական հարցերի շուրջ: Նա «իբրեւ ծանեաւ զամենայն հաւաստեաւ, եւ ճշմարտութեամբ ի վերայ եհաս՝ եհարց ցնոսա եւ ասէ. «Նոքա երեքին ընդէ՞ր ոչ ասացին երկուս բնութիւնս բաժանմամբ որպես զսոսայս. յայտ է եթէ պարտ է եւ զմեզ յերկուս բաժանել եւ երկուս ասել թագաւորս, եւ ոչ մի: Ջի եւ ես յերկուց բնութեանց եմ, թէպէտ ի հաւրէ եւ ի մաւրէ թէպէտ ի հոգւոյ եւ ի մարմնոյ: Բայց աստուածութիւնն, թէ յամենայն տեղւոջ ոչ է, եւ զինչ կամի զամենայն լինել կամ առնել ոչ կարէ, աստուածութիւնն զինչ է»[19]: Խոսրովը այստեղ չի անդրադարձել քրիստոնեական եկեղեցիների միջև եղած դավանանքային տարաձայնությունների բուն էությանը: Եվ դա բնական էր, քանզի նա ոչ քրիստոնյա էր և ոչ էլ աստվածաբան: Ուստի պարզունակ կերպով փորձել է հիմնավորել իր նկատառումները:

Չորս Տիեզերական ժողովների վճիռների կապակցությամբ Խոսրով Փարվեզը հրամայեց հարցնել Ջաքարիա հայրապետի և Ալեքսանդրիայից եկած իմաստասերների կարծիքը: Այդ վճիռները համեմատելով Հայոց հա-

վատի հետ՝ նրանք հետևյալ պատասխանը տվեցին. «...Հաւատ ճշմարիտ այն է՝ զոր ի Նիկիայն ասացին առ երանելւոյն Կոստանդիանոսիւ: Եւ նմին միաբան Կոստանդնուպաւլսին եւ Եփեսոսին. եւ նոցին միաբան Հայոց հաւատն ճշմարտութեամբ: Իսկ Քաղկեդոնի ասացեալն ոչ է միաբան նոցին, որպես ձեր բարերարութիւնդ ծանեաւ»[20]:

Հայ միաբնակ դավանանքի մասին Խոսրով Փարվեզին կարող էին տեղեկություններ հաղորդած լինել բացի Սմբատ Բագրատունուց նաև Կոմիտաս Մամիկոնյանը ու Մատթեոս Ամատունին[21]: Խոսրովը հրամայում է «խնդիր առնել ի գանձու տեղւոյն, եւ գտին գրեալ զՆիկիայն հաւատս ճշմարիտս, եւ ի վերայ հասեալ ըստ միաբանութեան հաւատոյ աշխարհիս Հայոց, որ էր կնքեալ մատանեաւ Կաւատայ արքայի եւ որդւոյ նորա Խոսրովու»: Ապա պարսից արքան հրաման է արձակում. «եթէ ամենայն քրիստոնեայք, որ ընդ իմով իշխանութեամբս են՝ հաւատ զՀայոցն կալցին»[22]:

Հայաստանի սահմաններից դուրս Հայոց հավատքի տարածման մասին են վկայում Սեբեոսի հետևյալ տողերը. «Եւ որք միաբանին ընդ Հայոց հաւատոյն ի կողմանս Ասորեստանեայց, Կամյիշով մետրապաւլիտ, եւ այլք տասն եպիսկոպոս. եւ աստուածասէր թագուհին Շիրին, եւ քաջն Սմբատ. եւ բժըշկապետն մեծ: Իսկ զպատճէն ուղիղ խոստովանութեանն արքայ Խոսրով հրամայեաց կնքել իւրով մատանեաւն եւ տալ գանձս արքունի»[23]:

Հայոց հավատքը առաջնային ճանաչած Տիգբոնի ժողովի որոշումը բխում էր Սասանյանների քաղաքական շահերից, քանի որ Քաղկեդոնի ժողովում որոշվել էր, որ Արևելքի եպիսկոպոսները վեճերի դեպքում կարող էին ուղղակի դիմել Կոստանդնուպոլսի պատրիարքին[24], որը Հռոմի պապից հետո ճանաչվել էր երկրորդը և իրավունք ստացել նշանակել մետրոպոլիտներ երեք դիոցեզներում՝ Թրակիայում, Ասիայում և Պոնտոսում[25]: Իսկ դա նաև նշանակում էր, որ արևելյան եկեղեցիների թեմերի նվիրապետական կառուցվածքը սերտորեն համակցվելու էր կայսրության քաղաքական ոլորտին, ինչին հաջորդելու էր տարածքային բռնազավթումը[26]: Սասանյանները, չնայած երկար ժամանակի ընթացքում ընդհանուր ճակատով պայքար էին մղում քրիստոնեության դեմ, այնուամենայնիվ փոփոխված քաղաքական պայմաններում՝ քրիստոնյա եկեղեցիների միջև դավանանքային տարաձայնությունների առկայությամբ, հանդես եկան Հայ եկեղեցու (որը մերժողական դիրք էր գրավել քաղկեդոնականության հանդեպ) «հովանավորի» դերում՝ իրենց քաղաքական ծրագրերը իրականացնելու նպատակով[27]: Այս տեսանկյունից հետաքրքիր է Երուսաղեմի երիցապետ Մոդեստոսի և Հայոց կաթողիկոս Կոմիտասի միջև եղած նամակագրությունը: Սեբեոսը գրել է. «Ապա վասն անկելոց ձերբակալացն հրաման հասեալ ի թագաւորէն՝ առնել ի վերայ նոցա ողորմութիւն, շինել զքաղաքն, եւ զնոսա անդրէն հաստատել յիւրաքանչիւր կարգ: Եւ զհրեայսն հրամայէ հալածական առնել ի քաղաքէն. եւ անդէն վաղվաղակի մեծաւ ստիպով կատարեն զհրամանն արքունի: Եւ

կարգեցին երիցապետ զոմն ի վերայ քաղաքին, անուն Մոդեստոս, որ գրէ ի Հայաստան երկիր»[28]:

Այստեղ կարևոր է ուշադրություն դարձնել երկու հանգամանքի վրա. նախ Խոսրով Փարվեզի վերաբերմունքի փոփոխությունը հրեաների հանդեպ, որոնք մինչ այդ այդքան օգտակար էին եղել պարսիկներին բյուզանդացիների դեմ վարած կռիվներում և երկրորդը՝ հայերի մասնակցությունը Երուսաղեմին պարսիկների պատճառած վնասները վերացնելու գործում: Հրեաների հանդեպ պարսիկների վերաբերմունքի փոփոխությունը և Մոդեստոս երիցապետի և Կոմիտաս կաթողիկոսի միջև եղած նամակագրությունը պետք է դիտվի միևնույն՝ Խոսրով Փարվեզի վարած եկեղեցական քաղաքականության տեսանկյունից: Քանի որ Խոսրովի հրամանը Երուսաղեմի վերաշինության և կարգ ու կանոնի վերահաստատման մասին, ինչպես նաև Մոդեստոսի և Կոմիտասի նամակագրությունը Երուսաղեմի գրավմանը հաջորդած տարիների իրողություններ էին, ուրեմն այդ ամենը կատարվում էր Տիզբոնի ժողովի (615/16 թ.) որոշման ազդեցությամբ: Ինչպես նշել է Մ. Օրմանյանը, Երուսաղեմի աթոռը «Յոբնաղին վերջին օրերէն ի վեր քաղկեդոնիկ դաւանութեան հետեւած էր... Բայց կ'երեւի թէ Երուսաղէմի աթոռն ալ իւր ուղղութիւնը փոխեց, քաղաքին Պարսից ձեռք անցնելէն»: Քրիստոնյա Արևելքի երկրների քաղաքական նվաճումն իրականացման նպատակով Խոսրով Փարվեզը մեծ տեղ սկսեց հատկացնել քրիստոնյա եկեղեցու դավանանքային հարցերին: Իրավացի է Մ. Օրմանյանը, Մոդեստոսի և Կոմիտասի նամակագրությանը քաղաքական գնահատական տալով: Նա այդ նամակագրության մասին գրել է Տիզբոնի ժողովում Ջաքարիա պատրիարքի՝ նեստորական և քաղկեդոնիկ դավանությունների կապակցությամբ արված հայտարարությանը անդրադառնալուց հետո. «Ջաքարիա այդ յայտարարութիւնը կ'ընէր, տեսնելով որ նեստորական եւ քաղկեդոնիկ դաւանութիւններ կասկածաւոր են Խոսրովի աչքին, եւ ինչ որ Ջաքարիա Պարսկաստանի մէջ կ'ընէր, հարկաւ Մոդեստոս ալ, որ անոր տեղապահութիւնը կը վարէր, նոյնը պիտի ընէր Մոդեստոս է, որ առաջին անգամ Կոմիտասի կը գրէ, առիթ առնելով Հայ ուխտաւորներուն Երուսաղէմ երթալը»[29]: Մոդեստոսը, իմանալով պարսից քաղաքական ազդեցության ոլորտում գտնվող երկրներում տեղի ունեցած փոփոխությունների և Հայ եկեղեցուն հատկացված առանձնակի դիրքի մասին, իր նամակում գրել է Երուսաղեմում քրիստոնյաներին տրված պաշտպանության և հրեաներին քաղաքից հեռացման («զնոսա աւտարացուցանել ի քաղաքէն սրբոյ») մասին, խնդրելով «մի պակասել ամենեւին ի յիշել եւ նայել ի մեզ եւ յաղքատս Երուսաղէմի, եւ որ ինչ պիտոյ է՝ լնուլ: Եւ եթէ հնար իցէ զաստուածասէր ձեր նախանձդ եւ ի ձեռնտուութիւն շինածոյ կենարար չարչարանացն ձգել. զի եւ այսմ բարւոյ եւ փափագելի պարգեւաց հանդիպիմք: Բայց եւ զայս աղաչեմ զհայրական զձեր սրբութիւնդ եւ որք ընդ ձեր սրբասուն եպիսկոպոսունսդ են, առաջի նոցա ընթեռնուլ զթուղթդ»[30]:

Եթե հրեաներին Երուսաղեմից դուրս վտարելը ուղղակի բխում էր դավանանքային ասպարեզում պարսից արքունիքի քաղաքականության փոփոխումից, ապա Մոդեստոսը և Կոմիտասը իրենց նամակներում այդ հարցին մոտենում էին քրիստոսաբանության տեսանկյունից[31] և, փաստորեն, նաև այդ եղանակով էին հիմնավորում հրեաների վտարումը Երուսաղեմից: Կոմիտաս կաթողիկոսը իր պատասխան նամակում քաջալերող խոսքերով է մխիթարել Մոդեստոսին:

Սասանյանների դավանանքային քաղաքականության շրջադարձը պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ Վրաց եկեղեցին[32] հարել էր քաղկեդոնականությանը:

Քրիստոնեության հարցը կարևոր գործոն դարձավ Սասանյան Պարսկաստանի արտաքին և ներքին քաղաքականության մեջ: Սասանյանների իշխանության վերջին տասնամյակներում զրադաշտականությունը ստիպված էր ինքը պաշտպանել իր գոյությունը, քանի որ պետությունը, որի հետ այն սերտորեն կապված էր, անկում էր ապրում[33]: Իրանում լայնորեն տարածվել էին տարբեր աղանդներ: Մանիքեականությունը, հատկապես Միջին Ասիայում, նոր հետևորդներ էր գտել[34]: Ավելի ազդեցիկ էր քրիստոնեության տարածումը. մասնավորապես նեստորական եկեղեցու եպիսկոպոսությունները սփռված էին ամբողջ երկրով, և զգալի թիվ էին կազմում այն պարսիկները, որոնք բարձր դիրք էին գրավում, սակայն քրիստոնեություն ընդունելով, նույնիսկ նահատակվեցին նոր կրոնի համար[35]:

Իրանում տեղի է ունենում միաբնակ քրիստոնեության աճ, հիմնականում ի հաշիվ նեստորականության[36]: Դրան զգալի չափով պետք է նպաստեր Տիգբոնի ժողովի որոշումը, որտեղ այլ դավանանքների հետ մեկտեղ մերժվեց նեստորականությունը[37] և ճիշտը համարվեց Հայ եկեղեցու միաբնակ դավանությունը:

Նեստորականության երկրորդ գիծ մղվելն ուներ իր պատճառները: Այն, ճիշտ է, հակադրվում էր բյուզանդական պաշտոնական եկեղեցուն, սակայն, տարածվելով Ասորիքից դուրս, փաստորեն, առևտրական՝ ինքնուրույնության ձգտող խավի դավանանքն էր դարձել և Իրանում հակադրվում էր զրադաշտականությանը: Իսկ Հայ եկեղեցին, լինելով ազգային, այնպիսի անհանդուրժողական դիրք էր ընդունել բյուզանդական եկեղեցու հանդեպ, որ այս ժամանակաշրջանում Սասանյանները ստիպված եղան հաշվի նստել այդ հանգամանքի հետ: Ընդարձակ նվաճումները ամրապնդելու նպատակով Խոսրով Փարվեզը ստիպված էր քրիստոնեական դավանանքի բնագավառում վարել ակտիվ քաղաքականություն: Սակայն մի քանի տարի անց Բյուզանդական կայսրության հակահարվածների տակ ի չիք եղան պարսից արքայի բոլոր ձեռքբերումները թե՛ ռազմա-քաղաքական և թե՛ դավանանքային ասպարեզներում:

Այսպիսով, քրիստոնեական դավանանքի բնագավառում Խոսրով Փար-

վեզի քաղաքականության ակտիվացումը սկսվեց 606/7 թ. և իր գագաթնակետին հասավ Տիգբոնի 615/16 թ. ժողովում, որտեղ քրիստոնյա եկեղեցիներից առաջնությունը տրվեց Հայոց հավատին[38]: Եթե հիշենք Սասանյանների նախկին անհանդուրժողական և թշնամական վերաբերմունքը հայ ժողո-



Սբ. Հռիփսիմե, 618 թ.

վըրդի և եկեղեցու հանդեպ, ապա պարզ կդառնա այն հեղհեղուկ վիճակը, որը, չնայած զգալի տարածքային նվաճումներին, ստեղծվել էր նրանց պետության համար: Հայ Առաքելական եկեղեցու հանդեպ Սասանյան Պարսկաստանի քաղաքականության վերափոխությունը վկայություն էր Սասանյանների պետության խոր ճգնաժամի՝ քաղաքական, սոցիալ-տնտեսական և գաղափարախոսության՝ զրադաշտական կրոնի բնագավառներում:

5. Պարսկա-բյուզանդական պատերազմի ընթացքը

Թվում էր, թե ռազմական հաջողությունները Պարսկաստանի կողմն էին: Պարսկական զորքերը, գրավելով Բյուզանդիայի կենսական կենտրոնները արդեն ընդհուպ մոտեցել էին կայսրության մայրաքաղաքին: Սակայն

այդ պարագայում բեկում առաջացավ պարսկա-բյուզանդական պատերազմում և մեկ տասնամյակ անց հանգեցրեց Սասանյան Պարսկաստանի պարտությանը:

Իսկ մինչ այդ «դիմեաց գնաց Խոռեամ գաւրու իւրով ի Քաղկեդոն, եւ բանակեցաւ դէմ յանդիման Բիւզանդիայ, եւ խնդրէր անցանել եւ գերել զքաղաքն թագաւորանիստ»[1]: Սեբեոսը այս դրվագի կապակցությամբ որևէ ժամանակագրական տվյալ չի հաղորդել: Սակայն դրան նախորդող գլխում (ԼԷ) նա պատմում է Սբ. Հռիփսիմեի տաճարի կառուցման մասին և այն թվագրում Խոսրով Փարվեզի թագավորության ԻԸ-երորդ տարով: Իսկ նշված դրվագին հաջորդող պարբերություններից մեկում, խոսելով Խոսրով Փարվեզի կողմից Հերակլին գրված հրովարտակի մասին, այն թվագրում է պարսից արքայի գահակալության ԼԴ-երորդ տարով: Ուրեմն՝ Քաղկեդոնի հետ կապված նշված դրվագը ժամանակով ընկած է Խոսրով Փարվեզի թագավորության ԻԸ - ԼԴ-երորդ տարիների միջև: Իսկ ինչպես ստորև կտեսնենք, ԼԴ-երորդ տարվա հիշատակությունը պետք է գրչական միջամտության արդյունք համարել, քանի որ այդ տարի լրիվ այլ էր քաղաքական իրավիճակը, որին բացարձակապես չէր կարող համապատասխանել նամակի բովանդակությունը: Նկատի ունենալով, որ նամակի մասին հաղորդմանը հաջորդում է Հերակլ կայսեր պարսկական առաջին արշավանքին (622 թ.) վերաբերող տեղեկությունը, պարզ է, որ ԼԴ-երորդի փոխարեն պետք է առնվազն լիներ ԼԲ-երորդ: Այս դեպքում Քաղկեդոնի հետ կապված նշված դրվագը կարելի կլիներ համարել 618-622 թթ. միջև տեղի ունեցած իրադարձությունների շարքում:

Ա. Ստրատոսը, թերագնահատելով հայկական աղբյուրների հաղորդումները, հակասությունների տեղիք է տվել իր սեփական շարադրանքում: Քաղկեդոնի հետ կապված նշված դրվագի առնչությամբ Շահր-Վարազի (Խոռյամ) մասին հիշատակությունը հայկական աղբյուրներում Ա. Ստրատոսը սխալ է համարել իր աշխատության 115-րդ էջում[2], իսկ 188-րդ էջում այդ նույն հիշատակությունը ճիշտ է համարել, այն նշելով այլ աղբյուրների (Թեոդորոս Սինկելոս, Ջատկական ժամանակագրություն) այնպիսի հաղորդումների շարքում, որոնք, ըստ նրա, անվերապահորեն վկայում են, որ Շահր-Վարազը միայն մեկ անգամ էր եղել Քաղկեդոնում՝ 626 թ.: Ա. Ստրատոսը չի կարողացել կողմնորոշվել, հանդիպելով այնպիսի բարդության, ինչպիսին Սեբեոսի մոտ հիշատակվող ծովային ճակատամարտի մասին տեղեկության բացակայությունն էր Թեոփանեսի շարադրանքում՝ Հերակլի 7-րդ տարով թվագրված հատվածում[3]:

Սեբեոսի և օտար աղբյուրների հաղորդումներից հետևում է, որ պարսիկները 618 և 620 թթ. միջև գրավեցին Քաղկեդոնը, սակայն ծովային մարտում պարտություն կրելով, ստիպված եղան հեռանալ: Պետք է ենթադրել, որ Քաղկեդոնի այս ճակատամարտին մասնակցել է նաև Շահր-Վարազը

(Խոռյամ), որը, թերևս, այստեղ ժամանել էր եգիպտական արշավանքից հետո: Ինչ վերաբերում է 626 թ. ռազմական գործողություններին, ապա Շահր-Վարազը հարձակվել էր Քաղկեդոնի վրա, սակայն ավարների պարտությունը ծովային մարտում հնարավորություն չէր տվել նրանց դաշնակից պարսիկներին էական հաջողության հասնել և վերջիններս բավարարվել էին Քաղկեդոնի մոտ գտնվող շրջանների և քաղաքների ավարառումով և թալանով[4]: Այնպես որ, ծովային երկու ճակատամարտեր են տեղի ունեցել՝ առաջինը 618 և 620 թթ. միջև, իսկ երկրորդը՝ 626 թ.:

Այն որ Ա. Ստրատոսը սխալվել է, Սեբեոսի հաղորդումը դնելով 626 թ. իրադարձությունների շարքում, երևում է Սեբեոսի և Նիկեփորի երկերում եղած տեղեկությունների համեմատական քննությունից: Ըստ Սեբեոսի, «իբրեւ ետես կայսրն Երակղոս զհէնն, որ եկն ի կործանել զթագաւորութիւն նորա՝ ակամայ բարեկամանայ եւ մեծարէ զնոսա իբրեւ զվաստակաւորս եւ զսիրելի հիւրս. եւ ընդ առաջ նորա պատարագաւք, եւ տայր գաւրավարին եւ իշխանացն մեծամեծ ընծայս: Եւ բաշխէր զաւրացն հռոգս, եւ ճաշ եւ ընթրիս ամենայն գաւրացն մինչեւ ցեւթն աւր. եւ ինքն նստեալ ի վերայ նաւու՝ կայր ի մէջ ծովուն եւ խաւսէր ընդ նոսա... Եւ նոցա ընկալեալ զընծայսն՝ հաւանեցան առնել ըստ խնդրոյ նորա»[5]: Ուրեմն, կայսրը գտնվում էր Կոնստանդնուպոլսում և այնտեղից էր եկել բանակցությունների Խոռյամի հետ: Այնուհետև ծովային ճակատամարտում, կորցնելով չորս հազար մարդ, պարսիկները պարտություն կրեցին:

Ըստ Նիկեփորի, 626 թ. ավարների ծովային մարտում կրած պարտությունից հետո Կոստանդին կայսրը և Սերգիոս պատրիարքը Աստվածամոր տաճարում խորին երախտագիտությամբ աղոթում էին Աստծուն[6]: Այսինքն՝ Հերակլը մայրաքաղաքում չէր: Նրա փոխարեն այնտեղ էր գտնվում նրա որդին՝ Կոստանդին Գ-ը, որը նրան գահակից էր[7] 613 թվականից, իսկ ինքնուրույն թագավորեց 641 թ. (փետրվար-մայիս): Ուրեմն մի կողմից Սեբեոսի և մյուս կողմից Թեոփանեսի ու Նիկեփորի հաղորդումները տարբեր ժամանակների են վերաբերում: Քաղկեդոնի մոտ տեղի ունեցած ծովային երկու ճակատամարտերից առաջինի նկարագրությունը պահպանվել է Սեբեոսի շարադրանքում՝ պարսիկների պարտության մասին, իսկ երկրորդը, վերաբերելով ավարների պարտությանը, նկարագրված է Թեոփանեսի և Նիկեփորի կողմից: Սեբեոսի հաղորդումը պատմականորեն ճիշտ է և վերաբերում է 619/20 թ., այն չի կարելի ժամանակագրել 626 թ. պատերազմական գործողությունների շարքում:

Այսպիսով, ըստ Սեբեոսի շարադրանքի հետևյալ պատկերն է ստացվում: Երբ պարսից զորքերը 618/19 թ. հասան Հելեսպոնտոսի ափերը և գրավեցին Քաղկեդոնը, Հերակլը, տեսնելով որ իր թագավորությունը կործանման եզրին է կանգնած, բանակցություններ վարեց պարսից զորավարի հետ: Հերակլի դեսպանները այնուհետև նվերներով մեկնեցին Խոսրով Փար-

վեզի մոտ և նրան հանձնեցին կայսեր հրովարտակը՝ հաշտության և խաղաղության առաջարկով: Խոսրովն ընդունեց նվերները, սակայն դեսպաններին չարձակեց և իր զորքին հրամայեց նավերով անցնել «ի Բիւզանդիա (այսինքն Բյուզանդիոն): Եւ կազմեալ նաւ սկսաւ պատրաստել նաւամարտութիւն ընդ Բիւզանդիայ: Եւ ելին ընդ առաջ նորա ի Բիւզանդիոյ զաւրք նաւամարտիկ: Եւ եղեւ պատերազմ ի մէջ ծովուն, ուստի դարձան ամաւթով զաւրքն Պարսից. եւ կորեան Դ հազար մարդ նաւաւք, եւ այլ ոչ եւս համարձակեցան ի նոյն գործ»[8]:

Չնայած ծովային ճակատամարտի այդպիսի ելքի՝ կայսրության վիճակը շարունակում էր ծանր մնալ, քանի որ պարսիկները գրավել էին Եգիպտոսը[9], Ասորիքը և Կիլիկիան, իսկ սլավոններն ու ավարները՝ Բալկանյան թերակղզին: Հերակլ կայսրը նույնիսկ ցանկացավ մայրաքաղաքը տեղափոխել հյուսիսային Աֆրիկա՝ Կարթագենի տարածքը, սակայն փոթորիկի հետևանքով խորտակվեցին նախօրոք ուղարկված կայսերական գանձերով բեռնված նավերը: Կոնստանդնուպոլսի բնակչության, ինչպես և Սերգիոս պատրիարքի դիմադրությունը թույլ չտվեցին կայսրին իրագործելու իր մտադրությունը[10]:

Ստեղծված իրավիճակում Հերակլը մի շարք միջոցառումներ անցկացրեց, որոնք հնարավորություն ընձեռեցին կայսրությանը ամրապնդել իր դիրքերը և անցնել հակահարձակման: Բյուզանդական կայսրությունը փրկելու համար Հերակլը վերականգնեց բանակի մարտունակությունը՝ հիմնականում հենվելով Փոքր Ասիայից հավաքագրված ռազմական ստորաբաժանումների վրա[11]: Բյուզանդական բանակում աճեց ոչ միայն հեծելազորի դերը, որն անհրաժեշտ էր արևելյան քոչվորների դեմ մղված պատերազմներում, այլև՝ թեթև զինված աղեղնաձիգ ջոկատների նշանակությունը[12]: Հերակլը այս ժամանակաշրջանից սկսեց փոքրասիական բանակաթեմերի հիմնադրմանն ուղղված ռեֆորմի իրականացումը: Ա. Ստրատոսը պաշտպանում է այն տեսակետը, ըստ որի՝ առաջին բանակաթեմը *Արմենիակոնն* էր, որը հիմնվել էր 622-623 թթ., իսկ մի քանի տարի անց կազմակերպվեց *Օպսիկոնը*[13]: Այնուամենայնիվ, այս հարցը քննելիս, Ա. Ստրատոսը թույլ է տվել մի շարք վրիպումներ, որոնք արդյունք էին Բյուզանդական կայսրության արևելյան, հատկապես հայկական հողերից կազմակերպված նահանգների պատմա-աշխարհագրական բնութագրման բնագավառում տեղ գտած թերացումների:

Ա. Ստրատոսը գրել է, որ, ըստ Հիերոկլեսի, Արմենիակոն բանակաթեմին սկզբնապես պատկանում էին հետևյալ նահանգները. Հելլենոպոնտոս (գլխավոր քաղաքները՝ Ամասիա, Սինոպ), Պողեմոնական Պոնտոս (Տրապիզոն, Նեոկեսարիա), Կապադովկիա Ա (Կեսարիա), Կապադովկիա Բ (Տիանա), Առաջին Հայք (Մելիտենե, Արաբիսոս), Երկրորդ Հայք (Սեբաստիա, Կողոնիա, Սատաղ): «Դիլը կարծում է - շարունակում է Ա. Ստրատոսը, - որ

մենք պետք է ավելացնենք նաև Պափլագոնիա նահանգը: Այսպիսով, բանակաթեմը ընդգրկում էր 6-7 նահանգ: 624 թ. հետո դրա մեջ հավանորեն մտան նաև հետևյալ նահանգները. Մեծ Հայք կամ Ներքին Հայք (Թեոդոսուպոլիս-Կարին), Չորրորդ Հայք (Սամոսատ), Միջագետք (Մարտիրուպոլիս, Ամիդ, Դարա)»[14]:

Ա. Ստրատոսը հաշվի չի առել մի շարք հանգամանքներ: Հիերոկլեսը խնդրո առարկա ժամանակաշրջանից մոտ հարյուր տարի առաջ է ապրել և իր *Սինեկդեմը* գրել 527-528 թթ.: Ա. Ստրատոսը, աղավաղել է նաև աղբյուրի հաղորդումները, քանի որ նա դրանց ավելացրել է ավելի ուշ ժամանակաշրջանին վերաբերող տեղեկություններ: Նշենք, որ Հիերոկլեսը, իրոք, տեղեկություններ է հաղորդել Հելլենոպոնտոսի, Պողեմոնական Պոնտոսի, Առաջին և Երկրորդ Կապադովկիաների, Առաջին Հայքի, Երկրորդ Հայքի մասին, սակայն, պարզ պատճառներով նրա երկում խոսք անգամ չէր կարող լինել այն մասին, որ այդ տարածքները սկզբնապես պատկանում էին *Արմենիակոն* բանակաթեմին: Ա. Ստրատոսը նշված հայկական նահանգների կազմը աղավաղված է ներկայացրել: Ըստ Հիերոկլեսի, Առաջին Հայքի կազմում էին Սեբաստիա (կենտրոնը), Նիկոպոլիս, Կողոնիա, Սատաղ, Սեբաստուպոլիս, իսկ Երկրորդ Հայքի՝ Մելիտենե (կենտրոնը), Առկա, Արաբիսոս, Կուկուսոս, Կոմանա, Արիարաթիա քաղաքները[15]: Իսկ Ա. Ստրատոսը Առաջին Հայքի կազմում նշել է Մելիտենե և Արաբիսոս, իսկ Երկրորդ Հայքի՝ Սեբաստիա, Կողոնիա և Սատաղ քաղաքները: Ուրեմն, ըստ Հիերոկլեսի, Առաջին Հայքը և Երկրորդ Հայքը համապատասխանում էին Թեոդոս Ա-ի ժամանակ ստեղծված և մինչև Հուստինիանոսի վերափոխումները գոյություն ունեցած բաժանումներին, իսկ Ա. Ստրատոսը Առաջին Հայքը[16] ներկայացրել է Մավրիկիոսի բաժանման համապատասխան, իսկ Երկրորդ Հայքը՝ այնպիսի կազմով, որպիսին գոյություն չի ունեցել, եթե նկատի ունենանք, որ Հուստինիանոսը թեոդոսյան Առաջին Հայքի կազմից հանելով (և ընդգրկելով իր կողմից նոր կազմակերպած Առաջին Հայքի մեջ, որի կենտրոնը Հուստինիանուպոլիսն էր) Սատաղը, Նիկոպոլիսը և Կողոնիան, դրա մնացած մասից կազմակերպեց Երկրորդ Հայքը Սեբաստիա կենտրոնով (կցելով նաև Կոմանա, Ջելա, Բրիսա քաղաքները): Ա. Ստրատոսը, հավանական է, Երկրորդ Հայքի մասին գրել է հենվելով Բարսեղ Իալիմբանացու Notitia–ում պարունակվող ցուցակի վրա, սակայն, ինչպես վերը նշեցինք, դեռևս Ն. Ադոնցը Գեորգ Կիպրացու երկի հետ մեզ հասած այդ ցուցակի վերնագիրը փոփոխել էր և դարձրել Առաջին Հայք՝ մինչև 535 թ. գոյություն ունեցած վիճակի համապատասխան:

Ինչ վերաբերում է Ա. Ստրատոսի կողմից հիշատակված Չորրորդ Հայք և Միջագետք նահանգներին, ապա խոսքը Դադիմ կենտրոնով «այլ Չորրորդ Հայքի» և «Վերին Միջագետք կամ Չորրորդ Հայք» (կենտրոնը՝ Ամիդ) մասին է, ուստի այս առումով Սամոսատի հիշատակությունը արդարացված չէ, քա-

նի որ այն երբեք չի եղել ոչ «այլ Չորրորդ Հայքի» և ոչ էլ «Չորրորդ Հայքի» կազմում: Ճիշտ է մ.թ.ա. III դարում այն եղել է Երվանդունիների թագավորության մայրաքաղաքը Ծոփք-Կոմագենեում, սակայն ժանամակագրական առումով այդ հանգամանքը նույնպես հնարավորություն չի ընձեռում Սամոսատը համարել Չորրորդ Հայքի կազմում: Ըստ Հիերոկլեսի *Սինեկդեմի*, Սամոսատը Եփրատեսիա նահանգի (կենտրոնը՝ Հերապոլիս) քաղաքներից էր[7]:

Հերակլ կայսրը բացի ռազմական ռեֆորմից[8] (որից բխում էր բանակի վերակառուցումը) նաև արտաքին ակտիվ քաղաքականություն վարեց իր պետության վիճակը բարելավելու համար: Նա կայսրության համար խիստ ծանր պահին, մեծ գումար վճարելով, զինադադար կնքեց ավարների հետ և իր զորամասերը տեղափոխեց Ասիա, իսկ որոշ ժամանակ անց ռազմական դաշինք կնքեց խազարների հետ[9]: Մինչև Պարսկաստանի դեմ արշավանք սկսելը Հերակլը նաև վերցրեց բյուզանդական եկեղեցական գանձերը: Այս բոլոր միջոցառումները նրան հնարավորություն տվեցին անցնելու հակահարձակման: Կայսրը Խաչափայտը Տիզբոն տանելու հանգամանքն օգտագործեց Պարսկաստանին «սրբազան պատերազմ» հայտարարելու համար[10]:

VII դ. 20-ական թթ. բյուզանդա-պարսկական հակամարտությունը մտավ իր եզրափակիչ փուլը Բյուզանդիայի աճող առավելությամբ: Հերակլի գլխավորությամբ ձեռնարկված բյուզանդական զորքերի մի քանի արշավանքները եղան կայսրության հակահարվածը: Հաջորդ տասնամյակներում վերջինիս գումարվեցին խալիֆայության ասպատակությունները, որոնք արագացրին Սասանյանների մայրամուտը: Իսկ առայժմ բյուզանդական զորքերի երթուղիները անցնելու էին Հայաստանով, որը մի քանի տարվա ընթացքում կրկին իր վրա էր կրելու հակամարտող տերությունների ռազմական գործողությունների ծանրությունը:

6. Հայաստանը և Հերակլ կայսեր պարսկական արշավանքները

Հերակլ կայսրը իր առաջին պարսկական արշավանքի նախօրեին կատարեց հոգևոր և աշխարհիկ բնույթի ծիսական արարողություններ: Վերցնելով իրեն ուղղված Խոսրով արքայի ամբարտավան և սպառնալից ոճով գրված հրովարտակը, Հերակլը «հրամայեաց ընթեռնուլ առաջի հայրապետին եւ մեծամեծացն: Եւ մտեալ ի տունն Աստուծոյ՝ տարածեցին զհրովարտակն առաջի սրբոյ սեղանոյն. անկան ի վերայ երեսաց իւրեանց յերկիր առաջի Տեառն, եւ լացին դառնապէս, զի տեսցէ զնախատինսն, զոր նախատեցին զնա թշնամիք նորա: Հաճոյ թուեցաւ Երակլի եւ ամենայն սինկղիտոսացն նստուցանել զԿոստանդոս որդի Երակլի յաթոռ թագաւորութեանն, որ

էր մանուկ փոքր: Եւ Երակլ հանդերձեալ զինքն՝ առնուլ զկին իւր եւ զնալ ընդ արեւելս. ապա յայնժամ աւելի եւս հաստատեցին զԿոստանդին ի պատիւ թագաւորութեան ըստ առաջին բանին: Ապա պատրաստեցաւ Երակլոս կնաւն եւ ներքինեաւքն եւ իշխանաւք դրանն եւ արար զզատիկն ի Կոստանդնուպաւլիս, եւ զայգոյ զատկին նաւեաց ի ծով ի Քաղկեդոն»[1]: 622 թ. գարնանը սկսված այդ պատրաստությունները կոչված էին Պարսկաստանի դեմ վերսկսվող ռազմական գործողություններին սրբազան պատերազմի տեսք տալ, որով, ըստ բյուզանդական քաղաքագետների, բարձրացվելու էր կայսերական բանակի ոգին, ինչպես նաև գաղափարական մերձեցում տեղի կունենար արևելյան քրիստոնյա ժողովուրդների հետ[2]:

Կոստանդնուպոլսից գալով Քաղկեդոն[3] կայսրը հրամայում է փոքրասիական նորակազմ զորամիավորումներին հավաքվել Կապադովկիայի Կեսարիա քաղաքում, որը մինչ այդ արդեն անցել էր բյուզանդացիներին: Ժամանելով Կեսարիա, Հերակլը «կոչել հրամայեաց զամենայն զաւրսն եւ ընթեռնուլ գիրովարտակն առաջին նոցա, եւ պատմէր զելն իւր առ նոսա: Իսկ զաւրն թէպէտ եւ ընդ բանսն խռովեցան, սակայն խնդութեամբ ուրախ եղեն ի վերայ գալստեան նորա»[4]: Սեբեոսը կրկին անդրադարձել է այս հրովարտակին, որը մեզ հասած խմբագրությամբ թվագրված է Խոսրով Փարվեզի ԼԴ-երորդ տարով:

Հրովարտակի մասին հաղորդումը, նախորդելով Հերակլի առաջին արշավանքին վերաբերող շարադրանքին, դժվարություններ է առաջացրել հետազոտողների մոտ: Եթե այն ստացվել էր մինչ Հերակլի առաջին պարսկական արշավանքը (622 թ.)[5], ապա իրոք հակասություն է առաջանում այդ հաղորդումների ժամանակագրական հաջորդականության մեջ: Ենթադրվել է, որ Խոսրովի գահակալության 34-րդ տարվանը համապատասխանում էր 622-623 թթ. ամառների միջև ընկած ժամանակաշրջանը[6]: Ըստ Ն. Բեյնեզի, Սեբեոսի կողմից բերված ժամանակագրությունը սկսած Հերակլի գահ բարձրանալու մասին (Խոսրով Փարվեզի թագավորության ԻԲ-երորդ տարվանը վերաբերող)[7] շարադրանքից, մեկ տարով շեղված է և այդ պատճառով ԼԴ-երորդի փոխարեն պետք է կարդալ ԼԳ-երորդ[8], որը կհամապատասխաներ 622-623 թթ.: Այդ պատճառով գիտնականը ենթադրել է, որ հրովարտակը կայսրը ստացել էր 623 թ. սկզբին[9]:

Ա. Ստրատոսը համաձայն չէ այս կարծիքի հետ, փաստարկելով, որ Հերակլը, 624 թ. մարտին ժամանելով Կոստանդնուպոլիս, 623 թ. սկզբին չէր կարող հրովարտակը ստանալ: Նա գտնում է, որ Հերակլը, հավաքելով իր ռազմական ուժերը, ժամանեց Կեսարիա, որտեղից և 622 թ. աշնանը սկսեց իր առաջխաղացումը[10]: Ա. Ստրատոսը ոչ միայն այս դեպքերի նկարագրությանը նախորդող հաղորդումը հրովարտակի մասին դրել է 624 թ. (այսինքն՝ Խոսրովի գահակալության ԼԴ-երորդ տարվա մասին հիշատակությունը թողել է անփոփոխ, բայց պատմիչը չէր կարող գրել նախ 624 թ. հղված հրո-

վարտակի մասին, իսկ այնուհետև այն հիշատակեր 622 թ. իրադարձությունների առնչությամբ), այլև այն վավերական չի համարել: Հետազոտողը ենթադրել է, որ Սեբեոսին հասել էր մի ավանդություն, որը ճիշտ էր նամակի կապակցությամբ, սակայն վերջինիս բովանդակությունը[11], հանդիսանալով պատմիչի սեփական երևակայության արգասիքը, սխալ է: Ինչ վերաբերում է հաջորդ պարբերությունում Կոստանդնին վերաբերող տեղեկությանը, ապա Ա. Ստրատոսը այն նույնպես պատմիչի երևակայության արդյունք է համարել, քանի որ, ինչպես ինքն է նշում, Կոստանդինը որպես համակայսր թագադրվել էր 612 թ. կամ 613 թ.[12]: Սակայն հետազոտողի ուշադրությունից վրիպել է այն փաստը, որ Սեբեոսը քաջատեղյակ էր Կոստանդնի հետ կապված այդ երկու իրադարձություններին: Պատմիչը նախ գրել է Հերակլի կողմից Կոստանդնին թագավորեցնելու մասին, որը վերաբերում է 612/3 թ.: Այս կապակցությամբ կարդում ենք. «Յայնմ ժամանակի թագաւորեցոյց Հերակղոս զորդի իւր զԿոստանդին... հաստատեաց զնա յաթոռ թագաւորութեան իւրոյ»[13]: Այնուհետև 622թ. Հերակլ կայսրին «հաճոյ թուեցաք... նստուցանել զԿոստանդիոս... յաթոռ թագաւորութեանն»[14]:

Կարելի է տեսնել, որ Ա. Ստրատոսը արդարացի չէ, Սեբեոսի այս հաղորդումներին բացասական գնահատական տալով, քանի որ նա որևէ էական փաստարկ չի բերել ժխտելու հրովարտակի վավերականությունը: Սեբեոսը նկարագրվող դեպքերի ժամանակակիցն էր և կարիք չուներ հորինելու կամ նկարազարդելու հրովարտակի բովանդակությունը: Ոչինչ չարժեր Խոսրով Փարվեզին Հերակլին վիրավորելու և ստորացնելու նպատակով օգտագործել հենց այն արտահայտությունները, որոնք առկա են հրովարտակում: Հրովարտակի ոգին լրիվ արտացոլում էր այն իրավիճակը, որը VII դ. 20-ական թթ. շեմին ստեղծվել էր բյուզանդա-պարսկական հարաբերություններում:

Ուրեմն՝ Սեբեոսի հաղորդումը հրովարտակի մասին դիտարկելով նրա շարադրանքի ժամանակագրական հաջորդականության տեսանկյունից կարելի է ասել, որ ԼԴ-երորդ տարվա մասին հիշատակությունը իրոք գրչական միջամտության արդյունք է և այն պետք է ուղղել ԼԲ կամ ԼԳ-երորդի: Այնպես որ, Խոսրովը Հերակլին հրովարտակը ուղարկել էր մինչ կայսեր 622 թ. պարսկական առաջին արշավանքը: Եվ, ինչպես Սեբեոսի վերոհիշյալ հաղորդումից երևաց, հրովարտակի ընթերցումը առաջացրեց բուռն վրդովմունք Հերակլի զորքում:

Հերակլը մտադրվել էր Հայաստանի վրայով արշավել դեպի Տիգբոն: Պարսկական զորքը, փորձելով կասեցնել Հերակլի զորքի առաջընթացը, թիկունքից սպառնալիքներ էր ստեղծում: Տեղի ունեցած ճակատամարտում պարսիկները պարտություն կրեցին[15]: Քանի որ պարտված զորքը վտանգավոր չէր, կայսրը չհետապնդեց նրան:

623 թ. Հերակլը ստիպված էր զբաղվել Բյուզանդիայի վրա կախված

ավարական լայնածավալ ռազմական գործողությունների սպառնալիքի վերացմամբ: Ավարների անսպասելի գրոհը անակնկալի էր բերել կայսրին և մեծ դժվարությամբ նա կարողացավ ավարների հետ խաղաղության պայմանագիր կնքել: Չնայած այդ պայմանագիրը մեծ հույսեր չէր ներշնչում, սակայն Հերակլը ձգտելու էր մինչ ավարների նոր հարձակումը ավարտել պատերազմը Պարսկաստանի հետ[16]: Այսպիսով, կայսրը հնարավորություն ստացավ վերսկսել իր արշավանքը Պարսկաստանի դեմ:

Հերակլի արշավանքի երթուղին Պոնտոսի, Փոքր Հայքի, Թեոդոսուպոլիս-Կարինի, Վանանդի, Շիրակի վրայով անցնում էր Դվին, ապա Նախճավան (Նախիջևան), Հեր, այնտեղից՝ Ուրմիայից հարավ գտնվող Գանձակ[17]: Ըստ Սեբեոսի և Թովմա Արծրունու, Դվինը, Նախճավանը և Որմի (Ուրմիա) քաղաքները կայսերական զորքերի կողմից գրավված և ավերված են եղել[18], ուրեմն, ինչպես ենթադրել է Հ. Մանանդյանը, դրանք դիմադրություն են ցույց տվել[19]: Յու. Կուլակովսկին, ուշադրություն դարձնելով Հերակլի հայկական ծագման վրա, նշել է, որ տեղական բնակչությունը նրան դիմավորել էր առանց դիմադրության, որպես օրինական տիրակալի, որը վերականգնում էր պարսից նվաճումով բռնի կերպով ընդհատված հին հարաբերությունները[20]: Ինչպես հետևում է սկզբնաղբյուրների վերլուծությունից, այս հարցում պետք է ճիշտ լինի Հ. Մանանդյանի եզրակացությունը: Բացի այդ, անհրաժեշտ է նշել, որ, իրականացնելով կայսերական քաղաքականությունը, բյուզանդական միապետները, անկախ իրենց ծագումից, Հայաստանի հանդեպ հանդես էին գալիս որպես նվաճողներ:

Հետապնդելով Խոսրովին, որը հասել էր մինչև Դաստակերտ (Տիգբոնի մոտ), Հերակլը Գանձակից հետո գրավեց Թեբարմայսը[21], այն կրակի մատնեց կռատան հետ մեկտեղ: Այս կապակցությամբ Սեբեոսը գրել է, որ Հերակլը «դիմեալ ի Գանձակ Ատրպատականի՝ կործանէ եւ զբագինս հրատին մեծի, որում Վշնասպն կոչէին»[22]: Թովմա Արծրունին ավելացնում է, որ սպանված պարսիկների դիակները Հերակլը լցրեց կռատան դիմացի լիճը, ինչպես նաև ավերեց Համադանը և Մայը[23]: Վերջինս, գտնվելով Հոլվան լեռնանցքի և Համադան (Էկբատան) քաղաքի միջև՝ արևմտյան Մարաստանում, իր մեջ ընդգրկում էր պարթևական նախկին նահանգների՝ Միդիայի (Մարաստան) և Կամբադենեյի տարածքը[24]:

Խոսրով Փարվեզը վիճակը փրկելու համար շտապ միջոցներ ձեռնարկեց: Նա ետ կանչեց արևմուտքում գտնվող զորքերը, իսկ ինքը հավաքեց իր գանձերը Տիգբոնում և պատրաստվեց փախուստի[25]: Հերակլը շարունակեց հետապնդումը, սակայն, տեղեկանալով, որ Խոսրովին օգնության շտապող զորքը Խոռեամի (Շահր-Վարազ-Ռազմիոզան) գլխավորությամբ հասել էր Մրծուին (իմա՝ Մծբին) քաղաքը, «առնու զգաւրս իւր եւ գերութիւն, եւ դառնայ առ ամուր աշխարհաւն Մարաց. գայ հասանէ ի Փայտակարան»[26]: Սեբեոսի և Թովմա Արծրունու հաղորդումներից հետևում է, որ, վերադառնալով

Համադանից և Մայից, Հերակլը Ատրպատականով անցել էր հյուսիս-արևելյան ուղղությամբ և, մտնելով Հայաստան՝ Փայտակարանով եկել էր Ուտիք, որտեղ բանակել էր «առ հեղեղատովն, որ ի մէջ սահմանացն զեղջն Կաղանկատուաց. եւ կոխեցին քանդեցին զգեղեցիկ ստացուածս այգեստանեացն եւ գիւղաստանեացն, ընդ որ անցանէին: Եւ անտի չուեալ բանակեցան առ հեղեղատովն Տրտուայ՝ մօտ ի գիւղն Դիւտական»[27]:

Այստեղ բյուզանդական բանակի դեմ առաջինը դուրս եկավ Շահրապղականը[28]: Խոսրով Փարվեզը իր մյուս զորավարին՝ Շահր-Վարազին հրամայել էր փակել Հերակլի ճանապարհը: Շահր-Վարազը «փութով հասանէ յԱյրարատ, եւ անցանէ ի Գարդման ընդդէմ նորա, եւ բանակի ի միւս Տիգրանակերտի յանդիման նորա»[29]: Ուրեմն, Շահր-Վարազի զորքը, որը արևմուտքից վերադարձել էր Պարսկաստան, այնտեղից ներխուժելով Հայաստան՝ Այրարատի հարավում գտնվող Շարուրի դաշտով մտել էր Սյունիք, որի Վայոց Ձոր, Գեղարքունի և Սոդք գավառներով անցել էր Ուտիքի Գարդման գավառը և բանակել *մյուս* Տիգրանակերտում: Շահր-Վարազի նպատակն էր կանխել Հերակլի զորքերի տեղաշարժը դեպի հյուսիս-արևմուտք[30]: Այդ ժամանակ թիկունքից վրա հասավ նաև Շահեն պատգոսպանի զորքը և ճամբար դրեց Կուր գետի աջափնյա վտակ Խաչենագետի և Արաքս գետի ձախափնյա վտակ Քարքարի միջև գտնվող Տիգրանակերտ ավանում[31], փակելով Հերակլի ճանապարհը դեպի արևելք և հարավ:

Հերակլը, տեսնելով, «եթէ ի մէջ արկին զնա՝ դարձաւ ի վերայ զաւրուն՝ որ ի թիկանց կողմանէ, հապճեպ զաւրութեամբ եհար զնա եւ խորտակեաց եւ գնաց ընդ Ծղուկս. եւ թափեցաւ ընդ լեռնակողմն ի դաշտն Նախճաւանի ի ձմերան ժամանակի»[32]: Ինչպես երևում է, կայսրը առանց մարտի բռնվելու *միւս* Տիգրանակերտում կանգնած Շահր-Վարազի զորքի հետ Սյունիքով անցել էր Նախճավան: Այս ընթացքում լազերը և աբազգները (աբխազները), երկյուղելով իրենց դաշնակից բյուզանդական բանակին բաժին հասած դժվարություններից, լքեցին Հերակլին և հեռացան իրենց հայրենի երկրները[33]:

Շահենի ջախջախված զորքի մնացորդները միացան Շահր-Վարազի զորքին և հետապնդեցին կայսրին, որը անցավ Երասխ գետը և բանակեց Վրնջունիս ավանի մոտ: Նույն օրը պարսից զորքը չհասցրեց անցնել գետը, ու Հերակլի բանակը Բագրևանդով սրընթաց մտավ Ապահունիք, որտեղ ճամբար դրեց Հրճմունք գյուղի մոտ[34]: Պարսից զորքը բանակատեղի է ընտրում Աղիովիտում: Շահր-Վարազը վեց հազար զինվորով գնում է Արճեշ (Տուրուբերանի Աղիովիտ գավառի հարավում), որպեսզի գիշերով հարձակվի Հերակլի բանակի վրա: Շահր-Վարազը Արճեշից հինգ հարյուր հոգանոց մի ջոկատ է ուղարկում Աղի: Հերակլի ուղարկած զորքը ջարդում է այդ ջոկատը, որից միայն մի հեծյալի է հաջողվում հասնել Արճեշ և պատմել պատահածի մասին[35]: Վրա հասած Հերակլի զորքը, շրջապատելով քաղաքը,

ջարդում է պարսից ընտրյալ գունդը և գրավում Արճեշը: Շահր-Վարազին հաջողվում է փախչել Աղիովիտում բանակած իր հիմնական զորքի մոտ[36]: Կայսրն Արճեշից գնում է Մարտիրուպոլիս (Տիգրանակերտ), այնուհետև՝ Ամիդ[37]: Բյուզանդացիներին հետապնդող Շահր-Վարազի զորքը հոգնածության պատճառով այլևս ի վիճակի չէր մարտի բռնվել և «գնացեալ ի կողմանս Ասիացւոց՝ անդ սփռեալ դադարեցին»[38]: Ամիդից Հերակլի զորքը Սամոսատի և Գերմանիկեի վրայով գնում է Կիլիկիայի Ադանա քաղաքը, այնուհետև՝ Սեբաստիա, որտեղ և անց է կացնում ձմեռը[39]:

Մինչ Հերակլի բանակը Փոքր Ասիայի հյուսիսարևելյան երկրամասում էր, 626 թ. գարնանը Շահր-Վարազի գլխավորությամբ պարսից զորքը հակահարձակման անցավ՝ նախնական պայմանավորվածություն ունենալով ավարների հետ, որոնք ցանկանում էին գրավել Կոստանդնուպոլիսը[40]: Ավարները և սլավոնները մայիսի սկզբներին ավերեցին Թրակիան և պաշարեցին Թեսալոնիկեն, սակայն ապարդյուն: Խոսրով Փարվեզի հիմնական նպատակն էր, սպառնալով Կոստանդնուպոլսին, ստիպել Հերակլին հեռանալ Արևելքից[41]: Սակայն նրա ծիգերը ապարդյուն էին: Ավարների պարտությունը ծովային ճակատամարտում ստիպեց պարսիկներին հանել Քաղկեդոնի պաշարումը և հեռանալ այդտեղից, թալանելով և ավերելով հարակից շրջանները և քաղաքները[42]: Հերակլը, իր հերթին, դաշնակցեց խազարների[43] հետ: Հերակլը, գնալով Եգեր (Լազիւիկէ)[44], խազարների մոտ է ուղարկում իր իշխաններից մեկին՝ Անդրեին, որը վերադառնում է կայսեր մոտ Ջեբու-խաքանի ուղարկած հեծյալ ջոկատով: Մովսես Կաղանկատվացին գրել է. «Եւ յանդիման լեալ մեծի կայսերն Հերակլեայ - հաստատեն առ միմեանս զերդմունս ըստ իւրաքանչիւր օրինաց: Եւ առեալ ի նմանէ զհրաման վասն ելիցն իւրեանց՝ դարձան անդրէն ընդ նոյն ճանապարհ աշխարհն իւրեանց. ոչ ինչ կասկածեալ յումեքէ»[45]:

Կայսրության արտաքին քաղաքական ելևէջները բացասաբար էին անդրադառնում Հայաստանի և Վիրքի ճակատագրի վրա: Բյուզանդիայի հետ ռազմական դաշինք կնքելուց հետո խազարական հրոսակները, ներխուժելով Դերբենդից և ավերածություններ գործելով, պաշարեցին Տփղիսը[46]: Կայսրը, թողնելով լազերի հողը, միանում է նրանց: Հերակլի ճանապարհը Տրապիզոնից դեպի Տփղիս անցնում էր Փասիս-Ռիոն գետի հոսանքով տարածվող երկրամասով, այսինքն՝ Կողքիսով[47]: Երբ կայսրը մոտեցավ պաշարված Տփղիսին, վրաց իշխան Ստեփանոսը խիզախորեն գլխավորում էր քաղաքի պաշտպանությունը[48]:

Տփղիսի պաշարումը ոչինչ չտվեց բյուզանդացիներին ու խազարներին: Պաշարվածները[49] նույնիսկ ծաղրուծանակի ենթարկեցին խազարների թագավորին: Հերակլը, իր բանակին միացնելով խազարների 40000-անոց հեծելազորը, շարժվեց հարավ՝ Հայաստանի միջով դեպի Պարսկաստան: Սեբեոսը նշել է կայսեր հետևյալ երթուղին. «Յայնժամ առեալ Երակլի զզաւրս

իւր՝ դարձաւ յերկիրն Հայոց, անցեալ ընդ Շիրակ հասանէ ի հուն գետոյն Երասխայ, եւ անց ընդ գետաւն առ Վարդանակերտաւն աւանաւ, երթեալ թափեցաւ ի Գոգովիտ գաւառ: Եւ Ռոճ Վեհանայ եւ զաւրուն Պարսից կարծեցեալ զնոսա փախստական գնալ: Իսկ նորա ճանապարհ կալեալ ի Հեր եւ ի Ջարեւանդ գաւառ, դէպ ուղիղ ի Տիզբոն ի վերայ Խոսրովու: Եւ իբրեւ միջամուխ եղեւ ի սահմանս Ատրպատական գաւառի՝ ապա ուրեմն լուր եղեւ Ռոճ Վեհանայ. առ զզաւրս իւր եւ գնաց զհետ նորա ի Նախճաւան քաղաք»[50]: Այս հաղորդման հիման վրա Հ. Մանանդյանը նշել է կայսեր հետևյալ երթուղին. Տփղիսի շրջանից Կուրի հովտով դեպի հարավ՝ Ախլքալակ, այնտեղից Շիրակ և դեպի Վարդանակերտ ու այնուհետև՝ Որդսպու (Կոգովիտում) - Արտազ - Նվարսակ - Խոյ (Հեր) - այժմյան Թասվիջ - Ջիրա - Ռևանդուզ[51]:

Հերակլի այս արշավանքի երթուղու կապակցությամբ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել XI դարի պատմիչ Սումբատ Դավիթիսձեի այն հաղորդման վրա, որտեղ ասվում է, որ Տփղիսի պաշարումից հետո Հերակլը «ժամանեց Գարդաբանի Վարազ Գագելիի մոտ և տեղավորվեց Խուզաշեն կոչվող վայրում ու մկրտեց Հերակլը Վարազ Գագելիին և նրա ամբողջ ժողովրդին: Եվ սկսեց եկեղեցի կառուցել... Ուղևորվեց Բերդուջ և տեղավորվեց գյուղի մեջտեղում... Իսկ Ջիբգուն գրավեց Տփղիսի բերդը, գերի վերցրեց ցիխիստավին, նրա բերանը լցրեց դրահականներով. հանդգնության համար նրա մաշկը քերթեց և ուղարկեց կայսեր ետևից Գարդաբանի Վարազ Գագելիին: Գարդաբանիից կայսրը անցավ Լալ և իր մոտ կանչեց մեցեկևանցիների մթավարին, կնքեց նրան և ուղևորվեց Բաղդադ»[52]:

Ինչպես հետևում է այս հաղորդումից, Հերակլը, թողնելով Տփղիսի պաշարումը, գնաց ոչ թե արևմտյան, այլ հարավային ուղղությամբ՝ Կուրի ձախ ափով, թերևս վրացական Գարդաբանի շրջանով, այնուհետև՝ անցնելով Կուրի աջ ափը, մտավ հայկական Գարդման գավառը, որտեղ հանդիպեց Վարազ Գրիգորին:

Խնդրո առարկա ժամանակաշրջանի Գարդմանի տարածքային ընդգրկման մասին խոսելիս անհրաժեշտ է նկատի ունենալ Բ. Ուլուբաբյանի այն կարծիքը, որ բուն Գարդմանը չի կարելի շփոթել Միհրանյանների այն տիրույթի հետ, որին նրանք տեր դարձան ուժով: Միհրանյանների տիրույթը ավանդաբար նույնպես կոչվում էր Գարդման, սակայն այն իր մեջ ընդգրկում էր նաև հարևան գավառներից գրավված տարածքներ[53]: Կարելի է համաձայնվել պատմագիտության մեջ հայտնված այն կարծիքի հետ, ըստ որի, Վարազ-Գրիգորը կոչվում է «Գագելի», որպես Գազ ամրոցի բնակիչ և տիրակալ[54], որը գտնվում էր Գուգարաց բդեշխության Կողբոփոր գավառում[55]: Այս գավառի տարածքը ի թիվս այլ գավառների, ըստ երևույթին, նույնպես նվաճվել էր Գարդմանի նոր տերերի՝ Միհրանյանների կողմից[56]: Գարդմանի ընդարձակված տարածքում էր, ըստ երևույթին, գտնվում Բերդուջ բնակա-

վայրը[57], որտեղից կայսրը եկավ Լալ[58] (Լալա կամ Լալ գյուղը Աղստև գետի հովտում)։ Այստեղից բյուզանդական բանակը Աղստևի և Փամբակի գետահովիտներով (Բազումի և Փամբակի լեռնաշղթաների միջև) արշավեց Շիրակ տանող ճանապարհով։ Ըստ Սեբեոսի, Հերակլը, անցնելով Շիրակով, հասավ Արաքս գետը և անցում կատարեց Վարդանակերտ ավանի մոտ։ Կայսեր հետագա երթուղին անցել էր Կոգովիտով[59], Ջարևանդով[60] և Խոյով (Հեր), Ատրպատականի սանմանամերձ երկրամասով, Ջարասպ լեռան մոտով՝ Նինվեի դաշտ։ Այստեղ Հերակլը պարտության մատնեց պարսից բանակին։

628 թ. սկզբներին բյուզանդացիները[62] գրավեցին և ավարառման ենթարկեցին Դաստակերտում գտնվող Խոսրով Փարվեզի ապարանքները։ Պարսկական ազնվականությունը, տեսնելով պայքարի անհուսալիությունը, հեղաշրջում կատարեց՝ Խոսրովին գահընկեց արեց, սպանեց ու նրա տեղը նստեցրեց որդուն՝ Կավատ Շերոյեին (25 փետրվարի, 628 թ.)։ Պարսից մեծամեծներն այդ իրավիճակում խաղաղության առաջարկով դիմեցին Հերակլին, որն ընդունեց այն[63]։ Երկու տերությունների միջև հաշտության պայմանագիր կնքվեց[64]։

Պարսկաստանն այլևս ի վիճակի չէր իր գերիշխանության տակ պահել Հայաստանի արևելյան մասը։ Պարսից արքունիքում տեղի ունեցող գահակալական փոփոխությունները, որոնք արգասիք էին երկրում տիրած ընդհանուր ճգնաժամի, հնարավորություն չէին տալիս շահնշահերին ակտիվ արտաքին քաղաքականություն վարել[65]։ Սասանյան պետության անկման և Արաբական խալիֆայության քաղաքական ասպարեզ դուրս գալու պայմաններում, երբ Առաջավոր Ասիայում փոփոխվում էր հակամարտող տերությունների ուժերի հարաբերակցությունը, Հայաստանի նախարարական վերնախավը, Բյուզանդական կայսրության ոտնձգությունների պայմաններում, հսկայական ջանքեր էր գործադրում վերականգնելու Հայոց երկրի անկախությունը, պետական համակարգը և տարածքային ամբողջականությունը։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

1. Պարսկա-բյուզանդական ռազմական գործողությունների վերսկսումը

1. Սասանյանների վերջին պատերազմների բնույթի մասին տես Пигулевская Н. В., Византия и Иран на рубеже VI-VII вв., М.-Л., 1946, էջ 197-198; История Византии, հ. I, М., 1967, էջ 362:

2. Левченко М. В., История Византии, М., 1940, էջ 102; Пигулевская Н. В., Византия на путях в Индию, М., 1951, էջ 403; Курбатов Г. Л., История Византии (историография), Л., 1975, էջ 148,188, 192:

3. Фрай Р., Наследие Ирана, М., 1972, էջ 320:

4. Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, աշխ., Աշ.Աբրահամյանի, Երևան, 1941, էջ 162, Թովմա Արծրունի, էջ 88, Միքայել Ասորի, Ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1871, էջ 284, Chronique de Michel le Syrien. Editée pour la première fois et traduite en français par J.-B. Chabot, t.II, Paris, 1963, էջ 371-372:

5. Колесников А.И., Иран в начале VII в., էջ 78-84:

6. Հմմտ. The Cambridge Medieval History, հ. IV. The Byzantine Empire. Part I. Byzantium and its neighbours Cambridge, 1966, էջ 29, 35 (այսուհետև Cambr. MH): VII դ. սկզբի պարսկա-բյուզանդական պատերազմները ուսումնասիրելու համար կարևոր նշանակություն ունի Սեբեոսի երկը: Սեբեոսի, Թեոփանեսի, Նիկեփորի և այլ պատմիչների հաղորդումները լրացնելով միմյանց հնարավորություն են տալիս մանրամասնորեն հետազոտել Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև տեղի ունեցած ռազմական գործողությունների ընթացքը (Gibbon E., The History of the Decline and Fall of the Roman Empire, ed. by J.-B Bury, t. V, London, 1838, Appendix I, էջ 498, Gerland E. Die persischen Feldzuge des Keisers Heracleios. - BZ, III, 1894, էջ 330, Антиох Стратиг, Пленение Иерусалима персами в 614, СПб, 1909, էջ 1 (исслед. Н. Марр), Stratos A. նշվ. աշխ., հ. I, էջ 4):

7. Ըստ Մ. Չամչյանի, «որդի Հայկազինն Ներսեհի բասենցւոյ» (տես Պատմութիւն Հայոց, հ. Բ, էջ 308):

8. Սեբեոս, էջ 107: Կոստանդինե քաղաքը համապատասխանում էր Tella de-Mauzelat քաղաքին (տես Honigmann E., Die Ostgrenze des Byzantinischen Reiches, էջ 4):

9. Theophanis Chronographia, recensvit C. de Boor, vol. I, Lipsiae, 1883, Hildescheim, 1963, էջ 292: Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 13, Բյուզանդական աղբյուրներ Դ, Թեոփանես Խոստովանող, թարգմ. բնագրից, առաջաբան և ծան. Հ. Բարթիկյանի, Երևան, 1983, էջ 6, Georgius Cedrenus-Ioannis Scilitzae ope ab I. Bekkero suppletus et emendatus. Tomus prior, Bonnae, 1838, էջ 710: Ա.Ստրատոսը ենթադրել է, որ Խոսրովին ուղղված Ներսեսի խնդրանքը օգնության մասին արվել էր Մավրիկիոսի որդու՝ Թեոդոսի անունից: Գիտնականը չի անդրադարձել Կոստանդինեի մոտ տեղի ունեցած ճակատամարտին և Գերմանի վիրավորելը կապել է Եդեսիայի մոտ տեղի ունեցած ճակատամարտի հետ (Stratos A., նշվ. աշխ., հ. I, էջ 60-61):

10.Սեբեոս, էջ 107: Աղբյուրների հաղորդումները Թեոդոսի մասին տարբեր են (Սեբեոս, էջ 106, Theophyl. Sim., VIII, 15.8, Theoph.Chron., էջ 291, Georg. Cedr., էջ 709-710): Կարծիք է հայտնվել, որ Թեոդոսը մահապատժի էր ենթարկվել Կոս-

տանդնուպոլսից դուրս, իսկ մայրաքաղաքում լուրեր էին տարածվում, թե նա փախել էր: Խոսրովը մի միաբնակ պատրիարքի հրամայում է «Կեղծ-Թեոդոսին» օծել որպես թագավոր, որն այնուհետև մեկնում է գրավելու իր կարծեցյալ հոր գահը (տես История Византии, т. I, էջ 362):

11. Այդ ժամանակ կայսրության մայրաքաղաքում Փոկասի համար տագնապալից վիճակ էր ստեղծվել (Пигулевская Н.В., Византия и Иран на рубеже VI и VII вв., էջ 180-181): Ա.Ստրատոսը երկու անգամ գրել է, որ Խոսրովը իր զորքի մի մասը թողել էր Դարայի մոտ և մյուս մասի գլուխն անցած եկել էր Եդեսիայի շրջակայքը, որտեղ տեղի ունեցած ճակատամարտում ջախջախվեց քաղաքը պաշարող բյուզանդական զորքը: Ընդ որում, Ա.Ստրատոսը նշել է. «Սեբեոսը գրում է, որ Խոսրովը շարժվեց Եդեսիայի վրա, բայց այդ ճիշտ չէ, քանի որ ճակատամարտի վայրը Դարայի մոտ էր» (Stratos A. նշվ. աշխ., հ. I, էջ 60-61): Սակայն Կոստանդինեի մոտ տեղի ունեցած ճակատամարտի մասին բյուզանդական աղբյուրների հաղորդումն անտեսելու հետևանքով Ա. Ստրատոսը ճիշտ չի ժամանակագրել Սեբեոսի հաղորդումը և Եդեսիայի մոտ տեղի ունեցած ճակատամարտը, երբ Ներսեսը դեռևս գտնվում էր քաղաքում, հետազոտողը կապել է Լեոնտիոս զորավարի ժամանակաշրջանի հետ:

12. История Византии, հ. I, էջ 348, 355, 360: Ավարները թափանցեցին Արևելյան Եվրոպա՝ դուրս մղված լինելով Մոնղոլիայի տարածքից թուրքական ցեղերի կողմից (Cambr. MH, էջ 736): Ենթադրվել է, որ սլավոնական ցեղերը եկել էին Բալկաններ VII դ. առաջին կեսին, ոչ թե Դանուբի ափին երկար մնալուց հետո, այլ անմիջականորեն Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի հեռավոր շրջաններից (տես Раннефеодальные государства на Балканах, VI-XII вв., М., 1985, էջ 67):

13. Theoph. Chron., I, էջ 292, Բյուզանդական աղբյուրներ Դ, էջ 6, 218, ծան. 33:

14.Stratos A., նշվ. աշխ., հ. I, էջ 60.

15. Ներսեսի գերի ընկնելու և մահապատժի ենթարկվելու կապակցությամբ Սեբեոսը հիշատակել է միայն Ուռհան (Սեբեոս, էջ 107): Պատմիչը Հիերապոլիսը չի հիշատակել (այս դեպքերի հետազոտությունը տես նաև Ласкин Г. Ираклий. Византийское государство в первой пол.VII в., Харьков, 1889, էջ 6-7):

16. Theoph. Chron., I, էջ 292: Արզամոնը համապատասխանում էր Harzam-ին (այժմ՝ Tell-Harzan)՝ Մարդինից հարավ-արևմուտք (Honigmann E. Die Ostgrenze... էջ 9, 25, քարտեզ 1)՝ Կոստանդինեից Դարայի ճանապարհին: Իսկ Ա.Ստրատոսի կարծիքով Արքսամոնը (Արզամոնը) Դարայից 12 մղոն հարավ-արևելք էր գտնվում (Stratos A., նշվ. աշխ., հ. I, էջ 62):

17. Սեբեոս, էջ 107; հմմտ. Ասողիկ, էջ 113:

18. Theoph.Chron., I, էջ 292, Բյուզանդական աղբյուրներ Դ, էջ 6-7: Ինչպես նշել է Սիմոկատան «քարդարիգան» բարձր աստիճանի պարթևական անվանում էր, քանի որ պարսիկներին ավելի հաճելի էր անվանվել ըստ իրենց զբաղեցրած պաշտոնի (Theophyl. Sim., I. 9.6): Քարդարիգա անունը հանդիպում է նաև Քրտիկար ձևով (Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը Վ. Առաքելյանի, Երևան, 1983, էջ 134): Ա.Ստրատոսը «Քարդարիգա» անուն-կոչումը նշել է Սեբեոսի հիշատակած Աշտատ Յեզտայարի կապակցությամբ (Stratos A. նշվ. աշխ., էջ 64): Այս անվան մասին տես նաև Бартикян Р. М., Об армянской памятной записи в грузинской рукописи, содержащей Типик Григория Пакуриана. - ԼՀԳ, 1978, № 7, էջ 97-101: Ն. Պիգուլևսկայան հավանական էր համարում նույնացնել «քարդարիգա» կոչումով զորավարին արևմուտքի «պատգոսպան» Շահենի հետ (Пигулевская Н., Византия и Иран на рубеже VI-VII вв., էջ 196): Անհրաժեշտ է նշել, որ դրանք տարբեր անձնավո-

րություններ էին, քանի որ Մովսես Կաղանկատվացին Քրտիկարին հիշատակել է Շահենից առանձին (Մովսես Կաղանկատվացի, էջ 134): «Ռուզմիոզան» (Ռոզմի Ոգան) և «Շահր-Վարազ», ինչպես նշել է Մովսես Կաղանկատվացին, միևնույն՝ Խոռեան (Խոռեամ) զորավարի տարբեր անվանումներն էին, «վասն մղելոյ նորա եւ յօրինելոյ զճակատն պատերազմաց եւ զյաղթութիւնսն կատարելոյ ըստ խորագիտութեանն Պարսից, այլ եւ այլ պճնող անուամբ յորջորջեն զնա» (նույն տեղում, էջ 129, տես նաև Սեբեոս, էջ 115):

19. Այս դեպքերի մասին Հովհան Մամիկոնյանի շարադրանքը առասպելական երանգ է պարունակում (Պատմութիւն Տարօնոյ, էջ 190-203), ուստի նախապատվությունը պետք է տալ Սեբեոսին:

Չնայած պարսկա-բյուզանդական պատերազմի սկիզբը Ռ. Գրուսեն համարել է 604 թ., սակայն Ջուվան Վեհի ժամանումը Դվին նշել է կայացած 603 թ. (Grousset R., նշվ. աշխ., էջ 270): Այսպիսի ժամանակագրական անհամապատասխանությունը արդյունք է հյուսիսային Միջագետքում և Հայաստանում տեղի ունեցած ռազմական գործողություններին վերաբերող տեղեկությունների ոչ զուգահեռ քննության: Ա. Ստրատոսը պարսից զորքերի Հայաստան ներխուժման սկիզբը համարել է 604 թ. (Stratos A., նշվ. աշխ., հ. I, էջ 62), իսկ Կ. Թումանովը՝ 607 թ. (Cambr. MH, էջ 604): Ըստ Հ. Մանանդյանի, պարսիկների ներխուժումը բյուզանդական Հայաստան տեղի էր ունեցել 606 թ. (Манандян Я. А. Маршруты персидских походов императора Ираклия. - ВВ, I. III, 1950, էջ 133): Այս ժամանակաշրջանում պարսից ներխուժումները Հայաստան տեղի են ունեցել 604 և 606 թթ. միջև, երբ Խոսրովի հիմնական ռազմական ուժերը գործում էին հյուսիսային Միջագետքում:

Գ. Լասկինը նշել է, որ VII դ. պարսկա-բյուզանդական սահմանը Հայաստանի տարածքում անցնում էր Թեոդոսուպոլսի (Կարին) և Կարսի միջև, իսկ հարավում կտրում անցնում էր Տիգրիս գետը (Ласкин Г., նշվ. աշխ., էջ 4): Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Մավրիկիոսի մահից և պարսկա-բյուզանդական պատերազմի վերսկսվելուց հետո 591 թվականի սահմանագիծը կրկին տեղաշարժվեց դեպի արևմուտք: Ըստ երևույթին, այս հանգամանքն է նկատի ունեցել գիտնականը: Այնուամենայնիվ, ինչպես կտեսնենք, 591 թ. սահմանագիծը ուժի մեջ էր նույնիսկ VII դ. 20-30 թթ. սահմանագլխին: Ըստ Մ. Արտամոնովի, 591 թ. բաժանումից հետո Դվինը անցել էր Բյուզանդիային (Артамонов М. И. История хазар, Л., 1962, էջ 142), սակայն Դվինը մնացել էր Հայաստանը բաժանող սահմանագծից արևելք:

Ա. Ստրատոսը, նշելով Սեբեոսի և Ասողիկի երկերը, գրել է, որ Ջուվան Վեհը Հայոց ռազմական ուժերի հետ միասին մտավ բյուզանդական Հայաստան (Stratos A., նշվ. աշխ., էջ 62): Այդպիսի հաղորդում Սեբեոսի և Ասողիկի մոտ չկա, որոնցից առաջինը գրել է միայն Ջուվան Վեհի ներխուժման մասին, իսկ երկրորդը այդ պարսից զորավարին ընդհանրապես չի հիշատակել:

20. Սեբեոս, էջ 108: Այս Գետիկը գտնվում էր Ախուրյան գետի աջ ափին, Արգինայից ոչ հեռու, Ականց դաշտում: Շիրակի գավառում այդ անունով իրար մոտ գտնվող երեք գյուղ կար մինչև XX դ. սկիզբը՝ Վերին Գետիկ, Միջին Գետիկ, Ստորին Գետիկ (տես Էփրիկյան Ս., Բնաշխարհիկ բառարան, հ. Ա, Վենետիկ, 1903-1905, էջ 514):

21. Արգինայում հավաքվել էր տեղական հայ բնակչությունը, իսկ Ղ. Ալիշանի (Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 12) և Լեոյի (Հայոց պատմություն, հ. Ա, Երևան, 1947, էջ 232) կարծիքով այնտեղ ամրացել էին հռոմեացիները (բյուզանդացիներ): Սակայն, ինչպես հետևում է Սեբեոսի հաղորդումից, Արգինան պարսիկների թիկունքում էր գտնվում, այսինքն բյուզանդական զորքին հակառակ կողմում և պարսիկները Արգինա ամրոցից գերի տարան 33 գյուղերից ապաստան գտած բնակիչնե-

րին (Սեբեոս, էջ 108, 275, ծան. 340): Մ. Հովհաննիսյանը համարում է, որ խոսքը բերդում ապաստանած 33 գյուղերի բնակիչների մասին է, (Հովհաննիսյան Մ., նշվ. աշխ., էջ 732): Ա. Ստրատոսը այն կարծիքին է, որ պարսիկները այդ շրջանում 33 գյուղ ավերեցին (Stratos A., նշվ. աշխ., էջ 63):

22. Սեբեոս, էջ 109:

23. Նույն տեղում:

24. Նույնանուն լճի ափին գտնվող ամրոց:

25. Ստ. Մալխասյանցի կարծիքով այն պետք է համապատասխաներ Հյուսիսային Միջագետքում գտնվող Դարային (Себеос, 1939, էջ 164, ծան. 125), սակայն, ըստ Ս. Երեմյանի, խոսքը Դարույնքի մասին էր, որի մոտակայքում գտնվում էր Ծխնկերտը (տես Հայ ժողովրդի պատմություն, հ. Բ, էջ 286, ծան. 25):

26. Սեբեոս, էջ 110:

27. Սեբեոսը նրանց «քուշաններ» է անվանում, չնայած վերջիններս արդեն հեռացել էին քաղաքական ասպարեզից: Այս ժամանակ Սասանյանների թշնամիները ոչ թե քուշաններն էին, այլ հեփթաղները և նրանց ցեղակիցները (Маршак Б. И., К вопросу о восточных противниках Ирана в V в., - «Страны и народы Востока», №10, 1971, էջ 58-66; Ставиский Б., Кушанская Бактрия, М., 1977, էջ 132):

28. Սեբեոս, էջ 100:

2. Հայ Առաքելական եկեղեցին VII դ. սկզբներին

1. Հայ եկեղեցու առաքելական ծագումը բնութագրող անվանումը վկայված է Եղիշեի կողմից. « ...ամենեքեան հաւատացեալք եւ մկրտեալք ի մի կաթողիկէ եւ առաքելական եկեղեցի... Հայր մեր զսուրբ աւետարանն գիտեմք, եւ մայր՝ զառաքելական եկեղեցի կաթողիկէ» (Եղիշէ. Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երևան, 1989, էջ 134): Գարեգին Ա կաթողիկոսը նշել է, որ «կաթուղիկէ» (կաթողիկէ) նշանակում է «ընդհանրական» (Գարեգին Ա կաթողիկոս, Հոգեմտաւոր ճառագայթումներ, Ս. Էջմիածին, 1997, էջ 18)

2. Այդ իր դրսևորումը գտավ նաև Խոսրովի անձնական կյանքում: Խոսրովի գլխավոր կինը՝ Շիրին թագուհին, և նրա կանանցից մի քանիսը քրիստոնյա էին (Սեբեոս, էջ 85): Վաղ միջնադարյան Պարսկաստանում քրիստոնյաների վիճակի մասին տես Пигулевская Н., Византия и Иран на рубеже VI-VII вв., էջ 248:

3. Սեբեոս, էջ 91:

4. Այդ քայլով Վրաստանը դավանանքով մերձենում էր Բյուզանդիային (տես Լեո, նշվ. աշխ., էջ 235-236): Դրա քաղաքական հետևանքները պետք է անհանգստացնեին Խոսրով Փարվեզին:

5. Տես Օրմանյան Մ., էջ 610, 631; հմմտ. Ակինեան Ն., Կիւրիոն կաթողիկոս Վրաց, Վիեննա, 1910, էջ 160-166, Լեո, հ. Բ, էջ 234:

6. Սեբեոս, էջ 100: Ուխտանէս եպիսկոպոս. Պատմութիւն Հայոց, հ. Բ, Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 57: Աբրահամ Ա Աղբաթանեցին (Ռշտունիքի Աղբաթանք գյուղից) Հայաստանում կաթողիկոս է եղել 607-610 թթ. (Ակինեան Ն., նշվ. աշխ., էջ 156, Մանանդյան Հ., Երկեր, հ. Բ, 1978, էջ 580): Այս կապակցությամբ Մ. Օրմանյանը նշել է 607-615 թթ., սակայն Սեբեոսի հաղորդումից հետևում է, որ Հովհաննես Բագարանցին և Աբրահամ Աղբաթանեցին մահացել էին Խոսրով Փարվեզի գահակալության 21-րդ տարում (Սեբեոս, էջ 112):

7. Գիրք թղթոց, էջ 149, 150:

8. Պատմիչը Խոսրով Բ-ին ժամանակակից Փոկաս կայսեր փոխարեն հիշատակել է Հուստինիանոս Ա-ին՝ Խոսրով Ա Անուշիրվանի (531-579) ժամանակակցին: Նկատի ունենալով նաև ժամանակագրական այլ անհամապատասխանություններ Ա. Աբրահամյանը իրավացիորեն նշել է, որ Ստ.Օրբելյանի երկի այս հատվածում միահյուսվել են տարբեր պատմական փաստեր (Ստեփանոս Օրբելյան. Սյունիքի պատմություն. թարգմ., ներած. և ծան. Ա.Ա. Աբրահամյանի, 1985, Երևան, էջ 433-434, ծան. 235):

9. Ստ. Օրբելյանի «Ղուկասեան» հրատարակությունում՝ «յիշխանութեանն Սմբատայ» (Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 100):

10. Ըստ Ստ. Օրբելյանի, Մովսես Եղիվարդեցու մահվանից հետո կաթողիկոսական աթոռի տեղապահն էր Վրթանես Քերթողը երեք տարվա ընթացքում (Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, Մոսկվա, 1861, էջ 71):

11. Քրիստափորի եպիսկոպոսության տարիները Ղ. Ալիշանը համարել է 595-605 թթ., իսկ նրան փոխարինած Դավթինը՝ 605-631 թթ. (Սիսական, Վենետիկ, 1893, էջ 20): Սակայն Քրիստափորը Աբրահամին Հայաստանի կաթողիկոս ընտրելու ժամանակակիցն էր, քանի որ, ըստ «Գիրք թղթոց»-ի այդ տեղի էր ունեցել Խոսրով Փարվեզի գահակալության 17-րդ տարում (էջ 149-151): Այնինչ, ըստ Ստ. Օրբելյանի, Քրիստափորը Սյունյաց եպիսկոպոսական աթոռին եղել է տասը տարվա ընթացքում, որից հետո այդ աթոռին հաստատվեց Դավիթը, ձեռնադրվելով Աբրահամ Աղբաթանեցու կողմից (էջ 74): Ուրեմն, Դավիթը Սյունիքի եպիսկոպոս կարող էր ձեռնադրվել միայն Աբրահամ Աղբաթանեցու կաթողիկոսության օրոք, այսինքն՝ 607 թ. հետո:

12. Ստեփանոս Սյունեցի, էջ 72-73: Պատմիչի մոտ եղած մի շարք ժամանակագրական վրիպակները, թերևս հետևանք են Դվինի 554 թ. և 607 թ. ժողովների շփոթման:

13. Գիրք թղթոց, էջ 164-165: Ուխտանես եպիսկոպոս, էջ 57: Ըստ Լեոյի, Հայ և Վրաց եկեղեցիների պառակտումով Վրաստանը զգալիորեն մերձենում էր Բյուզանդիային (Լեո, հ.Բ, էջ 236): Այս ժամանակաշրջանի հայ-վրացական հարաբերությունների մասին տես Джавахов И.А., История церковного разрыва между Грузией и Арменией в начале VII века.-Известия АН., 1908, էջ 403-446, Адонц Н., նշվ. աշխ., էջ 160-166, Ալեքսիձե Ջ., Կովկասի VII դ. կրոնական (դավանաբանական) իրադրության մասին, թարգմ. Վ.Մարտիրոսյան, Երևան, 1978, էջ 5-15:

14. Գիրք թղթոց, էջ 165: Ուխտանես եպիսկոպոս, էջ 79-90:

15. Գիրք թղթոց, էջ 167:

16. Լեո, հ. Բ, էջ 237:

17. Սեբեոս, էջ 100: Սբ. Գրիգորի եկեղեցին այրել էին պարսիկները հայ ժողովըրդի 572 թ. ապստամբության ժամանակ (Սեբեոս, էջ 68, Լեո, հ. Բ, էջ 236): Վերականգնման աշխատանքները սկսվեցին Սմբատ Բագրատունու Հայաստանում եղած ժամանակ և շարունակվեցին Կոմիտաս կաթողիկոսի (615-628) օրոք, ինչպես նշել է Սեբեոսը, «առ սովաւ կատարի շինուած եկեղեցւոյն սրբոյն Գրիգորի» (էջ 112):

3. Ռազմա-քաղաքական վիճակը Առաջավոր Ասիայում

1. Սեբեոս, էջ 110:

2. Նույն տեղում, էջ 101:

3. Համապատասխանում էր այժմյան Ֆիրդուսի քաղաքին և դրա շրջակայքին: Տոս գավառում Սմբատ Բագրատունին իրեն աթոռանիստ է ընտրում Խռոխտ բնակավայրը (Սեբեոս, էջ 101):

4. Նույն տեղում, էջ 102: VII դարի առաջին տասնամյակների պատմական դեպքերի Սեբեոսի շարադրության հաջորդականությունը համապատասխանում է նրա երկի գլուխների հետևյալ կարգին. Լ, ԼԱ, ԼԲ, ԻԷ, ԻԸ, ԼԳ, ԼԴ, ԼԵ, ԼԶ, ԻԹ, ԼԷ (Սեբեոս, էջ 99-121):

5. Քոչվորների արքան լուր է ուղարկում Սմբատին, թե միտք չունի ոչնչացնել իրենց զորքերը: Սմբատը մենամարտում նրան սպանում է, իսկ վերջինիս զորքը, տեսնելով այդ, փախչում է: Հաղթանակած զորքը, քոչվորներին հետապնդելով մինչև Բահլ Շահաստան, ճանապարհին շատ բերդեր է գրավում, այնուհետև վերադառնում ու կանգ է առնում Մարգ կամ Մարգռոտ գավառում: Երբ հաղթանակի լուրը հասնում է Խոսրով Փարվեզին, նա տոնական արարողություններ է կատարում, իսկ Սմբատ Բագրատունու որդուն՝ Վարազտիրոցին, ի նշանավորումն նրա հոր ցույց տված քաջագործությունների, նստեցնում է զարդարված փղի վրա և կոչում Ջավիտյան Խոսրով (Սեբեոս, էջ 103):

6. Նույն տեղում, էջ 110:

7. Նույն տեղում, էջ 111: Համմտ. Theoph. Chron., I, էջ 293-294, 296, Georg. Cedr., I, էջ 711, Michel le Syrien, II, էջ 379, 400; տես նաև Кулаковский Ю., К критике известий Феофана о последнем годе правления Фоки, - ВВ, т. 21, вып. 1-2, Пгг., 1914, էջ 1-14, Grumel V., Traite d'Etudes Byzantines, I, La Chronologie, Paris, 1958, էջ 246):

8. Theoph. Chron., I, էջ 299, Georg. Cedr., էջ 714:

9. Ласкин Г., նշվ. աշխ., էջ 34:

10. Խոսրով արքան «բազմութիւն գաւրաց ժողովեալ գումարեաց, եւ արձակէր ընդ կողմանս Ասորեստանի զաւր մեծ հզաւր յոյժ, զխոռեամ, որ Ըռազմանն անուանեալ, զաւրագլուխ նոցա: Եւ հրաման տայր նոցա այսպէս, եթէ «Որք եկեսցեն ի ծառայութիւն՝ սիրով ընկալ, եւ ի խաղաղութեան եւ ի շինութեան պահեսջիր. եւ որ ընդդէմ դարձցին եւ պատերազմեսցին՝ սրով սատակեսցին»... Եւ Խոռեամ առեալ զգաւրացն բազմութիւն գնաց ի կողմանս Ասորեստանի, եւ հասեալ ի Միջագետս Ասորւոց, պատեալ պաշարեն զՈւռհայ քաղաք, եւ մարտ եդեալ կռուի ընդ նմա: Իսկ նոքա... խաւսեցան ի խաղաղութիւն, եւ խնդրեցին երդումն, զի մի կորուսցեն զքաղաքն, եւ բացեալ զդուռն քաղաքին հնազանդեցան ի ծառայութիւն: Նոյնպէս եւ Ամիթ եւ Թելա եւ Ռաշայենայ եւ ամենայն քաղաքք Միջագետաց Ասորւոց կամաւք հնազանդեալ ի ծառայութիւն՝ պահեցան ի խաղաղութեան եւ ի շինութեան: Եւ գնացեալ նոցա յԱնտիոք քաղաք՝ հնազանդեցան եւ նոքա կամաւք ի ծառայութիւն հանդերձ ամենայն քաղաքաւք եւ բնակչաւք իւրեանց, փախստականք լեալ ի սրոյն Փոկասայ» (Սեբեոս, էջ 110-111): Հատկանշական է, որ տեղի բնակչությունը պարսից գերիշխանությունը ավելի գերադասելի էր համարում, քան բյուզանդականը:

11. Stratos A., նշվ. աշխ., հ. I, էջ 63, 104:

12. Кулаковский Ю., նշվ. աշխ., էջ 4, համմտ. Пигулевская Н., Византия и Иран на рубеже и VI-VII вв., էջ 198:

13. Բյուզանդական աղբյուրներ, Դ, էջ 225, ծան. 103: Թեոփանեսի նույն հաղորդմանը տրված հաջորդ ծանոթագրությունում Հ. Բարթիկյանը Ապամեայի,

Եդեսիայի և Անտիոքիայի գրավումը դնում է մի շարքում այն հաղորդումների հետ, որոնք նա ժամանակագրում է 606-607 թթ. (նույն տեղում, էջ 225, ծան. 104):

14. Միջագետքում, Հայաստանում և Փոքր Ասիայում պարսիկների կատարած ասպատակությունների և նվաճումների մասին տես նաև Анонимная сирийская хроника о времени Сасанидов.- Записки Института Востоковедения, h. 7, M., 1934, էջ 69, Theoph. Chron., I, էջ 296-299, Georg. Cedr., էջ 712, Michel le Syrien, II, էջ 378, «Анонимная сирийская хроника 1234г.» (Пигулевская Н.В., Византия и Иран на рубеже и VI-VII вв., էջ 259-260):

15. Ласкин Г., նշվ. աշխ., էջ 34, Пигулевская Н., նշվ. աշխ., էջ 196-198, Stratos A., նշվ. աշխ., էջ 104:

16. Theoph. Chron., I, էջ 299: Յու. Կուլակովսկին պարսիկների հաջողությունները բացատրել է հրեաների և տեղի քրիստոնյա բնակիչների միջև եղած թշնամանքով և այն հանգամանքով, որ առաջինները պարսիկներին ընդունում էին որպես ազատարարների (Кулаковский Ю., К критике... էջ 4): Իսկ ըստ Ա. Ստրատոսի, բյուզանդացիները չէին անհանգստացնում հրեաներին, որոնք, բացի որոշ սահմանափակումներից և հատուկ հարկի վճարումից, որպես բյուզանդական քաղաքացիներ պաշտպանության տակ էին: Միևնույն ժամանակ նրանց հակաբյուզանդական որոշ տրամադրությունները Ա. Ստրատոսը բացատրել է իշխանությունների կողմից գործադրված ճնշմամբ կամ էլ «կանաչների» կողմից հետապնդմամբ, քանի որ հրեաները տրամադրված էին *վենետների* ֆրակցիայի կողմը, իսկ կանաչները «հակասեմիտներ էին» (Stratos A., նշվ. աշխ., էջ 75):

17. Theoph. Chron., I. էջ 296, Georg. Cedr., էջ 712:

18. Кулаковский Ю., նշվ. աշխ., էջ 1-11. Սեբեոսը գրել է Անտիոքում և Երուսաղեմում Բոնոսի կատարած պատժիչ գործողությունների մասին անմիջապես Փոկասի գահակալությանը հաջորդած խռովությունների և Եգիպտոսում՝ Հերակլի (ապագա նույնանուն կայսեր հոր) և Ասորիքում Ներսեսի ապստամբությունների վերաբերյալ հաղորդումների միջև (Սեբեոս, էջ 106): Բոնոսի պատժիչ արշավանքը Եգիպտոս ավարտվեց նրա պարտությամբ (Jean de Nikiou.Chronique publie et traduit par Zotenberg. Notices et extraits des manuscrits de la Biblioteque Nationale, Paris, h. XXIV, 1883, էջ 540, 543-544): Հետագայում Բոնոսը մահապատժի ենթարկվեց Կոստանդնուպոլսում՝ Փոկասի, նրա եղբոր Դոմենցիոլի և սակելար Լեոնտիոսի հետ (Пигулевская Н., Византия и Иран на рубеже VI-VII вв., էջ 188-189): Սեբեոսի և Թեոփանեսի հաղորդումների համադրությունից հետևում է, որ Հերակլ զորավարի ապստամբությունը Աֆրիկայում սկսվեց Փոկասի գահակալությունից հետո և որոշ ընդմիջումներով շարունակվեց մինչև վերջինիս անկումը:

19. Ն. Պիգուլևսկայան այն կարծիքին էր, որ առավելությունը պետք է տալ ոչ թե Թեոփանեսի երկին, այլ Ջատկական ժամանակագրությանը (Chronicon Paschale. Recensuit L. Dindorfius, 1832, էջ 699), որտեղ Անաստասիոս պատրիարքի սպանությունը վերագրված է զինվորներին: Նա նշել է, որ, ըստ Յու. Կուլակովսկու, Բոնոսի գործողությունները Ասորիքում վերաբերում են 609 թ., և վերջինս հաշվեհարդար տեսավ ոչ թե հրեաների, այլ միաբնակների հետ (Пигулевская Н., նշվ. աշխ., էջ 183, 186):

20. Միջագետքի նվաճումը պարսիկների կողմից (Michel le Syrien, t.II, էջ 378, «Анонимная сирийская хроника 1234 г.», էջ 259-260) ավարտվել էր 609 թ., իսկ 610 թ. գրավվեց Անտիոքը (Колесников А., նշվ. աշխ., էջ 80-81): Այնինչ Գ. Օստրոգորսկին գրել է Ասորիքում տեղի ունեցած ռազմական գործողությունների և 613 թ. Անտիոքի մոտ բյուզանդացիների պարտության մասին (Ostrogorski G., History of the Byzantine State, New Brunswik, 1957, էջ 85-86):

21. Stratos A., նշվ. աշխ., հ. I, էջ 77, 357-358:

22. Սեբեոս, էջ 111: Այս արշավանքը պետք է տեղի ունեցած լիներ Հայաստանից Սմբատ Բագրատունու հեռանալուց հետո, այսինքն 608 թ. ամռանը կամ աշնանը, այլ ոչ թե 607 թ., ինչպես կարծում է Ա. Ստրատոսը (Stratos A., նշվ. աշխ., էջ 64):

23. Սեբեոս, էջ 112:

24. Նույն տեղում: Այս հատվածի օրինակով Յու. Կուլակովսկին նշել է, թե ինչպես հրեաները, անցնելով պարսիկների կողմը, թուլացնում էին տեղացիների դիմադրությունը (Кулаковский Ю., նշվ. աշխ., էջ 4):

25. Theoph. Chron., I, էջ 296, Georg. Cedr., I, էջ 712: Թեոփիլակտոսը նշել է, որ Հերակլի հոր՝ Հերակլ զորավարի հայրենի քաղաքը Հայաստանում էր (Theophyl. Sim., III, 1.1): Սեբեոսը վերջինիս հիշատակել է Սամվել Վահևունու և իր զինակիցների առաջին ապստամբության ճնշման առնչությամբ: Պատմիչը գրել է, որ Հերակլ զորավարը «նստէր ի Հայաստան երկիր» (Սեբեոս, էջ 88):

26. Հերակլի գահակալության սկզբնական ժամանակաշրջանում Կոստանդնուպոլիսը մեծ վնասներ կրեց ուժգին երկրաշարժից (20 ապրիլի, 611 թ.): Այդ ժամանակ կայսրությունը արդեն հայտնվել էր ծանր ճգնաժամի մեջ (տես Stratos A., նշվ. աշխ., էջ 92-102): Բանակը պահելու միջոցներ չկային: Ամբողջ Թրակիան՝ ընդհուպ մինչև Կոստանդնուպոլսի պատերը, երկիրը ավերված էր: Թեսաղոնիկը դժվարությամբ էր դիմակայում ավարական և սլավոնական միացյալ ջոկատների պաշարմանը: Վերջիններս գրավեցին Իլլիրիան, Դալմացիան, Մակեդոնիան և Թրակիան (Cambr. MH, էջ 481) և մոտ 614 թ. ավերեցին Սալոնան: Սլավոնները, բացի մի քանի առափնյա քաղաքներից, գրավել էին համարյա ամբողջ Բալկանյան թերակղզին (Ostrogorski G., նշվ. աշխ., էջ 79-129): 617 թ. ավարները հասան մինչև Կոստանդնուպոլսի արվարձանները (Baynes N. H., The Date of the Avar Surprise. - Byzantinische Zeitschrift, XXI, 1912, էջ 110-128, Cambr. MH, էջ 48):

27. Սեբեոս, էջ 113:

28. Սեբեոս, էջ 113: Ըստ Ա. Ստրատոսի, 612 թ. գարնանը պարսիկները ջախջախեցին Պրիսկոսի զորքը, ներխուժեցին Հայաստան, և դրանից հետո Հերակլը ժամանեց Կեսարիա (Stratos A., նշվ. աշխ., էջ 105): Սակայն, ինչպես հետևում է Սեբեոսի հաղորդումից, այնտեղից Հերակլի հեռանալուց հետո նրա զորքերը շարունակեցին պաշարել «զքաղաքն Կեսարացւոց տարի մի», իսկ պարսիկները թողեցին Կեսարիան ձմեռվա շեմին: Այս իրադարձությունների կապակցությամբ Սեբեոսի հաղորդումների անտեսումը Ա. Ստրատոսին հնարավորություն չի տվել իր շարադրանքում պահպանել ժամանակագրական հաջորդականության հստակությունը: Մի դեպքում նա գրել է, թե Պրիսկոսը ուղարկված էր ետ գրավել պարսիկների կողմից զավթված Կեսարիան, և այդ ընթացքում սկզբնական հաջողությունը նրա մոտ գլխապտույտ առաջացրեց, ու նա սկսեց իրեն պահել անկախ ու հանդուգն, որը և ստիպեց կայսրին գնալ նրա մոտ: Իսկ մեկ այլ տեղ Ա. Ստրատոսը նշել է, թե կայսրը Պրիսկոսի պարտությունից հետո ժամանեց Կեսարիա: Այնպես որ, Կեսարիայի պաշարման և այնտեղ Հերակլի ժամանման հետ կապված դեպքերը պետք է տեղի ունեցած լինեին մինչև 611-612 թթ. ձմեռը (Պրիսկոսի՝ Փոկասի փեսայի քաղաքական և ռազմական գործունեության մասին մանրամասն տես նույն տեղում, էջ 75-76, 81, 101-102, 105): Սեբեոսի հաղորդումներին լիարժեք չհետևելը, թերևս, բացատրվում է նրանով, որ Ա. Ստրատոսը հենվել է հայ պատմիչի ոչ թե գրաբար բնագրի, այլ դրա ֆրանսերեն թարգմանության վրա:

29. Սեբեոս, էջ 113: Շահենի արշավանքների կապակցությամբ Սեբեոսը երկու անգամ հիշատակել է Կարինը, ինչը, ըստ Ստ.Մալխասյանցի, կրկնության հե-

տևանք է (Себеос, История, Ереван, 1939, էջ 189, ծան. 54): Սակայն Սեբեոսը մինչ այս հատվածը նշել էր, որ Շահենը անցել էր Կարին քաղաքի կողմերը, իսկ Դվինի ոստանը որպես մարզպան եկել էր Շահրայենպետը, այնուհետև Շահենը գնացել, գրավել էր Կապադովկիայի Կեսարիա քաղաքը: Իսկ այս հատվածում Շահենի հետ կապված անցքերին զուգահեռ պատմիչը նշել է, որ Շահրայենպետի փոխարեն Դվինի ոստանը որպես մարզպան եկել էր Պարսեանպետ Պարշնազդատը, ապա՝ Նամդար Վշնասպը, Շահրապղականը, Ըռոճ Վեհանը (Սեբեոս, էջ 113): Անհրաժեշտ է նշել, որ Շահրապղականին և Ըռոճ Վեհանին Սեբեոսը (էջ 126) և Մովսես Կաղանկատվացին (էջ 133-144) հիշատակել են ի թիվս պարսից այն զորավարների, որոնք VII դ. 20-ական թթ. կռվել էին Հերակլի դեմ (տես նաև Dowsett C. J. F. The Name and the Role of ΣΑΡΑΒΛΑΓΓΑΣ or ŠAHRAPLAKAN. - Byzantion, h. XXI, fasc. 2, Bruxelles, 1951, էջ 311-321):

30. Пигулевская Н., նշվ. աշխ., էջ 198:

31. Ինչպես հաղորդել է Սեբեոսը, Փիլիպիկոս զորավարը Մավրիկիոսի փեսան էր, որը հանկարծ որոշել էր մտնել վանք՝ նվիրվել եկեղեցու ուխտին և դառնալ քահանա (Սեբեոս, էջ 81): Ըստ Սեբեոսի, երբ Շահենը Պիսիդիայի կողմերում (մոտ 612/3 թթ.) միացավ Խոռեամի զորքին, այդ ժամանակ Փիլիպիկոսը ձեռնարկեց իր արշավանքը: Սեբեոսի այն տեղեկությունը, որ պարսից զորքը երկար ճանապարհ անցնելով շատ հոգնել էր, իսկ զինվորներից շատերը սպանվել էին ճանապարհին, հնարավորություն է տալիս ենթադրել, որ պարսից զորքը գալիս էր հեռվից, այսինքն արևմուտքից՝ Պիսիդիայից:

32. Սեբեոս, էջ 114: Այդ տարիների ընթացքում պարսիկները Միջագետքում և Ասորիքում զգալի թվով քաղաքներ գրավեցին (Եդեսիա, Ամիդ, Թելա, Ռաշայն, Ապամեա Զևգմայի մոտ, Եմեսա, Անտիոք, Ապամեա, Թեոդոսուպոլիս, Դամասկոս և այլն, տես Theop. Chron., էջ 300, Georg. Cedr., էջ 715), ինչպես նաև, նվաճելով Հայաստանի բյուզանդական մասը, թափանցեցին կայսրության փոքրասիական տիրությունները:

33. Սեբեոս, էջ 114: Հերակլի առաջին կինը՝ Եվդոքսիան, մահացել էր 612 թ. օգոստոսի 13-ին: Նրա զավակներն էին Եպիփանիան և Կոստանդինը, որը, ըստ Թեոփանեսի, թագադրվեց 612 թ. դեկտեմբերի 25-ին (Theoph. Chron., I, էջ 300), իսկ ըստ Զատկական ժամանակագրության՝ 613 թ. հունվարի 1-ին (Chronicon Paschale, I, էջ 703-704, տես նաև Grumel V. նշվ. աշխ., էջ 359): Սեբեոսի հաղորդումը ամուր հիմք է ստեղծում Անտիոքի, այնուհետև «Դրունք Կիլիկիոյ»-ի մոտ («պատերազմն մաւտ ի նեղուց մտին ի Կիւլիկեայ», Սեբեոս, էջ 115) տեղի ունեցած ճակատամարտերը 613 թվականով ժամանակագրելու համար: Առանց հիմնավորման Ն.Բեյնեսը վերջինս նշել է կայացած 626 թ. (Baynes N., The First Campaign of Heraclius against Persia - EHR, h. XIX, 1904, էջ 696): Ինչ վերաբերում է «Ասորեստան» անվանմանը, ապա Սասանյանների ժամանակաշրջանին վերաբերող դրա աշխարհագրական բովանդակության մասին տես Մելքոնյան Հ., Ադիաբենեի պետությունը և Հայաստանը, Երևան, 1980, էջ 221:

34. Սեբեոս, էջ 115:

35. Նույն տեղում: Ն. Մառը նշել է Ա.Կուրեի տեսակետը, որի համաձայն, հրեաների վրիժառու վարքի պատճառը Փոկասի ժամանակ նրանց բռնի կերպով մկրտելն էր (Антиох Стратиг, исслед. Н. Марр, էջ 7): Սակայն, ինչպես նշել է Յու. Կուլակովսկին, «Փոկասը իր բոլոր չարագործություններով հանդերձ մեղավոր չէր հրեաներին բռնի կերպով մկրտելու հրամանագիր հրապարակելու մեջ, քանի որ այդ հրամանագիրը պատկանում էր Հերակլին» (Кулаковский Ю., նշվ. աշխ., էջ 11-14):

36. Սեբեոս, էջ 115: Երուսաղեմի գրավումը Մ.Օրմանյանը նշել է կայացած

614 թ. ապրիլի 10-ին՝ Սեբեոսի երկում կատարելով դրոշ սրբագրություններ (Ազգապատում, էջ 651), որոնց հետ համաձայն չէ Գ.Աբգարյանը (Սեբեոս, էջ 285, ծան. 391): Աղբյուրների (Անտիոքոս Վանական, Ջատկական ժամանակագրություն, Թեոփանես, Միքայել Ասորի և Ագապիոս) քննությունը Ա. Ստրատոսին բերել է այն եզրակացության, որ Երուսաղեմի գրավումը տեղի էր ունեցել 614 թ. ապրիլի վերջի և մայիսի միջև (Stratos A., նշվ. աշխ., էջ 109):

37. Theoph. Chron., էջ 301, Georg. Cedr., էջ 715:

38. Սեբեոս, էջ 115-116: 69-70, Յովհան Մամիկոնեան, էջ 279, Մովսես Կաղանկատվացի, էջ 99-100:

39. Колесников А., Иран в начале VII в. էջ 81.

4. Հայ Առաքելական եկեղեցու նկատմամբ Սասանյանների վարած քաղաքականությունը

1. Սեբեոս, էջ 106-116:

2. Յովհան Մամիկոնյանը նույնիսկ մի տեղեկություն է հաղորդել, ըստ որի՝ Խոսրով Փարվեզը Բյուզանդիայում գտնվելու ընթացքում, իբրև թե, քաղկեդոնականություն էր ընդունել (Յովհան Մամիկոնեան, էջ 158):

3. Ասորական անանուն ժամանակագրությունում պատմվում է այն մասին, թե ինչպես այն ժամանակ, երբ Խոսրով Փարվեզը տիրեց Միջագետքին, նա այնտեղից դուրս վռնդեց հռոմեացիներին և հրամայեց, որպեսզի քաղկեդոնիկ եպիսկոպոսներին իրենց եկեղեցիներից դուրս հանեն և այդ եկեղեցիները տան հակաքիկյաններին և ընդհանրապես Եփրատից դեպի արևելք ոչնչացնեն հիշողությունը Քաղկեդոնի ժողովի մասին (Анонимная сирийская хроника 1234 г., էջ 262):

4. Սեբեոս, էջ 149:

5. Адонц Н., նշվ. աշխ., էջ 295.

6. Տեր-Մինասյան Ե., Այսպես կոչված պարսից ժողովը, - «Արարատ», 1907, էջ 3-16, տես նաև Պատմա-բանասիրական հետազոտություններ, Երևան, 1971, էջ 45-58: Գիտնականը սկզբում համամիտ էր այն կարծիքին, որ Տիզբոնի ժողովը տեղի էր ունեցել 615/16 թ. (Ter-Minassiantz E., Die armenische Kirche in ihren Beziehungen zu den syrischen Kirchen, Leipzig, 1904, էջ 62-63): Ն. Գարսոյանի կարծիքով Տիզբոնի ժողովը տեղի էր ունեցել 610 թ. (տես The Armenian People from Ancient to Modern Times, էջ 113), ինչը չի հիմնավորված սկզբնաղբյուրներով:

7. Հմմտ. Ակինեան Ն., նշվ. աշխ., էջ 163, 259:

8. Օրմանյան Մ., էջ 652-655:

9. Анонимная сирийская хроника, VII в, էջ 70, Ласкин Г., նշվ. աշխ., էջ 36, Пигулевская Н., Византия и Иран, էջ 203: Հայտնվել են նաև այլ կարծիքներ. ըստ Շ. Դիլի Եգիպտոսը պարսիկները նվաճեցին 617-619 թթ. (Diehl Ch., Histoire de l'Empire Byzantine, Paris, 1919, էջ 49, նույնի՝ Histoire du Moyen Age, h. III, Paris, 1936, էջ 144): Հենվելով Բար-Եբրայոսի այն հաղորդման վրա, թե Եգիպտոսի նվաճումը պարսիկներից պահանջեց 3,5 տարի, Ա. Ստրատոսը կարծիք է հայտնել, որ այդ սկսվեց 616 թ. և ավարտվեց 620թ. (Stratos A., նշվ. աշխ., հ. I, էջ 114): Ա. Կոլեսնիկովը նշել է, որ Եգիպտոսի մայրաքաղաքի բանալիները Խոսրով Փարվեզին էին ուղարկվել նրա գահակալության 28-րդ տարում, այսինքն՝ 618թ. (Колесников А., նշվ. աշխ., էջ 81):

10. Օրմանյան Մ., էջ 652-655:

11. Հմմտ. Կարապետ եպիս. Կնիք Հաւատոյ Ընդհանուր Սուրբ Եկեղեցւոյ յուղարկաւոր եւ սուրբ հոգեկիր հարցն մերոյ դաւանութեանց յաւուրս Կոմիտաս կաթու-

ղիկոսի (613-627) համահաւաքեալ, Անթիլիաս, 1998, էջ 177:

12. Պատմիչը, ասելով «ի Յունաց կողմանէ», նկատի ունի Բյուզանդիայից նվաճված տարածքներից ժամանած անձանց: Խոսրովը մինչ այդ իր զորավարներից մեկին հրամայել էր. «Որք եկեսցեն ի ծառայութիւն՝ սիրով ընկալ, եւ ի խաղաղութեան եւ ի շինութեան պահեսջիր, եւ որ ընդդէմ դարձցին եւ պատերազմեսցին՝ սրով սատակեսցին» (Սեբեոս, էջ 110):

13. Սեբեոս, էջ 149-151: Խոսքը Գաբրիել բժշկապետի մասին է (տես Տեր-Մինասյան Ե., Հայոց եկեղեցու հարաբերությունները ասորվոց եկեղեցիների հետ, «Էջմիածին», № 11, 1908, էջ 146, Լեո, նշվ. աշխ., հ.Բ, էջ 248):

14. Խոսրով Փարվեզը Տիզբոնում հրավիրեց ժողով՝ քրիստոնեական եկեղեցիների դավանաբանական վեճերը «կարգավորելու» նշանաբանով: Լեոն նշել է, որ Խոսրովը սկսեց խառնվել քրիստոնյաների դավանաբանական վեճերին, քանի որ Սասանյանների համար այդ պետական անհրաժեշտություն էր (նույն տեղում, էջ 247):

15. Մովսես Խորենացին Նեստորին բնութագրել է հետևյալ կերպ. «... ամբարիշտն Նեստոր, և հրէական իմացմանց հետեւեալ՝ հայհոյեաց զամենասուրբ կոյսն՝ մարդածին լինել եւ ոչ աստուածածին» (Մովսես Խորենացի, էջ 342): Կոստանդնուպոլսի պատրիարք Նեստորը (428-431) աջակերտելով Թեոդորոս Մոպսուեստացուն, հռչակել էր, թե «Աստուած ի մարդն բնակեալ է միայն եւ անմասն է ամէն մարդկային բնութեան գործերէ, որով երկու տարբեր անձեր կ'ենթադրէր ի Քրիստոս», և դրանով իսկ «մարդեղութիւնը եւ միաւորութիւնը ջնջած կ'ըլլար, փրկագործ տնօրէնութիւններն ալ միայնոյ մարդոյ վերագրելով, պարզապէս մարդադաւան սկզբունք մը քարոզած կ'ըլլար» (Օրմանյան Մ., էջ 310, 311): Եփեսոսի Գ Տիեզերական ժողովում Կյուրեղ Աղեքսանդրացին գլխավորեց պայքարը Նեստորի ուսմունքի դեմ: Ժողովը Նեստորին նզովեց, զըրկեց պատրիարքի աթոռից և աքսորեց: Մ. Սյուզյումովի կարծիքով. «նեստորականությունը ասորական բնակչության կրոնաքաղաքական ելույթների յուրահատուկ ձևը դարձավ... Կյուրեղ Աղեքսանդրացու ջերմեռանդ կողմնակիցները Եփեսոսում ցրեցին աստվածաբանության դպրոցը, որը մնացել էր Նեստորի դիրքերի վրա: Աշակերտները այստեղից փախան Իրան և կարողացան իրենց ազդեցության տակ գցել պարսկական քրիստոնեական եկեղեցին, որը այդ ժամանակից դարձավ նեստորական» (տես История Византии, հ. I, էջ 180-191, հմմտ. Պետրոսյան Ե., նշվ. աշխ., էջ 49):

16. Սեբեոս, էջ 149-150:

17. Խոսրովը նաև հարցնում է. «Ո՞յք էի՛ն գլխաւորք». եւ ծանուցին նմա զամենայն եւ ասացին, եթէ ինքեանք իսկ ի Նիկիայ եւ Կոստանդնուպաւլսի թագաւորքն Կոստանդիանոս եւ Թէոդոս Մեծն, իսկ յԵփեսոս՝ Կիւրեղ Աղէքսանդրու եպիսկոպոսն, եւ ի Քաղկեդոնի՝ Թէոդորետոս եպիսկոպոսն, որ զՆեստորին խորհէր»: Նեստորականներին Խոսրովը հրամայել էր «հանել յատենէն անտի արտաքս» (նույն տեղում):

18. Մովսես Կաղանկատվացին գրել է. «Արդ՝ իբրեւ ելից յաղթութեամբ ըստ ցանկութեան զկամս իւր ի վերայ ամենայն ազգաց եւ թագավորութեանց, մինչեւ ցայնչափ զօրանալ եւ հպարտանալ եւ կարծել անձին քաջութեամբ առնուլ զթագաւորութիւնն իւր ահեղ եւ զարմանալի եւ ոչ էառ ի միտ, եթէ տէր է բարձրեալն թագաւորութեան մարդկան եւ ում կամի, տայ զայն» (էջ 130):

19. Սեբեոս, էջ 151: Խոսրովը նույնիսկ հրամայում է կտրուկ միջոցների դիմել Պարսկաստանի տարածքում գտնվող նեստորականների հանդեպ. «Էր անդ Երան անուանեալ կաթողիկոսն, եւ այլ եպիսկոպոսունք յԱսորեստանէ եւ յԱրուաստանէ եւ ի Խուժաստանէ, եւ յայլոց աշխարհաց. վասն որոյ հրաման ետ արքայ Խոսրով քանդել զամենեցունց նոցա զեկեղեցիսն եւ սրով սատակել զնոսա, թե ո՛չ դարձցին ի մոլորութենէն եւ ելանիցեն յարքայական պողոտայն» (նույն տեղում,

էջ 150):

20. Նույն տեղում, էջ 151:

21. Մ. Օրմանյանը նշել է, որ Խոսրով Փարվեզը թույլ չէր տալիս առանց իր հավանության Արևելքի քրիստոնյա եկեղեցիների գլխավորների ընտրություններ անցկացնել նվաճված երկրներում, այդ իսկ պատճառով հայերը կաթողիկոս ընտրեցին Կոմիտասին, սակայն իրենց վճիռը չհրապարակեցին բարդություններից խուսափելու համար: Կոմիտասին նույնիսկ Տիգբոն ուղարկեցին այնպիսի նախաձեռնակ և գործունյա եպիսկոպոսի ընկերակցությամբ, ինչպիսին Մատթեոս Ամատունին էր, իսկ Սմբատ Բագրատունուն հանձնարարեցին իրականացնել գործի պաշտոնական մասը, ինչը դժվար չէր, նկատի ունենալով Սմբատի վայելած ազդեցությունը և վստահությունը (Օրմանյան Մ., էջ 657-659):

Եթե նկատի ունենանք, որ Սեբեոսը Կոմիտաս Մամիկոնյանին Տիգբոնի ժողովի կապակցությամբ որպես եպիսկոպոս է հիշատակել, կարելի է իրոք ենթադրել, որ Աբրահամ կաթողիկոսի մահվանից (տեղի էր ունեցել 610/1 թ. «Եւ ի նմին ամի վախճանեցաւ երանելին Աբրահամ կաթուղիկոսն: Եւ յետ սորա յաջորդէ զաթոռ հայրապետութեանն Կոմիտաս Տարոնոյ եպիսկոպոսն», Սեբեոս, էջ 112) հետո Հայաստանում նա հայրապետական աթոռին հաջորդել էր Աբրահամին, իսկ ընտրության պաշտոնական ձեակերպումը իրականացվել էր հետագայում:

22. Սեբեոս, էջ 151: Ասողիկ, էջ 97:

23. Սեբեոս, էջ 151:

24. Ласкин Г., նշվ. աշխ., էջ 10:

25. История Византии, հ. I, էջ 154, 156:

26. Այսպիսով, եկեղեցական քաղաքականությունը դառնում էր Բյուզանդական կայսրության նվաճողական քաղաքականության անքակտելի մասը:

27. Սասանյանների քաղաքական նպատակներից անկախ, Տիգբոնում ընդունված որոշումը Հայ եկեղեցու դավանանքի կապակցությամբ հատկապես Հայաստանի համար այն նշանակությունն ունեցավ, որ, ինչպես նշել է Ղ. Աճառյանը, Հայ եկեղեցու դիրքը մեծացավ և զորացավ: Կոմիտասը, վերադառնալով Հայաստան և պաշտոնապես կաթողիկոս ճանաչվելով, ձեռնարկեց եկեղեցիների շինարարությունն ու բարեկարգումը: Դրան պետք է ավելացնել նաև երկու միաբնակ ասորի եպիսկոպոսների՝ Պետրոսի և Մարութայի Դվին գալը՝ Կոմիտասի մոտ (616/17 թ.), հայերի հետ իրենց դաշինքը հավաստիացնելու համար (Սամուէլ Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 289-290, ծան. 36):

Ղ. Աճառյանը Տիգբոնի ժողովի վճռի արդյունք է համարում Սբ. Հռիփսիմեի տաճարի կառուցումը (618 թ.), ինչպես նաև Երուսաղեմի Մոդեստոս պատրիարքի՝ Կոմիտաս կաթողիկոսին ուղղված դիմումը օգնության մասին, Աղվանից Ուխտանես կաթողիկոսի ձեռնադրումը Կոմիտասի կողմից (Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, Երևան, 1944, էջ 644):

28. Սեբեոս, էջ 116: Ա.Ստրատոսը նշել է, որ Խոսրով Փարվեզը, տեր դառնալով Բյուզանդիային ատող քրիստոնյա բնակչությամբ բնակեցված հսկայական տարածքների, հաշտարար քաղաքականություն վարեց՝ ելնելով իր շահերից: Այդ ուղղությամբ ձեռնարկված քայլերից էր գերիներին մասամբ ազատելը, ինչպես նաև Երուսաղեմի բնակիչներին դրամական օգնություն ցույց տալը (Stratos A., նշվ. աշխ., հ. I, էջ 110):

29. Օրմանեան Մ., էջ 667:

30. Սեբեոս, էջ 117-118:

31. Մոդեստոս. «Արդ՝ զի զհակառակորդսն մեր սիրելի արար, եւ ետ զմեզ ի գթութիւն եւ յողորմութիւն առաջի ամենայն գերչաց մերոց. որ զտիրասպանունս եւ զհրէայս, որք կարծէին չարչարանաւք սորա դարձեալ թշնամանել զայն, որ

չարչարեցաւ վասն մեր, զՏէրն մեր Յիսուս Քրիստոս՝ զճշմարիտ Աստուածն մեր, որք համարձակեալ պատերազմեցան իսկ, եւ այրեցին զպատուական տեղիս զայս՝ հաճեցաւ Աստուծոյ մարդասիրութիւնն զնոսա աւտարացուցանել ի քաղաքէն սրբոյ իւրմէ Երուսաղէմէ... »: Կոմիտաս, «Այլ զայս ամենայն սիրելին մեր յառաջագոյն պատմեաց մեզ... - զանկեալդ ի ձեռս աւազակացն, որք մերկացուցին զդա, եւ վէրս ի վերայ վիրաց եդեալ թողին կիսամահ եւ գնացին. տեսանել զդա քահանայից ճանապարհորդաց՝ եւ առնել զանց. տեսանել զդա հրէից եւ դեւտացուց եւ ամբարշտաց՝ եւ առնել զանց զիւրովին ճանապարհորդելդ, գթութեամբդ մատչելդ, պատել զվէր դորա եւ արկանել ի դա զողորմութիւն եւ զարիւն կենարար... » (Սեբեոս, էջ 117, 120):

32. Գ. Ցուլայան նշել է, որ «VI-VII դդ. Քարթլին հարևան Հայաստանի և Աղվանքի հետ հայտնվեց Սասանյան Իրանի, Արևելա-հռոմեական կայսրության (Բյուզանդիայի) և Արաբական խալիֆայության միջև ծավալված պայքարի կենտրոնում: Արևելյան նվաճողների դեմ պայքարի ընթացքում Քարթլիում ուժեղացավ առաջներում տեղ գտած բյուզանդամետ կողմնորոշումը... » (տես Леонти Мровели. Жизнь картлийских царей. Перев. с древнегруз., предисл. и коммент. Цулая Г., М., 1979, էջ 57):

33. Фрай Р., նշվ. աշխ., էջ 325:

34. Նույն տեղում:

35. Пигулевская Н. նշվ. աշխ., էջ 236. Կարծիք է հայտնվել, որ քրիստոնեությունը այնքան էր ուժեղացել Իրանում, որ կարող էր փոխարինել զրադաշտականությանը, և միայն արաբական նվաճումները խանգարեցին դրան (Фрай Р. նշվ. աշխ., էջ 325): Այս տեսակետից ուշագրավ է այն փաստը, որ Խոսրով Փարվեզի տիկնանց տիկինը (Բամբիշը)՝ Շիրին թագուհին, և կանանց մի մասը քրիստոնյա էին (Սեբեոս, էջ 85): Տիզբոնի կաթողիկոսարանի և նրա եպիսկոպոսությունների, ինչպես նաև նեստորական եկեղեցու ժողովների մասին տես Մելքոնյան Հ., նշվ. աշխ., էջ 216-260:

36. Фрай Р., նշվ. աշխ., էջ 325:

37. Ն. Ադոնցը նշել է, որ VI-VII դդ. սահմանագլխին հականեստորականությունը վեր էր ածվել հակաքաղկեդոնականության (Адонц Н., նշվ. աշխ., էջ 295):

38. Դանիելյան Է. Լ.Հայ Եկեղեցու նկատմամբ Խոսրով Փարվեզի վարած քաղաքականությունը. - ՊԲՀ, № 4, 1981, էջ 195-200:

5. Պարսկա-բյուզանդական պատերազմի ընթացքը

1. Սեբեոս, էջ 122:

2. Stratos A., նշվ. աշխ., h. I, էջ 115:

3. Հ. Բարթիկյանը նշել է, որ Թեոփանեսը «սաստիկ կրճատել է իր աղբյուրի՝ Նիկեփոր պատրիարքի շարադրանքը, որը հետաքրքիր մանրամասնություններ է պարունակում, մասնավորապես տրվում է Քաղկեդոնը գրավողի անունը՝ Շահեն, նրա ենթադրյալ խոսակցությունը Հերակլիոս կայսեր հետ, Խոսրով արքայի բարկությունը Շահենի դեմ, և վերջինիս մահապատիժը արքայից արքայի կողմից» (Բյուզանդական աղբյուրներ, Դ, էջ 227, 228, ծան. 116): Ինչպես հետևում է Սեբեոսի հաղորդումներից, Շահենը Քաղկեդոնի ճակատամարտից հետո մասնակցել է նաև պարսկա-բյուզանդական հետագա ռազմական գործողություններին (Սեբեոս, էջ 124,125):

4. Բյուզանդական աղբյուրներ, Դ, էջ 29:

5. Սեբեոս, էջ 122-123:

6. И. С. Чичуров. Византийские исторические сочинения: «Хронография Феофана», «Бревиарий Никифора», М., 1980, էջ 161.

7. «Յայնմ ժամանակի թագաւորեցոյց Հերակղոս զորդի իւր զԿոստանդին...», Սեբեոս, էջ 114): Կոստանդինը 622 թվականին 10 տարեկան էր: Մայրաքաղաքի ղեկավարումը և իր որդու խնամակալությունը Հերակլը հանձնարարեց Սերգիոս պատրիարքին (տես Ласкин Г., նշվ. աշխ., էջ 42):

8. Սեբեոս, էջ 123: Պարսիկների պարտության պատճառներից մեկը, ինչպես նշել է Լ.Գումիլյովը, ավարական գերիշխանության դեմ Հերակլի էմիսարների կողմից կուրտուրգուրների դժգոհության բորբոքումն էր: Ավարները, իմանալով այդ, դադարեցրեցին Կոստանդնուպոլսի պաշարումը և, դրամ ստանալով, հեռացան Դանուբից այն կողմ (Гумилев Л. Древние тюрки, М., 1967, էջ 182):

9. Այդ ծանր հարված էր կայսրության համար, քանի որ այն զրկվում էր կենսական նշանակություն ունեցող իր հիմնական շտեմարաններից (История Византии, т. I, էջ 364):

10. Նույն տեղում: Տես նաև Diehl Ch., Histoire du Moyen Age, էջ 144:

11. Պ. Խարանիսի կարծիքով բյուզանդական բանակը կազմված էր հայերից, լազերից, աբազգիներից (աբխազներից), վրացիներից և խազարներից հավաքագրված վարձկաններից (Charanis P., Ethnic Changes in the Byzantine Empire in the Seventh Century. - DOP, vol. 13, 1959): Ա. Ստրատոսը նշել է, որ այդպիսի կարծիքը հակասում է աղբյուրներին, որոնց համաձայն, Հերակլի բանակը լոկ ազգային էր, իսկ վարձկանները առանձին ստորաբաժանում էին կազմում (Stratos A., նշվ. աշխ., էջ 130): Այս հարցը խնդրահարույց է և ռազմա-քաղաքական պատմության տեսանկյունից հետազոտման կարիք ունի:

12. История Византии, հ. I, էջ 509, ծան. 29:

13. Stratos A., նշվ. աշխ., էջ 266-282:

14. Նույն տեղում, էջ 278, 281:

15. Hierocles Synek., էջ 37:

16. Ա. Ստրատոսը այս հարցում չնայած օգտագործել է Կոստանդին Ծիրանածինի տեղեկությունները, որոնք վերաբերում են Թեոդոս Ա-ի, Հուստինիանոս Ա-ի և Մավրիկիոսի՝ տարբեր ընդգրկում ունեցող, սակայն միևնույն՝ Առաջին Հայք անունը կրող նահանգներին (պատմիչը նաև Երկրորդ Հայքի մասին է տեղեկություն հաղորդել, տես Const. Porph. De cerim., հ. I, էջ 792, նաև՝ De Thematibus, էջ 31), բայց դժվարացել է դրանց ճիշտ մեկնաբանում տալ (Stratos A., նշվ. աշխ., էջ 278):

17. Hierocles Synek., էջ 40, Georg. Cypr. ed. Honigmann E., էջ 63:

18. Փոքրասիական բանակաթեմերը ստեղծվում էին ստրատեգոսների գլխավորությամբ (տես Ostrogorsky G., նշվ. աշխ., էջ 83-98): Նաև կարծիք է հայտնվել, որ բանակաթեմերը ձևավորվել են քաղաքացիական վարչակազմի աստիճանական բռնազավթման միջոցով՝ ռազմական վարչակազմի կողմից պատշաճ պաշտպանություն ապահովելու համար (տես J. F. Haldon-ի գրախոսությունը՝ Lilie R.J. Die Byzantinische Reaktion auf die Ausbreitung der Araber: Studien zur Strukturwandlung des byzantinischen Staates in 7 und 8. Jhdt.- Byzantinoslavica, XXXIX/2, 1978, էջ 228):

19. Նրանց հետ Բյուզանդիան համագործակցել էր VI դ. 80-ական թթ.՝ Սասանյանների դեմ մղած պայքարում, որից հետո երեք տասնամյակ նրանց մասին տեղեկություն չկա (Артамонов М., նշվ. աշխ., էջ 139):

20. Diehl Ch., նշվ. աշխ., էջ 146.

6. Հայաստանը և Հերակլ կայսեր պարսկական արշավանքները

1. Սեբեոս, էջ 124:

2. Ա. Ստրատոսը սխալ է համարում այն կարծիքը, թե Հերակլը արշավեց, որպեսզի ետ գրավի Երուսաղեմը և վերադարձնի Խաչափայտը: Նրա կարծիքով, քանի որ եկեղեցին էր ֆինանսավորում Հերակլի ռազմական ելույթը, ուստի անհրաժեշտ էր պատերազմի համապատասխան արդարացումը: Ըստ հետազոտողի եկեղեցին բոլոր մեղադրանքներից զերծ կլիներ, եթե պատերազմը Պարսկաստանի դեմ սրբազան լիներ (Stratos A., նշվ. աշխ., հ. I, էջ 136): Սակայն հարցը չպետք է սահմանափակել լոկ բյուզանդական եկեղեցու հեղինակության շրջանակներով, այլ պետք է քննել ավելի լայն հենքի վրա՝ նկատի ունենալով Հերակլի քաղաքականությունը արևելյան քրիստոնյա աշխարհը կայսրության գաղափարական և քաղաքական գերիշխանության ոլորտում ընդգրկելու և պահելու առումով:

3. Ֆ. Ուսպենսկին սխալ էր համարել այն կարծիքը, ըստ որի Հերակլը ժամանել էր Կիլիկիայի նավահանգիստը: Հետևելով Թեոփանեսի հաղորդմանը՝ նա գրել է, որ կայսրը ափ էր իջել բյուզանդական Պյուլեր քաղաքի մոտ՝ Նիկոմեդիայի հարևանությամբ (Успенский Ф. И., История Византийской империи, հ. I, СПб, էջ 648, 685): Մովսես Կաղանկատվացու հաղորդումը կայսեր ծովային ճանապարհի (Պոնտոս ծով) մասին՝ Կոստանդնուպոլսից «Եգերացւոց աշխարհ» (էջ 131), Հ. Մանանդյանը համարել է Հերակլի ոչ թե առաջին, այլ երկրորդ արշավանքին վերաբերող (Манандян Я., նշվ. աշխ., էջ 135):

4. Սեբեոս, էջ 124:

5. Ըստ Թեոփանեսի, Հերակլը իր թագավորության 12-րդ տարում (622 թ., ինչպես և ընդունված է հիմնականում պատմագիտության մեջ), Զատկի տոնը (ապրիլի 4-ին) տոնելուց հետո շարժվեց Պարսկաստանի վրա (Բյուզանդական աղբյուրներ, Դ, էջ 18):

6. Stratos A., նշվ. աշխ., հ. I, էջ 362:

7. Սեբեոս, էջ 112:

8. Այսպիսի սրբագրությունը կարելի է ընդունել:

9. Baynes N., The First Campaign of Heraclius against Persia.- EHR, հ. XIX, 1904:

10. Stratos A., նշվ. աշխ., էջ 139, 362-363:

11. «Աստուածոց պատուական եւ ամենայն երկրի տէր եւ թագաւոր եւ ծնունդ մեծի Արամազդայ խոսրով՝ առ Երակղոս անմիտ եւ անպիտան ծառայդ մեր: «Ոչ կամեցեալ տալ զանձն ի ծառայութիւն մեզ, այլ տէր եւ թագաւոր կոչես զքեզ. եւ գանձ իմ որ առ քեզ են, ծախես, եւ զծառայս իմ պատրես, եւ զգաւրս աւազակաց ժողովեալ՝ չտաս ինձ հանգչել... Ջի եթէ իջանիցես յանդունդս ծովու՝ ձգեցից զձեռն իմ եւ ըմբռնեցից զքեզ. եւ ապա տեսցես զիս, որպէս դու ոչ կամիցիս» (Սեբեոս, էջ 123):

12. Stratos A., նշվ. աշխ., էջ 151:

13. Սեբեոս, էջ 114:

14. Նույն տեղում, էջ 124:

15. Ըստ Գեորգ Պիսիդացու, պարսիկները հետևեցին Հերակլին, ինչպես «շղթայված շունը» (Georgii Pisidae Expeditio Persica. Bellum Avaricum, Heracleias, Rec. I. Bekkerus, Bonnae, 1836, էջ 27): Թեոփանեսի հաղորդումը այն մասին, որ Հերակլը իր բանակը թողեց Հայաստանում, հետազոտողների կարծիքով վերաբերում է Սատաղում տեղակայված ձմեռային բանակատեղիին, որը կապի մեջ էր Սեբաստիայի և Տրապիզոնի հետ և բյուզանդական Երկրորդ Հայք նահանգի մասն էր կազմում (Ramsay W. M. The Historical Geography of Asia Minor, - in Ro-

yal Geographical Society's Supplementary Papers, h. IV, London, 1890, էջ 220, Stratos A., նշվ. աշխ., էջ 143): Անհրաժեշտ է նշել, որ Սատաղը երբեք չի եղել Երկրորդ Հայքի կազմում: Գտնվելով Փոքր Հայքի ծայր արևելքում, Սատաղը 386 թ. հանդես էր գալիս Առաջին Հայքի (կենտրոնը Սեբաստիա) կազմում, իսկ 536 թ. այն ընդգրկվեց նոր կազմակերպված Առաջին կամ Ներքին Հայք (կենտրոնը Հուստինիանուպոլիս) նահանգի կազմի մեջ: 591 թ. Սատաղը մտավ «Մասն Մեծ Հայոց», այնուհետև՝ «Մեծ Հայք» անունը կրող նահանգի կազմը (Mansi. XI. 649, 680, 997):

16. Stratos A., նշվ. աշխ., էջ 145-150, 361-362:

17. Հերակլի այս արշավանքը որոշ հետազոտողների կարծիքով կայացել էր 623 թ., իսկ ըստ մյուսների՝ 624 թ.: Հերակլ կայսեր պարսկական արշավանքների երթուղիները մանրամասն քննել է Հ. Մանանդյանը (Маршруты персидских походов Ираклия, էջ 133-153, հայերեն թարգմ. տես Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, Հերակլ կայսեր պարսկական արշավանքների ընթացուղիները (մարշրուտները), Երևան, 1960, էջ 141-172):

18. Սեբեոս, էջ 103: Թովմա Արծրունի, էջ ???:

19. Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 145-146: Դվինի կապակցությամբ Ա. Ստրատոսը ուշադրություն է դարձրել այն փաստի վրա, որ Գեորգ Պիսիդացին, ձգտելով մեղմացնել Հերակլի կողմից քրիստոնյա քաղաքի ավերման ծանր տպավորությունը և արտահայտելով կայսրության գաղափարախոսությունը, նշել է, թե ավելի լավ էր, որ քրիստոնյա քաղաքը քարուքանդ էր արվել բարեպաշտ թագավորի կողմից, քան թե այն անվնաս մնար այնպիսի ամբարիշտ մարդու ձեռքում, ինչպիսին էր Խոսրովը (Georgii Pisidae Heraclias, II. 163-166, էջ 85, Stratos A., նշվ. աշխ., էջ 154-155): Հաշվի առնելով Որմի քաղաքի հիշատակությունը, կարելի է կայսեր երթուղին դեպի Գանձակ համարել ընթացած Հեր և Ջարևանդ գավառով ու Նախճավան (չշփոթել Երասխի հովտում գտնվող Նախճավան՝ Նախիջևանի հետ) - Որմի - Գանձակ քաղաքներով: Ա. Ստրատոսը կարծում է, որ Որմի քաղաքի հիշատակությունը Թովմա Արծրունու մոտ պետք է վերաբերի բյուզանդացիների կողմից դրա գրավմանը 627 թ. (Stratos A., նշվ. աշխ., էջ 366): Սակայն պատմիչի շարադրանքից հետևում է, որ խոսքը իրոք 623/624 թ. արշավանքի մասին է: Բացի այդ, հետազոտողը հաշվի չի առել, որ այս հարցի կապակցությամբ խոսքը Ուրմիա լճից արևմուտք գտնվող Նախճավանի մասին է, ուստի Հերակլի երթուղին նշել է ընթացած Ուրմիա լճի արևելյան ափով (նույն տեղում, էջ 365), այնինչ կայսեր զորքը անցել էր արևմտյան ափով:

20. Кулаковский Ю., История Византии, հ. III, Киев, 1915, էջ 66-67:

21. Theoph. Chron., I, էջ 308: Յու.Կուլակովսկին գրել է. «Թեոփանեսը անջատում է Գանձակը սրբազան հուրից, որպես հեռու վայր և վերջինս տեղադրում է Θηβαρμαΐς շրջանում, ուր նա տանում է Հերակլին Խոսրովի հետքերով... Հոֆմանը (Hoffman G., Auszuge aus syrischen Akten persischer Martyrer, Leipzig, 1880, էջ 252) նշել է Թեոփանեսի տեքստում տեղ գտած շփոթը... Θηβαρμαΐς-ը նա ուղղում է Βηθαραμαΐς, Beth-Aramje, այսինքն Ջագրոսից արևմուտք գտնվող նահանգ, սակայն Հերակլը իր այս արշավանքի ժամանակ այնտեղ չի գնացել» (Кулаковский Ю., նշվ. աշխ., էջ 343): Հ. Բարթիկյանը կարծում է, որ «Beth-Aramaje համապատասխանում էր Մենանդրոս Պրոտեկտորի հիշատակած Βηθαρμαΐς-ին և գտնում էր այժմյան «Թախտ-ի Սուլայմանի» տեղում (Բյուզանդական աղբյուրներ, Դ, էջ 232, ծան. 148): Սակայն ասորական աղբյուրներում «Բեթ-Արամայե»-ն ընկալվում էր որպես այն բոլոր շրջանների անվանումը, որոնք գտնվում էին Տիգրոնի կաթողիկոսարանի իշխանության տակ (տես Մելքոնյան Հ., Ադիաբենի պետությունը և Հայաստանը, էջ 223):

22. Սեբեոս, էջ 124:

23. Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 159: Ըստ Մովսես Կաղանկատվացու, Հերակլը «ասպատակ սփռեալ զկողմամբք Ատրպատականու մինչեւ ցտեղի անուանեալն Գայշ աւան... որ է ի սահմանս Մարաց աշխարհին» (Մովսես Կաղանկատվացի, էջ 132): Ն. Ադոնցի ու այլ հետազոտողների կարծիքով, Գայշը համապատասխանում էր Ջիս-Շիզին, որը Գանձակն էր և գտնվում էր Թախտ-ի Սուլեյմանի ավերակների տեղում (Адонц Н., նշվ. աշխ., էջ 326, 400, նույնի, Մովսէս Կաղանկատուացու հետազոտութիւնը - «Անահիտ», № 4-5, 1939, էջ 25, հմմտ. Кулаковский Ю., նշվ. աշխ., էջ 68, Бартольд В. В., նշվ. աշխ., էջ 198, 203, Արաբական աղբյուրները Հայաստանի և հարակից երկրների մասին: Կազմեց Նալբանդյան Ա., Երևան, 1965, էջ 183, ծան. 251):

Գանձակի, Շիզի և Թեբարմայսի տեղադրությունների հարցում հետազոտողների կարծիքները տարբերվում են: Ա. Ջեքսոնը, ընդունելով Հ. Ռոլինսոնի կարծիքը (Rawlinson H. G., Memoir on the Site of the Atropatenian Ecbatana - JRGS, 1841, h. X), նույնպես նշել է, որ Գանձակ-Շիզը (Ganj i - Šičikan) գտնվում էր Թախտ-ի Սուլեյմանի տեղում (Jackson A.V.W., Persia Past and Present. A Book of Travel and Research, New York, 1906, էջ 136-143): Ըստ Մարքվարտի, Գանձակ-Շիզը գտնվում էր այժմյան Լայլանի (Ուրմիա լճից հարավ-արևելք) մոտակայքում, իսկ Թախտ-ի Սուլեյմանի ավերակների տեղում եղել է Փրաասպան (Markwart J. A., Catalogue of the Provincial Capitals of Eranshahr, Pahlavi text, version and commentary, - Analetica Orientala, 3, Roma, 1931, էջ 22, 29, 106, 108-110): Հ. Մանանդյանը անհավանական է համարել Դ. Անվիլի կողմից Թեբարմայիս քաղաքի նույնացումը Ուրմիա (Որմի) քաղաքի հետ (Манандян Я., նշվ. աշխ., էջ 138): Վ. Մինորսկին իրավացիորեն Թեբարմայիսը համապատասխան էր համարում Շիզին՝ տեղադրելով այն Թախտ-ի Սուլեյմանի տեղում (Minorsky V., Roman and Byzantine Campaigns in Atropatene - BSOAS, h. XI/2, 1944, էջ 248): Նրա կարծիքը ընդունել է նաև Ա. Ստրատոսը (Stratos A., նշվ. աշխ., էջ 366): Խնդրո առարկա հարցի կապակցությամբ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել Թովմա Արծրունու հաղորդման վրա կռատան դիմաց գտնվող լճի մասին, որը ոչ թե Ուրմիա լիճն էր, այլ Թախտ-ի Սուլեյմանում գտնվող մի փոքրիկ լիճ (տես Ռ.Ֆրայի գրքում զետեղված լուսանկար 4), որտեղ պատկերված է այդ լճակը: Սակայն Ֆրայը կողմնակից է Գանձակը Շիզի հետ նույնացման և Թախտ-ի Սուլեյմանի տեղում տեղադրման կարծիքին (տես Фрай Р., նշվ. աշխ., էջ 197, 301, 316, 326): Արաբական և պարսկական աղբյուրների հաղորդումները այդ լճակի մասին ուսումնասիրել է Ա. Ջեքսոնը (նշվ. աշխ., էջ 133): Ինչ վերաբերում է Համադանին (Էկբատան), ապա պարթևական դարաշրջանից այստեղ էր գտնվում գանձարանը և Անահիտի տաճարը (տես Դանիելյան Է., Իսիդոր Քարակացու «Պարթևական կայանները». - ՊԲՀ, 1971, № 4, էջ 173): Հետագայում՝ Սասանյանների օրոք, Համադանը մեծ նշանակություն չուներ և չէր մտնում թագավորանիստ քաղաքների շարքը (տես Манандян Я., նշվ. աշխ., էջ 137-138):

24. Markwart J. Ērānšahr nach der Geographie des ps. Moses Xorenaci. Berlin, 1901, էջ 18-20; տես նաև A Catologue of the Provincial Capitals of Eranshahr, էջ 67-68:

25. Հ. Մանանդյանը նշել է, որ Խոսրովը Շահր-Վարագին կանչեց Ասորիքից (նշվ. աշխ., էջ 145), իսկ Գ. Լասկինի կարծիքով, Շահր-Վարազը մնացել էր Բոսֆորի ափին (Ласкин Г. նշվ. աշխ., էջ 46) և, ուրեմն, այնտեղից էր գալիս: Ինչ-ևիցե՝ նա գալիս էր արևմուտքից:

26. Սեբեոս, էջ 125: Հ. Մանանդյանը իրավացիորեն գրել է, որ «ամուր աշխարհն Մարաց»-ի տակ պետք է հասկանալ Ատրպատականի հյուսիս-արևելյան

մասի լեռները (Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 138): Գիտնականը, չնայած հիշատակել է Թովմա Արծրունու հաղորդումը Համադանի և Մայի մասին, սակայն Հերակլի արշավանքի երթուղին Գանձակից (որը նա տեղադրել է Թախտ-ի Սուլեյմանի տեղում) հետո, իր հոդվածում զետեղված քարտեզի վրա, նշել է ետ ընթացած՝ դեպի Արաքսի հովիտը (նույն տեղում, էջ 137):

Թեոփանեսի հաղորդմամբ կայսրը «իրեն բնորոշ գթասրտությամբ» ազատեց 50 հազար գերիների (Theoph. Chron., I, էջ 308): Ըստ Յու. Կուլակովսկու, ետդարձի ճանապարհին Հերակլը կորցրեց իր բոլոր գերիներին պարսիկների հաճախակի հարձակումների հետևանքով (Кулаковский Ю., նշվ. աշխ., էջ 69, տես նաև Манандян Я., նշվ. աշխ., էջ 138): Իսկ Գ. Լասկինի կարծիքով, կայսրը ազատ արձակեց գերիներին, որպեսզի իր կողմը գրավի պարսկական պետության բնակչությանը (Ласкин Г., նշվ. աշխ., էջ 51, հմմտ. Успенский Ф., նշվ. աշխ., էջ 687):

27. Մովսես Կաղանկատվացի, էջ 133: Արցախում Դյուտականի տեղադրության մասին տես Բարխուտարեանց Մ., Արցախ, Բագու, 1895, էջ 230, Սկըրտչյան Ծ., Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1985, էջ 71:

28. Theoph. Chron., I, էջ 308-310: Մովսես Կաղանկատվացին նշել է ևս մեկ պարսիկ զորավարի՝ Գրանիկն Սաղար անունով, որը դուրս եկավ Հերակլի դեմ (էջ 133):

29. Սեբեոս, էջ 125: Նշվել է, որ Սեբեոսը և Կաղանկատվացին տարբեր դեպքեր են նկարագրել (Dowsett C., նշվ. աշխ. էջ 318): Սակայն, խնդրո առարկա հարցի առումով, պատմիչների հաղորդումները միմյանց լրացնելով վերաբերվում են Հերակլի միևնուն արշավանքին:

30. Նույն տեղում: Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 152: Հերակլի բանակում գտնվում էին լազերից, աբազգներից (աբխազներ) և իբերներից կազմված դաշնակից զորամասերը (Theoph.Chron., I, էջ 309-310): Այն, որ Հերակլը Հայաստանի և հարևան երկրների հանդեպ հանդես էր գալիս որպես նվաճող, վկայում են Մովսես Կաղանկատվացու հետևյալ տողերը. «Գիր արարեալ առ իշխանս եւ առաջնորդս աշխարհաց (Հայաստան, Վիրք և Աղվանք - Է. Դ.), զի ինքնակամ կամօք ելցեն ընդ առաջ նորա եւ ընկալցին եւ պաշտեսցին զնա հանդերձ զօրօքն իւրովք յաւուրս ձմերանոյ: Ապա եթէ ոչ՝ համարեսցին առաջի նորա իբրեւ զհեթանոսս, եւ առցին ամուրք նոցա, եւ գերեսցին սահմանք աշխարհացն այնոցիկ ի զօրաց նորա... » (էջ 132):

31. Սեբեոս, էջ 125: Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 20, 22, 28, Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 152:

32. Սեբեոս, էջ 125: Համաձայն Թեոփանեսի տեքստի, Շահենի պարտությունից հետո Հերակլը շարժվեց դեպի «հոների երկիրը» (Οὖννων χώρα, Theoph. Chron., I, էջ 310): Այդպես էլ ընդունել է գիտնականների մի մասը (Gerland E., նշվ. աշխ., էջ 358-359, Кулаковский Ю., նշվ. աշխ., էջ 343-344, Dowsett C., նշվ. աշխ. էջ 320): Գ. Լասկինը նշել է, որ Οὖννοι-ը աղավաղված խոսք է, սակայն, շեշտելով այդ, Հերակլի երթուղին որոշել է այլ ուղղությամբ՝ իբրև թե պարսկական տարածքում գտնվող χωρίον Σαλβανῶν - ով (կամ՝ Ἀλβανῶν), (տես Ласкин Г. նշվ. աշխ., էջ 51): Սակայն վերջինս, ինչպես հետևում է Թեոփանեսի հաղորդումից, համապատասխանում էր Հայաստանում (ըստ աղբյուրների՝ Պարսկահայաստանում) գտնվող մի վայրի (Theoph. Chron., I, էջ 311): Հ. Մանանդյանը Οὖννων ուղղել է Σύννων -Սյունիք (նշվ. աշխ., էջ 141): Ի. Չիչուրովը ենթադրել է, որ Սեբեոսի և Թեոփանեսի մոտ խոսքը բյուզանդա-պարսկական պատերազմի տարբեր դրվագների մասին է: Հ. Մանանդյանի ուղղումը Ի. Չիչուրովը սխալ է

համարել: Նա գտնում է, որ Կովկասը ընդհանրապես հոների երկիրն էր և ἐπὶ τὴν τῶν Οὔννων χώραν արտահայտությունը կարելի է հասկանալ տեղանվան իմաստով, որպես Կովկասին հոմանիշ (Чичуров И. С., О Кавказском походе императора Ираклия - տես Восточная Европа в древности и средневековье, М., 1978, էջ 261-266, նաև՝ Византийские исторические сочинения, էջ 96-97): Ա. Ստրատոսը ճիշտ է համարել Հ. Մանանդյանի առաջարկած ուղղումը (Stratos A., նշվ. աշխ., էջ 161, հմմտ. Բյուզանդական աղբյուրներ, Դ, էջ 24):

33. Theoph. Chron., I, էջ 310:

34. Հրճմունքը, ըստ երևույթին, գտնվում էր Աղի գյուղի մոտակայքում: Հ. Մանանդյանը Թեոփանեսի հիշատակած Սալվանոնը (Theoph. Chron., I, էջ 311) համարել է Աղի գյուղանվան աղճատված ձևը (Манандян Я., նշվ. աշխ., էջ 143-144):

35. Սեբեոս, էջ 125: Հմմտ. Theoph. Chron., I, էջ 311, Georg. Cedr., էջ 724:

36. Սեբեոս, էջ 126:

37. Theoph. Chron, I, էջ 312, Georg. Cedr, I., էջ 725:

38. Սեբեոս, էջ 126:

39. Theoph. Chron, I, էջ 313-314: Ա. Ստրատոսը, հետևելով Վ. Ռամսեյին, Ադանան փոխարինում է «Ադատայով», նշելով, որ այլ կերպ ինչպե՞ս բացատրել հյուսիսային ուղղության փոխարեն հերակլի հարավ շեղվելը (Ramsay W.M., նշվ. աշխ., էջ 311): Ըստ Ա. Ստրատոսի, եթե կայսրը գնացել է դեպի հարավ և այնուհետև հասել Ադանա, ապա նա կտրել-անցել է ոչ թե Տավրոսի, այլ Ամանոսի լեռները (Stratos A., նշվ. աշխ., էջ 169): Ուստի, Թեոփանեսի ամբողջ այս հաղորդումը «Կայսրը... հասավ Սամոսատ: Դարձյալ անցնելով Տավրոսը, նա ժամանեց Գերմանիկե, ապա Ադանայի վրայով եկավ Սարոս գետը» (Բյուզանդական աղբյուրներ, Դ, էջ 26-27), Ա. Ստրատոսը աշխարհագրականորեն սխալ է համարել: Այնինչ կարելի է տեսնել, որ Թեոփանեսը Սամոսատից հետո հիշատակել է անցումը Տավրոսով և այնուհետև Գերմանիկեից (Մարաշ) դեպի Ադանա, այլ ոչ թե Գերմանիկեից հետո՝ Տավրոս, ինչպես ընկալել է Ա. Ստրատոսը ու, դրանով իսկ, ստիպված եղել պնդել, որ Տավրոսի փոխարեն պետք է լիներ Ամանոսի հիշատակությունը: Ըստ Թեոփանեսի ուրվագծվում է հետևյալ երթուղին՝ կայսրը, Սամոսատից հետո շարժվելով հյուսիս-արևմուտք հասնում է Տավրոսի լանջերին գտնվող Գերմանիկե քաղաքը, այնուհետև, գալով հարավ, անցնում է Ամանոսի լեռների՝ Դրունք Կիլիկիո լեռնանցքով, ժամանում Սարոս գետի ափին գտնվող Ադանա քաղաքը: Ա. Ստրատոսի հարցադրումը, թե ինչո՞ւ հերակլը գնաց հարավ, եթե նա ցանկանում էր գնալ Սեբաստիա, սխալ է: Քանի որ, ռազմարշավի ելած կայսրը իր ռազմավարական խնդիրները ուներ, ուստի լրիվ ապահովության համար կարող էր մինչ Սեբաստիա մեկնելը Կիլիկիայի նշված տարածքով անցնել: Սեբեոսը Արճեշից մինչև Սեբաստիա անցած կայսեր երթուղուց հիշատակել է միայն Կեսարիան. «Իսկ Երակլոս առ զաւար եւ զկապուտ բանակի նոցա, դարձաւ յաղթութեամբ մեծաւ, եւ երթեալ հասանէ ի կողմանս Կեսարացւոց» (էջ 126):

40. Ինչպես նշել է Լ. Գումիլյովը, պարսկա-ավարական դաշինքը գոյություն ունեցավ մինչև 628 թ. (Гумилев Л., նշվ. աշխ., էջ 38):

41. Успенский Ф., նշվ. աշխ., էջ 689. Հերակլը իր զորքերի մի մասը տեղաբաշխելով Փոքր Հայքի հյուսիսային մասում և Պոնտոսում, մյուս մասը Տրապիզոնից ծովով ուղարկեց օգնության մայրաքաղաքի կայազորին: Նա հրամայել էր նավատորմին պատրաստ լինել ռազմական գործողություններին, որպեսզի կանխվեր պարսից բանակի անցումը Ասիայից Եվրոպա:

42. Թեոփանեսի տեքստում խոսքը «Պերատիկա» շրջանների և նրանց քաղաքների մասին է: Περατικός բառը նշանակում է «օտար» («օտարերկրյա», A Greek-English Lexicon, էջ 1365): Թեոփանեսի երկի մեկ այլ հատվածից, ուր խոս-

քը գնում է Իրենե թագուհու գահակալության տարիներին (797-802) տեղի ունեցած իրադարձությունների մասին (Բյուզանդական աղբյուրներ, Դ, էջ 188), հետևում է, որ «պերատիկա» շրջաններին համապատասխանում էին Անատոլիկոն և Օպսիկոն բանակաթեմերի տարածքները (Լեո, Բ, էջ 253):

43. Մովսես Կաղանկատվացի, էջ 151:

44. Theoph.Chron. I, էջ 316: Նիկեփորը ներկայացրել է կայսեր ժամանումը Լազիկե նրա առաջին արշավանքի ժամանակ: Ընդ որում, արշավանքին նախապատրաստվելուն և Կոստանդնուպոլսից մեկնելուն վերաբերող շարադրանքների միջև պատմիչը հիշատակել է պարսիկների կողմից Երուսաղեմում Խաչափայտին տիրանալու մասին: Ինչպես նշել է Ի. Չիչուրովը, Նիկեփորը այստեղ նահանջել է շարադրանքի ժամանակագրական հաջորդականությունից (Никифор. «Бревиарий», перев. Чичурова И. С., էջ 159): Հետազոտողը նշել է, որ Թեոփանեսը Հերակլի՝ խազարների հետ ունեցած բանակցությունները դրել է A. M. 6117, այսինքն 625/6 թ. տակ, իսկ հանդիպումը նրանց միջև տեղի էր ունեցել Տփղիսի մոտ (նույն տեղում, էջ 169-170, ծան., 12, 21, 25): Ն. Մառը նշել է, որ Պլատոն Իոսելիանին մի մցխեթյան մետաֆրասում (XIII դ.) կարդացել է. «Հերակլ թագավորը շտապեց զորք հավաքել և... ուղևորվեց Եվքսինոս Պոնտոսով... Նրա հետն էր կինը: Երբ Հերակլը հասավ Տրապիզոն, Մինգրելիայի սահմաններում, նրա կինը տղա ծնեց, որին կոչեց Հերակլ»: Այնուհետև պատմվում է բյուզանդա-խազարական դաշինքի կնքման մասին (Антиох Стратиг, исслед. H. Марр, էջ 25):

Տարբեր ժամանակներին վերաբերող տեղեկությունների համատեղման հետևանքով Նիկեփորը կայսեր ճանապարհը դեպի Լազիկե նշել է ծովով: Եթե նկատի ունենանք, որ Հերակլը առաջին արշավանքը (622 թ.) կատարել էր ցամաքով, ինչպես նաև հաշվի առնենք, որ Թեոփանեսի հաղորդման համաձայն բյուզանդական բանակը 625/6 թթ. ձմռանը կանգ էր առել Ալիս գետից հյուսիս, իսկ, ըստ վրացական աղբյուրի, Հերակլը եկել էր Տրապիզոն, ապա կարելի է ճիշտ համարել Յու.Կուլակովսկու կարծիքը այն մասին, որ կայսրը Տրապիզոնից ծովային ճանապարհով եկել էր Լազիկե (Кулаковский Ю., История Византии, հ. III, էջ 75):

45. Ըստ Մովսես Կաղանկատվացու, Անդրեն և հիշյալ ջոկատը, նավարկելով հասան կայսեր պալատը (Մովսես Կաղանկատվացի, էջ 142): Կարելի է ասել, որ այս հաղորդումը նույնպես բաղարկության հետևանք է: Պատմիչն իր նախորդ շարադրանքը Հերակլի արշավանքի մասին ավարտել էր նրա «յաշխարհն իւր» (էջ 133) վերադառնալու տեղեկությունով, իսկ այնուհետև, նկարագրելով կայսեր արշավանքները, չէր պահպանել դրանց ժամանակագրական հաջորդականությունը և դրանով իսկ շարադրվող իրադարձությունները թվագրել էր Խոսրով Փարվեզի գահակալության նախ 38-րդ և այնուհետև 36-րդ և 37-րդ տարիներով (էջ 135-140):

46. Ըստ Թեոփանեսի, այդ տեղի ունեցավ 626 թ. (Theoph. Chron., I, էջ 316, տես նաև Lebeau Ch., Histoire du Bas-Empire, Nouvelle ed. par. M. de Saint-Martin, h. XI, Paris, 1830, էջ 117-119): Այս արշավանքի ժամանակ խազարները չկարողացան գրավել Տփղիսը: Մովսես Կաղանկատվացին խազարների մի քանի ներխուժումներ է նկարագրել, որոնցից Խոսրովի օրոք տեղի ունեցածների ժամանակ Տփղիսը պաշարվել էր, սակայն չէր գրավվել, իսկ Պարտավին ծանր բաժին էր հասել: Ըստ պատմիչի, Տփղիսը խազարները գրավեցին Կավատ Բ-ի (628 թ.) գահակալության օրոք (էջ 148-153): Իսկ պատմագիտության մեջ հիմնավորվել է այն կարծիքը, որ Տփղիսը խազարները գրավել էին 627 թ. (Джавахишвили И. А., նշվ. աշխ., էջ 265-267, Струве В. В., Белявский В. А., Ломоури Н. Ю. - Тревер К. В. Очерки по истории и культуре Кавказской Албании IVв. до н.э. VII в.н.э. - ВДИ, №3, 1960, էջ 190, Վ. Իսկանյան, նշվ. աշխ., էջ 437):

47. Հ. Մանանդյանը, ուշադրություն դարձնելով Ջվանշերի հաղորդման վրա Բզնունիքի մասին («Համառոտ պատմութիւն Վրաց», Վենետիկ, 1884, գլ. 15, էջ 96-97), ենթադրել է, թե հունարեն տեքստում, որը վրաց հաղորդման հիմքում էր, հավանաբար եղել է, ոչ թե Բզնունիք, այլ Գեորգ Կիպրացու հիշատակած Բուζանά-ն (Georg. Cypr., էջ 78): Գիտնականը ենթադրել է, որ կայսրը Տրապիզոնից անցել էր Երզնկա և Վժան (Վիզանա), որը գտնվում էր Եփրատի ափին, իսկ այնտեղից Կարինով, Վանանդով և Շիրակով եկել էր Տփղիս (Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 164): Ջվանշերի հաղորդումը իր մեջ պարունակում է տարբեր տարիներին վերաբերող տեղեկություններ: 624 թ. Հերակլը Արծեշից Մարտիրոպոլիս գնաց ոչ թե Բոստաքենդով, ինչպես ենթադրել է Հ. Մանանդյանը (նույն տեղում, էջ 156), այլ՝ Վանա լճի հյուսիսային ափին գտնվող Բզնունիքով, իսկ 626 թ., Տրապիզոնից գալով Փոյթ, կայսրը դեպի Տփղիս արշավեց Վարդ Ցիխե-Սվերի-Շորապան-Սուրամ ճանապարհով:

48. Ջվանշերի այն հաղորդումը, որ Ստեփանոսը վախենալով շահնշահից, ապստամբեց կայսրության դեմ, անցավ պարսիկների կողմը և ամրացավ Տփղիսում, հիմք է տվել ենթադրելու, թե Խոսրովի ընդարձակ նվաճումները VII դ. առաջին տասնամյակներում ստիպեցին Ստեփանոսին՝ հակառակ իր հոր վարել հակաբյուզանդական քաղաքականություն: Բացի այդ, Ստեփանոսը պետք է նաև հույս ունենար, որ Պարսկաստանի սյուզերենության տակ նա կկարողանար միավորել Վիրքի երկու մասերը (Allen W. E., A History of the Georgian People, London, 1932, էջ 78, Stratos A., նշվ. աշխ., էջ 201):

49. Նախքան Տփղիսի պաշարումը, ինչպես նշել է Մովսես Կաղանկատվացին, Խոսրով Փարվեզը իմանալով հռոմեական կայսեր և խազարների զորքի ղեկավարի միջև կայանալիք հանդիպման մասին, «զօր փութանակի առաքէր յօգնականութիւն նոցա եւ ի պահպանութիւն քաղաքին, զյօժարն եւ զքաջ պատերազմող զզօրագլուխն իւր զՇարհապաղ եւ յընտիր հեծելոց թիկնապահաց եւ դռնապահաց իւրոց ընդ նմա իբրեւ արս հազարս» (Մովսես Կաղանկատվացի, էջ 138): Քարթլիի մի մասը դեռևս մնում էր պարսիկների քաղաքական ազդեցության ոլորտում, ուստի Տփղիսում գտնվում էր պարսկական կայազորը (տես История Грузии, հ. I, Тбилиси, 1962, էջ 117):

50. Հայաստանից դուրս Հերակլի անցած երթուղու մասին Սեբեոսը այնուհետև գրել է. «Այնպէս փութով գնացեալ զտիւ եւ զգիշեր, մինչեւ չոգաւ եհաս մերձ ի նա: Եւ նորա անկեալ յայնկոյս լերինն Ջարասպայ յերկիրն Ասորեստանեայց: Եւ սոքա պնդեցան զհետ նորա. եւ նոցա դարձեալ ընդ արեւմուտս՝ գնաց ի Նինուէ» (Սեբեոս, էջ 126):

51. Манандян Я., նշվ. աշխ., էջ 149-151:

52. Источники по истории Грузии, 13, Тбилиси, 1979, էջ 29: Այստեղ խոսքը Վարազ Գրիգորի մասին է (Такайшвили Е. С., Источники грузинских летописей. Три хроники. - СМОМПК, вып., XXVIII, Тифлис, 1900, էջ 127-128), որը Գարդմանի տերն էր Միհրանյան տոհմից (Մովսես Կաղանկատվացի, էջ 172, 173, 189, 280, 326, 339, Մխիթար Այրիվանեցի, ժամանակագրական պատմութիւն, Ս. Պետերբուրգ, 1867, էջ 23): Գարդման (Գարդմանաձոր, տես Փավստոս Բուզանդ, Գ, 17, Ե, 13, Մովսես Խորենացի, Գ, 60, Սեբեոս, էջ 125) գավառը Տուս-Քուստակ գավառի հետ զբաղեցնում էր Մեծ Հայքի տասներկուերորդ աշխարհի՝ Ուտիքի հյուսիսային մասը (Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 75-76): Վրացական Գարդաբանի տարածքը պետք է տարբերել հայկական Գարդման գավառի տարածքից, որը վրացական աղբյուրներում նույնպես Գարդաբանի է անվանվել (տես Toumanoff. C., նշվ. աշխ., էջ 479-481): Վրացական Գարդաբանի շրջանը գտնվում էր Թբիլիսիից հարավ-արևելք և ընդգրկում էր Վրաստանի ներկայիս Գարդաբանի շրջանի

տարածքը (տես Мкртумян Г. Г., Грузинское феодальное княжество Кахети в VIII-XI вв. и его взаимоотношения с Арменией, Ереван, 1983, 22, 34-35, 74): Հայկական Գարդման գավառը ընդգրկում էր Շամքոր գետի ավազանը (տես Ինճիճեան Ղ., նշվ. աշխ., էջ 338, Ուլուբաբյան Բ., Դրվագներ Հայոց արևելից կողմանց պատմության, էջ 36): Կարելի է ենթադրել, որ Հերակլի երթուղու վերոհիշյալ հատվածի կապակցությամբ տեղի է ունեցել միահյուսում: Այդ հատվածի տեքստաբանական և պատմաաշխարհագրական վերլուծություն կատարած (տես Еремян С. Т. Заметки к тексту хроники Сумбата. - Известия Арм. ФАН, Обществ. Науки, 9, 1941, էջ 27-30) Ս. Երեմյանի կարծիքով «Մեցեկենվելի» և «Մեծ Կուենք» (գավառ Արցախ աշխարհում) անվանումները նույնական են, ուստի «մեցեկեվանցիների մթավարին» կարող էր համապատասխանել Մեծ Կուենքի (ըստ Մովսես Կաղանկատվացու, այն տեղադրված էր Տրտու գետի ավազանի վերին մասում, էջ 99) իշխանը, որը կայսեր կոչով եկավ Լալ: Ինչ վերաբերում է Բաղդադի հիշատակությանը աղբյուրում, ապա, ինչպես նշել է Մ. Լորթկիպանիձեն, այն կոպիտ սխալ էր, քանի որ այստեղ խոսքը Հերակլի դեպի Պարսկաստան կատարած արշավանքի և պարսից արքայի պալատի գրավման մասին է (Источники по истории Грузии, էջ 48, ծան. 42, տես նաև Меликишвили Г. А., К истории древней Грузии, Тбилиси, 1959, էջ 25-26): Եթե նկատի ունենանք, որ Բաղդադը 762 թ. հիմնեց խալիֆ Մանսուրը Տիգրոնի մոտ, ապա XI դարում ապրած պատմիչի սխալը նրանումն է, որ VII դարի դեպքերը նկարագրելիս դրանց գումարել է VIII դարի տեղեկություն Բաղդադի մասին, իսկ ինչ վերաբերում է Հերակլի բանակի արշավանքի ուղղությանը, ապա այն ճիշտ է նշված, քանի որ պարսից շահի պալատը Դաստակերտում էր՝ Տիգրոնի հարևանությամբ: Պատմական անցքերի միահյուսման հետևանք պետք է համարել նաև Տփղիսի գրավման մասին տեղեկությունը, քանի որ խնդրո առարկա արշավանքի ժամանակ այն չէր գրավվել: Չնայած Սումբատ պատմիչի այս հաղորդումը կարող էր հիմք ծառայել վերոհիշյալ այն կարծիքին, թե 627 թ. խազարները գրավել էին Տփղիսը, սակայն, ինչպես հետևում է Մովսես Կաղանկատվացու հաղորդումներից, Տփղիսի առաջին պաշարման ժամանակ պաշարվածները ծաղրուծանակի էին ենթարկել թշնամուն («Բերին դդում մի մեծ, նկարէին ի վերայ նորա զպատկեր թագաւորին Հոնաց...», էջ 139): Այդ Խոսրով Փարվեզի սպանվելու տարին էր (նույն տեղում, էջ 135), այսինքն 628 թ.: Իսկ Տփղիսը գրավվեց Կավատի գահակալության ժամանակ, և հենց այդ պարագայում էր, որ «թագաւորն հիւսիսոյ» եղբոր որդին («որում ի պատիւ իշխանութեանն իւրեանց Շաթ անուն կարդային», Մովսես Կաղանկատվացի, էջ 142) վրեժ լուծեց վերոհիշյալ ծաղրուծանակի համար (նույն տեղում, էջ 151-153):

53. Ուլուբաբյան Բ., նշվ. աշխ., էջ 36, տես նաև Սվազյան Հ., Աղվանքը և Միհրանյան տոհմը. - ԼՀԳ, № 9, 1980, էջ 91-101:

54. Такайшвили Е., նշվ. աշխ., էջ 127-128, ծան. 4.

55. Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 60:

56. Գարդմանի այս ընդարձակված տարածքը նշել է Ս. Երեմյանը՝ «Արմինիայի կուսակալությունը Արաբական խալիֆայության կազմում» քարտեզում (տես Հայ ժողովրդի պատմություն, հ. Բ):

57. Բերդուջը պետք է գտնվեր նույնանուն գետի ափին, որին, ըստ Լ. Մելիք-սեթ-Բեկի, համապատասխանում էր ոչ թե Դեբեդը, ինչպես ենթադրվել է, այլ Սագիմ (Զեգամ) գետը (տես Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ, Երևան, 1936, էջ 63):

58. Λάλα (Ptol.V. 12.5): Ս. Էփրիկյանը գրել է, որ այդ անունով երկու գյուղ կա՝ «Հին Լալա... ունի եկեղեցի փայտյա ծածկոցով և Նոր Լալա (այժմ Վազաշեն՝

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում - Է. Դ.): Դրա բնակիչները տեղափոխվել են Հին Լալա գյուղից, որտեղ այժմ, ըստ երևույթին, բնակիչներ չկան» (տես Էփրիկյան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Բ, գիրք Ա, Վենետիկ, 1907, էջ 84):

59. Այստեղ կամ Մակու քաղաքում, ինչպես ենթադրել է Ա. Ստրատոսը, Հերակլը հանդիպեց Փոքր Ասիայից եկած Թեոդորի գլխավորած բյուզանդական զորքին (Stratos A., նշվ. աշխ., էջ 206):

60. Ա. Ստրատոսը գրել է, որ, ըստ Սեբեոսի, Հերակլը Ջարևանդից հետո անցել էր «Քրդական լեռներով» (նույն տեղում, էջ 376): Սակայն այդպիսի անվանում Սեբեոսի մոտ չկա: Պատմիչը հիշատակել է «լերինն Ջարասպայ» (Սեբեոս, էջ 126): Ա. Ստրատոսը նշել է, որ Արտաշատի ժամանակակից անվանաձևը «Աշտարայ» է (Stratos A., նշվ. աշխ., էջ 376): Սակայն այդպիսի անվանաձև գոյություն չի ունեցել (Արտաշատ անվան տարբերակների մասին տես Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. Ա, Երևան, 1986, էջ 493): Ա. Ստրատոսը գրել է, որ Որմի (Ուրմիա) քաղաքի՝ բյուզանդացիների կողմից գրավման կապակցությամբ Թովմա Արծրունու հաղորդումը այս արշավանքին է վերաբերում (Stratos A., նշվ. աշխ., էջ 209): Պատմիչը Հերակլի Հայաստանով անցած արշավանքներից միայն մեկի մասին է պատմել, ուստի միայն մեկ երթուղի է նկարագրել, որի մասին վերը ասվեց: Եթե ընդունելի լինի Ա. Ստրատոսի կարծիքը, ուրեմն պետք է ենթադրել, որ Թովմայի շարադրանքում տարբեր տարիներին տեղի ունեցած արշավանքներին վերաբերող տեղեկությունները միահյուսվել են, ասել է թե Որմի (Ուրմիա) քաղաքով (այսինքն Ուրմիա լճի արևմտյան ափով) Հերակլ կայսրը անցել էր թե նախորդ (երբ նա ավերեց Ուրմիայից հարավ գտնվող Գանձակը) և թե վերջին արշավանքի ժամանակ: Յու. Կուլակովսկին և Ն. Բեյնեզը կարծում էին, թե կայսեր արշավանքի երթուղին անցել էր Ուրմիա լճի արևմտյան կողմով, իսկ Հ. Մանանդյանը գտնում էր, որ կայսրը պետք է գար «յերկիրն Ասորեստանեայց» ոչ թե հյուսիսից, այլ արևելքից (Манандян Я., նշվ. աշխ., էջ 150):

62. Երբ Հերակլի բանակը մտավ Պարսկաստանի սահմանները, նրան լքեցին դաշնակից խազարները: Թեոփանեսի հաղորդման համաձայն, խազարները այդ քայլին դիմեցին ձմեռվա ցրտի և պարսիկների հարձակումների հետևանքով (Theoph. Chron., I, էջ 317): Ա. Ստրատոսը այդ իրադարձությունը կապում է նրանց և Կավատի միջև խաղաղության կնքման հետ (մարտ, 628 թ.) (տես Stratos A., նշվ. աշխ., էջ 207-208):

63. Ըստ Լ. Գումիլյովի, Բյուզանդիայի կայսրը շտապեց խաղաղություն կնքել, քանի որ վախենում էր լքված լինել դաշնակիցներից և կորցնել իր հաղթանակի պտուղները (Гумилев Л., նշվ. աշխ., էջ 198): Ա. Ստրատոսի կարծիքով, Հերակլը չէր ցանկանում Պարսկաստանի ոչ թուլացումը, ոչ էլ ոչնչացումը, այլ նրա նպատակն էր 591 թ. սահմանների վերականգնումը, որպեսզի ցույց տա, որ հույները միտք անգամ չունեին նվաճումներ կատարելու (Stratos A., նշվ. աշխ., էջ 237):

64. Ըստ Ն. Մառի կարծիքի, Հերակլը վերադարձրեց Խաչափայտը Երուսաղեմ մարտի 21-ին, այլ ոչ թե սեպտեմբերի 14-ին, որը նշվում է որպես «Խաչվերաց» եկեղեցական տոնի օր (Антиох Стратиг. исслед. и перев. Марр Н., էջ 5, 65): Ն. Բեյնեզի կարծիքով այդ տեղի էր ունեցել 629 թ., իսկ ըստ Ա. Ստրատոսի՝ 630 թ. (Stratos A., նշվ. աշխ., էջ 248-255, 384-387): 631 թ. սեպտեմբերի 14-ը Մ. Օրմանյանը նշել է որպես Խաչափայտի Երուսաղեմ հասցնելու օր, և հենց այդ օրն էլ հաստատվել է Վերացման Խաչի կամ Խաչվերացի տարեկան տոնը (Օրմանյան Մ., էջ 686):

65. Պատերազմի ավարտով կայսրությունը չդադարեցրեց իր միջամտությունը Պարսկաստանի ներքին քաղաքական գործերին:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Հայ-բյուզանդական հարաբերությունները Սասանյանների պետության մայրամուտին

Բյուզանդա-պարսկական պատերազմների ավարտով Հայաստանի վարչա-քաղաքական վիճակը արտաքնապես չփոխվեց, քանզի Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև «սահման հաստատեցաւ նոյն՝ որ առ Խոսրովաւ եւ Մաւրկաւ հաստատեալ էր»[1]: Սակայն Սասանյանները, փաստորեն, կորցրել էին վերահսկողությունը Հայաստանի արևելյան մասի վրա: Բյուզանդիայից[2] կրած պարտությունը վերջնականապես սասանեց Սասանյանների պետական համակարգը: Պարսից պետության նյութական և հոգևոր կյանքի բոլոր բնագավառները՝ ներքին պառակտություններից քայքայվող կենտրոնական իշխանությունից մինչև ճգնաժամային վիճակում գտնվող զրադաշտական գաղափարախոսությամբ, կաթվածահար էին[3]:

Վարազտիրոց Բագրատունին Պարսկաստանից Արևելյան Հայաստան էր վերադարձել որպես մարզպան: «Եւ իբրեւ եկն նա ի Հայս՝ խնդութեամբ ընկալան զնա ամենայն աշխարհն Հայաստանեայց... Վարազտիրոց ասպետ, անուանեալ ի թագաւորաց Ջաւիտեան Խոսրովու, որդի մեծին Խոսրովայ Շումն, շինեաց բոլորովին զամենայն աշխարհն Հայոց»[4]: Իսկ Արևմըտյան Հայաստան միառժամանակ անց եկավ «զաւրավարն Յունաց Մժէժ Գնունին ի Հայաստան երկրէն, եւ յինքն կալաւ զամենայն երկիրն ըստ ասացելումն սահմանին»[5]:

Հայրենիք վերադարձած Վարազտիրոցի ամբողջ գործունեությունը ուղղվեց Հայաստանի երկու մասերի վերամիավորման գործին: Սեբեոսի շարադրանքից երևում է այն քաղաքական բարդ իրավիճակը, որի պայմաններում Վարազտիրոցը ծավալել էր իր հայրենանվեր գործունեությունը: Նրա վարած քաղաքականությունը ծայրահեղ դժգոհություն առաջացրեց բյուզանդական և պարսկական իշխանությունների մոտ: Նա չհնազանդվեց «իշխանին մեծի որ յԱտրպատական աշխարհին, որում Խոռոխ Որմիզդն կոչէին: Նա եւ ոչ յետ նորա որդւոյ նորին Ռոստոմայ, որ էր իշխան ի կողմանս Ատրպատականի եւ էր խռովութիւն մեծ ի մէջ երկոցունց: Ապա եւ զաւրավարն Յունաց Մժէժ սկսաւ եւ նա առնել չարախաւսութիւն զասպետէ առ Ռոստոմայ իշխանին, որ յԱտրպատական աշխարհին: «Մի կացցէ սա ի Հայս. ապա թէ ոչ՝ խռովութիւն մեծ լինիցի ի մէջ երկոցունց թագաւորացն»[6]:

Բյուզանդիան և Պարսկաստանը, չնայած դարեր շարունակ ունեցաց հակամարտության և թշնամանքի, Հայաստանի հարցում հավատարիմ էին

մնում «բաժանիր և տիրիր», քաղաքականությանը: Հայաստանի տարածքային ամբորջության վերականգման դեպքում նվաճող տերությունները մասնատված երկրի՝ առանձին իշխանական տների կամ նախարարական խմբավորումների փոխարեն գործ կունենային միասնական քաղաքական ուժի՝ Հայկական պետության հետ[7]: Այդպիսի պայմաններում Վարազտիրոցի միավորիչ ջանքերին խոչընդոտեցին նաև արտաքին աշխարհի ազդեցությամբ խորացող ներքին ավատական երկպառակումները: Բացի այդ, Քրիստափոր կաթողիկոսը (628-630) «բազում խռովութիւն յուզեաց եւ արկ սուր ի մէջ ընդ ասպետ եւ ընդ եղբայր իւր չարախաւսութեամբ»[8]: Վարազտիրոցը ստեղծված իրավիճակում չկարողացավ շարունակել իր գործունեությունը: Որոշ ժամանակ անց պարսկական պաշտոնյաներից մեկի կողմից զգուշացված լինելով՝ իր դեմ Ատրպատականի իշխանի[9] և Մժեժ Գնունու փոխհամաձայնությամբ դավադրություն կազմակերպելու մասին, Վարազտիրոցը «առեալ զկին իւր եւ զորդիս՝ փախեաւ ի գիշերի, եւ ճանապարհ կալեալ գնաց ի Տարոն: Եւ անդ երթեալ ժողովեաց զզաւրս իւր. եւ խնդրեալ երդումն ի թագաւորէն Երակլէ, զի մի՛ հեռացուսցէ զնա յաշխարհէն իւրմէ, եւ ընկալեալ երդումն հաւատարիմ՝ երթեալ յանդիման լինէր նմա յԱսորեստանեայց աշխարհին»[10]:

Վարազտիրոցը, անցնելով Հայաստանի արևմտյան մասը, ըստ երևույթին, որոշ ժամանակ կարողացել էր Մամիկոնյանների նախարարական տան տիրույթում՝ Տարոնում իրեն ազատ զգալ իր հանդեպ թշնամաբար տրամադրված բյուզանդական կառավարչի՝ Մժեժ Գնունու խարդավանքներից: Սակայն առանց բյուզանդական կայսեր աջակցության Վարազտիրոցը նույնիսկ իր նախարարական զորքով չէր կարող երկար մնալ Հայաստանի այդ մասում: Վարազտիրոցը, փաստորեն, Հերակլին խնդրում էր Արևելյան Հայաստանից իր հետ ժամանած այդ զորքով մնալ և ծառայել հայրենիքում: Ավելին, նա ոչ միայն ցանկանում էր մնալ Հայաստանում, այլ, գնալով Միջագետք Ասորվոց և ներկայանալով կայսրին, նա ձգտում էր հայրենիք վերադառնալ[11] մեծ լիազորություններով, որոնք նրան հնարավորություն կընձեռեին շարունակել իր միավորիչ գործունեությունը: Սակայն Հերակլը, հավատարիմ մնալով Հայաստանի հանդեպ վարած կայսրության նվաճողական քաղաքականությունը, Վարազտիրոցին ճանապարհեց հակառակ ուղղությամբ՝ դեպի Կոստանդնուպոլիս: «Եւ մեծացոյց զնա քան զամենայն պատրիկսն որ էին ի թագաւորութեան նորա: Եւ գնացեալ ի պաղատն՝ ետ նմա ապարանս թագաւորականս եւ գահոյս արծաթի եւ գանձս բազումս յոյժ: Եւ որդի նորա Սմբատ էր սիրելի սենեկապետին Երակլի»[12]:

Այսպիսով, Վարազտիրոցը Հայաստան եկավ 628 թ.[13] և հեռացավ 631/2 թ.[14]: Վարազտիրոցը նշանակալից քաղաքական դեմք էր[15], և այդ էր պատճառը, որ կայսրը ձգտում էր նրան հեռու պահել Հայաստանից: Հայոց իշխանին մեծ պատիվներով Բյուզանդիայի մայրաքաղաքում բնակեցնելով,

Հերակլը ցանկանում էր նրան ոչ միայն մեկուսացնել հայկական միջավայրից, այլև անհրաժեշտության պահին իր զորքով օգտագործել կայսրության քաղաքական նպատակների համար: Սակայն Վարազտիրոցը չհաշտվեց այդպիսի վիճակի հետ և շուտով հայտնվեց հույն և հայ այն իշխանների թվում, որոնք Աթաղարիկոսի (Հերակլի որդին ծնված մի հարճից)[16] գլխավորությամբ դավադրություն կազմակերպեցին կայսեր դեմ: «Քանզի միաբանեալ սա և Թէոդորոս եղբաւրորդի Երակղի, անուանեալն Մագիստրոս, եւ բազումք ի մեծամեծաց քաղաքին, եւ Վահան Խորխոռունի. սոքա ամենեքին միաբանեալ սպանանել զԵրակլոս, եւ զորդի նորա զԱթաղարիկոս նստուցանել յաթոռ թագաւորութեանն: Գտաւ ի խորհրդեանն յայնմիկ լեալ Վարազտիրոց, որդի Խոսրովայ Շումն Սմբատայ. բայց չէր միաբանեալ սպանման թագաւորին եւ որդւոց նորա, այլ ասէ. «Դուք ասէք զնոսա տեղապահս Աստուծոյ, ապա ոչ է պարտ լինել այդմ բանի, եւ այդմ խորհրդի ոչ միաբանիմ ընդ ձեզ»[17]: Խորհրդի մասնակիցներից մեկի մատնությամբ դավադրությունը հայտնի դառնձավ Հերակլին, որի հրամանով կտրեցին Աթաղարիկոսի, Թեոդորոսի եւ նրանց համախոհների քթերն եւ աջ ձեռքերը: Իմանալով Վարազտիրոցի վարքագծի մասին[18], Հերակլը բավարարվեց ուղարկելով նրան կնոջ եւ որդու հետ «ի կղզի եւ ի քաղաքն նեղութեանն, որում Աքսորն կոչեն»[19]:

Հայաստանում շարունակվում էր պայքարը իշխանության համար: Երկրի քաղաքական վերամիավորման համար պայքարող ուժերը հանդիպում էին բյուզանդական ռազմավարչական համակարգի դրածո Մժեժ Գնունու կատաղի դիմադրությանը: Այդ պայքարի մասին է վկայում Սեբեոսի շարադրանքը: «Գտաւ լեալ ի խորհրդեանն յայնմիկ եւ Դաւիթ Սահառունի, զոր կապեալ Մժեժայ առաքէ ի պաղատն»[20]: Բացառված չէր, որ Հերակլի դեմ կազմակերպված դավադրության մասնակիցները կարող էին համակրողներ ունենալ կայսրության մայրաքաղաքից հեռու վայրերում: Աթաղարիկոսը Վարազտիրոցի միջոցով կարող էր համախոհներ գտնել նաև Հայաստանում՝ ի դեմս Դավիթ Սահառունու և նրա գինակիցների: Հայաստանում Դավիթ Սահառունին իրական քաղաքական ուժ էր ներկայացնում, քանզի ճանապարհին ազատվելով կապանքներից և, ջախջախելով իրեն տանող զորքը, «դարձեալ անդրէն միաբանէ ընդ ինքեան զզաւրս Հայոց, յարձակի ի վերայ Մժեժի Գնունւոյ զաւրավարին Յունաց, հարեալ սատակէ զնա եւ զՎարազ Գնել Գնունի: Եւ առ յինքն զաւրավարութիւնն կամակցութեամբ եւ սիրով ամենայն զաւրացն»[21]: Հերակլ կայսրը ստիպված էր ճանաչել[22] Դավիթ Սահառունու իշխանությունը:

Ասողիկը նույնպես տեղեկություններ է հաղորդել Դավիթ Սահառունու մասին.«Իսկ յետ սուսերահարն լինելոյ Սուրենայ ոչ եւս պարսիկ մարզպան առաքէր ի Հայս թագաւորն Պարսից. այլ ի խնդրոյ նախարարացն իշխան հաստատէ Հայոց զԴաւիթ Սահառունի, որ կալաւ զհազարապետութիւն Հա-

յոց ամս Լ հրամանաւ Որմզդի, որդւոյ Խոսրովու Պարսից արքային... Իսկ զկնի Դաւթի Սահառունւոյ եկաց իշխան Հայոց Թէոդորոս Ռշտունի ամս ԻԵ»[23]: Հ. Օրբելին այս հաղորդումներից եզրակացրել է, որ Սուրենի սպանությունից հետո՝ մինչ Դավիթ Սահառունու կառավարելը մարզպանական իշխանությունը Հայաստանում պատկանել էր Սմբատ Բագրատունուն: Միևնույն ժամանակ նա ենթադրել է, թե Ասողիկի հաղորդման մեջ անճշտություններ կան, ուստի Սմբատը պետք է մարզպան լիներ Հայաստանում իր գործունեության սկզբում, իսկ Դավիթ Սահառունին երկու անգամ է կառավարել. առաջին անգամ Հայաստանի մարզպան է եղել VII դ. սկզբին, իսկ երկրորդ անգամ Հերակլի կողմից ստրատելատ է նշանակվել Հայաստանում 638 թ. կեսերից ոչ շուտ: Մրենի տաճարի կառուցումը, ինչպես նշել է Հ. Օրբելին, սկսվել էր մինչ Դավիթ Սահառունու ստրատելատ նշանակվելը և ավարտվել նրա իշխանության օրոք[24]:

Ըստ Ասողիկի, ոչ թե մինչ Դավթի կառավարելն էր Սմբատը Հայաստանի մարզպան եղել, այլ Դավիթը հազարապետ էր կարգվել Որմիզդի (579-590) կողմից, իսկ Սմբատ Բագրատունին (որի հրամանով «զկնի տեառն Մովսիսի եկաց կաթողիկոս Հայոց Տէր Աբրահամ ի գաւառէն Ռշտունեաց ի գեղջէ Աղբաթանից»), «որ էր մարզպան Հայոց ի Խոսրովու հրամանէ... երթեալ յաշխարհն Վրկանի պատերազմաւ... »[25]: Ասողիկի երկից չի հետևում, որ Դավիթը VII դ. սկզբին է մարզպան եղել: Պատմիչը նրան Որմիզդի կողմից հազարապետ նշանակելը նշել է կայացած Սուրենի սպանությունից հետո: Ուրեմն, ըստ Ասողիկի, այդ տեղի էր ունեցել 579 և 590 թթ. միջև, քանի որ Սուրենը սպանվել էր Որմիզդ Դ-ի (579-590) գահակալությունից յոթ տարի առաջ (572 թ.): Բացի այդ մինչ Որմիզդի սպանվելը (590 թ.) Սեբեոսը պարսկա-բյուզանդական կռիվների կապակցությամբ հիշատակել է Արևելյան Հայաստան եկած պարսից երեք զորավարների և երկու մարզպանների, իսկ այնուհետև «եկին սահմանակալք պարսիկք մինչեւ ցսպառումն խաղաղութեանն՝ որ ի մէջ Պարսից եւ Յունաց եւ ի մէջ թագաւորացն երկոցունց՝ Մաւրկայ եւ Խոսրովայ» և ապա՝ պարսից այլ զորավարների և մարզպանների[26]:

Ուրեմն, Սեբեոսի և Ասողիկի հաղորդումների համադրումից կարելի է եզրակացնել, որ Դավիթ Սահառունին VI դարի 80-ական թվականներին վարել էր հազարապետի պաշտոնը Արևելյան Հայաստանում: Այնպիսի ծանր ժամանակ, ինչպիսին VII դ. առաջին տասնամյակներն էին, երբ Հայաստանը ժամանակ առ ժամանակ դառնում էր պարսկա-բյուզանդական պատերազմական գործողությունների թատերաբեմ, Դավիթ Սահառունին կարողացավ երկրի տնտեսությունը և շինարարությունը պահել պատշաճ մակարդակի վրա: Վկան՝ Մրենի տաճարը, որի կառուցումը պետք է սկսված լիներ Դավիթ Սահառունու հազարապետության և ավարտված՝ նրա Հայոց իշխան եղած ժամանակ: Դատելով նրա անվան և տիտղոսի («ԱՄԻՈՅՆ

ՔՍԱՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴԻ (կամ ԵՐԵՍՆԵՐՈՐԴԻ) ՀԵՐԱԿԴԻ ԲԱՐԵՅԱՂԹՈՂ ԹԱԳԱՒՈՐԻ ՅԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՒԹԻ ԱՄԵՆԱԳՈՎ ՊԱՏՐԿԻ ԿՈՒՐՊԱՂԱՏԻ ԵՒ ՍՊԱՐԱՊԵՏԻ ՀԱՅՈՑ...»)[27] հիշատակությունից Մրենի տաճարի կառուցման մասին եղած արձանագրությունում, Դավիթ Սահառունին կառավարել էր մինչև VII դ. 30-ական թթ. վերջը[28]: Այս ժամանակ նրա տարիքը յոթանասունից անց էր:

Ժամանակին Վարազտիրոցին չէր հաջողվել դիմակայել Մժեժ Գնունուն, իսկ Դավիթ Սահառունին ոչ միայն կարողացավ իր շուրջ համախմբել հայ նախարարներին, այլև Մժեժի սպանվելուց հետո, շարունակելով Վարազտիրոցի գործը, վերամիավորեց Հայաստանի երկու մասերը և դարձավ «իշխան ի վերայ ամենայն աշխարհացն»[29]: Այդ կապված էր նաև կայսրությունում ստեղծված իրավիճակի հետ: Եթե Դավիթը նույնիսկ մասնակցած էլ չլիներ Հերակլի դեմ կազմակերպված դավադրությանը, ապա նա, այնուամենայնիվ, մինչ իր ձերբակալվելը պետք է հակադրված լիներ բյուզանդական իշխանություններին և նրանց դրածո Մժեժ Գնունուն: Կայսրության մայրաքաղաքում դավադրության բացահայտմանը հետևած պատժիչ գործողությունների ժամանակ հակակայսերական բոլոր տրամադրությունները կարող էին բերված լինել ընդհանուր հայտարարի, և Մժեժը, մտցնելով Դավթին «սեւ ցուցակի» մեջ, իրականացրեց նրա ձերբակալությունը: Մյուս կողմից, կայսրության կենտրոնական իշխանությունը, զբաղված լինելով դավադրության բացահայտմամբ և վերացմամբ, ամենայն հավանականությամբ, կորցրել էր վերահսկողությունը իրեն ենթակա հեռավոր տարածքների վրա և այդ հանգամանքը կարևոր դեր խաղաց Դավիթ Սահառունու ծրագրերի իրականացման գործում: Հերակլի զիջողական դիրքորոշումը նրա գործողությունների հանդեպ թելադրված էր Բյուզանդիային համակած ինչպես քաղաքական ներքին ճգնաժամով, այնպես էլ արտաքին բարդություններով, որոնք պայմանավորված էին խալիֆայության հարձակումներով և կայսրության կրած առաջին պարտություններով:

633/4-636 թթ. խալիֆայությունը կայսրության զորքերին պարտության մատնեց Վադի-լ-Արաբի, Գազայի, Աջնադայնի, Ֆիխլի, Դամասկոսի մոտ[30]: Թեոփանեսը հաղորդել է, որ արաբները հասել էին Գաբիթային, իսկ նրանց դեմ դուրս եկած Թեոդոսը՝ Հերակլի եղբայրը պարտություն էր կրել և վերադարձել կայսեր մոտ, որը գտնվում էր Եդեսիայում[31]: Այնուհետև Հերակլը զորավար նշանակեց Վահանին, իսկ Թեոդոսին զորք տվեց և ուղարկեց Եմեսա, որտեղ նա հանդիպեց արաբներին և պարտության մատնեց նրանց: Վահանը[32] և Թեոդոսը այնուհետև միասին գործեցին կայսեր հրամանով և 40 հազար զորքով արաբներին հետապնդեցին մինչև Դամասկոս[33]: Չնայած այս փոփոխական հաջողություններին Բյուզանդիան, որ նոր էր դուրս եկել Պարսկաստանի հետ մղած երկարատև և հյուծող պատերազմից, օրըստօրե ավելի էր ներքաշվում խալիֆայության հետ մղվող ռազմական գործողու-

թյունների մեջ:

Հերակլը պետք է հաշտվեր Հայաստանում ստեղծված իրավիճակի հետ քանի որ արաբների ճնշումը ուժեղանում էր[34] և նա ստիպված էր այդ պայքարի մեջ ընգրկել նաև հայկական զորական ուժերը: Ըստ Թեոփանեսի, սակելլարիոս Թեոդոսիոսի և Վահանի զորքերը դուրս գալով Եմեսիայից, հանդիպեցին արաբներին: 636 թ. հուլիսի 23-ին տեղի ունեցած ճակատամարտում Թեոդոսի զորքը պարտություն կրեց, իսկ Վահանի զորքը ապստամբեց և նրան կայսր հռչակեց: 636 թ. օգոստոսի 20-ին կայացած Յարմուկի ճակատամարտում բյուզանդացիների կրած պարտությունը պատմիչը բացատրել է հարավային քամու բարձրացրած փոշով, որը խանգարեց դիմադրություն ցույց տալ հակառակորդին: Արաբների ճնշման տակ բյուզանդացիները նետվեցին Յարմուկի կիրճը, որտեղ և գլխովին ջախջախվեցին: Այստեղից արաբները կրկին շարժվեցին դեպի Դամասկոս և գրավեցին այն, այնուհետև շարունակեցին իրենց նվաճումները Փյունիկիայում և Եգիպտոսում[35]:

Ն. Բելյաևը նշել է, որ բյուզանդական զորքերի մարտունակության վրա բացասական անդրադարձավ հունական և հայկական զորամասերի միջև ծագած վեճը[36]: Տարաձայնությունները և բախումները հունական և հայկական զորամասերի միջև անխուսափելի էին, քանի որ նրանց միջև ռազմաքաղաքական դաշնակցություն չկար: Բյուզանդիայի և Հայաստանի ռազմաքաղաքական հարաբերությունները, ինչպես նախորդ, այնպես էլ հետագա ժամանակներում[37] կրում էին կայսրության նվաճողական քաղաքականության կնիքը: Նույնիսկ այն ժամանակ, երբ երկու երկրների կենսական շահերը պահանջում էին ուժերի համախմբում և միասնական դիմակայում ընդհանուր թշնամուն, արտաքին գործոնները բավարար չէին ռազմական դաշնակցության համար: Կայսրության դարավոր նվաճողական քաղաքականությունը կասեցնում էր Բյուզանդիայի և Հայաստանի միջև հավասարազոր դաշնակցային հարաբերությունների համար գաղափարա-քաղաքական նախադրյալների առաջացումը:

Հայրենիքից դուրս հայկական զորքերը խալիֆայության դեմ մղված պայքարին մասնակցել են նաև Սասանյան Պարսկաստանի զորքերի կազմում: Կադիսիայի ճակատամարտում (636 թ. սեպտեմբերի վերջ)[38] Հայոց զորքերը գլխավորում էին Մուշեղ Մամիկոնյանը (Դավիթ Մամիկոնյանի որդին) և Գրիգոր Սյունին: Մուշեղ Մամիկոնյանը որպես զորահրամանատար իր դրոշի տակ ուներ երեք հազար մարդ, իսկ Գրիգոր Սյունին՝ հազար[39]: Սեբեոսը Մուշեղին հիշատակել է որպես «զաւրավարն Հայոց», իսկ այդ նշանակում է, որ Արևելյան Հայաստանում Հայոց զորական ուժը պահպանում էր իր ռազմական հզորությունը: Պատմիչը պարսկական բանակի կազմում Հայոց զորքերի հետ մեկտեղ նշել է նաև ատրպատականյան զորքը Ռոստոմի գլխավորությամբ[40]:

Այսպիսով, Յարմուկի և Կադիսիայի ճակատամարտերում մասնակցել

են նան հայկական զորքերը բյուզանդական և պարսկական բանակների կազմում: Հայաստանի և, ըստ այնմ, Հայոց զորքերի ժամանակի ընթացքում մասնատված լինելը բացասական հետևանքներ ունեցավ նաև միջազգային ասպարեզում տեղի ունեցած քաղաքական կտրուկ փոփոխությունների ժամանակ: Ընդհանուր դիմակայություն կազմակերպելու դեպքում Բյուզանդիան, Պարսկաստանը և Հայաստանը կկարողանային պատշաճ հակահարված տալ խալիֆայությանը, որը նոր էր թափ առնում իր նվաճումներում: Սակայն, Հայաստանի նվաճումով պայմանավորված պարսկա-բյուզանդական հակամարտության ողջ ընթացքը զգալիորեն կանխորոշեց խալիֆայության դեմ մղված պայքարի ելքը: Բյուզանդիան և Պարսկաստանը խոշոր պարտություններ կրեցին հենց առաջին իսկ ճակատամարտերում: Սասանյան Պարսկաստանը մի քանի տարի անց լրիվ ջախջախվեց և կործանվեց: Թե նախորդ՝ պարսկա-բյուզանդական հակամարտության և թե նոր ծավալվող՝ բյուզանդա-արաբական պայքարի ընթացքում Հայաստանի պաշտպանության համար այդքան անհրաժեշտ Հայոց զորքերը մեծ կորուստներ էին կրում հայրենիքից դուրս մղվող մարտերում: Այսպիսի բարդ ժամանակաշրջանում Բյուզանդական կայսրությունը չփոփոխեց իր քաղաքական գիծը Հայաստանի հանդեպ: Խալիֆայության հաջողությունները արդեն իսկ իր նվաճումների առաջին փուլում չսթափեցրին կայսերական քաղաքագետներին՝ Հայաստանը Բյուզանդիային ենթարկելու իրենց անսանձ ձգտման մեջ:

2. Բյուզանդիայի քաղաքականությունը դավանանքային բնագավառում

VI դարի վերջից տեղի է ունենում Բյուզանդիայի եկեղեցական քաղաքականության աշխուժացումը Հայաստանի հանդեպ: Մավրիկիոսը, նվաճելով Հայաստանի մեծ մասը, իր քաղաքականությունը շարունակեց նաև եկեղեցական հարաբերությունների ոլորտում: Հայ միաբնակներին քաղկեդոնական եկեղեցու հովանու տակ ներգրավելու նպատակով Մավրիկիոսը եկեղեցական ժողով հրավիրեց Կոստանդնուպոլսում, իսկ այնուհետև հրամայեց Արևմտյան Հայաստանում հիմնադրել երկրորդ կաթողիկոսական աթոռը:

Մ. Օրմանյանը նշել է, որ Մավրիկիոսի գահակալության ընթացքում եկեղեցական մի քանի ժողովներ են հրավիրվել. մեկը Կոստանդնուպոլսում և երեքը Թեոդոսոպոլսում (Կարինում): Գիտնականը համարում էր, որ դրանցից ամենից նշանակալին՝ Կոստանդնուպոլսինը կայացել էր 589 թ. ոչ ուշ[1]:

Կոստանդնուպոլսի ժողովին նախորդել էին վերոհիշյալ իրադարձությունները՝ կապված զորավար Մուշեղ Մամիկոնյանի[2] հետ, որը Վահրամ Չուբինի 591 թվականին կրած պարտությունից հետո, ժամանելով Կոս-

տանդնուպոլիս, իր զինակիցների հետ միասին հրաժարվեց քաղկեդոնական ծեսով հաղորդվելուց: Մավրիկիոսը հրավիրեց հայ եպիսկոպոսներին Մովսես կաթողիկոսի գլխավորությամբ ներկայանալ ժողովին: Մովսես կաթողիկոսը, ինչպես տեղեկանում ենք մի հայ-քաղկեդոնական սկզբնաղբյուրից, «ուշադրություն չդարձրեց հրամանին ասելով. «Ես չեմ անցնի Ազատ գետը, չեմ ուտի փռան հացը և չեմ խմի ջրախառն տաք գինի»: Այսինքն, Մովսես Եղիվարդեցի կաթողիկոսը հրաժարվեց ընդունել կայսեր հրավերը, կանխազգալով նրա մտադրությունը՝ հայ հոգևորականությանը պարտադրել քաղկեդոնական ծեսով հաղորդվել: Կոստանդնուպոլիս չցանկացան գնալ նաև «Վասպուրական աշխարհի եպիսկոպոսները, և նրանք ովքեր գտնվում էին Պարսից տիրապետության տակ: Իսկ Տարոնի եպիսկոպոսները և ովքեր որ գտնվում էին հռոմեացիների տիրապետության տակ գնացին Կոստանդնուպոլիս: Երկար զննելուց հետո, նրանք հոռոմներից համոզվեցին և ստորագրեցին ու երդմամբ համամիտ դարձան նրանց: Երբ նրանք վերադարձան Հայաստան, Մովսեսը նրանց չընդունեց, նույնպես և Պարսկահայստանի մյուս եպիսկոպոսները: Նրանք իրենց կաթողիկոս ձեռնադրեցին Հովհաննեսին Կոգովիտի Բագարան գյուղից: ԺԴ [14] տարի, մինչև Մավրիկիոս կայսեր վախճանը, նրանց միջև հարաբերությունները սրված էին՝ Քրիստոսի երկու բնությունների և Քաղկեդոնի ժողովի հարցում[3]»:

Նշված իրադարձությունները տեղի ունեցան Վահրամ Չուբինի պարտությունից հետո, ուստի ԺԴ տարիների հիշատակությունը թերի է, քանի որ Մավրիկիոսի կյանքի վերջին տարին 602 թվականն էր: Ուրեմն, Narratio-ում պատմական դեպքերի ժամանակագրական հաջորդականությունը ճիշտ է տրված, սակայն նշված տարիների թիվը պետք է պակաս լիներ: Կոստանդնուպոլսի ժողովը կայացել էր, ոչ թե 589, այլ 591 թ. վերջին կամ 592 թ.: Մասնակիցների թվում էին նաև Վրթանես Քերթողը և Գրիգորը, երկուսն էլ Մովսես կաթողիկոսի ներկայացուցիչներն էին: Նրանք պաշտպանում էին Հայ Առաքելական եկեղեցու դավանանքը, սակայն արդյունքի չհասնելով, վերադարձան հայրենիք[4]:

Արևմտյան Հայաստանում Հովհաննես Բագարանցու ձեռնադրումը տեղի էր ունեցել Կարինի եպիսկոպոս Թեոդորոսի գլխավորած եկեղեցական ժողովում[5]: Հայ եկեղեցուն բաժին հասած այս դժվարին փորձությունների մասին է վկայում Արևմտյան Հայաստանի ստրատելատ և զորավար Սորմենի և Դվինի կաթողիկոսական աթոռի տեղապահ Վրթանես Քերթողի միջև եղած թղթակցությունը[6]: Մ. Օրմանյանի կարծիքով, այդ թղթակցությունում արտահայտվել է Սորմենի մտադրությունը՝ քաղկեդոնական դավանանքի հովանու տակ միավորել երկու կաթողիկոսական աթոռները Հովհաննես Բագարանցու գլխավորությամբ: Այդ պայմաններում Մովսես կաթողիկոսի մահվանից հետո որոշ ժամանակ նոր կաթողիկոս չընտրվեց Դվինում, որի պատճառով երկարաձգվեց Վրթանես Քերթողի տեղապահությունը[7]: Ինչ-

պես հետևում է Սեբեոսի հաղորդումներից, Խոսրով Փարվեզի համաձայնությամբ Սմբատ Բագրատունին ժամանելով Հայաստան բուռն գործունեություն ծավալեց Աբրահամ Աղբաթանեցուն կաթողիկոս ընտրելու գործում: Վերջինս աչքի էր ընկնում խիստ անհանդուրժողականությամբ քաղկեդոնական դավանանքի հանդեպ:

VII դարի առաջին տասնամյակում, Պարսկաստանից Բյուզանդիայի կրած պարտությունների ընթացքում, Կյուրիոն կաթողիկոսի գործողությունները ուղղված Վրաց եկեղեցու անցմանը քաղկեդոնական դավանանքի ոլորտը, պետք է ոգեշնչեր և աշխուժացներ բյուզանդական քաղաքական գործիչներին: Խոսրով Փարվեզը, ընդհակառակը, դա ընկալեց որպես խոշոր վրիպում իր ծրագրերում և, ինչպես վերը նշվեց, անմիջապես ակտիվացրեց իր միջամտությունը նվաճված քրիստոնյա երկրների եկեղեցիների գործերին: Խոսրովը քաղաքական նպատակներով հետապնդեց բյուզանդական պաշտոնական եկեղեցու դավանանքի հետ կապված եկեղեցիների ներկայացուցիչներին: Միևնույն ժամանակ, նա առավելություն տվեց միաբնակների և, մասնավորապես, Հայ եկեղեցու՝ դավանությանը որպես գաղափարական զենք ընդդեմ բյուզանդական պաշտոնական եկեղեցու և նրա հետևորդների:

Հերակլի կողմից մեծ տեղ էր տրվում Պարսկաստանի դեմ «սրբազան պատերազմ» հայտարարելուն, որով նա ցանկացավ Բյուզանդիային ներկայացնել որպես քրիստոնյա աշխարհի փրկարար[8]: Խաչափայտի ազատագրման և վերադարձի վեհաշուքությունը[9] արտահայտելու էր Արևելքի քրիստոնյա եկեղեցիների միասնությունը բյուզանդական եկեղեցու հետ, որով գաղափարապես պետք է «օրինականացվեր» արևելյան քրիստոնյա երկրների նվաճումը կայսրության կողմից: Հերակլը և բյուզանդական եկեղեցական գործիչները ճիգեր էին գործադրում հաշտեցնել հակասությունները երկաբնակ և միաբնակ եկեղեցիների միջև: Այդ ուղղությամբ արվող քայլերից էր *միակամության* հռչակումը՝ դավանանքային փոխզիջումների նկատառումով[10]: Եզր կաթողիկոսի (630-641) հետ կապված իրադարձությունները ծավալվեցին դավանաբանական փոխհարաբերությունների ծավալման այսպիսի նոր իրավիճակում: Մժեժ Գնունին, ժամանելով Հայաստան, Եզրին առաջարկեց գնալ Բյուզանդիա «եւ հաղորդել աւրինաւք ընդ կայսեր ապա թե ոչ՝ արասցուք մեզ այլ կաթուղիկոս. եւ դու կա՛լ զիշխանութիւնդ քոյ ի Պարսից կողմանէ»[11]: Այս տողերից հետևում է, որ Հովհաննես Բագարանցուց հետո Հայ եկեղեցու կաթողիկոսական միակ կենտրոնը մնացել էր Դվինը, որին ենթակա էին երկրի երկու մասերի եկեղեցական թեմերը: Ուստի, Մժեժը սպառնում էր Եզրի իշխանությունը սահմանափակել Արևելյան Հայաստանի սահմաններում: Եզրը, որ էր «այր խոնարհ եւ հեզ, որ ոչ կամէր զոք ցասուցանել, եւ ոչ ելանէր ի բերանոյ նորա բան տգեղ», չցանկանալով ավելի բարդացնել դավանանքային կացությունը Հայաստանում, ինչը հղի էր Հայ

եկեղեցու պառակտման վտանգով, «խնդրեաց ձեռնարկ հաւատոյ ի թագաւորէն: Եւ վաղվաղակի առաքեցաւ նմա տումար գրեալ ձեռամբ թագաւորին, եւ նզովեալ զՆեստոր եւ զամենայն հերձուածողս, բայց ոչ էր նզովեալ զժողովն Քաղկեդոնի»[12]: Մ. Օրմանյանի կարծիքով, քանի որ Հերակլը և նրա աշխարհիկ ու եկեղեցական շրջապատը կատարյալ քաղկեդոնականներ չէին, այլ մի կամքի (*միակամյա*) վարդապետության հետևորդներ ու պաշտպաններ, ուստի Եզրը հունաց հետ հաղորդվելու էր *միակամության* դավանությանը հետևելով[13]: Իսկ Կ. Թումանովը, հաշվի չառնելով Մ. Օրմանյանի դիտարկումը, ուղղակի նշել է, որ Հերակլը 632/3 թ. Հայաստանը բերեց քաղկեդոնական դավանանքի[14]: Նա նկատի ուներ հենց Եզր կաթողիկոսի հետ կապված դեպքերը, սակայն պետք է նշել, որ խոսքը *միակամության* վարդապետության, այլ ոչ թե քաղկեդոնականության մասին էր: Ա. Տեր-Ղևոնդյանը իրավացիորեն կարծում էր, որ Եզրը ստիպված էր *միակամություն* ընդունել[15]:

Հերակլից «ձեռնարկ հաւատոյ» ստանալով, Եզր կաթողիկոսը գնաց «յերկիրն Ասորեստանի, ետես զթագաւորն եւ հաղորդեցաւ ընդ նմա աւրինաւք: Եւ խնդրեալ ի թագաւորէն պարգեւս զաղն Կողբայ, եւ առեալ զպարգեւն՝ դարձաւ մեծաւ շքով ի տուն իւր»[16]:

Հնուց աղի հանքերով հայտնի Կողբ ավանը գտնվում էր Այրարատ նահանգի Ճակատք գավառում, Երասխի (Արաքս) Վարդամարգ և Ագարակ վտակների հովտում[17], այսինքն Արևմտյան Հայաստանում, իսկ դրանցից օգտվելու իրավունք ունենալը նաև նշանակում էր, որ Հայ եկեղեցին և կաթողիկոսական աթոռը պահպանել էին իրենց ամբողջականությունը՝ ընդգրկելով Հայաստանի և արևելյան, և արևմտյան մասերը:

Եզր կաթողիկոսի հանդեպ անհաշտ դիրք բռնեց Հովհան Մայրավանեցին (կամ Մայրագոմեցին)[18], որն արտահայտում էր աշխարհիկ և եկեղեցական որոշ շրջանների տրամադրությունները: «Եթե Հովհան Մայրագոմեցի-տեսաբանը չէր կարող որեւէ զիջում անել, - գրել է Ա. Քենդերյանը, - ապա այդպես վարվելու իրավունք չունեին Հայ եկեղեցու պետերը: Նրանք չպետք է այն աստիճանի սրեին հարաբերությունները Արեւմուտքի եկեղեցիների հետ, որ հաշտության բոլոր ուղիները փակվեին, եւ հայերը մնային բոլորովին մեկուսացված վիճակում: Եզրը, որը պարտավոր էր որպես կաթողիկոս չարհամարհել դիվանագիտությունը, ստիպված եղավ մեկուսացնելու ըմբոստ վարդապետին»[19]:

Հայ պետական գործիչները և եկեղեցու հայրերը բոլոր հիմքերը ունեին զգուշանալու կայսրության ներկայացուցիչների կողմից եկող սպառնալիքներից և բռնություններից, որոնք, ինչպես կարելի էր տեսնել Մժեժ Գնունու վերաբերմունքից Վարազտիրոցի և Եզրի հանդեպ, էապես ազդում էին նաև Արևելյան Հայաստանի գործերի ընթացքի վրա: Եզրի հաղորդվելուց[20] հետո Մժեժ Գնունու վերաբերմունքը նրա հանդեպ փոխվեց, ինչպես երևում է Սե-

բեռսի հետևյալ հաղորդումից. «Եւ ապա յայնմհետէ նստէր ի մէջ բանակին Յունաց, մինչեւ զաւրավարին հաճոյանալ ըստ կամաց նորա կարգէր զկարգըս զինուորացն եւ բաշխումն շտեմարանաց ի վերայ ամենայն երկրին»[21]: Գ. Աբգարյանը ճիշտ կերպով բացատրել է այս հատվածի բովանդակությունը. «Եզրը գտնվում էր հունական բանակում մինչև որ հաջողացնում է զորավարին (Մժեժին - Է. Դ.) համաձայնեցնել ըստ իր՝ կաթողիկոսի կամքով տեղաբաշխելու շտեմարանները Հայաստանում»[22]: Եզր կաթողիկոսին այդ դժվարին պայմաններում հաջողվեց պահպանել հայ եկեղեցու նվիրապետության ամբողջականությունը, ինչը զգալիորեն նպաստեց հայ պետական գործիչների միավորիչ ջանքերին՝ ուղղված Հայաստանի տարածքային և քաղաքական միասնականության վերականգմանը:

Այսպիսով, Սասանյանների պետության մայրամուտին և Արաբական խալիֆայության նվաճումների նախօրեին Բյուզանդական կայսրության եկեղեցական քաղաքականությունը ավելի ճկուն բնույթ ստացավ՝ *միակամության* հռչակմամբ, որպես քրիստոնյա ընդհանրական եկեղեցու մեջ դավանության նոր փոխզիջողական ուղղության: Կարելի է ասել, որ *միակամությունը* Հայ և Բյուզանդական եկեղեցիների միջև դավանանքային հաշտության հնարավորություններ էր ընձեռում, ինչը կարող էր բարելավել հայ-բյուզանդական քաղաքական հարաբերությունների մթնոլորտը: Չնայած կայսրության քաղաքական և եկեղեցական գործիչների ճիգերի, Հայաստանի և Բյուզանդիայի եկեղեցիների միության փորձը *միակամության* ասպարեզում լուրջ հաջողություն չունեցավ և այն կորցրեց իր քաղաքական նշանակությունը թե խալիֆայության առաջխաղացման[23] և թե, առավել ևս, Հայաստանի հանդեպ, նույնիսկ միջազգային ամենից բարդ ժամանակներում, Բյուզանդիայի վարած նվաճողական քաղաքականության հետևանքով: Այնպես որ, դավանանքային ժամանակավոր զիջողական քայլերը չկարողացան վերաճել ամուր ռազմական դաշնակցության, որը ուղղված կլիներ նոր նվաճողին՝ Արաբական խալիֆայությանը, դիմակայելուն:

3. Հայաստանը Արաբական խալիֆայության նվաճումների սկզբնական ժամանակաշրջանում

Կադիսիայի ճակատամարտից հետո Սասանյան Պարսկաստանը իսպառ կորցրեց քաղաքական կշիռը և ազդեցությունը Հայաստանի արևելյան մասում: Բյուզանդիան նույնպես չկարողացավ ուշքի գալ Մերձավոր Արևելքում VII դարի 30-ական թթ. երկրորդ կեսին Արաբական խալիֆայության հասցրած հարվածներից: Միակամության հռչակումը, Դավիթ Սահառունու իշխանության ճանաչումը, նրանից հետո Թեոդորոս Ռշտունու իշխանության գլուխ անցնելը վկայություններ էին կայսրության ազդեցության թու-

լացման Հայաստանի արևմտյան մասում:

Սեբեոսը հաղորդել է, որ Դավիթ Սահառունին երեք տարվա ընթացքում իշխանությունը ամենայն ճոխությամբ վարելուց հետո «անարգեալ ի զաւրացն՝ հալածեցաւ»: Դրա պատճառը ավատական երկպառակումն էր, քանի որ «անմիաբան լեալ ամենայն ազատացն՝ կորուսին զերկիրս Հայոց»: Այսպիսի իրավիճակը խալիֆայության զորքերի ներխուժումների նախօրեին լի էր խիստ բացասական հետևանքներով: Միջնադարյան երկրներին բնորոշ այնպիսի տարածված երևույթը, ինչպիսին ավատական երկպառակումն էր, խոշոր տերությունների քաղաքական շահերի բախման տարածաշրջանում գտնվող Հայաստանի համար առավել վտանգավոր էր:

Թեոդորոս Ռշտունին Հայաստանի քաղաքական ասպարեզ իջավ ներքին և արտաքին բարդ իրավիճակում: Այդ իրողությունը դիպուկ բնութագրել է Սեբեոսը. «Բայց միայն աստուածասէր եւ քաջ իշխանն Ռշտունեաց գաւառին Թէոդորոս կազմէր զզաւրս իւրոյ կողմանն հանապազ եւ զգուշանայր զտիւ եւ զգիշեր ըստ իւրոյ քաջ իմաստութեանն, ոչ սակաւ աւճիրս գործէր ի թշնամեացն: Եւ շինեալ զԱղթամար կղզի՝ անդ ապրեցուցանէր զբազում գաւառս»[1]:

Հայաստանի երկու մասերի վերամիավորումը պայմանավորած գործընթացները բարդանում էին իրենց վրա նախորդ՝ պարսկական և բյուզանդական հակամարտության հետքերը կրող ավատական երկպառակություններով: Միևնույն ժամանակ, Հայաստանը, գտնվելով Արաբական խալիֆայության զավթողական նկրտումների ուղու վրա, շուտով ենթարկվեց ավերիչ արշավանքների: Խալիֆայության նվաճումների ընդարձակմամբ, պարսկա-բյուզանդական հակամարտության՝ արաբա-բյուզանդականի վերափոխումով, Հայաստանը կրկին իր վրա կրեց օտար զորքերի ներխուժումների և ռազմական գործողությունների ծանրությունը:

Հայաստան կատարած արաբների առաջին արշավանքի և Դվինի առմանը վերաբերող հայ և օտար աղբյուրների տեղեկությունների շուրջ հայտնվել են տարբեր կարծիքներ: Այդ կապակցությամբ Հ. Մանանդյանը գրել է. «Արաբներն առաջին անգամ մտել են Հայաստան Հյուսիսային Միջագետքի կողմից ոչ թե 636 (Մ. Չամչյան, Կ. Բասմաջյան և որիշներ), 637 (կամ 638, ըստ Հ. Համբարյանի) կամ 639 (է. Դյուլորիե և ուրիշներ) թվականներին, ինչպես այդ մատնացույց է արվում հայ և օտար ուսումնասիրություններում, այլ 640 (Մ. Ղազարյան) թվին[2]»: Հ. Մանանդյանի պաշտպանած տեսակետի համաձայն, Դվինի առումը տեղի էր ունեցել 640 թ. հոկտեմբերի 6-ին: Նա նշել է, որ Մ. Ղազարյանի[3] կարծիքով՝ Բալազուրիի, Տաբարիի և Իբն ալ-Ասիրի վկայությունները վերաբերում են 640 թ. արաբական արշավանքին:

Բալագուրի. «Իյադ նվաճեց Ամիդ առանց ճակատամարտի՝ Ուռհայի խաղաղության հիման վրա, նույն օրինակ և Մայաֆարեկին, իսկ Կաֆար-

տութ ամրոցը և Մծբինը՝ կռվով»: Այնուհետև Տուր Աբդինի, Մարդինի, Դարայի, Քարդայի, Բազաբդայի նվաճման և Ջավազանի իշխանի հետ պայմանագիր կնքելու մասին գրելուց հետո նա հաղորդել է. «Այս բոլոր կատարեցավ 19 թ. և Մուհառռամի օրերից (հաշված)՝ 20 թ.: Իյադ նվաճեց Արզն Մծբինի խաղաղության հիման վրա և՝ անցնելով կիրճից՝ հասավ Բիթլիս (Բաղեշ), եկավ Խլաթ և հաշտություն կապեց քաղաքի իշխանի հետ: Գալով Աղի ջուրը (Թթու ջուրը), որ Հայաստանում է, նա չանցավ այն, այլ վերադարձավ և դրեց Բիթլիսի տիրոջ վրա նույն հարկը, որ նա Խլաթի (բնակչաց), մեծամեծաց և իշխանի վրա էր դրած: Այստեղից Իյադ անցավ Ռաքքա, ապա Հիմս, ուր նրան Օմար կառավարիչ նշանակեց. վախճանեցավ 20 թ.»:

Տաբարի. «Իյադ ուղարկեց Օսման ի. Աբու-լ-Ասին[4] Չորրորդ Հայք, այստեղ Սաֆֆան ի. Մուաթթալ Սուլամին նահատակեցավ տեղի ունեցած մի ճակատամարտի մեջ: Բնակիչք խաղաղություն հաստատեցին Օսման ի. Աբու-լ-Ասի հետ»:

Իբն ալ-Ասիր. «Նա (Իյադ) ուղարկեց Օսման ի. Աբու-լ-Ասին Չորրորդ Հայք, որի ժողովուրդը պատերազմեցավ նրա հետ (Սաֆֆան ի. Մուաթթալ նահատակեցավ կռվի մեջ), բայց հետո խաղաղություն հաստատեց նրա հետ»[5]:

Բալազուրիի վերոհիշյալ հաղորդմանը համապատասխանում է Իբն ալ-Ասիրի մեկ այլ տեղեկությունը, որից երևում է, որ Հ. Մանանդյանի մեջբերած հատվածներում խոսքը տարբեր արշավանքների մասին է: Իբն ալ-Ասիրը գրել է. «(Իյադը) գնաց Արզն և գրավեց այն, մտավ լեռնանցքը և անցավ Բաղլիս (Բաղեշ), հասավ Խլաթ, որի պատրիկը հաշտություն կնքեց նրա հետ, և վերջապես հասավ ալ-Այն ալ-Համիդա (Թթու ջուր) Հայաստանում: Ապա վերադարձավ Ռակկա, գնաց Եմեսա (Հիմս) և մեռավ քսան թվականին[6]»:

Այսպիսով, արաբական աղբյուրներից բերված տեղեկությունները վերաբերում են տարբեր արշավանքների. 1. ըստ Տաբարիի և Իբն ալ-Ասիրի վերոհիշյալ առաջին հաղորդման, Իյադը Չորրորդ Հայք ուղարկեց Օսման Իբն Աբու-լ-Ասին (հիջ.19 թ.), 2. ըստ Բալազուրիի և Իբն ալ-Ասիրի վերջին հաղորդման, Իյադը անձամբ գլխավորեց արշավանքը՝ Արզն-Բաղեշ-Խլաթ-Թթու ջուր երթուղով, այնուհետև, վերադառնալով Հիմս, հիջ. 20 թ. մահացավ[7]:

Բալազուրին այլ տեղում ևս հիշատակել է Չորրորդ Հայքը. «Երբ Օսման ի. Օֆֆան խալիֆ եղավ» (644-656), նա հրամայեց Մուավիային հարձակվել «Աշմուշատի վրա, որ Չորրորդ Հայքում է, և կամ հանձնարարել մեկին այդ գործը: Մուավիան ուղարկեց Հաբիբ ի. Մասլամա Ֆահրիին և Սաֆվան ի. Մուաթթալ Սուլամիին, որոնք մի քանի օրվա ընթացքում նվաճեցին քաղաքը... Մուավիան դրեց Սաֆվանին այնտեղ կառավարիչ, ուր նա վախճանվեց Մուավիայի խալիֆայության ժամանակ (661-680): Այլք կը պնդեն,

սակայն թե ինքը Մուավիան արշավեց Աշմուշատի վրա երկու զորապետների հետ միասին և դրեց Սաֆվանին այնտեղ կառավարիչ, ուր նա մնաց մինչև իր մահը... Հաբիբ իբն Մասլաման Աշմուշատը առնելուց հետո հարձակվեց Կամախ ամրոցի վրա... Իյադ իբն Ղամն ուղարկեց Շաբիբ իբն Մասլամա Ֆահրիին Աշմուշատից Մալաթիա, որը նա գրավեց. ապա բնակիչները փակեցին (նրա առջև) քաղաքի դռները: Երբ Մուավիան կառավարիչ եղավ Ասորիքի և Միջագետքի վրա, նա ուղարկեց Հաբիբ ի. Մասլամային, որը նվաճեց Մալաթիան բռնությամբ[8]»:

Եթե չասենք, թե այստեղ ժամանակագրական կարգի շփոթ է (Հաբիբը Աշմուշատից Կամախ արշավեց Օսմանի օրոք, իսկ Իյադը մահացել էր հիջ.20 թ.), ապա կարելի է ենթադրել, որ Մալաթիան և Աշմուշատը արաբները գրավել էին երկու անգամ՝ 640 թ. և հետագայում՝ Օսմանի խալիֆ եղած ժամանակ: Ըստ երևույթին, Հաբիբը Իյադի հանձնարարությամբ (հիջ.19 թ.), Աշմուշատից հետո հարձակվեց Մալաթիայի վրա, իսկ Օսմանի խալիֆայության օրոք Հաբիբը և Սաֆվանը նվաճեցին Աշմուշատը, ինչպես նաև Մալաթիան՝ կրկին Հաբիբը: Այս ենթադրության համար կարևոր փաստարկ է այն, որ Բալազուրին նախ գրել է Իյադի հանձնարարությամբ Հաբիբի՝ Աշմուշատից Մալաթիա, իսկ այնուհետև, Մուավիայի հրամանով Հաբիբի՝ դեպի Մալաթիա արշավելու մասին: Այս վերջին հաղորդումը կապվում է այն հատվածի հետ, ուր խոսվում է Մուավիայի հանձնարարությամբ Հաբիբի և Սաֆվանի կողմից Աշմուշատի գրավման մասին: Բալազուրին, չնայած հիջ.19 թ. արշավանքի կապակցությամբ Չորրորդ Հայքը չի հիշատակել (նա այն հիշատակել էր Օսման խալիֆի օրոք տեղի ունեցած արշավանքի առթիվ), սակայն հայտնի է, որ Մավրիկիոսի վարչատարածքային վերափոխություններից հետո Աշմուշատը «այլ Չորրորդ Հայքի» կազմում էր, իսկ «Վերին Միջագետք կամ Չորրորդ Հայք» նահանգի քաղաքներն էին Բալազուրիի հիշատակած Ամիդը (Մարտիրուպոլիս) Մայաֆարկինը[9]: Աշմուշատի երկրորդ գրավումը կատարվել էր Մուավիայի կողմից: Ուշագրավ է, որ Աշմուշատում կառավարիչ էր հաստատվել Սաֆվանը: Այս ապացույց է Աշմուշատի՝ երկու անգամ գրավվելու մասին:

640 թ.արշավանքը դեպի Չորրորդ Հայք և Մալաթիա Հաբիբը և Օսման իբն Աբու-լ-Ասը որոշ ժամանակ միասին են գլխավորել, այնպես, ինչպես Հաբիբը մի քանի արշավանքներ՝ Սաֆվանի հետ: Տաբարին և Իբն ալ-Ասիրը հիջ.19 թ. դեպքերի նկարագրությանը միահյուսել են Սաֆվանի սպանվելու մասին տեղեկությունը, որը վերաբերում է, ըստ Բալազուրիի, Մուավիայի խալիֆայության ժամանակաշրջանին: Այսպիսով՝ Բալազուրիի, Տաբարիի և Իբն ալ-Ասիրի հաղորդումները Միջագետքի կողմից արաբների՝ Հայաստան կատարած ներխուժումների մասին (հիջ.19 թ.) հետևյալ պատկերն են ուրվագծում. 640 թ.՝ առաջին արշավանքը ընթացել էր Իյադի գլխավորությամբ Ամիդից Մայաֆարկին (Մարտիրուպոլիս՝ Նփրկերտ «Վերին Միջա-

գետք կամ Չորրորդ Հայք» նահանգում) իսկ երկրորդը՝ Իյադի հանձնարարությամբ՝ կրկին Չորրորդ Հայքում («այլ Չորրորդ Հայքում») Օսման իբն Աբու-լ-Ասի գլխավորությամբ և Աշմուշատից դեպի Մալաթիա՝ Հաբիբի հրամանատարությամբ[10]:

Ա. Տեր-Ղևոնդյանի կարծիքով Իյադը, 640 թ. անցնելով Ձորա պահակը, ներխուժեց Տարոն, ապա եկավ Խլաթ և գնալով հյուսիս՝ «Թթու ջրից» այն կողմ չանցավ և վերադարձավ (Բաղեշ), իսկ նրա զորքը շարունակեց ճանապարհը դեպի Բզնունիք, Աղիովիտ, Բերկրի, Կոգովիտ, Դվին[11]: Այստեղ շաղկապվել են տարբեր ժամանակներում տեղի ունեցած իրադարձություններ, քանզի Իյադի գլխավորած արշավանքի մասին արաբական աղբյուրների հաղորդումները դիտվել են վերոհիշյալ այն կարծիքի առումով, ըստ որի Սեբեոսի հաղորդումը արաբների դվինյան արշավանքի կապակցությամբ վերաբերում էր Հայաստան կատարած արաբական առաջին արշավանքին:

20թ. Մուհառռամ ամիսը համապատասխանում էր 21 դեկտեմբերի (640 թ.) - 19 հունվարի (641 թ.)[12]: Արաբական երրորդ արշավանքը, որը աղբյուրում նկարագրվում է Մուհառռամ ամսվա մասին եղած հաղորդումից հետո, չպետք է կապել Սեբեոսի հիշատակած դվինյան արշավանքի հետ, քանի որ, ինչպես հետևում է Բալազուրիի և Իբն ալ-Ասիրի հաղորդումներից, արաբական զորախումբը «Թթու ջրից» վերադարձավ Միջագետք: Ամենայն հավանականությամբ «Թթու ջուրը» տվյալ դեպքում համապատասխանում է Ծաղկոտն գավառի Վարշակի կոչված Ջերմուկին[13]: Ուրեմն, Իյադը Խլաթից հետո ներխուժել էր Խորխոռունիք, Աղիովիտ և Ծաղկոտն գավառները և այնուհետև վերադարձել Հիմս: Այսպիսով, Հայաստանում կատարած առաջին, երկրորդ և երրորդ արշավանքների ժամանակ արաբները Դվին չէին հասել:

Հ. Մանանդյանը, Դվինի առումը կապելով արաբական առաջին արշավանքի հետ, աղբյուրների հաղորդումները բաժանել է երեք խմբի. 1) Սեբեոս, «Անանուն ժամանակագրություն», Դիոնիսիոս Տելմահրացի, Կիրակոս Գանձակեցի, Սամվել Անեցի, 2) Բալազուրի, Յաքուբի, Իբն ալ-Ասիր, 3) Ղևոնդ, Ասողիկ, Մովսես Կաղանկատվացի: Գիտնականը եզրակացրել է, որ Դվինի առումը այդ վկայությունների համաձայն դրվում է 640, 640/1, 642/3, 644/5, 646/7 թթ.: Այնուհետև Հ. Մանանդյանը անդրադարձել է այդ հարցի շուրջ հայտնված կարծիքներին. 640 թ. հունվարի 6[14], 640 թ. հոկտեմբերի 6[15], 642 թ. հունվարի 6[16], 642 թ. հոկտեմբերի 6[17], 646 թ.[18], 647 թ. հոկտեմբերի 6[19]: Հ. Մանանդյանը, հետևելով Մ. Ղազարյանին, գտնում էր, որ երկրորդ խմբի աղբյուրների հաղորդումները վերաբերում են VI դ. 50-ական թվականներին: Հենվելով առաջին խմբի աղբյուրների վկայությունների վրա և միանալով Ղ. Ալիշանի և Հ. Համբարյանի տեսակետին, Հ. Մանանդյանը եզրակացրել է. «Դվինի առումը տեղի է ունեցել ոչ թե 641, 642 կամ 643 թթ., այլ 640 թ. հոկտեմբերի 6-ին, ուրբաթ[20]»: Հետազոտողները ուշա-

դրություն չեն դարձրել Ի. Օրբելու կարծիքի վրա, ըստ որի Դվինի առումը տեղի էր ունեցել 641 թ.[21]:

Դվինի գրավման ժամանակը որոշելիս Սեբեոսի տեղեկությունը Եզրի կաթողիկոսության վերջին տարվա մասին Հ. Մանանդյանը կարևոր է համարել: Սակայն անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև այդ տեղեկությանը նախորդող հատվածի վրա. «Մեռաւ Երակլոս, եւ թագաւորեաց որդի նորա Կոստանդին: Եւ ոչ ոք ընտրեցաւ զաւրավար յաշխարհին Հայոց. քանզի անմիաբան լեալ իշխանացն՝ մեկնեցան ի միմեանց: Եւ ել զաւր ապականիչ յԱսորեստան կողմանէ[22] ընդ ճանապարհս Ձորոյ յաշխարհն Տարաւնոյ. առին զնա եւ զԲզնունիս եւ զԱղիովիտ: Եւ ճանապարհ կալեալ ի Բերկրոյ ձորն ընդ Որդսպոյ եւ ընդ Գոգովիտ (Կոգովիտ-Է.Դ.)՝ թափեցան յԱյրարատ: Եւ ոչ ոք կարաց ի զաւրացն Հայոց արկանել գոյժ ի Դուին աւան. բայց արք երեք յիշխանացն, որք երթային ժողովել զզաւրն ճապաղական, Թէոդորոս Վահեւունի, եւ Խաչեան Առաւեղեան, եւ Ծապուհ Ամատունի: Որք գնացեալ փախստական ի Դուին, եւ հասեալ ի կամուրջն Մեծամաւրի՝ ի բաց աւերեցին, եւ ինքեանք անցեալք գոյժ արկանել ի յաւանին: Եւ ի բերդն ժողովեցին զամենայն մարդիկ աշխարհին, որ եկեալ էին ի կութ այգեստանին: Բայց Թէոդորոսն գնացեալ ի Նախճաւան քաղաք: Եւ հասեալ թշնամին (Բուշայն) ի կամուրջն Մեծամաւրի ոչ կարաց անցանել... Ապա անցեալ ընդ կամուրջն Մեծամաւրի՝ հարին ասպատակաւ զամենայն երկիրն, եւ ժողովեալ զաւար եւ զգերութիւն բազում յոյժ, եւ եկեալ բանակեցան ի յեզր մայրւոյն Խոսրովակերտի: Եւ եղեւ յաւուրն հինգերորդի դիմեցին ի վերայ քաղաքին. մատնեցաւ քաղաքն ի ձեռն նոցա... Եւ դիմեալ ի ներքս զաւրք թշնամեացն՝ սատակեցին սրով զբազմութիւն քաղաքին, եւ առեալ զաւար եւ զկապուտ քաղաքին՝ ելին եւ բանակեցան ի նմին բանակատեղն, որ աւր Ի էր տրէ ամսոյն, յաւուր ուրբաթի: Եւ դադարեալ աւուրս ինչ՝ ելին եւ գնացին ընդ նոյն ճանապարհ, ընդ որ եկեալն էին: Եւ խաղացուցին զբազմութիւն գերւոյն ԼԵ հազար ոգի: Իսկ իշխանն Հայոց Ռշտունեաց տէրն դարանակալ եղեալ ի Գոգովիտ գաւառի՝ դիմէ ի վերայ նոցա սակաւուք: Եւ ոչ կարաց զդէմ ունել նոցա. փախստական լինի առաջի նոցա. եւ նոքա զհետ մտեալ նոցա՝ սատակէին զբազումս ի նոցանէն. եւ ինքեանք չոգան անցին յԱսորեստան: Եւ եղեւ այս յամս Եզրի կաթուղիկոսի: Իսկ ի ձեռն այնր պատերազմի ի կայսերէ հրաման հասեալ զաւրավարութեանն Թէոդորոսի Ռշտունեաց տեառն՝ հանդերձ պատրկութեան պատուով: Այս ամենայն լինի ի ձեռն կաթուղիկոսին Ներսիսի, որ յաջորդեցաւ ի նմին ամի յաթոռ կաթուղիկոսութեան փոխանակ Եզրի կաթուղիկոսի»[23]:

Ըստ Սամվել Անեցու, Դվինի առումը նույնպես տեղի էր ունեցել Հերակլի որդու՝ Կոստանդնի օրոք, որը, ըստ պատմիչի, գահակալել էր երեք տարի[24]: Ասողիկը արաբական այդ ներխուժումը մի դեպքում նշել էր Հայոց ՂԵ (ավելի ճիշտ է Ղ ընթերցվածը) թվականին, մյուս դեպքում՝ Հերակլի թո-

ռան՝ Կոստանդին-Կոստաս Բ-ի (641-668), երկրորդ տարում[25]: Վերջին նշումը, առկա է նաև «Անանուն ժամանակագրությունում» և Ղևոնդի երկում[26]: Ղ թվականի (641 թ. հունիսի 19-642 թ. հունիսի 18) տրե ամիսը Կոստանդնի-Կոստաս Բ-ի գահակալության[27] առաջին տարվան էր վերաբերում:

Դվինի առաջին առումը արաբների կողմից[28] վերոհիշյալ աղբյուրներում նշված է Հերակլի մահվանից հետո, նրա որդու՝ Կոստանդին Գ-ի կամ թոռան՝ Կոստաս Բ-ի օրոք: Հ. Մանանդյանը ընդունել է, որ Հերակլի գահակալության տարիներն էին 610-641 թթ., սակայն 641 թ. մերժել է որպես Դվինի առման տարի, քանի որ այդ թվականի տրե ամսվա 20-ը եղել է ոչ թե ուրբաթ, այլ շաբաթ: Սեբեոսի շարադրանքին հարազատ մնալու համար նրա երկի ներկայիս խմբագրությամբ մեզ հասած տեքստում Դվինի առման կապակցությամբ նշված ամսաթիվը («աւր Ի էր տրէ ամսոյն, յաւուր ուրբաթի») կարելի է վերականգնել «աւուր ԻՋ էր տրէ ամսոյն, յաւուր ուրբաթի»: Եթե ճիշտ է այսպիսի վերականգնումը, ուրեմն Դվինի առաջին առումը արաբների կողմից տեղի էր ունեցել Հայոց Ղ թվականի տրե ամսվա 26-ին (641 թ. հոկտեմբերի 12-ին), ուրբաթ[29]:

Դվինի առաջին գրավման նման կարգով թվագրմանը, բացի Հերակլի մահվան մասին եղած հաղորդումից, նպաստում է նաև Ներսեսի կաթողիկոս դառնալուն վերաբերող տեղեկությունը: Ի տարբերություն այլ հետազոտողների, որոնք Եզրի կաթողիկոսության վերջին տարին և Ներսեսի կաթողիկոսության առաջին տարին համարել են 640 թ., Հ. Օրբելին և Կ. Մելիք-Օհանջանյանը իրավացիորեն նշել են 641 թ.[30]: Հ. Օրբելին գրել է, որ 641 թ. Եզրին փոխարինեց Ներսեսը: Գիտնականը մասնավորապես նշել է. «Եզրը մահացավ արաբների կողմից Դվինի գրավման տարին, համարյա թե նույն օրը: Պետք է նույն ուղղությամբ վերանայել Դվինի գրավման ժամանակի հարցը, որը անհամոզիչ, և ինչպես տեսնում ենք սխալ կերպով լուծել է է. Դյուլորիեն»[31]:

Առաջին հայացքից թվում է, թե Սեբեոսի շարադրանքում հակասություն կա դվինյան արշավանքի և Հերակլի որդու՝ Կոստանդնի գահակալության կապակցությամբ: Սակայն, եթե հիշենք, որ արաբական սկզբնաղբյուրներում նկարագրված Իյադի գլխավորած արշավանքի երթուղին (մինչև Թթու ջուր) համապատասխանում էր մի քանի ամիս անց դեպի Դվին տեղի ունեցած արաբական արշավանքի երթուղու մի հատվածին, ապա թերևս, հնարավոր է ենթադրել, որ Սեբեոսի մոտ միահյուսվել են այդ երկու արշավանքներին վերաբերող տեղեկությունները: Հիջ. 19 թ. և Մուհառռամի օրերից հաշված 20 թ., այսինքն՝ 640 թ. ընթացքում և մինչև 641 թ. սկզբները Իյադը ներխուժեց վերոհիշյալ քաղաքները: Այնուհետև Արզանից անցավ Թթու ջուր և, վերադառնալով հիմս, նույն հիջ. 20 թ. մահացավ[32]: Իյադը իր արշավանքի այս վերջին հատվածը պետք է անցած լիներ 641 թ. գարնանը, այսինքն՝ այն ժամանակ, երբ Բյուզանդիայում կայսր էր Հերակլի որդին՝

Կոստանդին Գ-ն: Սեբեոսի մոտ այդ երկու արշավանքների մասին տեղեկությունների շաղկապման հանգամանքը նկատի ունենալու դեպքում միայն հնարավոր կլինի բացատրել Հերակլի որդու՝ Կոստանդնի ժամանակաշրջանի միահյուսումը տրե ամսում տեղի ունեցած դվինյան արշավանքի հետ: Ըստ երևույթին, Սեբեոսի երկում տեղեկությունների այսպիսի շաղկապումը հետևանք էր, ինչպես այդ երկու արշավանքների երթուղիների, թեկուզ և մասնակի, համընկման, այնպես էլ Հերակլի որդու և թոռան անունների նույնացման: Այնպես որ, Սեբեոսի երկում չի խոսվում 641 թ. գարնանային արշավանքի մասին, իսկ դվինյան արշավանքը ներկայացված է տեղի ունեցած Հերակլի որդու՝ Կոստանդնի օրոք, նրա թոռան՝ Կոստանդնի (Կոստաս Բ) փոխարեն:

Ըստ Սեբեոսի, արաբական զորքը հասել էր Այրարատ, իսկ Թեոդորոս Ռշտունին գտնվում էր Նախճավանում: Թեոդորոսը, գալով Կոգովիտ, հարձակվեց Դվինից ավարով և գերիներով վերադարձող ոսոխի վրա, սակայն անհաջողության մատնվեց, քանի որ իր կողմից գլխավորած հայոց ուժերը սակավաթիվ էին[33]: Ըստ Ղևոնդի, երբ թշնամին ներխուժեց Հայաստան, Թեոդորոս Ռշտունին շտապեց փակել նրա ճանապարհը Ձորա կիրճում (Ձորապահակում), սակայն ուշացավ: Թշնամին առաջ էր անցել և գնացել Դվինի ուղղությամբ[34]: Ա. Տեր-Ղևոնդյանի կարծիքով, Թեոդորոս Ռշտունին շտապեց հարավ, որ փակի ճանապարհը Ձորապահակ լեռնանցքի կողմից, իսկ երբ թշնամին հասավ Դվին, Թեոդորոսը սպասում էր Նախճավանում, որից հետո Կոգովիտում դարանակալեց[35]:

Այնինչ, հավանաբար Թեոդորոսը Նախճավան էր գնացել թշնամու հարձակումը սպասելով Ատրպատականի կողմից:

Կադիսիայի ճակատամարտից մի քանի տարի անց արաբները ասպատակել էին Ատրպատականը և ընդհուպ մոտեցել Հայաստանին՝ հարավարևելքից[36]: Թեոդորոս Ռշտունին, ըստ երևույթին, տեղյակ լինելով արաբների վերահաս ներխուժմանը, սակայն հաստատապես չիմանալով դրա ուղղությունը, եկել էր Նախճավան (Նախիջևան): Երբ լուրը հասավ, որ թշնամին կրկին հարձակվել էր Միջագետքի կողմից, Թեոդորոս Ռշտունին շտապեց արևմուտք, փորձելով փակել արաբների ճանապարհը Ձորապահակում: Սակայն նա ուշացել էր, արաբական զորքը արդեն այնտեղ չէր: Եթե այն հասած լիներ Այրարատ, ապա Թեոդորոսը այդ մասին կիմանար, քանի որ ճանապարհը Նախճավանից Ձորապահակ անցնում էր այն գավառներով, որոնք Վանա լճից հյուսիս էին գտնվում: Ուրեմն, երբ Թեոդորոսը հասավ Ձորապահակ, արաբները այնտեղ արդեն եղել էին, սակայն դեռևս չէին շարունակել ճանապարհը Բզնունիքով և Աղիովիտով դեպի Այրարատ, ինչպես հետևում է Սեբեոսի հաղորդման շարունակությունից Թեոդորոսի Ձորապահակ հասնելու պահին արաբները ներխուժել էին «ընդ ճանապարհս Ձորոյ յաշխարհն Տարաւնոյ. առին զնա... »[37]: Սեբեոսի այս հաղորդմանը

ինչ-որ չափով համահունչ է Հովհան Մամիկոնյանի[38] և «Պատմութիւն սբ. Ներսիսի»[39] երկերում պահպանված տեղեկություններին՝ Տարոնում արաբների կատարած ներխուժման վերաբերյալ:

Հովհան Մամիկոնյանի երկում «Աբդռահիմի» (Աբդ առ-Ռահման)[40] մասին տեղեկությունները կարող են վերաբերել տարբեր արաբական արշավանքներին: 641 թվականի արշավանքին է, ըստ երևույթին, վերաբերում Տարոն ներխուժման փաստը: Հովհան Մամիկոնյանի հաջորդ հաղորդումը վերաբերում է 647թ, արաբական արշավանքին:

Երբ Թեոդորոս Ռշտունին Նախճավանից եկավ Զորապահակ, արաբները ներխուժել էին Տարոն, իսկ այնուհետև սրընթաց գնացել Դվինի ուղղությամբ՝ վերոհիշյալ երթուղով. « ...զԲզնունիս եւ զԱղիովիտ: Եւ ճանապարհ կալեալ ի Բերկրոյ ձորն ընդ Որդսպոյ եւ ընդ Կոգովիտ՝ թափեցան յԱյրարատ»: Թեոդորոսը ուշացումով հետապնդեց թշնամուն, սակայն իր զորքի փոքրաթիվ լինելու պատճառով ստիպված էր դարանակալել Կոգովիտում, որտեղ և տեղի ունեցավ ճակատամարտը Դվինից ավարով վերադարձող արաբների հետ:

Պետք է ենթադրել, որ խալիֆայության առաջխաղացման հետևանքով Բյուզանդիան, փաստորեն, հաշտվեց Հայաստանում ստեղծված իրավիճակի հետ և ստիպված ճանաչեց Թեոդորոս Ռշտունու իշխանությունը: Չէ որ նույնիսկ այնպիսի ժամանակ, երբ արաբների հարվածների տակ թուլանում էին կայսրության դիրքերը Արևելքում, այն «հավատարիմ» էր մնացել իր նվաճողական քաղաքականությանը Հայաստանի հանդեպ:

Թեոդորոս Ռշտունին, փաստորեն, երկրում արդեն հայոց իշխան էր հռչակվել, երբ կայսրությունը ճանաչեց նրան այդ պաշտոնում[41]: Անհրաժեշտ է նշել, որ Հայաստանի վերամիավորման գործընթացը, անկախ արաբական ներխուժումների վտանգից, արդեն սկսվել էր Սասանյանների իշխանության մայրամուտի և Արևելքում Բյուզանդիայի դիրքերի թուլացման պայմաններում: Եվ կարևոր է նշել այն հանգամանքը, որ ոչ թե Թեոդորոս Ռշտունին էր մերձեցման ուղիներ փնտրում կայսրության հետ, այլ վերջինս՝ բյուզանդամետ տրամադրություն ունեցող աշխարհիկ և հոգևոր անձանց խմբավորման օգնությամբ ձգտում էր այդ ժամանակ թեկուզ և անվանականորեն Հայաստանը պահել էր իր ազդեցության ոլորտում: Այդ խմբավորումը սկզբնական շրջանում հակադրվում էր Թեոդորոս Ռշտունուն, սակայն արաբական ներխուժումների հետևանքով այն ստիպված էր վերանայել (թեպետ և ժամանակավորապես) իր դիրքորոշումը Հայոց իշխանի միավորիչ քաղաքականության հանդեպ և ճանաչել Թեոդորոս Ռշտունու իշխանությունը: Ինչպես ճիշտ նշել է Ա. Տեր-Ղևոնդյանը, Ներսես Գ-ն (641-661) դիմեց խնդրանքով Կոստաս Բ-ին՝ ճանաչել Թեոդորոս Ռշտունու իշխանությունը «որոշ հայ նախարարների նախաձեռնությամբ»[42]:

Այսպիսով, կայսրության քաղաքական ծրագրերից էր բխում, ամեն

կերպ պահել Հայաստանը իր ազդեցության ոլորտում: Հայ պետական գործիչների միավորիչ գործողությունները կաշկանդելով և խափանելով, Բյուզանդիան դավաճանում էր իր սեփական շահերին, քանի որ տարածքային և քաղաքական առումով ամբողջական Հայաստանը կարող էր արևելքից պատվար հանդիսանալ կայսրության թշնամիների ճանապարհին[43]: Կայսրության հանդուրժողականությունը Թեոդորոս Ռշտունու իշխանության հանդեպ երկար չտևեց: Նույնիսկ արաբների դեմ ուղղված որոշ միացյալ ռազմական գործողությունները[44] չի կարելի բնութագրել որպես դաշնակից հարաբերությունների դրսևորում: Սակայն խալիֆայության ճնշման պայմաններում Բյուզանդիան ստիպված էր իր քաղաքականությունը Հայաստանի հանդեպ միաոժամանակ վարել ոչ թե ուղղակի թելադրանքի դիրքերից, այլ բավականին քողարկված՝ քաղաքական խաղերի և մեքենայությունների միջոցով, ինչպես ցույց տվեցին նաև հետագա դեպքերը կապված Վարազտիրոց Բագրատունու և Թեոդորոս Ռշտունու հետ:

4. Բյուզանդա-ատրպատականյան դաշինքի հակահայկական ուղղվածությունը

Բյուզանդիայի արևելյան սահմաններին հարաբերական անդորրի հաստատումով, Հայաստանի գործերը կրկին հայտնվեցին կայսրության նվաճողական քաղաքականության կենտրոնում: Հայաստանի տարածքային ամբողջականության և անկախության վերականգնումը հանգիստ չէր տալիս բյուզանդական արքունիքին: Հայկական գործերը իր համար ցանկալի հունով տանելու, կամ էլ, ինչ-որ չափով դրանց ընթացքի վրա ազդելու նպատակով, կայսրությունը Հայաստանին անմիջական հարևանությամբ իրեն դաշնակից գտավ ի դեմս Ատրպատականի իշխանության, որը քաղաքական ակտիվություն ցուցաբերեց VII դ. 40-ական թթ.:

Պարսքի և Խուզիստանի հետ մեկտեղ Ատրպատականը, որը հին Մարաստանի մասն էր կազմում, Սասանյանների հարստության Պարսկաստանի գահին հաստատվելուց հետո (226 թ.) դարձել էր նրանց ժառանգական տիրույթը[1]: Ատրպատականում էին գտնվում Շիզը՝ Իստահրից հետո Պարսկաստանի երկրորդ զրադաշտական կենտրոնը, և Գանձակը՝ հյուսիսային քուստակի[2] վարչաքաղաքական կենտրոնը: Սասանյաններն Ատրպատականից էին իրականացնում վերահսկողությունը մարզպանությունների վերածված այսրկովկասյան երկրների վրա: Ատրպատականի իշխանները Սասանյանների մայրամուտին շարունակեցին նրանց քաղաքականությունը Հայաստանի հանդեպ, ինչից չհապաղեց օգտվել կայսրությունը: Բյուզանդա-ատրպատականյան հարաբերությունների հիմքում ընկած էր Բյուզանդիայի նվաճողական քաղաքականությունը Հայաստանի հանդեպ: Կոստաս Բ-ն,

վերջ դնելով պետական իշխանության նկատմամբ Վաղենտին զորավարի ցուցաբերած ոտնձգություններին[3], անմիջապես խառնվեց Հայաստանի գործերին:

Սեբեոսի հաղորդման համաձայն, նոր նշանակված Թեոդորոս զորավարը[4] խնդրեց կայսրին «առնել ողորմութիւն այնոցիկ, զորս էր աքսորեալ յԱփրիկէ: Եւ մանաւանդ վասն ասպետի, որդւոյ Սմբատայ Խոսրով Շում կոչեցելոյ»: Կոստաս Բ-ն «հրամայեաց ածել զնոսա ի քաղաքն թագաւորական: Եւ ընկալաւ զնոսա իբրեւ զսիրելիս թագաւորութեանն, եւ զորդի նորա զՍմբատ առաջին սպաթար ի մէջ ամենայն սպաթարացն, եւ կանտիտատ: Եւ անդէն կարգեաց (Վարազտիրոցին - է. Դ.) ի կարգն առաջի յամին հինգերորդի թագաւորութեան իւրոյ: Նոյնպես եւ զՎահանն Խորխոռունի եւ զայլ եւս»[5]:

Նույնիսկ խալիֆայության ճնշման պայմաններում կայսրությունը չէր հաշտվել Թեոդորոս Ռշտունու միավորիչ գործունեության հետ՝ ներքին քաղաքականությունում, և միջազգային ասպարեզում նրա ինքնուրույն քաղաքական գծին: Բյուզանդիան ուղիներ էր փնտրում խանգարելու Թեոդորոս Ռշտունու իշխանության ամրապնդմանը, իսկ հնարավորության դեպքում՝ նրան չեզոքացնելու և մեկուսացնելու համար: Վարազտիրոցի ազատման հարցը ծագեց հենց այն ժամանակ, երբ Թեոդորոս Ռշտունին գլխավորեց Հայաստանի երկու սասերի վերամիավորման և պաշտպանության գործընթացը[6]:

Հերակլը իր մահվանից առաջ «երդմնեցուցանէ զորդի իւր զԿոստանդին՝ առնել ողորմութիւն ի վերայ ամենայն յանցաւորացն, զորս հրամայեալ էր առնել յաքսորսն, եւ դարձուցանել զնոսա յիւրաքանչիւր տեղիսն: Երդմնեցուցանէ եւ վասն ասպետի՝ ածել զնա եւ զկին նորա եւ զորդիս նորա, եւ հաստատել ի կարգն առաջին: Եւ եթէ կամեսցի գնալ յաշխարհն իւր՝ երդուեալ եմ նմա, մի՛ եղիցի սուտ երդումն իմ: Արձակեա՛ զնա, եւ թո՛ղ երթայ խաղաղութեամբ»[7]: Անհրաժեշտ է նշել, որ եթե Հերակլը այդպես հոգ էր տանում իր խղճի մաքրության համար, ապա կարող էր Վարազտիրոցին ազատ արձակել դրանից շատ առաջ: Ավելին, նա կարող էր Վարազտիրոցին օգնել այն ժամանակ, երբ վերջինս հեռանալով Հայաստանից, նրան դիմեց օգնության խնդրանքով: Չէ որ, դեռևս Վարազտիրոցի Հայաստանում գտնվելու ընթացքում, կայսրությունը շարունակում էր խառնվել երկրի ներքին գործերին և Վարազտիրոցի Հայաստանից հեռանալը, հիմնականում, կայսերական իշխանությունների ներկայացուցչի՝ Մժեժի, պառակտիչ գործունեության հետևանք էր Հայաստանի արևմտյան մասում: Զարմանալի զուգադիպությամբ, երբ Հայաստանի քաղաքական ասպարեզում բուռն գործունեություն ծավալեց Թեոդորոս Ռշտունին, Բյուզանդիայի քաղաքական շրջաններում բարձրացվեց Վարազտիրոցին Հայստան վերադարձնելու հարցը[8]:

Արաբների ներխուժման դեմ Թեոդորոս Ռշտունու գլխավորած պայքարի անհրաժեշտությունը, այնուամենայնիվ, ստիպեց կայսրությանը ճանաչել նրա իշխանությունը: Այդ ժամանակաշրջանից սկսած Հայաստանի գործերին կայսրության միջամտության աստիճանը պայմանավորվեց նաև խալիֆայության դեմ ծավալվող հակամարտությամբ: Իսկ, քանի որ VII դ. 40-ական թթ. կեսերին խալիֆայությունը Բյուզանդիայի դեմ ակտիվ գործողություններ չէր իրականացնում, կայսրությունը, այս անգամ ավելի վճռականությամբ, որոշեց միջամտել Հայաստանի ներքին քաղաքական կյանքին:

Վարազտիրոցի, նրա հարազատների և մերձավորների ազատման հետ կապված կայսրության քաղաքական նպատակները իրենց դրսևորումը գտան նաև Հայաստան ժամանած Կոստաս Բ-ի գործակալի՝ ոմն Թումասի (Թումայի) գործողություններում. «Եւ (Կոստասը - Է. Դ.) արձակեաց ի Հայս այր ոմն իշխան, անուն Թումա: Սա եկեալ ոչ կամէր եղծանել զուխտն, որ ի մէջ կայսեր եւ իշխանին Մարաց. միաբանեաց զամենայն իշխանսն[9] ընդ ինքեամբ եւ գնաց առ իշխանն Մարաց եւ խաւսեցաւ ընդ նմա ի խաղաղութիւն: Եւ առ ի նմանէ ինչս բազումս եւ խոստացաւ նմա երդմամբ զի տացէ տանել զԹէոդորոս[10] կապանաւք ի պաղատն, զի նա էր իշխան աշխարհիս Հայոց: Եւ դարձաւ եկն անդրէն ի զաւրս Հայոց: Եւ իբրեւ եկն յերկիրն Կոտէից[11], յանկարծակի յարձակեցան ի վերայ նորա, կալան զնա եւ կապեցին, եւ ետուն տանել յանդիման թագաւորին»[12]:

Որոշ հետազոտողներ կարծել են, թե Սեբեոսի այս հաղորդման մեջ խոսքը արաբների հետ հաշտություն կնքելու մասին էր[13]: Սակայն նման կարծիքը, հակասելով աղբյուրի հաղորդմանը, ճիշտ չի բացատրում խնդրո առարկա ժամանակաշրջանի Հայաստանի քաղաքական վիճակը և բյուզանդա-«մարական» (ատրպատականյան) հարաբերությունների ուսումնասիրության հետ կապված հարցերը: Լեոն, ի տարբերություն այդ հետազոտողների, ճիշտ է բացատրել Սեբեոսի հաղորդումը: Գիտնականը գրել է. «Հայաստան է գալիս Թումա անունով մի պաշտոնյա, որ հանձնարարություն ուներ ի միջի այլոց, և բանակցություն վարելու Մարաց իշխաններից մեկի հետ, որ Ատրպատականի սահմանների վրա էր ապրում»[14]:

Սեբեոսը իր երկի այլ գլուխներում նույնպես պատմել է մարերի, նրանց զբաղեցրած տարածքի, ինչպես նաև նրանց իշխանի մասին: Ըստ Սեբեոսի, Ատրպատականի իշխանները VII դ. 30-40-ական թթ. սկզբին հաջորդաբար եղել են Խոռոխ Որմիզդը («իշխան մեծ Ատրպատական աշխարհի»), նրա որդին՝ Ռոստոմը («իշխան ի կողմանս Ատրպատականի», որը գլխավորել էր «զաւր աշխարհին Մարաց») և, ըստ երևույթին, Խոռոխազատը, որին Ատրպատական նահանջած պարսկական զորքի մնացորդները Ռոստոմի սպանվելուց հետո իրենց զորավար էին ընտրել[15]:

Արաբական խալիֆայության հարվածների տակ Ատրպատականի զգալի մասը նվաճվեց մոտ 643 թ.: Սակայն երկրի մնացած մասը, ըստ արաբ

պատմիչների (Տաբարի, Իբն ալ-Ասիր), իր ամրացվածության շնորհիվ խալիֆայության տիրապետությունից դուրս էր մնացել[16]: Ամենայն հավանականությամբ, խոսքը «Մարաց ամուր աշխարհի»[17] տարածքի մասին է, որը, ըստ Սեբեոսի, դեռևս չէր նվաճվել խալիֆայության կողմից:

«Մարաց իշխանին» Սեբեոսը կրկին հիշատակել է հետագա իրադարձությունների կապակցությամբ. «Եւ իշխանն Մարաց, զորմէ վերագոյն ասացի[18], եթէ գնաց յարեւելս առ արքայն իւրեանց եւ ապստամբեալ ի տեղի մի ամրացաւ, եւ խնդրեաց երդումն յԻսմայելացւոցն, եւ գնաց յանապատն ի ծառայութիւն Իսմայելացւոցն: Իսկ զաւրն Թէտալաց[19] կալեալ զՅազկերտ սպանին, որ կալաւ զթագաւորութիւնն ամս Ի: Եւ բարձաւ տէրութիւնն Պարսից եւ ազգին Սասանայ»[20]:

Այտեղից հետևում է, որ «մարաց իշխանը», տեսնելով պարսից շահի անելանելի վիճակը և հայտնելով սասանյան Պարսկաստանի կործանման փաստի առջև, ապստամբեց Հազկերտ Գ-ի դեմ և «ի տեղի մի ամրացաւ»: Ըստ երևույթին, նա վստահ չէր արաբների հետ կայանալիք բանակցությունների դրական ելքի մեջ և միայն նրանց կողմից երդման հավաստիացումներ ստանալուց հետո անցավ ծառայության խալիֆայությանը:

Իր երկի ԾԱ գլխում կրկին հիշատակելով «Մարաց ամուր աշխարհը» (մոտ 653 թ.) Սեբեոսը այլևս «մարերի իշխանի» մասին չի խոսել. «Ապստամբեցան Մարք ի ծառայութենէն Իսմայելի եւ սպանին զիշխանն հարկապահանջին արքային Իսմայելի, ապաւէն եւ թիկունս իւրեանց արարին զամուրս աշխարհին Մարաց, զանտառս խորաձորս, զվիհս, զվիմուտս, եւ զխորաձորս դժնդակս՝ որ զգետովն Գագայ եւ զլերամբն Մարաց, զժիր եւ զքաջ ազգացն զաւրութիւնս, որ բնակեալ էին ի նոսա, Գելն եւ Դելումն»[21]: Այսպիսով, իրոք ոչ մի հիմք չկա «մարերի» մասին տեղեկությունը համարել արաբներին վերաբերող:

Հայաստանի հանդեպ Բյուզանդական կայսրության վարած քաղաքականությունը իր էությամբ մնացել էր նվաճողական նաև այն ժամանակաշրջանում, երբ արևելյան մի նվաճողին՝ Սասանյան Պարսկաստանին հարավից եկավ փոխարինելու մյուսը՝ Արաբական խալիֆայությունը: Սասանյանների թագավորության փլուզման պայմաններում Ատրպատականը, իսկ այնուհետև «Մարաց իշխանությունը» բավականին ինքնուրույն հարաբերություններ էր հաստատել կայսրության հետ ընդդեմ Հայաստանի: VII դ. 30-ական թթ. սկզբներին Սմբատ Խոսրով-Շում Բագրատունու որդի Վարազտիրոցը, իսկ 40-ական թթ.՝ Հայոց իշխան Թեոդորոս Ռշտունին, վարելով անկախ քաղաքականություն, բախվեցին Բյուզանդական կայսրության և Ատրպատականի, իսկ այնուհետև՝ «Մարաց իշխանության» կատաղի դիմադրությանը: Վարազտիրոցին հալածեցին բյուզանդական ծառայության մեջ գտնվող զորավար Մժեժ Գնունին և Ատրպատականի իշխաններ Խոռոխ Որմիզդը և Ռոստոմը:

Կայսրության նվաճողական քաղաքականությունից էր բխում Մժեժ Գնունու համագործակցությունը Ատրպատականի իշխանների հետ և այնուհետև «զուխտն, որ ի մէջ կայսեր եւ իշխանին Մարաց», որը Թուման «ոչ կամէր եղծանել»: Կարելի է տեսնել, որ պատկերը կրկնվում էր, սակայն այն տարբերությամբ, որ Վարազտիրոցը ստիպված Հայաստանից հեռացավ կայսրություն (հետագայում այնտեղ ձերբակալվեց և աքսորվեց), իսկ Թեոդորոս Ռշտունին ձերբակալվեց Հայաստանում[22] և տեղափոխվեց Կոստանդնուպոլիս: Թեոդորոս Ռշտունու հանդեպ Կոստաս Բ-ն նույնպես երեսպաշտորեն վարվեց, ինչպես ժամանակին Հերակլը Վարազտիրոցի նկատմամբ: Հերակլը Վարազտիրոցին սուտ խոստում էր տվել՝ վերադարձնել հայրենիք, ու Վարազտիրոցը, հավանաբար, կարծում էր թե կայսրը նրան պատիվների և տիտղոսների արժանացնելու հետ մեկտեղ հնարավորություն կընձեռեր վերադառնալ Հայաստան: Սակայն այդ տեղի չունեցավ: Ավելին, այդ չէր էլ կարող տեղի ունենալ, քանի որ Վարազտիրոցի դեմ ձեռնարկված հալածանքները հենց կայսեր հրահանգներով էին կատարվում, որոնց իրականացնողներ էին Մժեժը և նրա միջոցով ատրպատականյան իշխանները: Ինչ վերաբերում է Թեոդորոս Ռշտունուն, ապա Կոստաս Բ-ն, իբրև թե ուշ տեղեկանալով նրա ձերբակալության մասին, այնքան զայրացավ, որ ձերբակալեց Թումասին: «Իսկ արքայ Կոստանդին իբրեւ լուաւ՝ խռովեցաւ յոյժ. զի ոչ էր ի հրամանէ նորա կապելն. եւ հրամայեաց լուծանել զնա ի կապանացն, եւ ընթեռնուլ զգիրս ամբաստանութեանն: Եւ ծանուցեալ զնենգութիւնն՝ հրամայեաց կոչել զառաջեաւ եւ ընկալաւ զնա սիրով, եւ նորին իշխանութեամբն պատուով: Եւ կարգեաց նմա ռոճիկ եւ ընդունելութիւն յարքունուստ: Ապա հրամայէ կոչել զԹումաս ոմն եւ ոչ հրամայեցաւ նմա մտանել յարքունիս, այլ արտաքոյ քննութիւն առնել եւ արդարացուցին զԹէոդորոս Ռշտունեաց տէրն ի բանս իւր. եւ եղեն իրաւունս ի վերայ նորա: Իսկ զԹումաս անարգեալ ի բաց ընկեցին պատուոյն»[23]:

Թեոդորոս Ռշտունու ձերբակալությունը, ամենայն հավանականությամբ հրահանգված էր բյուզանդական արքունիքի կողմից: Թումասը Հայաստան էր ուղարկվել հատուկ լիազորություններով: Նա պետք է իր շուրջը համախմբեր բյուզանդամետ տրամադրություններ ունեցող նախարարներին, բանակցություններ վարեր «մարերի իշխանի» հետ և ձերբակալեր Թեոդորոս Ռշտունուն: Բյուզանդական պաշտոնյան կատարեց այս բոլոր հանձնարարությունները: Սակայն Կոստանդին կայսրից Թեոդորոսին կապելու հրաման չէր եղել: Ուրեմն ձերբակալելու հրաման եղել էր, իսկ կապելու՝ ո՞չ: Չէ որ Թեոդորոսին կալանեցին, կապեցին և «ետուն տանել յանդիման թագաւորին»: Իսկ, քանի որ կայսեր պալատում կարող էին նաև այլ իշխաններ լինեին թե՝ Հայաստանից և թե՝ այլ երկրներից, ուստի Կոստասին ձեռնտու էր դժգոհություն ցուցադրել Թեոդորոսին կապանքներով իրեն ներկայացնելու համար: Կայսեր թվացող անտեղյակությունը Թեոդորոսի «գործի»

հանդեպ սոսկ դիվանագիտական քայլ էր: Եվ կայսրը Թումասին պատժեց, փաստորեն, ոչ թե Թեոդորոսին կալանելու, այլ նրան կապանքներով իրեն ներկայացնելու համար: Կոստասին ոչինչ չարժեր բոլորի ներկայությամբ զոհաբերել իր պաշտոնյաներից մեկի կարիերան: Այդ երեսպաշտ քայլը թելադրված էր կայսրության քաղաքական նկրտումներով:

Կոստաս Բ-ն Թեոդորոս Ռշտունուն միանգամից չուղարկեց Հայաստան: Վարազտիրոցը իր փախուստով հայրենիք խափանեց Կոստասի ծրագրերը: Սեբեոսը գրել է, որ Վարազտիրոցը «հրամանս խնդրեաց ի թագաւորէն Կոստանդեայ, զի արձակեսցէ արս չորս յընտանեաց իւրոց ի Հայս՝ տանել առ նա զինչս իւր: Եւ հրամայեաց թագաւորն տալ նմա զհրամանս. իսկ նա այլակերպեալ զինքն՝ առ ընդ իւր արս երիս, եւ հասեալ ի ծովեզր՝ եցոյց զհրամանն արքունի: Ել ի նաւն եւ էանց ընդ ծովն, եւ հապճեպ գնացեալ ի նմանութիւն թռչնոյ՝ եկն եհաս փութանակի ի Տայս եւ ամրացաւ անդ. քանզի ընկալան զնա Տայեցիքն խնդութեամբ»[24]:

Կոստասը չէր պատրաստվում Վարազտիրոցին ուղարկել Հայաստան, այլապես ինչո՞ւ էր վերջինս թույլտվություն խնդրում իր ունեցվածքը հայրենիքից Կոստանդնուպոլիս բերելու համար: Ուրեմն, Վարազտիրոցը Կոստասին պետք էր ավելի հեռուն գնացող նպատակների համար, որպես քաղաքական դեմք, որին նա պետք է օգտագործեր Հայաստանի գործերին խառնվելիս: Իսկ մինչ այդ Վարազտիրոցը պետք է գտնվեր արքունիքում, ինչը իրական թեկնածուի առկայության պատրանք կստեղծեր Հայաստանի զորավարի պաշտոնի համար, որով, ըստ կայսրության քաղաքագետների, պետք է զսպվեին և սահմանափակվեին Հայոց իշխանի՝ Թեոդորոս Ռշտունու գործողությունները: Սակայն գործերը այլ ընթացք ստացան, քան կարծում էին կայսրը և նրա խորհրդականները: Աքսորից Վարազտիրոցի վերադարձից հետո, փաստորեն, ժամանակ չմնաց նրա «քաղաքական հակադրմանը» Թեոդորոս Ռշտունուն: Այդ չէր էլ կարող տեղի ունենալ, ինչպես շուտով պարզվեց նրանց հանդիպումից, որը լի էր անկեղծ, բարեկամական ջերմությամբ: Կոստասի համար էլ՝ ավելի անսպասելի էր Վարազտիրոցի հանդուգն փախուստը:

«Յայնմ ժամանակի ոչ սակաւ յուզմունք լինէին ի մէջ աշխարհիս Հայոց. քանզի փութանակի եկն եհաս հրամանն արքունի առ զաւրավարն Հայոց՝ ունել զամենայն անցս ճանապարհացն, եւ յուզել յամրոցս աշխարհին: Ապա ազդ լինէր, եթե եկն եւ ամրացաւ (Վարազտիրոցը - Է. Դ.) ի Հայս ի Տայս»[25]: Այստեղ հիշատակված «Հայոց զորավարի» անունը աղբյուրում բացակայում է: Այդ ժամանակ Թեոդորոս Ռշտունին Կոստանդնուպոլսում էր: Թումասը նույնպես Հայաստանից դուրս էր: Սակայն Թեոդորոս Ռշտունու ձերբակալությունից հետո Հայաստանում պետք է բյուզանդական զորք մնացած լիներ: Ընդ որում, եթե կայսեր հրամանը ուղղված էր «Հայոց զորավարին», ապա նա կայսրության ռազմական հրամանատարության ենթա-

կայությունում էր գտնվում: Քանի որ Թումասը վերադարձել էր մայրաքաղաք, որպես Թեոդորոս Ռշտունուն կալանավորած ջոկատի հրամանատար, ուստի Հայաստանում մնացել էր այն հիմնական զորքը, որի հետ սկզբում բյուզանդական այդ պաշտոնյան ժամանել էր այստեղ: Հնարավոր է, որ «Հայոց զորավար» ասելով, աղբյուրում նկատի է առնված հենց այդ զորքի բյուզանդական հրամանատարը, որը, ըստ երևույթին, պետք է Հայաստանում իրականացներ կայսրության քաղաքականությունը Թեոդորոս Ռշտունու բացակայության ժամանակ: Ըստ երևույթին նրան է վերաբերում Սեբեոսի հետևյալ հիշատակությունը. «Յայնժամ հրաման ետ զաւրավարն Յունաց Թէոդորոս[26] հանդերձ իշխանաւքն զաւրուն եւ նախարարաւքն Հայոց՝ արձակեալ զՆերսէս կաթուղիկոս առ ասպետ, եւ տանել նմա երդումն հաւատարմութեան, ի խնդրել նմա զիշխանութիւն աշխարհին, եւ ածել նմա զկին իւր եւ զորդիսն»[27]:

Ինչպես նշել է Գ.Աբգարյանը, խնդրո առարկա հատվածի և նրա հետ կապվող հաջորդ մասի անհաջող շարադրման հետևանքով հեղինակի միտքը պարզ չի արտահայտված, և «Սեբեոսի Պատմության» բոլոր թարգմանիչները (Ք.Պատկանյան, Յ. Յյուբշման, Ֆ. Մակլեր, Ստ. Մալխասյանց) սխալ են վերծանել բնագիրը, որը, ըստ նրա, ունի իրականում հետևյալ իմաստը. «Տանել նրան (Վարազտիրոցին) հավատարմության երդում՝ նրա կողմից երկրի իշխանությունը պահանջելու դեպքում», այսինքն՝ տանել ասպետի անունից վաղօրոք գրված «հավատարմության երդումը» այն մասին, որ նա իշխանությունն ստանձնելիս հավատարիմ կմնա բյուզանդական կայսրին: Այս «երդումը» պետք է հաստատվեր Վարազտիրոցի մոտ»[28]: «Եւ գնաց կաթուղիկոսն, հաստատեաց առ նմա զերդումն, զի մի՛ այլ ուրեք կալցի ճանապարհ. եւ դարձաւ եկն անդրէն: Եւ գրեցին նոքա առ թագաւորն Կոստանդին առնել նմա ըստ երդմանն, զոր խոստացաւ... »: Վարազտիրոցը ծանոթ էր կայսերական իշխանությունների նենգությանը և դաժանությանը, ուստի ամեն կերպ ձգտում էր հեռացնել իր ընտանիքի վրա կախված վտանգը: Կոստանդնուպոլիս ուղարկվեց մի գրություն, որում Վարազտիրոցը հավաստիացնում էր կայսրին. «Ծառայ քոյ եմ, եւ ոչ ուրեք երթամ ի ծառայութենէդ ձերմէ. բայց զի ասացին ցիս ոմանք, եթէ անդրէն երթալոց ես ուստի եկիրն՝ վասն այնորիկ զահի հարայ եւ փախեայ: Բայց արդ եթէ արժանի համարիք՝ միամտութեամբ վաստակիմ, եւ կեամ եւ մեռանիմ ի վերայ ձերոյ աստուածպաշտութեանդ»[29]:

Կաթողիկոս Ներսես Գ-ի և Վարազտիրոցի կայանալիք հանդիպման վերաբերյալ որոշումը ընդունելիս մասնակցում էին հունաց զորավար Թեոդորոսը «հանդերձ իշխանաւքն զաւրուն եւ նախարարքն Հայոց»: Հայտնի է, որ Հայոց նախարարները գլխավորում էին հայկական զորքերը, այնպես որ, եթե խոսքը լիներ միայն հայկական զորքի մասին, ապա Սեբեոսը հատուկ չէր նշի նախարարներին «զորքի իշխաններից»[30] հետո: Ըստ երևույթին,

այստեղ խոսքը Թեոդորոս զորավարի կողմից գլխավորած հունական զորքի ստորաբաժանումների հրամանատարների մասին է: Հետևապես, հիշատակելով «Հայոց զորավարին», Սեբեոսը իրոք պետք է նկատի ունենար հունական զորավար Թեոդորոսին, որը Թեոդորոս Ռշտունու բացակայությամբ իր վրա էր վերցրել Հայաստանի զինվորական կառավարման պարտականությունները, որպես բյուզանդական իշխանությունների ներկայացուցիչ: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ «Հայոց զորավարի» պաշտոնը տվյալ դեպքում սոսկ զինվորական բնույթի էր և չէր համընկնում «Հայոց իշխանի» պաշտոնի հետ, որը իր մեջ ամփոփում էր երկրի ռազմավարչական իշխանությունը: Բյուզանդական զորավար Թեոդորոսը ժամանակավորապես էր գտնվում Հայաստանում: Նա ավելի բարձր պաշտոն էր զբաղեցնում կայսրությունում որպես բյուզանդական զինված ուժերի գերագույն հրամանատար և, փոխարինելով վերոհիշյալ Վաղենտինին, արաբների դեմ պայքարը կազմակերպելու համար ժամանել էր Արևելք ու նշված իրադարձությունների կապակցությամբ եկել էր Հայաստան:

Կոստաս Բ-ն կանգնեց կատարված փաստի առջև ու ստիպված էր «առնել զնա (Վարազտիրոցին - Է. Դ.) կիւրապաղատ, եւ տալ նմա պսակ պատւոյն եւ զիշխանութիւն աշխարհին: Եւ հրամայեաց արձակել զկին եւ զորդիսն մեծաւ շքով եւ ետ տանել զգահոյս արծաթեղէնս հանդերձ այլովք մեծամեծ ընչիւք»: Սակայն կրկին անսպասելի փոփոխություն կատարվեց դեպքերի ընթացքի մեջ: «Արդ՝ մինչդեռ գայր հրովարտակն եւ պատիւն առնել զնա կիւրապաղատ՝ յանկարծակի եհաս նմա հիւանդութիւն եւ մեռաւ»[31]:

Վարազտիրոցի կյանքի ամբողջ ուղին իր վրա կրել էր պարսկական և բյուզանդական նվաճողական քաղաքականության հետևանքով հայ ժողովըրդին բաժին հասած ծանր փորձությունների հետքը: Նա իր պատանեկությունը անց էր կացրել պարսից պալատում, փաստորեն, որպես պատանդ: Վերադառնալով Հայաստան, Վարազտիրոցը որոշել էր իրեն նվիրել Հայրենիքի անկախության և տարածքային ամբողջականության վերականգման գործին, սակայն բախվեց բյուզանդական իշխանությունների և նրանց նորահայտ դաշնակիցների՝ ատրպատականյան կառավարիչների կատաղի դիմադրությանը: Հայաստանում միաոժամանակ մնալուց հետո Վարազտիրոցը ստիպված էր հեռանալ Բյուզանդիա, որտեղից շուտով կայսեր կողմից աքսորվեց: Միայն մի քանի տարի անց, ազատվելով աքսորից, նա փախուստի դիմեց Բյուզանդիայից և ժամանեց Հայաստան, որտեղ, կայսրությունից պաշտոնապես դեռևս նոր ճանաչված, մահացավ:

Վարազտիրոցի ավագ որդուն՝ Սմբատին Կոստաս Բ-ն կարգեց «ի պատիւ հաւր իւրոյ. տուեալ նմա զիշխանութիւնն բնիկ տանուտէրութեանն ասպետութեան, եւ արա զնա դրունգար զաւրաց իւրոց»[32]: Կարծիք է հայտնվել, որ Սմբատը իր հոր մահվանից հետո դարձավ Հայաստանի կյուրապաղատ և իշխան[33]: Հ. Մանանդյանը նման կարծիքը սխալ է համարել, նշելով, որ

դրունգարի կոչումը, որը Սմբատը ստացել էր կայսրից, համապատասխանում էր զինվորական պաշտոնին և հասկանալի է, թե ինչու Հայաստանի կյուրապաղատին չէր կարելի նշանակել դրունգար և բանակ ուղարկել[34]: Գ. Աբգարյանը նշել է, որ Սեբեոսը այստեղ բերել է հատուկ պաշտոնի՝ «տանուտերությանն ասպետություն», անունը, որից հետևում է, որ այդ ժամանակ գոյություն է ունեցել Հայոց հեծելազորի ընդհանուր հրամանատարի պաշտոն: Այս կապակցությամբ գիտնականը ուշադրություն է դարձրել այն հանգամանքի վրա, որ Կոստասը նշանակեց «զՄուշեղ Մամիկոնէից տէր՝ իշխան Հայոց հեծելոցն»[35]: Սակայն պատահական չէ՛, որ ըստ Սեբեոսի, «տանուտէրութեանն ասպետութեան» Վարազտիրոցի «բնիկ իշխանությունն էր», քանի որ «ասպետ» տիտղոսը Բագրատունիների նախարարական տան տոհմական տիտղոսն էր[36]: Սեբեոսի հաղորդումից ամենևին չի հետևում, թե Վարազտիրոցի որդին՝ դրունգար Սմբատ Բագրատունին, դարձավ Հայոց իշխան: Պատմիչը գրել է, որ Կոստասը նրան ամուսնացրեց Մանվելի[37] դստեր հետ («Ետ նմա կին ի տանէն Արշակունեաց եւ յիւրոց մերձաւորաց, եւ... արձակեաց ի բանակն առ զաւրս իւր»): Իր զորքի բանակատեղին Թրակիայում էր, ինչպես հետևում է Սեբեոսի հետևյալ հաղորդումից. «Եւ Սմբատ էր իշխան զաւրու Թրակացւոց իշխանացն»[38]:

Թեոդորոս Ռշտունուն կայսրը այս իրադարձություններից հետո ի վերջո ուղարկում է Հայաստան: Թեոդորոս Ռշտունուն արդարացնելը, ռոճիկ և «ընդունելութիւն յարքունուստ» կարգելը, իսկ այնուհետև նրան «զնոյն իշխանութիւն զաւրավարութեան»[39] տալով, մեծ պատվով Հայաստան ուղարկելը հետապնդում էին մի նպատակ՝ Հայաստանը պահել կայսրության քաղաքական ոլորտում: Սակայն միջազգային փոփոխված իրավիճակում, երբ նվաճումների նախաձեռնությունը խալիֆայության կողմն էր, կայսրությունը Հայաստանում, բացի ժամանակավոր քաղաքական խառնաշփոթ ստեղծելուց, իր համար շոշափելի արդյունքի չհասավ: Կայսրությունը իր միջամտությամբ միայն բացասաբար էր ազդում Հայոց վերականգնվող միասնական պետության ներքին քաղաքական գործընթացների վրա: Թվում է, թե Բյուզանդական կայսրության և «Մարաց իշխանության» միջև եղած դաշինքը պետք է ուղղվեր իր նվաճումներն ընդլայնող խալիֆայության դեմ, սակայն ընդհակառակը՝ այն ուղղվեց արաբական նվաճումներին դիմակայող Հայաստանի դեմ[40]:

Կայսրության պարբերաբար միջամտության պայմաններում բյուզանդական կողմնորոշում ունեցող նախարարները ավելի համախմբվեցին և, ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը, Թեոդորոս Ռշտունին պետք է լրջորեն հաշվի առներ այդ հանգամանքը:

5. 647 թ. արաբական ներխուժումը Հայաստան: Հերևանի և Արծափի պաշտպանությունը


Թեոդորոս Ռշտունին «եկն կարգեցաւ ի նոյն իշխանութեանն» և հագիվ էր վերսկսել իր պետական գործունեությունը, երբ խալիֆայության զորքերը կրկին ներխուժեցին Հայաստան: Սեբեոսը Կոստաս Բ-ի գահակալության հինգերրորդ տարում (646 թ.) տեղի ունեցած դեպքերի մասին պատմելուց հետո գրել է. «Եւ եղեւ ի գալ միւսում ամի եկն զաւրն Իսմայելի յԱտրպատական, եւ բաժանեցան յերիս: Առաջ մի յԱյրարատ, եւ առաջ մի ի Սեպհական գնդին կողմանսն, եւ առաջի մի յԱղուանս: Արդ՝ որք ի կողմանս Սեպհական գնդին՝ արշաւեալ սփռեցան եւ հարեալ զամենայն կողմանսն զայնոսիկ սրով սուսերի, առին զաւար եւ զգերութիւն: Եւ եկին ժողովեցան ի Հէրեւան, եւ մարտեան ընդ բերդին, եւ ոչ կարացին առնուլ: Եկին ի յՈրդսպու, եւ ոչ նմա ինչ կարացին առնել: Գնացին անտի եւ բանակեցան յԱրծափս, հանդէպ բերդին առ ջրովն»: Պաշարվածները Արծափում հայտնվեցին ծանր վիճակում և «իջին ընդ այն արք ի վայր ի բերդէն երթալ խնդրել ի բերդէն Դարաւնից զաւր յաւգնականութիւն իւրեանց: Եւ ետ նոցա Սմբատ Բագրատունի, որդի Վարազ Սահակայ՝ արս Խ: Եւ գնացեալ ի գիշերի ելին ի բերդն եւ ոչ զգուշացան տեղւոյն: Եւ գիտացին Իսմայելացիքն զտեղին, եւ գնացեալ ի նոյն հետին ելին ի բերդն, եւ կալան զտեղին մինչեւ ցառաւաւտն: Եւ արս ժ պահապանս տեղւոյն ըմբռնեցին ի քուն եւ սպանին»[1]:

Այս արշավանքի տարեթվի մասին տարբեր կարծիքներ են հայտնվել: Եվ դրա պատճառն է հանդիսացել Սեբեոսի «Պատմութեան», հաջորդ գլխի սկիզբը. «Եւ եղեւ յամին երկրորդի Կոստանդնի (Կոստաս Բ) յամսեանն հոռի, որ աւր ԻԳ էր ամսոյն, յաւուր կիւրակէի ընդ առաւաւտս՝ ճչեցին Իսմայելացիքն ի բերդին վերջոյ եւ առաջոյ, եւ հարին զնոսա սրով սուսերի: Եւ բազումք գահավէժ լեալ սատակէին: Եւ զկանայս եւ զմանկունս իջուցին ի բերդէն, կամէին սատակել. եւ ոչ գոյր թիւ գերւոյն, եւ անասուն պաճարացն բազում յոյժ: Եւ եղեւ ի վաղիւ առաւաւտուն եկն եհաս ի վերայ նոցա զաւրավարն Հայոց Թէոդորոս զաւրու իւրով եւ յարձակեցաւ ի վերայ նոցա եւ եհար զնոսա անհուն կոտորածով: Եւ էին նոքա երեք հազար ընտիր սպառազէնս յամենայն զաւրացն Իսմայելի, եւ ոչ ոք զերծաւ ի նոցանէ. բայց սակաւ ճողոպրեալք հետեւակք երթեալ ամրացան ի Շամբին: Եւ ապրեցոյց տէր յաւուր յայնմիկ զբազմութիւն գերւոյն ի ձեռաց Իսմայելացւոցն. եւ գԻսմայել խորտակեաց կործանմամբ մեծաւ. եւ մեռան Բ իշխանքն Իսմայելի, Աւթման եւ Ոգբայ: Եւ եղեւ յաղթութիւն մեծ զաւրավարին Հայոց»[2]:

Է. Դյուլորիեն, Մ. Ղազարյանը, Մ. Օրմանյանը, Ն. Ակինյանը, Ս. Մելիք-Բախշյանը և ուրիշներ այս արշավանքը նշել են կայացած 643 թ.[3], Մ. Չամչյանը՝ 644 թ.[4], Յու. Կուլակովսկին՝ 647 թ.[5]: Հ. Մանանդյանը, Բ. Առաքելյանը, Ա. Տեր-Ղևոնդյանը գտնում էին, որ այս արշավանքը, որի ընթացքում գրավվեց Արծափը, տեղի էր ունեցել 650 թ.[6]: Հ. Մանանդյանի

հիմնական փաստարկներն են. 1) «Յամին երկրորդի Կոստանդնի» ընթերցվածը աղավաղություն է: «Սկզբնական բնագրում եղած պիտի լինի «յամին Ը - երորդի Կոստանդնի» կամ «յամին Թ երորդի Կոստանդնի եւ աղավաղումն առաջ է եկել Ը կամ Թ եւ Բ տառերի նմանությունից», 2) «Ղեւոնդ երեցը Արծափի առումը դնում է Դվինի առումից տասը տարի հետ». 3) «Արծափի առումը դրվելու է, ինչպես տեսնում ենք Պռոկոպի կնքած զինադադարից առաջ, որի տարեթիվը Թեոփանի մոտ ևս ցույց է տրված 650 թվականին»[7]:

Հակառակ Հ. Մանանդյանի կարծիքի, Ս. Մելիք-Բախշյանը Սեբեոսի «Պատմութեան» «եւ եղեւ յամին երկրորդ Կոստանդնի, յամսեանն հոռի, որ



Դարույնքի բերդը Կոգովիտում

աւր ԻԳ էր ամսոյն, յաւուր կիւրակէի ընդ առաւաւտս... » ընթերցվածը ստույգ է համարել: Նա հայտնել է, որ կատարել է «Ճշգրիտ տոմարագիտական հաշվումներ ու ստուգումներ» և Արծափի առման ժամանակն է համարել 643 թ. օգոստոսի 10-ի կիրակի օրը, նշելով, որ «Կոնստանս Բ» (Կոստաս) թագավորել է 642-668 թթ.[8]: Ս. Մելիք-Բախշյանը, մերժելով 650 թ. որպես Արծափի գրավման տարեթիվ, գրել է. «Պատմիչը, խոսելով բյուզանդական կայսր Կոնստանս Բ-ի գահ բարձրանալու մանրամասնությունների և ուրիշների կողմից նախկինում աքսորված Սմբատ ասպետ Բագրատունու, Վահան Խոռխոռունու և մյուսների ազատության մասին, ասում է՝ «Եւ եղեւ ի գալ միւսում ամի եկն զաւրն Իսմայելի... »: Պատմիչի ասած «եւ եղեւ ի միւսում ամի... » կլինի 643 թ., որովհետև հայտնի է, որ Կոնստանս Բ-ն գահ է բարձրացել 642 թ.»[9]: Իրականությունը, սակայն այն է, որ «եւ եղեւ ի գալ միւսում ամի» արտահայտությունը Սեբեոսը օգտագործել է Կոստաս Բ-ի

գահ բարձրանալու ոչ թե առաջին, այլ հինգերորդ տարվա (646 թ.) ընթացքում[10] տեղի ունեցած դեպքերի (Վարազտիրոցի ընտանիքի և մյուսների ազատվելը աքսորից, Թեոդորոս Ռշտունու կալանավորելը և տարվելը Կոստանդնուպոլիս, Վարազտիրոցի փախուստը Տայք և այնուհետև նրա մահը, Թեոդորոս Ռշտունու վերադարձը Հայաստան և այլն) մասին գրելուց հետո: Կնշանակի «ի գալ միւսում ամի» ասելով նա նկատի է ունեցել Կոստաս Բ-ի վեցերորդ տարին՝ 647 թ.: Բացի այդ, Կոստաս Բ-ի գահ բարձրանալու տարեթիվը ընդունված է համարել ոչ թե 642 թ., այլ 641 թ.[11]:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Սեբեոսի «Պատմութիւն»-ում մինչև Կոստասի թագավորության հինգերորդ և հաջորդ տարվա մասին եղած տեղեկությունը, Վաղենտինի հետ կապված դեպքերի առնչությամբ արդեն, խոսվել էր Կոստաս Բ-ի գահակալության երկրորդ տարվա վերաբերյալ («յերկրորդում ամի Կոստանդի»)[12]: Պատմիչը չէր կարող Կոստաս Բ-ի հինգերորդ և հաջորդ տարվա («ի գալ միւսում ամի») դեպքերը նշելուց հետո կրկին վերադառնալ երկրորդ տարվան, քանզի կստացվեր այնպես, թե Սեբեոսը Արծափի դեպքերի մի մասը թվագրել է Կոստաս Բ-ի գահակալության հինգերորդ տարվան հաջորդած «մյուս տարով», իսկ հաջորդ մասը՝ երկրորդ տարով:

Իրավացի է Հ. Մանանդյանը՝ Արծափի հետ կապված անցքերի ժամանակը ըստ Սեբեոսի շարադրանքի, նշելով 645/6 թ. հետո: Նա իրավացի էր նաև նշելով, որ անհրաժեշտ է սրբագրել «յամին երկրորդի Կոստանդնի» ընթերցվածը: Սակայն, ըստ երևույթին, ոչ Ղևոնդի հաղորդումը 10 տարի տևած դադարի և ոչ էլ Սեբեոսի հաղորդումը բյուզանդական զորավար Պռոկոպի՝ արաբների հետ կնքած զինադադարի մասին, չպետք է որպես հիմք ծառայեցնել այդ ընթերցվածը սրբագրելու՝ «յամին Ը-երորդի Կոստանդնի» կամ «յամին Թ-երորդի Կոստանդնի»: Հ. Մանանդյանը, ընդունելով Ղևոնդի հաղորդումը Մարդուցայքի դեպքերի ժամանակագրման («ի քսան եւ երկրորդ ամի Աբուբաքրայ եւ Ամրի, իշխանացն Իսմայելի») մասին, ինչպես նաև քննելով այլ աղբյուրներ, եզրակացրել է, որ արաբների այդ արշավանքը տեղի էր ունեցել 642/3 թ.: Գիտնականը չի գրել Ղևոնդի հաջորդ հաղորդման («դադարեցին յելանելոյ ի վերայ աշխարհիս Հայոց ամս Գ»)[13] մասին և քննել է պատմիչի հաղորդած այն տեղեկությունները, ըստ որոնց արաբները գրավեցին Դվինը նշված անձանց քսանվեցերորդ տարում, իսկ տասը տարի տևած դադարից հետո՝ երեսունվեցերորդ տարում գրավեցին Արծափը[14]: «Սակայն ժամանակագրական այս սխալ հաշվումները, - եզրակացրել է Հ. Մանանդյանը, - բնավ իրավունք չեն տալիս մեզ մերժելու Ղևոնդի պարզ ու կարևոր այն տեղեկությունը, որ Արծափի առումը տեղի է ունեցել Դվինի առումից տասը տարի հետո»[15]: Աբուբաքրի, Օմարի և Օսմանի 22-րդ տարվանը վերաբերող հաղորդումը, այսինքն՝ Մարդուցայքի հետ կապված դեպքերը, Հ. Մանանդյանը քննել և դրել է այդ անձանց 26-րդ տար-

վա մասին հաղորդումից հետո: Սակայն, այս դեպքում արաբների երեք տարի չհարձակվելու մասին Ղևոնդի հաղորդումը նույնպես կտեղաշարժվի և դրանով իսկ կհակադրվի տաս տարի տևած դադարի վերաբերյալ տեղեկությանը: Բացի այդ, Հ. Մանանդյանի կողմից նշված ժամանակագրական սահմաններում (640-650) տաս տարի տևողությամբ դադար չի եղել: Հ. Մանանդյանը իր աշխատությունում հատուկ գլուխ է նվիրել արաբական 642/3 թ. արշավանքին, իսկ Ա. Տեր-Ղևոնդյանը բացի դրանից անդրադարձել է նաև Հաբիբի (644 թ.) գլխավորած արաբական ներխուժմանը[16] և այլն: Ուրեմն, Ղևոնդի երկում պահպանված վերոհիշյալ ժամանակագրական տվյալներին պետք է այլ մեկնաբանություն տալ:

Ինչ վերաբերում է Պռոկոպի մասին հաղորդմանը («գնաց... ի Դամասկոս առ Մաւիաս իշխան զաւրուն Իսմայելի... եւ առ զհաշտութիւնն եւ գընաց»)[17], ապա այն իրոք կարևոր է Արծափի հետ կապված դեպքերը 645/6 և 650 թթ. միջև դնելու համար, սակայն ժամանակագրորեն անմիջապես չի հաջորդում նախորդ նյութին: Բացի այդ, դաշնագրի կնքմանը նախորդել էին բյուզանդա-արաբական ռազմական գործողությունները[18]: Այս դաշնագրի մասին եղած ժամանակագրական բնույթի տեղեկությունները քննելով, Գ. Աբգարյանը եկել է այն եզրակացության, որ բյուզանդա-պարսկական եռամյա զինադադարը ավարտվել էր Կոստաս Բ-ի 11-րդ տարում (652 թ.) իսկ 12-րդ տարում (653 թ.) սկսվել էին ռազմական գործողությունները[19]: Ուրեմն զինադադարը կնքվել էր 649/50 թ.[20]:

Թեև Արծափի առումը և Պռոկոպի կնքած զինադադարը Հ. Մանանդյանը, ժամանակագրորեն իրար կապելով, դրել է 650 թ., այնուամենայնիվ, այդ տարեթվի կապակցությամբ նա նույնպես որոշ կասկածանք է հայտնել. «Յամին Ը-երրորդի Կոստանդնի» ուղղումը չի հարմարվում, որովհետև 649 թ. հոռի 23-ը կամ օգոստոսի 8-ը գալիս է ոչ թե կիրակի, այլ շաբաթ: Սակայն նույն այդ ուղղումը կարող էր ընդունելի համարվել, եթե հնարավոր լիներ ապացուցանել, որ Սեբեոսի մոտ աղճատված է նաև ամսաթիվը՝ «որ աւր ԻԳ էր ամսոյն» փոխանակ «որ աւր ԻԴ էր ամսոյն»: Այդ դեպքում՝ Արծափի առումը կընկներ 649 թվի օգոստոսի 9-ին, որովհետև այս թվին Հոռի 24-ը կամ օգոստոսի 9-ը գալիս է դարձյալ կիրակի օր՝ համապատասխան Սեբեոսի վկայության: Նախադասելի համարելով առաջին ուղղումը Արծափի առման թվականը մենք ենթադրում ենք 650 թվի օգոստոսի 8-ին, կիրակի»[21]:

Խնդրո առարկա հարցի կապակցությամբ Սեբեոսի հաղորդումները ժամանակագրորեն հետևյալ հաջորդականությունն ունեն. «յամին հինգերորդի» Կոստաս Բ-ի «ի գալ միւսում ամի», որի կապակցությամբ ԽԵ գլխի առաջին տողը կարելի է սրբագրել հետևյալ կերպ. «յամին [Ջ]» Կոստաս (Կոստանդին) Բ-ի, «յամսեանն հոռի, աւր Ի[Ջ] էր ամսոյն, յաւուր կիւրակէի»: Այսպիսով, արաբական նշված արշավանքը կայացել էր Կոստաս Բ-ի

վեցերորդ տարում՝ 647 թ.: Ուրեմն, Արծափ բերդի առումը տեղի էր ունեցել Հայոց ՂԶ թվականի հոռի 26-ին, կիրակի օրը՝ 647 թ. օգոստոսի 12-ին, կիրակի[22]:

Յու. Կուլակովսկին, քննելով Թեոփանեսի և Էլիաս Մծբնեցու հաղորդումները Աբդ-Ալլահ իբն Սաիդի գլխավորությամբ արաբական զորքի Աֆրիկա ներխուժելու մասին, որպես ներխուժման թվական է նշել 647 թ.: Գիտնականն այնուհետև գրել է, որ նույն տարին (647 թ.) արաբները Ատրպատականի կողմից ներխուժեցին Վանա լճի շրջանը և, բաժանվելով երեք խմբի, ասպատակեցին ամբողջ երկիրը: Դվինի առումը, ինչպես վերը նշվեց, նա դրել է 647 թ. հոկտեմբերի 6-ի ու թեև Արծափի բերդի մասին չի խոսել, սակայն նշել է, որ Կոգովիտում Թեոդորոս Ռշտունին շատ գերիներ ազատեց[23]: Յու. Կուլակովսկու կարծիքին ժամանակագրական տեսակետից հիմք է ծառայել, ըստ երևույթին, Մովսես Կաղանկատվացու վկայությունը՝ Կոստաս Բ-ի վեցերորդ տարում Դվինի գրավման մասին[24]:

Հայաստան ներխուժած արաբական զորքի երկրորդ զորախմբի դեպի Սեպհական գնդի կողմերը և Կոգովիտ գավառի Արծափ բերդը արշաված երթուղու մասին տարբեր կարծիքներ են հայտնվել՝ կապված այդ երթուղու վրա հիշատակվող մի տեղանվան հետ, որը անցյալ դարի կեսերից կարդացվել է «Յերեւան»[25]: Գ. Աբգարյանը Սեբեոսի «Պատմության» նոր հրատարակությունում այդ տեղանունը, ըստ Մատենադարանում պահվող №1343 ձեռագրական պատառիկի և № 2639 ձեռագրի, ուղել է «ի Հէրեւան» և այն մեկնել «Հէր եւ անդ», նշելով որ դրանով հաստատվում է Հ. Մանանդյանի կարծիքը՝ *Երևան* անունը «Հեր»-ով փոխարինելու մասին[26]: Գ. Աբգարյանի վերականգնած «ի Հէրեւան» ընթերցվածը արժեքավոր է, քանի որ հնարավորություն է տալիս, ինչպես ստորև կտեսնենք, նոր լույսի տակ դիտել Սեբեոսի հաղորդումը:

Սեբեոսի «Պատմութեան» վերոհիշյալ հաղորդմանը զգալիորեն համահնչուն են Ղևոնդի երկի հետևյալ տողերը. «Հագարացիքն... զօր ժողովեալ դարձեալ յարձակեցան ի վերայ աշխարհիս Հայոց. որոց էին գլխաւորք Օթման եւ Օգբայ: Եւ իբրեւ հասին ի սահմանս Հայոց՝ յերիս բաժանեալ առաջս՝ սփռեցան յասպատակս իւրեանց: Առաջ մի հատեալ ընդ կողմն Վասպուրական աշխարհին՝ առին զաւանս եւ զամրոցս որ մինչեւ ի Նախջաւան քաղաք. եւ առաջ մի ընդ կողմն Տարօնոյ: Եւ միւս առաջ հասեալ ի Կոգովիտ՝ պաշարէին զամրոցն Արծափաց»: Այնուհետև Ղևոնդը պատմել է ամրոցը գրավելուց հետո թշնամու կողմից գործած ոճրագործությունների, իսկ հետո Թեոդորոս Ռշտունու գլխավորած Հայոց զորքի կողմից նրանց ջախջախվելու մասին[27]: Սեբեոսի և Ղևոնդի հաղորդումների համադրությունը ցույց է տալիս, որ Ղևոնդը թեև գիտեր արաբական զորքի երեք ջոկատների բաժանվելու մասին, սակայն նա նշել է միայն այն վայրերը, որոնք համապատասխանում էին Սեբեոսի տվյալներին երկրորդ զորախմբի երթուղու

վերաբերյալ, դրանք լրացնելով Տարոնի մասին հիշատակությամբ: Անհրաժեշտ է նշել, որ Կոգովիտը, որը Այրարատի գավառներից էր, այդ նահանգը ներխուժած արաբական առաջին զորախմբի երթուղու վրա չէր գտնվում: Այսպիսով արաբական երկրորդ զորախմբի երթուղին հետևյալն էր. ըստ Սեբեոսի՝ «կողմանք Սեպհական գնդին» - Հերևան - Կոգովիտ, ըստ Ղևոնդի՝ «կողմն Վասպուրական» - «կողմն Տարօնոյ» - Կոգովիտ:

Արաբական զորախումբը «Հէրեւան» էր հասել, ըստ Սեբեոսի, «Սեպհական գնդի կողմերը» (Վասպուրական) ասպատակելուց հետո: Քանի որ Սեբեոսի և Ղևոնդի հաղորդումներում առաջին («Սեպհական գնդի կողմեր», «կողմն Վասպուրական») և երրորդ (Կոգովիտ) պատմաաշխարհագրական տեղեկությունները նույնն են, մնում է միայն հետևեցնել, որ «Հէրեւանը» պետք է գտնվեր «Տարոնի կողմերում» («կողմն Տարօնոյ»): Խորենացու և նրան շարունակող Շիրակացու «Աշխարհացոյց»-ից հայտնի է. «Տարուբերան որ է Տարօն» («Տարուբերան [որ է կողմն Տարաւնոյ])[28]: Հ. Հյուբշմանը, գրել է որ եթե Տարուբերանին (կամ Տուրուբերան) տրվեր անուն՝ առանց այս կամ այն գավառը թվելու, ապա մերձավորապես կասվեր «կողմն Տարաւնոյ», վասն զի Տարոն ամենեն ծանոթ էր» և այնուհետև, որպես փաստարկ նշել է Փավստոս Բուզանդի երկի հետևյալ տողերը. «յԱրշամունեաց տեղացն ի նահանգէն Տարօն գաւառէն»[29]: Այսպիսով, եթե «կողմն Տարաւնոյ» արտահայտությունը գործածվել է Տուրուբերան նահանգի (Տարոն գավառը նրա գավառացուցակում նշված է երրորդ տեղում) իմաստով, ուրեմն «Հէրեւանը» պետք է փնտրել Տուրուբերանում: Քանի որ արաբական զորախմբի երթուղին անցնում էր Վասպուրականով և Տուրուբերանով, ուրեմն Այրարատ նահանգի Կոգովիտ գավառին այն հասել էր Տուրուբերան նահանգի Տարոն, Հարք և Ապահունիք գավառներով: Դատելով Ասողիկի երկում հանդիպող մի տեղանունից, կարելի է եզրակացնել, որ «Հէրեւանը» գտնվում էր Հարքում: Գրելով Դավիթ Անհաղթի (V դ.) ծննդավայրի մասին, Ասողիկը նշել է. «Դաւիթ աշակերտ Մովսիսի ի Հարք գաւառէ ի Հերեան գեղջէ»[30]: «Հէրեւան» և «Հերեան» ընթերցվածները վերաբերում են միևնույն բնակավայրին[31]:

Ասպիսով, «Սեպհական գնդի կողմերը» (Վասպուրական) ներխուժած արաբական զորախումբը, ասպատակելով Վանա լճից հարավ և արևմուտք ընկած շրջանները, ներխուժեց Տուրուբերան («կողմն Տարօնոյ»): Այն անհաջողության մատնվեց Հարք գավառի Հերևան (Հերեան) բերդի մոտ: Այնուհետև, գալով Կոգովիտ և չկարողանալով գրավել Որդսպուի բերդը, արաբական զորախումբը պաշարեց Արծափի բերդը: Պաշարվածներին Կոգովիտի Դարույնք բերդից օգնություն ուղարկելու կապակցությամբ Սեբեոսը հիշատակել է Սմբատ Բագրատունուն՝ Վարազ Սահակի որդուն:

Գ. Աբգարյանը քննել է Է. Դյուլորիեի, Ղ. Ալիշանի, Մ. Հովհաննեսյանի կարծիքները, որոնք գտնում էին, որ Սեբեոսի մոտ խոսքը պետք է Վարազ-

տիրոցի և նրա որդի Սմբատի մասին լինի: Գ. Աբգարյանը այնուհետև եզրակացրել է. «Արդ, եթե Արծափի պաշտպանները գնացել են հենց «ի Դարիւնս» և այնտեղ հանդիպել են Սմբատ Բագրատունուն՝ կնշանակի դա միևնույն Սմբատն է, Վարազտիրոցի որդին: Մենք «Վարազ-Սահակը» կսրբագրեինք «Վարազ-Տիրոց», եթե վստահ լինեինք, որ Վարազ-Տիրոցը չի կոչվել նաև Վարազ-Սահակ»[32]:

Ն. Ակինյանը և Յ. Մարքվարտը ենթադրում էին, որ Վարազտիրոցի եղբայրը Վարազ-Սահակն էր, որի որդու անունը նույնպես Սմբատ էր[33]: Սեբեոսի հաղորդումներից հետևում է, որ Քրիստափոր Բ Ապահունի (628-630) կաթողիկոսը («զոմն անապատական՝ յԱբրահամեան տանէ») Վարազտիրոցի իշխանության ժամանակ բազում խռովություններ հուզեց և իր չարախոսությամբ թշնամություն էր սերմանում Վարազտիրոցի և նրա եղբոր միջև. «Նա (Քրիստափորը - Է. Դ.) դիպաւ այր հպարտ եւ ամբարտաւան, որոյ լեզու իւր էր իբրեւ զսուր սուսեր: Սա բազում խռովութիւն յուզեաց եւ արկ սուր ի մէջ ընդ ասպետ եւ ընդ եղբայր իւր չարախաւսութեամբ»[34]: Ահա թե ինչու, հավանական է, որ Վարազտիրոցի Բյուզանդիա հեռանալուց հետո հայրենի կալվածքում մնացել էր նրա եղբայրը: Վարազտիրոցի մահից հետո՝ նրա մարմինը Տայքից բերեցին և թաղեցին տոհմական կալվածքում «առ հաւրն իւրում ի Դարիւնս»[35]: Վարազտիրոցի որդին՝ Սմբատ Բագրատունին, կայսեր հրամանով, որպես պատանդ գտնվում էր Թրակիայում: Ուրեմն, իրավացի են այն հետազոտողները, որոնք գտնում են, որ Արծափի պաշարման ժամանակ Դարույնքի իշխանը Վարազտիրոցի եղբոր՝ Վարազ-Սահակի որդի Սմբատ Բագրատունին էր: Թե՛ Վարազտիրոցը և թե՛ Վարազ-Սահակը իրենց հոր՝ Սմբատ Խոսրով Շում Բագրատունու անունով էին կոչել իրենց որդիներին:

Վարազ-Սահակի որդու՝ Սմբատ Բագրատունու կողմից Արծափի պաշարվածներին ցուցաբերած օգնությունը բավարար չէր: Միայն Թեոդորոս Ռշտունու գլխավորությամբ[36] վրա հասած Հայոց զորքը գլխովին ջախջախեց Արծափի բերդը պաշարած արաբական երկրորդ զորախումբը: Այս արշավանքի կապակցությամբ Սեբեոսը հիշատակել է միայն երկու արաբական զորավարների, որոնք գլխավորում էին այդ ջախջախված զորախումբը: Արաբական մյուս զորախմբի երթուղու մասին Սեբեոսը գրել է. «Իսկ այն զաւրն, որ ի կողմանս Այրարատեան, եհար սրով մինչեւ ի կողմանս Տայոց, Վրաց եւ Աղուանից, առ զաւար եւ զգերութիւն եւ եկն էանց ի Նախճաւան առ այն զաւր, որ մարտ եդեալ կռուէին ընդ բերդին Նախճաւանի: Բայց սակայն ոչ կարացին առնուլ զնա: Առին զբերդն Խրամայ եւ սատակէին զնոսա սրով, եւ զկանայս եւ զմանկունս գերի վարեցին»[37]: Այրարատյան կողմերը գնացած զորախումբը այնուհետև ներխուժել է Տայոց և, ապա Վրաց կողմերը: Այս երթուղու առնչությամբ հիշատակվող Աղվանքը վերաբերում էր երրորդ՝ Աղվանքի կողմերը ներխուժած արաբական զորքի անցած ճանա-

պարհին: Աղվանքից վերադարձած երրորդ զորախմբին էր միացել առաջին՝ Այրարատյան, այնուհետև Տայոց և Վրաց կողմերը ներխուժած և ապա վերադարձած և Նախիջևանի (Նախճավան) բերդը պաշարած զորախումբը: Կարելի է ենթադրել, որ արաբական առաջին զորախումբը գլխավորել էր Աբդ առ Ռահմանը (իր եղբոր Սալման իբն Ռաբիայի հետ միասին), իսկ երրորդը՝ Հաբիբը:

Այսպիսով, 647 թ. արաբական ներխուժումը Հայաստան նախորդ ասպատակություններից տարբերվում էր թե՛ տարածքային ընդգրկմամբ և թե՛ ուղղություններով, ներառելով նաև հարևան երկրների տարածքները: Հարձակմանը ենթարկված երկրները և հատկապես Հայաստանը սեփական ուժերով դիմակայեցին խալիֆայության զորքերին: Սասանյան Պարսկաստանը հոգեվարքի մեջ էր, իսկ Բյուզանդիան, որ դրանից մեկ տարի առաջ բավականին ակտիվորեն միջամտեց Հայաստանի գործերին, 647 թ. ոչնչով չօգնեց դիմակայելու արաբական լայնածավալ հարձակմանը: Սակայն հայ ժողովուրդը իր սեփական ուժերով դիմադրություն էր ցույց տալիս նվաճողներին: Ազատության և անկախության համար մղված պայքարում հայ ժողովրդի աննկուն կամքի դրսևորման արդյունքն էին խալիֆայության զորքերի պարտությունները Հերևանի, Որդսպուի, Արծափի և Նախիջևանի բերդի մոտ:

6. Հայ Առաքելական եկեղեցու միջոցառումները ժողովրդագրական վիճակի կայունացման և դավանանքային բնագավառներում

Վաղ միջնադարում Հայաստանի ազգաբնակչության բնական աճի վրա բացասաբար էին ազդում Պարսկաստանի, Բյուզանդիայի, այնուհետև Արաբական խալիֆայության նվաճումները, որոնց ընթացքում խաղաղ բնակչության մի մասը զոհվում էր կամ գերեվարվում, հայկական ռազմական ուժերը, դիմադրելով զավթիչներին, կորուստներ էին կրում, իսկ օտար տիրապետության հաստատմամբ հայ զինվորականության մի մասը տարվում էր նվաճող տերությունների հեռավոր ծայրամասերը, որտեղ զգալի կորուստներ էր կրում օտարի շահի համար մղվող կռիվներում: Այս ամենը բացասաբար էր ազդում Հայաստանի ռազմատնտեսական հզորության, ինչպես նաև ազգաբնակչության բնական աճի վրա: Դրությունը բարդանում էր զավթիչների կրոնական ճնշման հետևանքով, որը կարող էր հանգեցնել բնակչության հոգևոր ձուլմանը: Այսքանից պարզ են այն դրդապատճառները, որոնցով թելադրված էին Հայաստանի հոգևոր և աշխարհիկ գործիչների ձեռնարկումները՝ ուղղված երկրի ազգաբնակչության ներքին կյանքի պահպանմանը և կայսրության հոգևոր ճնշման նոր ալիքի դիմակայմանը:

Մ. Օրմանյանի կարծիքով VII դ. 40-ական թթ. Դվինում երկու ժողովներ են կայացել: Մեկը, համաձայն «Կանոնագիրք.Հայոց»-ի տեղի էր ունեցել Կոստանդին-Կոստաս Բ-ի գահակալության չորրորդ տարում, այսինքն՝ 645 թ.: «Յամի չորրորդի Կոստանդիանոսի կայսեր բարեպաշտ թագաւորի Հռոմոց այս գիր ի հաստատութիւն գրեցաւ ուղիղ կարգի եւ կանոնաց սրբոյ եկեղեցւոյ եւ առաջնորդաց եւ ժառանգաւորաց, հրամանաւ երանելւոյ կաթողիկոսին Հայոց Ներսէսի Շինողի եւ այլոց եպիսկոպոսաց, որոց անուանքն դրոշմեալ կան գրով ի կատարման կանոնացդ, գլուխս ԺԲ...»[1]: Դվինի ժողովի է. կանոնը կոչված էր կարգավորելու ընտանեկան և ամուսնական հարաբերություններում՝ պատերազմների և գերեվարությունների հետևանքով ստեղծված ծանր վիճակը: «Այլ վասն մերոյ մեղաց յորժամ աշխարհս գերեցաւ ի թշնամեաց, բազում արք եւ կանայք ի գերութեան էին, նոցա ամուսինքն առանց վարդապետին հրամանի կանայս առին եւ արանց եղեն: Վասն այնպիսեացն սահմանեցաք այսպէս. թէ յառաջ քան զէ ամն մինչ զուգակիցն ի գերութեան էր եւ նոքա յանդգնութեամբ այլ ամուսին առին, այնպիսեացն ամուսնութիւնն ի պոռնկութիւն է. ե՛ւ գան ե՛ւ պատուհաս կրեսցեն, յընչից եւ ի ստացուածոց նոցա հրամայեցաք առնուլ վարդապետաց եւ յաղքատս բաշխել, եւ զնոսա զատուցանել ի միմեանց եւ ապաշխարել է ամ, իսկ յետ է ամին եթէ ամուսինքն դարձեալ լինին ի գերութենէն, անդրէն հրամայեցաք դառնալ յիւրաքանչիւր ամուսինս, ապա եթէ ոչ՝ կալցին զոր առինն. եւ նոքա որ դարձանն՝ աւրհնութեամբ այլ կանայս առցեն, եւ այլ արանց լիցին եւ կրկին ապաշխարութիւն ի վերայ եղիցի. իսկ որ համբերեցան զէ ամն, առցէ աւրհնութեամբ, առանց տուգանի եւ պատուհասի, եւ կրկին ապաշխարհութիւն ի վերայ եղիցի»[2]:

Հայ եկեղեցու այս որոշումները բխում էին Հայաստանի միասնական և անկախ պետականության վերականգնումով պայմանավորված գործընթացներից: Քանզի, ինչպես հետևում է ԺԲ գլխի նյութից. «...Ես՝ Ներսէս շնորհիւն Աստուծոյ նուաստ կաթողիկոս Հայոց, վասն վերագրեալ կանոնիս ամենայն աթոռակցաւք մերովք՝ սուրբ եպիսկոպոսաւք Հայոց ձեռնարկեալ կնքեցաք ըստ հրամանի եւ սահմանի Հոգւոյն Սրբոյ եւ ընտրելոց նորա:

Ա. Տէր Յովհաննէս Ոստան եւ Մարդպետական եպիսկոպոս.
Բ. Տէր Ներսէս Հարքայ եպիսկոպոս.
Գ. Տէր Քրիստոսատուր Բասենոյ եպիսկոպոս.
Դ. Տէր Իսրայէլ Տայոց եպիսկոպոս.
Ե. Տէր Յովհաննես Մարդաղայ եպիսկոպոս.
Զ. Տէր Յովհան Բզնունեաց եպիսկոպոս.
Է. Տէր Գրիգոր Արշարունեաց եպիսկոպոս.
Ը. Տէր Սեբէոս Բագրատունեաց եպիսկոպոս
Թ. Տէր Գրիգոր Խորխոռունեաց եպիսկոպոս.
Ժ. Տէր Սիմէոն Ռշտունեաց եպիսկոպոս.

ԺԱ. Տէր Իսրայէլ Վանանդայ եպիսկոպոս
ԺԲ. Տէր Թէոփիլոս Աշմունեաց (Արշ[ա]մունեաց) եպիսկոպոս
ԺԳ. Տէր Ասայել Ամատունեաց եպիսկոպոս.
ԺԴ. Տէր Գրիգոր Անձաւացեաց (Անձեւացեաց) եպիսկոպոս.
ԺԵ. Տէր Թէոդորոս Գնունեաց եպիսկոպոս.
ԺԶ. Տէր Յակովբոս Պալունեաց եպիսկոպոս.
ԺԷ. Տէր Սամուէլ Մեհնունեաց եպիսկոպոս:

Այս են սուրբ ժողովոյն [հարց] անուանք, որք ի Դուին ժողովեցան ի փառս ամենասուրբ Երրորդութեանն»: Դվինի այս ժողովում ներկա էին ամբողջական Հայաստանի հոգևոր հայրերը Ներսես կաթողիկոսի գլխավորությամբ[3]:

Բյուզանդական կայսրությունը նույնիսկ այնպիսի դժվարին ժամանակաշրջանում, երբ մի շարք պարտություններից հետո ստիպված էր խալիֆայության հետ եռամյա (649-652) խաղաղության պայմանագիր կնքել[4], կրկին ցուցաբերեց քաղաքական կարճատեսություն՝ առաջ քաշելով բյուզանդական պաշտոնական եկեղեցու ծեսով հայերի հաղորդվելու հարցը: Այսինքն, հայերին առաջարկվում էր ընդունել Քաղկեդոնի ժողովի դավանաբանական բանաձևը[5]: Սեբեոսը գրել է. «Այլ ոչ դադարեաց վիշապն այն ապստամբ, այլ թէ եւ աստուածամարտ լինել կամեցաւ յիւրոց խորամանկութենէ. այլ երկնէր յարուցանել հալածանս ի վերայ եկեղեցացն Հայաստանեայց աշխարհին: Քանզի յամս Կոստանդինայ թագաւորի թոռին Երակլի արկ ի գործ զխորամանկութիւն իւրոյ չարութեանն, արբանեակս իւր կալաւ զգաւրս Յունաց որ ի Հայաստան աշխարհին: Քանզի ո՛չ երբէք ընդունէին Հայք զՀոռոմն ի հաղորդութիւն մարմնոյ եւ արեան Տեառն»: Բյուզանդացիները իրենց թագավորին եւ հայրապետին բողոքով դիմել էին. «Իբրեւ զանաւրէնս համարեալ եմք յաշխարհիս յայսմիկ: Քանզի անարգանս համարին Քրիստոսի Աստուծոյ զժողովն Քաղկեդոնի եւ զտումարն Լեւոնի, եւ նզովեն զնոսա»[6]:

Մինչ 647 թ. արաբական ներխուժումը, ինչպես հետևում է Սեբեոսի հաղորդումներից, Հայաստանում բյուզանդական զորք արդեն չէր մնացել: Այնպես որ այն այստեղ պետք է հայտնված լիներ ավելի ուշ: Նվաճողի հոգեբանության դրսևորումն էր բյուզանդացիների նամակը իրենց կայսրին: Այդ բողոքը ուղղակի պատրվակ էր խառնվելու Հայաստանի ներքին գործերին: Ուստի Կոստաս Բ-ը և Կոստանդնուպոլսի պատրիարք Պողոս Բ-ը (641-654) հրաման արձակեցին: «Եւ գրեն հրովարտակ առ Հայս, զի միաբանութիւն հաւատոյ արասցեն ընդ Հոռոմի, զի մի՛ խոտեսցեն զժողովն եւ զտումարն զայն: Եւ էր անդ այր մի ի Բագրեւանդ գաւառէ, ի Բագաւան գեղջէ, որ էր ուսեալ զարուեստ փիլիսոփայութեան, եւ անուն նորա Դաւիթ: Զնա հրամայեաց արձակել ի Հայս, զի երթեալ ի բաց հատցեն զհակառակութիւնն»[7]:

Կոստաս Բ-ի և նրա կողմից լիազորված Դավիթ Բագրևանդացու ճիգե-

րը իրենց նպատակին չհասան: Կայսրությունը այս ժամանակաշրջանում բացարձակ անհաջողության հասավ բյուզանդական պաշտոնական եկեղեցու դավանանքը, նույնիսկ *միակամության* քողի տակ, Հայաստանին պարտադրելու գործում: Հայ եկեղեցական հայրերը և պետական գործիչները, որոնք գլխավորեցին Դվինի 649 թ. ժողովը վճռականորեն հետ մղեցին Բյուզանդիայի դավանանքային ոտնձգությունների նոր ալիքը: «Եւ ժողովեցան ամենայն եպիսկոպոսունքն եւ նախարարքն Հայոց ի Դուին առ քրիստոսասէր կաթուղիկոսն Ներսէս եւ առ բարեպաշտ զաւրավարն Հայոց Թէոդորոս Ռշտունեաց տէրն: Եւ տեսին զիրամանս թագաւորին, եւ լուան զբանս փիլիսոփային, որ ուսուցանէր զԵրրորդութիւնն բաժանմամբ ըստ տումարին Լեւոնի: Եւ իբրեւ լուան՝ չառին յանձն փոխել զճշմարիտ վարդապետութիւնն սրբոյն Գրիգորի՝ ըստ տումարին Լեւոնի: Հաճոյ թուեցաւ ամենեցուն առնել թղթոյն պատասխանի»: Սեբեոսի երկի հաջորդ շարադրանքից երևում է, որ դավանության թուղթը չէր ուղարկվել կայսրին, որի մասին նա տեղյակ դարձավ միայն մի քանի տարի անց, երբ ժամանեց Հայաստան[8]:

Հայ եկեղեցու ազգապահպան գործողությունները[9], երկրում ստեղծված իրավիճակում, համահնչուն էին Հայաստանի պետականության և տարածքային ամբողջականության վերականգման գործընթացին:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

1. Հայ-բյուզանդական հարաբերությունները Սասանյանների պետության մայրամուտին

1. Սեբեոս, էջ 131: Պատմիչը նկատի ունի 591 թ. սահմանի վերականգնումը: Ա. Տեր-Ղևոնդյանը նշել է, որ թեև սահմանները Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև մնացել էին նույնը, այնուամենայնիվ, քաղաքական պայմանները այլ էին... «Հայաստանի ոչ բյուզանդական, ոչ էլ պարսկական մասերում վիճակը հաստատուն չէր» (Տեր-Гевондян А., նշվ. աշխ., էջ 20-21): Ա. Ստրատոսը, հետևելով Ա. Ֆրոլովին, գտնում էր, որ 629 թվականի պայմանագրի հիմնական կետերն էին 591 թ. սահմանների վերականգնումը և բոլոր գերիների ու պատանդների ազատագրումը, և, որ ի սկզբանե Խաչափայտի վերադարձնելու հարցը չէր դրվել (Frolov A., La Vraie Croix et les Expeditiones d'Heraclius en Perse - REB, h. I, 11, Paris, 1953, Stratos A. նշվ. աշխ., h. I, էջ 230-231): Այնինչ Սեբեոսը պատմում է, որ Կավատ Բ-ի (628 թ.) մահից հետո, երբ պարսից գահին նստեց նրա որդին՝ մանուկ Արտաշիր Գ-ն (628-629), Հերակլը բանակցեց Խոռեամի հետ, խոստանալով նրան օգնել գահին տիրանալու գործում: Փոխարենը կայսրը ցանկացավ ետ ստանալ Խաչափայտը: Խոռեամը, գրավելով Տիգբոնը «Կենսաբեր Խաչը» ուղարկեց Հերակլին (Սեբեոս, էջ 130):

2. Բյուզանդական կայսրությունը, չնայած հաղթանակող կողմն էր, պատերազմից բավականին թուլացած դուրս եկավ, ինչի հետևանքով Արաբական խալիֆայությունից քիչ ժամանակ անց պարտություններ կրեց (Беляев Е. А., Арабы, ислам и Арабский халифат в раннем средневековье, М., 1966, էջ 136-139, Hitti Ph. History of the Arabs, London, 1953, էջ 147-149):

3. Фрай Р., նշվ. աշխ., էջ 319-326:

4. Սեբեոս, էջ 129, 132: Պատմիչի հաղորդման համաձայն, «կոչէ արքայ Կաւատ զՎարազտիրոց զորդի Սմբատայ Բագրատունւոյ Խոսրով Շում կոչեցելոյ, եւ տայ նմա զիշխանութիւն տանուտէրութեանն. առնէ զնա մարզպան եւ արձակէ ի Հայս հանդերձ ամենայն ընչիւք հայրենի, զի զաշխարհն ի շինութեան պահեսցէ» (նույն տեղում, էջ 128-129): Այսպիսով, փաստորեն, վերականգնվում էր մոտ 150 տարի առաջ Նվարսակի դաշնագրով (484 թ.) Պարսկաստանի կողմից ճանաչված Հայաստանի և Հայոց գերագույն իշխանի կարգավիճակը՝ տանուտերությունը: Ավելին, ինչպես ժամանակին Վահան Մամիկոնյանն էր Տանուտեր Հայոց ճանաչվել, այնպես էլ այժմ՝ այդ կարգավիճակով հանդես եկավ Վարազտիրոց Բագրատունին: Սասանյանների գահի երերուն վիճակը Կավատին ստիպեց ճանաչել Վարազտիրոցի իշխանությունը Արևելյան Հայաստանում:

5. Նույն տեղում, էջ 131: Յ. Բարթիկյանը ենթադրել է, որ Թեոփանեսի հիշատակած Հերակլի զորավարներից Մեζέζιον-ը պետք է հայազգի Մժեժ Գնունին լիներ (Բյուզանդական աղբյուրներ, Դ, էջ 240, ծան. 225), որը Պարսկաստանի տարածքում մասնակցել է Հերակլի ռազմական գործողություններին: Ա. Տեր-Ղևոնդյանի կարծիքով, Մժեժ Գնունին և հատկապես նրանից հետո՝ Դավիթ Սահառունին ոչ միայն հայ իշխաններ էին, այլև ընտրվել էին հայերի կողմից, այնուհետև նրանց հաստատել էր կայսրը (Տեր-Гевондян А., նշվ. աշխ., էջ 20, 54):

Հայերի կողմից Մժեժ Գնունու ընտրվելու մասին Սեբեոսի մոտ տեղեկություն

չկա: Պատմիչի հաղորդումներից երևում է, որ Մժեժը Արևմտյան Հայաստանում կայսեր կողմից նշանակված հայազգի այնպիսի կառավարիչ էր, ինչպիսին էին Հովհան Պատրիկը, Հերակլը (Հերակլ կայսեր հայրը), Սորմենը (Սեբեոս, էջ 105):

6. Նույն տեղում, էջ 132: Ատրպատականում էր գտնվում Պարսկաստանի հյուսիսային քուստակի կուսակալի նստավայրը (Հյուսիսային քուստակի մասին մանրամասն տես Колесников А. Иран в начале VII в., էջ 98-104):

7. Թվում է՝ թե 629 թ. Բյուզանդիան հնարավորություն ուներ առանց մեծ ճիգերի Հայաստանի արևելյան մասը ևս իր քաղաքական ոլորտը ընդգրկել, սակայն, կայսրությունը, որքանով էլ տարօրինակ է, այդ քայլին չդիմեց թերևս այն պատճառով, որ Հայաստանը մնա բաժանված վիճակում:

8. Սեբեոս, էջ 129: Վարազտիրոցի եղբայրը ապրում էր հայրենի կալվածքում՝ Կոգովիտում, որն այս ժամանակ Հայաստանի բյուզանդական մասում էր:

9. Ատրպատականի իշխանը ուղարկեց «զեղբայր իւր դարիքպետ, զի երթեալ ձմերեսցէ ի Դբլնի, եւ ապա կապեսցեն զասպետ եւ առեալ գնասցեն» (նույն տեղում, էջ 132): Ս. Մալխասյանցի կարծիքով այստեղ խոսքը Խոռոխ Որմիզդի մասին էր, սակայն Գ. Աբգարյանը իրավացիորեն նշել է, որ պատմիչը նկատի ուներ Ռոստոմին, քանի որ նախորդ գլխում արդեն պատմել էր Բորն թագուհու հրամանով Խոռոխ Որմիզդի սպանության մասին (տես Սեբեոս, էջ 130, 298, ծան. 454): Գ. Աբգարյանի կարծիքով, Ռոստոմի եղբայրը Սեբեոսի կողմից հետագա դեպքերի կապակցությամբ հիշատակված Խոռոխազատն էր, որը Ատրպատական եկած պարսկական զորքերի կողմից զորավար էր ընտրվել (նույն տեղում, էջ 137): Որպես Ռոստոմի եղբայր հիշատակված է Բինդուվանը, որը զոհվեց Կադիսիայի ճակատամարտում (տես Колесников А. И. Завоевание Ирана арабами, М., 1982, էջ 87, 88, 92):

10. Վարազտիրոցը հեղինակություն ուներ նաև պարսկական զինվորականության մոտ. «Զի ամենայն զաւրն պարսից սիրէին զասպետ՝ մի ոմն յիշխանաց անտի մեծ ազդ արար նմա եւ ասէ. «Տես «զանձն քոյ, զի վաղիւ կապելոց են զքեզ» (Սեբեոս, էջ 132):

11. Հերակլը Վարազտիրոցին երդվել էր. «Կացցես առ իս սակաւ ժամանակս, ապա արձակեցից զքեզ պատուով մեծաւ յերկիր քոյ» (Նույն տեղում):

12. Նույն տեղում:

13. Орбели И. А., Багаванская надпись 639г. и другие армянские ктиторские надписи VII века - «Христианский Восток», т. II, вып. I, СПб, 1913, էջ 111:

14. Սեբեոսի երկի Խ և ԽԱ գլուխների պատմական նյութը (մինչ Վարազտիրոցի և Հերակլի հանդիպումը) իրադարձությունների հետևյալ շարքն է ներկայացնում. Կոմիտաս կաթողիկոսը մահացավ 628 թ., այնուհետև կաթողիկոսներ էին Քրիստափորը և Եզրը (630-641), 628 թ. յոթ ամիս Պարսկաստանում գահակալեց Կավատ Բ-ն, այնուհետև՝ Արտաշիրը (628-629), որին սպանեց Խոռեամը: Վերջինս 629 թ. Խաչափայտը ուղարկեց Հերակլին: Խոռեամի սպանվելուց հետո գահակալեց Բորնը (Բորանը) (629-630), որի հրամանով սպանեցին Խոռոխ Որմիզդին: Այնուհետև Պարսկաստանում իրար հաջորդեցին Խոսրով Գ-ն (630-631), Ազարմիդուխտը, Որմիզդ Ե-ն, Կավատի որդին Հազկերտ Գ-ն (631/2-651): Վերջինիս գահակալության սկզբում պարսկական զորքը երեք մասի բաժանվեց. «Զաւր մի այն՝ որ ի պարսից եւ ի յարեւելից կողմանէ, եւ զաւր մի Խոռեմայ՝ որ յԱսորեստանեայց կողմանէ, եւ զաւր մի՝ որ յԱտրպատական կողմանէ: Բայց թագաւորութիւն նորա էր ի Տիզբոն, եւ ամենեքին միաբան պատուէին զնա միաբանութեամբ» (էջ 130): Հերակլը 630 թ. Խաչափայտը տեղափոխում է Երուսաղեմ, այնուհետև ժամանում է Միջագետք Ասորվոց, որտեղ նրան են ներկայանում Եզր կաթողիկոսը, այնուհետև՝ Վարազտիրոցը: Ըստ Ստ. Օրբելյանի, կայսեր հանդիպումը Եզրի հետ տեղի էր ունեցել Կարինում (Օրբելյան Ստ., էջ 114): Ս. Մելիք-

Բախշյանի կարծիքով 633 թ. Վարազտիրոցը փախավ Բյուզանդիա: Հետազոտողը այդ բացատրում է Սասանյանների դիրքերի թուլացմամբ և Բյուզանդիայի ուժեղացմամբ (Մելիք-Բախշյան Ս., Հայաստանը VII-IX դդ., Երևան, 1969, էջ 26): Սակայն նա հաշվի չի առել Սեբեոսի հաղորդումը Վարազտիրոցի դեմ գործած օտար ուժերի մասին: Վարազտիրոցի հեռանալը Հայաստանից պայմանավորված էր այն դիմադրությամբ, որ օտար տերությունները ցուցաբերում էին Վարազտիրոցի միավորիչ քաղաքականության հանդեպ:

15. Ն. Գարսոյանը, գրելով Վարդան Մամիկոնյանի գլխավորած 451 թ. ապստամբության մասին, նշել է. «Asizable pro-Persian party, including the aspet Varaz-Tirotc' (Tirots) Bagratuni, some of the Arcruni, and a number of other nobles, listed by Lazar as well as Elise, clearly existed in the country and opposed the policies of Vardan Mamikonean and his supporters» (Nina Garsoïan. The Marzpanate (428-652), տես The Armenian People from Ancient Times to Modern Times. Vol. I, Edited by R. G. Hovannisian, New York, 1997, էջ 100): Սակայն V դարի սկզբնաղբյուրներում չի հիշատակված Վարազ-Տիրոց Բագրատունին, քանզի նա ապրել է VI դ. վերջին քառորդում-VII դ. առաջին կեսում:

16. Византийские исторические сочинения, էջ 152, 160:

17. Սեբեոս, էջ 133: Ա. Ստրատոսը վստահություն չի ընծայել Սեբեոսի հաղորդման այն մասի վերաբերյալ, ուր ասվում է, որ դավադիրները կայսեր որդու և եղբորորդու գլխավորությամբ նպատակ ունեին սպանել Հերակլին, սակայն ընդունում է նրանց մարմնական պատժի ենթարկելուն վերաբերող տեղեկությունը: Նրա մեկնաբանմամբ դավադրությունը կազմակերպվել էր միայն Հերակլին գահից զրկելու նպատակով (Stratos A., նշվ. աշխ., հ. II, էջ 137): Հետազոտողը ոչ մի հիմնավոր փաստարկ չի բերել Սեբեոսի հաղորդումը հերքելու համար, ուստի նրա քննադատությունը անհիմն է:

18. Հերակլը տեղյակ էր դավադրության յուրաքանչյուր մասնակցի վարքագծի մասին, ուստի «արձակեալ պատգամ առ ասպետ՝ ասէ. «Փոխանակ զի արարեր դու այդպիսի առ իս, եւ ոչ կամեցար արկանել զձեռն քոյ յարիւն իմ եւ յարիւն որդւոց իմոց, եւ ես որ արկից զձեռն իմ եւ քեզ եւ յորդիս քոյ: Բայց Ե՛րթ կա՛ց ուր եւ հրամայեցից քեզ, եւ արարից ի վերայ քոյ ողորմութիւն»: Եվ, չնայած կայսեր մերձավորները պահանջում էին մահապատժի ենթարկել Վարազտիրոցին, Հերակլը բավարարվեց միայն նրանով, որ նրան իր ընտանիքի հետ աքսորեց (Նույն տեղում):

19. Նույն տեղում: Ֆ. Մակլերը, Գ. Աբգարյանը, ելնելով Սեբեոսի այն հաղորդումից, որ Թեոդորոս զորավարը (չշփոթել Թեոդորոս Մագիստրոսի հետ) Կոստանդ կայսրից խնդրել էր «առնել ողորմութիւն այնոցիկ, զորս էր աքսորեալ յԱփրիկէ: Եւ մանաւանդ վասն ասպետի, որդւոյ Սմբատայ Խոսրով Շում կոչեցելոյ» (էջ 143), եզրակացրել են, որ պատմիչի նշած աքսորավայրը կարող էր լինել Աֆրիկան (Histoire d'Heraclius par l'eveque Sebeos. Traduite de l'armenien et annotee par F.Macler, Paris, 1904, էջ 93, ծան. 2, Սեբեոս, էջ 299-300, ծան. 459): Խոսքը կարող է լինել Աֆրիկայի միջերկրածովյան կղզիներից մեկի մասին:

20. Սեբեոս, էջ 133:

21. Նույն տեղում:

22. Պատմիչի շարադրանքից հետևում է, որ Հերակլը «առնէ ըստ խնդրոյ իշխանացն զնա իշխան ի վերայ ամենայն աշխարհացն, եւ տայ նմա պատիւ կիւրապաղատութեանն, եւ հաստատէ զնա ի ծառայութիւն իւր, եւ կալեալ զիշխանութիւնն ամս Գ ամենայն ճոխութեամբ մեծապէս» (նույն տեղում):

Հնարավոր է, որ Մժեժը իշխանության համար մղվող պայքարում հաղթող դուրս գալու համար օգտվեց իրավիճակից և, ներկայացնելով Դավթին որպես դավադրության համախոհ, փորձեց նրան հեռացնել Հայաստանի քաղաքական

ասպարեզից: Սակայն Մժեժը պարտվեց և սպանվեց, իսկ Հերակլ կայսրը ստիպված էր հաշտվել տեղի ունեցածի հետ և, որպեսզի Հայաստանը պահեր կայսրության քաղաքական ոլորտում, ճանաչեց Դավթի իշխանությունը, նրան շնորհելով տարբեր տիտղոսներ ու պատիվներ:

Մժեժի սպանությունը Ա. Ստրատոսը համարել է հայ միաբնակ ազնվականների դժգոհության հետևանք, որոնք ապստամբել էին նրա դեմ և Հերակլը, իբրև թե, ոչ միայն վախեցավ պատժել նրան սպանողներին, այլև դավադրության ղեկավարին՝ Դավիթ Սահառունուն Մժեժին հաջորդ նշանակեց, որպես Արմենիակոն թեմի կառավարիչ (Stratos A., նշվ. աշխ., հ. I, էջ 302): Իր երկի երկրորդ հատորում Ա. Ստրատոսը նշել է, որ ինքը Ա հատորում սխալվել էր, քանզի Դավիթ Սահառունին նշանակվել էր «նախկին պարսկական Հայաստանի իշխան» (Stratos A., նշվ. աշխ., հ. II, էջ 138): Այնուամենայնիվ հետազոտողը վրիպել է, քանզի, ինչպես հետևում է Սբեոսի հաղորդումներից, Մժեժ Գնունին Արևմտյան Հայաստանի («ըստ ասացելումն սահմանի», էջ 131) կառավարիչն էր, այլ ոչ թե Արմենիակոն բանակաթեմի, իսկ Դավիթ Սահառունին ճանաչվել էր «Հայոց իշխան», որի իշխանությունը տարածվում էր Հայաստանի վերամիավորված արևմտյան և արևելյան մասերը ընդգրկող ողջ տարածքում:

23. Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 86, 88:

24. Орбели И., նշվ. աշխ., էջ 114, 132-136. Մ. Օրմանյանը նշել է, որ Դավիթ Սահառունին կառավարում էր Հայաստանի բյուզանդական մասում 635-638 թթ. (նշվ. աշխ. էջ 703): Մ. Դարբինյան-Մելիքյանը, գրել է, որ Խոսրով Բ-ն Դավիթ Սահառունուն նշանակեց Պարսկաստանի կառավարիչ, իսկ, երբ Խոսրովի և Հերակլի միջև պատերազմը վերջինիս համար սպառնալից բնույթ ստացավ Դավիթը փախավ Կոստանդնուպոլիս և այնուհետև 635-638 թթ. Հայաստանի բյուզանդական մասի կառավարիչ դարձավ (Иоаннес Драсханакертци. История Армении. Перев. с древнеарм., вступ. статья и коммент. М. О. Дарбинян-Меликян, Ереван, 1986, էջ 290, ծան. 4):

25. Ասողիկ, էջ 85: Ըստ Սեբեոսի, Խոսրով Բ-ը Սմբատին տվեց «զմարզպանութիւն երկրին Վրկանայ» (էջ 96): Ասողիկը վերոհիշյալ պարբերությունում հստակ սահմանազատել է «մարզպան» և «հազարապետ» տերմինները:

26. Սեբեոս, էջ 71: «Հազարապետութեան» գործակալությունը գոյություն ուներ հին Հայոց թագավորության ժամանակներից: Ինչպես դիտարկել է Հ. Մանանդյանը, «հազարապետի» պարտականությունն էր աջակցել երկրի շինարարական աշխատանքներին և շինական տնտեսության զարգացմանը, քանի որ այդ գործակալությանը հանձնարարված է եղել արքունի երկրի տնտեսական բարեկարգման և գյուղացիական գործերի վարչությունը: Գիտնականը հետազոտելով Կորյունի և Ղազար Փարպեցու երկերը, նշել է, որ «հազարապետութեան» պաշտոնը գոյություն է ունեցել ոչ միայն Արշակունյաց թագավորության, այլև մարզպանության ժամանակ (Մանանդյան Հ., Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1934, էջ 69-70):

27. Орбели И., նշվ. աշխ., էջ 132 (տես նաև Избранные труды, Ереван, 1963, էջ 395-401), Գարեգին վարդապետ (Հովսեփյան Գ.), Քարտէզ հայ հնագրութեան.- «Շողակաթ», Ա, Վաղարշապատ, 1913, էջ 173-174: Կ. Յուզբաշյանը ընդունելով, որ Դավիթ Սահառունին Հայոց իշխան դարձավ Վարազտիրոցից հետո և Հայոց ինքնիշխանության առաջին ներկայացուցիչն էր, միևնույն ժամանակ նշել է, որ Ասողիկը սխալ է ներկայացրել Որմիզդին որպես Խոսրովի որդի, քանի որ 631-632 թթ. Պարսկաստանում թագավորում էր Որմիզդ Ե-ն: Ուստի, հետազոտողը կարծել է, թե պատմիչի տեքստում առկա է ժամանակագրական բաղարկություն (Юзбашян К., Армянские государства, էջ 21): Սակայն Ասողիկի հաղորդումը ան-

հրաժեշտ է ճիշտ հասկանալ, քանի որ նա իր շարադրանքում ժամանակագրորեն տարազատել է Դավիթ Սահառունու հազարապետության սկիզբն (որը համընկնում էր Խոսրով Ա Անուշիրվանի (531-579) որդու Որմիզդ Դ-ի) և իշխանության (VII դ. 30-ական թթ.) վերջին վերաբերող տեղեկությունները:

28. Վ. Իսկանյանի կարծիքով, Դավիթ Սահառունին մինչև 635 թ. Արևելյան Հայաստանի մարզպանն էր, իսկ մինչ 638 թ.՝ Արևմտյան Հայաստանի կառավարիչը: Ա. Տեր-Ղևոնդյանը քննադատել է Վ.Իսկանյանին, գրելով թե նրա հոդվածում Դավիթ Հայը նույնացված է Դավիթ Սահառունու հետ (Тер-Гевондян А., նշվ. աշխ., էջ 23): Սակայն Վ. Իսկանյանը Դավիթ Սահառունուն, զորավար Վաղենտին Արշակունուն (Սեբեոս, էջ 140-143), Դավիթ Հային և զորավար Վաղենտինին («Анонимная сирийская хроника 1234г.», էջ 287-288) տարբեր անձնավորություններ է համարել: Նա համաձայն չէր Միքայել Ասորու տեքստի հայերեն լեզվով հրատարակիչների այն կարծիքի հետ, ըստ որի Դավիթ Հայը նույն ինքը Դավիթ Սահառունին էր, իսկ զորավար Վաղենտինը՝ զորավար Վաղենտին Արշակունին (Միքայել Ասորի, էջ 311, ծան. 3, էջ 312, ծան.1): Վ. Իսկանյանը նշել է, որ Դավիթ Սահառունին և զորավար Վաղենտին Արշակունին գործել են տարբեր ժամանակներում, իսկ անհրաժեշտ փաստերի բացակայության հետևանքով դժվար է պարզել Դավիթ Հայի անձնավորությունը (Իսկանյան Վ. Կ., Հայ-բյուզանդական հարաբերությունները VII դ.՝ արաբական առաջին արշավանքների ժամանակ, - ՊԲՀ, № 4, 1971, էջ 70-75): Զորավար Վաղենտինը հետագայում սպանվեց արաբների կողմից Կիլիկիայում (Միքայել Ասորի, էջ 312), իսկ զորավար Վաղենտին Արշակունին մահապատժի ենթարկվեց Կոստանդնուպոլսում (Սեբեոս, էջ 143): Ա. Ստրատոսի կարծիքով Սմբատ Բագրատունուց հետո Դավիթ Սահառունին մարզպան էր պարսկական Հայաստանում 601-625 թթ. (Stratos A., նշվ. աշխ., հ. I, էջ 62): Նման կարծիքը զուրկ է աղբյուրագիտական հիմքից:

29. Սեբեոս, էջ 133:

30. Hitti Ph., նշվ. աշխ., էջ 148, Беляев С., նշվ. աշխ., էջ 136-138:

31. Հ. Բարթիկյանը գրել է, որ, ըստ դե Գուեի, «Եդեսիան պետք է ուղղել «Եմեսա» (այժմ՝ Հոմս): Ճիշտ ընթերցումը հանդիպում է Թեոփանեսի ժամանակագրության մի շարք ձեռագրերում, թեև Անաստասիոս Բիբլիոթեկարիոսի թարգմանության մեջ սխալ Edessa ընթերցումն է հանդես գալիս» (Բյուզանդական աղբյուրներ, Դ, էջ 247, ծան. 298): Այնուամենայնիվ, Հ. Բարթիկյանը ճիշտ է վարվել տեքստում պահպանելով «Եդեսա» անվանումը: Ինչ վերաբերում է Եմեսային, ապա Թեոփանեսի տեքստի հաջորդ նախադասությունում այն հիշատակվել է սակելլարիոս Թեոդոսի վերոհիշյալ ռազմական գործողությունների կապակցությամբ:

32. Ենթադրվել է, որ հայկական գունդը Վահան Խորխոռունու գլխավորությամբ հերակլը տեղափոխեց Դամասկոսի շրջան՝ արաբների դեմ կռվելու համար (Мюллер А. История ислама, т. I, СПб, 1895, էջ 282, Մելիք-Բախշյան Ս. Հայաստանը VII-IX դդ., Երևան, 1968, էջ 231): Թեոփանեսի հիշատակած Վահանին խիստ կասկածելի է նույնացնել Վահան Խորխոռունու հետ, քանի որ, ըստ Սեբեոսի, վերջինս մասնակցել էր հերակլի դեմ կազմակերպված դավադրությանը և աքսորից վերադարձել էր Կոստանդին կայսեր (641-668) գահակալության հինգերորդ տարում (Սեբեոս, էջ 143), այսինքն՝ 646 թ.: Այնինչ Թեոփանեսի հիշատակած Վահանին ապստամբած զորքը, կայսր հռչակեց, որը, սակայն, Յարմուկի ճակատամարտում զոհվեց:

33. Theoph. Chron., I, էջ 337:

34. Սեբեոսը պահպանել է արաբների պահանջագիրը ուղղված հերակլին («Եւ ամենայն մնացորդք ժողովրդեան որդւոցն Իսրայելի ժողովեալ միաբանե-

ցան ի միասին, եւ եղեն զաւր մեծ: Եւ եղեւ յետ այնորիկ արձակեցին պատգամս առ թագաւորն Յունաց, եւ ասեն այսպէս. «Հաւր մերում Աբրահամու ետ Աստուած զերկիրդ զայդ ի կալուած ժառանգութեան եւ զաւակի նորա յետ նորա: Եւ մեք եմք որդիք Աբրահամու. շատ լիցի քեզ ունել զերկիրդ մեր. ի բաց թող խաղաղութեամբ, եւ մեք ոչ եկեսցուք յերկիր քոյ. ապա թէ ոչ՝ տոկոսիւք պահանջեսցուք ի քէն զկալեալն») և կայսեր պատասխանը, որով նա հրաժարվում էր ենթարկվել նրանց («Իսկ կայսրն ոչ առնոյր յանձն, եւ ըստ պատգամին պատշաճի ոչ առնէր նոցա պատասխանի, այլ ասէ. «Իմ է երկիրս, եւ քոյ վիճակ ժառանգութեան՝ անապատն. ե՛րթ գնա՛ խաղաղութեամբ յերկիր քոյ»): Այնուհետեւ կայսրը իր զորքին հրամայեց գնալ արաբների դեմ, սակայն «պատուիրեաց չառնել պատերազմ ընդ նոսա, այլ զգուշանալ անձանց, մինչեւ իւր այլ զաւրս գումարեալ արձակեսցէ յաւգնականութիւն նոցա» (Սեբեոս, էջ 135-136): Ա. Ստրատոսը հավաստի չի համարել այս հաղորդումը (Stratos A. նշվ. աշխ., հ. II, էջ 69): Սակայն կասկածելու առիթ չկա, քանզի Հերակլը իրոք ձգտում էր ժամանակ շահել և նրանց դիմակայել ավելի մեծ ուժերով:

35. Theoph. Chron., I, էջ 338:

36. Беляев С., նշվ. աշխ., էջ 138. Ենթադրվել է, որ Վահանը գլխավորում էր Արմենիակոն բանակաթեմի զորքերը (Jenkins R., Byzantium. The Imperial Centuries, London, 1966, էջ 39):

37. Ժ. Դեդեյանի կարծիքով. «640-ից 661 թթ. ոչ մի համաձայնություն հնարավոր չէր բյուզանդացիների և հայերի միջև, քանզի կայսրությունը Հայաստանը դիտում էր որպես բյուզանդական տարածք, իսկ հայերը, ի դեմս բյուզանդացիների, տեսնում էին օտարների» (Dedeyan G., Histoire des Armeniens. Privat, 1982, էջ 188):

37. Колесников А., Завоевание Ирана арабами, էջ 96.

38. Կադիսիայի ճակատամարտում «մեռան ամենայն նախարարքն գլխաւորք. մեռաւ եւ զաւրավարն Ռստամն (Ռոստոմ). սպանին եւ զՄուշեղ երկու քերորդովքն, եւ զԳրիգոր Սիւնեաց տէր միով որդւով» (Սեբեոս, էջ 137):

39. Ռոստոմը ժամանակին թշնամական գործողություններ էր ձեռնարկել Վարազտիրոցի հանդեպ: Ք. Պատկանյանը, հետազոտելով Վարազտիրոցի հետ կապված նախորդ դեպքերը նշել է, որ նա հեռացել էր Ռոստոմի մոտ (История халифов вардапета Гевонда. Перев. с армянского, предислов., примеч. Патканяна К., СПб, 1862). Սակայն, ինչպես Սեբեոսի հաղորդումներից է հետևում, Վարազտիրոցը հեռանալով Տարոն, այնտեղից ոչ թե Ատրպատական գնաց, այլ՝ Բյուզանդիա:

2. Բյուզանդիայի քաղաքականությունը դավանանքային բնագավառում

1. Օրմանյան Մ., էջ 577-579:

2. Շշփոթել Դավիթ Մամիկոնյանի որդու՝ Մուշեղի հետ, որը գործել է VII 30-ական թթ.:

3. Բանբեր Մատենադարանի, № 6, 1962, էջ 466-467: Ազատ գետի հիշատակությունից հետևում է, որ խոսքը 591 թ. հաստատված բյուզանդա-պարսկական սահմանագծի մասին է:

4. Կարծիք է հայտնվել, որ Կոստանդնուպոլսի ժողովին բացի միաբնակ եպիսկոպոսներից նաև երկաբնակ եպիսկոպոսներ էին ներկայացել Արևմտյան Հայաստանից (Фотия святейшего архиепископа, էջ 182; Չամչյան Մ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 531):

5. Մովսես Կաղանկատվացի, էջ 268:

6. Գիրք թղթոց, էջ 90-98:

7. Օրմանյան Մ., էջ 596, 597: Այս ժամանակաշրջանին է վերաբերում խոտաճարակների նահատակությունը (Յովհան Մամիկոնեան, էջ 9, 16, 19):

8. Антиох Стратиг. Пленение Иерусалима, перев. Н. Марр, էջ 65:. Խաչափայտի գերեվարումը և վերադարձը քրիստոնյա ժողովուրդների մոտ մեծ տպավորություն էր թողել: Ն. Մառը նշել է, որ մի քանի հայկական ավանդություններ (Ծիծառնեայ խաչի, Հացյունեաց խաչի և այլ) կապված են այդ իրադարձությունների հետ (նույն տեղում, էջ 49-50):

9. Սեբեոսը մանրամասն ներկայացրել է Խաչափայտի վերադարձի հետ կապված այն հոգևոր վերելքը, որով սրբագործվում էր Հերակլի հաղթանակը Պարսկաստանի հանդեպ. «Իսկ զտէրունեան Սուրբ Խաչն ընկալեալ երանելի աստուածասէր եւ երջանիկ թագաւորին Երակլի՝ գումարէ զգաւր իւր յորդոր եւ խնդալից սրտիւ: Եւ չու յուղի անկեալ հանդերձ ամենայն թագաւորական սպասաւորութեամբն, պատուելով զսուրբ հրաշալի եւ զերկնաւոր գիւտն, եւ տարեալ հասուցանէ ի քաղաքն սուրբ հանդերձ ամենայն սպասուք եկեղեցւոյ, որ ապրեալ էր ի ձեռաց թշնամեացն ի Բիւզանդիա քաղաքի: Ապա անդ ոչ սակաւ ինչ լինէր ուրախութիւն յաւուր յայնմիկ ի մտանել նոցա յԵրուսաղէմ: Զայն լալոյ եւ ողբոյ եւ հեղումն արտասուաց ահագին բորբոքման սրտից նոցա խանդաղատանաց, եւ կսկծելոյ աղեացն թագաւորին եւ իշխանացն եւ զաւրացն ամենեցուն եւ բնակչացն այնոցիկ որ ի մէջ քաղաքին: Եւ ոչ ոք կարէր երգել զտէրունեան երգս յահագին եւ յաղիողորմ խանդաղատանացն թագաւորին եւ ամենայն բազմութեանն: Եւ կարգեալ հաստատեաց ի տեղի իւր. եւ զամենայն սպասս եկեղեցեացն եդ յիւրաքանչիւր տեղիս, եւ բաշխեաց ամենայն եկեղեցեացն եւ բնակչաց քաղաքին աւրհնութիւն եւ գինս խնկոց» (Սեբեոս, էջ 131): Խաչափայտի վերադարձի այդպիսի երկար երթուղին պայմանավորված էր ինչպես հոգևոր, այնպես էր վերոհիշյալ քաղաքական նպատակներով:

10. Հայագիտության մեջ այս դավանանքային ուղղության մասին առաջին աշխատանքներից է Գ. Հովսեփյանի՝ Die Entstehungs Geschichte des Monotheli-tismus nach ihren Quellen gepruft und dargestellt, Leipzig, 1897:

Ինչպես նշել է Ֆ. Դվորնիկը, դավանաբանական հարցերում Հռոմի եկեղեցու հետ ծավալվող մրցակցությունում նախաձեռնությունը Կոստանդնուպոլսի եկեղեցուն էր պատկանում: Սերգիոս պատրիարքը առաջ քաշեց *միակամության* ուսմունքը, որին Հռոմի պապը՝ Հոնորիուս Ա-ը (626-638) չհակառակվեց (տես Cambr. MH, էջ 440, հմմտ. Stratos A., նշվ. աշխ., հ. II, էջ 141): Ֆ. Դվորնիկի կարծիքով, Հերակլը անհանգստացած «պարսից վտանգից» հրապարակեց Սերգիոս պատրիարքի կազմած «Էքթեզիսը» («Հայտարարություն») (638 թ.)՝ *միակամության* դավանանքը, որը ընդհանուր առմամբ ընդունված էր Արևելքում (Cambr. MH, էջ 440): Ա. Ստրատոսը քննադատել է այն կարծիքը (Hergenröther. Le Cardinal. Histoire de l'Église, tr. P. Belet, հ. II, Paris, 1880, II. 320.), որի համաձայն «Էքթեզիսը» կազմվել էր 634-635 թթ. և գաղտնի պահվել մինչև Արևելքից Հերակլի վերադարձը, և, որ Սերգիոսը համոզեց նրան ստորագրել այն (Duchêsne M. L., L'Église au VIe siécle. Paris, 1925, էջ 410): Ա. Ստրատոսը համաձայն է այն կարծի հետ, ըստ որի «Էքթեզիսը» հրապարակվեց 638 թ. հոկտեմբերին (Mansi. X.1000-1, Héfele C., Leclercq H., Histoire de Conciles, հ. III, Paris, 1909, III. 388; Stratos A., նշվ. աշխ., հ. II, էջ 142-143):

Զ. Ուդալցովան գրել է. «Չկարողանալով ուժով ճնշել անջատողական շարժումը արևելյան նահանգներում, կապված միաբնակության հետ, բյուզանդական կառավարությունը, հայտնվելով արաբական վտանգի առջև, ստիպված էր հաշտ-

վելու ուղիներ որոնել միաբնակների հետ... Սակայն *միակամությունը* առաջացրեց առավել ծայրահեղ ուղղափառների և միաբնակության անհաշտ կողմնակիցների բողոքը» (տես История Византии, հ. I, էջ 368-369): VII դ. 30-ական թթ. Բյուզանդիային ավելի շատ ոչ թե՛ «պարսկական» (Ֆ. Դվորնիկ), այլ արաբական վտանգն էր սպառնում, ինչպես իրավացիորեն նշել է Ջ. Ուդալցովան: Հայաստանում այն ժամանակ դավանաբանական վեճերը և դրանցից բխող քաղաքական հետևանքները առավել սրություն էին ձեռք բերում: Ինչպես նշել է Ա. Ստրատոսը, հայերը Հայաստանի բյուզանդական մասում օգնում էին հերակլիին ընդդեմ պարսիկների, սակայն կրոնական դիմակայումը շարունակում էր մնալ որպես պատնեշ Բյուզանդիայի հետ լավ հարաբերություններ հաստատելու ուղու վրա (Stratos A., նշվ. աշխ., հ.I, էջ 286): Հետազոտողը մոռանում է, որ բարիդրացիական հարաբերությունների համար անհրաժեշտ էին քաղաքական նախապայմաններ, որոնք կայսերական նվաճողական քաղաքականության իրականացման պայմաններում բացառված էին:

11. Սեբեոս, էջ 131-132: Մժեժը, ամենայն հավանականությամբ, գործում էր կայսեր հրահանգով:

12. Նույն տեղում, էջ 129, 132:

13. Օրմանյան Մ., էջ 694, 695:

14. Cambr. MH, էջ 609:

15. Տեր-Ղևոնդյան Ա., նշվ. աշխ., էջ 68:

16. Սեբեոս, էջ 132: Խոսքը կարող է լինել «Միջագետք Ասորւոց»-ի մասին: Ա. Ստրատոսի կարծիքով այդ հանդիպումը տեղի էր ունեցել Եդեսիայում (Stratos A., նշվ. աշխ., հ. I, էջ 292-297): Մ. Օրմանյանը, հիմնելով Ստ. Օրբելյանի հաղորդման վրա (էջ 114), ի տարբերություն Մ. Չամչյանի, որը կարծում էր, թե Եզրի և կայսեր հանդիպումը կայացել էր նրա կաթողիկոսության առաջին տարում (ըստ Մ. Չամչյանի՝ 629 թ., տես Պատմութիւն Հայոց, հ. Բ, էջ 328): Իսկ Մ. Օրմանյանը այդ բանակցությունները նշել է կայացած Կարին-Թեոդոսուպոլսում, Եզրի կաթողիկոսության երրորդ տարում, այսինքն 633 թ. (Օրմանյան Մ. էջ 687, 688): Պետք է ենթադրել, որ Եզրը Հերակլի հետ երկու անգամ է հանդիպել՝ 630 թ. «Միջագետք Ասորւոցում» և 633 թ. Կարինում՝ *միակամության* վարդապետության ընդունման կապակցությամբ հրավիրված ժողովում, որի մասին հաղորդվում է նաև Narratio-ում (ԲՄ, № 6, 1962, էջ 408), որտեղ այն ներկայացված է հրավիրված՝ Աստծո «երկու բնությունների» և Քաղկեդոնի ժողովի հարցերի քննարկման նպատակով: Սյունիքի եպիսկոպոս Մաթուսաղան հիվանդության պատրվակով հրաժարվեց մասնակցել Կարնո ժողովին: Եզր կաթողիկոսը Մաթուսաղայի փոխարեն իր հետ տարավ նրա աշակերտ Թեոդորոսին՝ Կոմիտաս կաթողիկոսի եղբորորդուն: Ըստ Ստ. Օրբելյանի, Եզրը քաղկեդոնականություն էր ընդունել, որին համաձայն չէր Մաթուսաղան, բայց, քանի որ այդ իր աշակերտի՝ Թեոդորոսի խորհրդով էր եղել, ուստի Սյունյաց եպիսկոպոսը պապանձվեց ու լռեց (Ստ. Օրբելյան, էջ 86): Հենվելով Երուսաղեմի № 1272 ձեռագրում (գրված 1290 թ.) «Պատմութիւն Յովհաննու Մայրագոմեցոյ» տեղեկությունների վրա Կարապետ եպիսկոպոսը նշել է. «Կարնո ժողովից տարիներ առաջ՝ դեռ Քրիստափոր կաթողիկոսի օրով, «հաւատոյ քննութիւն» է տեղի ունեցել և միութիւն հաստատուել ասորիների հետ, իսկ Հայոց կողմից խօսող վարդապետն այդտեղ էլ նոյն Թեոդորոսն է եղել, ինչ որ Կարնոյ ժողովում, հակառակորդ դարձեալ Մայրագոմեցին» (Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյան. «Յովհան Մանդակուհի եւ Յովհան Մայրագոմեցի». - «Շողակաթ» Ս. Էջմիածնի հայագիտական ժողովածու, գիրք Առաջին, Վաղարշապատ, 1913, էջ 107): Հայ հեղինակները, որոնք Հայ եկեղեցու միաբնակ դավանության ջատագովներն էին, յուրաքանչյուր շեղում անընդունելի էին համարում: Այնպես որ պատահական չէ, որ *միակամությունը* նրանք

կարող էին համարել քողարկված քաղկեդոնականություն և դրա ընդունումը ուղղակի այդպես էլ անվանել:

17. Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 56, 64: Մինչև XX դ. սկզբները Էջմիածնի կաթողիկոսարանը անվճար մի քանի սայլ քարաղ էր ստանում Կողբից:

18. Տեր-Մկրտչյան Կ., նշվ. աշխ., էջ 84-113:

19. Քենդերյան Ա. Մ., Հովհան Մայրագոմեցի, Երևան, 1973, էջ 19: Ա. Ստրատոսը ուշադրություն է դարձրել, որ Հռոմի պապ Հոնորիուսին գրած նամակում Կոստանդնուպոլսի պատրիարք Սերգիոսը տեղեկացնում էր Հայաստանում և Եգիպտոսում տարած իր աշխատանքի և դրա արդյունքների մասին (Stratos A., նշվ. աշխ., հ. I, էջ 301):

20. 633 թ. Կարնո ժողովին Եզրի և նրան ուղեկցողների մասնակցելու հարցը քննելու համար հրավիրված հայ նախարարների թվում Ստ. Օրբելյանը հիշատակել է Թեոդորոս Ռշտունուն որպես հայոց մարզպանությունը ստանձնած անձնավորության (էջ 83): Այս կապակցությամբ Ստ. Օրբելյանի ներկայիս խմբագրությամբ մեզ հասած տեքստում հիշատակվում է «ասպետ» հորջորջումով մի անձնավորություն: Կարելի կլիներ ենթադրել, որ խոսքը Վարազտիրոցի մասին է, եթե նա հեռացած չլիներ Բյուզանդիայի սահմանները: Ա. Աբրահամյանը նշել է, որ Ստ. Օրբելյանը նկատի է ունեցել Թեոդորոս Ռշտունուն (Սյունիքի պատմություն, էջ 443, ծան. 344): Եթե նկատի ունենանք նաև Սեբեոսի հաղորդումը՝ մի քանի տարի առաջ Թեոդորոս Ռշտունու առաջադրությամբ Քրիստափորին կաթողիկոս ընտրելու մասին, ապա կարելի է տեսնել, որ Թեոդորոս Ռշտունին VII դ. 20-ական թթ. վերջից և 30-ական թվականներից արդեն սկսել էր ակտիվ դեր խաղալ Հայաստանի քաղաքական և եկեղեցական կյանքում:

21. Սեբեոս, էջ 132:

22. Նույն տեղում, էջ 297, ծան. 452:

23. Պետրոսյան Ե., նշվ. աշխ., էջ 60-61: Լեոյի կարծիքով, Հերակլը քաղկեդոնականների կողմից գործադրված ուժեղ հակառակության հետևանքով, փաստորեն, հրաժարվեց իր քաղաքականությունից, իսկ Եզրի քայլը հայ միաբնակների կողմից գնահատվեց որպես քաղկեդոնականության ընդունում (Լեո, նշվ. աշխ., էջ 301, 315):

3. Հայաստանը Արաբական խալիֆայության նվաճումների սկզբնական ժամանակաշրջանում

1. Սեբեոս, էջ 133-134:

2. Մանանդյան Հ., Մանր հետազոտություններ. Արաբական արշավանքները Հայաստանում (ժամանակագրական դիտողություններ), Երևան, 1932, նույնի՝ Երկեր հ. Բ, Երևան, 1978, էջ 512-513, հմմտ. Hitti Ph. նշվ. աշխ., էջ 157:

3. Ghazarian M., Armenien unter der arabischen Herrschaft bis zur Entstehung des Bagratidenreiches, Marburg, 1903, էջ 16: 640-ական թթ. սկզբների Հայաստանի քաղաքական իրավիճակի մասին Ե. Պետրոսյանը գրել է. «Այդ օրերին Հայաստանը... կազմում էր մի իշխանություն, որի վրա այլևս ինչպես Պարսկաստանը, այնպես էլ Բյուզանդիան չէր կարողանում տիրապետել» (Հայ եկեղեցու պատմություն, էջ 61):

4. Ս. Մելիք-Բախշյանի կարծիքով՝ Օսման իբն Աբու-լ-Ասի զորքը մտավ Չորրորդ Հայք Մծբինը և Ամիդը ավերելուց հետո: Նա աղբյուրից թերի մեջբերում է կատարել. «Իյադ ուղարկեց Աբու-Մուսային, որ հպատակեցավ» (Մելիք-Բախշյան Ս., Հայաստանը VII-IX դդ., էջ 34): Այնինչ Բ. Խալաթյանցի թարգմանության

համաձայն «Իյադ ուղարկեց Աբու-Մուսային Մծբին, որ հպատակեցավ» (տե՛ս «Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին, Վիեննա, 1919, էջ 127): Ըստ Իբն ալ-Ասիրի և Տաբարիի, Մծբինը հպատակեցրեց Աբու-Մուսան, իսկ ըստ Բալազուրիի և Յաքուբիի՝ Իյադը, որը, ըստ Բալազուրիի և Իբն ալ-Ասիրիի, նվաճեց նաև Ամիդը (նույն տեղում, էջ 74, 80, 104): Ըստ Ս. Մելիք-Բախշյանի, Օսման իբն Աբու-լ-Ասի գլխավորությամբ Չորրորդ Հայքը նվաճելուց հետո արաբները ներխուժեցին Տարոն, և այստեղ նրանց գլխավորեց «Աբդուլ-Ռահմանը» (Աբդռահիմ, ըստ Յովհան Մամիկոնեանի), որը նրանց առաջնորդեց դեպի Այրարատ: Ս. Մելիք-Բախշյանը ժամանակագրորեն իրար է կապել տարբեր իրադարձություններ Իբն ալ-Ասիրի, Յովհան Մամիկոնյանի և Սեբեոսի հաղորդումների թերի համադրման հետևանքով:

5. Մանանդյան Հ., Երկեր, հ. Բ, էջ 511: Գիտնականը հետևել է Բ. Խալաթյանցի թարգմանությանը («Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին», Վիեննա, 1919, էջ 74-75, 80, 127): Իբն ալ-Ասիրի երկի վերոհիշյալ հատվածը Ա. Տեր-Ղևոնդյանը թարգմանել է. «Օսմանը Իբն Աբու-լ-Ասին ուղարկեց Չորրորդ Հայաստան, և սա կռվեց նրա բնակիչների դեմ... Օսմանը նրա բնակիչների հետ հաշտություն կնքեց» (Արաբական աղբյուրներ, հ. Բ, Իբն ալ-Ասիր, Երևան, 1981, էջ 45): Այնինչ, ինչպես ճիշտ հետևում է Բ. Խալաթյանցի թարգմանությունից, Օսման իբն Աբու-լ-Ասին Չորրորդ Հայք էր ուղարկել Իյադը: Ա. Տեր-Ղևոնդյանը Իբն ալ-Ասիրի երկից չի թարգմանել հիջ.19 թ. վերաբերող սկզբի հատվածը և վերոհիշյալ պարբերությունը անմիջապես հաջորդել է հիջ. 17 թ. դեպքերի նկարագրությունը:

6. Արաբական աղբյուրներ, հ. Բ, էջ 46:

7. Մ.Ղազարյանը գրել է, որ Հայաստանում թթու ջրերի բազմաթիվ աղբյուրներ կան և այդ պատճառով դժվար է որոշել, թե դրանցից որն է նկատի առնված (Ghazarian M. նշվ. աշխ., էջ 16):

8. Արաբական մատենագրեր Հայաստանի մասին, էջ 75-76: Հմմտ. Իբն ալ-Ասիր «Երբ Իյադ նվաճեց Սամոսատը, Մալաթիա ուղարկեց Հաբիբ իբն Մասլամային, որը ուժով նվաճեց այն, սակայն հաշտություն կնքելուց հետո բնակիչները դրժեցին (պայմանը)», (Արաբական աղբյուրներ, հ.Բ, էջ 46):

9. Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 34, 168, 234, 235. Բալազուրիի հիշատակած Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ Հայքերը շատ ավելի ընդարձակ տարածքային ընդգրկմամբ էին ներկայացված:

10. Ինչպես նշել է Ա. Տեր-Ղևոնդյանը, ըստ Յաքուբիի, մոտ. հիջ. 20 թ. (640-641) Օմար խալիֆը Հաբիբին ուղարկեց հռոմեացիների հողը, սակայն հայտնի չէ, թէ որ վայրը նկատի ունի պատմիչը (Тер-Геворкян А., նշվ. աշխ., էջ 28): Արդյո՞ք խոսքը Մալաթիան նվաճելու մասին չէր:

11. Ա. Տեր-Ղևոնդյանը նշելով, որ «Թթու ջուրը» դժվար է ճշգրիտ տեղորոշել, ենթադրաբար այն տեղադրել է Թեոդոսուպոլսից ոչ հեռու գտնվող հանքային ջրերի (Ջերմուկ) մոտ, որը հիշվում է պատմական աղբյուրներում (Тер-Геворкян А., նշվ. աշխ., էջ 25, Արաբական աղբյուրներ, հ.Բ, էջ 368, ծան. 34): Սակայն հայտնի է, որ Կարինի և Կոգովիտի ուղղությունները տարբեր են:

Հ. Բարթիկյանը համաձայն է Ա. Տեր-Ղևոնդյանի (Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 51-52) նախկինում հայտնած այն կարծիքի հետ, թե Իյադը ասպատակեց Դվինը 640 թ. (Բյուզանդական աղբյուրներ, Դ, էջ 248, ծան. 308): Իսկ ինչպես տեսնում ենք, Ա. Տեր-Ղևոնդյանը իր «Армения и Арабский халифат» աշխատությունում արդեն այն կարծիքին էր, որ Իյադը «Թթու ջրից» վերադարձավ Բաղեշ, իսկ արաբական զորքը շարունակեց ճանապահը դեպի Դվին և գրավեց այն (նույն տեղում, էջ 25):

12. Tsybulsky V. V. Calendars of Middle East Countries, Moscow, 1979, էջ 22:

13. Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1904, էջ 132: Քսենոփոնը 10.000 հույն զինվորների հայաստանով անցած նահանջի երթուղին (մ.թ.ա. 401 թ.) նկարագրելիս գրել է. «Զինվորներից ոմանք ետ էին մնում. և տեսնելով ինչ որ սև տեղ, որն առաջացել էր ձյան վերանալու պատճառով, նրանք ենթադրեցին, թե ձյունը հալվել է. և իրոք այն հալվել էր մոտիկ անտառածորում գտնվող աղբյուրի հետևանքով, որը գոլորշի էր արձակում» (Քսենոփոն, Անաբասիս, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1970, էջ 96): Այս գրքում զետեղված «Հայաստանը և Փոքր Ասիան ըստ Քսենոփոնի «Անաբասիս»-ի» քարտեզում, որի հեղինակն է Ս. Երեմյանը, այս կապակցությամբ նահանջող հույների ընթացուղին նշված է «Ջերմուկներ (Վարշակի)»-ով:

14. Ըստ Մ. Չամչյանի, Դվինի պաշարումը սկսվել էր 639 թ. նոյեմբերի 28-ին և քաղաքը գրավվել հունվարի 6-ին (640 թ.): Նա նշել է, որ Դիոնիսիոս Տելմահրեցին այս դեպքը հիշատակել է տեղի ունեցած սելևկյան 952 թ., «որ է յամի Տն. 641, փոխանակ դնելոյ միոյ ամաւ յառաջ» (Չամչեան Մ., Պատմութիւն Հայոց, հ. Բ, Վենետիկ, 1795, էջ 343): Սելեկյան 952 թ. համապատասխանում է 640-641 թթ. և, եթե Դիոնիսիոս Տելմահրեցու հաղորդումը (Denys de Tell-Mahre. Chronique. Quatrieme partie. Traduction français. Publiée et traduite par J.-B. Chabot, Paris, 1895, էջ 6) վերաբերում է 641 թ., ուրեմն, այն կարող է ևս որպես մեկ փաստարկ ծառայել Դվինի առումը 641 թ. դնելու կարծիքի օգտին:

15. Ալիշան Ղ. Այրարատ, էջ 407: Ս. Մելիք-Բախշյանը նշել է, որ իր հաշվումներով կրկին անգամ հաստատվում է Ղ. Ալիշանի մատնանշած թվականի ճշտությունը Դվինի առման կապակցությամբ: Նա գրել է. «Եթե կարողանանք հաստատել, որ Եզրի մահվան թվականի, այսինքն Հայոց 89 թ. տրեի 20-ը ուրբաթ օր է եղել, ուրեմն, ինչպես Դվինի գրավման ժամանակը, այնպես էլ Եզրի մահվան թվականը, կհաստատվի անվերապահ կերպով» (Մելիք-Բախշյան Ս., նշվ. աշխ., էջ 42): Աղբյուրներից հայտնի է Եզրի տասնամյա աթոռակալության մասին (Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 48, Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն Տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 93), սակայն Եզրի մահը չի նշված Հայոց 89 թ.: Ինչ վերաբերում է ամսաթվին, ապա անհրաժեշտություն չկա ապացուցելու, թե Հայոց 89 թ. տրեի 20-ը ուրբաթ է եղել, քանի որ այդ հայտնի է տոմարագիտական աշխատություններից: Ս. Մելիք-Բախշյանը անհիմն է համարել Մ. Օրմանյանի կարծիքը, ըստ որի Դվինի պաշարումը սկսվել էր 640 թ. հոկտեմբերի 6-ին, իսկ քաղաքը գրավվել հունվարի 6-ին (641 թ.) (տես Օրմանյան Մ., նշվ. աշխ. էջ 704, 705): Մ. Օրմանյանը միացրել է Սեբեոսի (էջ 138) և Սամվել Անեցու (էջ 80) հաղորդումները: Մերժելով Մ. Օրմանյանի կարծիքը, Ս. Մելիք-Բախշյանը չի հիշատակել Հ. Մանանդյանի քննադատությունը այդ կարծիքի կապակցությամբ: Ըստ Հ. Մանանդյանի, Մ. Օրմանյանը փորձել է հաշտեցնել Սեբեոսի և Սամվել Անեցու հակասական հաղորդումները, «սակայն Սեբեոսի մոտ պարզ ասված է, որ արաբները հինգերորդ օրը հարձակում ձեռնարկեցին քաղաքի (Դվինի) վրա և քաղաքը գրավեցին» (Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 518): Լեոն նույնպես գտնում էր, որ արաբների առաջին արշավանքը տեղի ունեցավ 640 թ., սակայն Դվինը գրավվեց երրորդի ժամանակ, որը նա համարել է կայացած 641/2 թ. (Լեո, նշվ. աշխ., հ. Բ, էջ 304-305): Լեոն, Հ. Մանանդյանը, Ա. Տեր-Ղևոնդյանը և այլ գիտնականներ արաբների ներխուժումը Տարոն կապել են հայաստան կատարած նրանց առաջին արշավանքի հետ: Հ. Համբարյանի կարծիքով Դվինը գրավվեց արաբական երկրորդ արշավանքի ժամանակ, որից երկու կամ երեք տարի առաջ տեղի էր ունեցել նրանց առաջին արշավանքը (Հ. Համբարեան, Հայք արաբացւոց իշխանութեան տակ. ժամանակագրական խնդիրներ Սեբէոսէն,- «Յուշարձան», Վիեննա, 1911, էջ 244):

16. Tournebize Fr. Histoire politique et religiouse de l'Armenie, Paris, 1900,

էջ 96, Morgan J. Histoire du people Armenien, Paris, 1919, էջ 110.

17. Thopdschian H. Armenien vor und während der Araberzeit-Handes Hajagitutean, Zeitschrift für Armenischer Philologie. Herausgegeben von A. Manandian. Zweiter Band, erste Heft, Marburg, 1903, էջ 64; Dulaurier Ed. Recherches sur la chronologie Arménienne technique et historique, t. I, Paris, 1859, էջ 225, 227-231; Мюллер А., նշվ. աշխ., էջ 289-290: Ս. Մելիք-Բախշյանը, քննադատելով Է. Դյուլորիեին և Ա. Մյուլերին, նշել է, որ Դյուլորիեն կոպիտ սխալ է կատարել արաբական առաջին արշավանքի տարեթիվը համարելով 642 թ. (Մելիք-Բախշյան Ս., նշվ. աշխ., էջ 43): Սակայն, ըստ Դյուլորիեի, առաջին արշավանքը կայացել էր 639 թ., իսկ 642 թ. նա նշել է որպես Դվինի գրավման տարի:

18. Laurent J., L'Armenie entre Byzance et l'Islam depuis la conquete arabe jusqu'en 886 (Nouvelle édition revue et mise à jour par M. Canard), Lisbonne, 1980, էջ 231, ծան. 183:

19. Кулаковский Ю. История Византии, էջ 202. Ըստ Մովսես Կաղանկատվացու, Դվինը արաբները գրավել էին Կոստաս Բ-ի (Կոստանդնի) վեցերորդ տարում (Մովսես Կաղանկատվացի, էջ 316-317): Ինչպես նշել է Ք. Պատկանյանը, Կոստաս Բ-ի վեցերորդ տարին համապատասխանում է 647 թ.: Գիտնականը գրել է, որ համաձայն հայկական աղբյուրների, Դվինը արաբների կողմից գրավվել էր 644-647 թթ. միջև (Себеос, 1862, էջ 211, ծան. 203): Յու. Կուլակովսկին Դվինի առումը նշելով կայացած 647 թ. հոկտեմբերի 6-ին, ըստ երևույթին, Սեբեոսի հաղորդումներին միացրել է Կաղանկատվացու հաղորդումը: Ինչպես ստորև կտեսնենք, Յու. Կուլակովսկին իրավացի է, նշելով, որ արաբական մյուս արշավանքը տեղի էր ունեցել 647 թ.: Սակայն նա միացրել է Սեբեոսի հաղորդումները տարբեր տարիներին տեղի ունեցած Երկու արաբական արշավանքների (Միջագետքի և Ատրպատականի կողմերից) մասին: Այս հարցում Յու. Կուլակովսկին, ըստ երևույթին, հետևել է Ք. Պատկանյանի կարծիքին (տես նաև Гевонд, էջ 228, ծան. 31): Հ. Թոփչյանը սխալ է համարել Բար-Եբրեոսի (Աբուլ-Ֆարաջ) հաղորդումը, որի համաձայն սելևկյան 958 թ. (= 647 թ.) Մուավիան բաժանեց իր ուժերը երկու մասի, որոնցից մեկը Հաբիբի գլխավորությամբ ուղարկեց Հայաստան (Thopdshian H. նշվ. աշխ., էջ 71): Սակայն Բար-Եբրեոսի հաղորդումը ևս մեկ փաստարկ է Ատրպատականով 647 թ. արաբական այդ արշավանքի կայացած լինելու օգտին:

20. Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 519-521: Նույն կարծիքն են արտահայտել Ստ. Մալխասյանցը (Себеос, 1939, էջ 170, ծան. 167), Բ. Առաքելյանը (Հայաստանը արաբական տիրապետության առաջին շրջանում և հայերի պայքարը անկախության համար. - «Գիտական ժողովածու», 1941, էջ 66), Ս. Մելիք-Բախշյանը (նշվ. աշխ., էջ 42-43), Կ. Յուզբաշյանը (նշվ. աշխ., էջ 37), Ե. Պետրոսյանը (նշվ. աշխ., էջ 61), Ն. Գարսոյանը (նշվ. աշխ., էջ 120), Ա. Չալաբյանը (Chalabian A., Armenia after the Coming of Islam. Southfield, Michigan, 1999, էջ 49), Ժ. Դեդեյանը (Dedeyan G., նշվ. աշխ., էջ 187):

21. Орбели И., նշվ. աշխ., էջ 112.

22. Այս արշավանքը Հ. Թոփչյանը նշել է կայացած 641 թ. (Thopdshian H. նշվ. աշխ., էջ 61):

23. Սեբեոս, էջ 138-139: Հմմտ. Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 47-48:

24. Սամվել Անեցի, էջ 80: Հմմտ. Անանուն ժամանակագրութիւն, Վենետիկ, 1904, էջ 77: Սակայն, ըստ Սեբեոսի Հերակլի որդի Կոստանդինը «սակաւ ինչ աւուրս թագաւորեալ Կոստանդին, դաւեալ ի Մարտինեայ մաւրէ իւրմէ, ի կնոջէն Երակլի՝ մեռանէր: Եւ թագաւորէ Երակլոս, որդի Երակլեայ, որ ի Մարտինեայ Աւգոստեայ. քանզի Կոստանդին էր յառաջին կնոջէն» (Սեբեոս, էջ 141): Կոս-

տանդին Գ-ն և նրա խորթ եղբայրը՝ Երակղակը կարճատև են գահակալել՝ 641 թ. ընթացքում (Cambr. MH. էջ 776):

25. Ասողիկ, էջ 98, 142: «Երրորդն» ընթերցվածը (նույն տեղում, էջ 120) Հ. Մանանդյանը ուղղել է «երկրորդն» (Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 517): Ասողիկի հաղորդումները վերաբերում են արաբական տարբեր արշավանքներին, որոնց ընթացքում տեղի ունեցան՝ Դվինի առաջին առումը (Ասողիկ, էջ 120, 142), Պռոկոպի պարտությունը Արտազ գավառում (նույն տեղում, էջ 120, հմմտ. Պատմութիւն Ղեւոնդեայ Մեծի վարդապետի Հայոց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 7), դեպի Հայք, Վիրք, Աղվանք ներխուժումները (Ասողիկ, էջ 98):

26. Անանուն ժամանակագրություն, էջ 77, Ղևոնդ, էջ 9:

27. Հերակլի ժառանգների գահակալության ժամանակագրությունը հետևյալն է՝ Կոստանդին Գ (641 թ. փետրվարի 11- մայիսի 24), Երակղակ (641 թ. մայիսի 25-սեպտեմբերի վերջ), Կոստանդին-Կոստաս Բ (641 թ. սեպտեմբերի վերջ-668 թ. սեպտեմբեր) (տես Grumel V. նշվ. աշխ., էջ 356-357, Stratos A., նշվ. աշխ., հ. II, էջ 186-204, 218, 220-221):

28. Գերեվարվածների թիվը սկզբնաղբյուրներում նշված է 30 հազար (Սամվել Անեցին, էջ 80-81) կամ 37 հազար (Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն Տիեզերական, էջ 93): Յովհաննես Դրասխանակերտցին (էջ 48) և Սամվել Անեցին հաղորդել են, որ կոտորածից հետո Ներսես կաթողիկոսը վերստին կառուցեց Սբ. Սարգիս վկայարանը: Կիրակոս Գանձակեցին (Պատմութիւն Հայոց, աշխատ. Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 60) գրել է, որ Ներսեսը այն կառուցել էր մինչև կոտորածը, որը, ըստ Սամվել Անեցու, տեղի էր ունեցել «Սուրբ յայտնութեան» օրը: Ղ. Ալիշանի կարծիքով պատմիչները շփոթել են երկու արշավանքներին վերաբերող դեպքերը, իսկ վկայարանը Ներսեսը պետք է կառուցած լիներ արաբների երկրորդ արշավանքից հետո, որը 640 թվականից 6-7 տարի անց էր տեղի ունեցել (Ալիշան Ղ., Այրարատ, էջ 408): Հ. Մանանդյանը, չընդունելով Մ. Օրմանյանի վերոհիշյալ կարծիքը, կապված 641 թ. հունվարի 6-ի հետ, փաստորեն, ժխտել է Սամվել Անեցու հաղորդումը «Սուրբ յաետնութեան» օրվա մասին և նախապատվություն տվել Սեբեոսի հաղորդմանը («յաւուրն հինգերորդի... »), քանի որ Դվինի պաշարումը տևել էր ոչ թե երեք ամիս, այլ հինգ օր: Հնարավոր է, որ Ներսեսը Դվինի առումից (641 թ.) հետո սկսեց կառուցել վկայարանը, և շինարարական աշխատանքները կարող էին ավարտվել 642 թ. հունվարի սկզբին, իսկ այնտեղ ամփոփված սպանված անձանց ոսկորները եկեղեցին օծել էր «Սուրբ յայտնութեան» օրը:

29. Տոմարական հաշվումները կատարել եմ Բ. Թումանյանի և Հ. Բադալյանի հրապարակած աղյուսակների հիման վրա (տես Թումանյան Բ. Ե., Առձեռն տումարացույց, Երևան, 1965, էջ 16, նույնի՝ Տոմարի պատմություն, Երևան, 1972, էջ 55, 115-117, Բադալյան Հ. Ս., Օրացույցի պատմություն, Երևան, 1970, էջ 35):

30. Տես Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, ժամանակագրական տախտակներ, էջ 402:

31. Орбели И., նշվ. աշխ., էջ 112:

32. Հիջ. 20 թ. ավարտվեց 641 թ. դեկտեմբերի 9-ով (Tsybulsky V., նշվ. աշխ., էջ 22):

33. Սեբեոս, էջ 138-139:

34. Ղևոնդ, էջ 9:

35. Тер-Гевондян А., նշվ. աշխ., էջ 24-26: Ս. Մելիք-Բախշյանը առեղծված է համարել Թեոդորոս Ռշտունու հայտնվելը Ձորապահակից հետո Նախճավանում (Մելիք-Բախշյան Ս., նշվ. աշխ., էջ 35-37, հմմտ. Chalabian A., նշվ. աշխ., էջ 48):

36. Արաբները 639 թ. սկսել էին Ատրպատականի նվաճումը (տես Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին, էջ 82, 104), որը (ըստ Տաբարիի «բացի ամրո-

ցավայրերից») ավարտվեց 643 թ.:

37. Սեբեոս, էջ 138, 304-305, ծան. 473: Ղ. Այվազյանը արաբների ներխուժումը Տարոն և Դվինի առումը նշել է կայացած 640 թ., չնայած ուշադրություն է դարձրել Սեբեոսի այն հաղորդմանը, որի համաձայն այդ իրադարձությունները կատարվել են Հերակլի մահվանից հետո, նրա որդու՝ Կոստանդնի գահակալության ժամանակ (տես Айвазян К. В., «История Тарона» и армянская литература IV-VII вв., Ереван, 1976, էջ 157): Ինչպես տեսանք, վերջին փաստը նույնպես մեկնաբանման կարիք ուներ:

38. «Եւ յետ Ը ամի եկն Աբդռահիմ, քեռորդին Մահմեդի... Եւ ի վաղիւն ժողովեալ ի ստորոտն Գրգռոյ, ի դաշտն որ ընդ հարաւոյ... Եւ ապա ի մէջ առեալ զգաւրսն Հայոց, ամենեցուն զկատարած կենաց հասուցանէին... Իսկ Աբդռահիմ անցանէ ի Հարք եւ ի Բասեան, եւ ի Վիրս եւ ի Ջաւախս, եւ ի Վանանդ, առեալ հարկս դառնայ ի Տաճկաստան» (Հովհան Մամիկոնյան, էջ 285-286): Հենվելով «Ը ամի» թվագրման վրա որոշ հետազոտողներ արաբների այդ ներխուժումը դրել են 636-639 թթ., սակայն Հ. Մանանդյանը իրավացիորեն ժխտել է նման կարծիքը, նշելով, որ արաբները չէին կարող Հայաստան մտնել Միջագետքը և նրա գլխավոր քաղաքները նվաճելուց առաջ, որը տեղի ունեցավ 639-640 թթ. (Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 512):

39. Այստեղ համարյա նույն տեղեկություններն են բերվում, ինչ և «Պատմութիւն Տարօնոյ» երկում: Նաև նշվում է, որ Հերակլը սպանեց Խոսրով Բ-ին (իրականում նա սպանվեց իր զորավարների կողմից) «յետ ութսուն ամի թվականին Հայոց» (Պատմութիւն սրբոյն Ներսիսի Պարթևի Հայոց Հայրապետի: Պատմութիւն յայտնութեան նշխարաց Սրբ. Ներսիսի», Սոփերք Հայկականք, Վենետիկ, 1853, էջ 43-44, տես նաև Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 512):

40. Արաբական աղբյուրներից հայտնի է, որ Աբդ առ-Ռահման իբն Ռաբիան 642-643 թթ. մասնակցել էր Ալ-Բաբի (Դարբանդի) նվաճմանը: Նրան Օմար խալիֆը նշանակել էր Ալ-Բաբի կառավարիչ՝ Սուրակայի մահվանից հետո: Աբդ առ-Ռահմանը, որին նաև կոչում էին Ջու-լ-Նուր, սպանվեց 652 կամ 653 թ. (Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին, էջ 84, 89-90): Իբն ալ-Ասիրի հաղորդումը Աբդ ալ-Ռահմանին Շահրիար թագավորի ներկայանալու և այնուհետև Սուրակայի մոտ գնալու մասին, ի տարբերություն Ա. Տեր-Ղևոնդյանի (Արաբական աղբյուրներ, հ. Բ, էջ 49), Պ. Ժուզեն սխալ է մեկնել, քանզի նրա թարգմանությունից հետևում է, որ Շահրիարը բանակցեց Աբդ ալ-Ռահմանի հետ և ներկայացավ Սուրակային, այնուհետև Աբդ ալ-Ռահմանը Շահրիարին ուղարկեց Սուրակայի մոտ («Материалы из Тарих-ал-камиль» (полного свода истории) Ибн-ал-Асир, перев. П. Жузе, Б., 1940, էջ 13):

41. Լեոն գտնում էր, որ պարսկական թագավորների իշխանության վերացումը և արաբական ներխուժումների վտանգը պատճառ հանդիսացան կայսրության հովանավորության ներքո Հայաստանի միավորման, քանի որ միայն բյուզանդական իշխանությունն էր փրկության հույս ներշնչում (Լեո, նշվ. աշխ., էջ 316):

42. Тер-Гевондян А., նշվ. աշխ., էջ 26: Ն. Գարսոյանի կարծիքով Թեոդորոս Ռշտունին դեռևս 639 թ. վերամիավորել էր Հայաստանի երկու մասերը (տես The Armenian People from Ancient to Modern Times, h. I, էջ 118):

43. Կ. Թումանովը, հետազոտելով Մանազկերտի ճակատամարտում (1071 թ.) թուրք սելջուկներից Բյուզանդիայի կրած պարտության պատճառները, եզրակացրել է. «Մանազկերտի աղետը Բյուզանդիայի կողմից Հայաստանի նվաճման անխուսափելի հետևանքն էր» (Toumanoff C., The Background to Manzikert, XIII International Congress of Byzantine Studies, Oxford, 1966, էջ 16):

44. Թեոդորոս Ռշտունու իշխանության ճանաչումից հետո կայսրությունը ուղարկեց բյուզանդական զորավար Պռոկոպին զորքով միացյալ գործողություննե-

րի համար: Պատրիկիոս Վաղենտինի մասին հաղորդումից հետո Դիոնիսիոս Տել-Մահրեցին գրել է, որ Պռոկոպը և Թեոդորոսը խիզախ հարձակում կատարեցին և հասան մինչև Բատնա-Սարուգ և այնուհետև վերադարձան (Denys de Tell-Mahre, էջ 6-7) Հայաստան: Հ. Մանանդյանը, հենվելով Սեբեոսի հաղորդման վրա Կոստաս Բ-ի երկրորդ տարում Վաղենտին Արշակունու խռովության մասին, եզրակացրել է, որ Պռոկոպի և Թեոդորոսի արշավանքը տեղի էր ունեցել 642/3 թ., այլ ոչ թե 643/4 թ. (սելևկյան 955 թ.), ինչպես Դիոնիսիոս Տելմահրեցու մոտ է (տես Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 526): Պռոկոպի և Թեոդորոսի հարձակումը կարճ ժամանակով կանգնեցրեց արաբների առաջխաղացումը Ջազիրայի կողմից (Тер-Гевондян А., նշվ. աշխ., էջ 27): Ղևոնդի վկայությամբ Պռոկոպի և Թեոդորոսի միջև անհամաձայնություն ծագեց: Պռոկոպը մեծամտորեն հաշվի չառավ Թեոդորոսի նախազգուշացումը թշնամու մոտենալու մասին: Հայոց զորավարը թողեց բյուզանդական զորքը և հեռացավ, նախապես հասցնելով ջարդել արաբական զորքի մի մասը: Թեոդորոսը հասել էր Վասպուրական աշխարհի Գառնի գավառը (Ք. Պատկանյանը ենթադրել է, որ խոսքը Գեղարքունի գավառում գտնվող Գառնիի մասին է (տես Гевонд, էջ 127, ծան. 25), սակայն, ինչպես ճիշտ նշել է Հ. Մանանդյանը, այստեղ նկատի է առնված Կոգովիտից հարավ գտնվող Գառնի գավառը (նշվ. աշխ., էջ 527), իսկ Մարդուցայքում բյուզանդական զորքը ջախջախվեց արաբների կողմից: Պռոկոպը հազիվ փախավ (Ղևոնդ, գլ. Բ): Հ. Մանանդյանի կարծիքով Մարդուցայքի դեպքերը պետք է տեղի ունեցած լինեին Պռոկոպի և Թեոդորոս Ռշտունու դեպի Բատնա-Սարուգ կատարած արշավանքից հետո և դրանով իսկ արաբների արշավանքը Ատրպատականի կողմից նշել է կայացած 642/3 թ.: Գիտնականը գրել է. «Ղևոնդի մոտ արաբական այս արշավանքի ժամանակը ցույց է տրված... Աբու-Բաքրի, Ամրի և Օթմանի իշխանության 22-րդ տարում, հավանորեն հիջ. 22 թվին, այսինքն՝ 642/3 թ.: Եվ, որովհետև մեծ կռիվը «Մարաց գավառում» (Նեհավենդում) հիշվում է Սեբեոսի մոտ 641/2 թ., իսկ արաբական արշավանքներն Ատրպատականում և Արևելյան Հայաստանում, ինչպես վկայում են արաբական աղբյուրները, տեղի էին ունեցել 642/3 թթ., ուստի Ղևոնդի ժամանակագրական վկայությունը կարող ենք համարել հավանական և ընդունել» (Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 528): Ինչպես ստորև կտեսնենք, Պռոկոպի և Թեոդորոսի միջև տեղի ունեցած միջադեպը և Մարդուցայքում բյուզանդական զորքի կրած պարտությունը անհետ չանցան հայ-բյուզանդական հարաբերությունների համար, այլ ունեցան խիստ բացասական հետևանքներ:

4. Բյուզանդա-ատրպատականյան դաշինքի հակահայկական ուղղվածությունը

1. Луконин В. Г., Культура сасанидского Ирана, М., 1969, էջ 51.

2. «Քուստ ի Կապկոհ» (տես Патканов К. Армянская география VIIв., էջ 57-59, Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ14):

3. Այս զորավարի օգնությամբ էր գահակալել Կոստաս Բ-ը («Եւ Վաղենտինի... գնայ ի վերայ նորա (Հերակլի որդու Երակլոս-ի - Է. Դ.) զաւրու իւրով ի Կոստանդնուպաւլիս: Եւ կալեալ զՄարտինէ՝ կտրէ զլեզու նորա և ապա սպանանէ զնա հանդերձ երկու որդուվք նորա: Եւ նստուցանէ թագաւոր զԿոստաս զորդի Կոստանդնի, և անուանէ յանուն հաւրն իւրոյ Կոստանդին»: Սակայն մի առ ժամանակ անց իրավիճակը փոխվեց: «Եւ եղեւ յերկրորդում ամի Կոստանդի, թոռին երանելւոյն Երակլի՝ խորհէր Վաղենտին ի միտս իւր՝ ճարտարութեամբ խաբել զսինկղիտոսն, եւ համբառնալ զինքն ի պատիւ թագաւորութեանն, որպէս զի պսակեալ զինքն այնպէս արասցէ զաւրավարութիւն»: Յայնժամ ժողովեցան արք

քաղաքին ի սուրբ եկեղեցին Աստուծոյ առ հայրապետն... եւ առաքեցին առ Վաղենտին՝ ի բաց բառնալ զծառայութիւն զայն, եւ նա ոչ կամեցաւ լսել»: Մի շարք իրադարձություններից հետո «հեղաւ ամբոխն ի վերայ նորա, եւ քարշեալ արտաքոյ տանցն՝ գլխատեցին... Եւ զԿոստանդին հաստատեցին յաթոռ թագաւորութեանն» (Սեբեոս, էջ 141-143):

4. Կոստաս Բ-ի գահին վերհաստատվելուց հետո «արարին զաւրավար զԹէոդորոս զոմն հաւատարիմ յիշխանացն Հայաստանեայց, յայնց՝ որ ի Յունաց կողմանէ» (նույն տեղում): Յու. Կուլակովսկին (История Византии, հ. III, էջ 191) և Յ. Մարքվատը (Osteuropaische und Ostasiatische Streifzuge, Leipzig, 1903, էջ 440, Նույնի՝ Հայ Բագրատունեաց ճիւղագրութիւնը, Վիեննա, 1913, էջ 4) ենթադրել են, որ այստեղ խոսքը Թեոդորոս Ռշտունու մասին է (տես նաև Մելիք-Բախշյան Ս. Դիտողություններ արաբների հայաստան կատարած առաջին արշավանքների մասին - ՊԲՀ, 1964, № 3, էջ 85): Ըստ Տուրնեբիզեի (նշվ. աշխ., էջ 355) և Մ. Ղազարյանի (նշվ. աշխ., էջ 29), խոսքը Թեոդորոս Վահևունուն էր վերաբերում: Այդպիսի կարծիքի հետ համաձայն չէր Հ. Համբարյանը (նշվ. աշխ., էջ 245): Հ. Մանանդյանը, քննելով Սեբեոսի հաղորդումը և պատմագիտության մեջ հայտնված կարծիքները, նշել է, որ Սեբեոսի կողմից հիշատակված Թեոդորոսները՝ Թեոդորոս Ռշտունին, հունական զորավար Թեոդորոսը և Թեոդորոս Վահևունին տարբեր անձինք են (նշվ. աշխ., էջ 536-539):

5. Սեբեոս, էջ 143: Ս. Մելիք-Բախշյանը Սեբեոսի կողմից այստեղ և այնուհետև հիշատակված իրադարձությունները նշել է կայացած 642-643 թթ.: Հետազոտողը իր շարադրանքում Վարազտիրոցի և Թեոդորոս Ռշտունու մասին հաղորդումները իրարից անջատ է ներկայացրել (տես Հայաստանը VII-IX դդ., էջ 45, 57-58): Նման մոտեցումը աղբյուրի հաղորդումներին խախտում է շարադրված իրադարձությունների ժամանակագրական հաջորդականությունը: Այս ժամանակաշրջանի հայ-բյուզանդական հարաբերություններին անդրադառնալիս, Սեբեոսը Վարազտիրոցի և նրա հարազատների և զինակիցների ազատագրման հետ կապված իրադարձությունները բացատրել է իբրև թե նրանց հանդեպ Հերակլի և նրա թոռան Կոստաս Բ-ի տածած համակրանքով և նույնիսկ անձնական զգացումներով: Սակայն հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ այս ժամանակաշրջանը ևս բացառություն չի կազմել Բյուզանդիայի՝ Հայաստանի հանդեպ վարած քաղաքականության մեջ: Այսպիսի դրվագները միայն ապացուցում են բյուզանդական կայսրերի երեսպաշտությունը: Դիցուկ, թե՛ Հերակլը, և թե՛ Կոստաս Բ-ը Հայաստանի հանդեպ կայսրության վարած և արդեն ավանդական դարձած նվաճողական քաղաքականության նույնպիսի ջատագովներ էին, ինչպես նրանց նախորդները և հաջորդները: Քաղաքականությունը նույնն էր, միայն փոխվում էին երանգները, պայմանավորված միջազգային իրավիճակով:

6. «Աշխարհացոյց»-ում նկարագրված Հայոց տասնհինգ աշխարհները ընդգրկում են Մեծ Հայքի ամբողջական տարածքը նրա պատմության տարբեր ժամանակաշրջանների առումով, սկսած հնագույն ժամանակներից: «Աշխարհացոյց»-ում օգտագործված են պատմական և քարտեզագրական, ինչպես նաև արխիվային - կադաստրային նյութեր, որոնք, ինչպես անտիկ, այնպես էլ վաղմիջնադարյան ծագում ունեն (Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 7-28): Մովսես Խորենացին և Անանիա Շիրակացին այն պատմական գործընթացների ժամանակակիցներն էին, որոնք տանում էին դեպի Հայոց պետության վերականգնումը (V դ. և VII դ.), ուստի «Աշխարհացոյց»-ում գրանցել են պատմաաշխարհագրական և քաղաքական բնույթի այն մանրամասնությունները, որոնք բացի ուսուցողական, իմացողական նշանակությունից կարող էին նաև ծառայել որպես տեղեկատու նյութ հայ պետական գործիչների համար՝ Հայոց պետության տարածքային ամբողջականության վերականգման գործում:

7. Սեբեոս, էջ 137-138:

8. Չնայած Վարազտիրոցը նույնքան նվիրված էր Հայաստանի երկու մասերի վերամիավորման և քաղաքական հզորացման ամրապնդման գործին, որի համար նա հետապնդվեց բյուզանդական եւ ատրպատականյան իշխանությունների կողմից, այնուամենայնիվ, կայսրության քաղաքագետները, ըստ երեւույթին, հույս ունենալով ներքին երկպառակություն բորբոքել Հայաստանում, ձգտում էին ինչ-որ ձեւով հակադրել Վարազտիրոցին եւ Թեոդորոս Ռշտունուն, դրանից բխող բոլոր բացասական հետեւանքներով: Եվ, ինչպես երեւում է, նրանցից ոչ մեկը իրազեկ չէր այդ քաղաքական խաղերին: Սեբեոսը նշել է, որ երբ Վարազտիրոցը եւ Թեոդորոսը հանդիպեցին կայսեր պալատում «հեղուին արտասունս ի վերայ պարանոցի իւրեանց, զի էին սննդակից միմեանց ի դրանն Խոսրովայ արքային Պարսից» (Սեբեոս, էջ 143): Այնպես որ, Վարազտիրոցի ազատվելը և Թեոդորոսի ձերբակալվելը, ինչպես ցույցին տվեցին հետագա իրադարձությունները, մի շղթայի օղակներ էին, որոնք բացահայտում են Բյուզանդիայի նվաճողական քաղաքականության ևս մեկ էջը:

9. Սեբեոսը, ըստ երևույթին, նկատի է ունեցել Հայաստանի արևմտյան մասի բյուզանդական կողմնորոշում ունեցող նախարարներին:

10. Ս. Մալխասյանցը իրավացիորեն նշել է, որ խոսքը այստեղ Թեոդորոս Ռշտունու, այլ ոչ թե վերոհիշյալ Թեոդորոս զորավարի մասին է, որը «հունական Հայաստանի» (Արևմտյան կամ «բյուզանդական» Հայաստանի) հայ իշխաններից էր (Себеос, էջ 171, ծան. 170):

11. Ինչպես երևում է Կոտայքի հիշատակությունից, որը 591 թ. բաժանումից հետո մնացել էր Հայաստանի բյուզանդական մասում, Թեոդորոս Ռշտունին իրոք ամբողջ Հայաստանի իշխանն էր, քանի որ 591 թ. հաստատված պարսկա-բյուզանդական սահմանագիծը արդեն վերացել էր:

12. Սեբեոս, էջ 143:

13. Ս. Մելիք-Բախշյանի կարծիքով Թուման խաղաղության դաշն կնքեց Պարսկաստանում գտնվող արաբների հետ (Հայաստանը VII-IX դարերում, էջ 57): Ա. Տեր-Ղևոնդյանը գտնում էր, որ Թուման դիմեց «արաբների առաջնորդին» (հավանաբար Մուավիային) և նրա հետ խաղաղություն կնքեց» (Гевондян А., նշվ. աշխ., էջ 31):

14. Լեո, հ. Բ, էջ 317: Վ. Վարդանյանը գրել է, որ Թուման կարողացավ Ատրպատականի տիրոջը գրգռել Թեոդորոսի դեմ 641 թ. (տես Վարդանյան Վ., Վասպուրականը VII դ. երկրորդ կեսին, - ՊԲՀ, № 2, 1974, էջ 114-115): Սակայն նըշված դեպքերը տեղի էին ունեցել ոչ թե 641 թ., այլ 646 թ.:

15. Սեբեոս, էջ 132, 137:

16. Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին, էջ 82, Արաբական աղբյուրներ, հ. Բ, էջ 47-48:

17. Այն իր մեջ ընդգրկում էր Ատրպատականի դժվարամատչելի լեռնային շրջանները (հմմտ. Կանայանց Ս., Անհայտ գավառներ, էջմիածին-Վաղարշապատ, 1914, էջ 97): «Մարեր» ընդհանուր անվան տակ «Աշխարհացոյց»-ում հիշատակվում են մի շարք իրանական ցեղեր՝ կասբ, քադուշ, գելք, դիլումք (տես Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 115):

18. Ս. Մալխասյանցի կարծիքով «մարաց» իշխանը նույն ինքը Ատրպատականի կառավարիչ և զորավար, վերոհիշյալ Ռոստոմն էր, որը ավելի ձեռնտու համարեց դավաճանել Հազկերտին և անցնել թշնամու կողմը (Себеос, էջ 175, ծան. 190): Սակայն Ռոստոմը (Ռուստամը) սպանվել էր Կադիսիայի ճակատամարտում (Ռուստամի սպանության նկարագրությունը ըստ Ֆիրդուսու վարկածի, տես Колесников А. նշվ. աշխ., էջ 94): Հ. Հյուբշմանը «վերագոյն» բառի կապակցությամբ նշել է «որ՞տեղ» (Hübschmann H., Zur Geschichte Armeniens und der

ersten Kriege der Araber. Aus dem Armenischen des Sebeos, Leipzig, 1875, էջ 29): Սեբեոսը այստեղ հիշատակել է այն «մարաց իշխանին», որի մասին նա իրոք վերը խոսել էր (սակայն առանց անունը տալու) Թումասի ժամանելու և Թեոդորոս Ռշտունու դեմ վարած բանակցությունների կապակցությամբ (էջ 143):

19. Սեբեոսը Իրանում Արշակունիների հարստության հաստատման (մ. թ. ա. III դ. կեսերին) կապակցությամբ գրել է. «Եւ թագաւորեաց Արշակ Մեծ, որդի արքային Թէտալացւոց, ի Բահլ Շահաստանի յերկիրն Քուշանաց» (էջ 52):

20. Նույն տեղում, էջ 164: «Մարաց իշխանի» արևելք գնալուն և այնուհետև Հազկերտից ապստամբելուն նախորդած դեպքերը հետևյալ կերպ է նկարագրել Սեբեոսը. «Եւ եղեւ ի քսաներորդի ամի Յազկերտի արքայի Պարսից, ի մետասան ամի Կոստասի կայսեր, որ կոչեցաւ յանուն հաւր իւրոյ Կոստանդին, եւ յամին ԺԹերորդի Իսմայելացւոց տէրութեանն, զաւրն Իսմայելացւոց, որ էին յերկիրն Պարսից եւ Խուժաստանի՝ գնացին ընդ արեւելս ի կողմանս Պահլաւն կոչեցեալ երկրի, որ է երկրի Պարթեւաց, ի վերայ Յազկերտի արքային Պարսից: Եւ փախեաւ Յազկերտ յերեսաց նոցա, եւ ոչ կարաց ճողոպրել. քանզի հասին զհետ նորա մերձ ի սահմանս Քուշանաց, եւ կոտորեցին զամենայն զաւրս նորա: Եւ փախուցեալ անկաւ ի զաւրս Թէտալաց, որ էին ի կողմանցն եկեալ նմա յաւգնականութիւն» (էջ 163-164):

21. Սեբեոս, էջ 172: Այստեղ բերված պատմաաշխարհագրական տեղեկությունները որոշ չափով համապատասխանում են «Աշխարհացոյց»-ի հետևյալ տողերին «Պտղոմէոս զՄարս յելից [եւ ի հարաւոյ] Կասբից [ծովուն] ասէ բնակել. եւ զոր ասեն ընդ մի իշխանութեամբ, եւ ոչ ուրեք գտանին Մարք. բայց Պտղոմէոս ասէ զաշխարհս սոցա՝ Կասբ, Քադուշ, Գելք, Դիլումք. եւ ՌԷ եւ Ահմատան քաղաքք են Մարաց» (Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 115): Իհարկե, ըստ Կղավդիոս Պտղոմեոսի (83-161) տվյալների, որոնք հետագայում գրանցվել են «Աշխարհացոյց»-ում, մարերի զբաղեցրած տարածքը Իրանի հյուսիսում շատ ավելի ընդարձակ է եղել, քան ըստ Սեբեոսի հաղորդման, քանի որ նրանցից յուրաքանչյուրը իր դարաշրջանին համապատասխանող տվյալներ է հաղորդել:

Ս. Կանայանցը, հետազոտելով հայկական աղբյուրների (Կորյուն, Ագաթանգեղոս, Փավստոս Բուզանդ, Մովսես Խորենացի) և հատկապես Սեբեոսի («Թագաւորեցոյց Արշակ զորդի իւր զԱրշակ Փոքր կոչեցեալ ի վերայ աշխարհիս Հայոց ի Մծբին քաղաքի: Եւ գատուցանէ նմա սահմանս զԱրուաստան... եւ զԿապուտկեայ առ Կիւղիկեաւ, մինչեւ ցեզր ծովուն մեծի Արեւմտից. եւ զհիւսիսոյ կողմանէ ի լեառն մեծ Կովկաս, որ ձգի ընդ կողմանս արեւելից եւ անցանէ առ սահմանաւն առ ամուր աշխարհաւն Մարաց, եւ հասանէ ի լեառն Ջարասպ, եւ անցանէ առ Նոր Շիրակ երկրաւն», էջ 53-54) հաղորդումները, եկել է այն եզրակացության, որ «Մարաց ամուր երկիրն... Ատրպատականից արևմուտ էր, Ուրմիոյ ծովից ոչ շատ հեռու, հավանորեն դեպի արևմուտք, Կորդուքից և Մահկերտունից դեպի արևելք: Մարաց աշխարհը Ջարասպից էլ արևելք պիտի տարածված լիներ (Կանայանց Ս., Անհայտ գավառներ, Էջմիածին-Վաղարշապատ, 1914, էջ 97, 107): Հերակլ կայսեր Ատրպատականով անցած և այնուհետև վերադարձին վերաբերող երթուղիների մասին Սեբեոսի հաղորդումից («դառնայ ամուր աշխարհաւն Մարաց, գայ հասանէ ի Փայտակարան», էջ 125) հետևում է, որ խնդրո առարկա ժամանակաշրջանում «Մարաց ամուր աշխարհը» իրանական մի քանի ցեղերի միավորուման, այլ ոչ թե Նիխորական, Մահկեր-տուն և Դասն հայկական գավառների տարածքի անվանումն էր, ինչպես ենթադրվել որոշ հետազոտողների կողմից: «Մարաց ամուր աշխարհը» իր մեջ ընդգրկում էր Ատրպատականի ծայրամասային՝ լեռնային, դժվարամատչելի շրջանները:

Նշելով, որ Յ. Մարկվարտը «Գազայ» անվան փոխարեն կարդում է «Գեղայ» (Ērānšahr, էջ 25), իսկ Հյուբշմանը «Գազ» անվան դիմաց տողատակում հարցա-

կանով գրել է. «Sefid Rud?» (Hübsch., էջ 39), Գ. Աբգարյանը ավելի հավանական է համարել այն նույնացնել Գեղմաղանց լեռների հյուսիսից դեպի արևմուտք հոսող «Գառ-ռահ» գետի հետ (Սեբեոս, էջ 360, ծան. 652): Պետք է նկատի ունենալ, որ Ուրմիա լճից հարավ գտնվող «Գանձակ Շահաստանը» անտիկ աղբյուրներում կոչվել է «Գազա» (Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 46) և «Գազայի գետը» կարող էր համապատասխանել Գանձակ քաղաքի մոտակայքով հոսող (Ստառառովր) գետին (նույն տեղում, էջ 81, տես նաև քարտեզը):

22. Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Թեոդորոս Ռշտունու և բյուզանդական զորավար Պրոկոպի միջև ծագած միջադեպը կայսրության կողմից կարող էր դիտվել հակաբյուզանդական ուղղության դրսևորում Հայոց իշխանի քաղաքականության մեջ: Հ. Մանանդյանը Թեոդորոս Ռշտունու ձերբակալությունը կապել է Մարդուցայքում բյուզանդական զորքի արաբներից կրած պարտության հետ (նշվ. աշխ., էջ 540):

23. Սեբեոս, էջ 143:

24. Սեբեոս, էջ 144: Լեոն կարծիք է հայտնել, թե Վարազտիրոցը, տեսնելով կայսեր կողմից Թեոդորոս Ռշտունու պատիվների արժանանալը և Հայաստան ուղարկվելը, կարոտեց հայրենիքը և փախավ Տայք, որտեղ ապրում էր Բագրատունիների ճյուղը (Լեո, նշվ. աշխ., էջ 307): Սակայն կայսրը Թեոդորոս Ռշտունուն ավելի ուշ ուղարկեց Հայաստան:

25. Սեբեոս, էջ 144: Հայաստանում հուզումներ ծագեցին Վարազտիրոցի ժամանումով: Ինչպես ենթադրել է Ա. Տեր-Ղևոնդյանը, «նա շատ կողմնակիցներ ուներ Հայաստանի ավատատերերի շրջանում» (Тер-Гевондян А., նշվ. աշխ., էջ 31):

26. Մ. Օրմանյանը Թեոդորոս Ռշտունու կալանման մասին չի գրել և ենթադրել է, որ այստեղ խոսքը նրա մասին է (Օրմանյան Մ., էջ 708, 709):

27. Սեբեոս, էջ 144:

28. Սեբեոս, էջ 312, ծան. 504: Ըստ Ա.Տեր-Ղևոնդյանի, Հայաստանի ավատատերերը և զորքը Թեոդորոս զորավարի գլխավորությամբ ուղարկեցին կաթողիկոս Ներսես Գ-ին Վարազտիրոցի մոտ, որպեսզի նա հավատարմության երդում տա և նրան առաջարկի դառնալ Հայոց իշխան (Тер-Гевондян А., նշվ. աշխ., էջ 31): Ս. Մելիք-Բախշյանը այս իրադարձությունները 646 թ. փոխարեն նշել է կայացած 642-643 թթ., ինչպես նաև Թեոդորոս Ռշտունուն շփոթել է բյուզանդական զորավար Թեոդորոսի հետ: Ս. Մելիք-Բախշյանի դիտարկումը այն մասին, որ Թեոդորոս Ռշտունու հանդեպ ձեռնարկված կտրուկ միջոցառումները կարող էին տհաճ լինել Հերակլին շրջապատող հայ քաղաքական գործիչների համար, պետք է վերաբերի Կոստասին, այլ ոչ թե նրա պապին՝ Հերակլին: Հետազոտողը չի անդրադարձել Վարազտիրոցի փախուստի մասին պարմիչի տեղեկությանը: Նրա շարադրանքից հետևում է, որ Թեոդորոսը և Ներսեսը կայսրին խնդրեցին Վարազտիրոցին կյուրոպաղատի պաշտոնում նշանակել, այն ժամանակ, երբ Թեոդորոս Ռշտունին Հայոց իշխան էր, իսկ մի քանի տարի անց նա ձերբակալվեց, այնուհետև վերադարձավ Հայաստան և ստանձնեց իր պաշտոնը (Մելիք-Բախշյան Ս., նշվ. աշխ., էջ 45):

29. Սեբեոս, էջ 144: Գ. Աբգարյանի կարծիքով, այս տողերը «հավատարմության երդման» մասն էին հանդիսանում (նույն տեղում, էջ 312, ծան. 504):

30. Ա. Տեր-Ղևոնդյանը այն կարծիքին էր, որ խոսքը Հայաստանի զորքի մասին է (Тер-Гевондян А., նշվ. աշխ., էջ 31):

31. Սեբեոս, էջ 144: Համաձայնվելով այն կարծիքի հետ, որ Վարազտիրոցը դարձել էր «Հայոց իշխան» (Laurant J. L'Armenie entre Byzance et l'Islam, էջ 401), Կ. Յուզբաշյանը կարծել է, թե խոսքը կարող էր վերաբերել Վարազտիրոցի իրավունքների հաստատմանը Տայքի վրա (Юзбашян К., Армянские государства

էջ 31): Ա. Տեր-Ղևոնդյանի կարծիքով Ղևոնդի մոտ «ակնարկ կա այն մասին, թե Վարազտիրոցին սպանել են հույները, որի համար նրա որդին՝ Սմբատը վրեժ լուծեց հույներից» (Тер-Геворгян А., նշվ. աշխ., էջ 31-32):

32. Սեբեոս, էջ 144:

33. Չամչյան Մ., նշվ. աշխ., էջ345, 347, 349, 356, Saint-Martin M., նշվ. աշխ., էջ 337, Tournebize Fr., նշվ. աշխ., էջ 96, Aslan K., Études Historique sur le peuple Armenien, Paris, 1909, էջ 276, Ghazarian M., նշվ. աշխ., էջ 30, Morgan J., նշվ. աշխ., էջ 116:

34. Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 541:

35. Սեբեոս, էջ 166, 312, ծան.507:

36. Ն. Ադոնցը նշել է, որ «ասպետ» նշանակում է տոհմի պետ (Адонц Н., նշվ. աշխ., էջ 400-402): Հ. Մանանդյանի կարծիքով այսպիսի բացատրությունը հասկանալի է դարձնում «ասպետ»-ի, որպես տիտղոսի կիրառումը միայն Բագրատունիների տոհմում (Մանանդյան Հ., Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երեվան, 1934, էջ 63):

37. «Մանուէլ գործէր ի Կոստանդնուպաւլիս զգործ մագիստրէի» (Սեբեոս, էջ 163): Ք. Պատկանյանի կարծիքով խոսքը այն Մանվելի մասին էր, որին, ըստ Թեոփանեսի, Հերակլը Եգիպտոսի կառավարիչ էր նշանակել (Себеос, 1862, էջ 212, ծան. 215): Եգիպտոսը գրավվեց արաբների կողմից 642 թ. (Кураков М., Завоевание Северной Африки арабами - ПС, вып. 3(66), 1958, էջ 107-126):

38. Սեբեոս, էջ 145, 163:

39. Սեբեոսը ավելացրել է. «եթէ կամիցին իշխանքն Հայոց եւ եթէ ոչ կամիցին» (էջ 145):

40. Դանիելյան Է. Լ., Հայ-բյուզանդական հարաբերությունները և «Մարաց իշխանը» 646 թ. - ՊԲՀ, № 4, 1983, էջ 94-97:

5. 647 թ. արաբական ներխուժումը Հայաստան, Հերևանի և Արծափի պաշտպանությունը

1. Սեբեոս, էջ 145:

2. Նույն տեղում, էջ 146:

3. Dulaurier E., նշվ. աշխ., էջ 231-231, Ghazarian M., նշվ. աշխ., էջ 29, Օրմանյան Մ., էջ 710, Ակինյան Ն., Մատենագրական հետազոտություններ, հ. Գ, Վիեննա, 1930, էջ 301, Մելիք-Բախշյան Ս., նշվ. աշխ., էջ53-55:

4. Չամչյան Մ., նշվ. աշխ., էջ 345:

5. Кулаковский Ю., նշվ. աշխ., էջ 202.

6. Մանանդյան Հ., Երկեր, հ. Բ, էջ 535, Առաքելյան Բ., Հայաստանը արաբական տիրապետության առաջին շրջանում և հայերի պայքարն անկախության համար.- «Գիտական ժողովածու», XX, Արմֆան, Երևան, 1941, էջ 70-71, Тер-Геворгян А. նշվ. աշխ., էջ 33-34: Լեոն նշել է 651 թ. (նշվ. աշխ., էջ 317):

7. Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 528-536:

8. Մելիք-Բախշյան Ս., Դիտողություններ արաբների՝ Հայաստան կատարած առաջին արշավանքների մասին, - ՊԲՀ, 1964, № 3, էջ 88: Կոստաս Բ-ի գահակալության սկիզբը է. Դյուլորիեն նշել է 642 թ., իսկ Արծափի գրավումը (հոռի 23-ը) տոմարական հաշվումների հիման վրա համարել է 643 թ. օգոստոսի 10-ի կիրակի օրը (Dulaurier E., նշվ. աշխ., էջ 232, հմմտ. Ghazarian M., նշվ. աշխ., էջ 29): Որ՞ն էր Ս. Մելիք-Բախշյանի տոմարական հաշվումների նորույթը, մանավանդ որ իր հոդվածում նա է. Դյուլորիեի աշխատությունը չի հիշատակել:

9. Մելիք-Բախշյան Ս., նշվ. աշխ., էջ 88:

10. Себеос, 1862, էջ 211, ծան. 207: Համմտ. Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 535, 527, 531, Սեբեոս, էջ 311, ծան. 498: Վ. Իսկանյանը Վարազտիրոցի մահը դրել է մինչ 643 թ., իսկ արաբների կողմից Արծափի պաշարման ժամանակաշրջանը նշել «դրանից մի քանի տարի անց», առանց տարեթիվը նշելու: Այնուհետև գրել է, որ Թեոդորոս Ռշտունին հաղթել է նրանց և փախուստի մատնել, որից հետո Թումա անունով ոմն պաշտոնյա եկել և ձերբակալել էր նրան, թեև, այնուհետև, կայսրը արդարացրել էր նրան և վերահաստատել իր պաշտոնում (Իսկանյան Վ. Կ., Հայ-բյուզանդական հարաբերությունները VII դարում, էջ 75): Ժամանակին Հ. Մանանդյանը վերանայել էր Մ. Չամչյանի, Հ. Համբարյանի և ուրիշների կարծիքները, որոնք ենթադրում էին, «որ իբր Սեբեոսի մոտ հիշված նախընթաց դեպքերը տեղի են ունեցել Արծափի առումից առաջ՝ 642 կամ 642-644 թվականներին» (նշվ. աշխ., էջ 532):

11. Տես Grumel V., նշվ. աշխ., էջ 347, 357, История Византии, h. I, էջ 369, Cambr. MH, էջ 776:

12. Սեբեոս, էջ 142:

13. Ղևոնդ, էջ 8, համմտ. Ասողիկ, էջ 120:

14. Ղևոնդ, էջ 9-11, համմտ. Ասողիկ, էջ 121-122:

15. Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 534: Վերը անհրաժեշտություն զգացվեց վերանայելու այն:

16. Тер-Гевондян А. նշվ. աշխ., էջ 29-30.

17. Սեբեոս, էջ 147:

18. Նույն տեղում:

19. Նույն տեղում, էջ 357, ծան. 641:

20. Յու. Կուլակովսկին նշել է 651 թ. (նշվ. աշխ., էջ 203-204), Բ. Առաքելյանը՝ 648 (նշվ. աշխ., էջ 69, Նույնի՝ ժամանակագրական դիտողություններ, էջ 62), իսկ Ա. Տեր-Ղևոնդյանը այդ գինադադարի կապակցությամբ Սեբեոսի հաղորդմանը չի անդրադարձել, այլ միայն գրել է, որ Դիոնիսիոս Տելմահրեցու տեղեկության համաձայն, 652-653 թթ. բյուզանդական պաշտոնյա Պռոկոպը արաբների հետ գինադադար կնքեց (Тер-Гевондян А., նշվ. աշխ., էջ 38): Գինադադարի տարին որոշելու հարցում ավելի ճիշտ կլինի հետևել Սեբեոսի շարադրանքին, քանի որ Տելմահրեցու մոտ այդ տեղեկությանը նախորդող և հաջորդող հատվածներում (Denys de Tell-Mahre, էջ 5-9) նկատվում են ժամանակագրական որոշ անճշտություններ: Ինչպես կարելի է տեսնել, Բ. Առաքելյանը և Ա. Տեր-Ղևոնդյանը, ընդունել են Հ. Մանանդյանի կարծիքը՝ 650 թ. Արծափի գրավման մասին, սակայն այլ տեսակետի են նրա վերը նշված երրորդ փաստարկի կապակցությամբ, ըստ որի, թե՛ Արծափի առման և թե՛ Պռոկոպի կնքած զինադադարի մասին Սեբեոսի մոտ եղած հաղորդումները միևնույն՝ 650 թ. են վերաբերում:

21. Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 533: Վ. Վարդանյանը այս արշավանքը համարել է կայացած արաբների կողմից VII դ. կեսին Իրանի նվաճմանը զուգահեռ, և առանց աղբյուրների քննական վերլուծության ընդունել է 650 կամ 651 թ. որպես Արծափի ճակատամարտի տարի (Վարդանյան Վ. Մ., VII դ. կեսի արաբական արշավանքը Հայաստան և Վասպուրականը. - ՊԲՀ, 1990, № 3, էջ 92-93): Ի դեպ, նշված հոդվածի վերնագիրը անհաջող է, քանի որ Վասպուրականը չի կարելի անջատ ներկայացնել Հայաստանից, որի բուն աշխարհներից էր այն: Հետազոտողը հաշվի չի առել, որ Սեբեոսը իր աշխատությունում ժամանակագրորեն տարբեր իրադարձությունների կապակցությամբ է անդրադարձել այդ դեպքերին: Արծափի մասին Սեբեոսը գրել է ԽԵ գլխում, իսկ Իրանի նվաճումը (գլ. ԽԸ) նշել է կայացած Կոստաս կայսեր 10-րդ տարում:

22. Տոմարական հաշվումները կատարել եմ Բ. Թումանյանի և Հ. Բադալյանի

կողմից հրապարակած աղյուսակների հիման վրա (Բ. Թումանյան, նշվ. աշխ., էջ 16, 34, Հ. Բադալյան, նշվ. աշխ., էջ 35): Ըստ երևույթին, հենց այս արշավանքին է վերաբերում Տաբարիի հետևյալ հաղորդումը. հիջ. 24 կամ 26 թ. Վալիդ իբն Օքբայը ներխուժեց Ատրպատական և Հայաստան: Նա Սալման իբն Ռաբիայի գլխավորությամբ զորք ուղարկեց Հայաստան (հիջ. 24 թ.): Ա. Տեր-Ղևոնդյանը անդրադարձել է հիջ. 24 թ. վերաբերող հաղորդմանը (Тер-Гевондян А., նշվ. աշխ., էջ 203-27): Սալմանը ավարով վերադարձավ Վալիդի մոտ: Համաձայն Իբն ալ-Ասիրի, այդ տեղի ունեցավ հիջ. 25 թ. (Արաբացի մատենագրերը Հայաստանի մասին, էջ 82): Անհրաժեշտ է նշել, որ ալ-Ասիրի կողմից հիջ. 25 թվականի տակ նկարագրված դեպքերը պետք է տարբեր տարիների վերաբերեն, եթե նկատի ունենանք հույն զորավար Մավրիանոսի մասին հիշատակությունը: Հիջ. 26 թ. սկսվել է 646 թ. (17 հոկտեմբերի) և ավարտվել 647 թ. (6 հոկտեմբերի, տես Tsybulsky V. նշվ. աշխ., էջ 22): Չնայած Սեբեոսը 647 թ. արշավանքի կապակցությամբ չի խոսել Դվինի գրավման մասին, սակայն, հնարավոր է, որ Այրարատի, Տայքի և Վիրքի ուղղությամբ ներխուժած զորքը հարձակվել էր նաև Դվինի վրա: 35 հազար գերիների մասին Մովսես Կաղանկատվացու տեղեկությունից կարելի է ենթադրել, որ, եթե Կոստաս Բ-ի վեցերորդ տարվա մասի հիշատակությունը [«Իսկ Կոստաս սորին (Կոստանդին Գ-ի) որդի՝... եւ ի վեցին (ամի) Տաճիկք էին ի Հայս, եւ առաւ Դուին ի Տաճկաց, եւ որք գերեցանն՝ ԼԵՌ թուեցան» (Մովսես Կաղանկատվացի, էջ 317)] ձեռագրական միջամտության արդյունք չէ (այստեղ, ինչպես եւ «Անանուն ժամանակագրությունում» և Ղևոնդի ու Ասողիկի երկերում կարող էր լինել «Բ ամին», որը, այնուամենայնիվ, վերը ասվածի առումով նույնպես սրբագրության կարիք ունի), ապա, հնարավոր է որ պատմիչը համատեղել է 641 և 647 թթ. արշավանքներին վերաբերող հաղորդումները (առաջինին է վերաբերում 35 հազ. գերիների հիշատակությունը իսկ երկրորդին՝ Կոստաս Բ-ի վեցերորդ տարվա մասին տեղեկությունը):

23. Յու. Կուլակովսկին միևնույն ժամանակ գրել է, որ Սեբեոսը այս արշավանքը թվագրել է Կոստանդի երկրորդ տարով (Кулаковский Ю., նշվ. աշխ., էջ 199-202):

24. Ինչպես վերը տեսանք, ըստ Հ. Մանանդյանի, Դվինի գրավման մասին տարեթվի վերաբերյալ պատմիչների հաղորդած տեղեկությունները խառն են ու հակասական և դրանք հիմք են ծառայել «անհաշտելի տարաձայնությունների նաև բանասիրական թե՛ հայ և թե՛ օտար աշխատություններում» (նշվ. աշխ., էջ 518): Դրանց թվին Հ. Մանանդյանը դասել է նաև Յու. Կուլակովսկու կարծիքը: Ի տարբերություն արաբների կողմից Դվինի առաջին գրավմանը վերաբերող թվագրման, խնդրո առարկա արշավանքը Յու. Կուլակովսկու կողմից 647 թ. դնելը ճիշտ է և, ինչպես տեսանք, ապացուցվում է նաև Սեբեոսի ժամանակագրական տվյալների քննությամբ:

Շ. Սմբատյանը Կոստաս Բ-ի վեցերորդ տարին նշել է 648 թ.: Նրա կարծիքով, Մովսես Կաղանկատվացին այնքան էլ ճիշտ չի իր հաղորդման մեջ, որը իրականում վերաբերում է արաբների կողմից Դվինի գրավմանը 640 թ.: Այս հարցերում գիտնականը անվերապահորեն հետևել է Հ. Մանանդյանի կարծիքին (Мовсес Каланкатуаци. История страны Алуанк, перев., предисл. и коммент. Ш. В. Смбатяна, Ереван, 1984, էջ 231, ծան. 39):

25. Հետազոտողների մի մասը կարծել է, թե խոսքը այժմյան մայրաքաղաք Երևանի մասին է (Հ. Շահխաթունյան, Թ. Հակոբյան, Մ. Հովհաննեսյան, Ս. Մելիք-Բաշխյան և ուրիշներ), մյուսները այն սրբագրել և կարդում են «Հեր» (Հ. Մանանդյան, Գ. Աբգարյան): Ենթադրվել է նաև, որ խնդրո առարկա տեղանունը համապատասխանում էր Առեստավանին (Թ. Ավդալբեգյան): Այս հարցի շուրջ գոյություն ունեցող կարծիքների մանրամասն քննությունը տես Աբգարյան Գ. Վ.

«Երևանի բերդի հնագույն հիշատակությունը». - ԼՀԳ, № 8, 1972, էջ 24-31: Վկայակոչելով Հովհաննես Դրասխանակերտցու (էջ 92) և Սամվել Անեցու հիշատակությունները, «Երևանի կռվի» մասին, նշված է, որ Սեբեոսի «հաղորդումը VII դ. Երևանի մասին միակ հիշատակությունը չէ» (Հակոբյան Թ. Խ., Սիմոնյան Ա. Պ. Երևանի 2750, Երևան, 1968, էջ 31): Ա. Տեր-Ղևոնդյանը, հիշատակելով Հ. Մանանդյանի և Գ. Աբգարյանի տեսակետը, միևնույն ժամանակ նշել է, որ «Երևանը» գտնվում էր Վասպուրականում (նշվ. աշխ., էջ 34):

26. Սեբեոս, էջ 145, 314, ծան. 512:

27. Ղևոնդ, էջ 11: Հմմտ. Ասողիկ, էջ 121-122: Հ. Մանանդյանը նշել է, որ Սեբեոսի և Ղևոնդի երկերում Արծափի առման մանրամասնությունները համապատասխանում են միմյանց (Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 529-530):

28. «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացւոյ», Վենետիկ, 1881, էջ 29; Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 85, 107:

29. Փաւստոսի Բիւզանդացւոյ, Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883, էջ 104, Հյուբշման Հ., նշվ. աշխ., էջ 80-81:

30. Ասողիկ, էջ 80-81: Դավիթ Անհաղթի ծննդավայրի մասին տես նաև Ինճիճեան Ղ. Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822, էջ 120; Ակինեան Ն. Դաւիթ Հարքացի Անհաղթ փիլիսոփայ, Վիեննա, 1959, էջ 71; Աճառյան Հ. Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, էջ 24; «Հերեան»-ի տեղադրությունը Հարք գավառում, Խաչեն լճից հարավ՝ Կորի գավառում տես Еремян С. Т. Тарон в древности и средних веках (քարտեզ Ղ. Այվազյանի՝ История Тарона... գրքում): «Գիրք թղթոցում» (էջ 151) հիշատակված է «Դաւիթ Երեւանայ» երեցը (VII դ.), որին չպետք է շփոթել Հարք գավառի Հերեան գյուղում ծնված Դավիթ Անհաղթի հետ:

31. Դանիելյան Է. 647 թվականի արաբական արշավանքը Հայաստան. - ՊԲՀ, № 2, 1982, էջ 114: Վ. Վարդանյանի կարծիքով, Սեբեոսի մոտ խոսքը Երևանի մասին է, ուստի նա ժխտել է Հերեան - Հէրևան նույնացումը: Բացի վերոհիշյալ փաստարկներից, նա հաշվի չի առել այն հանգամանքը, որ, եթե արաբական զորախումբը Երևանից գար, ապա նախ կհասներ Արծափ և հետո Որդսպու, որը դրանից հարավ էր գտնվում: Այնինչ, Սեբեոսի մոտ հակառակն է՝ թշնամին Որդսպուից հետո եկավ Արծափ: Հետազոտողը Սեբեոսի հաղորդումը Սեպհական գնդի կողմերը արշաված զորախմբի մասին կասկածելի է համարել, իբրև թե պատմիչը այն նշել է որպես արաբական առաջին զորախմբի երթուղի (Վարդանյան Վ., նշվ. աշխ., էջ 94-98), այնինչ, ըստ Սեբեոսի, Այրարատի ուղղությամբ գնացել էր առաջին զորախումբը, իսկ Սեպհական գնդի կողմերը՝ երկրորդ:

32. Սեբեոս, էջ 315, ծան. 516: Բ. Առաքելյանը (նշվ.աշխ.,էջ 70) «կողմն Սեպհական գնդի մասին» լրիվ այլ կարծիքի է: Նա գրել է. «Մյուս բանակը հետապնդելով Սեպհական գնդին...»: Իսկ Արծափի պաշարմանը նախորդած և հաջորդած դեպքերի կապակցությամբ գրել է. «Երկրորդ բանակը Օթմանի և Օգոմայի գլխավորությամբ, Երևանի և Որդսպուի անհաջող պաշարումից հետո, շարժվելով դեպի Արծափ մեծ բերդը, պաշարում է այն: Բերդի պաշտպանությունը գլխավորում էր Սահակ Բագրատունին, Վարազտիրոցի որդին: Արաբական զորքը մեծ վնասներ է հասցնում բերդին, բայց չի կարողանում գրավել: Աշոտ Բագրատունին Դարոնից բերդից (Դարաւն-Դարույնք) օգնություն խնդրելու համար 40 մարդ է ուղարկում այնտեղ»: Բ. Առաքելյանը գտնում էր, որ Սահակը Վարազտիրոցի որդին էր և գլխավորում էր Արծափի պաշտպանությունը, իսկ Դարույնքի գլխավոր համարել էր Աշոտ Բագրատունուն: Այս ենթադրության հիմքը պարզ չէ: Սեբեոսը Արծափի պաշտպաններից ոչ մեկի անունը չի տալիս, իսկ Դարույնքի իշխան է նշել Սմբատ Բագրատունուն՝ Վարազ-Սահակի որդուն: Արծափի և Դարույնքի կապակցությամբ պատմիչը Աշոտ Բագրատունուն չի հիշատակել: Պատ-

միչը Պապ Բագրատունու հոր՝ Աշոտ ասպետի մասին հիշատակություն ունի, որը վերաբերում է 596 թ. (Սեբեոս, էջ 94):

33. Մարքվարտ Յ., Հայ Բագրատունիների ճիւղագրութիւնը, էջ 5, Ակինյան Ն. Մատենագրական հետազոտություններ, հ. Գ, էջ 301: Ն. Ակինյանը իրավացի էր, Վարազ-Սահակի որդուն նույնացնելով Ղևոնդի հիշատակած Սմբատ Բագրատունու հետ, որին Գրիգոր Մամիկոնյանի հետ Մուավիան պատանդ էր վերցրել (Ղևոնդ, էջ 14): Սակայն նա չպետք է Վարազ-Սահակի որդուն նույնացներ Ղևոնդի մեկ այլ հաղորդման մեջ հիշատակվող Սմբատի («զՍմբատ ոմն ի տոհմէ Բագրատունւոյ», էջ 13) հետ: Իրավացի է Ք. Պատկանյանը, ենթադրելով, որ վերջինս Վարազտիրոցի որդին էր (Гевонд, էջ 131, ծան 47):

34. Կ. Բասմաջյանը իրավացիորեն նշել է, որ Վարազտիրոցը մահացել էր 646 թ. (տես ժամանակագրական պատմութիւն Հայոց, արտագրուած Թէոդիկի «Ամենուն տարեցոյց»-ի 1914 թ. հատորեն, էջ 4): Մ. Օրմանյանը գրել է, որ Վարազտիրոցը մի քանի եղբայր ուներ (Օրմանյան Մ., էջ 681, 682):

35. Սեբեոս, էջ 144-145: Դարույնքը գտնվում էր Կոգովիտ գավառում, որը 591 թ. բաժանումից հետո հայտնվել էր կայսրությանը անցած Հայաստանի արևմտյան մասում: Ուրեմն, մինչ Սմբատ Խոսրով Շում Բագրատունին Խոսրով Փարվեզի մոտ ծառայության մեջ էր, նրա տոհմական կալվածքը, որտեղ ապրում էին նրա ընտանիքի անդամները (բացի Վարազտիրոցից) և մերձավոր ազգականները, մնացել էր Հայաստանի բյուզանդական մասում: 640-ական թվականներին 591 թ. սահմանագիծը արդեն վերացել էր:

36. Հ. Մանանդյանը Թեոդորոս Ռշտունու կալանավորումը և դատը Կոստանդնուպոլսում նշել է կայացած 646 թ., իսկ վերադարձը Հայաստան՝ 649 թ. (նշվ. աշխ., էջ 535): Սեբեոսի մոտ այնպիսի տեղեկություն չկա, թե Թեոդորոս Ռշտունին երեք տարի բացակայել էր երկրից:

37. Սեբեոս, էջ 146-147: Հովհան Մամիկոնյանի այն հաղորդումը (էջ 285-286), որ «Աբդռահիմը» անցավ Հարքով, Բասենով, Վիրքով, Ջավախքով, Վանանդով և այնուհետև վերադարձավ խալիֆայության սահմանները պետք է վերաբերի 647 թ. արշավանքին: Այս երթուղին, բացի Հարքից և Աղվանքից, համապատասխանում էր արաբների ներխուժման առաջին ուղղությանը, Հարքը՝ երկրորդ, իսկ Աղվանքը՝ երրորդ:

6. Հայ Առաքելական եկեղեցու միջոցառումները ժողովրդագրական վիճակի կայունացման և դավանանքային բնագավառներում

1. Կանոնագիրք Հայոց, Բ: Աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, Երևան, 1971, էջ 200:
2. Նույն տեղում, էջ 205-206:
3. Նույն տեղում, էջ 213-215:
4. Սեբեոս, էջ 147, 164, 169: Պայմանգրի կնքմանը նախորդել էր արաբա-բյուզանդական ծովային ճակատամարտը Կիպրոս կղզու մոտ (649 թ.):
5. Պետրոսյան Ե., նշվ. աշխ., էջ 61:
6. Սեբեոս, էջ 147-148:
7. Նույն տեղում:
8. Նույն տեղում, էջ 148, 167:
9. Հայ պատմագրության մեջ կարևորվել է Եկեղեցու ազգապահպան դերը վաղ միջնադարյան Հայաստանում (տես Մելքոնյան Է. Լ., Էթնիկական մշակույթը և ավանդությունը, - ՊԲՀ, 1980, № 4, էջ 83): Հայ հոգևոր և աշխարհիկ գոր-

ծիչները հայրենիքին բաժին հասած դժվարին ժամանակներում ցուցաբերել են միացյալ կամք: Ինչպես նշել է Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը, «Հայաստանեայց Եկեղեցին երբեք չունեցաւ եւ այսօր ալ չունի կղերապետական կառոյց: Հայաստանեայց Եկեղեցին կը պատկանի բոլորին՝ այսինքն հոգեւորականութեան եւ ժողովուրդին: Հայ ժողովուրդը եւ հայ հոգեւորականութիւնը միասին պաշտպանեցին եկեղեցին, քրիստոնէական կրօնքը եւ հայ հայրենիքը» (Հայաստանեայց Եկեղեցին նոր հազարամեակի սեմին, Նիւ Եորք, 1999, էջ 6; հմմտ. Վիգեն եպիսկոպոս Այքազյան, Եպիսկոպոսի կարգավիճակը Հայ Եկեղեցիում. Պատմություն և պատմագրություն. - Ատենախոսության սեղմագիր, Երևան, 1999, էջ 13-14):

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԹԵՈԴՈՐՈՍ ՌՇՏՈՒՆՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1. Հայ-բյուզանդական հարաբերությունները հայ-արաբական պայմանագրի կնքման ժամանակաշրջանում

VII դարի կեսերին, մինչ Բյուզանդական կայսրությունը զբաղված էր ներքին խռովություններով և երկպառակություններով[1], Արաբական խալիֆայությունը ավարտեց Սասանյան Պարսկաստանի ջախջախումը: Այս իրավիճակում կտրուկ բարդացավ Հայաստանի դրությունը միջազգային ասպարեզում: Խալիֆայությունը արդեն այնքան էր հզորացել և ընդարձակել իր տարածքային նվաճումները, որ սկսել էր զգալի դեր խաղալ միջպետական հարաբերություններում: Հայաստանը ստիպված էր իր արտաքին քաղաքական հարաբերությունները կառուցել ելնելով միջազգային քաղաքականության այն միտումներից, որոնք թելադրվում էին նվաճող տերությունների հակամարտությունով: Կայսրության և խալիֆայության միջև կնքված եռամյա զինադադարի ժամկետը լրանալուց հետո[2] արաբա-բյուզանդական պատերազմի վերսկսումով հակամարտող տերությունների ռազմական գործողությունները ընդգրկելու էին նաև Հայաստանի տարածքը՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով:

Ուստի Հայաստանի պետական գործիչները պետք է ճկուն արտաքին քաղաքական գիծ մշակեին և դրա հետ մեկտեղ համապատասխան կողմնորոշում ընտրեին: Բարդությունը կայանում էր նրանում, որ այդ ստիպողական քայլ էր, այլ ոչ թե դաշնակցի կամավոր ընտրություն: Դրա հետ մեկտեղ, ընտրելով կողմերից մեկին, Հայաստանը թշնամի էր ձեռք բերում ի դեմս մյուսի:

«Իբրեւ ետես արքայն Իսմայելի զյաջողումն յաղթութեանս, եւ զի բարձաւ թագաւորութիւնն Պարսից, - գրել է Սեբեոսը, - իբրեւ լցան ամք Գ պայմանի խաղաղութեանն՝ ոչ կամեցաւ այլ աւելի առնել խաղաղութիւն ընդ թագաւորն Յունաց, այլ հրաման ետ զաւրաց իւրոց ունել գործ պատերազմի ընդ ծով եւ ընդ ցամաք, զի բարձցէ եւ զայն եւս թագաւորութիւն յերկրէ, յերկոտասաներորդ ամի թագաւորութեանն Կոստանդի»[3]: Պատերազմական գործողությունները սկսվելու մասին Սեբեոսի հաղորդմանը համահնչուն են Դիոնիսիոս Տելմահրեցու հաղորդումը՝ հաբիբի կողմից ռազմարշավը վերսկսելու (սելևկյան 964՝ մ. թ. 652/3 թ.) և Ղևոնդի տեղեկությունը՝ Թեոդորոս Ռշտունուն ուղղված Կոստաս Բ-ի պահանջի (որպեսզի Հայոց իշխանը զորք ուղարկեր արաբներին դիմակայելու համար) մասին[4]: Միայն երկրորդ պա-

հանջից հետո Թեոդորոս Ռշտունին ուղարկեց իր որդուն՝ Վարդին բյուզանդացիների մոտ: Բյուզանդական զորքը պարտություն կրեց, իսկ Վարդը կտրեց Եփրատի վրա գցված կամուրջի ճոպանները՝ նահանջող բյուզանդացիներին խանգարելու նպատակով[5]:

Ղևոնդի հաղորդմանը Լեոն անդրադարձել է Թեոդորոս Ռշտունու մահվան թվականի կապակցությամբ, նշելով, որ հակասություն կա Սեբեոսի շարադրանքի և Ղևոնդի այս հաղորդման միջև[6]: Հ. Մանանդյանը բերել է Ղևոնդի հաղորդման միայն սկիզբը՝ չանդրադառնալով այս դրվագին, համարելով, որ այն անհավանական է և անվավեր[7]: Չի հաստատվում նաև այն կարծիքը, ըստ որի, Ղևոնդի նկարագրած իրադարձությունները տեղի էին ունեցել հյուսիսային Ասորիք ներխուժած Կոստասի դեմ (ըստ Յաքուբիի հիջ. 41 թ. մ.թ. 661-662 թթ.) Մուավիայի կողմից Հաբիբի գլխավորությամբ զորք ուղարկելուց հետո: Ղևոնդը և Յաքուբին գրել են տարբեր դեպքերի մասին, որոնք հակառակ արդյունք էին ունեցել: Ղևոնդի հաղորդումից հետևում է, որ արաբները հաղթող էին դուրս եկել, իսկ ըստ Յաքուբիի, արաբները ստիպված էին պայմանագիր կնքել Բյուզանդիայի հետ՝ տարեկան հարկ վճարելու պայմանով[8]: Ըստ Ղևոնդի, Թեոդորոս Ռշտունին իր որդուն ուղարկել էր խանգարելու բյուզանդացիներին արաբների հետ կռվելիս: Թեոփանեսը հաղորդել է, որ Մուավիայի հետ դաշինք կնքելուց հետո հայ պատրիկոս Պասագնատեսը իր որդուն (պատմիչը նրա անունը չի տվել) պատանդ թողեց արաբների մոտ:

Պասագնատեսի[9] անձնավորության կապակցությամբ հայտնված տարբեր կարծիքներից առավել հավանական է համարվել այն, ըստ որի, Պասագնատեսը նույն ինքը՝ Թեոդորոս Ռշտունին էր: Այսպիսով, Թեոդորոս Ռշտունին իր որդուն ուղարկել էր բյուզանդացիների ճամբարը մինչ հայ-արաբական պայմանագրի կնքումը: Իսկ այդ կարող էր տեղի ունեցած լիներ արաբա-բյուզանդական պատերազմի սկզբում: Թեոդորոս Ռշտունու և նրա որդու՝ Վարդի, սպասողական, իսկ այնուհետև հակաբյուզանդական դիրքորոշումը նոր արտաքին քաղաքական գծի ազդանշան էր:

Խալիֆայության անխուսափելի ագրեսիայի սպառնալիքի և արաբա-բյուզանդական հակամարտության ծայրահեղ սրման պայմաններում Թեոդորոս Ռշտունին խալիֆայության հետ հարաբերությունների հաստատման ուղիներ էր փնտրում, որպեսզի ինչ-որ ձևով կանխեր Հայաստանի վրա կախված վտանգը: Սեբեոսը գրել է. «Եւ ի նմին ամի ապստամբեցին Հայք եւ ի բաց կացին ի թագաւորութենէն Յունաց եւ հնազանդեցան ի ծառայութիւն արքային Իսմայելի»[10]: Այստեղ գույները բավականին խտացված են ներկայացված:

Հայաստանը դեռևս VII դ. 30-ական թթ. և ավելի հստակորեն 40-ական թվականներից իր տարածքային ամբողջականության վերականգման և քաղաքական վերամիավորման գործընթացն էր ապրում, չնայած ներքին և

արտաքին քաղաքական դժվարություններին: Բյուզանդիան տարբեր առիթներով խառնվում էր Հայաստանի ներքին գործերին[11], սակայն այլևս վիճակի տերը չէր: Թեոդորոս Ռշտունու կողմից արտաքին քաղաքական գծի փոփոխությունը վկայություն էր միջազգային ասպարեզում Հայաստանի վարած ինքնուրույն քաղաքականության: Մյուս կողմից, պայմանագիր կնքելով խալիֆայության հետ, Թեոդորոս Ռշտունին նկատի չուներ խալիֆայության գերիշխանության հաստատումը Հայաստանում:

Հայաստանի հանդեպ կայսրության ոչ բարյացկամ և նույնիսկ թշնամական վերաբերմունքը ստիպեց Թեոդորոս Ռշտունուն մշակել այնպիսի արտաքին քաղաքական գիծ, որը երկիրը կփրկեր խալիֆայության հրոսակախմբերի ներխուժման վտանգից, քանզի ստեղծված իրավիճակում Հայաստանի համագործակցությունը Բյուզանդիայի հետ կարող էր դիտվել խալիֆայության կողմից որպես պատերազմին մասնակցելու քայլ[12]:

Ըստ Սեբեոսի, « ...եդին ուխտ ընդ մահու, եւ ընդ դժոխոց դաշինս կռեցին Թէոդորոս Ռշտունեաց տէր ամենայն իշխանաւքն Հայոց, ի բաց ընկեցեալ զաստուածային դաշնաւորութիւնն»[13]: Սեբեոսի շարադրանքում նկատվում են գաղափարական տեսանկյունից ծայրահեղ հակառակ գնահատականներ կապված Բյուզանդիայի եկեղեցական քաղաքականության և Թեոդորոս Ռշտունու նոր՝ արտաքին գծի ընտրության հետ: Սեբեոսը խստորեն դատապարտել է Կոստասի ձգտումը՝ ստիպել հայերին հաղորդություն կատարել քաղկեդոնական ծեսով. «Այլ ոչ դադարեաց վիշապն այն ապստամբ, այլ թէ եւ աստուածամարտ լինել կամեցաւ յիւրոց խորամանկութենէ. այլ երկնէր յարուցանել հալածանս ի վերայ եկեղեցեացն Հայաստանեայց աշխարհին: ...առ մահուն երկիւղիւ ամենեքեան զհրամանսն հաղորդութեանն կատարէին...»: Երբ Թեոդորոս Ռշտունին պայմանագիր կնքեց խալիֆայության հետ, Սեբեոսը այն որակեց որպես «ընդ դժոխոց դաշինս... », իսկ Բյուզանդիայի հետ եղած հարաբերությունները՝ «զաստվածային դաշնաւորութիւնն»[14]:

Դավանանքային հարցերում Սեբեոսը հանդես էր գալիս որպես հայ միաբնակ եկեղեցու ջատագով, իսկ միջպետական հարաբերություններում՝ ելնում էր համաքրիստոնեական դիրքերից: Պայմանագրի բովանդակությունը պահպանվել է «Իսմայելի իշխանի» խոսքում, որը բերել է Սեբեոսը. «Այս լիցի ուխտ հաշտութեան իմոյ ընդ իս եւ ընդ ձեզ՝ որչափ ամաց եւ դուք կամիջիք. եւ ոչ առնում ի ձէնջ սակ զերեամ մի. ապա յայնժամ տաջիք երդմամբ, որչափ եւ դուք կամիջիք: Եւ հեծեալ կալէք յաշխարհիդ ԺԵ հազար, եւ հաց յաշխարհէն տուք, եւ ես ի սակն արքունի անգարեմ. եւ զհեծեալսն յԱսորիս ոչ խնդրեմ. բայց այլ ուր եւ հրամայեմ՝ պատրաստ լիցին ի գործ. եւ ոչ արձակեմ ի բերդորայն ամիրայս, եւ ոչ տաճիկ սպայ՝ ի բազմաց մինչեւ ցմի հեծեալ: Թշնամի մի՛ մտցէ ի Հայս. եւ եթէ գայ Հոռոմ ի վերայ ձեր՝ արձակեմ ձեզ զաւրս յաւգնականութիւն՝ որչափ եւ դուք կամիջիք: Եւ երդնում ի

մեծն Աստուած՝ եթէ ոչ ստեմ»[15]:

Հայաստանի համար պայմանագրի կնքումը թելադրված էր առաջին հերթին արաբներին նոր ներխուժումներից ետ պահելու անհրաժեշտությամբ: Իսկ խալիֆայությունը միայն նվաճողական նպատակներ էր հետապնդում. Բյուզանդիայի դեմ պատերազմելիս Հայաստանը պահել իր քաղաքական ոլորտում և անհրաժեշտության դեպքում Հայոց այրուձին օգտագործել խալիֆայության թշնամիների դեմ, իսկ վերջնական նպատակն էր նվաճել Հայաստանը[16]:

Պայմանագրի բովանդակությունից բխում է, որ Հայաստանը և խալիֆայությունը հանդես էին գալիս որպես ոչ հավասար կողմեր: Թեոդորոս Ռշտունին ցանկանում էր պաշտպանել Հայաստանը խալիֆայության հարձակումներից, քանի որ արաբները իրականացնելով իրենց նվաճումները զենքի ուժով, առավել դաժանորեն վարվում էին նվաճված, բռնի ուժով հնազանդեցված բնակչության հետ, որը մասամբ կամ լրիվ ոչնչացվում էր, կամ էլ ստրկացվում, իսկ նրանք, ովքեր խուսափում էին գերեվարությունից, ընկնում էին ծանր հարկերի տակ, կամ էլ դուրս էին վտարվում հարազատ վայրերից և արտագաղթում, իսկ նրանց ունեցվածքը բռնագրավվում էր: Նվաճումների սկզբնական շրջանում, ինչպես այդ մասին վկայում են աղբյուրները, ճակատամարտերը առավել դաժան էին և արյունահեղ[17]:

Ինչպես երևում է պայմանագրի բովանդակությունից, խալիֆայությունը ձգտում էր ոչ միայն Հայաստանը ներառնել իր ազդեցության ոլորտը, այլև նպատակադրվել էր օգտագործել Հայոց այրուձին իր քաղաքական ծրագրերը իրականացնելու համար: Հետազոտողները տարբեր կերպ են բացատրել Ասորիքի հիշատակությունը պայմանագրում: Ս. Մելիք-Բախշյանի կարծիքով արաբները իրենց տերության կենտրոնական շրջանում Հայոց ուժերի կարիքը չունեին, ուստի նախատեսում էին դրանք օգտագործել Բյուզանդիայի դեմ[18]: Սակայն Ա. Տեր-Ղևոնդյանը իրավացիորեն նշել է, որ Հայոց հեծելազորը սահմանային գոտում չպետք է մասնակցեր Բյուզանդիայի դեմ մղվող պայքարում: Ինչպես Սասանյանների, այնպես էլ խալիֆայության նվաճումների ժամանակ հայկական զորամիավորումները օգտագործվում էին Բյուզանդիայի հետ մղվող պայքարի մարտադաշտերից հեռու վայրերում: Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ խալիֆայությունը օգտագործեց Հայաստանի տարածքը որպես ռազմահենադաշտ իր հետագա նվաճումների համար, իսկ Հայոց զորական ուժերը՝ խազարների դեմ մղված պայքարում[19]:

Պայմանագրի կնքման ժամանակաշրջանում, ըստ երեվույթին, Հայաստանում բյուզանդական զորք չի եղել[20], քանի որ նրանում ասվում էր, որ, եթե հույները հարձակվեն հայերի վրա, ապա խալիֆայությունը զորք կուղարկեր օգնության համար: Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, խալիֆայությունը խախտեց Հայաստանի իրավունքները երաշ-

խավորող պայմանագրի բոլոր կետերը:

Բյուզանդիան, խալիֆայության հարվածների տակ զրկվելով նվաճած շատ տարածքներից, հայ-արաբական պայմանագրի կնքումից հետո կանգնեց Հայաստանում իր քաղաքական ազդեցությունը կորցնելու փաստի առաջ: Բացի այդ, կայսրության կողմից Հայաստանի տարածքի օգտագործումը ռազմական նպատակներով խալիֆայությունը դիտելու էր որպես թշնամական գործողություն, որը պահանջելու էր անմիջական միջամտություն: Պարզ է, որ արաբա-բյուզանդական պատերազմի վերսկսման պայմաններում Հայաստանի բռնած դիրքը անբարենպաստ էր կայսրության համար թե՛ ռազմավարական և թե՛ քաղաքական առումներով: Այդ իսկ պատճառով Կոստաս Բ-ը որոշեց կրկին խառնվել Հայաստանի գործերին: Սակայն նրա բոլոր խնդրանքներին և պահանջներին համագործակցության առաջարկով Հայաստանից բացասական պատասխաններ էին ստացվում: Կայսրը որպես պատրվակ օգտագործեց բյուզանդական զինվորների բողոքը Թեոդորոս Ռշտունու դեմ (որն իբրև թե իր հայրենակիցների հետ մեղավոր էր բյուզանդացիների պարտության մեջ Մարդուցայքում) և ներխուժեց Հայաստան: Հարյուր հազարանոց զորքի գլուխն անցած Կոստաս Բ-ը եկավ Դերջան[21]: Այստեղ «ընդ առաջ եղեն նմա արք իսմայելացիք եւ մատուցին նմա թուղթ յիշխանէն իւրեանց, որ էր գրեալ այսպես, թե «Հայք իմ են, անդ մի՛ երթար. ապա թէ երթաս՝ ես գամ ի վերայ քոյ, եւ առնեմ զքեզ, որ անդրէն փախչել ոչ կարես»[22]: Այստեղից բացահայտորեն երևում են խալիֆայության հեռու գնացող նվաճողական ծրագրերը Հայաստանի հանդեպ: Ինչպես հետևում է այս գրության բովանդակությունից, պայմանագրին հակառակ, Հայաստանում գտնվում էին խալիֆայության ներկայացուցիչները:

Կոստասը շարունակելով իր ճանապարհը, եկավ Կարին (Թեոդոսուպոլ): Այստեղ նրան ներկայացան «իշխանք եւ զաւրք Չորրորդն կոչեցեալ Հայոց, եւ այլ ամենայն զաւրք եւ իշխանք, որ յայնմ կողմանէ գնացեալ էին յՌշտունականէն: Ընդ առաջ ելին նմա Սպերացիքն, իշխանքն Բագրատունեաց, եւ Մանաղայքն, եւ Դարանաղայքն, եւ որք յԵկեղեաց գաւառէ, եւ ամենայն զաւրք տեղեացն այնոցիկ, եւ Կարնացիք, եւ Տայեցիք, եւ Բասենացիք: Եւ անդ ընդ առաջ եղեն նմա իշխանք Վանանդայ հանդերձ զաւրուն իւրեանց, եւ Շիրակացիք, եւ Խորխոռունին, եւ արք տանն Դիմաքսենից: Անդ ընդ առաջ եղեւ նմա Մուշեղ Մամիկոնեան համազգեաւքն իւրովք հանդերձ եւ այլովք ոմամբք իշխանաւք, եւ զաւր ըստ Այրարատայ կողմանէ. Առաւեղեանք, եւ Առանեանք եւ Վարաժնունիքն եւ Գնթունիք, եւ Սպանդունիք, եւ այլք ընդ նոսին: Ընդ առաջ եղեւ նմա կաթուղիկոսն Ներսէս, եկեալ ի Տայոց: Եւ պատմեցին ամենայն իշխանքն թագաւորին եւ զմիտս եւ զկամս ապստամբութեան Ռշտունեաց տեառն, եւ փութանակի երթեւեկս առ նա դեսպանացն Իսմայելի»[23]:

Այն դեպքում, երբ Սեբեոսը գրում էր, թե «ապստամբեցին Հայք եւ ի

բաց կացին ի թագաւորութենէն Յունաց» և արաբների հետ պայմանագիր կնքեցին, ապա նա օգտագործել է հետևյալ արտահայտությունները. «ապստամբեցին Հայք», «դաշինս կռեցին Թէոդորոս Ռշտունեաց տէր ամենայն իշխանաւքն Հայոց... »: Իսկ պատմելով Կոստասի Հայաստան գալու մասին՝ Սեբեոսը մեկ առ մեկ հիշատակել է հայ այն նախարարներին, որոնք ներկայացան կայսրին Կարինում: Ըստ երևույթին, պայմանագիրը կնքելու պահին Թեոդորոս Ռշտունին որպես Հայոց իշխան հանդես էր եկել բոլոր հայ նախարարների անունից անկախ այն հանգամանքից, թե նրանցից որ մասն էր համաձայն նրա քաղաքական գծին: Իսկ երբ Կոստաս Բ-ը եկավ Հայաստան, հայոց այն իշխանները, որոնք դժգոհ էին Թեոդորոս Ռշտունու քաղաքականությունից, ներկայացան կայսրին[24]: Կարելի ենթադրել, որ այս իշխաններին հովանավորում էր Ներսես կաթողիկոսը, որը Թեոդորոս Ռշտունուց դժգոհ էր, թեկուզ հենց դավանանքային տեսանկյունից՝ խալիֆայության հետ պայմանագիր կնքելու համար: Ներսես Գ-ը Կարին էր եկել Տայքից, ուր նա հեռացել էր Դվինից՝ Թեոդորոս Ռշտունու վարած քաղաքականության շուրջ ծագած սուր տարաձայնություններից հետո: Հայ նախարարների և հոգևորականության շրջանում տեղ գտած պառակտման հետ կապված իրադարձությունները երկարատև խմորումներից հետո քաղաքական գործընթացների արտահայտությունը հանդիսացան:

Կոստաս Բ-ը շտապում էր հաշվեհարդար տեսնել անհնազանդ Թեոդորոս Ռշտունու հետ: «Յայնժամ նզովեաց թագաւորն եւ ամենայն զաւրք իւր զՌշտունեաց տէրն, եւ լուծին զնա ի պատուոյ իշխանութեանն, եւ արձակեցին այլ այր փոխանակ նորա, եւ Խ այր ընդ նմա»[25]: Հայոց իշխանի կողմնակիցների մի մասը ձերբակալվեց: Իսկ ինքը՝ Թեոդորոս Ռշտունին, նստեց Աղթամար կղզում՝ իր դաշնակիցներին հրամայելով ամրանալ իրենց տեղերում[26]:

Թեոդորոս Ռշտունու կողմնակիցներից Սեբեոսը հիշատակել է Թեոդորոս Վահևունուն (որն ամրացել էր Սյունիքի Արփայք բերդում), նրա որդուն՝ Գրիգորին (Թեոդորոս Ռշտունու փեսան էր) և Վարազ Ներսեհին:

Քաղաքական և դավանանքային հարցերը, ինչպես երևում է Սեբեոսի կողմից Թեոդորոս Ռշտունու գործողություններին (խալիֆայության հետ պայմանագրի կնքում և ընդվզում Բյուզանդիայի դեմ, որը մինչ այդ հայերին քաղկեդոնականություն և միակամություն էր պարտադրում) տված գնահատականից, լուծվում էին տարբեր մակարդակների վրա: Այդ մասին է վկայում Սեբեոսի հաղորդումը հայ-վրացական դաշինքի մասին: Վրաց եկեղեցու բաժանումը Հայ եկեղեցուց և դավանանքային մերձեցումը բյուզանդական (քաղկեդոնականություն դավանող) եկեղեցու հետ չհանգեցրին Վիրքի քաղաքական գծի դեպի Բյուզանդիա կտրուկ շրջադարձին[27] և առավել ևս բացասաբար չանդրադարձան հայ-վրացական հարաբերությունների վրա վաղ միջնադարում: Սեբեոսը Թեոդորոս Ռշտունու դաշնակիցների թվում հիշա-

տակել է նաև Վիրքը և Աղվանքը: Հայաստանի նվաճումը կայսրության և խալիֆայության կողմից նույն հետևանքը կունենար իր հարևանների համար:

Կոստաս Բ-ը Հայաստանի «ամենայն գանձքն» (Թեոդորոս Ռշտունու կողմնակիցները վերցրել էին իրենց հետ) վերադարձնելու պատրվակով (սակայն հիմնական նպատակն էր այն որպես ավար իր զորքին բաժանելը), որոշեց ձմեռել Հայաստանում և «բարձցէ զերկիրն ի միջոյ: Եւ անդէն անկան ի վերայ երեսաց իւրեանց կաթուղիկոսն եւ Մուշեղ ամենայն իշխանաւքն Հայոց, եւ մեծաւ աղաչանաւք եւ արտասուալից պաղատանաւք խնդրեցին ողորմութիւն, զի մի՛ ըստ նոցա յանցանացն իսպառ բարկասցի եւ զերկիրն կորուսցէ: Լուաւ արքայ պաղատանաց նոցա եւ արձակեաց անդրէն զգաւրացն բազմութիւնն. եւ ինքն գնաց յԱյրարատ Ի հազարաւ: Եւ երթեալ ի Դուին՝ նստաւ ի տան կաթուղիկոսին»[28]:

Սեբեոսի շարադրանքից հետևում է, որ կայսեր կողմից բացասական գնահատական էր տրվել հայ-արաբական պայմանագրի կնքմանը և դրանով Բյուզանդիայի դեմ Թեոդորոս Ռշտունու և նրա համախոհների ընդվզմանը: Սակայն, ինչպես ցույց տվեց հայ-բյուզանդական հարաբերությունների ամբողջ ընթացքը բյուզանդա-պարսկական և բյուզանդա-արաբական հակամարտության ժամանակաշրջանում, Հայաստանի հանդեպ նվաճողական քաղաքականություն վարող Բյուզանդական կայսրությունը ոչ մի բարոյական իրավունք չուներ Հայաստանին մեղադրանքներ ներկայացնելու, որպես անհավատարիմ դաշնակցի: Ընդհակառակը, կայսրությունն ինքն էր միշտ ոտնահարում Հայաստանի շահերը, հաշվի չառնելով նրա իրավունքները միջազգային ասպարեզում: Այս տեսանկյունից ևս դիտելով Կոստաս Բ-ի որոշումը՝ իր զորքի մի մասով մնալ Հայաստանում, կարելի է ասել, որ այդ ոչ թե քայլ էր ձեռնարկված ի պատասխան հայ նախարարների և կաթողիկոսի խնդրանքի, այլ թելադրված էր բյուզանդա-արաբական ռազմական գործողությունների վայրերը զորքի մյուս մասի ուղարկելու անհրաժեշտությամբ: Իր հետ մնացած զորքը Կոստաս օգտագործեց Հայաստանում, Վիրքում և հարևան տարածքներում պատժիչ գործողություններ ձեռնարկելու նպատակով: Կայսրությունն իր դաժանությամբ և ընչաքաղցությամբ ոչնչով չէր զիջում խալիֆայությանը: Եվ հայ նախարարների տարբեր խմբավորումների կողմից արտաքին քաղաքական կողմնորոշման ընտրությունը բխում էր ոչ թե երրորդ տերության վրա հարձակվելու նպատակով դաշնակից ունենալու[29], այլ Հայաստանը հնարավոր հարձակումից պաշտպանելու անհրաժեշտությունից:

Ստեղծված իրավիճակում Հայաստանի և Վիրքի կառավարող շրջանները արաբական կողմնորոշումը ընտրեցին որպես հարկադիր քայլ: Հայաստանի հիմնականում արևմտյան շրջանների իշխանները շարունակում էին հետևել բյուզանդական կողմնորոշմանը, ինչն այս ժամանակաշրջանում,

ելնելով քրիստոնեական ընդհանուր սկզբունքից, ցուցաբերեց նաև աշխարհահայացքային անհանդուրժողականություն խալիֆայության հետ քաղաքական կապեր հաստատելու հանդեպ: Այս տեսակետից Ներսես կաթողիկոսի հաղորդակցությունը կայսեր հետ[30], փաստորեն, դավանանքային ձևակերպմամբ կատարված քաղաքական քայլ էր, եթե նկատի ունենանք կաթողիկոսի հոգևոր-մշակութային և, կարելի է ասել, պետական քաղաքական հայրենանվեր գործունեությունը: Հարցը, ըստ Սեբեոսի հայեցակարգի, խալիֆայության նվաճումների ընդարձակման պայմաններում, հակամահմեդական՝ համաքրիստոնեական ճակատի ստեղծման մեջ էր:

Մ. Օրմանյանը համարում էր, որ Ներսես կաթողիկոսի դավանանքային դիրքորոշմանը վերաբերող գործողություններին Սեբեոսը իր տված գնահատականներում «բոլորովին ազատ չի տեսնուիր անձնական զգացումներէ»: Նա ուշադրություն է դարձրել, որ «միակամեայց մեծ պաշտպան» Կոստաս կայսրը և Պյուռռոս պատրիարքը (638-641, 654 թթ.) միակամություն դավանողներ էին և Քաղկեդոնը հիշատակել են Կոստանդնուպոլսի երկրորդ (Տիեզերական Ե) ժողովի (553) համաձայն, ուստի Ներսեսը հոգևոր հաղորդակցություն կատարեց կայսեր հետ ամենևին քաղկեդոնական չլինելով[31]: Ինչպես նշել է Ֆ. Ուսպենսկին, դավանանքային բնագավառում Կոստաս Բ-ի հաշտարարական քաղաքականության անցկացման հաստատակամությունը արտահայտվեց նրա գործողություններում, որոնց զոհը դարձավ Հերակլի «Էքթեսիս» հրովարտակը դատապարտած Հռոմի պապ Մարտինոս Ա-ը (649-655), որը 653 թվականին որպես վտարանդի ապրելով Խերսոնեսում մահացավ 655 թ.: Գիտնականը եզրակացրել է. «Կրոնական պայքարը ամենևին չէր հանդարտվում... Կայսրերի հաշտարարական քաղաքականությունը, որը բացատրվում էր ուղղափառության հետ դրանից անջատված միաբնակ Արևելքի միասնության պահպանման ցանկությամբ, սպասվելիք նպատակին չհանգեցրեց»[32]: Կոստանդնուպոլիսը այն հանգույցն էր, որտեղ արևելյան երկրները նվաճելու քաղաքականության մշակումը միահյուսվում էր Հռոմի հանդեպ ինչպես քաղաքական, այնպես էլ հոգևոր բնագավառներում՝ բյուզանդական առաջնությունը հաստատելու քաղաքականության հետ: Ինքը՝ բյուզանդական պաշտոնական եկեղեցին, չէր կարողանում դավանանքային հարցերում միանշանակորեն հետևել մի գծի՝ քրիստոնյա երկրների հետ ունեցած փոխհարաբերություններում տեղի ունեցող քաղաքական տատանումների հետևանքով:

Վերոհիշյալ նկատառումներից ելնելով, Ներսես կաթողիկոսին չի կարելի քաղկեդոնականություն ընդունած համարել, և առավել ևս սխալ է այն տեսակետը, թե նա «ինքը գաղտնորեն լինելով քաղկեդոնական, մտադրվեց էջմիածնի կողքին քաղկեդոնական եկեղեցի հիմնել, որը իր հոյակապությամբ կխավարեցներ էջմիածինը և ժողովրդին իր կողմը կգրավեր»[33]: Գ. Աբգարյանը համաձայն չէր այդպիսի տեսակետի հետ, քանի որ Սեբեոսը

ինքը որպես դրական երևույթ է դիտել Զվարթնոցի կառուցումը «մերձ առ սուրբ եկեղեցեացն որ ի Վաղարշապատ քաղաքին, ի վերայ ճանապարհին՝ յորում, ասեն, ընդ առաջ եղեւ թագաւորն Տրդատ սրբոյն Գրիգորի»: Բացի այդ, պատմիչի ոգեշունչ խոսքերը Զվարթնոցի, ինչպես նաև Սբ. Գրիգոր Լուսավորչի տեսիլի հետ կապված դրա կառուցման գաղափարի մասին[34] ամենևին չեն վկայում, թե Զվարթնոցը էջմիածնի եկեղեցիներին հակադրելու նպատակով է կառուցվել[35]: Ուստի, Ներսես կաթողիկոսի և նրան հետևող հոգևորականության և աշխարհիկ անձանց դիրքորոշման տատանումները ոչ թե կապված էին քաղկեդոնականությանը հարելու, այլ Հայաստանի որոշակի քաղաքական շրջանների կողմնորոշման հետ, և դավանանքային բնագավառում տեղ գտած փոխակերպությունները հայ-բյուզանդական հարաբերություններում քաղաքական փոփոխությունների հետևանք էին: Իսկ այն, որ Ներսես կաթողիկոսը քաղկեդոնականության գաղտնի հետևորդ չէր, աներկբայորեն վկայում է Հովհաննես Դրասխանակերտցու հաղորդումը, թե կաթողիկոսը բոլոր հերետիկոսներին բանադրեց և հատկապես Քաղկեդոնի ժողովը[36]: Այստեղ խոսքը Կոստաս Բ-ի հետ միասին հաղորդությանը մասնակցելուն նախորդած մի քանի տարի առաջ տեղի ունեցած իրադարձության մասին է, և հենց այդ էլ վկայում է, որ Ներսես կաթողիկոսն ո՛չ գաղտնի և ո՛չ էլ բացահայտորեն քաղկեդոնականություն չէր ընդունել:

Կոստաս Բ-ը երկար չկարողացավ երկար մնալ Դվինում: Նրան Կոստանդնուպոլսից շտապեցնում էին վերադառնալ: Կայսրը «գնաց փութանակի: Եւ արար իշխանն Հայոց զՄորիանոս ոմն»[37]:

Քանի որ կայսրը Մորիանոսին նշանակեց «իշխան Հայոց... հանդերձ հայ զաւրուն՝ որ ի նոցուն կողմանէ»[38], նշանակում է, որ Հայոց զորքի մյուս մասը շարունակում էր ենթարկվել Թեոդորոս Ռշտունուն: Ուրեմն, Կոստաս Բ-ը, գալով Հայաստան, կարողացավ միայն ժամանակավորապես վերականգնել կայսրության ազդեցությունը Հայաստանի արևմտյան մասում:

2. Հայաստանի քաղաքական վիճակը VII դարի երկրորդ կեսում

Հայաստանում հաստատված երկիշխանությունը կտրուկ ապակայունացրեց երկրի քաղաքական վիճակը: Այդ պայմաններում Թեոդորոս Ռշտունին փորձեց արաբների օգնությամբ դուրս մղել բյուզանդացիներին և իր իշխանությունը վերականգնել Հայաստանի ամբողջ տարածքի վրա: Սեբեոսը գրել է. «Իսկ Թէոդորոս Ռշտունեաց տէր դարանակալ եղեւ յԱղթամար կղզի, ինքն եւ փեսայ իւր Համազասպ Մամիկոնէից տէր. եւ խնդրեաց յիւր զաւրս ի յԻսմայելացւոցն, եւ եկն է հազար այր յաւգնականութիւն նմա, եւ նստոյց զնոսա յԱղիովիտ եւ ի Բզնունիս, եւ ինքն առ նոսա ելեալ, կայր ի

մէջ նոցա»[1]: Սկսած այս ժամանակից Հայաստանը երկու-երեք տարվա ընթացքում, որոշ ընդմիջումներով, արաբական ներխուժումների և արաբա-բյուզանդական ռազմական գործողությունների ասպարեզ դարձավ:

Թեոդորոս Ռշտունին, անկախ իր պայքարի հակաբյուզանդական ուղղվածությունից, ծայրահեղ վտանգավոր հետևանքներով լի քայլ էր կատարել՝ օգնության կանչելով արաբական զորքին: Խալիֆայությունը, թվում էր, թե գործում էր համաձայն հայ-արաբական պայմանագրի, սակայն իրականում իրեն ճանապարհ էր հարթում Հայաստանը և հարևան երկրները նվաճելու համար: Արաբները, իրենց ճանապարհին մեծ ավերածություններ պատճառեցին, հետապնդելով բյուզանդացիներին: Ինչպես նշել է Սեբեոսը, «Մերձ ի գատկին մեծ՝ փախեաւ Հոռոմ եւ անկաւ ի Տայս եւ հանին անտի. եւ ոչ ուրեք կարաց զետեղել, այլ գնացին փախստական մինչեւ մերձ ի ծովեզրն: Եւ աւերեցին զամենայն երկիրն. առին եւ զՏրապիզոն քաղաք, խաղացուցին առ եւ աւար եւ գերութիւն բազում յոյժ»[2]:

Թեոդորոս Ռշտունին իր հետագա քայլերով փորձեց միջազգային-իրավական տեսակետից ամրապնդել Հայաստանի և Հայոց պետական համակարգում իր զբաղեցրած դիրքի կարգավիճակը, որը հայ-արաբական հարաբերությունների հեռանկարում հստակեցման կարիք ուներ: Սակայն Թեոդորոս Ռշտունու մտահղացումները և խալիֆայության ծրագրերը լրիվ տարբեր էին: Ստեղծված իրավիճակում, Թեոդորոս Ռշտունին շարունակում էր Հայաստանի ամբողջական տարածքի և պետական համակարգի վերականգնման և պաշտպանության գործընթացը՝ մի կողմից պայքարելով բյուզանդական ագրեսիայի դեմ, իսկ մյուս կողմից ձևականորեն ճանաչելով խալիֆայության գերակայությունը (որպեսզի երկրի վրայից հեռացներ խալիֆայության հարձակման վտանգը): Վերջինս Հայաստանի և հարևան երկրների հետ ծավալվող հարաբերությունները դիտում էր նվաճման, թալանի և բռնության տեսանկյունից: Հայաստանն ու հարևան երկրները դեռևս չնվաճած խալիֆայությունը իրեն տնօրեն էր համարում նրանց վրա, ինչպես կարելի է դատել հետևյալ հաղորդումից. «Յետ այսորիկ գնաց Թէոդորոս Ռշտունեաց տէրն առ Մաւիաս իշխանն Իսմայելի ի Դամասկոս եւ ետես զնա մեծամեծ ընծայիւք: Եւ ետ նմա իշխանն Իսմայելի հանդերձս ոսկեղենս եւ ոսկեթել, եւ վառ մի նորին աւրինակաւն: Եւ իշխանութիւն ետ նմա զՀայս եւ զՎիրս եւ զԱղուանս եւ զՍիւնիս, մինչեւ ցԿապկոհ եւ ցՊահակն Ճորայ, եւ արձակեաց զնա պատուով: Եւ նորա պայման էր եդեալ նմա՝ ածել զերկիրն զայն ի ծառայութիւն»[3]: Հեռանկարում ունենալով Կոստանդնուպոլսի վրա ձեռնարկվելիք արշավանքը՝ խալիֆայությունում[4] գտնում էին, որ շուտով կհաջողվի ընկճել Բյուզանդիային և դժվար չի լինի Հայաստանի և հարևան երկրների նվաճումը: Ընդ որում, Թեոդորոս Ռշտունու պայքարը բյուզանդական ագրեսիայի դեմ Մուավիայի կողմից դիտվում էր խալիֆայությանը նշված երկրների ենթարկելու տեսանկյունից: Այսինքն, խալիֆա-

յության արտաքին քաղաքական ծրագրերում Հայաստանին վերապահվում էր դրանց իրագործմանն ուղղված ռազմական հենարանի դերը:

Չնայած Թեոդորոս Ռշտունին զոհ գնաց իր վարած արտաքին քաղաքականությանը, սակայն նրա մշակած քաղաքական ուղին մոտ մեկ տասնամյակ անց դրական պտուղներ տվեց:

Համարելով, որ Արևելքում գործերը այս փուլում արդեն կարգավորված էին, Մուավիան հսկայական բանակ հավաքեց խալիֆայության տարբեր ծայրերից և մեծ արշավանք ձեռնարկեց Բյուզանդիայի մայրաքաղաքի ուղղությամբ: Ճանապարհին «հնազանդեցան ամենայն բնակիչք աշխարհին ի ծառայութիւն՝ որ զծովեզերքըն եւ լեռնականս եւ դաշտականս»: Քաղկեդոն հասնելով, Մուավիան թուղթ ուղարկեց Կոստասին, որին առաջարկում էր դավանափոխ լինել, արձակել բյուզանդական բանակը, դառնալ խալիֆայությանը ենթակա «իշխանն մեծ», կայսրության գանձարանի մեկ երրորդը հանձնել Մուավիային, ինչպես նաև հարկ վճարել արաբներին: «Ապա թէ ոչ՝ Ցիսուսն այն, զոր դու Քրիստոս կոչես, մինչ զանձն ոչ կարաց ապրեցուցանել ի Հրէիցն, զքեզ զիա՞րդ կարէ ապրեցուցանել ի ձեռաց իմոց»: Արաբական նավատորմը կայսրության մայրաքաղաքի մոտ դեռևս մարտի չբռնված կործանվեց փոթորկից: Ցամաքային զորքերը, տեսնելով իրենց նավատորմի այդպիսի ահավոր վախճանը, «ելեալ ի գիշերի ի Քաղկեդոնէ՝ գնացին ի տեղի իւրեանց»[5]:

Այս նույն ժամանակ արաբական մեկ այլ զորք Կապադովկիայում կռվում էր այնտեղ գտնվող բյուզանդական զորքի դեմ: Արաբները պարտություն կրելով, նահանջեցին Արվաստանի կողմերը, ճանապարհին թալանելով Չորրորդ Հայքը: «Եւ եղեւ յետ անցանելոյ աշնանային ժամանակին, ի մերձենալ ձմերայնոյ՝ եկն զաւրն Իսմայելի եւ նստաւ ի Դուին. եւ խորհէր երթալ հարկանել զՎիրս սրով սուսերի: Խաւսէր ընդ նմա[6] ի ձեռն պատգամի սպառնալեաւք, զի կամ եկեսցեն ի ծառայութիւն նոցա եւ կամ ի բաց թողցեն զերկիրն եւ գնասցեն: Իսկ նոքա չառին յանձն առնել այնպէս, այլ պատրաստեցան ընդդէմ նոցա ի պատերազմ: Եւ գնաց Իսմայելացին ի վերայ նոցա պատերազմաւ՝ երթալ սատակել զնոսա իսպառ: Այն-ինչ եղեւ նոցա ի ճանապարհ ելանել՝ անկաւ ի վերայ նոցա ցուրտ եւ ձիւն ձմերայնոյ. վասն որոյ չոգան փութանակի եւ գնացին ի կողմանս Ասորեստանի, եւ ի Հայս անհրաւութիւն ինչ ոչ գործեցին»[7]:

Այսպիսով, Սեբեոսի շարադրանքից հետևում է, որ Կոստաս Բ-ի «յամի երեքտասաներորդի», այսինքն 654 թ. տեղի էին ունեցել հետևյալ դեպքերը. արաբների անհաջող արշավանքը դեպի Կոստանդնուպոլիս, մեկ այլ արաբական զորքի պարտությունը Կապադովկիայում և դրա նահանջը Չորրորդ Հայքով[8] դեպի Արվաստան, աշնան վերջում արաբական մի զորքի ժամանումը Դվին՝ Վիրք ներխուժելու մտադրությամբ (ցրտերի պատճառով այն վերադարձավ խալիֆայության սահմանները):

Բյուզանդա-արաբական ռազմական գործողությունները միաժամանակ դադարեցին, և այդ հնարավորություն տվեց Հայաստանի միասնականության վերականգնման գործընթացի աշխուժացմանը: Սեբեոսը գրել է. «Իսկ իշխանքն Հայոց որ ի Յունաց եւ որ ի Տաճկաց կողմանէ, Համազասպ եւ Մուշեղ, եւ այլն ամենայն եկեալ ի մի վայր միաբանեցան, եւ արարին ընդ միմեանս հաշտութիւն, զի մի եղիցի ի մէջ նոցա սուր եւ արիւնհեղութիւն, եւ անցուցին խաղաղութեամբ զաւուրս ձմերայնոյն, զի եւ զշինականսն ապրեցուցանեն»[9]: Թեոդորոս Ռշտունին հիվանդության պատճառով չէր մասնակցում երկրի կառավարման գործերին և ստիպված էր մնալ Աղթամար կղզում: Բյուզանդիան չնայած քայլեր ձեռնարկեց վերականգնելու իր հսկողությունը Հայաստանի արևմտյան մասի վրա, սակայն, հայ-արաբական պայմանագրի առկայության պայմաններում, հայ իշխաններին հաջողվեց որոշ ժամանակ Հայոց աշխարհը զերծ պահել թե՛ կայսրության և թե՛ խալիֆայության ոտնձգություններից: Ձգտելով խուսափել խալիֆայության հետ բարդություններից՝ հայ իշխանները փորձում էին կատարել պայմանագրի որոշ կետերը:

Քանի որ Հայոց այրուձին պահվում էր հայոց գանձարանի հաշվին և այդ կատարվելու էր այն հարկի սահմաններում, որը գանձվելու էր Հայաստանում, ուստի իշխանները իրենց տիրույթների նոր սահմանազատում կատարեցին, ինչի մասին Սեբեոսը գրել է. «Եւ բաժանեցին զերկիրն ըստ թուոյ իւրաքանչիւր հեծելոց, եւ կարգեցին հարկապահանջս ոսկւոյ եւ արծաթոյ»[10]: Այսպիսով, ինչպես ցույց տվեց դեպքերի ընթացքը, իշխանները հարկահանության կրկնակի բեռ դրեցին շինականների ուսերին, որի հետևանքներն անմխիթար էին: «Եւ աստ էր տեսանել զաղէտս տարակուսի, զաւրէն հիւանդաց, յորժամ տագնապեսցի ցաւն, եւ հատանիցի ի խաւսից՝ այնպիսի ինչ եղեն. զի ոչ գոյր մարդկան տեղի փախստի եւ թագստեան, եւ ոչ խնայել ի ներքուստ, այլ որպէս ոք զի անկցի ի ծով՝ եւ ելս ոչ կարիցէ գտանել»[11]: Թեոդորոս Ռշտունին դիմեց արաբներին օգնության համար: Այս ընթացքում հայ իշխանները միաբան էին գործում, ինչպես հետևում է Սեբեոսի հաղորդումից. «Իսկ Մուշեղ Մամիկոնէից տէրն ապստամբեալ ի Յունաց կողմանէն՝ հնազանդեցաւ ի ծառայութիւն Իսմայելի. եւ ի նմին ամի զաւրն Իսմայելի որ ի Հայաստան աշխարհի՝ կալան ի ծագաց ի ծագս զերկիրն ամենայն: Եւ Թէոդորոս Ռշտունեաց տէրն եւ ամենայն իշխանքն աշխարհին միաբանեալ հնազանդեցան ի ծառայութիւն, եւ ամենայն իրաւք փութային զկամս նոցա կատարել, զի երկիւղ անհնարին մահու կայր ի վերայ նոցա»[12], ուստի Թեոդորոս Ռշտունին արաբներից զորք էր խնդրել ոչ թե նախարարների գործողությունները կասեցնելու[13], այլ Հայաստանից և Վրաստանից բյուզանդացիներին դուրս քշելու համար, քանի որ նա արաբների կողմից նշանակված էր նաև վերջինիս կառավարիչ[14]:

Խալիֆայությունը չհապաղեց օգտվել ստեղծված իրավիճակից և ան-

միջապես զորքեր ուղարկեց: Հայաստանում 655 թ. մի քանի ամիս անցկացնելուց հետո[15] արաբները սկսեցին հարվածներ կրել բյուզանդացիներից: Արաբները «ցրտոյն ոչ կարէին ելանել եւ տալ պատերազմ ընդ նոսա, այլ ելին յանկարծակի եւ գնացին անցին զգետովն, եւ չոգան ամրացան ի Զարեհաւանի: Իսկ Յոյնն իբրեւ ետես զայն՝ ոչ ինչ փոյթ արար վասն նոցա, այլ աւարեաց զբերդն Դըւնայ, եւ գնաց ի Նախճաւան, եւ մարտեաւ ընդ բերդին, զի աւարեսցէ զնա եւս: Եւ էր զաւրավար զաւրուն Յունաց Մաւրիանոս ոմն, զոր ասէին այր հաւատարիմ»[16]: 656 թ. գարնանը բյուզանդացիները շարունակեցին պատրաստվել պատերազմի արաբների դեմ: «Եւ Մավրիանոս յամառեալ զիւրն խորհէր կատարել զգործ»: Սակայն արաբները, որ ամրացել էին Զարեհավանում, հանկարծակի հարձակվեցին և ջախջախեցին Նախճավանը (Նախիջևան) պաշարած բյուզանդական զորքը: Մավրիանոսը բյուզանդական զորքի մնացորդների հետ փախավ Վիրք[17]: Արաբները այնուհետև շարժվեցին Կարինի կողմը, որի բնակիչները կարճատև պաշարումից հետո ստիպված էին դադարեցնել դիմադրությունը և բացել քաղաքի դռները: Թշնամին քաղաքը թալանի ենթարկեց: Նույն ճակատագրին արժանացավ ամբողջ երկիրը: Այս կապակցությամբ Սեբեոսը գրել է, որ արաբները «կողոպտեաց զամենայն երկիրն Հայոց... Եւ կալաւ պատանդ զգլխաւոր իշխանս աշխարհին եւ զկանայս եւ զուստերս եւ զդուստերս բազմաց»[18]:

Խալիֆայության զորքերը մտել էին Հայաստան, իբրև թե, պայմանագրային հիմունքների վրա: Հայ իշխանները, անկախ ներքին տարաձայնություններից, միասնություն ցուցաբերեցին, և երկիրը սկզբնական շրջանում արտաքնապես խաղաղ վիճակում էր: Սակայն Մավրիանոսի գլխավորությամբ բյուզանդական զորքի գործողությունները խախտեցին ուժերի հարաբերակցությունը և երկրի ներքին քաղաքական վիճակը սասանվեց: Հայ ժողովրդի կացության բարդությունը կայանում էր նրանում, որ թալանի և բռնությունների էր ենթարկվում ինչպես բյուզանդացիների, այնպես էլ արաբների կողմից, դրա հետ մեկտեղ երկիրը ավերածությունների էր ենթարկվում նաև բյուզանդա-արաբական ռազմական գործողությունների ժամանակ: Հայ ժողովուրդը դիմադրելով թե՛ բյուզանդացիներին և թե՛ արաբներին ստիպված էր ջլատել իր ուժերը երկու ուղղությամբ: Ըստ երևույթին, այս ժամանակաշրջանին է վերաբերում «Իսմայելի իշխանի հրովարտակը», որում ասվում էր, որ եթե իրեն հարկ չվճարեն և իր իշխանության լծի տակ չմտնեն, ամենքին սրով կկոտորի[19]: Խալիֆայությունը, չնայած Հայաստանի հետ ունեցած պայմանագրի, որի ժամկետը լրանում էր 656 թ.[20], բյուզանդացիների դեմ պայքարելու առիթն օգտագործելով, փաստորեն, սկսեց երկրի նվաճումը զենքի ուժով:

Համաձայն Սեբեոսի հաղորդումների, արաբները նախ գրավեցին Հայաստանի արևելյան մասը (Արուճ Աշնակի, Զարեհավան, Նախճավան), այնուհետև անցան արևմտյան մասը և գրավեցին Կարինը: Քանի որ պատ-

միչը գրել է Սյունիքի և Աղվանքի[21] ավարառման մասին, դրանից հետևում է, որ արաբները կրկին անցել էին Հայաստանի արևելյան երկրամասերը և հարևան շրջանները: Ինչ վերաբերում է Հաբիբի արշավանքին, ապա Ա. Տեր-Ղևոնդյանը նախապատվություն է տվել Բալազուրիի հաղորդումներին, որոնցից հետևյալ երթուղին է ուրվագծվում. Կալիկալա (Կարին-Թեոդոսուպոլիս)[22] - Մարբալա (Մարդաղի) - Խլաթ - Սիփան լեռան շրջան - Արտաշատ - Դվին - Նախճավան - Սիսական - Տփղիս:

Հաբիբը մի քանի ամիս Կարինում մնալուց հետո, տեղեկանալով, որ *Արմենիակոն* բնակաթեմի պատրիկը մահմեդականների դեմ մեծ զորք էր հավաքում, որին միացել էին ալանները, աբխազները, խազարները և այլոք, օգնության խնդրանքով դիմեց Մուավիային, որը Հաբիբին երկու հազար զինվոր ուղարկեց: Վերջինս նրանց բնակեցրեց Կարինում, հող հատկացրեց և հանձնարարեց քաղաքի պաշտպանությունը: Օսման խալիֆի հրամանով ուղարկված ռազմական օգնությունը, ի դեմս Սալմանի գլխավորած վեց հազար կուֆացիների, ավելի ուշ ժամանեց. Հաբիբը արդեն պարտության էր մատնել Եփրատի ափին տեղակայված բյուզանդական զորքը և նրա դաշնակիցներին: Մարբալայում Հաբիբին ներկայացավ Խլաթի պատրիկը՝ Իյադ իբն-Ղանմի տված պայմանագրով[23]: Մարդաղիից Հաբիբը գնաց և կանգ առավ Հարքի և «ալ-Վարքի»[24] դաշտի միջև գտնվող վայրում, այսինքն Խլաթի շրջակայքում: Այստեղից արաբական զորքը գնացել է Սիփան լեռան շրջանը, որտեղ Հաբիբին ներկայացել էր Մոկքի իշխանը: Վերջինիս Հաբիբը խաղաղության և անվտանգության թուղթ էր տվել: Հաբիբը ջոկատներ ուղարկեց դեպի Արճեշ և Ապահունիք, որոնց բնակիչներից գլխահարկ հավաքեցին: Նրան ներկայացան այդ շրջանների իշխանները, որոնց նա հաստատեց իրենց տիրույթներում՝ հողահարկի (խարաջ) վճարման պայմանով: Վանա լճի ձկնորսությանը նա ձեռք չտվեց, և այն ազատ էր մնում մինչև Մուհամեդ իբն-Մրվանի ժամանակը, որն իր ձեռքը դրեց ամբողջ որսի վրա[25]: Ելնելով արաբական զորքի ընթացուղու կապակցությամբ հիշատակվող տեղանունների հաջորդականությունից՝ Բ. Խալաթյանցը Բալազուրիի բնագրում հիշատակված «Աշտիշատը» ուղղել է Արտաշատ[26]: Այստեղից Հաբիբը եկավ և պաշարեց Դվինը, որը գրավելուց հետո բնակիչների հետ պայմանագիր կնքեց, որով երաշխավորում էր նրանց կյանքի, ունեցվածքի, եկեղեցիների և քաղաքի պարիսպների պահպանությունը: Հաբիբը պարտավորվեց չխախտել պայմանագիրը այնքան ժամանակ, որքան Դվինի բնակիչները կկատարեին այն և կվճարեին գլխահարկը և հողահարկը: Գտնվելով Դվինում, Հաբիբը ավարառության նպատակով երկրի տարբեր վայրերն ուղարկեց իր հեծելազորը: Թալանի ենթարկվեցին Գառնին, Կոտայքը, Շիրակը, Տայքը, Բագրևանդը[27]:

Նախճավանի բնակիչների հետ Հաբիբը կնքեց նույնպիսի պայմանագիր, ինչպիսին նա կնքել էր Դվինում: Նախճավանում նրան ներկայացավ

Վասպուրականի պատրիկը, որի հետ նույնպես պայմանագիր կնքեց: Այսնիքում Հաբիբին ժողովուրդը համառ դիմադրություն ցույց տվեց, սակայն արաբները գրավեցին Վայոց Ձորը և պայմանագիր կնքեցին բնակիչների հետ՝ հարկ վճարելու պայմանով:

Սեբեոսի և Բալազուրիի հաղորդումներից ուրվագծվում է Հաբիբի՝ դեպի Հայաստան կատարած արշավանքի պատկերը: Ինչ վերաբերում է Վիրքի կապակցությամբ նրանց տեղեկություններին, ապա Սեբեոսը Վիրքը հիշատակել է միայն բյուզանդական զորքի մնացորդների հետ Մավրիանոսի փախուստի կապակցությամբ, իսկ Բալազուրին նշել է, որ Մավրիանոսը սպանվեց Հաբիբի կողմից Դվինի պաշարման ժամանակ[28]: Վիրքում արաբների կատարած ասպատակությունների նկարագրությանը Բալազուրին զգալի տեղ է հատկացրել հատկապես անդրադառնալով Հաբիբի՝ վրացիների հետ կնքած պայմանագրի բովանդակությանը, որը վկայում է խալիֆայության հարկային և գաղափարական համակարգերի մանրակրկիտ մշակված նվաճողական բնույթի մասին: Պայմանագրում մասնավորապես ասված էր. «Դուք իրավունք չունեք գլխահարկը թեթեւացնելու համար մի քանի տներ միմեանց կցել, եւ մենք չունենք իրավունք նոցա բաժանել՝ աւելի մեծ գլխահարկ ստանալու համար... Եթե դուք [մեր կրոնին] դառնաք եւ աղօթք կատարէք դուք մեր եղբայրներն էք կրոնի մեջ, ապա թե ոչ՝ ձեր վերայ կը ծանրանայ գլխահարկը»[29]:

Խալիֆայություն վերադարձող արաբները իրենց հետ բացի մեծ թալանից նաև շատ գերիներ տարան: Հայաստանից ի թիվս մի շարք գլխավոր իշխանների և նրանց ընտանիքների գնաց նաև Թեոդորոս Ռշտունին իր ընտանիքով: Սեբեոսը այդ առիթով գրել է. «Եւ Թէոդորոս Ռշտունեաց տէրն համազգեաւք իւրովք գնաց ընդ նոսա. եւ տարեալ իջուցին զնոսա յԱսորեստան: Անդ մեռաւ Թէոդորոս Ռշտունեաց տէրն, եւ մարմին նորա բերաւ ի գաւառ իւր, եւ թաղեցաւ ի գերեզմանի հարց իւրոց»[30]:

Չնայած ավերիչ ասպատակություններին այս ժամանակաշրջանում խալիֆայությունը չկարողացավ իր տիրապետությունը հաստատել Հայաստանում, Վիրքում և Աղվանքում: Մյուս կողմից խալիֆայության նվաճողական քաղաքականության այս ժամանակաշրջանի արդյունքները Հայաստանում և Վիրքում Բյուզանդիայի վարած քաղաքական գծի խոշոր պարտության վկայությունն էին: Անտեսելով իր սեփական շահերը, կայսրությունը չկարողացավ Հայաստանի հանդեպ շիտակ քաղաքականություն վարել: Հայաստանը, արտաքին կողմնորոշման հետ կապված ներքին քաղաքական բոլոր հակասություններով հանդերձ, ստիպված էր Արաբական խալիֆայության հետ պայմանագիր կնքել: Հայաստանի, Վիրքի և Աղվանքի կառավարումը հայ-արաբական պայմանագրի կնքման հաջորդ տարում Թեոդորոս Ռշտունուն հանձնելը, հանդիսացավ այս երկրներում հաջորդ դարի սկզբին խալիֆայության վարչաքաղաքական համակարգի մտցնելու նախնական

փուլերից մեկը: VIII դարի սկզբին այս երկրների տարածքից խալիֆայությունը կազմեց «Արմինիա» անունը կրող նահանգը, որի կենտրոնը հանդիսանում էր Դվին քաղաքը[31]:

Թեոդորոս Ռշտունու կյանքի ընթացքը և գործունեությունը իրենց վրա կրեցին VII դ. 40-50-ական թթ. հայ-բյուզանդական և հայ-արաբական փոփոխվող հարաբերությունների կնիքը:

Թեոդորոս Ռշտունուց հետո «ուներ զիշխանութիւն Հայոց աշխարհիս Համազասպ Մամիկոնէից տէրն, որդի Դաւթի, այր առաքինի յամենայն դէմս»[32]: Մ. Օրմանյանի և Լեոյի կարծիքով, Համազասպը կառավարել է երեք տարի Թեոդորոսի մահից հետո, որը տեղի ունեցավ 658 թ. կամ 659 թ.[33]: Ա. Տեր-Ղևոնդյանը Համազասպի կառավարման տարիներն է համարել 654-661 թթ.[34]:

Համաձայն Սեբեոսի և Հովհաննես Դրասխանակերտցու[35] հաղորդումների, Ներսես կաթողիկոսը վեց տարի գտնվում էր Տայքում, այնուհետև՝ Համազասպ Մամիկոնյանի կառավարման ժամանակ վերադարձավ և հաստատվեց «յաթոռ կաթուղիկոսութեան. փութայր կատարել զշինուած եկեղեցւոյն (Զվարթնոց-Է.Դ.) զոր շինեաց ի վերայ պողոտային Վաղարշապատ քաղաքի»[36]: Թեոդորոս Ռշտունու Հայաստանից հեռանալը և նրա մահը, Համազասպ Մամիկոնյանի հայոց իշխան դառնալը և Ներսես կաթողիկոսի Տայքից վերադառնալը ժամանակով համընկնում են՝ համապատասխանելով 656 թ.: Ուրեմն, Ղևոնդի հաղորդումը Ներսես կաթողիկոսի և նախարարների խորհրդակցության մասին[37] նույնպես պետք է այս թվականին վերաբերի:

Սեբեոսը նշել է, որ արաբները 1775 պատանդներ տարան, որոնց թվում պետք է լինեին Ղևոնդի հիշատակած Գրիգոր Մամիկոնյանը և Սմբատ Բագրատունին:

Հայ-բյուզանդական հարաբերությունների վերականգման և պատանդների հանդեպ խալիֆայության դաժան հաշվեհարդար տեսնելու մասին Սեբեոսը գրել է. «Ի նմին ամի ի բաց կացին Հայք ի ծառայութենէ Իսմայելացւոցն, եւ հնազանդեցան անդրէն ի ծառայութիւն թագաւորին Յունաց: Եւ արար արքայ Կոստանդին զՄամիկոնէից տէր զՀամազասպ՝ կիւրապաղատ... Յայնժամ ետես արքայն Իսմայելի, եթէ ի բաց կացին Հայք ի ծառայութենէ նոցա, զամենայն զպատանդսն, զոր տարեալ էին յերկրէն, ոգիս իբրեւ ՌՉՀԵ, սատակեցին զամենեսեան ի սուր սուսերի. եւ մնացորդքն սակաւք, թուով իբրեւ ԻԲ, որք ոչ դիպեցան ի տեղւոյն, այն միայն ապրեցան[38]»:

Այս և նախորդ հատվածների միջև ընկած պարբերությունն, որը առկա է Սեբեոսի երկի նախորդ բոլոր հրատարակություններում, ինչպես նաև ձեռագրերում, Գ. Աբգարյանը առաջարկել է տեղափոխել «Պատմության» վերջը, որպես վերջաբան: Գիտնականը եզրակացրել է, որ «ի նմին ամի» արտահայտությունը վերաբերում է անմիջապես իրենից առաջ գտնվող նախա-

դասության «վեցերորդի ամի» բառերին[39]: Հովհաննես Դրասխանակերտցու



Զվարթնոցի տաճարը

հաղորդման համաձայն, կյուրապաղատ տիտղոսը ստանալուց երեք տարի անց Համազասպ Մամիկոնյանը մահացավ[40]: Եթե նաև հաշվի առնենք Կիրակոս Գանձակեցու հաղորդումը (Համազասպի յոթամյա կառավարման մասին) Ղևոնդի այն տեղեկության լույսի տակ, ըստ որի, Գրիգորը Հայոց իշ-

խան ճանաչվեց խալիֆայության կողմից Մուավիայի գահակալության երկրորդ տարում[41], կարելի է ասել, որ Համազասպը, սկսած 656 թվականից երեք-չորս տարիների ընթացքում կառավարել է խալիֆայության հսկողության տակ[42], իսկ վերջին երեքը (սկսած մոտ. 659 թ.)՝ կայսրության հովանավորության ներքո:

Խալիֆայության հարձակումների դադարումը Հայաստանի վրա ժամանակով համընկնում է Ալի խալիֆի և Ասորիքի կառավարիչ Մուավիայի (որը այնուհետև խալիֆ դարձավ) միջև ծավալված պայքարի հետ: Ավելին, Հայաստանի անցումը Բյուզանդական կայսրության ազդեցության ոլորտը, ամենայն հավանականությամբ, տեղի էր ունեցել Մուավիայի և Կոստաս Բ-ի միջև խաղաղության պայմանագրի կնքումից (659 թ.) հետո[43]:


Համազասպ Մամիկոնյանը գլխավորեց այն նախարարներին, որոնք հրաժարվեցին խալիֆայությանը ծառայելուց[44]: Հայ նախարարների այս վճռական քայլը Սեբեոսը բացատրել է նրանց հակադրությամբ արաբական իշխանությունների բռնություններին: Խալիֆայության խորքերը տարված մեծ թվով գերիներից և պատանդներից զատ արաբական իշխանությունները կրկին պահանջ ներկայացրին, որպեսզի իշխանական ընտանիքների մի նոր խումբ Ասորիք ներկայանա: Սեբեոսը գրել է. «Բայց զայն՝ եւ այլ եւս յիշխանացն հանդերձ կանամբք իւրեանց խնդրէին առ ինքեանս յԱսորիս: Վասն այնորիկ լաւ համարեալ զմահ քան զկեանս՝ ի բաց կացին ի ծառայութենէ նոցա, եւ հապճեպ երթեւեկով հնազանդեցան ի ծառայութիւն թագաւորին Յունաց, հանդերձ միաբանութեամբ իշխանացն եւ զաւրացն Աղուանից եւ իշխանացն աշխարհին Սիւնեաց հանդերձ աշխարհաւն իւրեանց. որք լծեալ էին յառաջագոյն յաշխարհագիրն Ատրպատականի, մինչեւ բարձաւ թագաւորութիւնն Պարսից եւ տիրեաց Իսմայելացին, նոքա անդրէն նուաճեալ միաբանեցան ընդ Հայոց»: Խալիֆայության ոտնձգություններից ձերբազատվելու պահը ճիշտ էր ընտրված, քանի որ «առաքեաց Աստուած խռովութիւն ի մէջ բանակացն որդւոցն Իսմայելի, եւ պատառեցաւ միաբանութիւն նոցա, եւ խառնեցան ընդ միմեանս, եւ բաժանեցան ի չորս մասունս... »:

Կոստաս Բ-ը քիչ թե շատ վճռական քայլերի էր դիմում Հայաստանում ի շահ կայսրության քաղաքականության: Նա Համազասպին տվեց «գահոյս արծաթիս եւ զիշխանութիւնն աշխարհին Հայոց, եւ պատիւս այլոց իշխանացն, եւ գանձս զաւրացն»[45]:

Մուշեղ Մամիկոնյանը (չշփոթել VI դ. վերջում Թրակիայում զոհված Մուշեղ Մամիկոնյանի հետ), հայտնվել էր ծանր կացության մեջ, քանի որ նրա չորս որդիները պատանդ էին տարվել արաբների կողմից: Նա «ոչ կարաց ի բաց կալ ի ծառայութենէ նոցա... Եւ ձերբակալ արարեալ զՄուշեղ եւ զայլ եւս յիշխանացն որ էին ընդ նմա: Արդ՝ զայլ իշխանսն, զորս ձերբակալ արարեալ էին՝ հրամայեաց թագաւորն թողուլ ի բաց, բայց զՄուշեղ առ ինքն խնդրեաց»[46]: Կարելի է պատկերացնել, թե ինչ էր սպասվում նրան Բյու-

զանդիայում, եթե հիշենք VI դ. 90-ական թթ. գործած և այնուհետև Թրակիայում զոհված ավագ Մուշեղ Մամիկոնյանի, 646 թ. Բյուզանդիայից Տայք եկած և այստեղ մահացած Վարազտիրոցի, նրա որդու՝ Սմբատ Բագրատունու և իրենց կամքին հակառակ կայսրությունում հայտնված շատ ուրիշ հայ իշխանների ճակատագրերը:

Խալիֆայությունում վիճակի կայունացմամբ, որը պայմանավորված էր Ալիի սպանվելուց հետո Մուավիայի միանձնյա գահակալությամբ (661-668),



Արուճի եկեղեցի

հայ-բյուզանդական հարաբերություններում կրկին կտրուկ անկում տեղի ունեցավ: Ըստ երևույթին, կանխազգալով արաբական նոր ներխուժման վտանգը, հայերը աշխատեցին վերականգնել հարաբերությունները խալիֆայության հետ: Հովհաննես Դրասխանակերտցու հաղորդման համաձայն, Ներսես կաթողիկոսը հայ նախարարների հետ միասին խնդրեց ամիրապետ Մուավիային Հայոց իշխանի պաշտոնում հաստատել Գրիգոր Մամիկոնյանին, որը նրա մոտ որպես պատանդ էր գտնվում[47]: Ղևոնդը Գրիգոր Մամիկոնյանի և Սմբատ Բագրատունու (Վարազ-Սահակի որդու) ազատվելու մասին գրել է, որ իր իշխանության երկրորդ տարում Մուավիան իր մոտ կանչեց Գրիգորին ու Սմբատին, որոնք պատանդ էին արքունի դռանը և, Գրիգորին տալով Հայոց իշխանի պատիվը, բազում մեծարանքով առաքեց Հայոց աշխարհ[48]:

Մ. Օրմանյանի, Լեոյի և Ա. Տեր-Ղևոնդյանի կարծիքով Գրիգորի գահակալության առաջին տարին 661 թվականն էր[49]: Եթե նկատի ունենանք, որ Սեբեոսը իր երկը ավարտել է Մուավիայի գահակալության առաջին տարվա մասին հաղորդումով և ոչ մի խոսք չի ասել Գրիգորի իշխանության մասին,

ինչպես նաև, ելնելով աղբյուրների վերոհիշյալ տեղեկություններից, կարելի է ասել, որ Համազասպ Մամիկոնյանի[50] իշխանության վերջին տարին և Գրիգոր Մամիկոնյանի իշխանության առաջին տարին համապատասխանում է 662 թ.:

Գրիգոր Մամիկոնյանի կառավարմամբ (662-685) Հայաստանի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում սկսվում է երկու տասնամյակ տևած խաղաղ և անկախ զարգացման ժամանակաշրջան: Գրիգոր Մամիկոնյանը Արուճում ձեռնարկեց եկեղեցու (Անաստաս Ա Ակոռեցի կաթողիկոսի (661-667) հինգերորդ տարում)[51] և իշխանական ապարանքի, ինչպես նաև Եղիվարդ ավանի արևելյան կողմում վանքի կառուցումը[52]: «Մեծն կաթողիկոսն Անաստաս շինէ պայծառապաճոյճ եկեղեցին 'ի հայրենի բնակութեան իւրում 'ի վանս դաստակերտին Ակոռոյ[53]: Այս այն պահերից էր Հայոց միջնադարյան պատմության մեջ, երբ Հայաստանի տարածքը նվաճող տերությունների միջև ծավալվող հակամարտության ընթացքում ճակատամարտերի բեմահարթակ չդարձավ:

VII դ. վերջին տասնամյակներում հայ ժողովրդի խաղաղ կյանքը խաթարվեց բյուզանդական ներխուժումների, իսկ այնուհետև արաբական ասպատակությունների և դրանց հաջորդած՝ Հայաստանում և հարևան երկրներում խալիֆայության ծանր լծի հաստատմամբ[54]: Միայն շնորհիվ հերոսական և աննկուն պայքարի, մեծ զոհերի գնով հայ ժողովրդին հաջողվեց պահպանել կենսական ուժերը, թոթափել նվաճողների ծանր լուծը և վերականգնել Հայոց պետականությունը ի դեմս Բագրատունիների թագավորության (885-1045):

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

1. Հայ-բյուզանդական հարաբերությունները հայ-արաբական պայմանագրի կնքման ժամանակաշրջանում

1. «Եւ արդ՝ զի՞նչ եւս զՀոռովմոց թագաւորութեանն ասացից զխռովութիւն եւ զաղէտս կործանման, որ ոչ երբէք դադարեաց յընտանի պատերազմէն եւ հեղումն արեան կոտորածոյ արանց գլխաւորաց եւ խորհրդականաց ի թագաւորութեանն, զոր ասացին խորհել խորհուրդ մահու ի վերայ թագաւորին: Եւ վասն այսորիկ կոտորեցին զամենայն արս գլխաւորս... Սպանին եւ զԳէորգ Մագիստրոս, եւ զՄանուէլ զայրն առաքինի, որ էր աներ Սմբատայ ասպետի, որդւոյ Վարազտիրոցի որդւոյ մեծին Սմբատայ Խոսրովայ Շումն կոչեցելոյ... Եւ արկին զՍմբատ յաքսորս. վասն զի պարտաւորեցին զնա զաւրն իւրեանց ի յապստամբութեան յետ իրացն եղելոց» (Սեբեոս, էջ 162-163): Ինչպես տեսնում ենք, բյուզանդական կայսեր քաղաքականությունը հայ զորավարների և մասնավորապես Վարազտիրոցի ու նրա որդու՝ Սմբատի հանդեպ շատ բանում միանման էր: Հայ զորավարներին, որոնք իրենց կամքին հակառակ հայտնվում էին կայսրությունում, օգտագործում էին զինվորական ծառայության մեջ, իսկ այնուհետև նրանց աքսորում՝ մեղադրանքներ հարուցելով: Ընդ որում, Սմբատի դեպքում աքսորը ներկայացվում էր որպես բարեգործություն կայսեր կողմից (« ...զաւրք Թրակացւոց իշխանացն խորհեցան ի վերայ նորա մահ... բայց արքայն խնայեաց ի նա, եւ մերժեալ ի նոցանէ ապրեցոյց զնա»): Եթե Կոստաս Բ-ը իրոք ցանկանում էր բարեգործություն անել, ապա նա կարող էր Սմբատին ուղարկել Հայաստան: Սակայն բյուզանդական կայսրերը հավատարիմ էին «Մավրիկիոսի դոկտրինային»:

2. Արաբա-բյուզանդական զինադադարի կնքման կապակցությամբ Թեոփանեսը հիշատակել է Դամասկոսում պատանդ թողնված Գրիգորին՝ Թեոդորոսի որդուն (Theoph. Chron., I, էջ 344): Թեոդորոսը վերոհիշյալ բյուզանդական զորավարն էր:

3. Սեբեոս. էջ 164:

4. Ղևոնդ, էջ 12, 13: Համմտ. Պատմութիւն Շապհոյ Բագրատունւոյ, էջմիածին, 1921, էջ 29: Հաւաքումն պատմութեան Վարդանայ Վադապետի, Վենետիկ, 1862, էջ 68:

5. Ղևոնդը այս դրվագը թվագրել է Մուավիայի գահակալության առաջին տարով և Կոստասի՝ քսանհինգերորդ տարով: Որոշ վերապահումներով Ք. Պատկանյանը ենթադրել է, որ այստեղ, հավանաբար, նկատի է առնվել 665 թ.: Դրա հետ մեկտեղ, նա ենթադրաբար նույնացրել է Կիլիկիայում գտնվող բյուզանդական զորավարին Թեոփանեսի կողմից հիշատակված Մավրիանոսի հետ: Գիտնականը ենթադրել է, որ 651 թ. Մավրիանոսը պարտություն էր կրել արաբներից: Սակայն Մավրիանոսի բախումը Հաբիբի հետ տեղի էր ունեցել ավելի ուշ: Մեկ այլ ծանոթագրությունում Ք. Պատկանյանը այդ հատվածի կապակցությամբ գրել է, որ Թեոդորոս Ռշտունին 656 թ. այլևս կենդանի չէր (Гевонд, էջ 13):

6. Լեո, հ. Բ, էջ 317, ծան. 3:

7. Մանանդյան Հ. Երկեր, հ. Բ, էջ 541:

8. Տես Тер-Гевондян А., նշվ. աշխ., էջ 48:

9. Theoph. Chron, I էջ 314: Մ. Չամչյանի կարծիքով խոսքը Վասակի մասին էր (էջ 354): Համմտ. Ագաթանգեղոսի անանուն պատմչի Պատմութիւն հայոց, Վենետիկ, 1835, էջ 227:

1962, էջ 45-46: Սեն-Մարտենը նման կարծիքը համարել է չապացուցված (Lebeau Ch. նշվ. աշխ., էջ 351): Տարբեր բացատրություններ տալով, Պ. Պետերսը (Peeters P., Πασαγνάθης - Περσογενής. Byzantion, t. VIII, 1933, էջ 421), Գ. Աբգարյանը (Սեբեոս, էջ 344-345, ծան. 612), Հ. Բարթիկյանը (Բյուզանդական աղբյուրներ, հ. Դ, էջ 252, ծան. 332) միևնույն եզրակացության են հանգել, ըստ որի, խոսքը Թեոդորոս Ռշտունու մասին է: Գ. Աբգարյանի կարծիքով Թեոփանեսի բնագրում Պասագնատեսի փոխարեն սկզբնապես եղել է παραβάτης (ուխտազանց), նկատի ունենալով, որ Թեոդորոս Ռշտունին խախտել էր բյուզանդացիներին տված ուխտը և անցել արաբների կողմը: Հ. Բարթիկյանը Պասագնատես անունը կապել է միջին պարսկերեն pasâgriv (ἀρχηγός - «առաջնորդ») բառի հետ:

10. Սեբեոս, էջ 164: Ըստ Մ. Օրմանյանի, այս իրադարձությունը տեղի ունեցավ 651 թ. (նշվ.աշխ., էջ 722), իսկ ըստ Մ. Ջինբաշյանի՝ 652 թ. (Jinbashian M., The Arabo-Armenian Peace Treaty of A. D. 652) «Հայկազեան հայագիտական հանդես», հ. Ջ, Բեյրութ, 1977-1978, էջ 169-171, հմմտ. Պետրոսյան Ե. նշվ. աշխ. էջ 622): Կ. Թումանովը նշել է 653/4 թ. (Cambr. MH, էջ 605): Կոստաս Բ-ի գահակալության 12-րդ տարին, որով Սեբեոսը թվագրել է այս անցքերը, համապատասխանում էր 653 թ.:

11. Կայսրությունն այս ժամանակաշրջանում իր հարաբերությունները Հայաստանի հետ կառուցելիս ամեն կերպ ձգտում էր նրան պահել իր ազդեցության ոլորտում և օգտագործել որպես ռազմական հենարան խալիֆայության դեմ պայքարում: Ամեն դեպքում Բյուզանդիան իր սեփական նվաճողական ծրագրերը իրականացնելիս ոտնահարում էր հայ ժողովրդի շահերը:

12. Даниелян Э. Л. Армяно-византийские отношения в период заключения армяно-арабского договора. - ԼՀԳ, № 4, 1988, էջ 21-32:

13. Սեբեոս, էջ 164: Ա. Տեր-Ղևոնդյանը գրել է. «Ըստ էության Թեոդորոս Ռշտունու արարքը խիզախ փորձ էր փրկելու Հայաստանը անվերջ արյունահեղությունից և ավերածությունից ու կայսրության նենգ քաղաքականությունից հիասթափվելու հետևանք էր» (Տեր-Ղևոնդյան Ա., նշվ. աշխ., էջ 36):

14. Սեբեոս, էջ 147, 167:

15. Նույն տեղում, էջ 164:

16. Սկզբնական ժամանակաշրջանում կարճատև ավերիչ ասպատակությունների հետ մեկտեղ արաբները նվաճումներ էրն կատարում նաև «պայմանագրեր» կնքելու միջոցով: Ա. Կոլեսնիկովը գրել է. «Արաբների համար պայմանագիրը հայտնի փաստաթուղթ էր, որի օգնությամբ նրանք Մուհամեդից շատ ավելի առաջ արդեն կարգավորում էին իրենց հարաբերությունները հարևան պետությունների կառավարիչների հետ... Տեղի բնակչության (ասորիներ, իրանացիներ, հայեր և այլն) հետ պայմանագրերի կնքման անհրաժեշտությունը բխում էր այլադավանների թվային գերակշռությունից արաբական զորքի հանդեպ: Ոչ մահմեդականների համար պայմանագիրը հնարավորություն էր ընձեռում ռազմական կոնֆլիկտը խաղաղ ճանապարհով լուծել, երբ ազատությունը և գոյություն պահպանելու իրավունքը պաշտպանելու այլ՝ ավելի պատվավոր միջոցները սպառված էին լինում... «Խաղաղ» ճանապարհը ոչ միշտ էր հանգեցնում կոնֆլիկտի անարյուն լուծմանը, այն միայն որոշում էր ենթակայության բնույթը» (Колесников А. Завоевание Ирана арабами, էջ 155-156):

17. Ա. Կոլեսնիկովի այս դիտարկումները հաստատում են հայկական աղբյուրների հաղորդումներով արաբների նվաճումների մասին (նույն տեղում, էջ 149):

18. Ս. Մելիք-Բախշյանը և Ա. Տեր-Ղևոնդյանը հայ-արաբական պայմանագիրը միանշանակ գնահատել են որպես միջոց, որով, թեկուզ և ժամանակավորապես,

Հայաստանն ապահովեց իր անկախությունը (Մելիք-Բախշյան Ս., նշվ. աշխ., էջ 71 Тер-Гевондян А., նշվ. աշխ., էջ 35): Իսկ ըստ Կ. Յուզբաշյանի, Թեոդորոսը «652 թ. Հայաստանի համար ձեռնտու պայմանագիր կնքեց արաբների հետ... ճանաչելով խալիֆայության գերագույն իշխանությունը» (Юзбашян К., նշվ. աշխ., էջ 30-31):

19. Артамонов М., История хазар, М., 1962, էջ 219 և այլն:

20. Ա. Տեր-Ղևոնդյանի կարծիքով, քանի որ հայերը մերժել էին Բյուզանդիայի հետ եղած դաշինքը, ապա բյուզանդական զորքը պետք է հեռանար Հայաստանից (Тер-Гевондян А., նշվ. աշխ., էջ 34):

21. Այս արշավանքը Մ. Օրմանյանը դրել է 652 թ. (նշվ. աշխ., էջ 722, 723), Ս. Մելիք-Բախշյանը (նշվ. աշխ., էջ 72) և Ա. Տեր-Ղևոնդյանը՝ 652/3 թ. (նշվ. աշխ., էջ 37), Կ. Թումանովը՝ 654 թ. (Cambr. MH, էջ 606):

22. Սեբեոս, էջ 165:

23. Նույն տեղում: Ի տարբերություն Սեբեոսի, Թեոփանեսը նշել է, որ կայսրը հայ-արաբական դաշինքը կնքելուց հետո հասավ Կապադովկիա և, չմտնելով Հայաստան, ետ վերադարձավ (Theoph. Chron., I, էջ 344):

24. Ի տարբերություն Ս. Մելիք-Բախշյանի, որը ենթադրել էր, որ կայսրին ներկայացան մի քանի կասկածող և թուլամորթ անձնավորություններ (նշվ. աշխ., էջ 72), Ա. Տեր-Ղևոնդյանը կարծում էր, թե «հսկայական բյուզանդական բանակի հայտնվելը պառակտում առաջացրեց հայ ավատատերերի շարքերում: Նրանց մի մասը, որը պատրաստ էր ընդհանուր լեզու գտնել Բյուզանդիայի հետ, ներկայացավ կայսրին Թեոդոսուպոլսում» (Тер-Гевондян А., նշվ. աշխ., էջ 37): Կ. Յուզբաշյանը նշել է, որ առաջնային դիրք գրավող իշխանի կառավարման համակարգի առաջացմամբ, նրա ազդեցությունը տարածվում էր Հայաստանի թե՛ բյուզանդական և թե՛ նախկին պարսկական մասերի վրա (Юзбашян К. Армянские государства, էջ 29):

25. Սեբեոս, էջ 165

26. Ըստ Մ. Օրմանյանի, Թեոդորոս Ռշտունին կանգնած էր իր դիրքերում մյուս այլ քառասուն իշխանների հետ (նշվ. աշխ. էջ 723, հմմտ. Մելիք-Բախշյան Ս., նշվ. աշխ. էջ 73): Ա. Տեր-Ղևոնդյանը ճիշտ է մեկնաբանել Սեբեոսի հաղորդումը. «Նոր իշխանին քառասուն արանց հետ ուղարկեցին Թեոդորոսի մոտ» (Тер-Гевондян А., նշվ. աշխ., էջ 37): Այդ ջոկատը, փաստորեն, ուղարկված էր Թեոդորոս Ռշտունուն ձերբակալելու և կայսեր մոտ բերելու նպատակով:

27. Գուրամի որդին՝ Ստեփանոսը, վարում էր պարսկամետ քաղաքականություն և Տփղիսի պաշտպանության ակտիվ կազմակերպիչներից էր՝ բյուզանդացիների և խազարների կողմից քաղաքի պաշարման ժամանակ: Հերակլը այնտեղից ուղղվելով Պարսկաստան, իշխանությունը հանձնեց Ադարնասեհին, որին խազարների օգնությամբ հաջողվեց գրավել Տփղիսը: Ըստ Ջվանշերի, Ադարնասեհի որդու Ստեփանոսի ժամանակ Հերակլը երկրորդ անգամ մտավ Քարթլի (Джуаншер Джуаншериани. Жизнь Вахтанга Горгасала. Перев., введение и примечания Г. Цулая, Тбилиси, 1986, էջ 99-102): Կարելի է տեսնել, որ նույնիսկ քաղկեդոնականության ընդունմամբ Վիրքը ենթարկվում էր Բյուզանդիայի ագրեսիային, միևնույն ժամանակ կայսրությունը այնտեղ տենդորեն իրեն կողմնակից քաղաքական ուժեր էր փնտրում:

28. Սեբեոս, էջ 166:

29. Ինչպես երևում է հայ-արաբական պայմանագրից, Հայաստանը չէր պատրաստվում խալիֆայության հետ դաշնակցելով հարձակվել Բյուզանդիայի վրա, իսկ արաբական ռազմական օգնությունը պետք է միայն օգտագործվեր բյուզանդական զորքերի Հայաստանի վրա հարձակվելու դեպքում:

30. Մինչ Կոստասի զորքերը պատժիչ գործողություններ էին իրականացնում Թեոդորոս Ռշտունու կողմնակից ուժերի դեմ, ինքը՝ կայսրը, Դվինում քաղաքական բռնությունը աշխատում էր ամրապնդել հաղորդությամբ: Այսինքն, անկախ Ներսես կաթողիկոսի դիվանագիտական նպատակով կատարած դավանանքային առերես զիջողականության, Կոստասը անշեղորեն շարունակում էր իրականացնել կայսրության նվաճողական քաղաքականության գիծը դավանանքային ասպարեզում: Հայ հոգևորականությունը կաթողիկոսի հետ միասին Դվինում, կայսեր գլխավորած բյուզանդական զորքի ներկայությամբ, կատարեց հաղորդության ծիսակատարությունը: Շատերի համար այդ արարողությունը ստիպողական քայլ էր, «մինչ զի առ մահուն երկիւղիւ ամենեքեան զհրամանսն հաղորդութեանն կատարէին» (Սեբեոս, էջ 167): Կայսեր ուղարկած զորքերին հաջողվեց կոտրել Վիրքի դիմադրությունը և ընկճել այն: Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու, կայսրը միայն Վիրքը գտավ իրեն հնազանդ. (գլ. ԺԹ), իսկ Սյունիքը և Վասպուրականը չհնազանդվեցին, ու բյուզանդական պատժիչ ջոկատները հայոց արևելյան նահանգները թալանի ենթարկելով, վերադարձան կայսեր մոտ (Սեբեոս, էջ 166):

31. Օրմանյան Մ., էջ 725-727:

32. Успенский Ф., նշվ. աշխ., էջ 713-716, հմմտ. Diehl Ch. նշվ. աշխ., էջ 238; Cambr. MH էջ 440-441, История Византии, հ. I, էջ 369:

33. Себеос, 1939, էջ 72:

34. Սեբեոս, էջ 147:

35. Նույն տեղում, էջ 318, ծան. 529: Թորոմանյան Թ. Ջվարթնոց, Նյութեր հայ ճարտարապետության պատմության. հ. Ա., Երևան, 1942:

36. Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 87: Միակամության բանաձևը նույնպես խորթ էր միաբնակների աստվածաբանական հայացքներին, ուստի Սեբեոսը խիստ կերպով է արտահայտվում այդ ուսմունքի առթիվ և նույնիսկ դրա հետ կապված անցքերը դիտում է իբրև քաղկեդոնականության պարտադրմանը և ընդունմանը հավասարազոր եղելություններ: Այդ առումով հատկանշական է հայ միաբնակ եպիսկոպոսի և Կոստաս Բ կայսեր բանավեճի բովանդակությունը (Սեբեոս, էջ 166-167):

37. Սեբեոս, էջ 168: Կոստաս Բ-ի հետ Դվինից գնաց նաև Ներսես կաթողիկոսը՝ «Եւ երթեալ դադարեաց ի Տայս, եւ այլ ոչ դարձաւ ի տեղի իւր. զի իշխանն Ռշտունեաց եւ այլ իշխանքն որ ընդ նմա՝ անհնարին ցասմամբ փքացեալ էին ի վերայ նորա» (Սեբեոս, էջ 168, հմմտ. Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 87): Կաթողիկոսը անմիջապես չէր գնացել Տայք, քանի որ Սեբեոսի երկի շարադրանքից իմացվում է, որ Ներսես կաթողիկոսը կայսեր հետ գնացել էր Կոստանդնուպոլիս, որտեղ «ընկալաւ զնա անդ պատուով. եւ ետուն նմա ինչս եւ արձակեցին անդրէն ի տեղի իւր, եւ եկն դադարեաց ի Տայս մինչեւ մեռաւ Ռշտունեաց տէրն, դադարեաց ասպատակ Տաճկին» (Սեբեոս, էջ 174-175):

38. Նույն տեղում, էջ 168: Ս. Տեր-Ղևոնդյանի կարծիքով կայսրը Մորիանին ամբողջ Հայաստանի վրա էր կառավարիչ նշանակել: Հետազոտողը գրել է, որ «Կոստասի նպատակն էր վերացնել Հայաստանի ինքնուրույնությունը (որը ամրապնդվել էր Բյուզանդիայի՝ արաբներից կրած պարտությունից հետո), այն իրեն լրիվ ենթարկել և վերածել բյուզանդական նահանգի: Վերադառնալով Կոստանդնուպոլիս, նա Հայաստանի կառավարիչ նշանակեց Մորիանին (Մավրիանոս): Այսպիսով, նա իշխանությունից զրկեց ոչ միայն Թեոդորոս Ռշտունուն, այլ նաև նույնիսկ իր կողմից նշանակված Մուշեղ Մամիկոնյանին» (Тер-Гевондян А., նշվ. աշխ., էջ 38): Այնինչ, ինչպես երևում է Սեբեոսի հաղորդումից, խոսքը կարող է լինել միայն Արևմտյան Հայաստանի վրա բյուզանդական ազդեցության վերականգման մասին, չնայած այն հանգամանքին, որ պատմիչը նշել է, որ Մավ-

րիանոսին «իշխան Հայոց» պաշտոնը շնորհվեց: Եթե նույնիսկ կայսեր կողմից Թեոդորոս Ռշտունին զրկվել էր իր պաշտոնից, այդ դեռևս չէր նշանակում, որ կայսրությունը ամբողջ Հայաստանի վրա վերականգնել էր իր ազդեցությունը, ինչի մասին է վկայում դեպքերի հետագա ընթացքը:

2. Հայաստանի քաղաքական վիճակը VII դարի երկրորդ կեսում

1. Սեբեոս, էջ 169: Այս դեպքը, ըստ Մ. Օրմանյանի (նշվ. աշխ., էջ 729), տեղի էր ունեցել 653թ., իսկ ըստ Մ. Ղազարյանի՝ 654թ. (Ghazarian M., նշվ. աշխ., էջ 32):

2. Սեբեոս, էջ 169: Ս. Մելիք-Բախշյանը հաշվի չի առել վերոհիշյալ հաղորդումը Վարդի մասին և այդ պատճառով Շապուհ Բագրատունու (Պատմութիւն Շապհոյ Բագրատունւոյ, ի լոյս ածին Գ. Տէր-Մկրտչեան եւ Մեսրոպ եպիսկոպոս, Էջմիածին, 1921, էջ 31) և Վարդան Արևելցու (էջ 68) համապատասխան տեղեկությունները ճիշտ չի բերել՝ դրանք կապելով դեպի Տրապիզոն բյուզանդացիների փախուստի հետ (նշվ. աշխ., էջ 76): Մ. Օրմանյանը այն կարծիքին էր, որ Մավրիանոսը Հայաստանից Վիրքով նահանջեց Տրապիզոն, իսկ այնտեղից գնաց կայսրության խորքերը (նշվ. աշխ., էջ 730): Հաշվի առնելով, որ Մավրիանոսը շուտով հայտնվեց Հայաստանում և այնտեղից հեռացավ Վիրք, կարելի է ենթադրել, որ առաջին նահանջի ժամանակ նա նույնպես գնաց Վիրք և այնտեղից վերադարձավ Դվին:

3. Սեբեոս, էջ 169:

4. VII դարի 40-ական թվականների սկզբներից Մուավիան Ասորիքի կառավարիչն էր և Օմար (634-644) ու Օսման (644-656) խալիֆների օրոք ինքնուրույնություն էր պահպանում (Hitti Ph. նշվ. աշխ., էջ 174-177): Ալի խալիֆը (656-661), ինչպես նշել է Կ. Բոսվորտը, այդպես էլ չկարողացավ իր իշխանությունը տարածել այն տարածքի վրա, որտեղ տիրում էր Մուավիան: Ալին մայրաքաղաքը տեղափոխեց Կուֆա (Босворт К.Э. Мусульманские династии, М., 1971, էջ 28): Մուավիան այնպիսի իշխանություն ուներ, որ Սեբեոսը, նկարագրելով այդ դեպքերը, որոնք նախորդել էին նրա պաշտոնական գահակալությանը, նրան անվանել է «իշխանն Իսմայելի»:

5. Սեբեոս, էջ 170, 171: Սեբեոսի և Թեոփանեսի (Theoph; Chron, I, էջ 345) հաղորդումներից հետևում է, որ 653-654 թթ. արաբական նավատորմը Հռոդոս կղզու մոտ հաղթանակ տարավ:

6. Գ. Աբգարյանի կարծիքով խոսքը այստեղ բյուզանդացիների մասին է, որոնք Թեոդորոս Ռշտունուց կրած պարտությունից հետո փախել էին Վիրք (Սեբեոս, էջ 358-359, ծան. 648-649):

7. Սեբեոս, էջ 171:

8. Ա. Տեր-Ղևոնդյանը այս դեպքը դրել է 653 թ., իսկ աղբյուրում եղած Չորրորդ Հայքի հիշատակությանը տարբեր առիթներով անդրադարձել երկու անգամ: Նա նշել է, որ արաբների զորքը Չորրորդ Հայքից ներխուժեց կենտրոնական շրջանները և կանգ առավ Դվինում, նպատակադրվելով գնալ Քարթլի, սակայն անհաջողության մատնվելով, շտապ ուղևորվեց Ասորիք: Մեկ այլ տեղ գրել է. «Քաղկեդոնի մոտ՝ Կոստանդնուպոլսի մերձակայքում ծովի վրա ունեցած անհաջողությունից հետո, արաբները ուժեղացրին ճնշումը Փոքր Ասիայում: Արաբական զորքը, որը այդ ժամանակ գտնվում էր Մալաթիայից (ըստ Սեբեոսի - Կապադովկիայում) արևմուտք, ջախջախեց հույներին և ներխուժեց Չորրորդ Հայք (հավանաբար նրա հյուսիսային մասերը), այնտեղից մոտենալով Թեոդոսուպոլսին»

(Տեր-Ղևոնդյան Ա., նշվ. աշխ., էջ 39-40): Սեբեոսի մոտ խոսքը այն մասին է, որ արաբները, պարտություն կրելով հույներից, նահանջեցին Արվաստան՝ իրենց ճանապարհին թալանելով Չորրորդ Հայքը:

9. Սեբեոս, էջ 171-172:

10. Ա. Տեր-Ղևոնդյանի կարծիքով, տուրքը հավաքվում էր յուրաքանչյուր ավատատիրոջ շրջանում իր հարկահավաքի կողմից (նշվ. աշխ., էջ 40): Տվյալ դեպքում տեղի էր ունեցել ինչպես ավատատիրական, այնպես էլ ընդհանուր պետական հարկահանություն:

11. Սեբեոս, էջ 172:

12. Սեբեոս, էջ 173: Ա. Տեր-Ղևոնդյանը, հենվելով Սեբեոսի հաղորդման վրա, արաբական զորավար Հաբիբի կողմից Արտավազդ Դիմաքսյանի սպանության մասին, գտնում էր, որ Այրարատում նվաճողներին դիմադրելու կողմնակիցներ կային (Տեր-Гевондян А.,նշվ. աշխ., էջ 42):

13. Լեո, նշվ.աշխ., էջ 317, Մելիք-Բախշյան Ս., նշվ.աշխ., էջ 79:

14. Սեբեոս, էջ 359-360, ծան. 651:

15. Ա. Տեր-Ղևոնդյանը նշել է, որ արաբական պատմիչները շփոթել են Հաբիբի դեպի Չորրորդ Հայք կատարած 644 թ. արշավանքը նրա 654 թ. արշավանքի հետ: Նա ավելի արժանահավատ է համարել դեպքերին ժամանակակից Սեբեոսի հաղորդումները (Տեր-Гевондян А., նշվ. աշխ., էջ 40): Սեբեոսի շարադրանքի ժամանակագրական հաջորդականությունից հետևում է, որ վերոհիշյալ արհավիրքները հայ գյուղացիներին բաժին հասան 654-655 թթ. ձմռան ամիսներին, իսկ արաբական ներխուժումը տեղի ունեցավ 655 թ. տաք ամիսներին, այնուհետև շարունակվեց մինչև հաջորդ տարի:

16. Սեբեոս, էջ 174: Ըստ Ա. Տեր-Ղևոնդյանի, հույների մի մասը անցել էր Արաքսը և ամրացել Ջարեհավանում (նշվ. աշխ., էջ 43): Գ. Աբգարյանը իրավացիորեն նշել է, որ խոսքը Ջարեհավանում ամրացած արաբների մասին էր (Սեբեոս, էջ 363-364, ծան. 659):

17. Սեբեոս, էջ 174:

18. Նույն տեղում:

19. Ղևոնդ, էջ 14: Պատմիչը այս տեղեկությունը բերել է Թեոդորոս Ռշտունու որդու՝ Վարդի հետ կապված դեպքերի նկարագրությունից հետո: Այս հատվածը, ըստ Ղևոնդի, վերաբերում էր Մուավիայի թագավորության առաջին տարվան, սակայն այն տարբեր տարիներին վերաբերող տեղեկություններ է պարունակում:

20. Պայմանագիրը կնքվել էր երեք տարով: Այդ ժամկետը լրանալուց հետո հայերը պետք է վճարեին հարկը, ուստի «խալիֆի հրովարտակը» կարելի է դիտել որպես վճարման ժամկետը մոտենալու նախազգուշացում: Հրովարտակը կարող էր իր հետ Հայաստան բերած լինել Հաբիբը:

21. Սեբեոս, էջ 174:

22. Կարինի բնակիչները համաձայնվեցին գլխահարկ վճարել և, ըստ Բալազուրիի, հեռանալ երկրից: Ա. Տեր-Ղևոնդյանը նշել է, որ խոսքը քաղաքի բնակչության հունական հատվածին էր վերաբերում, որն իրոք հեռացավ Բյուզանդիայի սահմանները (Տեր-Гевондян А., նշվ. աշխ., էջ 40):

23. Պ. Ժուզեն թարգմանել է «Հաբիբը ուղարկեց նրան (պատրիկին) նրա (Իյադի) մոտ» (Баладзори. Книга завоевания стран. Пер. с арабского П. Жузе, Баку., 1927, էջ 10), սակայն հայտնի է, որ Իյադը մահացել էր հիջ. 20 թ.: Բ. Խալաթյանցը ճիշտ է թարգմանել (Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին, էջ 42):

24. Պ. Ժուզեն «դաշտ»-ի փոխարեն թարգմանել է «անապատ», որը սխալ է: Բ. Խալաթյանցը գտնում է, որ խոսքը Հարքի և Վարաժնունիքի (Տուրուբերանում) մասին էր: Ա. Տեր-Ղևոնդյանի կարծիքով, խոսքը մի վայրի էր վերաբերում, որը

գտնվում էր «Հարքից մինչև Վարագա լեռը՝ Վանա լճի արևելքում, անցնող ճանապարհին», որպիսին Մանազկերտն էր (Тер-Гевондян А., նշվ. աշխ., էջ 41): Վարագա լեռը հիշատակված վայրերից հեռու է գտնվում՝ Վանա լճի հակառակ ափին: Իսկ Հաբիբի արշավանքի երթուղին անցնում էր Վանա լճի հյուսիսային ափամերձ շրջաններով:

25. Արաբական մատենագրեր Հայաստանի մասին, էջ 42-43:

26. Աղբյուրում այս քաղաքի կապակցությամբ հիշատակված է «ալ-Կիրմիզ» որը, ըստ Բ.Խալաթյանցի, համապատասխանում է որդան կարմիր ներկին (տես Արաբական մատենագրեր Հայաստանի մասին, էջ 43, ծան. 2):

27. Նույն տեղում, էջ 44:

28. Բ. Խալաթյանցը նշել է, որ Հաբիբի արշավանքը և Մավրիանոսի փախուստը մինչև Կովկասի լեռները աղբյուրում թվագրված են 645 թ. (նույն տեղում, էջ 40, ծան. 2): Հ. Բարթիկյանը գրել է, որ Թեոփանեսը այս դեպքերը դրել է 652-653 թթ. (Բյուզանդական աղբյուրներ, Դ, էջ 252, ծան. 336): Թեոփանեսը այս դեպքերը թվագրել է «աշխարհի արարչության 6145 տարով» (Theoph. Chron., I, էջ 345): Ինչպես նշել է Ի. Չիչուրովը, Թեոփանեսի ժամանակագրությունից օգտվելիս անհրաժեշտ է մեկ տարի ավելացնել նրա կողմից բերվող տարեթվերին՝ 6099 (606/7) և 6204 (711/2), ինչպես նաև 6219 (726/7) և 6266 (773/4) թթ. միջև ընկած ժամանակաշրջաններում (Византийские исторические сочинения, էջ 19): Այս դեպքում ստացվում է 654թ.: Իսկ եթե հետևել թվագրմանը ըստ Կոստասի գահակալության տարիների, ապա կստացվի 653/4 թ., քանի որ Թեոփանեսի նկարագրած այս դեպքերը տեղի էին ունեցել Կոստասի գահակալության 12-րդ տարում: Այս դեպքերի թվագրման հարցում անհրաժեշտ է հետևել Սեբեոսի շարադրանքի ժամանակագրական հաջորդականությանը:

29. Արաբական մատենագրեր Հայաստանի մասին, էջ 46-47:

30. Սեբեոս, էջ 174: Պատմիչը գլխավոր իշխանների և նրանց ընտանիքների կապակցությամբ նշել է, որ արաբական զորքը նրանց «կալաւ պատանդ», իսկ Թեոդորոս Ռշտունին «գնաց ընդ նոսա»: Արդյո՞ք պատահական է Սեբեոսի այս տեղեկությունը: Կարելի է ենթադրել, որ Թեոդորոսը, տեսնելով իր երկրին հասած նման արհավիրքը, այն համարում էր իր վարած քաղաքականության ձախողման արդյունքը և իր պարտքը համարեց միանալ գերիներին, որպեսզի գոնե խալիֆայությունում ինչ-որ ձևով նրանց պաշտպաներ: Մ. Օրմանյանը գրել է. «Թէոդորոս կը յուսար թերեւս բանակցութեամբ լաւագոյն վիճակ մը ապահովել» (նշվ. աշխ., էջ 732): Սակայն մահը ավելի շուտ վրա հասավ:

31. Հարությունյան Հ. Ա., Հայաստանն Արաբական խալիֆայության տիրապետության ժամանակ (640-850), Երևան, 1946: Նալբանդյան Հ., Արաբացի ոստիկանները Հայաստանում, - «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1956, № 8, էջ 105-124, Тер-Гевондян А., նշվ. աշխ., էջ 74:

32. Սեբեոս, էջ 174:

33. Օրմանյան Մ., էջ 731, Լեո, նշվ. աշխ., էջ 318: Մ. Ղազարյանը և Ս. Մելիք-Բախշյանը նշել են, որ Թեոդորոս Ռշտունին մահացել է 656 թ. (Ghazarian M., նշվ. աշխ., էջ 32, Մելիք-Բախշյան Ս., նշվ. աշխ., էջ 83):

34. Ա. Տեր-Ղևոնդյանի կարծիքով, Համազասպը կառավարիչ էր դարձել դեռևս Թեոդորոս Ռշտունու օրոք, սակայն, մինչ վերջինս Հայաստանում էր, Համազասպը «չէր մասնակցում պատերազմներին, իսկ հենց դարձավ Հայաստանի տիրակալը, ջերմեռանդորեն ձգտում էր ամրապնդել երկրի հզորությունը» (Тер-Гевондян А., նշվ. աշխ., էջ 47, 270): Գիտնականը այսպիսի եզրակացության է եկել հիմնվելով Սեբեոսի հետևյալ խոսքերի վրա. «Բայց ընդանեսուն եւ ընթերցասէր եւ ուսումնասէր, եւ ոչ ըստ հայրենի ազգին վարժ եւ կիրթ հրահանգաւք զինուո-

րական վարժից, ո՛չ մտեալ ի ճակատ եւ ո՛չ տեսեալ զդէմս թշնամեաց: Եւ արդ՝ սկսաւ նախանձել ի բնութիւն հայրենի տանն քաջութեանն, ջերմեռանդ փութով կատարել եւ զգործ քաջութեան ըստ նախնեացն վարժից լիապէս կատարել, ի վերուստ խնդրելով զառաջնորդութիւն եւ զյաջողութիւն անձին քաջութեանն կատարել» (Սեբեոս, էջ 174): Այստեղից հետևում է, որ Համազասպը իր ընտանիքին նվիրված և կիրթ անձնավորություն էր, սակայն զինվորական գործում վարժ չէր և պատերազմներին չէր մասնակցել: Հայոց իշխան կարգվելուց հետո, նա իրեն դրսևորեց որպես ջերմեռանդ պետական գործիչ:

35. Սեբեոս, էջ 174, Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 88:

36. Սեբեոս, էջ 175: Եթե ենթադրենք, որ Տայքում գտնվելու ժամանակաշրջանի մեջ հաշվի է առնված նաև այն ժամանակահատվածը, երբ Ներսեսը մինչ Կոստաս Բ-ի Հայաստան գալը (653 թ.) արդեն այնտեղ էր ու տարաձայնությունները նրա և Թեոդորոս Ռշտունու միջև տեղի էին ունեցել մինչ հայ-արաբական պայմանագրի կնքումը, ապա կարելի է ասել, որ Դվինի ժողովից (649 թ.) հետո կաթողիկոսը գնացել էր Տայք (մոտ. 650թ.): Ուրեմն, 653թ. նա Տայքից եկել էր Դվին, իսկ այնուհետև նորից հեռանալով Տայք, այնտեղից վերադարձել էր 656 թ.:

37. Ըստ Ղևոնդի, Ներսես կաթողիկոսը և նախարարները միասին հավաքվեցին ու համաձայնվեցին հարկ վճարել արաբներին, որոնք նրանցից պատանդներ պահանջեցին: Նախարարներից երկուսին՝ Գրիգոր Մամիկոնյանին և Սմբատ Բագրատունուն որպես պատանդ տարան արաբների տիրակալ Մուավիայի մոտ, որը Հայաստանի վրա հարկ դրեց: Այն պետք է հայերը վճարեին ամեն տարի (Ղևոնդ, էջ 14): Վերոհիշյալ պայմանագրով սահմանված երեք տարի անց Հաբիբը, փաստորեն, ուժով սկսեց գանձել հարկը:

38. Սեբեոս, էջ 175: Ասողիկը նույնպես հաղորդել է այս դեպքերի մասին, սակայն պատանդների թիվը նշել է ՉՃԷ (777): Ըստ երևույթին նրա երկի ձեռագրերում չի գրանցվել Ռ տառը, իսկ Ե-ի փոխարեն գրվել է Է: Ս. Մելիք-Բախշյանը ներկայացրել է պատանդների թիվը 1800 (Նշվ. աշխ., էջ 83):

39. Սեբեոս, էջ 365, ծան.662: Նկատի ունենալով Հովհաննես Դրասխանակերտցու և Կիրակոս Գանձակեցու հաղորդումները, կարելի է պարտադիր չհամարել «ի նմին ամի» արտահայտության կապը «վեցերորդի ամի» բառերի հետ:

40. Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 89:

41. Կիրակոս Գանձակեցի, էջ 62:

42. Գ. Աբգարյանը ենթադրել է, որ Համազասպին արաբները Հայաստանի կառավարիչ նշանակեցին Թեոդորոս Ռշտունուց հետո (Սեբեոս, էջ 366, ծան. 663): Համազասպը Թեոդորոսի փեսան էր (նույն տեղում, էջ 169), և վերջինս կարող էր նրան իր պաշտոնում նշանակել և դրանից հետո հեռանալ Հայաստանից, իսկ արաբները ճանաչեցին նրա իշխանությունը:

43. Արաբա-բյուզանդական խաղաղության պայմանագրին մանրամասն անդրադարձել է Թեոփանեսը: Ըստ կնքված հաշտության (պատճառը արաբների մեջ բռնկված ապստամբությունն էր) արաբները հռոմեացիներին օրեկան վճարելու էին հազար դահեկան, մեկ ձի և մեկ ստրուկ (Theoph. Chron., I, էջ 38, Բյուզանդական աղբյուրներ, Դ, էջ 58, Diehl Ch. Նշվ. աշխ., էջ 237, История Византии, հ. I, էջ 369): Ա. Տեր-Ղևոնդյանի կարծիքով արաբա-բյուզանդական պատերազմը ժամանակավորապես դադարեց, որպեսզի Մուավիան կարողանար ապահովել իր թիկունքը Ալի խալիֆի դեմ պայքարում, իսկ Հայաստանը չնայած ընդունեց կայսրության սյուզերենությունը, սակայն այստեղ բյուզանդական զորք չկար (նշվ. աշխ., էջ 47):

44. Չնայած պահը ծանր էր Համազասպի համար, քանզի նրա եղբայրը պատանդների թվում էր (Սեբեոս, էջ 175):

45. Նույն տեղում:
46. Նույն տեղում:
47. Նույն տեղում:
48. Ղևոնդ, էջ 14: Համմտ. Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 89:
49. Օրմանյան Մ., նշվ. աշխ., էջ 742-746, Լեո, նշվ. աշխ., էջ 319, Տեր-Գևոնդյան Ա., նշվ. աշխ., էջ 270: Մ. Օրմանյանը և Լեոն Ներսես կաթողիկոսի մահը դնում են 661 թ., սակայն Հովհաննես Դրասխանակերտցու հաղորդումների լույսի տակ այն կարելի է դնել 662 թ.:
50. Ա. Տեր-Ղևոնդյանը ճիշտ է եզրակացրել, որ Համազասպի օրոք ավարտվեց հայկական հողերի վերամիավորումը՝ «Բոլոր հայկական հողերի վերամիավորումը ամրապնդեց Հայաստանի հզորությունը և մեծ նշանակություն ունեցավ երկրի ոչ միայն քաղաքական, այլև տնտեսական ծաղկման համար» (Տեր-Գևոնդյան Ա., նշվ. աշխ., էջ 47):
51. Կիրակոս Գանձակեցի, էջ 62-63:
52. Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 90, 91:
53. Նույն տեղում:
54. Այս ժամանակաշրջանի քաղաքական պատմությունը մանրամասն հետազոտել է Ա. Տեր-Ղևոնդյանը (Տեր-Գևոնդյան Ա., նշվ. աշխ., էջ 50-56, 71-74):

Эдуард Л. Даниелян

ПОЛИТИЧЕСКАЯ ИСТОРИЯ АРМЕНИИ И АРМЯНСКАЯ АПОСТОЛЬСКАЯ ЦЕРКОВЬ (VI-VII ВЕКА)

Резюме

Политическая история Армении VI - начала VII вв. складывалась в условиях разделенности ее территории между Византийской империей и сасанидским Ираном. За этот период и далее были проведены политико-административные реформы, происходили восстания армянского народа в западной и восточной частях страны, проявлялись тенденции восстановления территориальной целостности, независимой государственности и политического единства Армении в условиях завершения византийско-иранского и начала византийско-арабского противоборства. Содержание армяно-византийских отношений на фоне политических событий, связанных с падением сасанидского Ирана и началом завоеваний Арабского халифата, определялось неизменным захватническим курсом Византийской империи в отношении Армении.

В раннем средневековье армяно-византийские и армяно-иранские отношения, которые носили печать армяно-римских и армяно-иранских отношений античного периода, трансформировались в контексте геополитических процессов Восток-Запад.

После византийско-иранского раздела Армении 385 г. завоеватели со временем упразднили Армянское царство Аршакидов в Западной Армении (387 г.), а затем в Восточной Армении (428 г.). Персия и Византия установили свой контроль, соответственно, над Восточной и Западной Арменией. Восстания армянского народа (451, 481-484, 539, 572 гг.) против политического, военно-экономического и религиозного давления сасанидского Ирана завоевателей сохранили армянскую государственность, носителем которой являлась нахарарская система. В отличие от Восточной Армении, в Западной Армении, вследствие централизованной экспансионистской политики Византийской империи, имевшей негативные последствия, произошли серьезные военно-административные и социально-структурные изменения. Административно-территориальные деления в период Юстиниана I (527-565) и реализация "доктрины" Маврикия (580-602), направленые на лишение Армении нахарарской и военной силы, являлись частью захватнической политики империи.

В период политического кризиса, охватившего царство Сасанидов, Армения, вследствие экспансии Византийской империи, не смогла осво-

бодиться от их власти и восстановить свою независимость. Император помог Хосрову II восстановить свою царскую власть в Иране. После византийско-иранского раздела Армении и сопредельных территорий 591 г. Маврикий укрепил позиции империи на Востоке и активизировал защиту западных рубежей империи. В течение времени византийские императоры, в особенности Маврикий, отправляли многих армянских военачальников с их войсками из Западной Армении в приграничные области империи в бассейне реки Дунай. Армянские военачальники восставали против такой политики и даже планировали воссоединение восточной и западной частей страны. Однако, в таких ситуациях Византия и Иран, не взирая на собственное соперничество, действовали против них единодушно.

С территориальной экспансией Византийская империя проводила реорганизации армянских земель, давая им статус военно-административных единиц, а также увеличивало налоговое облажение. Эти реформы проводились посредством централизации имперского правления и отрицательно сказывались на традиционную систему социально-демографической структуры западноармянских земель.

Во время византийско-иранских войн первых десятилетий VII века Армения стала ареной сражений и военных походов. Сначала персидские войска через Армению вторгались в византийские владения, а затем византийские войска во главе с императором Ираклием (610-641) совершали походы на Иран через Армению. Все эти военные действия имели негативные последствия для Армении.

После провозглашения христианства государственной религией в Армении (301 г.) Армянская Апостольская церковь стала гарантом этнодуховной целостности армянского народа, коренящейся в глубине тысячилетий.

Правители Византии и Ирана, исходя из своих политических целей, обращали особое внимание на конфессиональные вопросы. Император Маврикий основал в Западной Армении халкедонитский престол (в Аване) в противоположность престолу католикоса Армянской Апостольской церкви, в это время находившегося в Двине. Однако халкедонитский престол просуществовал около двух десятилетий. Маврикий пытался привести Армянскую церковь в лоно халкедонитства, а император Ираклий - монофелитства. С другой стороны, персидский шах Хосров II Парвез созвал в Ктесифоне собор (615/6) представителей христианских церквей из стран, оказавшихся в сфере его влияния. После бурных обсуждений Хосров Парвез провозгласил о том, что все они должны следовать Армянской вере. Принятие такого решения было обусловлено как тем, что среди восточных христианских церквей наиболее решитель-

но официальной доктрине Византийской церкви противостояла Армянская Апостольская церквь, так и общим кризисом, охватившим официальную идеологию и зороастрийскую религию сасанидского Ирана.

На политику Византии по отношению к Армении влияло соперничество Византийской империи как с сасанидским Ираном, так и в дальнейшем - с Арабским халифатом. С целью усиления военно-административной системы Византийской империи Ираклий заменил *экзархаты* на *фемы,* в первую очередь в Малой Азии, а затем в других регионах государства. Одним из таких образований была *фема Армениакон*, в основном состоящей из армянского населения.

В противоборстве с Ираном, а затем с халифатом Византийская империя, верная своей завоевательной политике, не смогла сорентироваться в отношении к Армении, как к равной союзнице. Политический курс империи по отношению к Армении в 40-50-х гг. был отмечен нервозностью и бессистемностью, что было обусловлено продолжением завоевательного курса в условиях военного натиска Арабского халифата. Продолжая завоевательную политику Византия не смогла организовать объединенный фронт из христианских стран против завоеваний Арабского халифата. Наоборот, имперские чиновники вмешивались в дела Армении и даже арестовывали ее военных и политических лидеров. Византия предпочитала владеть лишь частью Армении, чем допустить воссоединение ее восточной и западной частей и, в этом контексте, действия, совершенные в рамках византийско-атропатенских союзнических отношений, свидетельствуют об их антиармянской направленности. В исторической перспективе целостность территории Армении была необходима для самой империи в целях защиты ее рубежей от нашествий восточных кочевников.

С началом византийско-арабского противоборства политические и конфессиональные вопросы оценивались неадекватно. Договора между Византией и халифатом, а также - Арменией и халифатом повлияли на соотношение политических сил в Армении. В то время как внешняя политика Армении была направлена на противостояние агрессии извне, внутренняя - основывалась на политических процессах, ведущих к воссоединению ее западной и восточной частей. В 60-80-х гг. VII в. воссоединившаяся Армения возродилась как независимое государство.

EDUARD L. DANIELYAN

POLITICAL HISTORY OF ARMENIA AND THE ARMENIAN APOSTOLIC CHURCH (VI-VII CENTURIES)

SUMMARY

The political history of Armenia during the 6th and early 7th centuries was shaped by the division of its territory between the Byzantine Empire and Sassanid Iran.

This period and its aftermath also saw political-administrative reforms, the rebellions of the Armenian people in the eastern and western parts of the country, the tendency towards the restoration of Armenia's territorial unity, independent statehood and political integrity under conditions of the ending of the Byzantine-Iranian confrontation and the beginning of the Byzantine-Arab opposition. The contents of Armenian-Byzantine relations - considering the decline of Sassanid Iran and the beginning of the Arab Caliphate's conquests - were determined by the persistently aggressive political course of the Byzantine Empire towards Armenia.

In the early Middle Ages Armenian-Byzantine and Armenian-Persian relations, affected by the Armenian-Roman and Armenian-Iranian relations of the privious historic period, were reshaped in the context of East-West geopolitical processes.

After the Persian-Byzantine division of Armenia (385) the conquerors gradually abolished the Armenian Arshakid kingdom in Western Armenia (387) and then in Eastern Armenia (428). Persia and Byzantium, correspondingly, established their control over Eastern and Western Armenia. The Armenian people's rebellions of 451, 481-484, 572 in Eastern Armenia against political, economic, military and religious oppression of Sassanid Iran saved the Armenian statehood manifested by the Armenian nakharar system (princedom). Western Armenia unlike Eastern Armenia underwent serious military-administrative and social-structural changes as a negative result of the Byzantine Empire's centralized expansionist policy. Administrative-territorial divisions in the period of Justinian I (527-565) and realization of the «doctrine» of Maurice (580-602), aimed at denuding Armenia of its military power, were parts of the Empire's expansionist policy. In the period of the Sassanid kingdom's political crises Armenia could not get rid of foreign rule because of the Byzantine em-

pire's expansion. The emperor helped Chosroes II to restore his royal power in Iran. After the Byzantine-Iranian second division of Armenia and neighbouring countries Maurice strengthened the empire's position in the East and made more active the defense of the western borders of the empire. In the course of time the Byzantine emperors, especially Maurice, removed many Armenian generals with their military contingents from Western Armenia to the frontier regions in the basin of the Danube river. The Armenian generals rebelled against such a policy and even planned to reunite the eastern and western parts of the country but at such times Byzantium and Iran, neglecting self-rivalry, acted against them unanimously.

With territorial expansion the Byzantine Empire carried out reorganization of the Armenian lands giving them the status of military-administrative units and increased taxation through more centralized imperial rule. These reforms threatened the traditional system of social-demographic structure of the western Armenian lands. In the first decades of the 7th century, during the Byzantine-Iranian wars, Armenia became an arena of battles and campaigns. First, Persian troops crossed the country to invade the Byzantine territories, then the emperor Heraclius campaigned via Armenia to Iran. All these military actions had negative consequences for Armenia.

After proclamation of Christianity as the state religion in Armenia (301) the Armenian Apostolic Church had become the guarantee of the Armenian people's national-spiritual unity rooted in the depths of millenia.

The rulers of Byzantium and Iran paid special attention to confessional questions proceeding from their political aims. The emperor Maurice established in Western Armenia the Chalcedonian See (in Avan) opposite to the See of Catholicos of the Armenian Apostolic Church (in Dvin). But the Chalcedonian See existed for only about two decades. Maurice tried to turn the Armenian church to the Chalcedonian and Heraclios - to Monophelit formulas of the confession of the Byzantine church. On the other hand the Iranian king Chosroes II summoned a council of Christian churches of the countries which were under his rule in Ctesiphon (615/6). After discussions he proclaimed that all of them had to follow the Armenian faith. He took into consideration as the fact that among oriental Christian churches the Armenian church most strongly opposed the official doctrine of the Byzantine church, as well as proceeded from the general crisis of the official ideology and Zoroastrian religion of Sassanid Iran.

The Byzantine Empire's policy towards Armenia was influenced alternately by the rivalry with Sassanid Iran and the Arab Caliphate.

To strengthen the Byzantine Empire's defensive system, *exarchats* were replaced by *themes*, first of all in Asia Minor and then in other regions of the

state. One such formation was the *theme of Armeniakon*, mainly comprised of the Armenian population.

True to its conquering policy Byzantium couldn't become oriented towards Armenia as an equal alliance in its rivalry with Iran and then the Arab Caliphate. During the 40-50s of the 7th century the political course of the Byzantine Empire was marked by a nervousness and an erratic course which was the result of the continuation of its conquering policy under conditions of military pressure from the Arab Caliphate. Continuing its aggressive policy Byzantium was unable to organize the Christian countries' united front against the Arab Caliphate's conquests. On the contrary, imperial officials interfered in Armenian affairs and even arrested Armenian military and political leaders.

The Byzantine Empire preferred to possess a part of Armenia rather than to admit unification of two parts of the country. In this context, actions done in the framework of Byzantine-Atropatenian allied relations testify about their anti-Armenian thrust. In historical perspective the unification of Armenia was necessary even for the Empire itself for the defense of its eastern borders against the attacks of nomads. In the course of the conquests of Byzantium and the Arab Caliphate political and confessional questions were inadecuately assessed.

The Byzantine-Arab and the Armenian Arab treaties influenced the distribution of forces in Armenia. Meanwhile in foreign policy Armenia tried to withstand the aggression from outside, while internal policy was based on political processes leading to the unification of the eastern and western parts of Armenia. During the 60-80s of the 7th century reunified Armenia revived as an independent state.

Հապավումների ցուցակ

ԲԵՀ	Բանբեր Երևանի Համալսարանի
ԲՄ	Բանբեր Մատենադարանի
ԼՀԳ	Լրաբեր հասարակական գիտությունների
ՄՄ	Մաշտոցի անվան Մատենադարան
ՊԲՀ	Պատմա-բանասիրական հանդես
ՎՄ	Վենետիկի Մխիթարյանների Մատենադարան
ՕԱՀՄ	Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին

ВВ	Византийский Временник
ИАН	Известия Академии Наук
ПС	Палестинский сборник
СМОМПК	Сборник материалов для описания местностей и племен Кавказа

BSOAS	Bulletin of the School of Oriental (and African) Studies (University of London)
BZ	Byzantinische Zeitschrift
CMH	Cambridge Medieval History
DOP	Dumbarton Oaks Papers
EHR	The English Historical Review
JRGS	Journal of the Royal Geographic Society
REB	Revue des études byzantines

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ա. ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Ձեռագրեր

ՀՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ «ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»՝

№№ 582 (XIV դ.), 696 (XVII դ.), 1267, (XIV դ.), 1459 (1691թ.), 1482 (1678թ.), 1486 (1597թ.), 1717 (1664թ.), 1770 (1589թ.), 1896 (1689թ.), 1898 (XIII դ.), 2019 (1600թ.), 2291 (1665թ.), 2370 (1624թ.), 2748 (1624թ.), 3691 (XVIII դ.), 3941 (1672թ.), 4284 (1634թ.), 5120 (XVII դ.), 5613 (1608թ.), 7993 (1722թ.)

Վենետիկի Մխիթարյանների Մատենադարան (Bibliotheque Mekhitariste - Venise-St. Lazar)՝ № 1245 (1604)

Տեքստերի և գիտական թարգմանությունների հրապարակումներ

Աբրահամյան Ա., Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944:

Անանուն ժամանակագրութիւն, Վենետիկ, 1904:

«Աշխարհացոյց» Մովսէսի Խորենացւոյ, Վենետիկ, 1881:

Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին: Հաւաքեց եւ թարգմանեց Բ. Խալաթեանց, Ազգային Մատենադարան, Վիեննա, 1919:

Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901:

Թեոփանես Խոստովանող: Թարգմ. բնագրից, առաջաբան և ծան. Հ. Մ. Բարթիկյանի. - ՕԱՀՄ, 13, Բյուզանդական աղբյուրներ, Դ, Երևան, 1983:

Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց: Ի լոյս էած Ք. Պատկանեան, Ս. Պետերբուրգ, 1887:

Թովմա Արծրունի և Անանուն. Պատմություն Արծրունյաց տան: Ներածությունը, թարգմ. և ծան. Վ. Վարդանյանի, Երևան, 1978:

Իբն Ալ-Ասիր: Թարգմ. բնագրից, առաջաբան և ծան. Ա. Տեր-Ղևոնդյանի. - ՕԱՀՄ, 11, Արաբական աղբյուրներ, Բ, Երևան, 1981:

Կիրակոս Գանձակեցի. Պատմութիւն Հայոց: Աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961:

Կնիք Հաւատոյ Ընդհանուր Սուրբ Եկեղեցւոյ յուղղափառ եւ սուրբ հոգեկիր հարցն մերոյ դաւանութեանց յաւուրս Կոմիտաս կաթուղիկոսի (613-627) համահաւաքեալ: Հրատարակութիւն Կարապետ եպիս. Տէր-Մկրտչեանի (Լուսաւիպ վերահրատարակութիւն), Անթիլիաս - Լիբանան, 1998:

Կոստանդին Ծիրանածին, թարգմ. բնագրից, առաջաբան և ծան. Հ. Մ. Բարթիկյանի. - ՕԱՀՄ, 6, Բյուզանդական աղբյուրներ, Բ, Երևան, 1970:

Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862:

Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1904, Երևան, 1982:

Միքայել Ասորի. Ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1871:

.Մխիթար Այրիվանեցի, Ժամանակագրական պատմութիւն, Ս. Պետերբուրգ, 1867:

Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913 (Երևան, 1991):

Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1940:

Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912:

Յովհան Մամիկոնեան. Պատմութիւն Տարօնոյ: Աշխատ. և առաջաբանով Աշ. Աբեհամյանի, Երևան, 1941:

Պատմութիւն Ղեւոնդեայ Մեծի վարդապետի Հայոց, Ս. Պետերբուրգ, 1887:

Պատմութիւն յայտնութեան նշխարաց սբ. Ներսիսի, Սուրբք Հայկականք, Զ, Վենետիկ, 1853:

Պատմութիւն Շապհոյ Բագրատունւոյ, Էջմիածին, 1921:

Պատմութիւն Սեբէոսի: Աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979:

Պրոկոպիոս Կեսարացի: Թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Մ. Բարթիկյանի, Երևան, 1967 - ՕԱՀՄ, 5, Բյուզանդական աղբյուրներ, Ա:

Ջուանշէր, Համառոտ պատմութիւն Վրաց, Վենետիկ, 1884:

Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893:

Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, Մոսկվա, 1861; Թիֆլիս, 1910:

Ստեփանոս Օրբելյան. Սյունիքի պատմություն: Թարգմ., ներած. և ծան. Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1985:

Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885:

Ուխտանէս եպիսկոպոս. Պատմութիւն հայրապետաց եւ թագաւորաց Հայոց, հ. Ա, Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայս, հ. Բ, Վաղարշապատ, 1871:

Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883 (Վենետիկ, 1933; Երևան, 1987):

Քսենոփոն. Անաբասիս: Թարգմ. Ս. Կրկաշարյան, Երևան, 1970:

Абу Ханифа ад-Динавери. Книга длинных известий. - ПС, вып. 22/85/, 1970.

Анонимная сирийская хроника о времени Сасанидов. - Записки Института Востоковедения., Москва, 1934.

Анонимная сирийская хроника 1234 г. - В кн.: Пигулевская Н. В., Византия и Иран на рубеже VI-VII вв., М.-Л., 1946.

Антиох Стратиг. Пленение Иерусалима персами в 614 г. - Грузинский текст исследовал, издал, перевел и арабское извлечение приложил Н. Марр, С.-Петербург, 1909.

Армянская география VII века. Текст и перевод с присовкуплением карт и объяснительных примечаний издал К. П. Патканов, СПб, 1877.

Баладзори. Книга завоевания стран. Пер. с арабского П. Жузе, Баку, 1927.

Гевонд. История халифов. Пер. с арм. К. П. Патканова, СПб, 1862.

Джуаншер Джуаншериани. Жизнь Вахтанга Горгасала. Пер., введение и прим., Тбилиси, 1986.

Ибн-ал-Асир. Тарих-ал-камиль. Пер. с арабского П. Жузе, Баку, 1940.

Иованнес Драсханакертци. История Армении. Перев. с древнеарм., вступ. статья и коммент. М. О. Дарбинян-Меликян, Ереван, 1986.

История епископа Себеоса. Перев. с арм. Ст. Малхацянца, Ереван, 1939.

Леонти Мровели. Жизнь картлийских царей. Перев. с древнегруз., предисл. и коммент. Цулая Г., Москва, 1979.

Мовсес Каланкатуаци. История страны Алуанк. Перев., предисл. и коммент. Ш. В. Смбатяна, Ереван, 1984.

Себеос. История императора Ираклa. Перев. с арм. и предисл. К. П. Патканяна, СПб, 1862.

Чичуров И. С., Византийские исторические сочинения: «Хронография Феофана», «Бревиарий Никифора», Москва, 1980.

Феофилакт Симокатта. История. Вступ. статья Н.В. Пигулевской. Перев. С. В. Кондратьева, прим. К. А. Осиповой, Москва, 1957.

Фотия святейшего архиепископа Константинопольского О гробе Господа нашего Иисуса Христа (написанное между 867 и 878 гг.) и другие малые его творения на греческом и армянском языках, переведенные Г. С. Дестунисом и Н. Марром. - ПС, XI, 1893.

Chronique de Michel le Syrien. Editée pour la premiére fois et traduite en français par J.-B. Chabot, t. II, Paris, 1963.

Claudii Ptolemaei Geographia. E Codicibus Recognovit, Prolegomenis, Annotatione Carolus M(llerus. Vol. Primi. Pars Secunda. Parisiis, 1901.

Constantini Porphyrogeniti imperatoris De cerimoniis aulae Byzantinae. - Corpus Scriptorum Historiae Byzantinae. Edit. B.G. Niebuhrii. Vol. I, Bonnae, 1829

Constantini Porphyrogeniti imperatoris De Thematibus et de Administrando imperio. Bonnae, 1840.

Corpus Juris Civilis. Edit. fratres Kriegelii. 16. Auflage, drei Bände, Band II. Bearbeitet von Dr. E. Hermann, Leipzig, 1843.

Denys de Tell-Mahre. Chronique. Quatrieme partie. Traduction français. Publiée et traduite par J.-B. Chabot, Paris, 1895.

Garitte G., La narratio de rebus Armeniae. Edition critique et commentaire. - Corpus Scriptorum Christianorum Orientalium.Vol. 132. Subsidia tome 4, Louvain, 1952.

Géographie de Moïse de Corène d'après Ptolémée. Texte arm. trad. en français par le Ar. Soukry, Venise, 1881.

Georgii Cyprii Descriptio Orbis Romani. Edit. praefatus est commentario instruxit H. Gelzer. Lipsiae: in aedibus B. G. Teubneri, 1890.

Georgii Pisidae Expeditio Persica. Bellum Avaricum, Heracleias. Rec. I. Bekkerus, Bonnae, 1836.

Georgius Cedrenus - Ioannis Scilitzae ope ab I. Bekkero supletus et emendatus. Tomus prior, Bonnae, 1838.

Histoire d'Heraclius par l'eveque Sebeos. Traduite de l'armenien et annote par F. Macler, Paris, 1904.

Homer. The Illiad. With an English trans. by A. Murray, Cambridge, Mass. - London, 1960.

Ioannis Malalae Chronographia. Ex recensione Ludovici Dindorfii. - Corpus Scriptorum Historiae Byzantinae. Editio emendator et copiosior, consilio B. G. Niebuhrii, Bonnae, 1831.

Jean VI Catholicos. Historie d'Armenie. Paris, 1841.

Jean de Nikiou. Chronique publie et traduit par Zotenberg. Notices et extraits des manuscripts de la Biblioteque Nationale, h. XXIV, Paris, 1883.

Le Synekdèmos d'Hiéroclès et l'opuscule Géographique de Georges de Chypre. Texte. Introduction. Commentaire et cartes par E. Honigmann, Bruxelles, 1939.

Mansi, J. D. Sacrorum Conciliorum nova et amplissima collectio, 31 vols. (Florence and Venice, 1759-98); reprinted J. B. Marti and L. Petit, with continuation, vols. XXXII-L, Paris, 1901 ff., in progress (vol. 11, Graz-Austria, 1960).

Migne, J. P., Patrologiae cursus completus. Series graeco-latina, 161 vols. in 166, Paris, 1857-66.

Procopius. «The Persian War» (Bel. Pers.), «Buildings» (De aedificiis), with an English trans. by H. B. Dewing, Vols. 1, 7, London, 1954.

Strabo. - H. L Jones. The Geography of Strabo. With an English translation, I-VIII, London, 1917-1932.

Theophanis Chronographia. Recens.C. de Boor. Vol. I, Lipsiae, 1883; Hildescheim, 1963.

Theophylacti Simocattae Historiae, ed. C. de Boor. Edit. correct. P. Wirth, Stuttgart, 1972.

Գրականություն

Ակինեան Ն., Ս. Մատենագրական հետազոտութիւններ, հ. Գ, Վիեննա, 1930:

Ակինեան Ն., Ս. Մաշտոց վարդապետ: Մատենագիտական հետազոտութիւններ, հ. Բ, Վիեննա, 1949:

Ակինեան Ն., Դաւիթ Հարքացի Անհաղթ փիլիսոփայ, Վիեննա, 1959:

Ալեքսիձե Ջ., Կովկասի VII դ. կրոնական (դավանաբանական) իրադրության մասին: Թարգմ. Վ. Մարտիրոսյանի, Երևան, 1978:

Ալիշան Ղ., Այրարատ, Վենետիկ, 1890:

Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան; հ. Բ, Երևան, 1973, հ. Դ, 1979:

Աճառյան Հր., Հայոց անձնանունների բառարան; հ. Բ, Երևան, 1944, հ. Դ, Երևան, 1948, հ. Ե, 1962:

Առաքելյանը Բ., Հայաստանը արաբական տիրապետության առաջին շրջանում և հայերի պայքարը անկախության համար. - «Գիտական ժողովածու», 1941:

Առաքելյան Բ. Ն., Հայկական պատկերաքանդակները IV-VII դարերում: Երևան, 1949:

Ավդալբեգյան Թ. Անհայտ աղանդավորներ Հայոց մեջ, Վիեննա, 1926:

Ավդալբեգյան Թ. Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969:

Բասմաջյան Կ., Ժամանակագրական պատմութիւն Հայոց, արտագրուած Թէոդիկի «Ամենուն տարեցոյց»-ի 1914 թ. հատորէն:

Բարթիկյան Հր. «Narratio de rebus Armeniae», հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ-քաղկեդոնական սկզբնաղբյուր. - ԲՄ, № 6, 1941:

Բարխուտարեանց Մ., Արցախ, Բագու, 1895:

Գարեգին Ա կաթողիկոս, Հոգեմտաւոր ճառագայթումներ, Ս. Էջմիածին, 1997:

Գելցեր Հ., Սկզբնավորութիւնք բիւզանդական բանակաթեմերու դրութեան: Թարգմ. Գ. Գարանֆիլեան, Վիեննա, 1903:

Գիւտերբոգ Կ. Հռովմէական Հայաստան եւ հռովմէական սատրապութիւնները Դ-Ջ դարերուն: Գերմաներէնէ թարգմանեց Հ. Մկրտիչ վ. Նորշուան, Վիեննա, 1914:

Դանիելյան Է. Լ., Թոռնիկյանների քաղաքական դերը հայ-բյուզանդական հարաբերություններում. - ԼՀԳ, №10, 1977:

Դանիելյան Է. Լ., Հայաստանի բաժանման տարեթիվը 387 թ՞ 385. - ՊԲՀ, № 1, 1980:

Դանիելյան Է. Լ., Հայ Եկեղեցու նկատմամբ Խոսրով Փարվեզի վարած քաղաքականությունը. - ՊԲՀ, № 4, 1981:

Դանիելյան Է. Լ., 647 թվականի արաբական արշավանքը Հայաստան. - ՊԲՀ, № 2, 1982:

Դանիելյան Է. Լ., Հայ-բյուզանդական հարաբերությունները և «Մարաց իշխանը» 646 թ. - ՊԲՀ, № 4, 1983:

Դանիելյան Է. Լ., Հայկական աղբյուրները Արևմտյան Հայաստանի վաղբյուզանդական ռազմավարչական բաժանումների մասին. - ՊԲՀ, № 1, 1985:

Դանիելյան Է. Լ., Արևելյան Հայաստանի վարչա-տարածքային բաժանումը (591-629). - ԼՀԳ, 1986, № 8:

Երեմյան Ս. Տ., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963:

Թորամանյան Թ., Ջվարթնոց. Նյութեր հայ ճարտարապետության պատմության: Աշխատությունների ժողովածու, հ. II, Երևան, 1942:

Ինճիճեան Ղ., Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822:

Լեո. Երկերի ժողովածու, հ. Բ, Երևան, 1967:

Խաժակ արք. Պարսամեան. Հայաստանեայց Եկեղեցին նոր հազարամեակի սեմին, Նիւ Եորք, 1999:

Կանայանց Ս., Անհայտ գավառներ: Էջմիածին-Վաղարշապատ, 1914:

Կարապետ եպիս. Տէր-Մկրտչեան, Յովհան Մանդակունի եւ Յովհան

Մայրագոմեցի. - «Շողակաթ», Ս. Էջմիածնի հայագիտական ժողովածու; գիրք Առաջին, Վաղարշապատ, 1913:

Հակոբյան Թ.Խ., Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1968:

Հակոբյան Թ. Խ., Սիմոնյան Ա. Պ., Երևանի 2750, Երևան, 1968:

Համբարեանան Հ. Հայք արաբացւոց իշխանութեան տակ. Ժամանակա-

գրական խնդիրներ Սեբէոսէն. - «Յուշարձան», Վիեննա, 1911:

Հայ ժողովրդի պատմություն, Երևան, հ. Ա, 1971; հ. Բ, 1984:

Հարությունյան Բ. Հ., Մեծ Հայքի թագավորության հյուսիսարևելյան մարզերի վարչա-քաղաքական կացությունը 387-451թթ. - ԲԵՀ, 1976, №2:

Հարությունյան Բ. Հ., Փայտակարանը և նրա տեղադրությունը. - ԼՀԳ, 1981, №12:

Հարությունյան Բ. Հ., Մեծ Հայքի Վասպուրական աշխարհը ըստ «Աշխարհացոյց»-ի. - ԲԵՀ, 1983, № 3:

Հարությունյան Բ. Հ., «Աշխարհացոյց»-ը և Չորս Հայքերի խնդիրը. Երևան, 1997:

Հարությունյան Բ. Հ., Մեծ Հայքի Մոկք աշխարհը ըստ «Աշխարհացոյց»-ի. - ՊԲՀ, 199Օ, № 1:

Հիւբշման Հ., Հին Հայոց տեղւոյ անունները: Թարգմ. Հ. Պիլէզիկճեան, Վիեննա, 1907:

Հովսեփյան Գ. (Գարեգին վարդապետ), Քարտէզ հայ հնագրութեան.- «Շողակաթ», Հայագիտական ժողովածու, Ա, Վաղարշապատ, 1913:

Հովհաննեսեան Մ., Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970:

Մանանդյան Հ., Խորենացու առեղծվածի լուծումը, Երևան, 1934:

Մանանդյան Հ., Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1934:

Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության; հ. Բ, Երևան, 1960

Մանանդյան Հ., Երկեր, հ. Ա-Բ, Երևան, 1977-78:

Մարքվարտ Յ., Հայ Բագրատունիների ճիւղագրութիւնը, Վիեննա, 1913:

Մելիքսեթ-Բեկ Լ. Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, Երևան, 1934:

Մուշեղյան Ա., V դարի հայ մատենագրության ժամանակագրական խնդիրներ. - Ատենախոսության սեղմագիր, Երևան, 1996:

Յուզբաշյան Կ. Ն., Ե՞րբ է սկսվել Վահան Մամիկոնյանի գլխավորած ապստամբությունը. - ՊԲՀ, 1984, № 1:

Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. Ա-Բ, Վենետիկ, 1836:

Չամչեան Մ., Պատմութիւն Հայոց, հ. Բ, Վենէտիկ, 1795:

Պետրոսյան Ս. Գ., Փայտակարանը և Պարսպատունիքը I դ. երրորդ քառորդում. - ՊԲՀ, 1975, № 2

Սվազյան Հ. Ս., Աղվանից մարզպանության կազմավորման հարցի շուրջ. - ՊԲՀ, 1979, № 4:

Սվազյան Հ., Աղվանքը և Միհրանյան տոհմը. - ԼՀԳ, № 9, 1980:

Վարդանյան Վ., Հայ գրականությունը VII դարում. Երևան, 1970:

Վարդանյան Վ. Մ., Հայ-իրանական հարաբերությունները VI դ. վերջում և Վասպուրականը. - ԲԵՀ, 1976, № 2:

Վարդանյան Վ. Մ., Վասպուրականը VII դ. երկրորդ կեսին. - ՊԲՀ, № 2, 1974:

Վարդանյան Վ. Մ., Վասպուրական վարչաաշխարհագրական միավորի առաջացման պատմությունից. - ՊԲՀ № 2, 1986:

Վիգեն եպիսկ. Այքազյան, Եպիսկոպոսի կարգավիճակը Հայ Եկեղեցիում. Պատմություն և պատմագրություն. - Ատենախոսության սեղմագիր, Երևան, 1999:

Տեր-Ղևոնդյան Ա., Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965:

Տեր-Մինասյան Ե., Հայոց եկեղեցու հարաբերությունները ասորվոց եկեղեցիների հետ. - «Էջմիածին», № 11, 1908:

Ուլուբաբյան Բ. Ա., Աղվանից թագավորական տան հարցի շուրջ. - ԼՀԳ, 1971, № 7:

Ուլուբաբյան Բ. Ա., Հյուսիսարևելյան Հայաստանի նախամարզպանական շրջանի վարչաքաղաքական վիճակի հարցի շուրջ. - ԲԵՀ, 1975, № 2:

Ուլուբաբյան Բ. Ա., Դրվագներ հայոց Արևելից կողմանց պատմության (V-VII դդ.), Երևան, 1981:

Փառնակ Գ., Հայ նախարարները. - «Անահիտ», № 1-2, 1907:

Քենդերյան Ա. Մ., Հովհան Մայրագոմեցի, Երևան, 1973:

Օրմանեան Մ., Ազգապատում, Կոստանդնուպոլիս, հ. Ա, 1913:

Адонц Н., Армения в эпоху Юстиниана. СПб, 1908 (Ереван, 1971, Издание второе) с. 232.

Акопян А. А., Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987.

Айвазян К. В., «История Тарона» и армянская литература IV-VII вв., Ер., 1976.

Акопян А. А., Мурадян П. М., Юзбашян К. Н., К изучению истории Кавказской Албании. - ПБН, № 3, 1987.

Артамонов М. И., История хазар, Москва, 1962.

Бартикян Р. М., Об армянской памятной записи в грузинской рукописи, содержащей Типик Григория Пакуриана. - ЛЯР, № 7, 1978.

Бартикян Р. М., Разрешение проблемы мардаитов. - ԼՀԸ, № 1, 1983.

Бартольд В. В., Историко-географический обзор Ирана: Соч., т. VII, М., 1971.

Беляев Е. А., Арабы, ислам и Арабский халифат в раннем средневековье. Москва, 1966.

Герцберг Г. Ф., История Византии. Перев., прим. и приложения Безобразова П. В., Москва, 1897.

Даниелян Э.Л., Армяно-византийские отношения в период заключения арманоарабского договора. - ԼՀԳ, № 4, 1988.

Джавахов И. А., История церковного разрыва между Грузией и Арменией в начале VII века. - ИАН, 1908.

Еремян С. Т. Заметки к тексту хроники Сумбата. - Известия Арм. ФАН, Обществ. Науки, 9, 1941.

Еремян С. Т., Политическая история Албании III-VII в кн.: Очерки истории СССР, Москва, 1958.

Еремян С. Т. «Тарон в древности и средних веках» (карта) в кн.: Айвазяна К. В. «История Тарона» и армянская литература IV-VII вв., Ереван, 1976.

История Византии, т. I, Москва, 1968.

Колесников А.И. Иран в начале VII века. - ПС, вып. 22/85/, 1970.

Колесников А.И., Завоевание Ирана арабами. Москва, 1982.

Кулаковский Ю., К критике известий Феофана о последнем годе правления Фоки. - ВВ, т. 21, вып. 1-2, 1914.

Кулаковский Ю., История Византии, т. III, Киев, 1915.

Курбатов Г. Л., История Византии (историография), Л., 1975.

Ласкин Г., Ираклий. Византийское государство в первой пол. VII в., Харьков, 1889.

Левченко М. В., История Византии, Москва, 1940.

Мамедова Ф., Политическая история и историческая география Кавказской Албании, Баку, 1986.

Манандян Я. А., Маршруты персидских походов императора Ираклия. - ВВ, т. III, 1950.

Марр Н. Я., Аркаун, монгольское название христиан в связи с вопросом об армянах-халкедонитах. - ВВ, т. XII, 1906.

Меликсет-Бек Л., Из истории армяно-византийских отношений («Маврикиевы легенды» в памятниках культуры древней Армении). - ВВ, т. XX, 1961.

Мюллер А., История ислама, т. I, СПб, 1895.

Новосельцев А. П., К вопросу о политической границе Амении и Кавказской Албании в античный период. - В сб.: «Кавказ и Византия», Ереван, 1979, т. I.

Орбели И. А., Багаванская надпись 639 г. и другие армянские ктиторские надписи VII века. - «Христианский Восток», т. II, вып. I, СПб, 1913.

Орбели И. А., Избранные труды, Ереван, 1963.

Патканян К., Опыт истории династии Сасанидов по сведениям, сообщаемым армянскими писателями. СПб, 1863.

Периханян А. Г., Armeno-Iranica I. - «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1965, № 11

Пигулевская Н. В., Византия и Восток. - ПС, вып. 23 (86), 1971.

Пигулевская Н. В., Византия и Иран на рубеже VI-VII вв., М.-Л., 1946.

Пигулевская Н. В., Византия на путях в Индию, Москва, 1951.

Раннефеодальные государства на Баклканах, VI-XII вв., Москва, 1985.

Тер-Гевондян А. Н., Армения и Арабский халифат, Ереван, 1977.

Тревер К. В., Очерки по истории и культуре и Кавказской Албании, М.-Л., 1959.

Успенский Ф.И., История Византийской империи. Т. I, СПб, 1913.

Юзбашян К. Н., Армянские государства эпохи Багратидов и Византия в IX-XI вв., Москва,1988.

Фрай Р., Наследие Ирана, Москва, 1972.

A Greek-English Lexicon compiled by H. G. Liddell and R. Scott. With a revised supplement. Clarendon Press - Oxford, 1996.

Adontz N. Armenia in the Period of Justinian. Translated with partial revisions, a bibliographical note and and appendices by N. Garsoian, Lisbon, 1970.

Aslan K., Études historique sur le peuple Armenien, Paris, 1909.

Baynes N. H., The Date of the Avar Surprise. - BZ, XXI, 1912.

Cambridge Medieval History. Vol. IV. The Byzantine Empire. Part I, Byzantium and Its Neighbours. Edited by J. M. Hussey, Cambridge, 1966.

Chalabian A., Armenia after the coming of Islam. Southfield, Michigan, 1999.

Ghazarian M., Armenien unter der arabischen Herrschaft bis zur Entstehung des Bagratidenreiches. - Zeittschrift für armenische Philologie, Bd. II, Heft 2-3, Marburg, 1903.

Charanis P., Ethnic Changes in the Byzantine Empire in the Seventh Century. - DOP, vol. 13, 1959.

Christensen A., L'Iran sous le Sasanides. Copenhague, 1936.

Dedeyan G., Histoire des Armeniens. Privat, 1982.

Dowsett C. J. F., The Name and the Role of ΣΑΡΑΒΛΑΓΓΑΣ or ŠAHRAPLAKAN. - «Byzantion», t. XXI, fasc. 2, Bruxelles, 1951.

Duchêsne M. L., L'Église au VIe siécle. Paris, 1925.

Dulaurier Ed., Recherches sur la chronologie arménienne technique et historique, t. I, Paris, 1859.

Frolov A., La Vrai Croix et les expeditiones d'Heraclius en Perse. - REB, vol. XI, Paris, 1953.

Gerland E., Die persischen Feldzüge des Keisers Heracleios. - BZ, III, 1894.

Gibbon E., The History of the Decline and Fall of the Roman Empire. Edit. by J.-B. Bury, t. V, London, 1838.

Grumel V., Traite d'étude Byzantine. I, La Chronologie, Paris, 1958.

Goubert P., Byzance avant l'Islam, Paris, t. I , 1951.

Grousset R., Histoire de l'Armenie. Paris, 1947.

Héfele C., Leclercq H., Histoire de Conciles. Vol. III, Paris, 1909.

Hergenröther., Le Cardinal. Histoire de l'Église, tr. P. Belet, vol., II, Paris, 1880.

Higgins M. J., The Persian War of the Emperor Maurice (582-602), Part I, Washington, 1939.

Hitti Ph., History of the Arabs. London, 1953.

Hoffman G., Auszüge aus syrischen Akten persischer Marttyrer. Leipzig, 1880.

Honigmann E., Die Notitia des Basileios von Ialimbana. - Byzantion, t. IX, 1934.

Honigmann E., Die Ostgrenze des Byzantinischen Reiches von 363 bis 1071. Bruxelles, 1935.

Hübschmann H., Zur Geschichte Armeniens und der ersten Kriege der Araber. Aus dem Armenischen des Sebeos. Leipzig, 1875.

Jenkins R., Byzantium. The Imperial Centuries, London, 1966.

Jinbashian M., The Arabo-Armenian Peace Treaty of A.D. 652. - «Հայկազյան հայագիտական հանդես», հ. VI, Բեյրութ, 1977-1978:

Jones A., The Cities of the Eastern Roman Provinces. Second edit., Oxford, 1971.

Laurant V., La Notitia de Basile l'Armenien. Echos d'Orient, XXXIV. Paris, 1935.

Laurant V., L'Armenie entre Byzance et l'Islam depuis la conquete arabe jusqu'en 889. Nouvelle édition revue et mise à jour par M. Canard, Lisbonne, 1980.

Markwart J., Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation,

Berlin, 1919.

Markwart J. Êrânšahr nach der Geographie des Ps. Moses Xorenaci. Berlin, 1901.

Markwart J., Südarmenien und die Tigrisquellen. Wien, 1930.

Minorsky V., Roman and Byzantine Campaigns in Atropatene - BSOAS, vol. XI/2, 1944

Morgan J., Histoire du peuple Armenien, Paris, 1919.

Ostrogorski G., History of the Byzantine State. New Brunswik, 1957.

Paulys Realencyclopädie die Classischen Altertum wissenschaft, III, A2, München, 1929 (1972).

Peeters P., Πασαγνάθης-Περσογενής - «Byzantion», t. VIII, 1933.

Ramsay W. M., The Historical Geography of Asia Minor, in Royal Geographical Society's Supplimentary Papers. Vol. IV, London, 1890.

Rawlinson H. G., Memoir on the Site of the Atropatenian Ecbatana. - JRGS, vol. X, London, 1841.

Saint-Martin M. J., Mémoire historique et géographiques sur l'Armenie, t.II, Paris, 1819.

Sellers R. V., The Council of Chalkedon, London, 1961.

Stratos A., Byzantium in the Seventh Century, vol. I-II, Amsterdam, 1968.

Ter-Minassian E., Die armenische Kirche in ihren Beziehungen zu den syrischen Kirchen, Leipzig, 1904.

Thopdschian H., Armenien vor und während der Araberzeit - «Handes Hajagitutean», Zeitschrift für Armenischer Philologie. Herausgegeben von A. Manandian. Zweiter Band, erste Heft, Marburg, 1903.

Tomaschek W., Sasun und das Quellengebiet des Tigris, Bd. CXXXIII (IV), Sitzungsber. Akad., Wien, 1895.

Toumanoff C., Studies in Christian Caucasian History, Georgetown, 1963.

Tournebize Fr., Histoire politique et religiouse de l'Armenie, Paris, 1900.

Tsybulsky V. V., Calendars of Middle East Countries. Moscow, 1979.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԲՅՈՒԶԱՆԴԱ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Հայաստանը Սասանյան Պարսկաստանի քաղաքական ճգնաժամի ժամանակ 7
2. Հայաստանի վարչաքաղաքական վիճակը VI դ. 16
3. «Մավրիկիոսի դոկտրինան» և Հայոց զորքերի ապստամբությունները 49
4. Կայսրության պառակտիչ գործողությունները դավանանքի ոլորտում 57

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 59

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱԿԱՄԱՐՏՈՂ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Պարսկա-բյուզանդական ռազմական գործողությունների վերսկսումը 90
2. Հայ Առաքելական եկեղեցին VII դ. սկզբներին 94
3. Ռազմա-քաղաքական վիճակը Առաջավոր Ասիայում 96
4. Հայ Առաքելական եկեղեցու նկատմամբ Սասանյանների վարած քաղաքականությունը 101
5. Պարսկա-բյուզանդական պատերազմի ընթացքը 107
6. Հայաստանը և հերակլ կայսեր պարսկական արշավանքները 112

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 120

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Հայ-բյուզանդական հարաբերությունները Սասանյանների պետության մայրամուտին 143
2. Բյուզանդիայի քաղաքականությունը դավանանքային բնագավառում 149
3. Հայաստանը Արաբական խալիֆայության նվաճումների սկզբնական ժամանակաշրջանում 153
4. Բյուզանդա-ատրպատականյան դաշինքի հակահայկական ուղղվածությունը 162

5. 647 թ. արաբական ներխուժումը Հայաստան:
Հերևանի և Արծափի պաշտպանությունը 171
6. Հայ Առաքելական եկեղեցու միջոցառումները ժողովրդագրական
վիճակի կայունացման և դավանանքային բնագավառներում 178
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 182

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ԹԵՈԴՈՐՈՍ ՌՇՏՈՒՆՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1. Հայ-բյուզանդական հարաբերությունները հայ-արաբական
պայմանագրի կնքման ժամանակաշրջանում 207
2. Հայաստանի քաղաքական վիճակը VII դարի երկրորդ կեսում 215
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 227

Резюме 236
SUMMARY 239
Հապավումների ցուցակ 242
ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ 243

Էդուարդ Լիպարիտի Դանիելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ
(VI - VII դարեր)

Գեղարվեստական խմբագիր՝ **Ա. Դ. Գասպարյան**
Տեխնիկական խմբագիր՝ **Ռ. Ա. Շահինյան**
Էջադրումը՝ **Ռ. Ա. Շահինյանի**
Վերստուգող սրբագրիչ՝ **Ն. Գ. Հովսեփյան**

Տպագրվել է «Արգո» ՍՊԸ տպարանում
Երևան, Տերյան 91

[1000]

ԳԱԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0668366

A II
108165